ՎԵՐԱԴԱՐՁ ԱՎԵՏԱՐԱՆԻՆ

ԱՎԵՏԱՐԱՆԻ ՀՈՐԻԶՈՆԸ ԵՎ ՈՒՂԻՂԸ

ՓՈԼ ՎՈՇԵՐ

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՂԵՐՁԸ

Վերադարձ Ավետարանին

Ավետարանի զորությունը և ուղերձը

Ավետարանի կանչը և ճշմարիտ դարձը

Ավետարանի հավաստիացումը և զգուշացումները

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՂԵՐՁԸ

ՓՈԼ ՎՈՇԵՐ

Ավետարանի զորությունը և ուղերձը
© 2012 Փոլ Վոշեր

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի մասը չի կարող որևէ կերպով օգտագործվել կամ կրկնօրինակվել՝ առանց գրավոր թույլտվության, բացառությամբ՝ կարճ մեջբերումների քննադատական հոդվածների և ակնարկների մեջ: Ուղղեք ձեր խնդրանքները հրատարակչին հետևյալ հասցեով.

Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում
13 14 15 16 17/10 9 8 7 6 5 4 3 2

Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են (1869թ.) կամ, հատուկ նշումների դեպքում, բառացիորեն թարգմանված են «Ջեյմս թագավորի նոր Աստվածաշնչից» (NKJV, հեղինակային իրավունքները՝ 1982թ., «Thomas Nelson, Inc»):

Բովանդակություն

«Վերադարձ Ավետարանին»
գրքաշարի ներածություն VII

ՄԱՍ ՄԵԿ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ճանաչել և ճանաչեցնել Ավետարանը 3
2. Ընդունել Ավետարանը 11
3. Ավետարան, որով մենք փրկվում ենք 19
4. Կարևորել Ավետարանը 27
5. Փոխանցել և քարոզել Ավետարանը 33

ՄԱՍ ԵՐԿՈՒ. ԱՍՏԾՈ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

6. Միակ Ավետարանը 43
7. Վրդովեցուցիչ Ավետարան 51
8. Զորավոր Ավետարան 59
9. Ավետարան՝ բոլոր հավատացողների համար 69

ՄԱՍ ԵՐԵՔ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ԱՄՐՈՑԸ

10. Խոսել մեղքի մասին 79
11. Խոսել Աստծո մասին 85
12. Մեղավորներ՝ առանց բացառության 99
13. Մեղավորները՝ ընկած Աստծո փառքից 111
14. Մեղավորներ՝ մինչև ուղն ու ծուծը 119
15. Արդար ցասում 135
16. Սուրբ պատերազմ 145
17. Ամենաթանկ պարգևը 153
18. Աստվածային երկընտրանքը 165
19. Որակավորված Փրկիչ 173

20. Հիսուս Քրիստոսի խաչը 183
21. Աստծո արդարացումը 201
22. Հիսուս Քրիստոսի հարությունը 209
23. Հարությունը՝ որպես մեր հավատքի հիմք 219
24. Համբարձված Քրիստոսը՝ Իր ժողովրդի
Քահանայապետ 239
25. Համբարձված Քրիստոսը՝ բոլորի Տեր 255
26. Համբարձված Քրիստոսը՝ բոլորի Դատավոր 271

«Վերադարձ Ավետարանին» գրքաշարի ներածություն

Հիսուս Քրիստոսի Ավետարանը մեծագույնն է բոլոր գանձերից, որոնք տրվել են եկեղեցուն և ամեն մի քրիստոնյայի: Այն պարզապես *ինչ-որ* ուղերձ չէ այլոց թվում, այլ *միակ* ուղերձը, որը վեր է մնացած բոլորից: Այն Աստծո զորությունն է՝ փրկելու համար, և Աստծո իմաստության մեծագույն հայտնությունը՝ տրված մարդկանց և հրեշտակներին[1]: Այս պատճառով էր, որ Պողոս առաքյալն առաջնահերթություն էր համարում Ավետարանը քարոզելը, ջանք էր գործադրում, որ պարզորեն ազդարարեր այն, և նույնիսկ անեծք էր հռչակում նրանց վրա, ովքեր փորձում էին աղավաղել Ավետարանի ճշմարտությունը[2]:

Քրիստոնյաների ամեն մի սերունդ Ավետարանի ուղերձի տնտեսն է, և Սուրբ Հոգու զորությամբ Աստված կոչ է անում մեզ պահպանել այն գանձը, որը Նա վստահել է մեզ[3]: Որպես հավատարիմ տնտեսներ՝ մենք պետք է կլանված լինենք Ավետարանի ուսուցմամբ, մեծ ջանք գործադրենք, որ հասկանանք դրա ճշմարտությունները, և պարտավորվենք հսկել դրա բովանդակությունը[4]: Այսպես վարվելով՝ մենք կապահովենք թե՛ մեր, թե՛ մեզ լսողների փրկությունը[5]:

Այս տնտեսությունն է դրդում ինձ գրել այս գրքերը: Ես այնքան էլ չեմ ցանկանում լծվել գիրք գրելու դժվարին գործին, և, անկասկած, քրիստոնեական գրքերի պակաս նույնպես չկա: Այնուամենայնիվ, ես գրի առա իմ քարոզաշարերը նույն պատճառով, որով և քարոզում էի՝ դրանց բեռից ազատվելու համար: Ինչպես Երեմիայի դեպքում, եթե ես չխոսեմ այս ուղերձը, «այն ժամանակ սրտիս մեջ վառված կրակի պես դարձավ՝ ոսկորներումս պահված, և ես հոգնեցի կրելուց և չկարողացա»[6]: Ինչպես որ բացականչեց Պողոս առաքյալը. «Վա՛յ է ինձ, եթե Ավետարանը չքարոզեմ»[7]:

1. Հռոմեացիների 1.16, Եփեսացիների 3.10
2. Ա Կորնթացիների 15.3, Կողոսացիների 4.4, Գաղատացիների 1.8,9
3. Բ Տիմոթեոս 1.14
4. Ա Տիմոթեոս 4.15
5. Ա Տիմոթեոս 4.16
6. Երեմիա 20.9
7. Ա Կորնթացիների 9.16

Ինչպես հայտնի է, *«Ավետարան»* բառն առաջացել է հունարեն *«եվանգելիոն»* բառից, որն ավելի ճիշտ կլինի թարգմանել «բարի լուր»: Ինչ-որ իմաստով, Աստվածաշնչի ամեն մի էջն Ավետարան է պարունակում, սակայն, այլ իմաստով, Ավետարանը շատ հստակ ուղերձ է փրկության մասին, որը կատարվել է անկում ապրած մարդկանց համար Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու կյանքի, մահվան, հարության և համբարձման միջոցով:

Հոր բարեհաճության համաձայն՝ հավիտենական Որդին, Ով հավասար է Հորը և Նրա բնության ճշգրիտ պատկերն է, հոժարաբար թողեց երկնային փառքը, հղացվեց Սուրբ Հոգու կողմից կույսի որովայնում և ծնվեց որպես Աստված-մարդ՝ որպես Նազովրեցի Հիսուս[8]: Նա ապրեց այս աշխարհում որպես մարդ՝ կատարելապես հնազանդվելով Աստծո օրենքին[9]: Երբ եկավ ժամանակի լրումը, մարդիկ մերժեցին և խաչեցին Նրան: Խաչի վրա Նա կրեց մարդկության մեղքը, Աստծո զայրույթը և մահացավ մարդկության փոխարեն[10]: Երրորդ Օրը Աստված հարություն տվեց Նրան մեռելներից: Նրա հարությունը՝ աստվածային ազդարարում էր այն մասին, որ Հայրն ընդունեց Իր Որդու մահը՝ որպես մեղքերի զոհ: Հիսուսը կրեց մարդկության անհնազանդության պատիժը, բավարարեց Աստծո արդարադատության պահանջները և խաղաղեցրեց Աստծո զայրույթը[11]: Հարությունից քառասուն օր անց Աստծո Որդին համբարձվեց Երկինք և նստեց Աստծո աջ կողմը՝ ստանալով փառք, պատիվ և իշխանություն ամեն ինչի վրա[12]: Այնտեղ, Աստծո ներկայության մեջ, Նա ներկայացնում է Իր ժողովրդին և խնդրում Աստծուն նրանց անունից[13]: Աստված լիարժեք կերպով կների, կարդարացնի և կհաշտեցնի Իր հետ նրանց, ովքեր ընդունում են իրենց մեղավոր և անօգնական վիճակը, և գցում են իրենց Քրիստոսի վրա[14]: Սա է Աստծո և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի Ավետարանը:

Մերօրյա քրիստոնեական սերնդի ամենամեծ հանցանքներից մեկը Ավետարանը անտեսելն է. մեր բոլոր ախտերը բխում են դրանից: Կորսված աշխարհը ոչ թե խստացված է Ավետարանի հանդեպ, այլ, ավելի շուտ, անտեղյակ է Ավետարանից, քանի որ այն մարդիկ, ովքեր հռչակում են Ավետարանը, նույնպես չգիտեն դրա հիմնարար ճշմարտությունները: Այն տարրական թեմաները, որոնք կազմում են Ավետարանի միջուկը՝ Աստծո արդարադատությունը, մարդու ծայ-

8. Գործք 2.23, Եբրայեցիների 1.3, Փիլիպեցիների 2.6,7, Ղուկաս 1.35
9. Եբրայեցիների 4.15
10. Ա Պետրոս 2.24, 3.18, Եսայի 53.10
11. Ղուկաս 24.6, Հռոմեացիների 1.4, Հռոմեացիների 4.25
12. Եբրայեցիների 1.3, Մատթեոս 28.18, Դանիել 7.13,14
13. Ղուկաս 24.51, Փիլիպեցիների 2.9-11, Եբրայեցիների 1.3, Եբրայեցիների 7.25
14. Մարկոս 1.15, Հռոմեացիների 10.9, Փիլիպեցիների 3.3

ռաստիճան ապականված լինելը, արյան քավությունը, ճշմարիտ դարձի գալու բնույթը և փրկության մեջ հավաստիացում ունենալու աստվածաշնչյան հիմքը, չեն հիշատակվում շատ ու շատ ամբիոններից: Եկեղեցիները կրճատում են Ավետարանի ուղերձը՝ հասցնելով այն քրիստոնեական հավատամքներից վերցրած մի քանի արտահայտությունների. նրանք սովորեցնում են, որ դարձի գալը սոսկ մարդու որոշումն է, և հայտարարում են, որ ցանկացած մարդ, ով ապաշխարության աղոթք է անում, փրկված է:

Ավետարանի նմանօրինակ կրճատումը շատ լուրջ հետևանքներ ունի: Առաջինը՝ այն է՛լ ավելի է խստացնում դարձի չեկած մարդկանց սրտերը: Այսօր «դարձի եկածներից» քչերն են միանում եկեղեցիներին, իսկ միացողները հաճախ ետ են կանգնում կամ մարմնավոր կյանք են վարում: Միլիոնավոր մարդիկ, ովքեր քայլում են մեր բնակավայրերի փողոցներով և նստում են մեր եկեղեցիներում, չեն վերապրում այն փոփոխությունը, որը բերում է Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Ավետարանը, սակայն նրանք համոզված են, որ փրկված են, քանի որ մեկ անգամ իրենց կյանքում նրանք ձեռք են բարձրացրել ինչ-որ ավետարանչական հավաքույթի ժամանակ կամ ինչ-որ աղոթք են կրկնել: Ապահովության այս կեղծ զգացումը մեծ խոչընդոտ է ստեղծում, որը հաճախ փակ է դարձնում նման մարդկանց՝ ճշմարիտ Ավետարանը լսելու համար:

Երկրորդը՝ նման ավետարանը խեղաթյուրում է եկեղեցին, որը վերածնված հավատացյալների հոգևոր մարմին է՝ վերածելով այս մարմնավոր մարդկանց հավաքույթի, ովքեր դավանում են, որ ճանաչում են Աստծուն, բայց իրենց գործերով ուրանում են Նրան[15]: Երբ քարոզվում է ճշմարիտ Ավետարանը, մարդիկ եկեղեցի են գալիս՝ առանց քրիստոնեական ժամանցային ծրագրերի, հատուկ միջոցառումների կամ այնպիսի խոստումների, որոնք ավելին են, քան այն, ինչ տալիս է Ավետարանը: Մարդիկ եկեղեցի են գալիս, քանի որ ցանկանում են Քրիստոսին, փափագում են լսել Աստվածաշնչի ճշմարտությունը, սրտանց երկրպագում են Աստծուն, ինչպես նաև հնարավորություններ են փնտրում՝ մարդկանց ծառայելու համար: Երբ եկեղեցին հոչակում է ցածրորակ Ավետարան, այն լցվում է մարմնավոր մարդկանցով, որոնց գրեթե չեն հետաքրքրում Աստծո իրողությունները, իսկ այդպիսի մարդկանց պահելը ծանր բեռ է դառնում եկեղեցու համար[16]: Նման պայմաններում եկեղեցին նվազեցնում է Աստվածաշնչի ծայրահեղ պահանջները՝ փոխարինելով դրանք հարմարավետ բարոյականությամբ, իսկ ճշմարիտ նվիրումը

15. Տիտոս 1.16
16. Ա Կորնթացիների 2.14

Քրիստոսին՝ տեղի է տալիս այնպիսի գործունեության, որի նպատակն է՝ գոհացնել անդամներին: Եկեղեցին դառնում է միջոցառումների վայր և դադարում է կենտրոնանալ Քրիստոսի վրա. այն մանրակրկիտորեն զտում կամ վերաձևակերպում է ճշմարտությունը՝ իր մարմնավոր մեծամասնությանը չվիրավորելու նպատակով: Եկեղեցին անտեսում է Աստվածաշնչի և ուղղադավան քրիստոնեության ճշմարտությունները և սկսում է առաջնորդվել պրագմատիզմով (կամ օգտապաշտությամբ՝ այն ամենով, ինչը պահպանում է եկեղեցու բնականոն կյանքը և ապահովում է եկեղեցու աճը):

Երրորդը՝ նման ավետարանը փոքրացնում է ավետարանչության կամ միսիոներական աշխատանքի նշանակությունը՝ վերածելով այն մարկետինգային ռազմավարությամբ առաջնորդվող մարդասիրական ջանքերի, որոնք հիմնված են մշակույթի վերջին միտումների մանրակրկիտ ուսումնասիրությունների վրա: Տարիներ շարունակ տեսնելով ոչ սուրբգրային ավետարանի անկարողությունը՝ շատ ավետարանականներ, թվում է, համոզված են, որ Ավետարանը չի գործում, քանի որ ինչ-որ կերպով մարդն այնքան բարդ արարած է դարձել, որ չի կարող փրկվել նման պարզ և վրդովեցուցիչ ուղերձով: Ներկայումս եկեղեցիներն ավելի շատ ձգտում են հասկանալ մեր անկում ապրած մշակույթը և դրա տարօրինակությունները, քան հասկանալ և քարոզել միակ ուղերձը, որն ի զորու է փրկելու այդ մշակույթը: Արդյունքում, Ավետարանը շարունակ վերաձևակերպվում է՝ ժամանակակից մշակույթին համապատասխանելու համար: Մենք մոռացել ենք, որ ճշմարիտ Ավետարանը մշտապես համապատասխան է ամեն մի մշակույթի, քանի որ այն Աստծո հավիտենական խոսքն է՝ ուղղված յուրաքանչյուրին:

Չորրորդը՝ նման ավետարանը նախատինք է բերում Աստծո անվանը: Արժեզրկված ավետարան քարոզելու արդյունքում մարմնավոր և դարձի չեկած մարդիկ մուտք են գործում եկեղեցի, թեև նրանք գրեթե լիովին արհամարհում են աստվածաշնչյան և եկեղեցական կարգապահությունը, այնուամենայնիվ, նրանց թույլ են տալիս մնալ՝ առանց շտկելու կամ հանդիմանելու: Այս փաստն արատավորում է եկեղեցու մաքրությունը և համբավը և նախատում է Աստծո անունն անհավատների մեջ[1]: Արդյունքում Աստված չի փառավորվում, եկեղեցին չի կառուցվում, եկեղեցու դարձի չեկած անդամները չեն փրկվում, և եկեղեցին գրեթե կորցնում է զորությունը կամ լիովին անզոր է դառնում՝ աշխարհին վկայելու համար:

Մեզ՝ ծառայողներիս և աշխարհական հավատացյալներիս, սազական չէ անգործությամբ հետևել, թե ինչպես է մեր «երանելի Աստ-

1. Հռոմեացիների 2.24

ծո փառավոր Ավետարանը» փոխարինվում անփառունակ ավետարանով[2]: Որպես այս ավանդի տնտեսներ՝ մենք պարտավոր ենք վերադառնալ միակ ճշմարիտ Ավետարանին և խիզախորեն ու պարզորեն ազդարարել այն բոլորին: Մենք լավ կանենք, եթե ականջ դնենք Չարլզ Հեդդոն Սփերջենի խոսքերին.

> «Այս օրերին ես պարտավորված եմ զգում, որ շարունակաբար անդրադառնամ Ավետարանի տարրական ճշմարտություններին: Խաղաղ ժամանակներում մենք միգուցե ազատորեն արշավներ կազմակերպենք դեպի ճշմարտության հետաքրքիր շրջանները, որոնք գտնվում են շատ հեռուներում, բայց այժմ մենք պետք է տանը մնանք և հսկենք եկեղեցում գտնվող սրտերը և ընտանիքները՝ պաշտպանելով մեր հավատքի առաջին սկզբունքները: Շատերն են նեղություն պատճառում մեզ իրենց փիլիսոփայություններով և վիպական մեկնաբանություններով, որոնցով նրանք մերժում են այն վարդապետությունները, որոնք, իրենց իսկ ասելով, սովորեցնում և վարկաբեկում են այն հավատքը, որը պարտավորվել են պահպանել: Անհրաժեշտ է, որ մեզնից մի քանիսը, ովքեր գիտեն, թե ինչին ենք հավատում, և չեն աղավաղում մեր խոսքերը, հաստատեն մեր ոտքերը և ամրապնդեն մեր դիրքը՝ ուսուցանելով կյանքի Խոսքը և պարզորեն ազդարարելով Հիսուս Քրիստոսի Ավետարանի հիմնարար ճշմարտությունները»[3]:

Թեև «Վերադարձ Ավետարանին» գրքաշարը Ավետարանի ամբողջական համակարգված մեկնություն չէ, այն, այդուհանդերձ, անդրադառնում է դրա ամենաէական տարրերի մեծ մասին, հատկապես այն ճշմարտություններին, որոնք ամենից անտեսված են ժամանակակից քրիստոնեության մեջ: Հուսով եմ, որ այս խոսքերը կառաջնորդեն ձեզ՝ օգնելով վերագտնել Ավետարանն իր ամբողջ գեղեցկությամբ, վրդովեցուցիչ ճշմարտություններով և փրկարար զորությամբ: Իմ աղոթքն է, որ այն վերագտնելը նաև վերափոխի ձեր կյանքը, զորացնի ձեզ Ավետարանը քարոզելու մեջ և բերի մեծագույն փառքն Աստծուն:

Ձեր եղբայր՝
Փոլ Դեյվիդ Վոշեր

2. Ա Տիմոթեոս 1.11
3. Չարլզ Հ. Սփերջեն, *«Մետրոպոլիտեն Թեբերնեքլ»-ի ամբիոնը»* (վերտպ. Փասադենա, Տեխաս, «Pilgrim Publications»), հտ. 32, էջ 385:

ՄԱՍ ՄԵԿ
Առաքելական ներածություն

«Իմացնում եմ ձեզ, եղբայրնե՛ր, այն Ավետարանը, որ ավետարանեցի ձեզ, որն էլ ընդունեցիք, որի մեջ էլ կանգնած եք, որով փրկվում էլ եք, այն բանով, որ ձեզ ավետարանեցի, եթե ամուր բռնեք նրան, եթե զուր տեղը չեք հավատացել: Որովհետև ես առաջուց այն տվի ձեզ, որ ես էլ ընդունեցի, թե Քրիստոսը մեր մեղքերի համար մեռավ՝ գրքերի համեմատ: Եվ թե՛ թաղվեց, և թե՛ երրորդ օրը հարություն առավ՝ գրքերի համեմատ»:

— Ա Կորնթացիների 15.1–4

ԳԼՈՒԽ ՄԵԿ

Ճանաչել և ճանաչեցնել Ավետարանը

«Իմացնում եմ ձեզ, եղբայրնե՛ր, այն Ավետարանը, որ ավետարանեցի ձեզ»:

— Ա Կորնթացիների 15.1

Հազիվ թե որևէ գրող կամ քարոզիչ կարողանա ավելի լավ ներածություն պատրաստել Հիսուս Քրիստոսի Ավետարանի համար, քան Պողոս առաքյալի խոսքերը՝ ուղղված Կորնթոսի եկեղեցուն[1]: Այս մի քանի տողերում նա ներկայացնում է այնքան ճշմարտություններ, որոնցով կարելի է ապրել ամբողջ կյանքում և հասնել մեր փառավոր երկնային տունը: Միայն Սուրբ Հոգու շնորհիվ մարդը կարող է ասել այսքան շատ բան, այսքան պարզ կերպով և այսքան քիչ բառերով:

ՃԱՆԱՉԵԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Այս փոքր աստվածաշնչյան հատվածում գրված է մի ճշմարտություն, որը բոլորս պետք է կրկին բացահայտենք: Ավետարանը պարզապես քրիստոնեության ներածական ուղերձը չէ, այլ՝ *գլխավոր* ուղերձը, և յուրաքանչյուր հավատացյալ պետք է նվիրի իր կյանքը դրա փառքը ճանաչելուն և ճանաչեցնելուն: Այս աշխարհում գոյություն ունեն շատ բաներ, որոնք կարելի է ճանաչել: Նույնիսկ քրիստոնեության մեջ գոյություն ունեն անթիվ ճշմարտություններ, որոնք արժե ուսումնասիրել: Այնուամենայնիվ, մեր օրհնյալ Աստծո և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի Ավետարանը բարձր է դասվում այդ ամենից[2]: Այն մեր փրկության ուղերձն է, մեր սրբացման ճանապարհը և այն անարատ աղբյուրը, որից բխում են քրիստոնեական կյանքի բոլոր մաքուր և ճիշտ դրդապատճառները: Այն հավատացյալը, ով թեկուզ ինչ-որ չափով հասկացել է դրա բովանդակությունը և բնույթը, երբեք նախանձավորության պակաս չի զգա, և ո՛չ էլ այն աստիճան

1. Ա Կորնթացիների 15.1-4
2. Ա Տիմոթեոս 1.11

կաղքատանա, որ կձգտի զորություն ստանալ մարդկանց կողմից փորված անջուր և կոտրված հորերից[3]:

Առաջին Կորնթացիների 15.1-ից պարզ է դառնում, որ առաքյալն արդեն քարոզել էր Ավետարանը Կորնթոսի եկեղեցուն: Իրականում, նա այդ մարդկանց հոգևոր հայրն էր[4]: Այնուամենայնիվ, նա գիտակցում էր, որ խիստ անհրաժեշտ էր շարունակել սովորեցնել նրանց Ավետարանը՝ ոչ միայն հիշեցնել դրա էական բաղադրիչները, այլև ընդլայնել նրանց գիտելիքն Ավետարանի մասին: Դարձի գալով՝ նրանք ընդամենը սկսել էին ուսումնասիրել այն, ինչը պարփակելու էր նրանց ամբողջ կյանքը և նրանց հետ էր լինելու հավիտենության անվերջ դարերի ընթացքում. նրանք ընդամենը սկսել էին բացահայտել Աստծո փառքը, որը հայտնված է Հիսուս Քրիստոսի Ավետարանում:

Որպես քարոզիչներ և եկեղեցու անդամներ՝ մենք իմաստությամբ կվարվենք, եթե նորովի դիտարկենք Ավետարանը այս հինավուրց առաքյալի աչքերով, և գիտակցենք, որ մեր ամբողջ կյանքում այն արժանի է ջանասիրաբար ուսումնասիրության: Քանի որ, թեև մենք արդեն տարիներ շարունակ հավատքի մեջ ենք, թեև մենք ծանոթ ենք Ջոնաթան Էդվարդսի հանճարին և Չարլզ Սփերջենի խորաթափանց գաղափարներին, թեև մենք անգիր սովորել ենք Աստվածաշնչի բոլոր խոսքերը Ավետարանի մասին և կարդացել ենք Առաջին եկեղեցու հայրերի, Բարեկարգողների և Մաքրակրոնների, մինչև իսկ՝ մեր օրերի աստվածաբանների հեղինակած բոլոր հոդվածները, կարելի է համոզված լինել, որ մենք դեռ նույնիսկ չենք հասել այն Էվերեստի ստորոտին, որն Ավետարան ենք կոչում: Նույնիսկ հավիտենական դարեր անց այս պնդումը կրկին ճիշտ կլինի:

Մենք ապրում ենք մի աշխարհում, որն առաջարկում է գրեթե անթիվ հնարավորություններ և տարբերակներ, որոնք մրցակցում են՝ մեր ուշադրությունը գրավելու համար: Նույնը կարելի է ասել քրիստոնեության մասին և աստվածաբանական թեմաների լայն շրջանակի, որոնք ամեն մի հավատացյալ կարող է ուսումնասիրել: Գոյություն ունեն գրեթե անհամար աստվածաշնչյան ճշմարտություններ, որոնք մարդը կարող է ուսումնասիրել ամբողջ կյանքում: Այնուամենայնիվ, այդ թեմաներից մեկը բարձր է մնացած բոլորից և հիմնարար նշանակություն ունի՝ մնացած բոլոր սուրբգրային ճշմարտությունները հասկանալու համար. խոսքը Հիսուս Քրիստոսի Ավետարանի մասին է: Այս եզակի ուղերձով Աստծո զորությունը առավելագույնս դրսևորվում է թե՛ եկեղեցում, և թե՛ առանձին հավատացյալի կյանքում:

3. Երեմիա 2.13, 14.3
4. Ա Կորնթացիների 4.15

Նայելով քրիստոնեության պատմության տարեգրությանը՝ մենք տեսնում ենք տղամարդկանց և կանանց, որոնք անսովոր ավյուն ունեին Աստծո և Նրա թագավորության համար: Մենք փափագում ենք լինել նրանց պես և զարմանում ենք, թե ինչպես նրանք հարատևեցին և պահեցին իրենց կրակը: Ուշադրությամբ ուսումնասիրելով նրանց կյանքը, վարդապետությունը և ծառայությունը՝ մենք կպարզենք, որ նրանք տարբերվում էին միմյանցից շատ հարցերում, բայց բոլորն ունեին մեկ ընդհանուր հայտարար. նրանցից յուրաքանչյուրն ըմբռնել էր Ավետարանը. դրա գեղեցկությունը բոցավառել էր նրանց և առաջ էր մղել: Նրանց կյանքը և ժառանգությունն ապացուցում են, որ իրական և տևական ավյունը բխում է շարունակ ավելացող և խորացող ըմբռնումից այն մասին, թե ինչ է Աստված արել Իր ժողովրդի համար Հիսուս Քրիստոսի Անձում և Նրա կատարած աշխատանքի միջոցով: Այս գիտելիքն անփոխարինելի է:

Քրիստոնեական հավատքը մշտապես առնչվել է Ավետարանի հետ (լատիներենում՝ *«էվանգելիում»,* որը նշանակում է «Ավետարան» կամ «Բարի լուր»): Ահա թե ինչու են հավատացյալներին հաճախ ավետարանականներ անվանում: Մենք քրիստոնյա ենք, քանի որ գտել ենք մեր ինքնությունը և մեր գոյության նպատակը Քրիստոսում: Մենք ավետարանական ենք, քանի որ հավատում ենք Ավետարանին և համարում ենք այն մեծագույն և առանցքային ճշմարտությունը Աստծո կողմից մարդկությանը տրված հայտնության մեջ: Այն նախաբան, կրկնվող թեմա կամ վերջաբան չէ: Այն պարզապես քրիստոնեության ներածական դասը չէ, այլ՝ ամբողջ դասընթացը: Ավետարանը մեր կյանքի պատմությունն է, այն անիմանալի գանձերը, որոնք մենք ձգտում ենք հայտնաբերել, և այն ուղերձը, որը քարոզելը մեր կյանքի նպատակն է: Այս պատճառով, մենք ճշմարտապես քրիստոնյա ենք և ճշմարտապես ավետարանական ենք, երբ Հիսուս Քրիստոսի Ավետարանը մեր միակ հույսը, միակ պարծանքը և միակ մոլուցքն է:

Այսօր ավետարանական քրիստոնյաները կազմակերպում են այնքա՛ն շատ համաժողովներ, հատկապես մեր երիտասարդության համար, որպեսզի լցնեն հավատացյալներին ավյունով՝ շփման, երաժշտության, պերճախոս քարոզիչների, զգացմունքային պատմությունների և խանդավառված կոչերի միջոցով: Այնուամենայնիվ, նրանց ստեղծած ամբողջ խանդավառությունն արագորեն մարում է: Արդյունքում այդ փորձառություններն առաջացնում են փոքրիկ կրակ փոքրիկ սրտերում, որը վառվում է ընդամենը մի քանի օր:

Մենք մոռացել ենք, որ անկեղծ, տևական ավյունը ծնունդ է առնում, երբ մարդը ճանաչում է ճշմարտությունը, և հատկապես՝ Ավե-

տարանի ճշմարտությունը: Որքան ճանաչում և հասկանում եք Ավետարանի սքանչելիքը, այնքան դրա զորությունն ավելի է համակում ձեզ: Ավետարանի ճանաչողությունը հետևորդ կդարձնի ամեն ճշմարտապես վերածնված հավատացյալի: Ճանաչողության ամեն հաջորդ քայլը կարագացնի հավատացյալի ընթացքը, մինչև որ նա կսկսի առանց մտածելու առաջ սլանալ՝ դեպի մրցանակը[5]: Իրական քրիստոնյան չի կարող ընդդիմանալ այս սքանչելիքին: Ահա մեր ժամանակվա մեծագույն կարիքը: Ահա թե ինչ ենք մենք կորցրել և ինչը պետք է վերագտնենք: Մենք պետք է ձգտենք ճանաչել Ավետարանը և, հավասարապես, պետք է ձգտենք ճանաչեցնել այն:

ՃԱՆԱՉԵՑՆԵԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Պողոս առաքյալը Աստծո թագավորության մեծագույն մարդկային գործիքներից մեկն էր թե՛ մարդկային ցեղի, թե՛ Աստծո փրկության պատմության մեջ: Նա տարածեց Ավետարանը Հռոմեական կայսրությունով մեկ, գրեթե իր նմանը չունեցող հալածանքների ժամանակաշրջանում, և համարվում է քրիստոնյա ծառայողի ակնառու օրինակ: Այնուամենայնիվ, նա իրագործեց այդ ամենը՝ պարզապես քարոզելով ամենավրդովեցուցիչ ուղերձը, որը երբևէ հասել է մարդկանց ականջներին: Պողոսը բացառիկ կերպով օժտված մարդ էր. նա բարձր մտավոր կարողություններ ուներ և նախանձախնդիր էր: Այնուամենայնիվ, նա ինքն էր սովորեցնում մեզ, որ իր ծառայությունն ազդեցիկ էր ոչ թե իր տաղանդների շնորհիվ, այլ՝ Ավետարանը հավատարմորեն քարոզելու: Կորնթացիներին ուղղված իր առաջին նամակում Պողոսն ակնառու հրաժարագիր է ներկայացնում. «Որովհետև Քրիստոսը չուղարկեց ինձ մկրտելու, այլ՝ Ավետարանը քարոզելու, ոչ թե խոսքի իմաստությամբ, որպեսզի ունայն չլինի Քրիստոսի խաչը... Որովհետև հրեաները նշան են ուզում, և հույներն իմաստություն են խնդրում: Մենք էլ քարոզում ենք խաչյալ Քրիստոսը, հրեաներին՝ գայթակղություն, և հույներին՝ հիմարություն: Բայց այն կանչված հրեաներին և հույներին Քրիստոսը քարոզում ենք՝ Աստծո զորություն և Աստծո իմաստություն»[6]:

Պողոս առաքյալը նախևառաջ քարոզիչ էր: Նման Երեմիային, ով ապրում էր իրենից շատ առաջ, նա հարկադրված էր քարոզել: Ավետարանը նման էր վառվող կրակի նրա ոսկորների մեջ, որը նա անկարող էր կրել[7]: Նա հռչակեց Կորնթացիներին. «Հավատացի և նրա

5. Փիլիպեցիների 3.13,14
6. Ա Կորնթացիների 1.17,22-24
7. Երեմիա 20.9

համար խոսեցի»[8] և «Վա՛յ է ինձ, եթե Ավետարանը չքարոզեմ»[9]: Ավետարանի և դա քարոզելու նման բարձր գնահատականն անկարելի է շինծու կերպով ներկայացնել, եթե այն չկա քարոզչի սրտում, և անկարելի է թաքցնել, եթե այն կա:

Աստված կանչում է ամեն տեսակի մարդկանց՝ Ավետարանի ու+ղերձի բեռը կրելու համար: Նրանցից ոմանք ավելի պատկառելի և լուրջ են, մյուսները՝ ավելի անհոգ և կենսուրախ: Այնուամենայնիվ, երբ խոսակցության թեման Ավետարանն է, քարոզչի դեմքը փոխվում է, և թվում է՝ մեր առջև կանգնած է լիովին այլ մարդ: Հավիտենությունն արտացոլվում է նրա երեսից, քողը հեռացվում է, և Ավետարանի փառքը շողում է անկեղծ ավյունով: Այդպիսի մարդը գրեթե ժամանակ չունի հետաքրքրաշարժ պատմությունների, բարոյական խրատների կամ իր սրտի եղածով կիսվելու համար: Նա եկել է քարոզելու, և նա պե՛տք է քարոզի: Նա չի կարող հանգիստ առնել, քանի դեռ մարդիկ խոսք չեն լսել Աստծուց: Եթե Աբրահամի ծառան չէր կարող սեղան նստել, մինչև որ չփոխանցեր իր տեր Աբրահամի խոսքը[10], որքա՜ն ավելի Ավետարանի քարոզիչը չի կարող հանգիստ լինել, քանի դեռ չի փոխանցել իրեն վստահված գանձը՝ Ավետարանը[11]:

Թեև շատ քչերը չեն համաձայնի այն ամենին, ինչ մենք ասացինք մինչև այս պահը, թվում է՝ նման կրակոտ քարոզը մեծ մասամբ հնաոճ է համարվում: Շատերը կասեն, որ այն զուրկ է հղկվածությունից և ճարտարությունից, որոնք անհրաժեշտ են մեր օրերում արդյունավետ լինելու համար: Պոստմոդեռնիստական հայացքներ ունեցող մարդը, ով գերադասում է լինել ավելի համեստ և ավելի բաց այլ կարծիքների համար, խոչընդոտ է համարում ավյուն ունեցող քարոզչին, ով համարձակ և առանց փոխզիջման հռչակում է ճշմարտությունը: Հավատացյալների մեծամասնության կարծիքով, մենք պետք է փոխենք մեր քարոզելու ոճը զուտ այն պատճառով, որ այն *հիմարություն է թվում* այս աշխարհի համար:

Նման վերաբերմունքը Ավետարանի քարոզմանը վկայում է այն մասին, որ մենք՝ ավետարանական քրիստոնյաներս, զիջել ենք մեր դիրքերը: Աստված է որոշել, որ «քարոզելու հիմարությունը» լինի այն գործիքը[12], որ Ավետարանի փրկարար ուղերձը կհասցնի այս աշխարհին: Սա չի նշանակում, որ քարոզումը պետք է անմիտ, անտրամաբանական կամ տարօրինակ լինի: Այնուամենայնիվ, մեր

8. Բ Կորնթացիների 4.13
9. Ա Կորնթացիների 9.16
10. Ծննդոց 24.33
11. Գաղատացիների 2.7, Ա Թեսաղոնիկեցիների 2.4, Ա Տիմոթեոս 1.11, 6.20, Բ Տիմոթեոս 1.14, Տիտոս 1.3
12. Ա Կորնթացիների 1.21

քարոզելու չափանիշը Սուրբ գիրքն է, ոչ թե անկում ապրած և ապականված մշակույթի կարծիքը, որն իմաստուն է իր աչքերում, և որն ավելի շուտ կգերադասի շոյել իր ականջները և զվարթացնել իր սիրտը, քան լսել Տիրոջ Խոսքը[13]:

Ուր էլ գնար Պողոս առաքյալը, Նա քարոզում էր Ավետարանը, և մենք լավ կանենք, եթե հետևենք նրա օրինակին: Թեև Ավետարանով կարելի է կիսվել՝ օգտագործելով հաղորդակցման բազմաթիվ միջոցներ, սակայն քարոզման մեջ Աստծո կողմից նախատեսված չէ որևէ կողմնակի միջոց: Այդ իսկ պատճառով, նրանք, ովքեր մշտապես ձգտում են նորարար միջոցների՝ ճշմարտությունը փնտրող նոր սերնդին Ավետարանը ներկայացնելու համար, ճիշտ կանեն, եթե ավարտեն իրենց որոնումները Սուրբ գրքում: Այն մարդիկ, ովքեր պատրաստ են ուղարկել հազարավոր հարցաշարեր, որպեսզի իմանան դարձի չեկած մարդկանցից, թե նրանք ամենից շատ ինչ կուզեին լսել եկեղեցական երկրպագության ծառայության ժամանակ, պետք է հասկանան, որ մարմնավոր մարդկանց տասը հազար անանուն կարծիքները չունեն Աստծո Խոսքի նույնիսկ մեկ կետի կամ փոքրիկ նշանագրի հեղինակությունը[14]: Մենք պետք է հասկանանք, որ գոյություն ունի անհաշտելի տարբերությունների մի մեծ անդունդ Աստծո կողմից սահմանված սուրբգրային դրույթների և մեր ներկա մարմնավոր մշակույթի ցանկությունների միջև:

Մենք չպետք է զարմանանք, որ եկեղեցու թե՛ ներսում, թե՛ դրսում գտնվող մարմնավոր մարդիկ ցանկանում են բեմականացումներ, երաժշտություն և միջոցառումներ՝ Ավետարանը քարոզելու և Աստվածաշնչի մեկնության փոխարեն: Մինչև Աստված չվերածնի մարդու սիրտը, նա վերաբերվելու է Ավետարանին նույն կերպով, ինչպես Գադարացիների երկրում գտնվող դևերը՝ Հիսուսին. «Քեզ ի՞նչ բան կա մեզ հետ»[15]: Մարմնավոր մարդը չի կարող ճշմարտապես հետաքրքրվել Ավետարանով կամ գնահատել այն՝ առանց Սուրբ Հոգու, բայց այս հրաշքը տեղի է ունենում մարդու կյանքում Ավետարանը քարոզելու միջոցով, որին նա սկզբում արհամարհանքով է վերաբերվում: Այդ իսկ պատճառով, մենք պետք է քարոզենք մարմնավոր մարդկանց հենց այն ուղերձը, որը նրանք չեն ուզում լսել, և Հոգին կգործի: Հակառակ դեպքում, մեղավորները կհասկանան Ավետարանի սքանչելիքը ոչ ավելի, քան խոզը կարող է գեղեցկություն տեսնել մարգարիտների մեջ, շունը՝ երկյուղածություն ցուցաբերել սուրբ մսի հանդեպ, և կույրը՝ գնահատել Ռեմբրանդտին[16]: Քարոզիչներն

13. Հռոմեացիների 1.22, Բ Տիմոթեոս 4.3
14. Մատթեոս 5.18
15. Մատթեոս 8.29
16. Մատթեոս 7.6

արջի ծառայություն են մատուցում մարմնավոր մարդկանց՝ տալով այն, ինչ ցանկանում է անկում ապրած մարդու սիրտը, և բարի ծառայություն են մատուցում՝ տալով նրանց ճշմարիտ կերակուրը, մինչև որ Սուրբ Հոգու հրաշագործ աշխատանքի շնորհիվ նրանք հասկանան, թե ինչ է առաջարկվում իրենց՝ ճաշակելով ու տեսնելով, որ Տերը քաղցր է[17]:

Մինչև Ավետարանը քարոզելու մասին այս կարճ քննարկումն ամփոփելը, պետք է անդրադառնանք ևս մեկ հարցի: Ոմանք համարում են, որ մեր ներկա մշակույթը չի հանդուրժի քարոզելու այն ոճը, որը խիստ արդյունավետ էր անցյալի մեծ արթնությունների ժամանակ: Նրանք պնդում են, որ ժամանակակից մարդը կանարգի, կմերժի և կծաղրի Ջոնաթան Էդվարդսի, Ջորջ Ուայթֆիլդի, Չարլզ Սփերջենի և նման քարոզիչների խոսքը: Այնուամենայնիվ, այս տեսությունը հաշվի չի առնում, որ այդ քարոզիչներն անարգվում և ծաղրվում էին նաև իրենց ժամանակակիցների կողմից: Ճշմարիտ Ավետարանի քարոզումը մշտապես հիմարություն է լինելու ցանկացած մշակույթի համար: Ավետարանի վիրավորական բաղադրիչը հեռացնելու և այն «պատշաճ» կերպով քարոզելու ցանկացած փորձ թուլացնում է Ավետարանի զորությունը: Բացի այդ՝ խափանվում է այն նպատակը, որի համար Աստված ընտրեց քարոզումը որպես մարդկանց փրկելու միջոց՝ այն, որ մարդկանց հույսը չլինի ճարտարության, պերճախոսության կամ աշխարհիկ իմաստության վրա, այլ՝ Աստծո զորության[18]:

Մենք ապրում ենք մի մշակույթում, որը կապված է մեղքով՝ ինչպես պողպատե շղթաներով: Ընդունված քարոզչի կամ հոգևոր խորհրդատուի սրտանց պատմած բարոյական պատմությունները, հետաքրքրաշարժ ասույթները և կյանքի դասերը չունեն իրական զորություն այդ խավարի դեմ: Մեզ պետք են Հիսուս Քրիստոսի Ավետարանի քարոզիչներ, ովքեր գիտեն Սուրբ գիրքը, և Աստծո շնորհքով բախվում են ցանկացած մշակույթի՝ աղաղակելով. «Այսպե՛ս է ասում Տերը»:

17. Եսայի 55.1,2, Սաղմոս 34.8
18. Ա Կորնթացիների 1.27-30

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՒ

Ընդունել Ավետարանը

«Որն ընդունեցիք, որի մեջ էլ կանգնած եք»:

— Ա Կորնթացիների 15.1

Քանի որ Ավետարանը Աստծո *գլխավոր* ուղերձն է մարդկությանը, կարելի է ենթադրել, որ այն պետք է ինչ-որ հակազդեցություն առաջացնի մարդու ներսում և ինչ-որ արձագանք պահանջի նրանից: Մեր աստվածաշնչյան հատվածից տեսնում ենք, որ լսելով Ավետարանը՝ Կորնթոսի եկեղեցին և՛ ընդունեց այն՝ իր մեծ արժեքի համեմատ, և՛ դարձրեց Ավետարանը այն հիմքը, որի վրա նրանք կանգնած էին Աստծո առջև: Եթե ուզում ենք ճիշտ դիրք ունենալ Աստծո առջև, մենք պետք է անենք նույնը:

ԸՆԴՈՒՆԵԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Փրկվելու համար մարդիկ պետք է ընդունեն Ավետարանը՝ Աստծո շնորհքով: Ինչ է սա նշանակում: Հայերենում կամ աստվածաշնչյան հունարենում «ընդունել» բառի մեջ չկա ոչ մի արտասովոր բան, սակայն Ավետարանի համատեքստում այն խիստ արտասովոր երանգ է ստանում՝ դառնալով Աստվածաշնչի ամենաարմատական բառերից մեկը:

Առաջինը՝ երբ երկու բան հակառակ են կամ ուղիղ հակադիր են իրար, դրանցից մեկն ընդունելը նշանակում է մերժել մյուսը: Քանի որ այս աշխարհի և Ավետարանի միջև գոյություն չունի ոչ մի ընդհանրություն կամ ընկերություն, Ավետարանը ընդունելը նշանակում է մերժել այս աշխարհը: Այս փաստը ցույց է տալիս, թե որքան արմատական քայլ է համարվում Ավետարանն ընդունելը: Ավետարանի կանչն ընդունելը և դրան հավատալը նշանակում է մերժել այն ամենը, ինչը կարելի է տեսնել և ինչին կարելի է հպվել՝ հանուն անտեսանելիի[1]: Այն նշանակում է մերժել անձնական ինքնավարությունը և ինքնակառավարման իրավունքը՝ ստրկացնելու համար սեփական անձը Մեսիային, Ով մահացավ երկու հազար տարի առաջ՝ որպես

1. Եբրայեցիների 11.1,7,27, Ա Պետրոս 1.8

պետության թշնամի և հայհոյիչ: Այն նշանակում է մերժել մեծամասնությանը և դրա հայացքները՝ միանալու համար հալածված և անկարևոր թվացող փոքրամասնությանը՝ եկեղեցուն: Այն նշանակում է ռիսկի ենթարկել ամեն ինչ այս միակ կյանքում՝ հավատալով, որ խաչին գամված այդ մարգարեն Աստծո Որդին է և աշխարհի Փրկիչը: Ավետարանն ընդունելը պարզապես չի նշանակում մի աղոթք կրկնել՝ խնդրելով Հիսուսին գալ ձեր սրտի մեջ, այլ՝ հրաժարվել այս աշխարհից և հնազանդվել Քրիստոսի բոլոր պահանջներին:

Երկրորդը՝ այն մարդը, ով ընդունել է Ավետարանը, վստահում է միայն Հիսուս Քրիստոսի Անձին և Նրա կատարած աշխատանքին՝ Աստծո առջև արդար դիրք ունենալու համար: Ասում են՝ ցանկացած բանի լիովին վստահելը վտանգավոր է, կամ, լավագույն դեպքում, ոչ իմաստուն քայլ է: Մեր հասարակությունն անհոգ է համարում մարդուն, եթե նա չունի պահուստային ծրագիր կամ այլընտրանքային տարբերակ, չի բազմատեսականացնում իր ներդրումները, տեղում է պահում իր ամբողջ ունեցվածքը, կամ այրում է կամուրջներն իր ետևից: Այնուամենայնիվ, Քրիստոսին ընդունող մարդը պետք է հենց այսպես վարվի: Քրիստոնեական հավատքը բացառիկ է: Քրիստոսին ճշմարտապես ընդունելը նշանակում է հրաժարվել ցանկացած հույսից՝ ցանկացած բանի հանդեպ, և հուսալ միմիայն Քրիստոսին: Ահա թե ինչու Պողոսն ասաց, որ եթե պատմությունը Քրիստոսի մասին կեղծիք է, քրիստոնյան ամենաողորմելին է բոլոր մարդկանցից[2]: Եթե Նա Փրկիչը չէ, քրիստոնյան կորած է, որովհետև նա չունի ուրիշ ոչ մի ծրագիր և ուրիշ ոչնչի չի վստահում: Նա հավատքով հռչակել է. «Իմ Տե՛ր, Քեզ եմ վստահում: Եթե Դու չես կարող կամ չես ուզում փրկել ինձ, ես կբնակվեմ դժոխքում. ես ուրիշ ոչ մի պատրաստություն չեմ տեսնի ինձ համար»:

Ավետարանը ճշմարտապես ընդունելու դեպքում մարդը ոչ միայն հակակրանք է զգում մեղքի հանդեպ և շրջվում է մեղքից, այլև հակակրանք է զգում Քրիստոսից բացի այլ աղբյուրներին (հատկապես՝ սեփական անձին) վստահելուց, և շրջվում է դրանցից: Ահա թե ինչու ճշմարտապես դարձի եկած մարդը նողկանք է զգում նույնիսկ աննշան ակնարկից այն մասին, որ իր արդար դիրքն Աստծո առջև կարող է կախված լինել իր առաքինությունից կամ արժանիքներից: Թեև նրա նոր կյանքը Քրիստոսում բարի գործերի պտուղ է բերում, նա թողել է ցանկացած հույս, որ կարող է փրկվել բարի գործերով, և բացառապես վստահում է Քրիստոսի Անձին և Նրա կատարյալ աշխատանքին:

Երրորդը՝ Ավետարանն ընդունելը նշանակում է հնազանդեցնել սեփական կյանքը Հիսուս Քրիստոսի իշխանությանը: Ժամանակակից ավետարանչությունը հաճախ սովորեցնում է, որ մարդիկ պետք է դարձնեն Հիսուս Քրիստոսին իրենց կյանքի Տերը: Ավելի ճիշտ կլիներ սովորեցնել, որ Հիսուսը նրանց կյանքի Տերն է, անկախ այն

2. Ա Կորնթացիների 15.19

բանից՝ նրանք սիրով ծնկի՞ են գալիս Նրա առջև, թե՞ ատելությամբ բռունցք են թափ տալիս Նրա վրա: Աստվածաշունչը հայտնում է, որ Աստված դարձրեց Հիսուսին, Ում մենք խաչեցինք, և՛ Տեր, և՛ Քրիստոս[3]: Նա օծեց Իր Թագավորին Իր սուրբ սարի վրա և ծաղրում է նրանց, ովքեր ապստամբում են Նրա դեմ[4]: Աստված կոչ չի անում մարդկանց Տեր դարձնել Հիսուսին (ասես, թե նրանք նման իշխանություն ունեն), այլ՝ կատարելապես հնազանդվել այն Տիրոջը, Ում Ինքն օծել է: Այդ իսկ պատճառով, նա, ով ցանկանում է ընդունել Ավետարանի օրհնությունները, պետք է նախ՝ որոշի, թե արդյո՞ք ինքը պատրաստ է հանձնել իր ինքնավարությունը և ինքնակառավարման իրավունքը Ավետարանի Տիրոջը:

Որպես Ավետարանի քարոզիչներ՝ մենք պետք է շատ պարզ բացատրենք այս փոխանակման պայմանները, ոչ թե նվազեցնենք և անտեսենք դրանք՝ գրեթե անհասկանալի դարձնելով: Մենք պետք է գիտակցենք, որ անկեղծ չենք եղել, քանի դեռ չենք բացատրել Աստծուն փնտրող մարդկանց, որ Քրիստոսին ընդունելը ամենախելամիտ, բայց և ամենավտանգավոր որոշումն է, որը նրանք կարող են կայացնել: Ի վերջո, ինչպես Կ. Ս. Լյուիսի հերոս Ասլանը՝ «Առյուծը, կախարդը և զգեստապահարանը» գրքում, Նա ընտելացված առյուծ չէ, և Նա անվտանգ չէ: Նա իրավունք ունի խնդրելու ցանկացած բան այն մարդկանցից, ովքեր դավանում են, որ Նա Տերն է: Նույն Հիսուսը, Ով կանչում է Իր մոտ հոգնածներին, կարող է խնդրել նրանցից ամեն ինչ, և նույնիսկ ուղարկել նրանց՝ կորցնելու իրենց կյանքն Իր համար այս խավար և անկում ապրած աշխարհում[5]: Նրանք, ովքեր չեն հասկանում Ավետարանի կանչի վտանգները, միայն հպանցիկ կերպով են լսել Ավետարանը: Այնուամենայնիվ, ովքեր լսել են Ավետարանը և Աստծո շնորհքով արձագանքել են՝ անկախ դրա վտանգներից, իմաստուն որոշում են կայացրել: Ի՞նչը կարող է ավելի խելամիտ լինել, քան տիեզերքի Արարչին և Պահապանին հետևելը, Ով սիրել է Իր ժողովրդին հավիտենական սիրով, փրկել է նրանց Իր արյամբ և ցուցաբերել է բացարձակ նվիրվածություն նրանց տված ամեն մի խոստմանը[6]: Այնուամենայնիվ, նույնիսկ եթե Նա այսպես չվարվեր և Նրանում այսքան բարություն չլիներ, միևնույն է՝ Նրան հետևելն ամենաիմաստուն որոշումը կլիներ, քանի որ ոչ ոք չի կարող ընդդիմանալ Նրա կամքին[7]: Այս և անթիվ այլ պատճառներով է, որ առաքյալը հորդորում է մեզ՝ «ձեր մարմինները ներկայացրե՛ք կենդանի, սուրբ և Աստծուն ընդունելի պատարագ», և անվանում է դա բանավոր կամ ողջամիտ ծառայություն[8]:

3. Գործք 2.36
4. Սաղմոս 2.4–6
5. Մատթեոս 11.28, 10.16,39
6. Կողոսացիների 1.15–17, Եբրայեցիների 1.3, Երեմիա 31.3, Հայտնություն 5.9, Եբրայեցիների 13.5, Բ Տիմոթեոս 2.13, Բ Կորնթացիների 1.20, Մատթեոս 28.20
7. Հռոմեացիների 9.19, Բ Մնացորդաց 20.6, Հոբ 9.12, Դանիել 4.35
8. Հռոմեացիների 12.1

Չորրորդը՝ Ավետարանն ընդունելը նշանակում է ապրել բոլորովին այլ իրողության մեջ, որում Քրիստոսն ամեն ինչի կենտրոնն է: Ահա թե ինչու են աստվածաբանները քրիստոսակենտրոն անվանում փրկությունը և քրիստոնեական կյանքը: Նա դառնում է մեր տիեզերքի կենտրոնը և մեր ինքնության ու գործունեության աղբյուրը, նպատակը և դրդապատճառը: Երբ մարդն ընդունում է Ավետարանը, նրա ամբողջ կյանքն ընթանում է այլ ենթատեքստով, և այդ ենթատեքստը Քրիստոսն է: Թեև արտաքին նշանները ճշմարիտ դարձի պահին կարող են շրջադարձային չլինել, սակայն դրա աստիճանական արդյունքը հոյակապ կլինի: Ասես լճի մեջտեղը փոքրիկ քար ես գցում՝ այդկերպ Ավետարանի ալիքային էֆեկտն ի վերջո կհասնի հավատացյալի կյանքի բոլոր կողմերին և կիպվի բոլոր ափերին: Ճշմարտապես դարձի եկած մարդը չի ընդունում Ավետարանը՝ որպես հավելում իր նախկին կյանքին, այլ փոխանակում է այն իր նախկին կյանքի հետ: Մի կյանքն ընդունելը նշանակում է կորցնել մյուսը: Հիսուսը պարզորեն սովորեցնում է այս մասին. «Որովհետև ով որ իր անձն ուզենա ապրեցնել, կկորցնի նրան, և ով որ իր անձը կորցնի Ինձ համար, կգտնի նրան»[9]:

Եվ վերջինը՝ Ավետարանը ընդունելը նշանակում է ընդունել Քրիստոսին որպես սեփական կյանքի աղբյուր և պահպանություն: Անկարելի է ընդունել Քրիստոսին որպես մարդու կյանքի մի մաս, կամ՝ որպես հավելում այն բարիքների, որոնք մարդն արդեն ունի՝ առանց Նրա: Նա փոքրիկ պիտույք չէ, որը լրացնում է մեր կյանքը և բարելավում այն: Երբ մարդն ընդունում է Ավետարանը, այն դառնում է նրա կյանքը[10]:

Գոյություն ունեն ընդամենը մի քանի ավելի սարսափելի երևույթներ, քան այն քարոզիչը, ով գովում է անհավատին նրա հրաշալի կյանքի համար՝ մեծարելով նրա բոլոր ձեռքբերումները, և ավելացնելով, որ նրան մեկ բան է պակասում. նա ունի Հիսուսի կարիքը՝ իր կյանքը լիարժեք դարձնելու համար: Այդպես չէր կարծում Պողոս առաքյալը, ով աղբ էր համարում իր անցյալ կյանքի նույնիսկ ամենափայլուն ձեռքբերումները՝ Քրիստոսի համեմատ[11]: Մենք երբեք չպետք է ներկայացնենք Քրիստոսին որպես բալ՝ անհավատի հրաշալի կյանքի թխվածքի վրա: Անհավատը պետք է հասկանա, որ նա չունի կյանք, և որ Քրիստոսից առաջ նրա անձնական ձեռքբերումները ունայնության հուշարձաններ են, որոնք նման են արագ քանդվող ավազե թմբերի:

Հիսուսը սովորեցնում էր. «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ՝ եթե մարդու Որդու մարմինը չուտեք և նրա արյունը չխմեք, կյանք չունեք ձեր անձերում»[12]: Այս «խիստ խոսքի» իմաստն այն է, որ

9. Մատթեոս 16.25
10. Կողոսացիների 3.4
11. Փիլիպեցիների 3.7,8
12. Հովհաննես 6.54

Քրիստոսը պետք է դառնա մեր կյանքի գոյամիջոցը, ոչ թե ընդամենը ինչ-որ հավելում կամ լրացում[13]:

Հավատացյալի համար Հիսուսը երկնքից իջնող մանանան է, անապատում կենդանի ջուր բխող Ժայռը և այն Որթը, որի վրա նա մնում է, և որից կյանք ու պտղաբերություն է ստանում[14]: Այն հավատացյալը, ով ճշմարտապես բաժնեկցել է Քրիստոսին, դադարում է վատնել իր կյանքն այն բաների համար, որոնք հաց չեն և չեն կշտացնում, և մշտապես փնտրում է այն հացը, որն իջնում է երկնքից, որ ուտի դրանից և չմահանա[15]:

Ավետարանի քարոզիչը պետք է աղաղակի այն մասին, որ մարդիկ ոչ միայն ապաշխարեն, այլև ընդունեն: Նա պետք է ոչ միայն բացահայտի և դատապարտի այս աշխարհի չկշտացնող կերակուրը, այլև մատնացույց անի մարդկանց դեպի միակ պահոցը, որում կարելի է ճշմարիտ կերակուր գտնել: Նա պետք է միանա Դավթի հորդորին. «Ճաշակե՛ք և տեսե՛ք, որ Տերը քաղցր է»[16]: Ավելին՝ նա պետք է զգուշացնի բոլորին, որ Քրիստոսին ճշմարտապես ճաշակելու և փրկությունը ստանալու ապացույցն այն է, որ մարդը շարունակում է ճաշակել Նրան և բավականություն գտնել Նրանում, և նույնիսկ Քրիստոսից բաժանվելու միտքը անտանելի է նրա համար:

ԿԱՆԳՆԵԼ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՄԵՋ

Այս գլխի սկզբում գտնվող աստվածաշնչյան խոսքում տեսնում ենք, որ մենք ոչ միայն պետք է ընդունենք Ավետարանը, այլև կանգնենք դրանում: Պողոսը գրում է. «Իմացնում եմ ձեզ այն Ավետարանը, որ ավետարանեցի ձեզ, որն էլ ընդունեցիք, որի մեջ էլ կանգնած եք»: Այս պարզ հայտարարությունը փոխանցում է երկու առանձին, բայց կապակցված ճշմարտություն: Առաջինը վերաբերում է հավատացյալի դիրքին Աստծո առջև՝ համաձայն Ավետարանի, իսկ երկրորդը՝ հավատացյալի համոզմունքներին կամ որոշմանը Ավետարանի վերաբերյալ: Երկուսն էլ խիստ կարևոր են հավատացյալի կյանքում: Առաջին ճշմարտությունը այն մեծ հիմնաքարն է, որի վրա պետք է հաստատվի քրիստոնեական հավատքը. հավատացյալը կարող է կանգնել Աստծո առջև՝ Քրիստոսում և համաձայն Ավետարանի: Երկրորդը՝ քրիստոնեական կյանքը ձևավորելու ազդեցիկ միջոց է. հավատացյալը հաստատվել է Ավետարանի վրա և այլևս չի թողնելու իր դիրքը:

Աստվածաշնչյան քրիստոնեության հիմնարար ճշմարտություններից մեկն այն է, որ հավատացյալը ճիշտ դիրք ունի Աստծո առջև

13. Հովհաննես 6.61
14. Հովհաննես 6.31–35,41,47–51,58, Ա Կորնթացիների 10.4, Հովհաննես 15.5,6
15. Եսայի 55.2, Հովհաննես 6.50
16. Սաղմոս 34.8

Ավետարանում՝ միայն Քրիստոսում: Դավթի Սաղմոսները հակառակվում են մեզ՝ ներկայացնելով մարդու մեծագույն խնդիրը. «Ո՞վ վեր կգնա Տիրոջ սարը, և ո՞վ կկանգնի Նրա սրբության տեղում: Նա, որ սուրբ է ձեռքով և անարատ սրտով, որ իր անձը անիրավության չի տալիս և երդում չի անում նենգությամբ»[17]: Ցանկացած մարդ, ով նույնիսկ աննշան կերպով ենթադրում է, որ գոյություն ունի Աստված, Ով Անձ է և ունի բարոյական չափանիշներ, պետք է դողա Դավթի հարցից: Եթե նա տկարամիտ չէ, կամ նրա խիղճը լիովին չի վառվել, նա պետք է ընդունի, որ չունի այս անհրաժեշտ որակավորումները՝ ամբողջ երկրի Դատավորի առջև կանգնելու և Նրա հավանությանը արժանանալու համար[18]: Աստվածաշնչում գրված է, որ եթե մարդը նայի իր ներսը, նա կտեսնի, որ իր սիրտն ամեն ինչից ավելի խորամանկ և ապականված է[19]: Եթե նա ստուգի իր միտքը, կպարզի, որ դրանում չար խորհուրդներ են բնակվում[20]: Եթե նա ուշադրությամբ լսի իր խոսքերը, կտեսնի, որ դրանք լիքն են նենգությամբ, անեծքով և դառնությամբ[21]: Եթե նա նայի իր ձեռքերին, անթիվ չարագործությունների հետքեր կտեսնի դրանց վրա: Եթե նա հուսահատորեն փորձի ծածկել ամոթը՝ հագնելով իր ամենաարդար գործերը, նա կպարզի, որ զգեստավորված է բորոտի պիղծ փտությամբ[22]: Թեև մարդը բորակով լվացվի և շատ օճառ օգտագործի, նրա անօրինության արատը մնալու է[23]: Որտեղ էլ դառնա, նա տեսնելու է, որ ինքը մեղադրված է, դատապարտված է և անհույս է:

Իր բացարձակ անօգնականությունը գիտակցելու և իրեն արդարացնելուց վերջնականորեն հրաժարվելու պահին է, որ լուսավորված ու վերածնված մեղավորը նայում է Քրիստոսին և գտնում է իր հույսը Նրանում: Հրաժարվելով արդարացնել սեփական անձը՝ նա հավատում է և արդարանում է միայն շնորհքով և միայն հավատքի միջոցով[24]: Այդ պահից ի վեր, նա կրում է քրիստոնյա լինելու կրկնակի նշանը. նա պարծենում է Քրիստոսով և չի վստահում իր մարմնին[25]: Նա մուտք է գործում սրբերի մեծ ժողովը, ովքեր հավատացին Աստծուն, և դա արդարություն համարվեց նրանց[26]: Նա գցում է իրեն Քրիստոսի վրա և կառչում է Նրանից բազմապատիկ ուժով՝ սարսափելով այն ճակատագրից, որը սպասելու էր իրեն, եթե ինքն անձամբ հոգ տաներ իր մասին: Նա կանգնում է միայն Քրիստոսի

17. Սաղմոս 24.3,4
18. Սաղմոս 14.1, 53.1
19. Երեմիա 17.9
20. Երեմիա 4.14
21. Հռոմեացիների 3.13,14
22. Եսայի 64.6 (KJV)
23. Երեմիա 2.22
24. Եփեսացիների 2.8,9
25. Փիլիպեցիների 3.3
26. Ծննդոց 15.6, Գաղատացիների 3.6

վրա և չի համարձակվում հեռանալ Նրանից: Նա համոզված է, որ կարող է բարձրանալ Տիրոջ սարը և կանգնել Նրա սրբարանում՝ միայն շնորհիվ Քրիստոսի Անձի և արժանիքների: Մի փոքր փոփոխելով հայտնի հին հիմնի բառերը՝ կարելի է ասել. «Նրա հույսը կառուցված է միայն Հիսուսի արյան և Նրա արդարության վրա: Նա չի համարձակվում վստահել լավագույնին այս աշխարհում, այլ լիովին ապավինում է Հիսուսի անվանը: Նա կանգնած է Քրիստոս ամուր Ժայռի վրա, քանի որ մնացած բոլոր հիմքերը սորուն ավազներ են[27]:

Քրիստոնեական հավատքը խոստանում է ճիշտ դիրք Աստծո առջև միայն Քրիստոսի միջոցով: Եթե սա ճշմարիտ է, մենք պետք է վճռականորեն հարենք Ավետարանին և կանգնենք Ավետարանի վրա: Արժե նշել, որ «կանգնել» բառը այս գլխի սկզբում գտնվող աստվածաշնչյան հատվածում թարգմանված է հունարեն *«հիստեմի»* բառից, որը սովորաբար օգտագործվում է հենց «կանգնել» իմաստով: Այնուամենայնիվ, Նոր կտակարանում այն հաճախ արտահայտում է համոզմունք, վճռականություն, հաստատակամություն, կայունություն, նաև անշարժ ու անսասան լինելու հատկանիշը: Պողոսը, խոսելով հոգևոր պատերազմի մասին, երեք անգամ օգտագործում է այս բառը՝ հորդորելով հավատացյալներին «հակառակ կանգնել սատանայի հնարներին»[28]: Դրա հետ կապակցված ևս մեկ բայից մենք հասկանում ենք, որ հավատացյալները պետք է «հաստատ կանգնեն» Տիրոջ մեջ՝ հավատքով, Աստծո շնորհքով և առաքելական ավանդույթներով[29]:

Ամեն ինչից առավել, հավատացյալը պետք է հաստատ կանգնի Ավետարանի մեջ և չշարժվի: Եթե այս հիմնաքարը հեռացվի, ամբողջ կառույցը փուլ կգա: Հենց այս պատճառով էր, որ Պողոս առաքյալն ուղղեց իր ամենախիստ հանդիմանություններից մեկը Գաղատիայի եկեղեցուն. «Զարմանում եմ, որ այսպես շուտով փոփոխվում եք՝ ձեզ Քրիստոսի շնորհքի մեջ կանչողից դեպի ուրիշ Ավետարան: Որ ուրիշը չկա, միայն թե կան ոմանք, որ ձեզ խռովեցնում են և կամենում են Քրիստոսի ավետարանը փոխել: Բայց եթե մենք էլ, կամ երկնքից մի հրեշտակ ավետարանի ձեզ նրանից ուրիշ, քան որ մենք ավետարանեցինք ձեզ, նզովված լինի: Ինչպես առաջ ասացինք և հիմա դարձյալ ասում եմ՝ եթե մեկն ավետարանի ձեզ նրանից ուրիշ, քան որ դուք առաք, նզովված լինի»[30]:

Սուրբ գրքի ամեն մի խոսքը և վարդապետությունը կարևոր է. այնուամենայնիվ, որոշ վարդապետություններ ունեն ավելի մեծ կշիռ,

27. Էդվարդ Մոութի «Ամուր ժայռը» հիմնի հատվածը՝ փոփոխված
28. Եփեսացիների 6.11,13,14
29. Այդ կապակցված բայը «ստեկո»-ն է՝ ներկա ժամանակում, կազմված ներկա վաղակատար «էստեկա»-ից, որն, իր հերթին, կազմված է «հիստեմի» բայից: Փիլիպեցիների 4.1, Ա Թեսաղոնիկեցիների 3.8, Ա Կորնթացիների 16.13, Ա Պետրոս 5.12, Բ Թեսաղոնիկեցիների 2.15
30. Գաղատացիների 1.6–9

քան մյուսները: Մեր հավիտենական փրկությունը կախված չէ եկեղեցաբանության և վախճանաբանության որոշ մանրամասներից, սակայն լիովին կախված է Ավետարանից[31]: Այս երկրային ուխտագնացության ընթացքում ամենախորամիտ և հասուն քրիստոնյան կարող է փոխել իր կարծիքը հավատքի բազմաթիվ աննշան սկզբունքների վերաբերյալ. այնուամենայնիվ, նա չպետք է հեռանա և չի հեռանա Ավետարանի հիմքային սկզբունքներից[32]: Այն տղամարդը, կինը, երիտասարդը և երեխան, ով ճշմարտապես ընդունել է Ավետարանը, կկանգնի դրա վրա, և իր կանգուն մնալով կապացուցի, որ ճշմարտապես ընդունել է այն:

Մենք ապրում ենք մի աշխարհում, որը թշնամաբար է տրամադրված Հիսուս Քրիստոսի Ավետարանի հանդեպ և անարգում է այն: Ավելին՝ այս աշխարհը գտնվում է չարի իշխանության ներքո, ով հակառակվում է Ավետարանին ավելի շատ, քան ցանկացած այլ ուսմունքի, և նույնիսկ կջնջեր այն ամբողջ տիեզերքից, եթե կարողանար[33]: Իրականում, սատանան ուրախությամբ ամեն մեկին Աստվածաշունչ կտար և կշահագրգռեր հնազանդվել դրա բոլոր պատվիրաններին, եթե փոխարենը մենք զիջեինք նրան Ավետարանը: Այնուամենայնիվ, առանց Ավետարանի՝ քրիստոնեական հավատքի ամբողջ համակարգը ոչինչ է:

Որպես հավատացյալներ՝ մենք պետք է ոչ միայն ընդունենք Ավետարանը, այլև հաստատ կանգնենք դրա վրա: Մենք չպետք է անտեղյակ լինենք սատանայի ծրագրերից, որ նա չկարողանա հանկարծակիի բերել մեզ[34]: Երբ չակերտավոր փրկիչները փորձեն գողանալ մեր վստահությունը Քրիստոսի հանդեպ, մենք չպետք է թույլ տանք նրանց գայթակղեցնել մեզ: Երբ օրինապաշտ մարդիկ փորձեն լրացումներ անել Քրիստոսի մեջ մեր վստահությանը, մենք չպետք է տեղի տանք: Երբ ինքնակոչ մարգարեները ձգտեն վերաձևակերպել Ավետարանը, որպեսզի դարձնեն այն ավելի հարմար և գրավիչ մեր մշակույթի համար, մենք չպետք է հետևենք նրանց: Երբ չարախոսը մատնացույց անի մեր մեղքը և ծաղրի մեր փառքի հույսը, մենք պետք է մատնացույց անենք Ավետարանը և կանգնենք դրա վրա: Երբ նրա մեղադրանքները վերածվեն շողոքորթության, և նա ասի, որ մեր աստվածապաշտությունը արժանի է վարձատրության, մենք պետք է մերժենք նրան հետևյալ պնդմամբ. «Սակայն ինձ քավ լիցի պարծենալ, բայց միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով, որ նրանով աշխարհն ինձ համար խաչված է, և ես էլ՝ աշխարհին»[35]:

31. Եկեղեցաբանությունն ուսումնասիրում է եկեղեցին, իսկ վախճանաբանությունը՝ ժամանակվա ավարտը կամ դրան հանգեցնող իրադարձությունները:
32. Կողոսացիների 1.22,23
33. Ա Հովհաննես 5.19
34. Բ Կորնթացիների 2.11
35. Գաղատացիների 6.14

ԳԼՈՒԽ ԵՐԵՔ

Ավետարան, որով մենք փրկվում ենք

«Որով փրկվում էլ եք, այն բանով (կամ՝ խոսքով), որ ձեզ ավետարանեցի, եթե ամուր բռնեք նրան, եթե զուր տեղը չեք հավատացել»:

— Ա Կորնթացիների 15.2

Քրիստոնեական հավատքի մեջ պետք է պահվի ամեն մի վարդապետություն հավասարակշռության մեջ: Մենք կանգնում ենք վարդապետական սխալմունք թույլ տալու մեծ վտանգի առջև, երբ չափից շատ ենք շեշտադրում որևէ ճշմարտություն՝ այլ ճշմարտություններ բացառելու կամ անտեսելու հաշվին: Այնուամենայնիվ, անկարելի է չափից շատ շեշտադրել Ավետարանը, քանի որ Ավետարանը՝ Աստծո մեծագույն հայտնությունն է մարդուն, և միակ ուղերձը, որով մարդիկ կարող են փրկվել: Հետևաբար, սա այն ուղերձն է, որը մենք պետք է ամուր պահենք: Թեև նույնիսկ աննշան շեղումն Աստվածաշնչի ճշմարտություններից վտանգավոր է, մենք կարող ենք թյուրըմբռնումներ ունենալ շատ ուսմունքային հարցերում՝ առանց վտանգելու մեր հավիտենական ճակատագիրը: Այնուամենայնիվ, Ավետարանի մասին սխալ պատկերացում ունենալը նշանակում է սխալ հասկանալ ամբողջ քրիստոնեությունը: Եվ Ավետարանին գերադաս դիրք չտալը նշանակում է լիովին սխալ հասկանալ այն:

ՓՐԿԱՐԱՐ ԱՎԵՏԱՐԱՆ

Մեր աստվածաշնչյան խոսքում *«փրկվում... եք»* բայը թարգմանված է ներկա ժամանակով դրված հունարեն բայից, որն ունի «ներկա ընթացքի և ապագա իրողության իմաստ»[1]: Այս խոսքի սկիզբը կարելի է թարգմանել «որով դուք փրկության ընթացքի մեջ եք» արտահայտությամբ: Կարևոր է չմոռանալ, որ Սուրբ գիրքը նկարագրում է փրկությունը երեք ժամանակաձևերով՝ անցյալ, ներկա և

1. Դեյվիդ Ի. Գարլենդ, *«Ա Կորնթացիների»,* «Բեյքեր» հրատարակչության Նոր կտակարանի մեկնություն (Գրենդ Ռեփիդս, «Baker Academic», 2003թ.) էջ 682:

ապառնի: Փրկության այս երեք կողմերից կամ ժամանակաձևերից որևէ մեկն անտեսելը կհանգեցնի փրկությունը ընդհանուր առմամբ խեղաթյուրված կամ անառողջ կերպով դիտարկելուն: Անցյալում Աստված փրկեց մեղավորին մեղքի դատապարտությունից:

Սա տեղի ունեցավ դարձի ժամանակ, երբ քրիստոնյան հավատաց Աստծո վկայությանը Ավետարանի մասին, և դա արդարություն համարվեց նրան[2]: Սուրբ գիրքն այս իրողությունը անվանում է «արդարացում»[3]:

Ներկայում հավատացյալը փրկվում է մեղքի իշխանությունից: Սա հաջորդական ընթացք է, որը կոչվում է «աստիճանական սրբացում» և նկարագրվում է ամբողջ Նոր կտակարանում: Հավատացյալը Քրիստոսի ստեղծածն է, և Աստված աշխատում է նրանում ներգործելով՝ կամենալն էլ, անելն էլ՝ Իր հաճության պես[4]: Խոսքի և Հոգու, փորձությունների և նեղությունների, օրհնությունների և խրատների միջոցով Աստված վերափոխում է հավատացյալին՝ դարձնելով նրա ամբողջ կյանքը համապատասխան Հիսուս Քրիստոսին[5]:

Ապագայում հավատացյալը լիարժեք կերպով և հավիտյան կփրկվի մեղքի իշխանությունից և ներկայությունից: Այս վերջնական փուլը հայտնի է որպես «փառավորում», և նույնքան հաստատ է, որքան մյուսները, քանի որ Նա, Ով սկսեց Իր բարի գործը մեզանում, ավարտին կհասցնի այն[6]: Պողոսը նկարագրում է սա մի հատվածում, որը հայտնի է «փրկության ոսկե շղթա» անվանումով. «Բայց գիտենք, որ Աստծուն սիրողներին ամեն բան գործակից է լինում դեպի բարին, նրանց, որ նախասահմանելով կանչված են: Որովհետև նրանց, որ առաջուց ճանաչեց, առաջուց էլ սահմանեց իր Որդու պատկերին կերպարանակից լինելու, որ Նա անդրանիկ լինի շատ եղբայրների մեջ: Եվ որոնց առաջուց սահմանեց, նրանց կանչեց էլ, և որոնց կանչեց, նրանց արդարացրեց էլ, և որոնց արդարացրեց, նրանց փառավոր էլ արեց»[7]:

Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, որում Աստծո ժողովուրդն անհարկի կարևորում է անցողիկ և աննշան բաները: Մենք այնպես ենք ձգտում այս աշխարհի ակնթարթային հաճույքներին, ասես դրանց իսկապես արժե ձգտել: Այնուամենայնիվ, մենք պետք է պինդ բռնենք մեկ ճշմարտություն. Ավետարանի մեծագույն խոստումը փրկությունն է: Մնացած բոլոր խոստումները և առավելություններ-

2. Հռոմեացիների 4.20–22
3. Հռոմեացիների 5.1
4. Եփեսացիների 2.10, Փիլիպեցիների 2.13
5. Հռոմեացիների 8.29
6. Փիլիպեցիների 1.6
7. Հռոմեացիների 8.28–30

ը մթագնում են այս մեկ ճշմարտության առջև. Ավետարանը Աստծո զորությունն է՝ փրկելու համար, և ամեն մեկը, ով կանչի Տիրոջ անունը, կփրկվի[8]:

Համաձայն Պետրոս առաքյալի, փրկությունը՝ քրիստոնյայի հավատքի անմիջական արդյունքը կամ նպատակն է[9]: Փրկությունը այն ամենի նպատակն է, ինչ Քրիստոսն արեց Իր ժողովրդի համար, և այն պետք է լինի նաև հավատացյալի մեծագույն ձգտումը և նպատակը: Աստված չի կարող տալ ավելի մեծ պարգև, և հավատացյալը չի կարող ունենալ ավելի մեծ հույս կամ դրդապատճառ, քան վերջնական փրկությունն է՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանի միջոցով:

Երբ մենք գիտակցում ենք, թե ինչպիսին էինք Քրիստոսից առաջ և ինչի էինք արժանի այդ վիճակում, է՛լ ավելի ենք հասկանում Ավետարանի մեծությունը: Մենք մեղավոր էինք մեր բնությամբ և գործերով և անբարոյության աստիճան ապականված էինք: Մենք օրինազանց և հանցագործ էինք՝ առանց որևէ արդարացման Աստծո դատաստանի առջև[10]: Մենք արժանի էինք մահվան և հավիտենական դատապարտության, բայց այժմ Աստծո Որդու արյունը փրկում է մեզ: Երբ մենք անօգնական մեղավորներ և Աստծո թշնամիներ էինք, Քրիստոսը մահացավ ամբարիշտների համար[11]: Նրա միջոցով մենք, որ հեռավոր էինք, մոտեցանք Աստծուն[12]: Նրանում մենք ունենք փրկություն՝ Նրա արյամբ, և մեղքերի թողություն՝ Նրա շնորհքի մեծության չափով[13]: Մենք փրկված ենք մեր մեղքերից, հաշտված ենք Աստծո հետ և հաղորդություն ունենք Նրա հետ՝ որպես որդիներ: Ուրիշ ի՞նչ կարող ենք ցանկանալ, և ուրիշ ինչի՞ կարիքը մենք ունենք: Մի՞թե Աստծո Որդու արյամբ տրված փրկության պարգևը բավական չէ՝ մեր սրտերը հավիտյանս հավիտենից լցնելու համար: Մի՞թե սա բավարար շարժառիթ չէ, որ ապրենք հանուն Նրա, Ով մահացավ մեզ համար: Ուրիշ ի՞նչ խոստումների կարիք ունենք: Արդյո՞ք մենք ավելի նախանձավոր կլինենք Նրա համար, քանի որ Նա խոստանում է մեզ ոչ միայն փրկություն, այլև՝ բժշկություն, հանդարտ կյանք, հարստություն և պատիվ: Ի՞նչ է այդ ամենը՝ փրկության պարգևի և Նրան ճանաչելու համեմատ: Եկեք հեռու մնանք նրանցից, ովքեր կձգտեն համոզել մեզ, որ նվիրվենք Աստծուն այլ պատճառներով՝ Հիսուս Քրիստոսից բացի: Եթե մարդիկ, ում դուք երբևէ սիրել եք, վերցվեն ձեզնից, ձեր մարմինը փտի աղբակույտի մեջ, և ձեր անունը

8. Հռոմեացիների 1.16, 10.13
9. Ա Պետրոս 1.9
10. Եփեսացիների 2.1–3, Հռոմեացիների 3.10–19
11. Հռոմեացիների 5.6–10
12. Եփեսացիների 2.13
13. Եփեսացիների 1.7

չարախոսեն թե՛ ընկերները, թե՛ թշնամիները, միևնույն է՝ դուք պետք է գտնեք ձեզ անհրաժեշտ ամբողջ նվիրումը՝ Նրան սիրելու, փառաբանելու և ծառայելու համար, այս մեկ ճշմարտության մեջ. Նա թափեց Իր արյունը ձեզ համար: Ահա թե ինչն է բոցավառում սուրբ և անարատ աստվածապաշտությունը:

Այդ դեպքում, ի՞նչն է պատճառը, որ միայն հավիտենական փրկության խոստումն այլևս բավականին գրավիչ չի թվում՝ մարդկանց դեպի Քրիստոսն առաջնորդելու համար: Ինչո՞ւ է ժամանակակից մարդն ավելի հետաքրքրված այն բանով, թե ինչպես Ավետարանը կարող է օգնել իրեն կյանքում: Առաջին պատճառն այն է, որ քարոզիչներն այլևս չեն քարոզում վերահաս դատաստանի և դժոխքի վտանգների մասին: Երբ քարոզիչները պարզորեն սովորեցնում են այս մասին՝ համաձայն Աստվածաշնչի, մարդիկ սկսում են հասկանալ, որ իրենց մեծագույն կարիքը՝ հավիտենական դատապարտությունից փրկված լինելն է, և այս ժամանակվա ավելի «գործնական» կարիքներն աննշան են դառնում դրա համեմատ: Երկրորդը՝ մենք պետք է հասկանանք, որ մեր բնակավայրերի փողոցներում քայլող և մեր եկեղեցիների նստարաններին նստած մարդկանց մեծամասնությունը մարմնավոր են, իսկ մարմնավոր մարդիկ սիրում են այս աշխարհն ավելի, քան գալիքը: Նրանց գրեթե չեն հետաքրքրում աստվածային իրողությունները և հավիտենությունը[14]: Նրանցից շատերն ավելի պատրաստակամորեն կհաճախեն ինքնագիտակցման և ինքնաարտահայտման մասին սովորեցնող համաժողովների, քան թեկուզ մեկ քարոզ կլսեն սրբացման մասին, առանց որի ոչ ոք չի տեսնի Տիրոջը[15]: Շատերը պատրաստ են ծով ու ցամաք կտրել, որ ավելի լավ կյանք ունենան այսօր, բայց չեն ցանկանում փողոցը անցնել, որ հաճախեն մի շարք հավաքույթների, որոնցում խոսվում է Քրիստոսի և Գողգոթայում Նրա չարչարանքների անսահման արժեքի մասին:

Թեև ճշմարիտ է, որ Ավետարանը կարող է բարելավել մարդու կյանքի պայմանները, և հաճախ անում է դա: Որպես Ավետարանի տնտեսներ՝ մենք պետք է վանենք մեզնից գայթակղությունն այն մասին, որ գրավենք մեր ունկնդիրներին կամ մեր եկեղեցու անդամներին ցանկացած խոստում կամ հույս տալով՝ բացի Հիսուս Քրիստոսից և հավիտենական կյանքից: Թեև դա չափազանց ծայրահեղ է համարվում այսօրվա ավետարանչության մեջ, մենք ճիշտ կվարվենք, եթե աղաղակենք բազմություններին. «Հիսուս Քրիստոսը խոստանում է ձեզ երկու բան. հավիտենական փրկություն, որին դուք

14. Հռոմեացիների 8.5
15. Եբրայեցիների 12.14

կհուսաք, և խաչը, որի վրա դուք կմահանաք»[16]: Հոգին և հարսն ասում են. «Եկ»[17]:

ԱՄՈՒՐ ԲՌՆԵԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Սրբերի հարատևման վարդապետությունը ամենաթանկ ճշմարտություններից մեկն է այն հավատացյալների համար, ովքեր հասկանում են այն[18]: Մեծագույն մխիթարություն և խրախուսանք է իմանալը, որ Նա, Ով սկսեց մեզանում Իր բարի գործը, ավարտին կհասցնի այն[19]: Այնուամենայնիվ, այս վարդապետությունը կոպտորեն աղավաղվել է՝ դառնալով այն հիմնական միջոցը, որով անթիվ մարդիկ, ովքեր դեռ դարձի չեն եկել և ապրում են իրենց մեղքերի մեջ, կեղծ հավաստիացում են ստանում: Սա «խիստ խոսք» է, բայցևայնպես, ճշմարիտ է:

Այս գլխի սկզբում գտնվող աստվածաշնչյան խոսքում Պողոս առաքյալը գրում է. «Դուք կփրկվեք, եթե ամուր բռնեք այդ խոսքը»: *«Եթե»* բառին հաջորդում է պայմանական նախադասություն, որը մենք չպետք է անտեսենք, և որը չենք կարող հեռացնել: Ամեն ինչ պարզ է. մարդը փրկվում է, *եթե* նա ամուր բռնում է Ավետարանը, իսկ *եթե* նա ամուր չի բռնում այն, չի փրկվում: Այս ճշմարտությունը ոչ թե ժխտում է հարատևման վարդապետությունը, այլ բացատրում է այն: Փրկությանը ճշմարտապես հավատացող ոչ մի մարդ չի գնա հավիտենական կործանման: Նրանց փրկող Աստծո շնորհքը և զորությունը կպահպանեն նրանց մինչև վերջին օրը: Այնուամենայնիվ, այն, որ նրանք ճշմարտապես հավատացել են, ապացուցվում է այն բանով, որ նրանք շարունակում են մնալ աստվածային իրողությունների մեջ և չեն հեռանում Նրանից: Թեև նրանք դեռ պայքարում են իրենց մարմնական բնության դեմ և ենթակա են բազմաթիվ ձախողումների, սակայն նրանց կյանքի ամբողջական ընթացքը ցույց կտա հստակ և նկատելի առաջընթաց թե՛ հավատքի, թե՛ աստվածապաշտության մեջ: Այնպես չէ, որ հարատևելն է փրկում նրանց և բերում Աստծո շնորհքը նրանց կյանքում. այն ցույց է տալիս, որ նրանց կյանքում կա Աստծո շնորհքը, և որ նրանք ճշմարտապես հավատքով փրկված են: Պարզ ասած՝ ճշմարիտ դարձի ապացույցը կամ վավերացումն այն է, որ Քրիստոսի հանդեպ իր հավատքը դավանող մարդը հարատևում է

16. Այս խոսքերը չեն պատկանում հեղինակին. նա լսել է դրանք շատ տարիներ առաջ Լեոնարդ Ռեյվենհիլի կողմից անցկացվող հավաքույթների ընթացքում:
17. Հայտնություն 22.17
18. «Համառոտ սկզբունքները»՝ Մկրտականների կողմից պաշտոնապես հաստատված առաջին հավատո հանգանակը, խոսում է աստվածային հարատևության մասին. «Այն մարդիկ, ում Աստված ընդունել է Սիրելիում և սրբացրել է Իր Հոգով, երբեք լիովին կամ վերջնականորեն չեն հեռանա շնորհքից, այլ, անշուշտ, կհարատևեն մինչև վերջ»:
19. Փիլիպեցիների 1.6

իր հավատքի մեջ և ավելի է սրբվում ամբողջ կյանքի ընթացքում: Եթե մարդը դավանում է, որ հավատում է Քրիստոսին, բայց հեռանում է Աստծուց կամ չի ունենում որևէ առաջընթաց աստվածապաշտության մեջ, դա չի նշանակում, որ նա կորցրել է իր փրկությունը: Դա ցույց է տալիս, որ նա երբեք ճշմարտապես փրկված չի եղել:

Այս ճշմարտությունն ակնհայտորեն երևում է փրկության մասին Սուրբ գրքի ամբողջական ուսմունքի մեջ: Հիսուսը սովորեցնում է, որ կփրկվի նա, ով կհամբերի իր հավատքով մինչև վերջ[20]: Սերմնացանի առակում Նա բացատրեց, որ թեպետ կթվա, թե շատերն են ընդունել փրկությունը, նրանց մեծ մասը կնահանջի նեղությունների, հալածանքների, այս աշխարհի հոգսերի և հարստության խաբեության պատճառով[21]: Անդրադառնալով նրանց, ովքեր հեռացել էին Եփեսոսի եկեղեցուց՝ Հովհաննես առաքյալը գրում է. «Մեզնից դուրս գնացին, բայց մեզնից չէին, որովհետև եթե մեզնից լինեին, ապա մեզ հետ մնացած կլինեին, բայց որ հայտնի լինեն, թե նրանք ամենը մեզնից չեն»[22]:

Կարևոր է ևս մեկ անգամ նշել, որ այս սուրբգրային հատվածները չեն ժխտում հավատացյալի ապահովությունը Քրիստոսում: Աստծո ճշմարտապես վերածնված զավակը կշարունակի մնալ հավատքի մեջ մինչև վերջ՝ շնորհիվ Նրա հավատարմության և զորության, Ով սկսեց Իր բարի գործը նրանում[23]: Այնուամենայնիվ, այս զգուշացումները կարևոր գործառույթ ունեն քրիստոնեական հավատքի մեջ և չպետք է անտեսվեն: Դրանք օգնում են մեզ տեսնել տարբերությունը ճշմարիտ և սխալ դարձերի միջև, և ծառայում են որպես զգուշացումներ, որպեսզի հավատացյալները ջանք անեն՝ իրենց կոչումը և ընտրությունը հաստատելու համար[24]:

Այս զգուշացումները հատկապես տեղին են Արևմուտքում ավետարանական շարժման ներկա վիճակի լույսի ներքո, և դրանք շատ կարևոր են նրանց համար, ովքեր դավանում են, որ հավատում են Քրիստոսին: Շատերն են հավատում, որ փրկված են և լիարժեք քրիստոնյա են, քանի որ մեկ անգամ աղոթել են՝ խնդրելով Հիսուսին մուտք գործել իրենց սիրտը: Այնուամենայնիվ, նրանք չեն ապրում հավատքի կյանքով: Նրանք այդպես էլ դուրս չեն եկել աշխարհից, կամ, նույնիսկ եթե դուրս են եկել, արագորեն վերադարձել են: Տիրոջ երկյուղը գործնականորեն չի արտահայտվում նրանց կյանքում: Նրանց կյանքում չկա աստվածային շնորհքի բուրմունքը: Նրանց կյանքում չկա որևէ արտաքին ապացույց ներքին վերափոխման մա-

20. Մատթեոս 24.13
21. Մատթեոս 13.21,22
22. Ա Հովհաննես 2.19
23. Փիլիպեցիների 1.6
24. Բ Պետրոս 1.5–10

սին: Նրանց կյանքում իսպառ բացակայում է աստվածային խրատը, որին մասնակից են Աստծո բոլոր զավակները[25]: Չնայած այս ամենին՝ նրանք վստահ են իրենց փրկության մեջ, քանի որ մեկ անգամ աղոթել են և համոզված են, որ իրենց աղոթքն անկեղծ է եղել: Անկախ այն բանից, թե որքան ընդունված է այս համոզմունքը՝ այն չունի ոչ մի սուրբգրային հիմնավորում:

Անկասկած, դարձի գալը տեղի է ունենում հստակ պահին, երբ մարդն անցնում է մահից դեպի կյանք՝ հավատալով Հիսուս Քրիստոսին[26]: Այնուամենայնիվ, աստվածաշնչյան հավաստիացումն այն մասին, որ մարդն անցել է մահից դեպի կյանք, հիմնված է ոչ միայն դարձի գալու պահի քննության վրա, այլև՝ մարդու հետագա կյանքի քննության: Կորնթոսի եկեղեցու ճնշող մարմնավոր մթնոլորտում Պողոս առաքյալը չխնդրեց կորնթացիներին վերագնահատել իրենց դարձի գալու վերապրումն անցյալում, այլ հորդորեց քննել իրենց ներկա կյանքը[27]:

Մենք պետք է հետևենք Պողոսի առաջնորդությանը ենթադրյալ նորադարձների հետ խորհրդատվություն անցկացնելիս: Նրանք պետք է իմանան, և մենք պետք է սովորեցնենք նրանց, որ անցյալում տեղի ունեցած Աստծո ճշմարիտ փրկարար աշխատանքի ապացույցը՝ Նրա աշխատանքի շարունակությունն է ներկայում և մինչև վերջին օրը: Մենք փրկված ենք, եթե ամուր բռնում ենք այն խոսքը, որը քարոզվեց մեզ: Եթե այդպես չէ, մենք չունենք փրկության հավաստիացում: Եթե այս պարզ աստվածաշնչյան ճշմարտությունը քարոզվի պատշաճ կերպով՝ վստահությամբ և սրտացավությամբ, այն կհերքի եկեղեցում նստած անթիվ մարդկանց կեղծ հավաստիացումը և փրկության կբերի շատերին:

Երանի՜ Աստված բարձրացներ այնպիսի մարդկանց, ովքեր հասկանում են, որ կեղծ հավաստիացումը փրկության մեջ մեր ժամանակաշրջանի մեծագույն ախտերից մեկն է, և որ այդ թույնը միայն կործանում է եկեղեցու վկայությունը: Եթե մենք կհասկանանք, որ ամենամեծ միսիոներական դաշտերից մեկը Արևմուտքի երկրներում ամեն կիրակի առավոտյան մեր եկեղեցու նստարաններին նստած մարդիկ են: Եթե մենք կխոստովանենք, որ այս մեծ և մահացու խաբեությունն առաջացավ, քանի որ մենք մակերեսորեն էինք վերաբերվում Ավետարանին, անտեղյակ էինք ճշմարիտ դարձի գալու բնույթին և հրաժարվում էինք սրտացավորեն կիրառել եկեղեցական կարգապահության սկզբունքները:

25. Եբրայեցիների 12.8
26. Հովհաննես 5.24
27. Բ Կորնթացիների 13.5

ԳԼՈՒԽ ՉՈՐՍ

Կարևորել Ավետարանը

«Որովհետև ես առաջուց այն տվի ձեզ, որ ես էլ ընդունեցի»:

— Ա Կորնթացիների 15.3

Չկա ավելի կարևոր ճշմարտություն, քան Հիսուս Քրիստոսի Ավետարանը: Սուրբ գրքում կան բազմաթիվ ուղերձներ, որոնցից նվազագույնը ավելի արժեքավոր է, քան ամբողջ աշխարհի հարստությունը միասին, և ավելի կարևոր, քան մարդկանց կողմից երբևէ արտահայտված մեծագույն մտքերը: Եթե Սուրբ գրքի փոշին իսկ ոսկուց թանկ է, ինչպե՞ս մենք կարող ենք հաշվարկել Ավետարանի արժեքը կամ կարևորությունը[1]: Նույնիսկ Սուրբ գրքում Ավետարանի ուղերձը չունի իրեն հավասարը: Արարչագործության պատմությունը թեև սքանչելիորեն շարադրված է, բայց խոնարհվում է խաչի ուղերձի առջև: Մովսեսի օրենքը և մարգարեների խոսքերը մատնացույց են անում այս փրկության եզակի ուղերձը: Նույնիսկ երկրորդ գալուստը, որքան էլ այն հրաշալի լինի, գտնվում է Ավետարանի ստվերում: Չափազանցություն չէ ասելը, որ Հիսուս Քրիստոսի Ավետարանը մեծագույն և կարևորագույն ուղերձն է, քրիստոնեական հավատքի ամրոցը և հավատացյալի հույսի հիմքը[2]:

Չկա ավելի կարևոր, ավելի օգտակար և ավելի անհրաժեշտ բան Աստծո փառքի և թագավորության տարածման համար: Օգտվելով Առակաց գրքի բառապաշարից՝ մենք իրավամբ կարող ենք ասել Ավետարանի մասին. «Որովհետև նրա շահը լավ է արծաթի շահից, և նրա արդյունքը՝ մաքուր ոսկուց: Նա պատվական է գոհարներից, և քո բոլոր ցանկալի բաները նրան չարժեն»[3]:

Հաշվի առնելով այս ճշմարտությունը՝ Ավետարանը հասկանալը պետք է լինի մեր մոլուցքը: Թեև դա անհնարին առաջադրանք է,

1. Հոբ 28.6
2. Ամրոց բառը հունարենում «ակրոպոլիս»-ն է («ակրո»՝ «բարձր», և «պոլիս»՝ «քաղաք»): Ավետարանը քրիստոնեական հավատքի բարձրակետն է, դրա պարսպավոր քաղաքը:
3. Առակաց 3.14,15

արժե ամեն ջանք գործադրել դրա համար, քանի որ Ավետարանում մենք գտնում ենք Աստծո ամբողջ հարստությունը և հավատացյալի ճշմարիտ ուրախությունը: Արժե թողնել ավելի անկարևոր գործերը և ավելի ցածր վայելքները՝ յուրացնելու համար Աստծո շնորհքի խորությունը, որը հայտնված է այս մեկ ուղերձում: Հոբ 28.1-9-ը գեղեցիկ կերպով նկարագրում է նման ձգտումը:

«Արդարև արծաթը երակ ունի, և ոսկին՝ տեղ, ուր որ նրան զտում են: Երկաթը հողից է առնվում, և քարը հալվում է, պղինձ դառնում: Մարդը վախճան է դնում խավարին, և նա բոլորովին կատարելապես քննում է քարը խավարում և մահի ստվերում: Քանդում է հորը բնակվողի կշտին, ոտքից մոռացված տեղերը. կախ են ընկնում մարդկանցից, օրորվում: Երկիրը, որից դուրս է գալիս հաց, իսկ նրա տակն իբր թե կրակով է քանդված. նրա քարերը շափյուղայի տեղն է, և ոսկու ավազ կա նրանում: Նրա ճանապարհը չգիտի հափշտակող թռչունը, և անգղի աչքը նրան չի տեսել: Նրան կոխ չեն տվել խրոխտ գազանները. առյուծը չի անցել նրա վրայով: Նա ապառաժին է ձեռնամուխ լինում, սարերը՝ արմատից տապալում»:

Նույնիսկ հին աշխարհում՝ Հոբի ժամանակներում կային մարդիկ, ովքեր պատրաստ էին գործադրել ամեն հնարավորին ջանք, հրաժարվել երկրի երեսին ապրելուց, որպեսզի փորեին ժայռերը և, վտանգելով իրենց կյանքը, շրջեին ամեն մի քար խավարի ստվերում՝ այս աշխարհի գանձերը գտնելու համար: Որքա՜ն ավելի մենք պետք է լուսավորվենք Սուրբ Հոգուց և ճաշակենք Աստծո բարի Խոսքը և գալիք աշխարհի զորությունը, որպեսզի կամենանք թողնել ավելի ցածր փառք ունեցող բաները և ձգտենք Աստծո փառքին՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանում[4]: Այդ դեպքում, ինչո՞ւ է ճշմարիտ ձգտումն Ավետարանի հանդեպ այդքան հազվագյուտ Աստծո ժողովրդի մեջ:

ՁՐԻԿԱՑՐԱԾ ԱՎԵՏԱՐԱՆ

Առաջինը՝ մենք պետք է հասկանանք, որ «սրբերին մեկ անգամ ավանդված» Ավետարանը կրել է բազմաթիվ վերանայումներ և կրճատումներ վերջին սերունդների կողմից[5]: Ուսումնասիրելով Սուրբ գիրքը՝ մենք արագորեն նկատում ենք մեծ տարբերություն առաքելական Ավետարանի և մեր ավելի ժամանակակից տարբերակի բովանդակության և որակի միջև: Նույնիսկ կարդալով Բարեփոխողների, Մաքրակրոնների, Էդվարդսի, Ուայթֆիլդի, Սփերջենի կամ մեր օրերին ավելի մոտ Մարտին Լլոյդ-Ջոնսի քարոզները՝ մենք արագորեն հասկանում ենք, որ այսօր մնացել է նրանց կողմից մեկնվող գեղեցիկ

4. Եբրայեցիների 6.4,5
5. Հուդա 3

Ավետարանի զուտ խրտվիլակը, որ մենք կրճատել ենք այդ Ավետարանը՝ հասցնելով մի քանի հոգևոր օրենքների և «Հռոմեական ճանապարհի»[6*]: Մենք վերածել ենք Ավետարանը պարզ և հեշտորեն ընկալվող հավատքի դավանանքի, որը հիմնականում հեռացնում է դրա սկզբնական գեղեցկությունը և գրեթե զրկում է այն փառքից, որով կարելի էր զմայլվել, և որը կարելի էր է՛լ ավելի հետազոտել:

Ճիշտ է, որ Աստված ծրագիր ունի, որ մենք մեղավոր ենք, և որ Քրիստոսը մահացավ և հարություն առավ, որպեսզի մենք հավատքով փրկվենք, բայց այս արտահայտություններն անգիր հիշելը չի նշանակում, որ մենք գիտենք և հասկանում ենք Ավետարանը: Մենք չպետք է չշրջված թողնենք այս թանկարժեք քարերը: Կենդանիները, որոնք ցածր են մարդուց, կարող են սովորել նմանակել և կրկնել ասվածը, բայց մենք պետք է քննենք Աստվածաշնչի գրքերը և բացահայտենք դրանց նշանակությունը: Նման հանքափորների՝ մենք պետք է պատրաստ լինենք գործադրել ամեն հնարավորին ջանք, զրկել մեզ ժամանակավոր ուրախություններից և փնտրտել անթիվ ժամեր տևող ուսումնասիրությունների ու աղոթքների միջոցով, որպեսզի ստանանք Ավետարանը ճանաչելու մրցանակը: Հակառակ դեպքում, մենք մշտապես խավարած մտքով մարդիկ կլինենք՝ մեր ներսի տգիտության պատճառով[7]: Մենք պետք է ուղղենք մեր հայացքն այն վեմին, որից կտրված ենք[8]: Մենք պետք է ձգտենք կրկին բացահայտել հինավուրց Ավետարանը, կրկին հափշտակվել Ավետարանով և քարոզել այն՝ լցված ավյունով, ինչպես մարդիկ, ովքեր ճանաչում են իրենց Աստծուն և հասկանում են, թե ինչ է Նա արել իրենց համար[9]:

ՑԱԾՐ ԿԱՐԾԻՔ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Երկրորդ պատճառը, թե ինչու այսօր մարդիկ չունեն ճշմարիտ ձգտում Ավետարանի հանդեպ այն է, որ շատերը դիտարկում են այն որպես ներածություն դեպի քրիստոնեությունը կամ քրիստոնեության մանկական փուլ, որն արագորեն տիրապետում և անցնում են՝ գնալով դեպի ավելի խորը վարդապետությունները: Այնուամենայնիվ, սա բոլորովին չի համապատասխանում ճշմարտությանը: Հենց Ավետարանն է Աստվածաշնչի «խորը վարդապետությունը»: Վախճանաբանությունը և Հայտնություն գիրքը պարզ կդառնան Քրիստոսի երկրորդ գալստի ժամանակ, բայց մենք այդպես էլ չենք կարողա-

6. Ա Տիմոթեոս 1.11

*Հռոմեական ճանապարհը» բաղկացած է Հռոմեացիների թղթից ընտրված մի քանի խոսքերից, որոնք համառոտ ներկայացնում են Ավետարանի փրկության ծրագիրը:

7. Եփեսացիների 4.18

8. Եսայի 51.1

9. Դանիել 11.32

նա լիարժեք կերպով տիրապետել կամ ամբողջովին ընկալել Աստծո փառքը Հիսուս Քրիստոսի Ավետարանում: Ցանկացած մարդ, ով կարծում է, որ այնքան լավ գիտի Ավետարանը, որ կարող է ետևում թողնել այն և անցնել դեպի ավելի մեծ ուսմունքները, պետք է ուշադրություն դարձնի Պողոս առաքյալի նկատողությանը. «Եթե մեկը կարծում է, թե բան գիտի, նա դեռ բան չիմացավ, ինչպես պետք է իմանալ»[10]: Եթե մենք ի զորու լինեինք ետ կանչելու պատմության մեծագույն աստվածաբաններին և քարոզիչներին, բոլորն էլ կվկայեին, որ իրենց երկրային ուխտագնացության ժամանակ նրանք մանուկներ էին Ավետարանի մեջ: Նրանք կմիանային Առակաց գրքի իմաստունին, որը բացականչում էր. «Հիրավի ես ամեն մարդուց ավելի թանձրամիտ եմ և մարդկային խոհեմություն չունեմ և իմաստություն չեմ սովորել և Ամենասուրբի գիտությունը չգիտեմ»[11]:

Մենք պետք է հասկանանք, որ մեր ճանապարհը դեպի Ավետարանը կլինի ավելի երկար, քան մեր կյանքն է. այն կձգվի ամբողջ հավիտենության ընթացքում: Ամեն մի նոր ճշմարտություն բացահայտելուն պես, Ավետարանի փառքն ավելի ու ավելի կգրավի մեզ, մինչև որ ամբողջովին կլանի մեր միտքը և իշխի մեր կամքի վրա: Միգուցե մտածեք՝ արդյո՞ք Ավետարանի մեջ կա այնպիսի բան, ինչին արժե ձգտել, այնպիսի բան, ինչը բավականին մեծ է՝ ձեր ուշադրությունը գրավելու համար: Ես ուզում եմ քաջալերել ձեզ: Ավետարանը շատ ավելին է, քան այն, ինչ ձեզ միգուցե ասել են, և անսպառ փառք է կրում իր մեջ: Իրականում, մենք կանցկացնենք ամբողջ հավիտենությունը՝ փորձելով բացահայտել ամբողջ փառքը, որը բովանդակվում է այս եզակի ուղերձում, և նույնիսկ անթիվ հավիտենական դարեր անց Ավետարանի դեռ չտեսնված փառքն անսահման է լինելու: Ավետարանը միշտ լինելու է այն, ինչի մեջ հրեշտակները և փրկվածները փափագում են տեսնելով թափանցել[12]: Հիշե՛ք հետևյալը. դուք պետք է մշտապես աճեք Ավետարանի ճանաչողության մեջ: Ավետարանը քրիստոնեության ներածությունը չէ, այն քրիստոնեությունն է՝ սկզբից մինչև վերջ: Դուք դեռ չեք տիրապետել Ավետարանին, և ո՛չ էլ տիրապետելու եք, բայց Ավետարանը կտիրապետի ձեզ:

ԱՎԵՏԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԱԿԱՍԸ

Երրորդ պատճառը, թե ինչու Աստծո ժողովուրդը չունի ձգտում Ավետարանի հանդեպ, բխում է մի սխալական և մահացու ենթադրությունից. մենք ենթադրում ենք, որ Աստծո ժողովուրդը, առավել ևս՝ ծառայողները, հասկանում են Ավետարանը, և այդ պատճա-

10. Ա Կորնթացիների 8.2
11. Առակաց 30.2,3
12. Ա Պետրոս 1.12

ռով չենք ուսուցանում այն, էլ չասենք նման ուսուցմանը առաջնահերթություն տալու մասին: Այն բանից հետո, երբ նորադարձն առաջ է գալիս՝ իր հրապարակային դավանությունն անելու համար, որքա՞ն ժամանակ է նրան ուսուցանվում Ավետարանը: Հաճախ ինչ-որ մեկը մի քանի րոպե տևող խորհրդատվություն է անցկացնում նրա հետ՝ օգտագործելով որևէ ավետարանչական գրքույկում նշված աստիճանական մեթոդ, ինչից հետո նրան նշանակում են աշակերտական դասընթացի, որտեղ նա պետք է սովորի գործնական քրիստոնեական կյանքի մասին: Որքանո՞վ է նա ուսուցում ստանում Ավետարանի մասին եկեղեցու ամբիոնից: Հնարավո՞ր է արդյոք, որ նա ամբողջ կյանքում հաճախի եկեղեցական հավաքույթների և այդպես էլ չլսի քարոզներ, որոնք ներկայացնում են պատշաճ և հստակ բացատրություններ Գողգոթայում Քրիստոսի կատարած աշխատանքի և դատարկ գերեզմանի մասին: Եթե այդ մարդը զգա, որ կանչված է ծառայելու համար, քանի՞ դասընթացի նա կհաճախի աստվածաբանական համալսարանում, որոնք միմիայն նվիրված կլինեն Ավետարանի բովանդակությանը և կիրառմանը: Անհրաժեշտ կլինի ստուգել բազմաթիվ կրոնական ուսումնական հաստատությունների ծրագրեր, մինչև որ կարողանաք գտնել թեկուզ մեկ դասընթաց, որը հատուկ նվիրված է այս նպատակին: Մինչև աստվածապաշտ Հոսիա թագավորի իշխանությունը, Աստծո օրենքը տարիներ շարունակ կորսված էր տաճարում[13]: Հնարավո՞ր է, որ նույնը կատարվել է նաև մեզ հետ: Հնարավո՞ր է, որ *Ավետարանը* կորսվել է ավետարանական քրիստոնյաների շրջանակում:

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՆՏԵՍՈՒՄԸ ՔԱՐՈԶՄԱՆ ՄԵՋ

Եկեղեցի հաճախողների շրջանակներում Ավետարանի հանդեպ ձգտում չունենալու չորրորդ և վերջին պատճառը այդ ձգտման բացակայությունն է ամբիոնի ետևում: Քրիստոսի ծառայողն ամենից առաջ Քրիստոսի Ավետարանի ծառայող է: Ավետարանը մեր մեծագույն տնտեսությունը, արտոնությունը և բեռն է[14]: Թեև մենք երկրային անոթներ ենք՝ փխրուն և կոտրված, մենք կրում ենք ամենաթանկ գանձը, որը երկինքն ու երկիրը երբևէ ճանաչել են[15]: Աստված առանձնացրել է մեզ՝ Իր ներկայության մեջ բնակվելու համար: Նա կանչում է մեզ՝ օգտագործելու մեր օրերի մեծ մասը, որ բացահայտենք Նրա առեղծվածները և հայտնենք դրանք այլ մարդկանց՝ քարոզվող խոսքի միջոցով: Այնուամենայնիվ, շատ քարոզիչներ այսօր հեռացել են իրենց գլխավոր կոչումից, որն Աստծուն ճանաչելը և ճանաչեցնելն է: Նրանց ուսում-

13. Բ Մնացորդաց 34.14–21
14. Ա Կորնթացիների 4.1, Ա Տիմոթեոս 1.12, Ա Պետրոս 1.12, Ա Կորնթացիների 9.16
15. Բ Կորնթացիների 4.7

նասիրություններն անպտուղ են, իսկ նրանց աղոթքի ծածուկ սենյակը փակ է: Ծառայողն այլևս Աստծո մարդ չէ, այլ՝ ժողովրդի մարդը: Քարոզիչն այլևս չի ասում. «Այսպես է ասում Տերը». նրա ուղերձները ծնվում են հարցաշարերից և իր ենթադրյալ գիտելիքից իր համայնքի անմիջական կարիքների մասին: Նա չի կարող ասել Եղիա մարգարեի հետ. «Կենդանի է Զորաց Տերը, որի առջև ես կանգնած եմ», և ո՛չ էլ կանգնում է մարդկանց առջև՝ որպես ուղարկված Աստծուց[16]:

Մենք՝ Քրիստոսի անունով ծառայողներս, կանչված չենք լինելու հոգևոր խորհրդատուներ, համակարգողներ կամ մոտիվացնող խոսնակներ. մենք քարոզիչնե՛ր ենք: Այն, որ աշխարհը ծաղրում է նման անվանումը, և այն, որ գոյություն ունեն անթիվ խաբեբաներ, որոնք առիթ են տալիս նման ծաղրանքի, դեռ չի նշանակում, որ մենք պետք է անարգենք Քրիստոսի կողմից մեզ տրված պաշտոնը: Մենք քարոզիչներ ենք, և ամեն ինչից առավել՝ մենք Ավետարանի քարոզիչներ ենք: Մենք չպետք է գայթակղվենք ավելի ցածր նպատակներով, միայն որովհետև աշխարհը հավանություն է տալիս դրանց: Մենք չպետք է թույլ տանք որևէ կերպով հեռացնել մեզ մեր ուսումնասիրության և աղոթքի սենյակներից, այլ պետք է վարժեցնենք մեզ աստվածապաշտության համար[17]: Մենք պետք է ջանասեր լինենք, որ ընտիր կանգնեցնենք մեր անձերն Աստծո առջև՝ որպես մշակներ, որոնք ամաչելու կարիք չունեն և ճշմարտության խոսքն ուղղությամբ են սովորեցնում[18]: Մենք պետք է մտածենք այս բաների մասին և հարատևենք այս բաներում, որպեսզի մեր առաջադիմությունն ակնհայտ լինի բոլորի համար[19]: Մենք երբեք չպետք է անհոգությամբ վերաբերվենք մեր ներսում գտնվող հոգևոր պարգևին, այլ նվիրվենք Սուրբ գրքի հրապարակային ընթերցմանը, հորդորանքին և ուսուցմանը[20]:

Եկեք լինենք առաջին առաքյալների պես, ովքեր առերեսվելով բազմաթիվ խնդիրների՝ հայտարարեցին. «Մեզ վայել չէ, որ Աստծո Խոսքը թողած՝ սեղանին ծառայենք... մենք պետք է աղոթքի և խոսքի պաշտամունքին հետևենք»[21]: Նման Հոբի օրերի հանքափորներին՝ մենք պետք է գործադրենք ամեն հնարավորին ջանք, նույնիսկ հրաժարվենք երկրի երեսին ապրելուց, որպեսզի փորենք ժայռերը խորը և խավար ստվերներում՝ բացահայտելու համար Հիսուս Քրիստոսի Ավետարանի անսահման գանձերը և ի ցույց հանելու դրանք Աստծո ժողովրդին: Սա մեծագույն առաջադրանքն է և միակ միջոցը, որով կարելի է կրակ վառել թե՛ եկեղեցու ամբիոնի ետևում, թե՛ եկեղեցու նստարաններին:

16. Գ Թագավորաց 18.15, Հովհաննես 1.6
17. Ա Տիմոթեոս 4.7,8
18. Բ Տիմոթեոս 2.15
19. Ա Տիմոթեոս 4.15
20. Ա Տիմոթեոս 4.13,14
21. Գործք 6.2,4

ԳԼՈՒԽ ՀԻՆԳ

Փոխանցել և քարոզել Ավետարանը

«Որովհետև ես... այն տվի ձեզ, որ ես էլ ընդունեցի, թե Քրիստոսը մեր մեղքերի համար մեռավ՝ գրքերի համեմատ, և թե թաղվեց, և թե երրորդ օրը հարություն առավ՝ գրքերի համեմատ»:

— Ա Կորնթացիների 15.3,4

Այս հատվածում մենք սովորում ենք երկու կարևոր ճշմարտություն Ավետարանի մասին: Առաջինը՝ այն մարդկային գյուտ չէ, այլ գրված է Սուրբ Հոգով շարժվող մարդկանց կողմից[1]: Սա նշանակում է, որ Սուրբ գիրքն ունի լիարժեք հեղինակություն՝ որպես Աստծուց ոգեշնչված ուղերձ[2]: Երկրորդը՝ այս ուղերձը մեկընդմիշտ տրվել է սրբերին, և քրիստոնյաների ամեն մի սերունդ պատասխանատու է, որ անփոփոխ կերպով փոխանցի այն հաջորդ սերնդին[3]:

ՓՈԽԱՆՑԵԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Գրելով, որ ինքն «ընդունեց» Ավետարանը՝ Պողոս առաքյալը պնդում էր, որ հատուկ հայտնություն էր ստացել: Նա չէր կեղծել այս ուղերձը, ո՛չ էլ վերցրել էր այն ուրիշներից: Փոխարենը, նա ստացել էր այն Հիսուս Քրիստոսի գերբնական հայտնության միջոցով: Գաղատացիների 1.11,12 խոսքերում Պողոսն ավելի մանրամասնորեն է նկարագրում իր փորձառությունը. «Իմացնում եմ ձեզ, եղբայրնե՛ր, այն Ավետարանը, որ ինձնից ավետարանվեց, որ նա մարդուց չէ: Որովհետև ես էլ ո՛չ մարդուց առա նրան, և ո՛չ էլ սովորեցի, այլ՝ Հիսուս Քրիստոսի հայտնությամբ»:

Պողոսը պատմում էր այս եզակի փորձառության մասին՝ ցույց տալու համար, որ իր Ավետարանն աստվածային ծագում ունի: Նա չէր գրում այս բաները, որպեսզի մեծարեր իրեն կամ ակնարկեր, որ իր Ավետարանը տարբերվում է մյուս առաքյալներին կամ ամբողջ եկեղե-

1. Բ Պետրոս 1.21
2. Բ Տիմոթեոս 3.16
3. Հուդա 3

ցուն տրված Ավետարանից: Այնուհետև նույն նամակում նա պատմում է, որ ներկայացրել էր իր Ավետարանը Երուսաղեմի եկեղեցում մեծ համբավ ունեցող ծառայողներին, և նրանք ոչ ուղղել էին նրան, ոչ էլ որևէ բան էին ավելացրել նրա խոսքերին[4]: Պողոսը գրում է այս ամենը՝ ցույց տալու համար, որ գոյություն ունի միայն մեկ ճշմարիտ Ավետարան: Այն ծնվել է Աստծո սրտում և փոխանցվել է եկեղեցուն առաքյալների միջոցով: Այն հավիտենական և անփոփոխ խոսք է, որը վեր է բոլոր ժամանակներից և մշակույթներից: Այն չպետք է փոփոխվի կամ հարմարեցվի՝ տարբեր մշակույթների կամ ժամանակաշրջանների հաճեցնելու համար: Ավետարանին պետք է վերաբերվել մեծ ակնածանքով՝ որպես բացարձակ և անփոփոխ ճշմարտության:

Այս պատճառով, մենք՝ Ավետարանը ընդունողներս և Ավետարանի տնտեսներս, պետք է սովորենք վերաբերվել դրան մեծ զգուշությամբ, նույնիսկ՝ վախով: Հուդան՝ Տիրոջ խորթ եղբայրը, հորդորում էր մեզ մրցել՝ սրբերին մեկ անգամ ավանդված հավատքով, իսկ Պողոս առաքյալը հորդորում էր, որ հսկենք այն մեզ վստահված գանձի պես[5]: Նա նույնիսկ այնքան հեռու գնաց, որ անեծք հռչակեց ցանկացած մարդու կամ հրեշտակի վրա, ով որևէ պատճառով կփոխեր դրա բովանդակությունը. «Բայց եթե մենք էլ, կամ երկնքից մի հրեշտակ ավետարանի ձեզ նրանից ուրիշ, քան թե որ մենք ավետարանեցինք ձեզ, նզովված լինի: Ինչպես առաջ ասացինք, և հիմա դարձյալ ասում եմ, եթե մեկն ավետարանի ձեզ նրանից ուրիշ, քան որ դուք առաք, նզովված լինի»[6]:

Քրիստոնյաների ամեն մի սերունդ պետք է գիտակցի, որ իրեն հանձնվել է հավիտենական Ավետարանը[7]: Որպես տնտեսներ, մեզ հրամայված է պահպանել Ավետարանը՝ առանց որևէ բան ավելացնելու, պակասեցնելու կամ փոփոխելու: Ավետարանը որևէ կերպով փոփոխելը նշանակում է անեծք բերել մեզ վրա և փոխանցել աղավաղված ուղերձ հետագա սերունդներին: Ահա թե ինչու Պողոս առաքյալը զգուշացրեց երիտասարդ Տիմոթեոսին մեծ ջանասիրությամբ վերաբերվել իրեն վստահված ճշմարտություններին, և խոստացավ, որ այդպես վարվելով՝ նա կհաստատեր թե՛ իր, թե՛ իրեն լսողների փրկությունը[8]:

Մենք՝ Ավետարանը ընդունողներս, ահով լի պարտավորություն ունենք: Մենք պետք է փոխանցենք այն լիարժեք կերպով և առաքելական մաքրությամբ: Մենք պարտավոր ենք անել սա ոչ միայն Աստծո առջև, այլև՝ մեր սերնդի և գալիք սերունդների: Դիմելով Հռոմի եկեղեցուն՝ Պողոս առաքյալը հայտարարեց. «Որովհետև ես հույներին և բարբարոսներին, իմաստուններին և անմիտներին

4. Գաղատացիների 2.1–10
5. Հուդա 3, Բ Տիմոթեոս 1.14
6. Գաղատացիների 1.8,9
7. Հայտնություն 14.6
8. Ա Տիմոթեոս 4.15,16

պարտական եմ»[9]: Նմանապես, մենք պարտական ենք բոլոր մարդկանց, որոնք այսօր ապրում են, և անթիվ սերունդների, որոնք դեռ ապրելու են այս երկրի վրա: Այն չափով, որով մենք հավատարիմ ենք Ավետարանին, մենք կլինենք խավարում վառվող լույսեր և օրհնության աղբյուրներ գալիք սերունդների համար: Այն չափով, որով անհավատարիմ ենք, մենք կլինենք Քրիստոսի խաչի թշնամիներ, սայթաքման քարեր Նրա թագավորության մեջ, և մեղավոր կհամարվենք շատերի հավատքի նավաբեկության մեջ[10]: Որպես Ավետարանի ծառայողներ՝ մեր ուսերին դրված պատասխանատվությունը և՛ սարսափելի է, և՛ հրաշալի: Ո՞վ է բավականաչափ ունակ այս բաներում, և ո՞վ է ձեռնահաս նման առաջադրանքի համար[11]:

Հասկանալով մեր ստացած հրամանի լրջությունը՝ եկեք ջանասեր լինենք, որ ընտիր կանգնենք Աստծո առջև՝ որպես մշակներ, որոնք ամաչելու կարիք չունեն, քանի որ մենք ճշմարտության խոսքն ուղղությամբ ենք սովորեցնում[12]: Եկեք նմանակենք Եզրաս դպրին, ով «պատրաստել էր իր սիրտը, որ Տիրոջ օրենքը խնդրի և կատարի, և Իսրայելի մեջ սովորեցնի օրենք և դատաստան»[13]: Եկեք հետևենք այն աստվածապաշտ քահանայի օրինակին, որին Աստված պատվեց Մաղաքիա մարգարեի միջոցով. «Նա Իմ անվան երեսից սարսափում էր: Ճշմարտության օրենք կար նրա բերանում, և անիրավություն չէր գտնվում նրա շրթունքներում: Խաղաղությամբ և ուղղությամբ էր վարվում Ինձ հետ և շատերին դարձնում էր անօրինությունից: Որովհետև քահանայի շրթունքները պետք է գիտություն պահեն, և օրենք կփնտրեն նրա բերանից, որովհետև նա Զորաց Տիրոջ դեսպանն է»[14]:

Կա ավելի վատ բան, քան լռել այն ժամանակ, երբ այս աշխարհի կորսվածները դժոխք են գնում. քարոզել այնպիսի ավետարան, որը սրբերին մեկ անգամ ավանդված Ավետարանը չէ: Այս պատճառով, մենք պետք է հեռու մնանք ժամանակակից ավետարանական շարժման կողմից ներկայացվող Ավետարանից, քանի որ այն ջրիկացված, մշակույթի կողմից ձևավորված և կրճատված Ավետարան է, որը թույլ է տալիս մարդկանց աստվածապաշտության կերպարանք ունենալ՝ մերժելով դրա զորությունը, դավանել, որ իրենք ճանաչում են Աստծուն, բայց ուրանալ Նրան իրենց գործերով, և «Տեր, Տեր» անվանել Հիսուսին՝ չկատարելով Հոր կամքը[15]: Վա՛յ մեզ, եթե չքարոզենք Ավետարանը, բայց ավելի մեծ վայ, եթե սխալ կերպով քարոզենք այն[16]:

9. Հռոմեացիների 1.14
10. Փիլիպեցիների 3.18, Մատթեոս 13.41, Ա Տիմոթեոս 1.19
11. Բ Կորնթացիների 2.16
12. Բ Տիմոթեոս 2.15
13. Եզրաս 7.10
14. Մաղաքիա 2.5–7
15. Բ Տիմոթեոս 3.5, Տիտոս 1.16, Մատթեոս 7.21
16. Ա Կորնթացիների 9.16

ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ՔԱՐՈԶԵԼ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Հին կտակարանի օրենքում գոյություն ունեն բազմաթիվ արգելքներ այլախառնության մասին[17]: Երբ երկու տարբեր բաներ խառնվում են, դրանց առանձնահատկություններն աղոտվում են, և երկուսն էլ կորսվում են: Նույնը կարելի է ասել Ավետարանի վերաբերյալ: Ավետարանն ամեն ինչ է քրիստոնեության և Սուրբ գրքի համար, սակայն քրիստոնեության և Սուրբ գրքի մեջ ամեն ինչ չէ, որ Ավետարան է[18]: Ֆիզիկական բժշկությունը, ամուր ամուսնությունը և Աստծո հոգատարությունը՝ Իր նախախնամության միջոցով, թեև հիմնված են Ավետարանի վրա և բխում են Ավետարանից, բայց Ավետարան չեն:

Շատ վտանգավոր է, երբ ծառայողը մտածում է, որ այն ամենը, ինչ ինքը քարոզում է, Հիսուս Քրիստոսի Ավետարանն է, կամ որ ամեն ինչ իր ծառայության մեջ կարող է կոչվել Ավետարանի ծառայություն: Ավետարանը շատ հստակ ուղերձ է Սուրբ գրքում, և այս գլխի սկզբում գտնվող աստվածաշնչյան հատվածը պարզ և համառոտ սահմանում է այն. «Որովհետև ես... այն տվի ձեզ, որ ես էլ ընդունեցի, թե Քրիստոսը մեր մեղքերի համար մեռավ՝ գրքերի համեմատ, և թե թաղվեց, և թե երրորդ օրը հարություն առավ՝ գրքերի համեմատ»[19]:

Պողոսի խոսքերով, Հիսուս Քրիստոսի Ավետարանը հենված է երկու սյուների վրա՝ Նրա մահվան և հարության: Հղումը Նրա թաղման մասին կարևոր է երկու պատճառով: Առաջինն այն է, որ Սուրբ գրքում կան մարգարեություններ Նրա մահվան մասին, և այդ մարգարեությունները պետք է կատարվեին[20]: Երկրորդն այն է, որ Նրա թաղումը վավերացնում կամ ապացուցում է Նրա մահը և հիմք է հանդիսանում Նրա հարության և համբարձման համար: Նա թաղվեց, քանի որ իրականում մահացավ, և քանի որ Նրա մահն իրական էր, այդպիսին էր նաև Նրա հարությունը:

Հաջորդ գլուխներում կդիտարկենք Ավետարանի մեծ ճշմարտությունները, բայց այս պահին ունենք միայն մեկ նպատակ՝ ցույց տալ, որ մեզնից պահանջվում է ոչ միայն քարոզել այդ ճշմարտությունները, այլև բացատրել դրանք: Երբ մենք քարոզում ենք կամ որևէ կերպով փոխանցում ենք Ավետարանը, պետք է հարցնենք մեզ, թե դրա էական բովանդակության ո՞ր մասն ենք մենք հաղորդում: Շատերը կարող են անգիր ասել այն երեք փաստերը Ավետարանի մասին, որոնք քիչ առաջ նշեցինք. Քրիստոսը մահացավ, թաղվեց և հարություն առավ: Այնուամենայնիվ, քանի՞սն են հասկանում, թե ինչ է դա նշանակում: Եվ ինչո՞ւ են այս փաստերն այսքան հազվադեպ

17. Ղևտացիների 19.19
18. Այն իմաստով, որ Ավետարանը քրիստոնեության և Սուրբ գրքի մեծագույն և կարևորագույն ճշմարտությունն է:
19. Ա Կորնթացիների 15.3,4
20. Եսայի 53.9, Մատթեոս 27.57–60

բացատրվում ամբիոնից: Մի՞թե մենք այնքան ցածր կարծիք ունենք Ավետարանի մասին, որ, մեր կարծիքով, այն արժանի չէ մանրամասն բացատրության: Թե՞ մենք այնքան մակերեսային պատկերացում ունենք Ավետարանի մասին, որ, մեր համոզմամբ, այն բացատրությունների կարիք չունի:

Միգուցե մենք պարզապես ենթադրում ենք, որ բոլորը հասկանում են Ավետարանը, և ոչ մի բացատրության կարիք չկա:

ԱՎԵՏԱՐԱՆԻ ՔԱՐՈԶՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Բառերի զորությունը դրանց իմաստի մեջ է: Բավական չէ կրկնել նախապես սովորած փաստարկներ Ավետարանի մասին. մենք պետք է ջանասիրաբար բացատրենք դրանք: Ահա թե ինչու ավետարանիչը պետք է նաև դպիր լինի, և քարոզիչը պետք է նաև ուսուցիչ լինի: Մեր համարձակ հռչակումը Քրիստոսի մահվան և հարության մասին պետք է ընդգրկի այդ իրողությունների սուրբգրային, ծանրակշիռ և հասկանալի բացատրությունը: Հետևյալ չորս գործնական քայլերն ապացուցում են այս պնդումը:

Առաջինը՝ Ավետարանը քարոզելու համար պահանջվում է, որ մենք համարձակ հռչակենք մարդկանց, որ Քրիստոսը մահացավ իրենց մեղքերի համար: Թեև կասկած չկա, որ Սուրբ Հոգին կարող է օգտագործել այս հինգ բառերը՝ նույնիսկ ամենաչար մարդուն փրկելու համար, Աստվածաշնչում չկա ոչ մի հիմք, ըստ որի մենք պետք է առանց բացատրության թողնենք այս անչափ կարևոր ճշմարտությունը[21]: Մարդիկ չեն կարող պատշաճ կերպով հասկանալ Քրիստոսի մահվան կարևորությունը, քանի դեռ թեկուզ ինչ-որ պատկերացում չեն կազմում իրենց մեղքի մասին: Այդ իսկ պատճառով, մենք պետք է ձգտենք բացատրել նրանց ոչ միայն մեղքի բնույթը և նրանց մեղավոր լինելը, այլև Աստծո արդար բնությունը և Նրա արձագանքը մեղքին՝ ցանկացած ձևի և չափի: Մենք պետք է հավասարակշռություն ունենանք շիտակության և գթասրտության միջև՝ նման լավ բժշկի, ով փորձում է բացատրել իր այցելուի ծանր հիվանդությունը, որպեսզի նա անհապաղ սկսի բուժում ստանալ[22]: Այս նախապատրաստական աշխատանքը կամ «մարդու սրտի հողը վարելը» բացարձակապես անհրաժեշտ է Ավետարանի ճշմարիտ քարոզման մեջ: Մենք պետք է հիշենք, որ միայն երբ Տերը հզոր ձևով հռչակեց Իր հատկանիշները Մովսեսին, նա «շտապելով մինչև գետինը խոնարհվեց և երկրպագություն արեց»[23]: Եվ միայն երբ Աստված հայտնեց Իր օրենքի արդար

21. Հռոմեացիների 1.16, Ա Կորնթացիների 2.2, Բ Տիմոթեոս 2.15

22. Բ Տիմոթեոս 2.25. «Հակառակվողներին հանդարտությամբ խրատել, թերևս Աստված նրանց ապաշխարություն տա՝ ճշմարտությունն իմանալու համար»:

23. Ելից 34.8

պահանջները Պողոսին, նրա մեղքը բացահայտվեց, նրա ինքնաարդարացումն ի չիք դարձավ, և նա դարձի եկավ[24]:

Երկրորդը՝ Ավետարանի քարոզման համար պահանջվում է, որ մենք սովորեցնենք բոլորին, որ Քրիստոսը մահացավ՝ համաձայն Աստվածաշնչի: Թեև սա ամենակարևոր հռչակումներից մեկն է Սուրբ գրքում, դրա ազդեցությունը մարդու սրտի վրա ավելանում է երկրաչափական պրոգրեսիայով, երբ քարոզելիս ճիշտ կերպով բացահայտվում են Ավետարանի ճշմարտությունները և այն, թե ինչ է բխում դրանցից: Այսպիսով, մենք պետք է աշխատենք Սուրբ գրքերի հետ, որ կարողանանք բացատրել մարդկանց Քրիստոսի մահվան հստակ բնույթը և հետևանքները: Քրիստոսի մահվան պատճառը միայն մեր մեղքը չէր, այլև՝ Աստծո բնավորությունը. Նա արդար է և չի կարող արդարացնել կամ ներել անօրեններին՝ առանց բավարարելու[25] նրանց դեմ ուղղված Իր արդարադատության պահանջները: Քրիստոսը ոչ միայն մահացավ, այլև զբաղեցրեց Իր ժողովրդի տեղը, կրեց նրանց հանցանքը, Իր վրա վերցրեց Աստծո զայրույթը և թափեց Իր արյունը[26]: Նրա չարչարանքների միջոցով աստվածային արդարադատությունը բավարարվեց, և Աստծո զայրույթը խաղաղեցվեց, որպեսզի հիմա Աստված կարողանա և՛ արդար լինել, և՛ արդարացնել Քրիստոսին հավատացողներին[27]:

Գրեթե ամեն մի դասական աստվածաբանական աշխատություն Քրիստոսի խաչի մասին մատնանշում և բացատրում է այս ճշմարտությունները այնպիսի վարդապետությունների միջոցով, ինչպիսիք են քավությունը, փոխարինող պատիժը, վերագրումը, քավչարար զոհը և մեղքերի ջնջվելը: Այս վարդապետություններն անհեթեթ, ոչ անհիրաժեշտ կամ անհասանելի չեն. դրանք Ավետարանի էապես կարևոր ճշմարտություններն են: Դրանք կարող են և պետք է քարոզվեն բոլոր մարդկանց՝ թե՛ հավատացյալներին, թե՛ անհավատներին: Այն մարդիկ, ովքեր վիճարկում են այս կարծիքը՝ ասելով, որ դրանք չափազանց խորն են սովորական մարդու համար, կրկնում են միջնադարյան պապերի խոսքերը, որոնք Աստվածաշնչեր էին այրում՝ պատճառաբանելով, որ Աստծո ժողովուրդը չափազանց տգետ է՝ դրանք կարդալու համար:

Երրորդը՝ Ավետարանի քարոզման համար պահանջվում է, որ մենք պատմենք մարդկանց, որ Քրիստոսը հարություն առավ մեռելներից երրորդ օրը: Այնուամենայնիվ, որպեսզի այս պնդումն ազդեցություն թողնի քսանմեկերորդ դարում ապրող մարդկանց վրա,

24. Հռոմեացիների 7.9–11
25. Առակաց 17.15, Ելից 34.6,7, Հռոմեացիների 3.23–26
26. Եբրայեցիների 9.22
27. Եսայի 53.4–6,10

մենք նույնպես պետք է բացատրենք հարության նշանակալիությունը և հետևանքները: Մենք պետք է ցույց տանք մարդկանց, որ հարության միջոցով Աստված հրապարակավ արդարացրեց Հիսուսին՝ որպես Աստծո Որդու, և ընդունեց Քրիստոսի փրկարար աշխատանքը, որը Նա կատարել էր Իր ժողովրդի փոխարեն[28]: Մենք պետք է բացատրենք, թե ինչ կերպով է հարությունը հիմք դնում Քրիստոսի համբարձման համար, և որ հարությունն ապացուցում է, որ Աստված Տեր և Օծյալ դարձրեց այն Հիսուսին, Ում մենք խաչեցինք[29]: Մենք պետք է պատմենք, որ Աստված շատ բարձրացրեց Հիսուսին և տվեց Նրան այնպիսի անուն, որը վեր է ամեն անունից, որպեսզի Հիսուսի անունով ամեն ծունկ ծալվի, և ամեն լեզու դավանի, որ Նա է Տերը[30]: Մենք պետք է զգուշացնենք մարդկանց, որ Քրիստոսի հարությունը ոչ միայն ապացուցում է, որ այս աշխարհը Փրկիչ ունի, այլև՝ որ տիեզերքում կա Թագավոր, որն իշխելու է, մինչև որ Իր ամբողջ ժողովուրդը հավաքվի, և Իր թշնամիները Իր ոտքերի պատվանդան դրվեն[31]: Նա կվերադառնա և արդարությամբ կդատի աշխարհը[32]: Այդ իսկ պատճառով, բոլոր մարդիկ, անկախ իրենց դիրքից՝ մուրացիկից մինչև թագավորը, պետք է զանազանություն ցուցաբերեն և պատվեն Որդուն, որպեսզի Նա չբարկանա, և նրանք չկորչեն ճանապարհին, որովհետև Նրա բարկությունը շուտով կբորբոքվի, սակայն երանելի՛ են նրանք, ովքեր կհուսան Նրան[33]:

Ի վերջո, Ավետարանի քարոզման համար պահանջվում է, որ մենք աղաչենք մարդկանց ընդունել Քրիստոսին: Այնուամենայնիվ, մեր աղաչանքը պետք է լինի նույնքան սուրբգրային, որքան և մեր ուղերձը: Մենք չպետք է փոքրացնենք ապաշխարելու և հավատալու մեծ պատվիրանները՝ հասցնելով դրանք ընդամենը ապաշխարության աղոթքը կրկնելուն: Մեր ունկնդիրները պետք է հասկանան, որ ապաշխարությունը մտափոխություն է, որն ընդգրկում է ոչ միայն միտքը, այլև կամքը և զգացմունքները: Նրանք պետք է հասկանան փրկարար հավատքի բնույթը՝ որպես «հուսացած բաների հաստատություն և չերևացող բաների ապացույց», և լիովին համոզված լինեն, որ այն, ինչ Աստված խոստացել է Հիսուս Քրիստոսում, նույնպես կարող է կատարել[34]: Ավելին՝ մենք պետք է սովորեցնենք մեր ունկնդիրներին դարձի գալու ապացույցների մասին: Մենք պետք է զգուշացնենք նրանց, որ իրական ապաշխարությունը տալիս է

28. Հռոմեացիների 1.4, 4.25
29. Գործք 2.36
30. Փիլիպեցիների 2.6–9
31. Ղուկաս 20.41–44, Գործք 2.34,35, Եբրայեցիների 10.12,13
32. Գործք 17.31
33. Սաղմոս 2.10–12
34. Եբրայեցիների 11.1, Հռոմեացիների 4.21

ապաշխարության պտուղներ, և որ հավատքն առանց գործերի մեռած է[35]: Մենք պետք է հորդորենք նրանց քննել իրենց անձերը և ստուգել իրենց, թե արդյո՞ք հավատքի մեջ են, նաև՝ ջանք գործադրել, որ հաստատեն իրենց կոչումը և ընտրությունը[36]: Մենք պետք է ոչ միայն քարոզենք Ավետարանը՝ ըստ Աստվածաշնչի, այլև հաջորդենք դա փրկության հրավերով և քրիստոնեական կյանքի պատշաճ ուսուցմամբ: Մենք չպետք է ուղարկենք նրանց դեպի հավիտենությունը՝ բռնված ընդամենը ապաշխարության աղոթքից և մեր կողմից ասված անզոր հավաստիացման խոսքերից:

Վերևում բերված սեղմ բացատրությունները կազմում են Հիսուս Քրիստոսի անքննելի Ավետարանի ընդամենը մի փոքր մասը՝ այն Ավետարանի, որը մենք պարտավոր ենք ազդարարել ազգերին: Մենք պետք է պատմենք ամեն արարածի, թե ինչ է արել Քրիստոսը, բայց նույնպես պետք է բացատրենք, թե ինչ է դա նշանակում, և թե ինչպես նրանք պետք է արձագանքեն դրան: Հոչակումները և դրանց բովանդակությունը կարևոր են, բայց միայն այնքանով, որքանով դրանք սահմանվում և կիրառվում են: Այս սկզբունքը ճշմարիտ է Ավետարանի համար:

Քրիստոնյա ավետարանչի մեծագույն առաջադրանքն է և՛ քարոզել՝ որպես մունետիկ, և՛ բացատրել՝ որպես դպիր[37]: Սուրբ գրքում շատ նման օրինակներ կան: Փիլիպոսը պատմեց Եթովպացի ներքինուն Քրիստոսի մասին՝ բացատրելով Եսայու մարգարեությունները[38]: Պրիսկիղան և *Ակյուղասն* իրենց մոտ վերցրին Ապողոսին և ավելի ճշգրտորեն բացատրեցին նրան Աստծո ճանապարհը[39]: Պողոս առաքյալը հանդիպում էր Թեսաղոնիկեի հրեաներին երեք շաբաթ՝ խոսելով նրանց հետ Սուրբ գրքերից. «Բաց էր անում և առաջները դնում, թե պետք էր Քրիստոսը չարչարվեր և մեռելներից հարություն առներ»[40]: Ի վերջո, մեծագույն Մեկնիչը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը, Ով հայտնեց Աստծուն մարդկությանը Իր մարմնավորմամբ, բացատրեց Ավետարանն Իր շփոթված աշակերտներին Էմմաուսի ճանապարհին. «Եվ, սկսելով Մովսեսից և բոլոր մարգարեներից, մեկնում էր նրանց ինչ որ գրքերի մեջ գրված էր Իր մասին»[41]:

35. Մատթեոս 3.8, Հակոբոս 2.14–26

36. Բ Կորնթացիների 13.5, Բ Պետրոս 1.10

37. Այս համատեքստում «քրիստոնյա ավետարանիչը» վերաբերում է ցանկացած քրիստոնյայի, ով քարոզում է Ավետարանը կամ կիսվում է Ավետարանով:

38. Գործք 8.26–35

39. Գործք 18.26

40. Գործք 17.3

41. Հովհաննես 1.18-ում «պատմել» (կամ՝ բացատրել, մեկնել) բառը թարգմանված է հունարեն «էքսեգէոմայ» բառից, որը նշանակում է «ի հայտ բերել կամ բացահայտել որևէ ուսուցում կամ ճշմարտություն»: Ղուկաս 24.27-ում «մեկնել» բառը թարգմանված է հունարեն «դիերմենեուո» բառից, որը նշանակում է «բացահայտել ինչ-որ բանի իմաստը, բացատրել, մեկնել»:

ՄԱՍ ԵՐԿՈՒ
Աստծո զորությունը՝ փրկության համար

«Որովհետև ես Քրիստոսի Ավետարանը ամոթ չեմ համարում, որովհետև Աստծո զորությունն է՝ փրկելու համար ամեն հավատացողի, առաջ՝ հրեային, և հետո՝ հույնին»:

— Հռոմեացիների 1.16

ԳԼՈՒԽ ՎԵՑ

Միակ Ավետարանը

«Որովհետև ես... Ավետարանը ամոթ չեմ համարում»:

— Հռոմեացիների 1.16

Նախքան քննարկելը, որ Պողոսը համարձակությամբ էր քարոզում Ավետարանը, մենք պետք է պատկերացում կազմենք այն Ավետարանի մասին, որը նա քարոզում էր: Քննարկման կամ բանավեճի պայմանները նախապես որոշելը հաղորդակցման ողջամիտ սկզբունք է համարվում: Այդ դեպքում քննարկման առարկան պարզ է դառնում և թույլ է տալիս դրանում ներգրավված մարդկանց իմանալ, թե ինչ դիրքորոշում ունի դիմացինը, և ինչ նա նկատի ունի: Այսօր ավետարանականներն այնքան լայնորեն են սահմանում աստվածաբանական հասկացությունները, որ մենք այլևս չենք կարող ենթադրել, որ խոսում ենք նույն բանի մասին, նույնիսկ եթե օգտագործում ենք նույն բառերը: Սա հատկապես ճշմարիտ է Ավետարանի վերաբերյալ:

Առաջինը, ինչն արժե դիտարկել մեր հատվածում, Ավետարանի եզակի բնույթն է: Պողոսը չուներ *ինչ-որ* Ավետարան, որը հատուկ էր իրեն: Նա չէր քարոզում Ավետարան ըստ Պողոսի, որը տարբերվում էր Ավետարանից ըստ Պետրոսի կամ Հովհաննեսի[1]: Թեև առաքյալների անհատականությունն ինչ-որ չափով արտացոլվում է նրանց ավետարանական պատումներում, այն Ավետարանը, որը նրանք փոխանցում էին, նույնն էր: Նրանք կտրականապես կհրաժարվեին մասնակցել մերօրյա խոսակցություններին Ավետարանի բազմաթիվ տարբերակների, թարգմանությունների և երանգների մասին, ասես թե կարող է լինել ավելի քան մեկ Ավետարան[2]:

1. Այն Ավետարանը, որը քարոզում էին Պետրոսը և Հովհաննեսը:

2. Տարբեր կարծիքներ Ավետարանի մասին հաճախ դիտարկվում են որպես նույն ճշմարտության տարբերակները որոշելը, նույն ճշմարտությունը տարբեր անկյուններից դիտարկելը կամ նույնիսկ՝ նույն ճշմարտության տարբեր կողմերը շեշտադրելը: Նման մոտեցումն ի հայտ չի բերում այն փաստը, որ Ավետարանի մի շարք «տարբերակները» հաճախ, ըստ էության, տարբեր ավետարաններ են: Բարեփոխողների Ավետարանը լիովին տարբերվում է Հռոմի Կաթոլիկ Ավետարանից. հավատքի վրա հիմնված Ավետարանը հակասում է գործերի վրա հիմնված Ավետարանին. Ավետարանական շարժման կողմից ներկայացվող ճշմարիտ Ավետարանը հակադրվում է ուլտրախարիզմատական Ավետարանին:

Երկրորդը՝ Պողոսի Ավետարանը հատուկ չէր ինչ-որ մշակույթի: Նա չէր քարոզում այլ ուղերձ հրեաներին, և այլ ուղերձ՝ հեթանոսներին: Թեև նա տեղյակ էր մշակութային տարբերություններին և օգտագործում էր եզակի մոտեցումներ ամեն մի մշակույթի համար, նրա Ավետարանը չէր փոփոխվում՝ առանձին մշակույթներին համապատասխանելու կամ դրանց տեսանկյունից պակաս վիրավորական լինելու համար: Իրականում, Պողոսի կյանքը մշտապես վտանգված էր հենց այն պատճառով, որ Ավետարանը վիրավորական էր թե՛ հրեաների, թե՛ հեթանոսների համար: Հազիվ թե Պողոս առաքյալը հասկանար ժամանակակից ավետարանական շարժման կողմից առանձին մշակույթները մանրակրկիտորեն ուսումնասիրելու և իր ուղերձն ու մեթոդները դրանց համար փոփոխելու գերակշռող միտումը: Պողոսը հասկանում էր, որ, ի վերջո, բոլոր մշակույթներին պատկանող մարդիկ տառապում են նույն ախտով, և գոյություն ունի ընդամենը մեկ ուղերձ, որն ի զորու է փրկել նրանց:

Եվ վերջինը՝ Պողոսը չուներ այնպիսի Ավետարան, որը հատուկ էր առանձին ժամանակաշրջանի համաշխարհային պատմության մեջ: Անկասկած՝ Պողոսի կյանքի ամեն տասնամյակից հետո Հռոմի կայսրությունում ուշագրավ փոփոխություններ էին տեղի ունենում, սակայն իր մահվան ժամանակ նա քարոզում էր նույն Ավետարանը, որը քարոզում էր մի քանի տասնամյակ առաջ, երբ նոր էր սկսել իր առաքելական ծառայությունը: Անկասկած՝ նա զարմացած կլիներ ժամանակակից քրիստոնեության համոզմունքից, որ ամեն տասնամյակ հայտնվում է նոր սերունդ, որը պահանջում է նորովի ներկայացնել Ավետարանը կամ հարմարեցնել այն իրեն:

ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ ՀԻՍՈՒՍԻ ԵՎ ՊՈՂՈՍԻ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Սուրբ գրքում ակնհայտորեն երևում է, որ Հիսուսի գործերը և Իր առաքյալներին տրված ուսուցումներն անխաթար կերպով փոխկապակցված են Պողոսի համոզմունքների և քարոզների հետ: Այս ճշմարտությունը դիմանում է նույնիսկ ամենամանրազնին քննությանը: Հիսուսի Ավետարանում Աստված սեր է: Նա ծագեցնում է Իր արևը թե՛ չարերի, թե՛ բարիների վրա, և անձրևներ է ուղարկում թե՛ արդարների, թե՛ անարդարների վրա[3]: Երբ եկավ ժամանակի լրումը, ի հայտ եկավ Նրա սիրո մեծագույն դրսևորումը. Նա ուղարկեց Իր սիրելի Որդուն, որպեսզի մարդիկ չկորչեն, այլ հավիտյան ապրեն Նրա միջոցով[4]:

3. Մատթեոս 5.45
4. Մարկոս 1.15, Հովհաննես 3.16

Պողոսի Ավետարանում Աստված սեր է: Նա չի թողել Իրեն առանց վկայության, այլ բարիք է անում բոլոր մարդկանց՝ տալով նրանց անձրևներ երկնքից և պտղաբեր տարվա եղանակներ՝ լցնելով նրանց սրտերը կերակուրով և ուրախությամբ[5]: Երբ եկավ ժամանակի լրումը, Նրա սերը հասավ կիզակետին. Նա տվեց Իր Որդուն՝ մահանալու մեր անկում ապրած ցեղի համար, երբ մենք անօգնական մեղավորներ էինք և թշնամի էինք Աստծուն[6]:

Հիսուսի Ավետարանում մարդիկ չար են և ստրկացված են մեղքին[7]: Նրանք չար ծառեր են, որոնք չար պտուղ են բերում[8]: Նրանք ատում են Աստծո հայտնության լույսը և չեն գալիս դրան՝ վախենալով, որ իրենց չար գործերն ի հայտ կգան[9]: Նրանց սրտերը լի են չար մտքերով, սպանությամբ, շնությամբ, պոռնկությամբ, գողությամբ, կեղծ վկայությամբ և հայհոյությամբ: Նույնիսկ ամենավեհ և առաքինի մարդիկ ընդամենը ծեփած գերեզմաններ են՝ լի մահացածների ոսկորներով[10]:

Պողոսը ներկայացնում է նույն ցավալի ցուցանիշը մեր անկում ապրած ցեղի համար. «Որովհետև ամենքը մեղանչեցին և Աստծո փառքից պակասված են»[11]: Չկա արդար, նույնիսկ՝ մեկ մարդ: Չկա մեկը, ով հասկանում է կամ փնտրում է Աստծուն: Բոլորն էլ խոտորվել են և անպետք են դարձել: Չկա մեկը, ով բարի է գործում, և Աստծո երկյուղը նրանց աչքերի առջև չէ[12]: Այս պատճառով, օրենքի միակ գործառույթն է՝ դատապարտել մարդկանց իրենց մեղքի մեջ, փարատել նրանց ինքնաարդարացման հույսերը և ցույց տալ, որ նրանք չունեն ոչ մի արդարացում և լիովին կախված են Աստծո ողորմությունից[13]:

Հիսուսի Ավետարանում բոլոր անհավատները դատապարտված են Աստծո առջև, և Աստծո զայրույթը նրանց վրա է[14]: Այն գալիլեացիները, որոնք մահացան Պիղատոսի ձեռքով, և այն տասնութ մարդիկ, որոնց վրա քանդվեց Սելոամի աշտարակը, չկրեցին այդ բաները, քանի որ մյուսներից ավելի մեղավոր էին: Ընդհակառակը, բոլորը արժանի են նույն ճակատագրին, և միայն աստվածային ողորմությունն է, որ պահում է մարդկանց դրանից: Բոլորն են արժանի մահանալու Աստծո բարկության ներքո, և կմահանան իրենց ժամանակին, եթե չապաշխարեն[15]: Պողոսի Ավետարանում Աստծո

5. Գործք 14.16
6. Գաղատացիների 4.4, Հռոմեացիների 5.6–10
7. Մատթեոս 7.11, Հովհաննես 8.34
8. Մատթեոս 7.17
9. Հովհաննես 3.20
10. Մատթեոս 15.19, 23.27
11. Հռոմեացիների 3.23
12. Հռոմեացիների 3.10–18
13. Հռոմեացիների 3.19
14. Հովհաննես 3.18,36
15. Ղուկաս 13.1–5

բարկությունը երկնքից հայտնվում է այն մարդկանց անօրինության և ամբարշտության վրա, որոնք ճնշում են ճշմարտությունն իրենց անարդարությամբ[16]: Այն մարդիկ, ովքեր շարունակում են մնալ խստությամբ և անզեղջ սրտով, բարկություն են կիտում իրենց համար, որն ի հայտ կգա դատաստանի օրը[17]:

Հիսուսի Ավետարանում խաչը փրկության կարևորագույն և վերջնական աշխատանքն է: Քրիստոսը պետք է խաչվեր և մուտք գործեր Իր փառքի մեջ[18]: Նա սովորեցնում էր Իր աշակերտներին, որ Ինքը պետք է Երուսաղեմ գնա, շատ բաներ կրի, սպանվի և հարություն առնի երրորդ օրը[19]: Գեթսեմանիում և Գողգոթայում Նա հայտնեց, որ Իր չարչարանքները չէին սահմանափակվում մարդկանց և դևերի դաժանությամբ[20]: Խաչի վրա Նա խմեց Աստծո բարկության լիքը բաժակը և մահացավ լքված մարդու պես[21]:

Պողոսի Ավետարանի ամեն մի էջում մենք տեսնում ենք միևնույն միտումը: Պողոսն ամենասկզբից քարոզում էր մարդկանց այն, ինչ ինքը ստացել էր. Քրիստոսը մահացավ մեր մեղքերի համար՝ համաձայն Գրքերի, Նա թաղվեց և երրորդ օրը հարություն առավ՝ համաձայն Գրքերի[22]: Պողոսը ցույց տվեց մեծ և անհերքելի ապացույցներով, որ Քրիստոսը մեր մեղքերը Կրողն էր, Ով անեծք դարձավ և մահացավ Աստծո զայրույթի ներքո՝ որպես քավություն Իր ժողովրդի համար[23]: Նա հռչակեց խաչված Քրիստոսին, թեև դա գայթակղություն էր հրեաների համար և հիմարություն՝ հեթանոսների համար[24]: Պողոսի համար խաչն աննշան թեմա չէր. այն ամեն ինչ էր: Այն գերել էր նրան և մշտապես ստիպում էր գործել[25]:

Հիսուսի Ավետարանը կոչ է անում բոլորին ապաշխարել մեղքերից և հավատալ[26]: Նա խոստանում է, որ այս կոչին հնազանդվողները հավիտենական կյանք կստանան[27]: Նա զգուշացնում է, որ մնացած մարդիկ, եթե շարունակեն մնալ իրենց չապաշխարած և անհավատ վիճակում, կկորչեն Աստծո բարկության պատճառով[28]: Պողոսի Ավետարանը ներկայացնում է նույն խոստումները և զգուշացումները: Առաքյալը

16. Հռոմեացիների 1.18
17. Հռոմեացիների 2.5
18. Ղուկաս 24.26
19. Մատթեոս 16.21
20. Գեթսեմանին այն պարտեզն է, որտեղ Հիսուսն աղոթեց և ձերբակալվեց Իր խաչելության նախորդ գիշերը, իսկ Գողգոթան խաչի և Նրա խաչելության վայրն է:
21. Ղուկաս 22.42, Մատթեոս 27.46
22. Ա Կորնթացիների 15.3,4
23. Բ Կորնթացիների 5.21, Գաղատացիների 3.10–13, Հռոմեացիների 3.23–26
24. Ա Կորնթացիների 1.23
25. Հռոմեացիների 1.1, Բ Կորնթացիների 5.14
26. Մարկոս 1.15
27. Հովհաննես 5.24
28. Ղուկաս 13.1–5, Հովհաննես 3.18–36

հանդիսավոր կերպով վկայում էր, որ և՛ հրեաները, և՛ հույները պետք է ապաշխարեն Աստծո առջև և հավատան մեր Տեր Հիսուս Քրիստոսին: Նա հռչակում էր, որ Աստված պատվիրել է բոլորին ամենուր ապաշխարել, և զգուշացնում էր մարդկանց չխաբվել իրենց դատարկ գործերով, քանի որ անհնազանդների վրա գալիս է Աստծո բարկությունը[29]:

Հիսուսի Ավետարանում անկեղծ և անձնազոհ աշակերտությունը մշտապես ուղեկցվում է ճշմարիտ դարձով: Հիսուսը հաճախ էր նոսրացնում Իրեն հետևող հոծ բազմությունները՝ նրանց ծայրահեղ պահանջներ ներկայացնելով. «Եթե մեկն Ինձ մոտ գա և չատի իր հորը և մորը, կնոջը և որդիներին, և եղբայրներին ու քույրերին, և հենց իր անձն էլ, նա չի կարող Իմ աշակերտը լինել»[30]: Նա նույնիսկ զգուշացրեց Իր աշակերտներին. «Եթե մեկը կամենում է Իմ ետևից գալ, թող իր անձն ուրանա, իր խաչն առնի և Իմ ետևից գա: Որովհետև, ով որ իր անձն ուզի ապրեցնել, կկորցնի նրան, և ով որ իր անձը կորցնի Ինձ համար, կգտնի նրան»[31]:

Պողոսի Ավետարանը պարունակում է նույն ծայրահեղ պահանջներն աշակերտության համար: Ինչ վերաբերում է սրբությանը, Պողոսը հորդորում է հավատացյալներին դուրս գալ այս աշխարհից և առանձնանալ[32]: Ինչ վերաբերում է արդարությանը, նա հավատացյալներին պատվիրում է իրենց մահացած համարել մեղքի համար և կենդանի՝ Աստծո համար, և լինել արդարության գործիքներ[33]: Ինչ վերաբերում է հավատարմությանը, նա խրախուսում է աշակերտներին հարատևել՝ չնայած բազմաթիվ նեղություններին և հալածանքներին, որոնք անպատճառ գալու են ընդդեմ բոլորի, ովքեր կամենում են աստվածապաշտությամբ ապրել Քրիստոս Հիսուսում[34]:

Հիսուսի Ավետարանը սովորեցնում է մարդկանց, որ միայն հավատքի դավանությունը չի վկայում փրկության մասին: Հիսուսը զգուշացրեց, որ ոչ ամեն մեկը, ով կասի Իրեն. «Տե՛ր, Տե՛ր», կմտնի Երկնքի թագավորությունը, այլ միայն նա, ով կատարում է Իր Հոր կամքը, որ Երկնքում է[35]: Նա անդրդվելիորեն պնդում էր, որ մարդու փրկության ապացույցը նրա կյանքի պտուղն է, և որ նրանք, ովքեր բարի պտուղ չեն բերում, կտրվում են և գցվում կրակի մեջ[36]:

Պողոսի Ավետարանը պարունակում է նույն հանդիսավոր զգուշացումները: Նա հորդորում էր նրանց, ովքեր դավանում էին, որ

29. Գործք 20.21, Եփեսացիների 5.6
30. Ղուկաս 14.26
31. Մատթեոս 16.24,25
32. Բ Կորնթացիների 6.14–18
33. Հռոմեացիների 6.11–14
34. Գործք 14.22, Բ Տիմոթեոս 3.12
35. Մատթեոս 7.21
36. Մատթեոս 7.16,19,20

հավատում են Քրիստոսին, ստուգել իրենց՝ տեսնելու համար, թե արդյո՞ք իրենք ճշմարտապես հավատքի մեջ են[37]: Նա զգուշացնում էր մարդկանց, որ ինչ-որ մեկը կարող է աստվածապաշտության կերպարանք ունենալ, բայց մերժել դրա զորությունը, կամ՝ պնդել, որ ինքը ճանաչում է Աստծուն, բայց ուրանալ Նրան իր գործերով[38]:

Եվ վերջապես, Հիսուսի Ավետարանում կան բազմաթիվ զգուշացումներ ապագա դատաստանի և դժոխքի սարսափների մասին: Իրականում, Հիսուսն ավելի շատ էր խոսում այդ ահ ներշնչող իրողության մասին, քան մնացած մարգարեները և առաքյալները: Համաձայն Հիսուսի՝ գալիս է դատաստանի մեծ օրը, երբ մարդիկ կբաժանվեն, ինչպես որ բաժանում են ոչխարներին այծերից, և մի մեծ բազմություն կլսի. «Ինձնից դե՛ն գնացեք, ո՛վ անիծյալներ, հավիտենական կրակի մեջ, որ պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար»[39]: Այս թեման այն աստիճան կարևոր էր Հիսուսի համար, որ Նա տվեց հետևյալ զգուշացումը նույնիսկ նրանց, որոնց Իր ընկերներն էր համարում. «Բայց ասում եմ ձեզ՝ Իմ բարեկամներին. մի՛ վախեցեք նրանցից, որ մարմինը սպանում են, և նրանից հետո ավելի բան չունեն, որ անեն: Բայց ցույց տամ ձեզ, թե ումից պետք է վախենաք. Նրանից վախեցեք, որ սպանելուց հետո իշխանություն ունի գեհենի մեջ գցելու: Այո՛, ասում եմ ձեզ, Նրանի՛ց վախեցեք»[40]:

Պողոս առաքյալի Ավետարանը համաձայնում է Քրիստոսի հետ դատաստանի և դժոխքի հարցում: Նա գրում է, որ ամբարիշտները բարկություն են կիտում իրենց համար, որն ի հայտ կգա Աստծո արդար դատաստանի և բարկության օրը[41]: Նա զգուշացնում է և՛ հավատացյալներին, և՛ անհավատներին, որ նրանք չպետք է խաբվեն աստվածային հատուցման և բարկության գալիք իրողությունը մերժող մարդկանց դատարկ բառերով: Աստված չի ծաղրվում. անհնազանդ մարդը հնձելու է այն, ինչ ցանել է[42]: Ինչպես և Քրիստոսը, Պողոսը հստակ և անդրդվելի է զգուշացումներ անելիս. «...Տեր Հիսուսի Երկնքից հայտնվելում՝ Իր զորության հրեշտակներով, կրակի բոցով, վրեժ առնելու նրանցից, որ Աստծուն չեն ճանաչում, չեն հնազանդվում մեր Տեր Հիսուսի Ավետարանին, որոնք պատիժ կկրեն՝ հավիտենական կորուստը Տիրոջ երեսից և Նրա փառավոր զորությունից»[43]:

Համաձայն մեր կողմից դիտարկված աստվածաշնչյան հատվածների՝ ակնհայտ է, որ չկա ոչ մի հակասություն կամ շեղում Հիսուս

37. Բ Կորնթացիների 5.17
38. Բ Տիմոթեոս 3.5, Տիտոս 1.16
39. Մատթեոս 25.41
40. Ղուկաս 12.4,5
41. Հռոմեացիների 2.5
42. Գաղատացիների 6.7, Եփեսացիների 5.6
43. Բ Թեսաղոնիկեցիների 1.7–9

Քրիստոսի Ավետարանի և այն Ավետարանի միջև, որը քարոզում է Պողոս առաքյալը, և որը նա բացատրում է իր ուղերձներում: Նույնպես Մովսեսը և մարգարեները, չորս Ավետարանների հեղինակները և Նոր կտակարանի մյուս համահեղինակները կատարյալ համաձայնության մեջ են Քրիստոսի հետ, երբ խոսքը «սրբերին մեկ անգամ ավանդված հավատքի» մասին է[44]: Գոյություն ունի միայն մեկ Ավետարան, որը վեր է ամեն խմբագրությունից և գրաքննությունից, և այն չպետք է փոփոխվի, հարմարեցվի կամ վերաձևակերպվի: Ցանկացած նման փորձ՝ անկախ պատճառից կամ շարժառիթից, առաջ կբերի այլ ավետարան, որը բոլորովին Ավետարանը չէ[45]: Մենք պետք է մի կողմ դնենք ամեն մի անմիտ և վտանգավոր գաղափար այն մասին, որ մենք կարող ենք «բարելավել» Ավետարանը, և կանգնենք այն վկաների մեծ բազմության կողքին, որոնք ապրել են եկեղեցու պատմության ընթացքում և քարոզել են խաչված և հարություն առած Քրիստոսին՝ համաձայն Աստվածաշնչի:

44. Հուդա 3
45. Գաղատացիների 1.6,7

ԳԼՈՒԽ ՅՈԹ

Վրդովեցուցիչ Ավետարան

«Որովհետև ես... Ավետարանը ամոթ չեմ համարում»:

— Հռոմեացիների 1.16

Այժմ, երբ ընդհանուր պատկերացում կազմեցինք Պողոս առաքյալի Ավետարանի մասին, մենք կարող ենք հասկանալ, թե ինչու էր այն նման արհամարհանք և թշնամություն առաջացնում նրա ունկնդիրների մոտ: Թեև Ավետարանը Աստծո զորությունն է՝ փրկելու համար ամեն հավատացողի, այն նույնպես վրդովեցուցիչ և անհավանական ուղերձ է անկում ապրած աշխարհի համար:

ԾԱՅՐԱՀԵՂ ԵՎ ԲԱՑԱՌԻԿ

Մարմնավոր տեսանկյունից Պողոսն ամեն առումով կարող էր ամաչել իր քարոզած Ավետարանից, քանի որ այն հակասում էր բացառապես այն ամենին, ինչը ճշմարիտ և սուրբ էր համարվում իր ժամանակակիցների կողմից: Հրեաների համար Ավետարանը վատագույն հայհոյությունն էր, քանի որ պնդում էր, որ այն Նազովրեցին, Ով անիծյալի մահ կրեց Գողգոթայում, Մեսիան էր: Հույների համար Ավետարանը ամենամեծ անհեթեթությունն էր, քանի որ այն պնդում էր, որ հրեական Մեսիան մարմնավորված Աստված էր: Այսպիսով, Պողոսը գիտեր, որ երբ էլ բացեր բերանը՝ Ավետարանը քարոզելու համար, նա միանշանակ մերժվելու էր, ծաղրվելու էր և նույնիսկ արհամարհվելու էր, եթե Սուրբ Հոգին չմիջամտեր և չիպվեր իր ունկնդիրների սրտերին և մտքերին: Մեր օրերում սկզբնական Ավետարանը պակաս վիրավորական չէ, քանի որ այն շարունակում է հակասել ժամանակակից մշակույթի բոլոր հիմնադրույթներին կամ «իզմ»-երին՝ ռելյատիվիզմին (հարաբերականապաշտությանը), պլյուրալիզմին (բազմակարծությանը) և հումանիզմին (մարդակենտրոն փիլիսոփայությանը)[1]:

1. «Սկզբնական Ավետարան» տերմինը վերաբերում է առաջին դարի Ավետարանին, որը քարոզվում էր Հիսուսի և առաքյալների կողմից:

Մենք ապրում ենք ռելյատիվիզմի ժամանակաշրջանում. այն համոզմունքների համակարգ է, որը միանշանակ պնդում է, որ գոյություն չունի ոչ մի բացարձակ ճշմարտություն: Մենք կեղծավորությամբ ծափահարում ենք մարդկանց, որոնք փնտրում են ճշմարտությունը, բայց հրապարակային մահապատժի կոչ ենք անում բոլոր նրանց համար, ովքեր այնքան ամբարտավան են, որ ասում են, թե գտել են այն: Մենք ապրում ենք ինքնակամորեն հաստատված Խավար դարաշրջանում, և դրա պատճառն ակնհայտ է: Բնական մարդն անկում ապրած, բարոյապես ապականված և համառորեն ինքնավարության (այսինքն՝ իր կյանքն անձամբ վերահսկելու) ձգտող արարած է: Նա ատում է Աստծուն, քանի որ Աստված արդար է, և ատում է Նրա օրենքները, քանի որ դրանք պարսավում և սահմանափակում են իր չարությունը: Նա ատում է ճշմարտությունը, քանի որ այն բացահայտում է իր իրական ինքնությունը և մտահոգություն է առաջացնում իր խղճի մեջ այն չափով, որով այն դեռ վառված չէ: Այդ իսկ պատճառով, անկում ապրած մարդը ձգտում է հնարավորինս հեռացնել իրենից ճշմարտությունը, հատկապես՝ ճշմարտությունը Աստծո մասին: Նա պատրաստ է դիմել ցանկացած քայլի, որպեսզի ճնշի ճշմարտությունը՝ նույնիսկ ձևացնելով, որ նման բան ընդհանրապես գոյություն չունի, կամ եթե նույնիսկ դա գոյություն ունի, ոչ ոք չի կարող իմանալ դրա մասին, և դա որևէ կերպով չի կարող ազդել մեր կյանքի վրա: Խնդիրը երբեք թաքնվող Աստծո մեջ չէ. խնդիրը միշտ թաքնվող մարդու մեջ է: Խնդիրը ոչ թե գիտելիքի մեջ է, այլ՝ կամքի: Նման ջայլամի, որը թաքցնում է իր գլուխն ավազի մեջ, որպեսզի խուսափի հարձակվող ռնգեղջյուրից՝ ժամանակակից մարդը ժխտում է ճշմարտությունն արդար Աստծո և բարոյական չափանիշների մասին՝ հուսալով լռեցնել իր խիղճը և հեռացնել մտքերը դատաստանի մասին, որը, ինչպես ինքն էլ գիտի, անխուսափելի է: Քրիստոնեական Ավետարանը վրդովեցնում է մարդուն և նրա մշակույթը, քանի որ Ավետարանը անում է հենց այն, ինչից նա ուզում է խուսափել. Ավետարանն արթնացնում է նրան ինքնակամ նիրհից դեպի իրականությունը, այսինքն՝ իր անկում ապրած և ապստամբ վիճակը, և կոչ է անում նրան մերժել իր ինքնավարությունը և հպատակվել Աստծուն՝ ապաշխարության և Հիսուս Քրիստոսին հավատալու միջոցով:

Մենք ապրում ենք պլյուրալիզմի ժամանակաշրջանում. այն համոզմունքների համակարգ է, որը չեղյալ է դարձնում ճշմարտությունը՝ հայտարարելով, որ ամեն ինչ ճիշտ է, հատկապես եթե խոսքը կրոնի մասին է: Միգուցե ժամանակակից քրիստոնյաները դժվարությամբ հասկանան սա, բայց առաջին մի քանի դարերում ապրող քրիստոնյաներին պիտակում և հալածում էին որպես աթեիստների:

Նրանց շրջապատող մշակույթն ընկղմված էր թեիզմի մեջ: Աստվածությունների պատկերները լցրել էին աշխարհը, և կրոնը գործարարության ծաղկուն ոլորտ էր դարձել[2]: Մարդիկ ոչ միայն հանդուրժում էին մեկը մյուսի աստվածությունները, այլև փոխանակում էին դրանք և կիսվում դրանցով: Ամբողջ կրոնական աշխարհը համերաշխ էր, քանի դեռ ի հայտ չէին եկել քրիստոնյաները և չէին հայտարարել. «Ձեռքով շինվածներն աստվածներ չեն»[3]: Նրանք հրաժարվեցին տալ կեսարներին այն մեծարանքը, որը նրանք պահանջում էին, հրաժարվեցին ծունկ ծալել բոլոր, այսպես կոչված, աստվածների առջև, և դավանեցին, որ միայն Հիսուսն է բոլորի Տերը[4]: Ամբողջ աշխարհը դիտարկեց դա որպես վրդովեցուցիչ ամբարտավանություն և ցասումով արձագանքեց քրիստոնյաների անհանդուրժողական անհանդուրժողականությանը՝ հանդուրժողականության հանդեպ:

Նույնը կատարվում է նաև այսօր: Հակառակ ամեն տեսակի տրամաբանության՝ մենք լսում ենք, որ բոլոր կարծիքները կրոնի և բարոյականության վերաբերյալ ճիշտ են: Այս տեսանկյունը հաշվի չի առնում, որ հաճախ այդ կարծիքներն արմատապես տարբերվում են իրարից և նույնիսկ հակասում են իրար: Ամենավատն այն է, որ լրատվամիջոցների և գիտական աշխարհի անխոնջ ջանքերով, այս աշխարհայացքն արագորեն դարձավ մեծամասնության կարծիքը: Այնուամենայնիվ, պլյուրալիզմը չի անդրադառնում խնդրին, և ո՛չ էլ բուժում է հիվանդությունը: Այն միայն ցավազրկում է հիվանդին, որպեսզի նա այլևս ոչինչ չզգա և չմտածի: Ավետարանը վրդովեցուցիչ է, քանի որ այն արթնացնում է մարդուն քնից և թույլ չի տալիս հաստատվել նման անտրամաբանական հիմքերի վրա: Այն ստիպում է մարդուն հստակ եզրակացության գալ. «Մինչև ե՞րբ պիտի դուք կաղաք երկու կողմի վրա: Եթե Տերն է Աստվածը, Նրա ետևից գնացե՛ք, և եթե Բահաղն է, նրա՛ ետևից գնացեք»[5]:

Ճշմարիտ Ավետարանը ծայրահեղ և բացառիկ է: Հիսուսն *ինչ-որ* ճանապարհ չէ: Նա *միակ* ճանապարհն է, իսկ մնացած բոլոր ճանապարհներն ընդհանրապես ճանապարհներ չեն: Եթե քրիստոնեությունը միայն մի փոքր քայլ աներ դեպի ավելի հանդուրժողական միջկրոնական դիրքորոշում և համարեր իրեն ոչ թե *միակը*, այլ՝ *շատերից մեկը*, վրդովմունքի պատճառ այլևս չէր լինի, և այս աշխարհն ու քրիստոնեությունը ընկերներ կդառնային: Այնուամենայնիվ, եթե նման բան տեղի ունենար, քրիստոնեությունն այլևս քրիստոնեություն չէր լինի, Քրիստոսը կմերժվեր, և աշխարհը կմնար առանց Փրկչի:

2. Գործք 19.27
3. Գործք 19.26
4. Հռոմեացիների 10.9
5. Գ Թագավորաց 18.21

Մենք ապրում ենք հումանիզմի ժամանակաշրջանում. վերջին մի քանի տասնամյակի ընթացքում մարդը պայքարել է՝ Աստծուն իր խղճից և մշակույթից հեռացնելու համար: Մարդը քանդել է ճշմարիտ Աստծուն պատկանող բոլոր տեսանելի զոհասեղանները և կանգնեցրել է արձաններ իր համար՝ կրոնական մոլեռանդի նախանձավորությամբ: Նա դարձրել է իրեն ամեն ինչի կենտրոնը, չափանիշը և նպատակը: Նա փառաբանում է իր ներհատուկ արժեքը, պահանջում է մեծարանք իր ինքնագիտակցման համար և առաջ է քաշում սեփական անձի կայացումը՝ որպես մեծագույն բարիք: Նա վանում է իրեն տանջող խղճի խայթը՝ ասելով, որ այն մեղքի զգացումի վրա հիմնված հնացած կրոնի մնացուկ է, և հրաժարվում է որևէ պատասխանատվությունից՝ իր շուրջը տիրող բարոյական խառնաշփոթի համար: Փոխարենը նա մեղադրում է հասարակությանը, կամ գոնե հասարակության այն մասին, որը դեռ չի հասել այն լուսավորմանը, որն ունի ինքը: Ցանկացած ակնարկ այն մասին, որ հնարավոր է՝ իր խղճի վկայությունն իր դեմ ճիշտ է, նույնիսկ հաշվի չի առնվում: Նա վանում է նաև այն միտքը, որ միգուցե ինքը պատասխանատու է գրեթե անհաշվելի ախտերի համար, որոնք գոյություն ունեն այս աշխարհում: Սա է պատճառը, որ Ավետարանը վրդովեցուցիչ է անկում ապրած մարդու համար. այն բացահայտում է նրա մոլորությունն իր մասին և հանդիմանում է նրան իր անկում ապրած վիճակի և իր հանցանքի մեջ: Սա Ավետարանի սկզբնական և կարևորագույն աշխատանքն է, և հենց այս պատճառով է, որ աշխարհը խորշում է ճշմարիտ Ավետարանը քարոզելու: Այն փչացնում է մարդու խնջույքը, անձրև է տեղում նրա շքերթի ժամանակ, բացահայտում է նրա պատրանքը և ցույց է տալիս, որ «թագավորը մերկ է»:

Աստվածաշունչը նշում է, որ Հիսուս Քրիստոսի Ավետարանը «գայթակղություն» և «հիմարություն» է բոլոր դարաշրջաններին և մշակույթներին պատկանող մարդկանց համար[6]: Այնուամենայնիվ, Ավետարանի ուղերձից իր վրդովեցուցիչ տարրը հեռացնելը նշանակում է զրկել Քրիստոսի խաչն իր փրկարար զորությունից[7]: Մենք պետք է հասկանանք, որ Ավետարանը ոչ միայն վրդովեցուցիչ է, այլև պետք է այդպիսին լինի: Ավետարանի հիմարության միջոցով Աստված որոշել է կործանել իմաստունների իմաստությունը, խափանել մեծագույն մտավորականների գիտելիքը և խոնարհեցնել բոլոր մարդկանց հպարտությունը, մինչև որ ոչ մի մարմին չկարողանա պարծենալ Նրա ներկայության մեջ[8]: Ինչպես գրված է՝ «Նա, ով պարծենում է, թող Տիրոջով պարծենա»[9]:

6. Ա Կորնթացիների 1.23
7. Ա Կորնթացիների 1.17,23
8. Ա Կորնթացիների 1.19,20,29
9. Ա Կորնթացիների 1.31

Պողոսի Ավետարանը ոչ միայն հակասում էր իր ժամանակվա կրոնին, փիլիսոփայությանը և մշակույթին, այլև պատերազմ էր հայտարարում դրանց դեմ: Այն հրաժարվում էր հաշտություն կնքել կամ պայմաններ կապել այս աշխարհի հետ և չէր պատրաստվում հաշտվել որևէ արդյունքի հետ, քանի դեռ մշակույթը բացարձակ կերպով անձնատուր չէր եղել Հիսուս Քրիստոսի իշխանությանը: Մենք պետք է հետևենք Պողոսի օրինակին: Մենք պետք է խուսափենք մեր Ավետարանը մերօրյա միտումներին և մարմնավոր մարդկանց ցանկություններին համապատասխանեցնելու ցանկացած գայթակղությունից: Մենք իրավունք չունենք ջրիկացնել դրա վիրավորական բնույթը կամ մեղմացնել դրա ծայրահեղ պահանջները, որպեսզի այն ավելի դուրեկան դառնա անկում ապրած աշխարհի և եկեղեցիների մարմնավոր անդամների համար:

Մեր եկեղեցիներն ունեն բազմաթիվ ծրագրեր, որպեսզի ավելի դուրեկան դառնան Աստծուն փնտրողների համար: Նրանք վերաձևակերպում են Ավետարանը, հեռացնում են դրա վիրավորական բնույթը և բթացնում դրա սուր եզրերը՝ դարձնելով Ավետարանն ավելի ընդունելի մարմնավոր մարդկանց համար: Մենք պետք է բաց լինենք Աստծուն փնտրողների համար, սակայն պետք է գիտակցենք հետևյալը. գոյություն ունի միայն մեկ Փնտրող, որը Աստված է: Եթե մենք փորձում ենք հարմարեցնել մեր եկեղեցին և ուղերձը, եկեք հարմարեցնենք դրանք Աստծո համար: Եթե ուզում ենք եկեղեցի կամ ծառայություն կառուցել, եկեք կառուցենք այն Աստծուն փառավորելու ձգտմամբ և Նրա մեծությունը չվիրավորելու ցանկությամբ: Ի՞նչ տարբերություն, թե ինչ է այս աշխարհը մտածում մեր մասին: Մենք չպետք է փնտրենք պատիվ այս աշխարհից, այլ ձգտենք Երկնքի պատվին:

ԱՆՀԱՎԱՆԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆ

Ինչպես նշեցինք, մարմնավոր տեսանկյունից Պողոսն ամեն առումով կարող էր ամաչել իր քարոզած Ավետարանից, քանի որ այն հակասում էր բացառապես այն ամենին, ինչը ճշմարիտ և սուրբ էր համարվում իր ժամանակակիցների կողմից: Այնուամենայնիվ, գոյություն ունի մարմնավոր տեսանկյունից ամաչելու ևս մեկ պատճառ. Ավետարանը լիովին անհավանական և անհեթեթ թվացող ուղերձ է այս աշխարհի իմաստունների համար:

Որպես քրիստոնյաներ՝ երբեմն մենք չենք գիտակցում, թե որքա՛ն ապշեցուցիչ է, երբ ինչ-որ մեկը ճշմարտապես հավատում է մեր ուղերձին: Ինչ-որ իմաստով, Ավետարանն այնքան անիրատեսական է, որ դրա տարածումը ամբողջ Հռոմեական կայսրությամբ արդեն

իսկ ապացուցում է դրա գերբնական բնույթը: Ի՞նչը կարող էր դրդել որևէ հեթանոսի, ով լիովին անծանոթ էր Հին կտակարանի գրքերին և արմատացած էր հունական փիլիսոփայության կամ հեթանոսական սնոտիապաշտությունների մեջ, հավատալ նման մի ուղերձի Հիսուս անունով Մարդու մասին:

- Նա ծնվել էր վիճարկելի հանգամանքներում, Հռոմեական կայսրության ամենաանարգված շրջանի մի աղքատ ընտանիքում, *սակայն* Ավետարանը պնդում է, որ Նա Աստծո հավիտենական Որդին է՝ հղացված Սուրբ Հոգուց, մի հրեա կույսի որովայնում:
- Նա մասնագիտությամբ հյուսն էր և շրջիկ կրոնական ուսուցիչ՝ առանց կրթական որակավորման, *սակայն* Ավետարանը պնդում է, որ Իր իմաստությամբ գերազանցում էր յուրաքանչյուր հույն փիլիսոփայի և Հին Հռոմի իմաստունի:
- Նա աղքատ էր և չուներ տեղ Իր գլուխը դնելու համար, *սակայն* Ավետարանը պնդում է, որ երեք տարի շարունակ Նա խոսքով կերակրում էր հազարավորների, բժշկում էր մարդկանց ամեն տեսակի հիվանդություններից և նույնիսկ հարություն էր տալիս մահացածներին:
- Նա խաչվեց Երուսաղեմից դուրս՝ որպես հայհոյիչ և պետության թշնամի, *սակայն* Ավետարանը պնդում է, որ Նրա մահն առանցքային իրադարձություն էր ամբողջ մարդկության պատմության մեջ, և որ այն մեղքից փրկվելու և Աստծո հետ հաշտվելու միակ միջոցն է:
- Նա դրվեց փոխ առնված գերեզմանի մեջ, *սակայն* Ավետարանը պնդում է, որ երրորդ օրը Նա հարություն առավ մեռելներից և երևաց Իր հետևորդներից շատերին, իսկ քառասուն օր անց Երկինք համբարձվեց և նստեց Աստծո աջ կողմը:
- Այսպիսով, Ավետարանը պնդում է, որ մի աղքատ հրեա հյուսն, ով մերժվեց Իր իսկ ժողովրդի կողմից՝ որպես խելագար և հայհոյիչ, և խաչվեց պետության կողմից, այժմ աշխարհի Փրկիչն է, թագավորների Թագավորը և տերերի Տերը: Նրա անվան առջև ծալվելու է ամեն ծունկ, ներառյալ՝ կայսրերի ծնկները:

Ո՞վ կարող էր հավատալ նման ուղերձի՝ առանց Աստծո զորության: Այլ բացատրություն գոյություն չունի: Ավետարանը երբեք դուրս չէր գա Երուսաղեմից, և ո՛չ էլ՝ Հռոմեական կայսրության սահմաններից դեպի այս աշխարհի երկրները, եթե Աստված չվճռեր գործել դրա միջոցով: Այս ուղերձը կմահանար իր ծննդյան պահին, եթե հիմնված լիներ իր քարոզիչների կազմակերպչական կարողությունների, պերճախոսության կամ ջատագովական հմտությունների վրա: Աշխար-

հի բոլոր միսիոներական ծրագրերը և նույնիսկ Ուոլ Սթրիթից փոխ առնված բոլոր առաջադեմ մարկետինգային պլանները ոչ մի դեպքում չէին կարողանա նման անմիտ և վիրավորական ուղերձ տարածել:

Այս ճշմարտությունը և՛ խրախուսում է, և՛ զգուշացնում է մեզ՝ մարդկանց, ովքեր ձգտում են տարածել այն Ավետարանը, որին հավատացել են: Առաջինը՝ մենք խրախուսվում ենք՝ իմանալով, որ Ավետարանը հասարակ կերպով և հավատարմորեն քարոզելը այն միջոցն է, որով կշարունակի տարածվել այս աշխարհում: Երկրորդը՝ այն զգուշացնում է մեզ, որ չտրվենք ստերին այն մասին, որ մենք կարող ենք տարածել Ավետարանը մեր փայլուն մտքի, պերճախոսության կամ խելացի մարտավարությունների միջոցով: Այդ միջոցները չեն կարող անել անհնարինը՝ դարձի բերել մարդկանց[10]: Մենք պետք է լիովին հուսանք Ավետարանը տարածելու միակ աստվածաշնչյան միջոցին՝ այդ ուղերձը համարձակ և առանց ամաչելու քարոզելուն, քանի որ այն «Աստծո զորությունն է՝ փրկելու համար ամեն հավատացողի»[11]:

Մենք ապրում ենք անհավատ և քննադատական ժամանակաշրջանում: Մշակույթը ծաղրում է մեր հավատքը՝ որպես անհույս առասպել, և դիտարկում է մեզ կա՛մ որպես նեղ մտածելակերպ ունեցող մոլեռանդների, կա՛մ որպես կրոնական խաբեբայության զոհերի: Նման հարձակման պատճառով մենք հաճախ պաշտպանական դիրք ենք գրավում: Մենք փորձում ենք ապացուցել, որ մեր դիրքորոշումը և հայացքները վավերական են ջատագովության միջոցով: Թեև այս ճյուղը որոշ առումներով շատ օգտակար և անհրաժեշտ է, մենք պետք է գիտակցենք, որ զորությունը, միևնույն է, Ավետարանի հռչակման մեջ է: Մենք չենք կարող համոզել ինչ-որ մեկին, որ հավատա, ինչպես որ չենք կարող հարություն տալ մեռած մարդու: Սա Սուրբ Հոգու աշխատանքն է: Մարդիկ հավատքի են գալիս միայն Աստծո գերբնական ներգործությամբ, և Նա խոստացել է գործել ոչ թե մարդկային իմաստությամբ և մտավոր փորձառությամբ, այլ՝ խաչված և մեռելներից հարություն առած Քրիստոսին քարոզելու միջոցով[12]:

Մենք պետք է գիտակցենք, որ մեր Ավետարանը անհավանական ուղերձ է: Մենք չպետք է ակնկալենք, որ ամեն մեկն ականջ կդնի մեզ, առավել ևս, կհավատա՝ առանց Աստծո Հոգու շնորհալի և զորավոր ներգործության: Որքա՜ն անհույս է մեր քարոզելը՝ առանց Աստծո զորության: Մեր ամբողջ ավետարանչությունն ընդամենը անհույս գործ է, եթե Աստված չհպվի մարդկանց սրտերին: Այնուամենայնիվ, Նա խոստացել է անել դա, եթե մենք հավատարմորեն քարոզենք միակ ուղերձը՝ Ավետարանը, որը կարող է փրկել:

10. Ա Կորնթացիների 1.17–25
11. Հռոմեացիների 1.16
12. Ա Կորնթացիների 1.22–24

ԳԼՈՒԽ ՈՒԹ

Զորավոր Ավետարան

«Որովհետև Աստծո զորությունն է՝ փրկելու համար»:

— Հռոմեացիների 1.16

Աստվածաշունչը շարունակ խոսում է այն մասին, որ մարդն անկարող է փրկվել իր մեղքից և դատապարտված է: Հոբը հայտարարեց. «Եթե ձյան ջրի մեջ լվացվեմ և մոխրաջրով մաքրեմ ձեռքերս, այն ժամանակ էլ ինձ փոսի մեջ կկոխեիր, և իմ հանդերձը կզզվեր ինձնից»[1]: Սաղմոսերգուն հառաչում էր, որ իր մեղքը միշտ իր առջև է, իսկ Պողոս առաքյալը հուսահատորեն բացականչում էր. «Ես ի՜նչ խեղճ մարդ եմ. ո՞վ կապրեցնի ինձ այս մահի մարմնից»[2]:

Այն, որ մարդը բացարձակապես անօգնական է և անկարող է փրկել ինքն իրեն, Սուրբ գրքի ամենադժգույն ճշմարտություններից մեկն է: Այնուամենայնիվ, այն ունի ազնվագույն նպատակ՝ խոնարհեցնել մարդուն և մեծարել Ավետարանի փրկարար զորությունը: Գրելով Հռոմում գտնվող եկեղեցուն՝ Պողոսն ազդարարեց, որ մարդու կողմից սեփական անձը փրկելու բացարձակ անկարողությունն էր պատճառը, որ Քրիստոսը մահացավ ամբարիշտների համար[3]: Ինքն իրենով մարդը չի կարող փրկվել: Այնուամենայնիվ, Աստված մենակ չթողեց մարդուն, այլ տվեց փրկության հնարավորություն՝ Իր Որդու Ավետարանը: Այն, ինչ անհնար է մարդու համար, հնարավոր է Աստծո համար[4]: Նա կարող է փրկել, և Նրա կարողությունն անսահման է[5]:

1. Հոբ 9.30,31
2. Սաղմոս 51.3, Հռոմեացիների 7.24
3. Հռոմեացիների 5.6. *«Անկարող»* (*«անզոր»* (NIV) և *«անօգնական»* (NASB)) բառը թարգմանված է հունարեն «ասթենես» բառից, որը նշանակում է «անզոր, թույլ, անուժ, տկար»:
4. Մարկոս 10.24–27
5. Եսայի 63.1. «Ո՞վ է սա, որ գալիս է Եդոմից, հանդերձները կարմրացած՝ Բոսրայից, սա, որ փառավորված է իր հագուստով և ծածանվում է իր շատ զորության մեջ: «Ես, որ խոսում եմ արդարությամբ և կարող եմ փրկել»»: Եբրայեցիների 7.25. «Ուստի և բոլորովին կարող է փրկել նրանց, որ Նրանով մոտենում են Աստծուն, որովհետև միշտ կենդանի է, որ նրանց համար բարեխոսություն անի»:

ԱՍՏԾՈ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՎԵՏԱՐԱՆՈՒՄ

Աստվածաշնչում գրված է Աստծո զորության բազում դրսևորումների մասին: Նա ստեղծեց աշխարհը խոսքով[6]: Նա թվով համարում է աստղերի բազմությունը, Նա անունով է կոչում դրանցից ամեն մեկը, և Իր մեծ իշխանության ու սաստիկ զորության շնորհիվ, դրանցից մեկն էլ չի կորչի[7]: Նա բաժանում է հեղեղներն Իր շնչի փչելով[8]: Սարերը հալչում են Նրա տակ մոմի նման՝ ինչպես ջուր, որ իջնում է զառիվայրից[9]: Նա խաղում է Լևիաթանի հետ՝ ինչպես թռչնիկի[10]: Նա անում է Իր ուզածը երկնքի զորքի և երկրի բնակիչների հետ, և մեկը չկա, որ զարկի Նրա ձեռքին և ասի՝ ի՞նչ ես անում[11]: Ահա թե ինչպիսին է մեր Աստծո զորությունը, սակայն աստվածային զորության այս դրսևորումներից ոչ մեկը չի կարող համեմատվել այն զորության հետ, որը հայտնվում է Հիսուս Քրիստոսի Ավետարանի միջոցով:

Այս գլխի սկզբում գտնվող աստվածաշնչյան խոսքում Պողոսն անվանում է Ավետարանը Աստծո *զորությունը:* Այս բառը թարգմանված է հունարեն *«դու́նամիս»* բառից: Թեև այս բառն ինքնին բացառիկ չէ, այն յուրահատուկ իմաստ է ստանում Աստվածաշնչի համատեքստում: Անկասկած, այս խոսքում Պողոսը նկատի ունի հինկտակարանյան անթիվ հղումներն Աստծո զորության մասին, որը դրսևորվում էր Նրա ժողովրդին փրկելու համար: Աստված հանեց Իսրայելի ժողովրդին Եգիպտոսից՝ մեծ զորությամբ և զորավոր ձեռքով[12]: Նա բարձրացրեց փարավոնին, որպեսզի նրանով ցույց տար Իր զորությունը, և որ Իր անվան մասին պատմվեր աշխարհով մեկ[13]: Նա փրկեց Իր ժողովրդին հանուն Իր անվան, որ հայտնի դարձներ Իր զորությունը[14]: Ի վերջո, Նա կրկին ու կրկին հիշեցնում էր Իսրայելին, որ իրենց փրկությունը ոչ թե իրենց ուժով էր, այլ՝ Իր զորությամբ[15]:

Հռոմեացիների 1-ին գլխում *«դու́նամիս»* բառը գրված է ևս երկու անգամ՝ 16-րդ խոսքից բացի: Այդ գլխի սկզբում այն վերաբերում է Աստծո զորությանը, որը հարություն տվեց Հիսուսին մեռելներից և արդարացրեց Նրա որդիությունը[16]: Իսկ մեր աստվածաշնչյան խոսքից հետո այն մատնանշում է Աստծո զորությունը՝ որպես Նրա

6. Ծննդոց 1.3, Եբրայեցիների 11.3
7. Եսայի 40.26
8. Ելից 15.8
9. Միքիա 1.4
10. Հոբ 41.5
11. Դանիել 4.35
12. Ելից 32.11, Երկրորդ Օրինաց 9.29, Դ Թագավորաց 17.36, Նեեմիա 1.10, Սաղմոս 77.14,15
13. Ելից 9.16
14. Սաղմոս 106.8
15. Երկրորդ Օրինաց 8.16,17
16. Հռոմեացիների 1.4

հատկանիշներից մեկը, որը գործում է արարչագործության մեջ և պահպանում է ամբողջ տիեզերքը[17]: Աստծո զորության այս երկու կողմերը Նրա ամենակարող լինելու մեծագույն դրսևորումներն են Սուրբ գրքում: Այնուամենայնիվ, Ավետարանը հավասար է դրանց, քանի որ այն Աստծո զորությունն է՝ մարդկանց փրկելու համար, որն ընդգրկում է ոչ միայն նրանց ազատությունը մեղքի դատապարտությունից, այլև նրանց հոգևոր հարությունը, այսինքն՝ նոր ստեղծված դառնալը, և նրանց անձերի շարունակական պահպանումը կամ սրբացումը:

Ավետարանի զորությունը հասկանալու համար արժե երկու հարց տալ: Առաջինը՝ «Մենք գիտակցո՞ւմ ենք, թե ինչ մեծ զորություն է պահանջվում՝ մեղավոր մարդկանց փրկելու համար»: Փրկությունը հեշտ գործ չէ. այն անհնար է բոլորի համար՝ բացի Աստծուց[18]: Պատճառը մարդու անկում ապրած և բարոյապես ապականված վիճակն է: Սուրբ գիրքը սովորեցնում է, որ Աստծո պատկերը մարդու մեջ լրջորեն աղավաղվել է, և բարոյական այլասերումը պղծել է նրա ամբողջ էությունը[19]: Որպես այդպիսին, մարդը պատերազմ է հայտարարել Աստծո դեմ և անում է այն ամենը, ինչ կարող է, որ սահմանափակի կամ խափանի Նրա ճշմարտությունը[20]: Աստվածաշունչը սովորեցնում է, որ մարդը *չի կարող* գալ Աստծո մոտ, քանի որ նա *չի կամենում*, և նա չի կամենում գալ Աստծո մոտ, քանի որ նրա սիրտը չար է: Հիսուսը սովորեցրեց այս ճշմարտությունը Հովհաննես 3.19,20-ում. «Եվ սա է դատաստանը, որ լույսը եկավ աշխարհ, և մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան թե լույսը, որովհետև նրանց գործերը չար էին: Որովհետև ամեն չար գործող ատում է լույսը և չի գալիս դեպի լույսը, որ նրա գործերը չհանդիմանվեն»:

Մարդու սիրտը շրջապատող անօրինության պարիսպները շատ ավելի պինդ և անառիկ են, քան Երիքովի շուրջը գտնվող պարիսպները: Եթե մարդիկ չէին կարող կործանել այդ մեծ քաղաքի պարիսպներն իրենց ուժով, նրանք նույնպես չեն կարող հաղթահարել իրենց սրտերի անօրինությունը: Դա կարող է անել միայն Աստծո զորությունը: Ահա թե ինչու են այդքան հաճախ ասում, որ Աստծո զորությունը, որն ի հայտ է գալիս մեկ մարդուն փրկելու համար, շատ ավելին է, քան այն զորությունը, որը ստեղծեց տիեզերքը: Աստված ստեղծեց աշխարհը *«էն նիհիլո»*՝ ոչնչից: Շատ ավելի հեշտ է ստեղ-

17. Հռոմեացիների 1.20

18. Մատթեոս 19.26

19. Բարոյական այլասերումը ներթափանցում է մարմին (Հռոմեացիների 6.6,12, 7.24, 8.10,13), միտք (Հռոմեացիների 1.21, Բ Կորնթացիների 3.14,15, 4.4, Եփեսացիների 4.17–19), զգացմունքներ (Հռոմեացիների 1.26,27, Գաղատացիների 5.24, Բ Տիմոթեոս 3.2–4) և կամք (Հռոմեացիների 6.17, 7.14,15)

20. Հռոմեացիների 1.18,30, 5.10

ծել բարին ոչնչից, քան վերստեղծել բարին անկում ապրած և ապականված մարդու մեջ:

Թեև կարող է թվալ, որ մենք չափազանց շատ ենք խոսում այս մասին, արժե կրկնել, որ մենք չենք կարող ճշմարտապես հասկանալ Ավետարանի փրկարար զորությունը, մինչև որ պատկերացում չկազմենք մարդու անկում ապրած վիճակի և բարոյական ապականության մասին: Որքան ավելի խոսենք մարդու ապականության մասին, այնքան ավելի կհասկանանք և կգնահատենք Ավետարանի զորությունը: Մենք նույնպես ավելի լրջորեն կգիտակցենք, որ ժամանակակից Ավետարանական շարժման մեծ մասի մեթոդաբանությունը, մարկետինգային ռազմավարությունը և հնարները լիովին ունայն են: Եթե մարդիկ փրկվեն, դա տեղի է ունենալու Աստծո գերբնական զորությամբ, որը հայտնվում է Ավետարանի քարոզմամբ:

Երկրորդ հարցը, որը պետք է տանք, հետևյալն է. «Արդյո՞ք մենք գիտակցում ենք, որ փրկարար զորությունը գտնվում է միմիայն Ավետարանում»: Հիսուս Քրիստոսի Ավետարանը Աստծո զորությունն է՝ փրկելու համար: Այն պարզապես փրկության միջուկը կամ ինչ-որ մասը չէ, այլ՝ ամեն ինչը: Որպեսզի Ավետարանն անդառնալի ազդեցություն թողնի մարդկանց վրա, այն պարզապես պետք է հռչակել: Պետք չէ վերանայել Ավետարանը՝ այն ավելի ընդունված դարձնելու համար, փոփոխել Ավետարանը՝ այն ավելի հասկանալի դարձնելու համար, կամ պաշտպանել Ավետարանը՝ այն վավերացնելու համար: Եթե մենք ոտքի ելնենք և հռչակենք Ավետարանը, այն ինքը կկատարի ամբողջ աշխատանքը: Ընդամենը մեկ քարոզիչ, ով լիովին հրաժարվել է իր մարմնավոր սպառազինությունից և պայքարում է միայն Ավետարանի հռչակմամբ, բարեխոսական ջանքերով և անձնուրաց սիրո գործերով, կանի շատ ավելին աշխարհի համար, քան ստրատեգների և նորարարների բոլոր ծրագրերը միասին:

Թեև Աստվածաշունչը և եկեղեցու պատմությունը հաստատում են այս ճշմարտությունը՝ ուսումնասիրելով ժամանակակից Ավետարանական շարժումը, մենք տեսնում ենք, որ ավետարանականներն այլևս չեն հավատում այս համարձակ գաղափարին: Այս ճշմարտությունը գեղեցիկ է հնչում հին հիմներում, բայց դրան հավատալը և դա կիրառելը առնվազն միամտություն է թվում: Այսպիսով, մերօրյա «օրինակելի եկեղեցիների» մեծամասնությունն ավելի շատ նման է մեծ ժամանցային կենտրոնի, քան Սիոնի նավին*: Նրանք ոչ միայն քարոզում են կրճատված կամ փոփոխված Ավետարան, այլև առաջարկում են այնքան տարատեսակ զբաղմունքներ, որ դրանցում

*Հայտնի անգլալեզու քրիստոնեական հիմնի վերնագիր:

սուրբգրային Ավետարանը գտնելը դառնում է դժվար, եթե ոչ՝ անհնարին: Զորությունն այլևս պարզ ուղերձի մեջ չէ, այլ՝ համարձակ առաջնորդների, նորարար մարտավարությունների և եկեղեցին մշակույթի թելադրանքի համաձայն փոփոխելու կարողության մեջ:

Մինչ մեր աշխարհը շարունակ ավելի հակակրոնական և հակաքրիստոնեական է դառնում, Ավետարանական շարժումն աննպատակ այսուայն կողմ է վազում՝ լուծում փնտրելով: Մենք մանրակրկիտորեն ուսումնասիրում ենք մեզ շրջապատող մշակույթի քմահաճույքները և ոճը, ինչից հետո կատարում ենք անհրաժեշտ փոփոխություններ Ավետարանի մեջ, որպեսզի այն ընդունված մնա: Երբ մեր մշակույթն այլևս չի ցանկանում այն, ինչ ունենք, մենք առաջարկում ենք այն, ինչ ինքն է ցանկանում: Երբ ծառայության ինչ-որ ձև մարմնավոր մարդկանց բազմություններ է հավաքում, մենք մի ձեռնարկ ենք գրում այդ մասին՝ մշակելով մարտավարություն, որին մյուսները պետք է հետևեն: Այնուամենայնիվ, անելով այս ամենը՝ մենք չենք հասկանում, որ ավելի ընդունված չենք դարձնում Ավետարանը: Մենք ընդամենը հաճեցնում ենք անաստված մշակույթին, որպեսզի պահենք այն մեր շենքերում: Ի վերջո, մենք զրկվում ենք Ավետարանից, Աստված պատիվ չի ստանում, իսկ այդ մշակույթը գնում է դժոխք:

Եկեղեցուն պետք են մարդիկ, ովքեր կդիմակայեն հակառակվող բազմություններին առանց որևէ օժանդակող կամ պաշտպանական միջոցի՝ բացի Ավետարանից և Աստծուց, Ով խոստացել է գործել դրա միջոցով: Որքա՛ն ծանրաշարժ էր Սավուղի սպառազինությունը Դավթի համար, և որքա՛ն ծիծաղելի տեսք ուներ Դավիթը, երբ հագավ այն: Միայն դրա քաշը զրկեց նրան ճարպկությունից և ուժից: Այնուամենայնիվ, նա կարևոր որոշում կայացրեց՝ մի կողմ դնել այն և բախվել հսկային՝ զինված միայն Տիրոջ անվամբ: Նմանապես, մենք պետք է մերժենք Սավուղի զենքերն ու զրահը և պատերազմի գնանք միայն Ավետարանի ողորկ քարերով: Մենք պետք է կայացնենք նույն կարևոր որոշումը՝ դեն նետել ժամանակակից ավետարանչության բոլոր հնարները, մարտավարությունները և խելամտորեն մշակված մեթոդները, և բախվել անհավատության ու կասկածամտության զույգ հսկաներին բաց Աստվածաշնչով և պարզ, փոխզիջման չգնացող ուղերձով՝ խաչված և մեռելներից հարություն առած Քրիստոսի մասին: Այդ ժամանակ մենք կտեսնենք Աստծո զորությունը, որը կդրսևորվի նույնիսկ մեծագույն մեղավորների ճշմարիտ դարձով: Մի՞թե դժվար բան կա Տիրոջ համար[21]:

Այժմ, երբ մենք ընդունում ենք, որ մարդն ապականված է, և որ նրա փրկությունն անհնար է ցանկացած միջոցով, որը թեկուզ ինչ-

21. Ծննդոց 18.14

որ կերպով առնչվում է նրա ուժերի հետ, մենք կսկսենք հասկանալ Պողոսի բերկրանքը Ավետարանի զորության շնորհիվ: Ահա թե ինչու նա կարող էր Արեոպագոս մտնել և քարոզել, որ մի խաչված հրեա տիեզերքի Աստվածն էր և աշխարհի Փրկիչը[22]: Նա չուներ համոզիչ փաստարկների կամ պերճախոսության կարիք: Նա գիտեր, որ մարդիկ դարձի էին գալու, եթե ինքը շարունակեր համարձակությամբ և պարզորեն քարոզել այս եզակի ուղերձը[23]: Նույն վստահությունը պահպանեց Վիլյամ Քերիին և անթիվ այլ միսիոներների տարիներ տևող երաշտի ընթացքում, մինչև որ եկավ հունձքը: Ավետարանը Աստծո զորությունն է՝ փրկության համար: Մարդիկ դարձի կգան, եթե այն քարոզվի:

ՓՐԿԱՐԱՐ ԱՎԵՏԱՐԱՆ

Աստվածաշնչում գրված է, որ փրկությունը հավատքի վախճանը կամ նպատակն է[24]: Նույնը կարելի է ասել նաև Ավետարանի մասին: Պողոսի գնահատմամբ, մեծագույն պարգևը, որն Ավետարանը տալիս է մարդուն, նրա անձի փրկությունն է: Աստված ուղարկեց Իր Որդուն այս աշխարհ, որ աշխարհը Նրանով փրկվի[25]: Դարեր շարունակ փրկությունը եղել է եկեղեցու փառավոր նպատակը և նրա մեծագույն հիմների թեման: Անցյալի սրբերը փրկությունը դիտարկում էին ոչ թե որպես Ավետարանի առավելություններից մեկը, որի մասին պետք է իմանալ, այլ՝ մեծագույն առավելությունը, որն այնքա՛ն էր կլանում հավատացյալի կյանքը, որ նա այլևս ոչինչ չէր ցանկանում: Փրկությունը սեփական անձից և մեղքից, ազատությունը դատաստանից և զայրույթից, հաշտությունն Աստծո հետ և Քրիստոսին ճանաչելը բավական էին:

Ցավոք, վերջին տասնամյակներին այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ փրկությունն ինչ-որ չափով կորցրել է արժեքը: Շատերի կարծիքով, փրկության խոստումն այլևս չունի այնպիսի ազդեցություն, որ դրդի մեղավորին՝ ապաշխարել, կամ սրբին՝ ճշմարտապես նվիրվել. այնպես որ, մենք պետք է այլ խոստումներ ավելացնենք՝ Ավետարանի կոչը գրավիչ դարձնելու համար: Առողջություն և հարստություն, կյանքի նպատակ և իշխանություն, և այս կյանքից առավելագույնը ստանալը՝ ահա թե ինչով է ժամանակակից քրիստոնեությունը գրավում մարդկանց: Իրականում, այն ամենը, ինչ այսօր խոստացվում է եկեղեցական ամբիոններից, և ինչին ամենից

22. Գործք 17.22
23. Գործք 17.34
24. Ա Պետրոս 1.9
25. Հովհաննես 3.17

շատ են ձգտում եկեղեցում նստած մարդիկ, հաճախ հենց այն բաներն են, որոնք, ինչպես Հիսուսը զգուշացնում էր, մենք կարող ենք կորցնել ճշմարիտ աշակերտության ընթացքում[26]: Համաձայն Նրա խոսքերի՝ հնարավոր է, որ մարդը ստիպված լինի կորցնել ամբողջ աշխարհը՝ փրկվելու համար, սակայն, Նրա գնահատմամբ, նման ցածր գնով փրկությունը ստանալը ձեռնտու գործարք է[27]:

Հաշվի առնելով այն բարձր արժեքը, որն Աստվածաշունչը վերագրում է փրկությանը՝ ո՞րն է պատճառը, որ միայն փրկության խոստումն այլևս թրթիռ չի առաջացնում ժամանակակից մարդու ներսում: Ինչո՞ւ է պետք, որ Ավետարանին ավելացվեն այլ երկրային խոստումներ, որպեսզի այն հրապուրիչ դառնա ժամանակակից մարդու համար: Առաջինը՝ պատճառն այն է, որ մարդիկ չեն հասկանում իրենց ողբալի վիճակը: Ինչպես հարուստ մարդը ուրախանալու պատճառ չի տեսնում չոր ու ցամաք հաց ստանալիս, մինչև որ հանգամանքները չեն փոխվում՝ աղքատացնելով նրան, այնպես էլ մեղավորն ուրախություն չի գտնում փրկության մեջ, քանի դեռ նրա մեղքի զարհուրելի բնությունը չի հայտնվում նրան, և նա չի տեսնում իրեն որպես թշվառ, ողորմելի, աղքատ, կույր և մերկ անձնավորություն[28]: Երկրորդը՝ պատճառն այն է, որ մարդիկ չեն հասկանում այն մեծ վտանգը, որը սպառնում է իրենց: Մարդը գնահատելու է փրկությունը այն չափով միայն, որով նա հասկանում է այն զարհուրանքը, որից ինքը փրկվում է: Դժոխքը և Աստծո զայրույթն ավելի պարզ հասկանալը օգնում է մարդուն ավելի բարձր գնահատել այն փրկությունը, որն առաջարկվում է Ավետարանի միջոցով: Երրորդը՝ պատճառն այն է, որ մարդիկ չեն հասկանում այն անսահման գինը, որը վճարվեց՝ իրենց փրկությունն ապահովելու համար: Անձի փրկությունը թանկ է և ավելին է, քան ցանկացած փրկագին, որը մարդը կարող է տալ[29]: Միայն Աստված կարող էր տալ այդ փրկագինը, և Նա լիովին վճարեց այն՝ Իր Որդու թանկ արյամբ[30]: Եթե մեղավորները ոչինչ չիմանան Քրիստոսի արժեքի մասին, գրեթե անհավանական է, որ նրանք գնահատեն այն, ինչ, ըստ Ավետարանի, Նա արել է իրենց համար: Չորրորդը՝ պատճառն այն է, որ վերստին չծնված մարդիկ միշտ էլ այսպիսին են: Կույրերը չեն տեսնում մայրամուտի գեղեցկությունը. խուլերը չեն հուզվում նույնիսկ ամենագեղեցիկ սոնատից. վայրի գազանները չեն գնահատում արվեստը: Նմանապես, վերստին չծնված և դարձի չեկած մարմնավոր մարդիկ

26. Մատթեոս 16.24–26
27. Մարկոս 8.36,37
28. Հայտնություն 3.17
29. Սաղմոս 49.8
30. Ա Պետրոս 1.18,19

հոգևորապես կույր են, խուլ են Աստծո Խոսքի հանդեպ և գտնվում են բիրտ սրտի գերության ներքո, որն ավելի շուտ կհագեցնի իրենց կենդանական կրքերը, քան կճաշակի և կտեսնի, որ Տերը քաղցր է[31]: Ահա թե ինչու է Հիսուսը պնդում, որ եթե մարդը վերստին չծնվի, նա չի կարողանա նույնիսկ «տեսնել» Երկնքի թագավորությունը, էլ ինչ խոսք՝ դրա արժեքը գնահատելու մասին[32]: Ահա թե ինչու են մեր եկեղեցական ցուցակները լրացվում մարմնավոր մարդկանցով, որոնք գալիս են տարբեր պատճառներով, բայց ոչ՝ Քրիստոսի և արդարության քաղցի համար[33]: Որքան ավելի գործնական են դառնում Ավետարանին ավելացվող խոստումները մեր օրերում, այնքան ավելի հրապուրիչ է Ավետարանը դառնում նրանց համար, և նրանք մնալու են եկեղեցում այնքան ժամանակ, քանի դեռ ստանում են այն, ինչ ուզում են: Նրանց մարմնական բնությունը սնվում է կրոնական քողի ներքո, բայց նրանց անձերը դեռ մահացած են Աստծո և ճշմարիտ փրկության հույսի համար:

ՓՐԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Պողոս առաքյալը գրում է, որ Ավետարանը Աստծո զորությունն է՝ փրկելու համար: Թվում է՝ սա շատ պարզ է, բայց կրկին, մենք պետք է հստակորեն սահմանենք այն հասկացությունները, որոնք օգտագործում ենք: Ի՞նչ նկատի ունի Պողոս առաքյալը *փրկություն* ասելով: Գոյություն ունեն անթիվ իրարամերժ գաղափարներ այս մասին, և սխալ կլինի ենթադրել, որ բոլորս համակարծիք ենք այս հարցում: Փրկությունը, որը տրված է Ավետարանի կողմից, բազմաթիվ կողմեր ունի, բայց մենք կխոսենք երեք հիմնական կողմի մասին. փրկություն՝ մեղքի դատապարտությունից, մեղքի իշխանությունից և, ի վերջո, մեղքի ներկայությունից: Այս երեքը նաև կարելի է դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ՝ անցյալ, ներկա և ապագա: Ավետարանին հավատացողը փրկվել է մեղքի դատապարտությունից, փրկվում է մեղքի իշխանությունից և, ի վերջո, կփրկվի մեղքի ներկայությունից:

Անցյալում քրիստոնյան փրկվել է մեղքի դատապարտությունից: Սուրբ գիրքը սովորեցնում է, որ բոլոր մարդիկ դատապարտված են Ադամի մեջ և համաձայն իրենց մեղավոր գործերի[34]: Այս դատապարտությունը, ի վերջո, կիրառվում է Աստծո դատաստանի

31. Սաղմոս 34.8
32. Հովհաննես 3.3
33. Մատթեոս 5.6
34. Հռոմեացիների 5.12–19, 3.23

գահի առջև, որտեղ մեղավորը բացահայտվում է, կշռվում է և արտաքսվում է դժոխք[35]: Այնուամենայնիվ, քրիստոնյաների դեպքում ամեն ինչ այլ է: Այն պահին, երբ քրիստոնյան ապաշխարում է և հավատում է Ավետարանին, նրա դիրքն Աստծո առջև հավիտյան փոխվում է[36]: Նա հավատքով արդարանում է և խաղաղություն է ստանում Աստծո հետ[37]: Ինչպես գրված է Աստծո Խոսքում. «Ուրեմն հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսում լինողների համար»[38]:

Ներկայում քրիստոնյան փրկվում է մեղքի իշխանությունից: Այն Աստված, Ով սկսել է Իր բարի գործը նրանում, խոստացել է ավարտին հասցնել այն մինչև վերջին օրը, և լիովին մաքրել նրան իր պղծությունից և բոլոր կուռքերից[39]: Սուրբ գրքում Աստված ոչ միայն արդարացնում է, այլև սրբացնում է[40]: Ամեն քրիստոնյա՝ առանց բացառության, Աստծո ձեռքի գործն է[41]: Նա զորավոր և արդյունավետ գործում է ճշմարիտ հավատացյալների կյանքում: Նա առաջնորդում է նրանց կամքը և զորացնում է նրանց, որ առավելագույնս հաճեցնեն Իրեն[42]: Սրբացման աշխատանքը փրկության էական մասերից մեկն է, և ամեն ճշմարիտ քրիստոնյա մուտք է գործել այս անխուսափելի գործընթացի մեջ, որը նախատեսված է, առաջնորդվում է և զորացվում է Աստծով: Գոյություն ունի մի հին ավետարանական ճշմարտություն. մեծագույն վկայությունն այն մասին, որ մենք արդարացված ենք այն է, որ ներկայումս մենք գտնվում ենք սրբացման ընթացքի մեջ: Մենք վստահություն ունենք, որ Աստված փրկել է մեզ մեղքի դատապարտությունից, եթե ներկայումս Նա փրկում է դրա իշխանությունից: Մեր մարդկային տկարությունների պատճառով այս ընթացքն իրական պայքար է, և մեր առաջխաղացումը սրբության մեջ կարող է լինել երեք քայլ առաջ և մեկ քայլ՝ ետ: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքի ընթացքում ընդհանուր առմամբ կարելի է հստակ առաջընթաց տեսնել: Միայն թույլ և աղավաղված ավետարանն է ենթադրում, որ հնարավոր է փրկություն ստանալ՝ առանց սրբացման: Ինչպես հռչակում է Աստվածաշունչը՝ «Հետևե՛ք... սրբության, որ առանց նրա ոչ ոք Տիրոջը չի տես-

35. Հայտնություն 20.11–15
36. Մարկոս 1.15
37. Հռոմեացիների 5.1. *«Արդարանալ»* բառը քրեական տերմին է: Արդարացված լինելը նշանակում է, որ մարդն իրավաբանորեն արդար է համարվել Աստծո առջև՝ ոչ թե իր առաքինության և արժանիքների հիման վրա, այլ՝ Հիսուս Քրիստոսի առաքինության և արժանիքների, և շնորհիվ Գողգոթայում Նրա մահվան:
38. Հռոմեացիների 8.1
39. Փիլիպեցիների 1.6, Եզեկիել 36.25
40. Ա Թեսաղոնիկեցիների 5.23
41. Եփեսացիների 2.10
42. Փիլիպեցիների 2.13

նի» և «Բայց եթե առանց խրատի եք, որին ամենը մասնակից եղան, ուրեմն խորթ եք, և ոչ՝ որդիներ»[43]:

Ապագայում քրիստոնյան կփրկվի մեղքի ներկայությունից և դրա ապականիչ ազդեցությունից: Դրա համար պահանջվում է երկու բան: Առաջինը՝ քրիստոնյան պետք է փոխվի, նա պետք է ազատվի ապականված մարմնական բնությունից, իսկ նրա մարմինը՝ ազատվի մեղքից[44]: Սա տեղի կունենա մի ակնթարթում, փողի ձայնի ժամանակ, երբ մարմինը հարություն առնի անեղծ կերպով, և մահկանացուն անմահություն հագնի[45]: Երկրորդը՝ լինելու է նոր երկինք և նոր երկիր. ամբողջ արարչագործությունը պետք է ազատվի ապականության անեծքից, որի ներքո այն հառաչում էր՝ սպասելով Աստծո որդիների փառավոր ազատությանը[46]: Թեև այս ամենը դեռ ապագայում է, փրկության այս վերջնական փուլը նույնքան հաստատ է, որքան և մյուս երկուսը: Աստվածաշունչն ասում է հետևյալը. «Եվ որոնց առաջուց սահմանեց, նրանց կանչեց էլ, և որոնց կանչեց, նրանց արդարացրեց էլ, և որոնց արդարացրեց, նրանց փառավոր էլ արեց»[47]:

Աստծո անսահման զորությունն ի հայտ է գալիս Ավետարանում: Ոչինչ՝ Ավետարանից բացի, չի կարող բերել մարդուն ապաշխարության և հավատքի: Ոչինչ՝ Ավետարանից բացի, չի կարող վերափոխել մարդուն՝ մեղավորից սուրբ դարձնելով: Ոչինչ՝ Ավետարանից բացի, չի կարող շատ որդիների փառքի մեջ տանել[48]:

---

43. Եբրայեցիների 12.14,8. «խրատ» բառն այստեղ վերաբերում է Աստծո միջամտությանը հավատացյալի կյանքում՝ նրան սրբության մեջ կրթելու համար:
44. Ա Կորնթացիների 15.50, Հռոմեացիների 8.23
45. Ա Կորնթացիների 15.52,53
46. Հայտնություն 22.3, Հռոմեացիների 8.21,22
47. Հռոմեացիների 8.30
48. Եբրայեցիների 2.10

ԳԼՈՒԽ ԻՆԸ

Ավետարան՝ բոլոր հավատացողների համար

«Ամեն հավատացողի, առաջ՝ հրեային, և հետո՝ հույնին»:

— Հռոմեացիների 1.16

Ավետարանի կանչը համընդհանուր է: Քրիստոսի փրկարար աշխատանքը տեղի չունեցավ մոլորակի ինչ-որ հեռավոր անկյունում, այլ՝ անմիջապես կրոնական աշխարհի կենտրոնում[1]: Նրա մահվան և հարության մասին լուրը արագորեն տարածվեց այդ ժամանակվա ամբողջ հայտնի աշխարհով[2]: Ավելին՝ Քրիստոսը չեկավ, որ փրկեր միայն մեկ ժողովրդի. Նա թափեց Իր արյունը՝ փրկելու մի ժողովրդի՝ ամեն ցեղից, լեզվից, ժողովրդից և ազգից[3]: Հին կտակարանի մարգարեություններն ազդարարում էին, որ Մեսիան ստանալու էր ազգերը՝ որպես ժառանգություն, և Մեծ Հանձնարարականի նպատակը՝ այդ խոստումն իրականացնելն է[4]: Քրիստոսը պատվիրեց Իր եկեղեցուն գնալ ամբողջ աշխարհով և քարոզել Ավետարանը ամեն արարածի: Այն մարդիկ, ովքեր հավատան և վկայեն իրենց հավատքի մասին՝ մկրտության միջոցով հրապարակավ Քրիստոսի հետ նույնանալով՝ կփրկվեն, իսկ նրանք, ովքեր չեն հավատա, կդատապարտվեն[5]:

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ՝ ԲՈԼՈՐ ՀԱՎԱՏԱՑՈՂՆԵՐԻՆ

Եվ Հին, և՛ Նոր կտակարանների գրքերը սպառիչ կերպով վկայում են այն մասին, որ մարդիկ կարող են ստանալ փրկության առավելությունները միայն հավատքով: Ամբակումի դավանանքը ամբողջ ճշմարիտ աստվածապաշտության հիմքն է. «Արդարը իր հավատքով

1. Գործք 26.26
2. Կողոսացիների 1.5,6
3. Հայտնություն 5.9
4. Սաղմոս 2.8
5. Մարկոս 16.15, Մատթեոս 28.18–20

պիտի ապրի»[6]: Այս խոսքերը փրկության բանալին և ամեն մի ճշմարիտ արթնության կայծն են: Առանց այս խոսքերի՝ փրկության դուռը կնքված և փակ է: Աստծո փառքը ստանալու միակ ծածկագիրը «ես հավատում եմ» բառերն են: Պողոսը բացատրում է այս ճշմարտությունը ուշագրավ և ընդարձակ. «Գիտենք, որ մարդը օրենքի գործերից չի արդարանում, բայց միայն Հիսուս Քրիստոսի հավատքից: Եվ մենք Հիսուս Քրիստոսին հավատացինք, որ Քրիստոսի հավատքից արդարանանք, և ոչ թե օրենքի գործերից, որովհետև օրենքի գործերից ոչ մի մարմին չի արդարանա»[7]:

Գոյություն ունի երկու հիմնավոր պատճառ, թե ինչու փրկությունը գործերից չէ: Առաջինը՝ մարդը չունի որևէ գործ, որը կարելի է ի ցույց հանել: Մարդու կյանքում չկա մի բան, ինչը կարող է արժանանալ փրկությանը. նրա բոլոր գործերն առաջացնում են սուրբ Աստծո դատապարտությունը: Սուրբ գիրքը վկայում է, որ ոչ ոք արդար չէ, նույնիսկ մեկը: Չկա մեկը, որ բարին գործի[8]: Իրականում, մարդու լավագույն ջանքերը և անձնազոհության մեծագույն արարքները ընդամենը կեղտոտ ցնցոտիներ են Աստծո առջև[9]: Այս ճշմարտությունները ոչնչացնում են մարդու հպարտությունը, բայց դրանք պետք է հասկանալի դառնան մարդու համար, որպեսզի մարեն Աստծո առջև սեփական անձն արդարացնելու ցանկացած հույս և խափանեն ցանկացած միտք այն մասին, որ հնարավոր է բարեհաճություն ստանալ Աստծո առջև սեփական ուժերով: Մարդը հավատքով գալիս է Աստծո առջև, միայն երբ գիտակցում է իր թշվառ վիճակը և հին հիմնի հեղինակի հետ աղաղակում է. «Ձեռքիս մեջ չեմ բերում ոչինչ, միայն հարում եմ Քո խաչին»[10]:

Երկրորդը՝ փրկությունը գործերից չէ, քանի որ դա չէր փառավորի Աստծուն. այդ դեպքում, Նա կդառնար պարտատեր, Ով պարտավոր կլիներ վարձատրել Իր ստեղծածի ենթադրյալ առաքինությունը: Հասկացությունը գործերով փրկվելու մասին ընդամենը հումանիզմ է՝ կրոնական զգեստով: Այն նկարագրում է առասպելական մարդու, որը բարձրանում է փոշուց իր կամքի ուժով՝ հաղթահարելու բոլոր խոչընդոտները և ստանալու մրցանակը: Մյուս կողմից, ճշմարիտ կրոնը հենց Աստծո հանդեպ հավատքն է: Այն ներկայացնում է մարդուն՝ ինչպիսին որ նա է՝ կորսված և կործանված մեղանչելու հետևանքով, այնպիսին, ով չունի վստահություն իր անձի հանդեպ,

6. Ամբակում 2.4, Հռոմեացիների 1.17
7. Գաղատացիների 2.16
8. Հռոմեացիների 3.10–12
9. Եսայի 64.6
10. Ավգուստուս Մ. Թոփլեդի, «Դարերի Ժայռը», 1775թ.:

և վստահում է փրկարար Աստծո հավատարիմ խոստումներին[11]: Հավատքով փրկվելու առասպելական պատմության հերոսը Աստված է, և միայն Նրան ենք շռայլում մեր գովեստները: Ինչպես գրված է՝ «Ոչ թե մեզ, Տեր, ոչ թե մեզ, այլ Քո անվանը փառք տուր», և «Նա, ով պարծենում է, թող Տիրոջով պարծենա»[12]:

Քանի որ մենք նշեցինք, որ փրկությունը միայն հավատքով է, անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ է հավատքը: Ի վերջո, դևերը հավատում են և նույնիսկ դողում են, և իրենց դողալով ավելի շատ աստվածավախություն են ցուցաբերում, քան որոշ մարդիկ, որոնք պնդում են, թե փրկարար հավատք ունեն[13]: Համաձայն Աստվածաշնչի՝ հավատք ունենալը նշանակում է լիովին համոզված լինել, որ Աստված կարող է կատարել այն, ինչ խոստացել է[14]: Ավետարանի վերաբերյալ հավատքը նշանակում է, որ ապաշխարող մեղավորը թողել է իր մարմնի հանդեպ ունեցած ունայն հույսը, գցել է իրեն միայն Քրիստոսի վրա և լիովին համոզված է, որ Քրիստոսի մահը քավել է իր մեղքերը և հաշտեցրել է իրեն Աստծո հետ: Ահա թե ինչ է հավատքը. այնուամենայնիվ, ինչպե՞ս իմանալ, որ մենք հենց այսպիսի հավատք ունենք: Որո՞նք են ճշմարիտ փրկարար հավատքի ապացույցները: Ինչպե՞ս է այն վավերացվում: Բարեբախտաբար, այս հարցում Աստվածաշունչը չի թողել մեզ սեփական հայեցողությանը: Հակոբոս առաքյալը պարզ և հասկանալի կերպով պատասխանում է մեր հարցերին. «Բայց ինչ-որ մեկը կասի. «Դու հավատք ունես, իսկ ես գործեր ունեմ»: Ցույց տուր ինձ քո հավատքը՝ առանց քո գործերի, իսկ ես ցույց կտամ քեզ իմ հավատքն իմ գործերից» (NKJV)[15]: Նույնիսկ ակնարկելը, որ այս խոսքում Հակոբոսն առաջադրում է գործերի միջոցով փրկություն ստանալու գաղափարը, կոպիտ մեկնաբանական սխալ է: Նրա փաստարկն այն չէ, որ փրկությունը գործերից է, այլ՝ որ գործերը ճշմարիտ փրկության արդյունքն են: Այլ կերպ ասած՝ մարդու կյանքի գործերը կամ պտուղը վկայում են, որ նա ճշմարտապես հավատքով փրկված է:

Միայն Հակոբոսը չէ, որ սովորեցնում է այս մասին: Հովհաննես Մկրտիչը հորդորում էր մարդկանց «ապաշխարության արժանի պտուղներ բերել»: Հիսուսը զգուշացնում էր. «Արդ, ապաշխարության արժանի պտուղ արեք... Իրենց պտուղներից իրենց ճանաչեք... Ոչ թե ամեն Ինձ «Տեր, Տեր» ասողը կմտնի Երկնքի արքայությունը, այլ նա, որ կատարում է Իմ Հոր կամքը, որ Երկնքում է»[16]: Պո-

11. Ջոզեֆ Հարթ, «Ես վեր կելնեմ և կգնամ Հիսուսի մոտ», 1759թ.:
12. Սաղմոս 115.1, Ա Կորնթացիների 1.31, Հռոմեացիների 3.27
13. Հակոբոս 2.19
14. Հռոմեացիների 4.21
15. Հակոբոս 2.18
16. Մատթեոս 3.8, 7.16,21

ղոսը պատվիրում էր Քրիստոսին դավանող մարդկանց «փորձել» և «քննել» իրենց անձերը՝ գտնելու համար ապացույցներ իրենց հավատքի մասին[17]: Ավելին՝ նա զգուշացրեց այնպիսի մարդկանց մասին, որոնք դավանում են, թե ճանաչում են Աստծուն, բայց ուրանում են Նրան իրենց գործերով[18]: Եվ վերջապես, Պետրոսը հորդորում էր իր ընթերցողներին ջանք անել՝ իրենց կոչումը և ընտրությունը հաստատ անելու համար՝ ստուգելով իրենց կյանքերը և տեսնելով, թե արդյո՞ք իրենք աճ ունեն քրիստոնեական առաքինության և քրիստոսանման բնավորության մեջ[19]: Այս և այլ հատվածներից մենք կարող ենք ճշտորեն եզրակացնել, որ փրկությունը տրվում է բոլոր հավատացողներին: Այնուամենայնիվ, մարդու կյանքն է ապացուցում, թե արդյո՞ք իր հավատքի դավանանքը վավերական է:

Մինչև կավարտենք այս համառոտ քննարկումը Քրիստոսի Ավետարանի և միայն հավատքով փրկվելու մասին, մենք պետք է անդրադառնանք մի շատ կարևոր հարցի: Աստվածաշունչը ոչ միայն սովորեցնում է, որ Ավետարանը ամեն հավատացողի *կողմից* է, այլև զգուշացնում է, որ Ավետարանը *դեմ* է ամեն մեկին, ով չի հավատում: Հիսուսն այսպես է բացատրում այս ճշմարտությունը. «Նրան հավատացողը չի դատապարտվի, իսկ չհավատացողն արդեն դատապարտված է, որովհետև չհավատաց Աստծո միածին Որդու անվանը... Որդուն հավատացողը հավիտենական կյանք ունի, իսկ Որդուն չհնազանդվողը կյանքը չի տեսնի, այլ Աստծո բարկությունը մնում է նրա վրա»[20]: Որքա՜ն կարևոր է տեսնել ամբողջ պատկերը: Ավետարանը նման է մետաղադրամի, որի մի կողմում ներում և կյանք է, իսկ մյուս կողմում՝ դատապարտություն և մահ: Այն չի քարոզում «փրկություն բոլորին», այլ՝ «ամեն հավատացողին»: Մնացած բոլորի համար Ավետարանը մահապատիժ է, մշտական հիշեցում, որ իրենք դատապարտված են Աստծո առջև, և որ Աստծո բարկությունը մնում է իրենց վրա: Սա է պատճառը, որ անհավատ աշխարհն ատում է Ավետարանը և անում է այն ամենը, ինչ իր ուժերի մեջ է, որ ճնշի կամ լռեցնի դրա ճշմարտությունները[21]: Սա է պատճառը, որ անհավատները խորշանք են զգում Ավետարանը քարոզող մարդու հանդեպ և ձգտում են լռեցնել նրան: Ավետարանը քարոզողները նման են խայթոցի՝ նրանց աչքերին, և փշերի՝ նրանց կողերին[22]: Նրանք «Իսրայելին խանգարողները» և «աշխարհը շփոթեց-

17. Բ Կորնթացիների 13.5
18. Տիտոս 1.16
19. Բ Պետրոս 1.5–10
20. Հովհաննես 3.18,36
21. Հռոմեացիների 1.18
22. Թվոց 33.55

նողներն» են[23]: Թեև նրանք կյանքի բուրմունք են հավատացյալների համար, սակայն մնացած բոլորի համար մահվան հոտ են[24]:

ԱՎԵՏԱՐԱՆ՝ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Հին կտակարանի ամբողջ պատմության ընթացքում աշխարհը ձևավորվում էր երկու որոշակի խմբերի կողմից՝ Աբրահամի ժառանգների և մնացած բոլորի: Առաջին խումբը իսրայելցիներն էին, որոնք ստացել էին որդեգրությունը, ուխտերը, օրենքը, տաճարը և խոստումները[25]: Երկրորդ խումբը բաղկացած էր հեթանոսներից, որոնք վարվում էին մտքի ունայնությամբ, սրտի կուրությամբ և օտար էին Աստծո կյանքի համար[26]: Այս երկուսը բևեռային հակադրություններ էին. նրանց միջև չկար ընդհանուր ոչ մի բան՝ նրանց մարդկային բնությունից բացի: Այնուամենայնիվ, մի զարհուրելի ուրբաթ օր ամեն ինչ փոխվեց, երբ այս երկու խմբերի Փրկիչը խոնարհեցրեց Իր գլուխը և տվեց Իր կյանքը: Նրա միջոցով հրեաներից և հեթանոսներից բաղկացած մի մեծ բազմություն մեկ մարդու պես միավորվելու էր և հաշտվելու էր Աստծո հետ[27]: Ինչպես գրված է՝ «Եվ եկավ ավետարանեց խաղաղություն ձեզ՝ հեռավորներիդ (հեթանոսներին), և խաղաղություն մոտավորներին (հրեաներին)»[28]:

Քրիստոսի մահվամբ փրկության դուռը բացվեց բոլոր ազգերի համար: Այն փաստը, որ Աստված որևէ կերպով չի սահմանափակում որևէ մեկի փրկությունը, մեծարում է շնորհքի այս զարմանալի դրսևորումը: Եթե Նա շրջվեր մարդկության իրական դրությունից և թույլ տար, որ ամեն մի ադամորդի դժոխք գնար, Նա արդար կլիներ, և Նրա անունն անաղարտ կմնար: Եթե Նա ուղարկեր Փրկչին միայն Իսրայելի համար և թողներ հեթանոսներին իրենց ինքնակամ աքսորի մեջ, Նրա գահի դեմ անկարելի կլիներ որևէ մեղադրանք ներկայացնել: Հրեշտակները ստեղծվել են ավելի վեհ նյութից, քան մարդիկ, բայց Աստված անցավ հրեշտակների կողքով և թողեց նրանց իրենց կործանման մեջ[29]: Նա կարող էր անել նույնը մե՛զ հետ: Նա պարտավոր չէր Փրկիչ ուղարկել աշխարհի համար:

Ինչ-որ մեկը կարող է վիճարկել՝ արժե՞ նման դժգույն և մտահոգիչ հարց քննարկել: Այնուամենայնիվ, միայն այսպիսի ճշմարտությունների լույսի ներքո է, որ մենք կգնահատենք այն շնորհքը, որն

23. Գ Թագավորաց 18.17, Գործք 17.6
24. Բ Կորնթացիների 2.15,16
25. Հռոմեացիների 9.4,5
26. Եփեսացիների 4.17–19
27. Եփեսացիների 2.13–16
28. Եփեսացիների 2.17
29. Եբրայեցիների 2.7

Ավետարանը տվել է մեզ: Մենք անկում ապրած և մեղավոր ցեղ ենք: Մենք կայացրել ենք մեր որոշումը, հռչակել ենք մեր անկախությունը և որոշել ենք մեր կործանման ուղին: Մեզանում չկար ոչ մի առաքինություն, որը կարող էր առանձնահատուկ դարձնել մեզ, և ո՛չ էլ որևէ արժանիք, ըստ որի Նա պետք է փրկեր մեզ: Նրա փառքը չէր մարի, և արարչագործությունը ոչ մի վնաս չէր կրի, եթե Նա պարզապես թույլ տար մեզ գնալ ուղիղ դժոխք՝ առանց թեկուզ մի փոքր միջամտելու: Այնուամենայնիվ, Նա բացեց փրկության դուռն ամեն ցեղի, լեզվի, ժողովրդի և ազգի համար ամենամեծ փրկագնով՝ Իր Որդու թանկ արյամբ[30]:

Թեև Ավետարանը բոլորի համար է, ուշագրավ է, որ այն առաջին հերթին հրեաների համար է, և ապա՝ հեթանոսների: Սա Աստծո գերիշխանության բազմաթիվ դրսևորումներից մեկն է, որոնք կարելի է տեսնել աստվածաշնչյան պատմության ամբողջ ընթացքում: Այս փաստը ցույց է տալիս, որ Աստված գործում է մարդկանց հետ ըստ Իր բնավորության և ընտրության, ոչ թե՝ ըստ նրանց արժանիքների[31]: Աստված ընտրեց Իսրայելի ժողովրդին և դասեց նրանց առաջին տեղում՝ բարձր աշխարհի բոլոր ազգերից, ոչ թե նրանցում եղած որևէ արժանիքի պատճառով, այլ՝ ըստ Իր հաճության և գերիշխան սիրո:

«Քո Տեր Աստվածը քեզ ընտրեց, որ դու Նրա համար սեփական ժողովուրդ լինես երկրի երեսի վրա եղող բոլոր ազգերի միջից: Ոչ թե ձեր բոլոր ազգերից շատ լինելու համար Տերը սիրեց և ընտրեց ձեզ, որովհետև դուք բոլոր ազգերից քիչ էիք, այլ՝ Տերը ձեզ սիրելու համար...»[32]:

Աստծո յուրահատուկ սերն Իսրայելի հանդեպ ուներ միայն մեկ բացատրություն, և այն Անձամբ Աստծո մեջ էր. Նա սիրում էր նրանց, որովհետև Նա սիրում էր նրանց[33]: Աստծո սերը չի բխում մարդկային արժանիքներից: Նա չգտավ հրեաների մեջ այնպիսի բան, ինչը չկար հեթանոսների մեջ. նրանցից մեկը մյուսից լավը չէր: Պողոս առաքյալն ապացուցում է սա՝ հարցնելով. «Եվ հիմա ի՞նչ. ավելի՞ ենք: Ամենևին՝ ոչ, որովհետև առաջ մեղադրեցինք հրեաներին և հեթանոսներին, թե ամենքը մեղքի տակ են»[34]: Աստված որոշեց հայտնել Իր փրկությունը Իսրայելին նույն պատճառով, որով Նա այժմ փրկության դուռ է բացել հեթանոսների համար, քանի որ դա հաճելի էր Նրան: Նա սիրեց մեզ, որովհետև Նա սիրեց մեզ. ոչ թե մարդկային արժանիքների կամ արժեքի պատճառով, այլ՝ չնայած այն բանին, որ մենք զուրկ էինք երկուսից էլ: Նա կարող էր թողնել

30. Հայտնություն 5.9, Ա Պետրոս 1.18,19
31. Հռոմեացիների 9.15,16
32. Երկրորդ Օրինաց 7.6–8
33. Երկրորդ Օրինաց 7.8
34. Հռոմեացիների 3.9

մեզ բախտի քմահաճույքին: Նա կարող էր մատնել մեզ մեր սրտի կրքերին՝ ամեն տեսակի պղծություն գործելու համար[35]: Նա կարող էր երկարաձգել Իր կողմից դրված արգելքը. «Հեթանոսների ճանապարհով չգնաք»[36]: Այնուամենայնիվ, համաձայն Իր բարեհաճության և Իր մեծ ողորմությունը ցույց տալու համար, Ավետարանի կանչը տարածվում է մինչև երկրի ծայրերը: Աստվածաշունչը բազմաթիվ վկայություններ է տալիս այս մեծ և փառավոր ճշմարտության մասին. «Ժողովուրդ, որ խավարի մեջ նստած էր, մեծ լույս տեսավ, և նրանց, որ մահվան երկրում և ստվերում նստած էին, լույս ծագեց նրանց»[37]: «Ահա Իմ Ծառան, Ում Ես ընտրեցի... Նա հեթանոսներին իրավունք կպատմի... և հեթանոսները հույս կդնեն Նրա անվանը»[38]: «Քեզ հեթանոսների լույս դրեցի, որ դու փրկություն լինես մինչև երկրի ծայրերը»[39]: «Եվ դարձյալ ասում է. «Ուրախացե՛ք, ո՛վ հեթանոսներ, Նրա ժողովրդի հետ»»[40]:

Ավետարանի համընդհանուր կանչը դրա ակնառու և հրաշալի կողմերից մեկն է: Աստված որոշել է ժողովուրդ կազմել հրեաներից և հեթանոսներից՝ հավատքի լայն դուռ բացելով նրանց համար, ովքեր կկամենան՝ հույնի և հրեայի, թլփատվածի և անթլփատի, բարբարոսի և սկյութացու, ստրուկի և ազատի համար[41]: Ավետարանի միջոցով հեթանոսների հույսը շատ ավելի է առաջացել, քան այն փյունիկ ասորի մոր հույսը, ով աղաչում էր Իսրայելի սեղանից ընկնող փշրանքներով կերակրվելու մասին[42]: Այսօր ամենավատ և ամենաչար ազգին պատկանող մեծագույն մեղավորը կարող է նստել Տիրոջ սեղանի շուրջ և ընթրել որդու պես:

Աստված ձրիաբար առաջարկում է Ավետարանը թե՛ հրեաներին, թե՛ հեթանոսներին: Այս կապակցությամբ, մենք պետք է անդրադառնանք ևս մեկ ճշմարտության, մինչև այս թեման ավարտելը. թե՛ հրեան, թե՛ հեթանոսը փրկվում են նույն Ավետարանով: Թեև մենք պետք է տեղյակ լինենք մշակութային տարբերություններին, մենք չպետք է թույլ տանք, որ մշակույթը ձևավորի մեր Ավետարանը կամ թելադրի, թե ինչպես փոխանցել այն: Աստվածաշունչը պետք է մշտապես լինի մեր ելակետը: Միայն Աստվածաշունչն է ցույց տալիս մեզ, թե ինչ է Ավետարանը, և թե ինչպես պետք է սովորեցնել այն: Հետևաբար, մեր ուղերձը պետք է ձևավորվի Սուրբ գրքի մեկնիչի և

35. Գործք 14.16, Հռոմեացիների 1.24,26, Եփեսացիների 4.17–19
36. Մատթեոս 10.5
37. Մատթեոս 4.16
38. Մատթեոս 12.18,21
39. Գործք 13.47
40. Հռոմեացիների 15.10
41. Գործք 15.14, 14.27, Կողոսացիների 3.11
42. Մարկոս 7.28

աստվածաբանի կողմից, ոչ թե՝ մարդաբանի, հասարակագետի կամ միսիոներության և եկեղեցու աճի փորձագետների:

Վերջին տարիներին մարդիկ ավելի են տարվում մշակութային զգայունությամբ և Ավետարանի ուղերձը որոշակի մշակութային պայմաններին համապատասխանեցնելու միտումով: Թվում է՝ ավետարանականների մեծ մասը համոզված է, որ հասարակ կամ սկզբնական Ավետարանը չի գործի, և որ ինչ-որ կերպով մարդը դարձել է չափազանց բարդ, կամ էլ՝ պարզ էակ, որ փրկվի և վերափոխվի նման ուղերձով: Այսօր մարդիկ ավելի շատ ձգտում են հասկանալ մշակույթները և հաճեցնել դրանց, քան հասկանալ և հռչակել միակ ուղերձը, որն ի զորու է փրկելու բոլոր մշակույթները:

Մենք պետք է կրկին զբաղեցնենք մեր դիրքը Սուրբ գրքի մեջ, մինչև որ մեզանում ևս մեկ անգամ ծնվի համոզմունքն այն մասին, որ միայն Ավետարանն է Աստծո զորությունը՝ փրկության համար: Թեև ճշմարիտ է, որ այն վրդովեցուցիչ և անհավանական ուղերձ է, նույնպես ճշմարիտ է, որ այն միակ ուղերձն է, որի միջոցով Աստված խոստացել է փրկել անկում ապրած մարդուն: Ավետարանը վերանայելը և վերաձևակերպելը՝ հուսալով, որ այն ավելի մեծ ազդեցություն կթողնի առանձին մշակույթների վրա, նշանակում է աղավաղել Ավետարանի ճշմարտությունը, պակասեցնել դրա զորությունը և թողնել այս աշխարհն առանց միակ ուղերձի, որն ի զորու է փրկել այն:

ՄԱՍ ԵՐԵՔ
Քրիստոնեական հավատքի ամրոցը

«Որովհետև ամենը մեղանչեցին և Աստծո փառքից պակասված են: Զրի են արդարանում Նրա շնորհքով՝ այն փրկության ձեռքով, որ Հիսուս Քրիստոսում է, Ում Աստված առաջուց սահմանեց քավություն լինելու համար՝ հավատալով Նրա արյամբ, որ Իր արդարությունը ցույց տա՝ այն առաջուց գործված մեղքերի թույլտվության համար՝ Աստծո ներելու ժամանակ: Որ Իր արդարությունը երևացնի այս ժամանակում, որ Ինքը լինի արդար և արդարացնող նրան, որ Հիսուսի հավատքից է: Հիմա ո՞ւր է պարծանքը: Խափանվեց: Ո՞ր օրենքով, գործերի՞ օրենքով: Ոչ, այլ՝ հավատքի օրենքով»:

— Հռոմեացիների 3.23-27

ԳԼՈՒԽ ՏԱՍԸ

Խոսել մեղքի մասին

«Որովհետև ամենը մեղանչեցին»:

— Հռոմեացիների 3.23

Ավետարանի սիրտը Քրիստոսի մահն է, իսկ Քրիստոսը մահացավ մեղքի պատճառով: Այնպես որ, Ավետարանը չի կարող քարոզվել՝ առանց ներկայացնելու Աստծո Խոսքի տեսանկյունը մեղքի մասին: Անհրաժեշտ է բացատրել մեղքի զարհուրելի բնույթը և բացահայտել մարդկանց՝ որպես մեղավորների: Թեև մեղքի թեման ինչոր առումով հնաոճ է համարվում նույնիսկ որոշ ավետարանական շրջանակներում, սակայն Աստվածաշունչն անկեղծորեն դիտարկելու և այն ժամանակակից մշակույթի հետ համեմատելու դեպքում պարզ է դառնում, որ մինչև օրս անհրաժեշտ է խոսել մեղքի մասին:

Մեղքի մասին պարզորեն խոսելու կարիքը շատ մեծ է, քանի որ մենք ապրում ենք մեղքով ծնված և մեծացած սերնդի մեջ[1]: Մենք մի ժողովուրդ ենք, որը ջրի պես խմում է անօրինությունը և չի հասկանում իր մեղավոր վիճակը նույնքան, որքան ձուկը չի գիտակցում, որ գտնվում է ջրի մեջ[2]: Այս պատճառով, մենք պետք է ջանանք կրկին բացահայտել Աստվածաշնչի տեսանկյունը մեղքի և մարդու մեղավորության մասին: Մեր պատկերացումն Աստծո և Ավետարանի մասին կախված է դրանից:

Որպես Հիսուս Քրիստոսի Ավետարանի տնտեսներ՝ մենք արջի ծառայություն ենք մատուցում մարդուն, երբ անկարևոր ենք համարում մեղքը, շրջանցում կամ լիովին անտեսում ենք այն: Մարդկությունն ունի միայն մեկ խնդիր. այն գտնվում է Աստծո զայրույթի ներքո՝ իր մեղքի պատճառով[3]: Ժխտելով այս ճշմարտությունը՝ մենք ժխտում ենք քրիստոնեության հիմնարար վարդապետություններից մեկը: Մարդկանց իրենց մեղքի մասին պատմելը չի նշանակում անսիրտ լինել, սակայն նրանց այդ մասին չպատմելը անբարոյության ծանրա-

1. Սաղմոս 51.5, 58.3
2. Հոբ 15.16
3. Հովհաննես 3.36

գույն տեսակներից է: Աստված հայտնում է, որ կպահանջի նրանց արյունը մեր ձեռքերից, եթե մենք չզգուշացնենք նրանց իրենց մեղքի և գալիք դատաստանի մասին[4]: Ավետարանը քարոզելը՝ առանց շեշտադրելու մեղքը, նման է մարդու վերքերը մակերեսորեն բուժելուն՝ ասելով «Խաղաղություն, խաղաղություն», երբ խաղաղություն չկա[5]:

Հռոմեացիներին ուղղված նամակը համակարգված աստվածաբանության լավագույն նմուշն է Աստվածաշնչում: Այս նամակում Պողոս առաքյալը ներկայացրեց իր աստվածաբանությունը Հռոմում գտնվող եկեղեցուն: Նա փորձում էր պատրաստել նրանց իր ապագա այցելության համար, և հույս ուներ, որ աջակցություն կստանար նրանցից Իսպանիայում միսիոներական գործունեություն ծավալելու համար[6]: Անչափ կարևոր է նշել, որ այս նամակի առաջին երեք գլուխները՝ բացառությամբ կարճ ներածության, նվիրված են համարտիոլոգիային կամ մեղքի մասին վարդապետությանը[7]: Երեք գլուխ շարունակ առաքյալը գործի է դնում իր միտքն ամբողջությամբ՝ Սուրբ Հոգու ոգեշնչմամբ, որպեսզի հասնի մի կարևոր նպատակի՝ ապացուցի մարդու մեղավոր լինելը և դատապարտի ամբողջ աշխարհը:

Քրիստոնյաները հաճախ են պնդում, որ Աստված չի տվել մեզ դատապարտության և մահվան ծառայություն, այլ՝ արդարության, հաշտության և կյանքի[8]: Իհարկե, սա ճիշտ է, սակայն այս պնդումը չի նշանակում, որ մենք չպետք է շեշտադրենք մեղքը և չպետք է օգտագործենք Սուրբ գիրքը՝ ցույց տալու համար, որ Սուրբ Հոգին հանդիմանում է մարդկանց իրենց մեղքի պատճառով: Ճշմարիտ է, որ չկա դատապարտություն «Հիսուս Քրիստոսում», բայց նույնպես ճշմարիտ է, որ Նրանից դուրս չկա ոչինչ՝ դատապարտությունից բացի[9]:

Աստվածաշունչը հայտնում է մեզ, որ Օրենքը չէր տրվել մեզ՝ որպես փրկության միջոց, այլ՝ որպես գործիք, որը բացահայտում է թե՛ մեղքի գարշելիությունը (այսինքն՝ «որ մեղքն ավելի ևս մեղավոր լինի պատվիրանի ձեռքով»), թե՛ մարդու մեղավոր լինելը (այսինքն՝ «որ... ամբողջ աշխարհն Աստծո առջև դատապարտ լինի»)[10]: Թեև այսօր մենք հազվադեպ ենք օգտագործում օրենքն այս նպատակի համար, Նոր կտակարանում չկա ոչ մի վկայություն այն մասին, որ օրենքի ծառայությունն այլևս չպետք է լինի Ավետարանի հռչակման էական մասը: Հին ժամանակվա քարոզիչներն անվանում էին դա «պինդ հողը հերկելը, քարերը

4. Եզեկիել 33.8
5. Երեմիա 6.14
6. Հռոմեացիների 15.23,24
7. «Համարտիոլոգիա» տերմինը կազմված է հունարեն *«համարտի՛ա»* (մեղք) և *«լո՛գոս»* (բառ կամ տրամասություն) բառերից: «Համարտիոլոգիա»-ն բառացիորեն նշանակում է «տրամասություն մեղքի մասին»:
8. Այս պնդումը հիմնված է Բ Կորնթացիների 3.7–9 և Բ Կորնթացիների 5.17,18 հատվածների վրա:
9. Հռոմեացիների 8.1, 5.18
10. Հռոմեացիների 7.13, 3.19

շրջելը և վարագույրը բացելը»[11]: Նրանք հասկանում էին, որ անհրաժեշտ է կանգնեցնել մարդուն Աստծո օրենքի հայելու դեմ, որպեսզի նա տեսնի իր թշվառ վիճակը և խնդրի՛ Աստծո ողորմությունը: Իհարկե, սա չպետք է արվի հպարտությամբ կամ ամբարտավանությամբ, և մենք չպետք է կոպտորեն վերաբերվենք մարդկանց: Աստված չի կանչել մեզ կռվարար լինելու կամ մարդկանց վիրավորելու համար, թեև այն ճշմարտությունը, որը մենք կքարոզենք ամենայն խոնարհությամբ, կարող է մեծ վիրավորանք հասցնել շատերին:

Պողոս առաքյալի ծառայության նպատակը դատապարտությունը չէր, սակայն նա, շատ իրական իմաստով, աշխատանք էր տանում դատապարտության ներքո գտնվող մարդկանց համար՝ հուսալով, որ նրանք կգիտակցեին, որ բարոյապես կործանված էին, և կդառնային Քրիստոսին՝ ապաշխարությամբ և հավատքով: Հռոմեացիների թղթում Պողոսն առաջին հերթին ապացուցում է, որ ամբողջ աշխարհը բարոյապես ապականված է, թշնամացած է Աստծո հանդեպ և հրաժարվում է հնազանդվել այն ճշմարտությանը, որը հայտնի է իրեն[12]: Դրանից հետո նա անդրադառնում է հրեաներին՝ ապացուցելով, որ թեև նրանք եզակիորեն օրհնված են եղել՝ հատուկ հայտնության պարգև ստանալով, նրանք նույնքան մեղավոր են Աստծո առջև, որքան և հեթանոսները[13]: Ի վերջո, նա եզրափակում է իր փաստարկը՝ ներկայացնելով Աստծո Խոսքում գտնվող ամենախիստ և ամենավիրավորական մեղադրանքները մարդկանց դեմ[14]: Ո՞րն է նրա նպատակը: Նա հայտնում է այն իր ամփոփիչ խոսքում. «Որ ամեն բերան խփվի, և ամբողջ աշխարհն Աստծո առջև դատապարտ լինի»[15]:

Նման Երեմիային, ով իրենից առաջ էր, Պողոսը կանչված էր ոչ միայն «շինելու և տնկելու», այլև «խլելու և պոկելու, փչացնելու և կործանելու»[16]: Նա, իր իսկ խոսքերով, քանդում էր «խորհուրդներ... և ամեն բարձրություն, որ գոռոզանում է Աստծո գիտության դեմ»[17]: Սուրբ Հոգու ծառայության ներքո և Սուրբ գրքերի միջոցով Պողոսը ջանաց վերջ դնել բարոյականություն քարոզող հեթանոսի, կրոնական հրեայի, ինչպես նաև այս երկու բևեռների միջև գտնվող բոլոր մարդկանց հույսերին: Նա գրեց և քարոզեց, որ փակեր մարդկանց բերանները, որպեսզի նրանք այլևս չպարծենային՝ արդարացնելով իրենց, և ո՛չ էլ արդարացնեին իրենց մեղքը: Նա հեռացրեց ամեն մի հույս նրանցից, որպեսզի նրանք դառնային Քրիստոսին:

Մի՞թե Պողոս առաքյալը ընդամենը բարկացած և դառնացած մարդ էր, ով, կացինը ձեռքին, հարձակվել էր մարդկության վրա: Ո՛չ: Նա սի-

11. Երեմիա 4.3, Ովսե 10.12
12. Հռոմեացիների 1.18–32
13. Հռոմեացիների 2.1–29
14. Հռոմեացիների 3.1–18
15. Հռոմեացիների 3.19
16. Երեմիա 1.10
17. Բ Կորնթացիների 10.4բ–5ա

րում էր մարդկանց այն աստիճան, որ նվիրեց կյանքը հեթանոսներին, և նույնիսկ կամենում էր անիծվել՝ բաժանվել Քրիստոսից՝ իր ազգակից հրեաների համար[18]: Պողոսը քարոզում էր մեղքի դեմ նույն պատճառով, որով բժիշկն աշխատում է, որ ախտորոշի իր այցելուի հիվանդությունը և կամենում է հայտնել նրան նույնիսկ վատագույն լուրը: Դա սիրո աշխատանք է լսողի փրկության համար: Ցանկացած այլ արձագանք բժշկի կամ քարոզչի կողմից զուրկ է սիրուց և բարոյականությունից:

Միգուցե այս պահին արժե հարցնել, թե արդյո՞ք մենք քարոզում ենք Ավետարանը այս նպատակով: Արդյո՞ք մենք այնքան ենք սիրում մեր ունկնդիրներին, որ սովորեցնենք ճշմարտությունը, բացահայտենք մեղքը և ընդդիմանանք նրանց: Արդյո՞ք մենք ունենք աստվածաշնչյան գթասրտություն, որը ճշմարտությունն է ասում մարդկանց՝ այն հույսով, որ սրտերը կկոտրվեն իրենց մեղքի ծանրության ներքո, և նրանք կնայեն միայն Քրիստոսին: Մենք պատրա՞ստ ենք ասել ճշմարտությունը՝ սխալ հասկացվելու և զրպարտվելու գնով, որպեսզի մարդիկ կարողանան փրկվել: Թվում է՝ նույնիսկ ավետարանական քրիստոնյաների մեջ է արմատանում համոզմունքն այն մասին, որ Արևմուտքում ապրող ժամանակակից մարդն արդեն իսկ կրում է այնքա՛ն հոգեբանական կոտրվածքներ և մեղքի զգացումի բեռներ, որ չարժե ավելորդ ճնշում գործադրել նրա վրա՝ նրան չկոտրելու համար: Նման համոզմունք ունեցողը չի հասկանում, որ կա ահռելի տարբերություն հոգեբանական կոտրվածքների և դեպի կյանքն առաջնորդող ապաշխարության միջև: Ժամանակակից մարդը թուլակամ է դարձել, քանի որ կլանված է ինքն իրենով և ապրում է Աստծո դեմ ապստամբելով: Նա բեռնավորված է մեղքի զգացումով, քանի որ *իսկապես* մեղավոր է: Անհրաժեշտ է, որ Աստծո Խոսքը բացահայտի նրա մեղքը և ապաշխարության բերի նրան: Միայն այդ դեպքում կառաջանա սուրբգրային կոտրվածություն, որը կառաջնորդի նրան դեպի կյանքը:

Աստծո և Իսրայելի հարաբերությունները այս ճշմարտության փայլուն օրինակն են: Եսայի մարգարեի միջոցով Աստված նկարագրում է Իսրայելի վիճակը. «Ձեր էլ ո՞ր տեղին կարելի է զարկել, որ ապստամբությունն ավելացնում եք: Ամբողջ գլուխը հիվանդ է, և ամբողջ սիրտը նվաղել է: Ոտքի թաթից մինչև գլուխը ողջ տեղ չկա նրա վրա. հարվածներ և վերքեր և շարավալի խոցեր, չեն մաքրվում և չեն կապվում և յուղով չեն կակղացվում»[19]: Իսրայելի ժողովուրդն այնքա՛ն կոտրված և տկար էր, որ հազիվ կարելի է պատկերացնել, սակայն Աստված աշխատում էր նրանց հետ նրանց իսկ օգտի համար՝ մատնացույց անելով նրանց ապստամբությունը և ապաշխարության կանչելով: Նա օգտագործեց շատ խիստ խոսքեր նրանց դեմ, բայց դրանցից ամեն մեկն անհրաժեշտ էր՝ նրանց մեղքը բացահայտելու և մեղքից հեռաց-

18. Փիլիպեցիների 2.17, Հռոմեացիների 9.3
19. Եսայի 1.5,6

նելու համար: «Վա՜յ մեղավոր ազգին. անօրինությամբ ծանրացած ժողովուրդ, չարագործների սերունդ, ապականիչ զավակներ: Թող տվին Տիրոջը, անարգեցին Իսրայելի Սուրբին, ետ քաշվեցին»[20]: Եվ նույնպես՝ «Հիմա եկեք ու վիճաբանենք,- ասում է Տերը,- եթե ձեր մեղքերը կրկնակի կարմրի պես լինեն, ձյան պես պիտի սպիտակեն, եթե որդան կարմրի պես լինեն, ասրի պես սպիտակ պիտի դառնան: Եթե հոժարեք և լսեք, երկրի բարիքը կուտեք»[21]:

Ախտը բացահայտելը և դրա լրջությունը բացատրելը մշտապես բուժումը գտնելու առաջին քայլերն են: Այն մարդը, ով չգիտի, որ քաղցկեղ ունի, չի դիմի բժշկության օգնությանը, և մարդը չի փախչի իր այրվող տնից, եթե չիմանա հրդեհի մասին: Նույն կերպով, մարդը չի ձգտի փրկություն ստանալ, քանի դեռ չգիտի, որ ինքը լիովին կորած է, և չի փախչի Քրիստոսի մոտ, քանի դեռ չի գիտակցում, որ չկա այլ ճանապարհ փրկության համար: Մարդկանց անհրաժեշտ է պատմել իրենց մեղքի մասին, մինչև որ կգիտակցեն այն: Նրանք պետք է իմանան դրա վտանգի մասին, նախքան կուզեն փախչել դրանից: Նույնպես, նրանք պետք է համոզվեն, որ փրկությունը միայն Քրիստոսում է, մինչև որ կթողնեն սեփական անձն արդարացնելու հույսերը և կվազեն Նրա մոտ:

Արդեն նշված ճշմարտությունների լույսի ներքո, այն, որ շատերը ավետարանական շրջանակներում նույնիսկ չեն համարում, որ պետք է խոսել մեղքի մասին, զավեշտալի է: Նույնիսկ թվում է, թե նման քարոզումը միտումնավոր կերպով խոչընդոտվում է՝ որպես բացասական և կործանարար, թեև դա Սուրբ Հոգու գլխավոր ծառայություններից մեկն է. «Եվ Նա, երբ որ գա, աշխարհը կհանդիմանի մեղքի համար, և արդարության համար, և դատաստանի համար: Մեղքի համար, որովհետև Ինձ չեն հավատում: Արդարության համար, որովհետև Ես Իմ Հոր մոտ եմ գնում, և Ինձ այլևս չեք տեսնի: Եվ դատաստանի համար, որովհետև այս աշխարհի իշխանը դատապարտված է»[22]:

Տեր Հիսուս Քրիստոսի խոսքերով, Աստված ուղարկեց Սուրբ Հոգուն այս աշխարհ՝ հանդիմանելու մարդկանց մեղքի, արդարության և դատաստանի մեջ: Նրա գլխավոր ծառայություններից մեկը մեղքի վրա լույս սփռելը և մեղավորին ապաշխարության առաջնորդելն է: Մի՞թե մենք՝ Ավետարանի ծառայողներս, չպետք է ունենանք նույն նպատակը: Մի՞թե մեր քարոզելը չպետք է արտացոլի այն աշխատանքը, որը Նա կատարում է: Թեև Սուրբ Հոգին կախված չէ մարդուց, Աստված վճռել է, որ մարդիկ հանդիմանվեն մեղքի մեջ, ապաշխարեն և ստանան փրկարար հավատքը քարոզի միջոցով[23]: Սակայն ինչպե՞ս Հոգին կարող է օգտագործել մեր քարոզը, եթե

20. Եսայի 1.4
21. Եսայի 1.18,19
22. Հովհաննես 16.8–11
23. Ա Կորնթացիների 1.21

մենք չենք կամենում բացահայտել մեղքը և ապաշխարության կանչել մարդկանց: Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ Հոգու սուրը Աստծո Խոսքն է, բայց եթե Աստծո ծառայողները դժկամորեն օգտագործեն այդ սուրը՝ մարդկանց մեղքի մեջ համոզելու համար, մի՞թե դա չի հանգցնի թե՛ ծառայությունը, թե՛ Սուրբ Հոգուն[24]: Մենք չպետք է վախենանք հետևել Հոգու օրինակին, երբ շփվում ենք մեղավորների հետ: Եթե Նա անհրաժեշտ է համարում հանդիմանել մարդկանց մեղքի մեջ, միացեք Նրան այդ աշխատանքի մեջ: Այն քարոզիչները և եկեղեցիները, որոնք «ավելի լավ» ճանապարհ են գտել, չունեն ոչ մի հիմք՝ հավատալու համար, որ Աստծո Հոգին գործում է իրենց միջև՝ մարդկանց դեպի Քրիստոսն առաջնորդելու համար:

Մինչև այս գլուխն ավարտելը, կարևոր է նշել ևս մեկ բան. մեղքի մասին խոսելու մեծագույն պատճառն այն է, որ դրանով Ավետարանը մեծարվում է: Դուք չեք կարող տեսնել աստղերի գեղեցկությունը կեսօրյա երկնքում, քանի որ արևի լույսը խավարեցնում է դրանք: Այնուամենայնիվ, երբ արևը մայր է մտնում, և երկինքը ձյութի պես սև է դառնում, դուք տեսնում եք աստղերը՝ իրենց ամբողջ շքեղությամբ: Նույնը վերաբերում է Հիսուս Քրիստոսի Ավետարանին: Մենք միայն կարող ենք տեսնել դրա ճշմարիտ գեղեցկությունը մեր մեղքի ետին պլանի վրա: Որքան ավելի դժգույն տեսք է ստանում մարդը, այնքան ավելի ուժգնորեն է փայլում Ավետարանը:

Մարդիկ նույնիսկ չեն նկատի Քրիստոսի գեղեցկությունը և չեն մտածի Նրա արժեքի մասին, մինչև որ չտեսնեն իրենց մեղքի զարհուրելի բնույթը և չդիտարկեն իրենց որպես բացարձակապես թշվառ և անարժան արարածների: Բոլոր դարերում ապրող բազմաթիվ քրիստոնյաներ վկայում են, որ նույնիսկ մեկ անգամ չէին մտածել Քրիստոսի արժեքի մասին մինչև այն օրը, երբ Սուրբ Հոգին եկավ և հանդիմանեց իրենց մեղքի, արդարության և դատաստանի մեջ: Այն բանից հետո, երբ սեփական մեղքի աննահանջ խավարը կլանեց նրանց, Քրիստոսը հայտնվեց առավոտյան աստղի պես և դարձավ նրանց գանձը[25]:

Զարմանալի է, որ երբ Հիսուս Քրիստոսին ճշմարտապես հավատացող մարդիկ քարոզ են լսում մարդու թշվառության մասին, նրանք դուրս են գալիս եկեղեցուց՝ լցված ցնծությամբ և Քրիստոսին հետևելու նոր նախանձավորությամբ: Պատճառն այն չէ, որ նրանք թեթևորեն են վերաբերվում մեղքին, կամ բավականություն են գտնում իրենց նախկին մեղսալի դրության մեջ: Փոխարենը՝ այդ ճշմարտությունը համակում է նրանց անասելի ուրախությամբ, քանի որ ավելի թավ խավարի մեջ նրանք ավելի պարզորեն տեսան Քրիստոսին: Մենք զրկում ենք մարդկանց Աստծո մեծությունը տեսնելուց, երբ ցույց չենք տալիս իրենց փոքրությունը:

24. Եփեսացիների 6.17
25. Բ Պետրոս 1.19, Հայտնություն 22.16

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿ

Խոսել Աստծո մասին

«Որովհետև ամենը մեղանչեցին»:

— Հռոմեացիների 3.23

«Միմիայն Քեզ դեմ մեղանչեցի»:

— Սաղմոս 51.4

Վերոնշյալ խոսքերում մարդու դեմ կայացրած աստվածաշնչյան դատավճիռը գրեթե անիմաստ է թվում մի մշակույթում, որը ծիծաղում է մեղքի վրա և այնպես է հարում մեղքին, ասես այն առաքինություն լինի: Մեր մշակույթը չարը բարի է անվանում, և բարին՝ չար. խավարը մեզ համար լույսի փոխարեն է, իսկ լույսը՝ խավարի[1]: Այս դրությունը փոխելու համար մենք պետք է այնպես քարոզենք, որ մարդիկ տեսնեն իրենց մեղքի ծանրությունը: Մենք պետք է սովորեցնենք, թե ինչ է Աստծո Խոսքն ասում ոչ միայն մարդու մասին, այլև՝ Աստծո: Որպեսզի մարդիկ հասկանան իրենց գործած մեղքի զարհուրելի բնույթը, նրանք պետք է հասկանան Աստվածաշնչի վեհ տեսանկյունը Նրա մասին, Ում դեմ իրենք մեղանչում են: Եթե ամենահամարձակ և խստացած մեղավորը թեկուզ աննշան չափով հասկանար, թե ով է Աստված, նա անմիջապես կխորտակվեր իր մեղքի ծանրության ներքո:

Այն մեղքը, որն այսօր մարդիկ հիշատակում են, ուղղված է մարդու դեմ, հասարակության դեմ, նույնիսկ՝ բնության դեմ: Այնուամենայնիվ, մեր մշակույթը հազվադեպ է խոսում այն մասին, որ մենք մեղանչում ենք Աստծո դեմ: Ի հակադրություն այս մոտեցմանը՝ Աստվածաշունչը խոսում է այն մասին, որ բոլոր տեսակի մեղքերը, նախևառաջ, գործվում են Աստծո դեմ: Դավիթ թագավորը չարդարացրեց իր ժողովրդի վստահությունը, շնություն գործեց և նույնիսկ անմեղ մարդու սպանություն կազմակերպեց, բայց երբ Նաթան մարգարեի հանդիմանությունն ի վերջո ապաշխարության բերեց

1. Եսայի 5.20

նրան, նա աղաղակեց՝ խոստովանելով Աստծուն. «Միմիայն Քեզ դեմ մեղանչեցի և չարը Քո աչքի առջև գործեցի»[2]:

Այս հատվածից մենք իմանում ենք երկու կարևոր ճշմարտություն: Առաջինը՝ թեև մեղքը գործվում է այլ մարդկանց և նույնիսկ արարչագործության դեմ, ցանկացած մեղք, նախևառաջ, գործվում է Աստծո դեմ: Երկրորդը՝ մեղքը զարհուրելի է ոչ միայն այլ մարդկանց կամ ամբողջ արարչագործության վրա ունեցած կործանարար ազդեցության պատճառով, այլև հատկապես այն պատճառով, որ այն հանցանք է անսահմանորեն փառավոր Աստծո դեմ, Ով արժանի է կատարյալ սիրո, նվիրման և հնազանդության Իր արարչագործության կողմից: Այնպես որ, որքան ավելի է մարդը հասկանում Աստծո փառքը և գերակայությունը, որի դեմ ինքը մեղանչում է, այնքան ավելի կգիտակցի իր մեղքի սոսկալի բնությունը: Ճշմարիտ գիտելիքն Աստծո մասին կդրդի մարդկանց դիտարկել Աստծո օրենքի նույնիսկ աննշան խախտումը որպես անասելի հանցանք, իսկ Աստծո մասին անիրազեկության պատճառով նրանք կդիտարկեն մեղքը որպես անկարևոր խնդիր՝ աննշան հետևանքներով:

Այն, որ ճշմարիտ գիտելիքն Աստծո մասին անհրաժեշտ է իրականությունը ճիշտ կերպով ընկալելու համար, քրիստոնեության հիմնադրույթներից մեկն է: Ունենալով սխալ պատկերացում Աստծո մասին՝ մարդն, ի վերջո, սխալմամբ կընկալի ամեն ինչ: Այս պնդումը մասնավորապես ճշմարիտ է մեղքի վերաբերյալ: Սաղմոս 50-ում Աստված անարգեց Իսրայելի ժողովրդին, քանի որ նրանք մոռացել և մերժել էին մեծագույն ճշմարտությունները Աստծո բնավորության մասին: Նրանք սկսել էին հավատալ, որ Նա ճիշտ իրենց նման էր՝ անտարբեր և անզգա անարդարության հանդեպ[3]: Աստծո մասին սխալ պատկերացում ունենալու պատճառով նրանք սխալ պատկերացում էին կազմել մեղքի մասին: Նրանք անտեսել էին բոլոր բարոյական սահմանափակումները և աղավաղել էին իրենց ընթացքը՝ առանց վախի կամ ամոթի: Նրանց ապստամբությունն ավարտվեց կործանմամբ. նրանք բնաջինջ եղան՝ գիտելիք չունենալու պատճառով[4]: Ահա թե ինչու Երեմիա մարգարեն հայտարարեց, որ ճշմարիտ գիտելիքն Աստծո մասին ավելի մեծ արժեք ունի, քան մնացած բոլոր արժանիքները, առաքինությունները և օրհնությունները. «Այսպես է ասում Տերը. «Իմաստունը իր իմաստությամբ չպարծենա, և զորավորն իր զորությամբ չպարծենա, հարուստը իր հարստությամբ չպարծենա, այլ սրանով պարծենա, ով որ պարծենում է, թե հասկանում և ճանաչում է Ինձ...»,- ասում է Տերը»[5]:

2. Սաղմոս 51.4
3. Սաղմոս 50.21
4. Ովսե 4.6
5. Երեմիա 9.23,24

Չափազանցություն չի լինի ասելը, որ անիրազեկությունն Աստծո հատկանիշների մասին հատուկ է թե՛ մեր բնակավայրերի փողոցներում քայլող, և թե՛ մեր եկեղեցիների նստարաններին նստած մարդկանց: Հնարավոր է, որ մարդիկ որոշ հարցերում ունեն Աստվածաշնչին մոտ կարծիքներ Աստծո մասին, բայց նրանց ճնշող մեծամասնությունը լիովին խաբված է այն բանում, թե ինչ է մեղքը, և թե ինչպես է Աստված վերաբերվում մեղքին: Միգուցե մարդիկ հրաշալի խոսքեր ասեն Աստծո սիրո, գթասրտության և ողորմության մասին, բայց նրանք կասկածամտորեն լռում են, երբ խոսքը Նրա սրբության, արդարության և գերիշխանության մասին է:

Այս պատճառով, մեծ մասը շատ ցածր կարծիք ունի Աստծո մասին և կուրորեն չի հասկանում իր մեղքի ճշմարիտ բնույթը:

Քարոզելով Ավետարանը՝ մենք պետք է բացահայտենք մեղքի մեղավորությունը՝ տարածելով ճշմարիտ գիտելիքն Աստծո մասին: Մենք պետք է ազդարարենք Սուրբ գրքի ամբողջական խորհուրդը Նրա բոլոր հատկանիշների մասին՝ հատկապես նշելով այն հատկանիշները, որոնք այնքան էլ հայտնի և հաճելի չեն մարմնավոր մարդուն՝ Նրա գերակայությունը, գերիշխանությունը, սրբությունը, արդարությունը և սերը:

ԱՍՏԾՈ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Մենք պետք է պատկերացում ունենանք այն աղավաղված ժամանակաշրջանի մասին, որում ապրում ենք, որում մարդը դարձրել է իրեն ամեն ինչի չափանիշը: Աշխարհիկ հումանիզմը ներքև է նայում և տեսնում է, որ ինքը զբաղեցնում է բարձրագույն դիրքն էվոլյուցիայի սանդղակի վրա: Նա վեր է նայում և չի գտնում ոչինչ: Այսպիսով, նա արդեն իսկ թագավոր է, ով որոշում է իր ճակատագիրը, օրենքներ է կազմում և հոգում է այս մոլորակի մասին: Քանի որ գոյություն չունի իրենից ավելի մեծը, որի հետ նա կարող է համեմատել իրեն, նա ապրում է պատրանքի մեջ՝ առանց հասկանալու, որ լավագույն դեպքում նման է դատարկության, որի շունչն իր ռունգերի մեջ է, խոտի, որը չկա, երբ քամին անցնում է դրա վրայով, և գոլորշու, որը մի ակնթարթ հայտնվում է և աներևութանում[6]:

Կրոնական հումանիստը չունի մեծ առավելություններ իր աշխարհիկ կրկնորդի հանդեպ, թեև նա ավետարանական տարազ է կրում[7]: Նրա սեփական անձի կարևորության բարձր զգացումը՝ մերօրյա ինքնագիտակցման և ինքնաարտահայտման հոգեբանության ազդե-

6. Եսայի 2.22, Սաղմոս 103.15,16, Հակոբոս 4.14

7. Տարազն այստեղ նշանակում է հագուստ կամ զգեստ, և փոխաբերական իմաստով նկարագրում է արտաքին տեսքը, որը մատնում է ներքին իրողությունը:

ցության հետ մեկտեղ, կործանարար է եղել: Ավելին՝ քարոզիչները, որոնք կանչված են բացահայտելու այս սխալմունքը եկեղեցիներում, այժմ զբաղված են այն տարածելով: Թեև Աստծո մասին ուսմունքների մեծ մասն ուղղադավան է, Նրա փառքը ծառայեցվում է մարդու անմիջական կարիքներին, և ստացվում է, որ Աստված գոյություն ունի մարդու համար, ոչ թե՝ հակառակը: Ավելին՝ համարվում է, որ Աստծո նպատակները և հավիտենական հաճությունն այն աստիճան միահյուսված են մարդու բարիքի հետ, որ դրանք չեն կարող իրականանալ կամ ամբողջանալ առանց մեզ: Թեև այս պնդումները չափազանցություն են թվում, եթե ազնվորեն դիտարկենք այն, թե ինչ են ավետարանական քրիստոնյաները հաղորդում աշխարհին, մենք կտեսնենք, որ դրանք բնավ չափազանցություն չեն:

Հումանիստական միտումը ժամանակակից քրիստոնեության մեջ կործանարար ազդեցություն ունի այն Ավետարանի վրա, որը մենք քարոզում ենք այս աշխարհին: Մեր ցածր կարծիքն Աստծո մասին, որը չի կարող չարտահայտվել մեր քարոզի մեջ, թույլ է տվել մեր ունկնդիրներին պահպանել իրենց հերձվածողական պատկերացումն իրենց անձի մասին՝ մեկուսացնելով նրանց երբևէ Աստծո հանդեպ երկյուղ ունենալուց, Նրա Անձին փափագելուց կամ իրենց անձի ճշմարիտ բարիքը և բավականությունը Նրա փառքի մեծարման մեջ գտնելուց: Մենք այնքա՛ն հեռու ենք գնացել մեր մտածելակերպի և դավանության մեջ, որ ամենաուղղադավան և պատվելի հարցուպատասխանի առաջին և մեծագույն հարցի պատասխանը անհայտ է ավետարանական քրիստոնյաների ճնշող մեծամասնությանը. «Ո՞րն է մարդու գլխավոր և մեծագույն նպատակը. փառավորել Աստծուն և լիարժեք կերպով վայելել Նրան հավիտյան»[8]:

Ի՞նչ կարելի է անել այս աղմուկի և շփոթմունքի պայմաններում: Այն ընթացքը, որը մենք պետք է ընտրենք, և՛ պարզ է, և՛ բարդ: Մենք պետք է հանձն առնենք քարոզել Աստծո հատկանիշները այնպես, ինչպես դրանց մասին գրված է Աստվածաշնչում՝ չմշակված, չփոփոխված, չխմբագրված և չզտված մեր դարաշրջանի հումանիստական փիլիսոփայությամբ: Աստված կարիք չունի, որ մենք պաշտպանենք Իրեն: Եթե մենք հռչակենք Նրան այնպես, ինչպես Նա հայտնում է Իրեն Աստվածաշնչում, Նա Ինքը կպաշտպանի Իրեն[9]: Մենք պետք է կանգնենք սեփական անձերով կլանված մարդկանց միջև, մարտահրավեր նետենք նրանց համոզմունքներին և ուղղենք նրանց հայացքը դեպի վեր՝ ազդարարելով ճշմարտությունը: Մենք պետք է ասենք նրանց, որ Տերը միակ Աստվածն է՝ հավիտենական, անմահ

8. Վեստմինստերի Մեծ հարցուպատասխանք, Հարց 1:

9. Հեղինակը վերցրել է այս միտքը Սփերջենից, ով նման մի պնդում է անում Աստվածաշնչի վերաբերյալ. «Աստվածաշունչը նման է առյուծի: Ո՞վ է երբևէ լսել առյուծին պաշտպանելու մասին: Պարզապես բաց թողեք նրան, նա կպաշտպանի ինքն իրեն»:

և անտեսանելի, «բարձրյալ՝ ամբողջ երկրի վրա»[10]: Մենք պետք է զգուշացնենք մարդկանց, որ ազգերը նման են դույլից կախված ջրի կաթիլի Նրա առջև, և որ Նա նայում է նրանց կշեռքի վրա գտնվող փոշեհատիկի պես[11]: Մենք պետք է բերենք նրանց այն եզրահանգման, որ Նրան է պատկանում մեծությունը, զորությունը, փառքը, վեհությունը և այն ամենը, ինչը գտնվում է վերևում՝ երկնքում, և ներքևում՝ երկրի վրա[12]: Քանի որ ամեն ինչ Նրանից, Նրանով և դեպի Նա է[13]: Մենք պետք է պարզ և հստակ ազդարարենք, որ Նա է այն Աստված, որի դեմ մենք մեղանչել ենք, և որ Նրա անասելի մեծության պատճառով է, որ մեր մեղքն անասելիորեն չար է:

ԱՍՏԾՈ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անկասկած՝ մարմնավոր մարդը դիտարկում է Աստծո գերիշխանությունը որպես Նրա ամենապակաս հաճելի հատկանիշը: Սա հատկապես ճշմարիտ է ժամանակակից Արևմուտքում, որտեղ անհատականությունը, անձի անկախությունը և ժողովրդավարությունը համարվում են սրբազան հասկացություններ, ներհատուկ իրավունքներ և ակնհայտ ճշմարտություններ: Թեև այս վեհ հասկացությունները պետք է սահմանեն և սահմանափակեն մարդու կառավարումն այլ մարդու կողմից, մենք պետք է մշտապես զգուշանանք, որ չենթադրենք, թե Աստված նույն կերպով սահմանափակ է Իր իշխանությունը գործադրելու մեջ: Սուրբ գիրքը միանշանակ կերպով պնդում է, որ Տերը հաստատել է Իր գահը Երկնքում, և Նրա թագավորությունը տիրում է բոլորին[14]: Նրա իշխանությունը չունի ոչ մի սահմանափակում. գոյություն չունի ոչ մի արարած և ոչ մի գործունեություն, որը դուրս է Նրա գավազանի սահմաններից: Ամեն կենդանի արարած, ամեն ստեղծված էակ և բոլոր իրադարձությունները պատմության մեջ պատկանում են Նրան: Նա անում է՝ ինչ ուզում է արարչագործության բոլոր տիրույթներում[15]: Նա ամեն ինչ հաջողում է Իր կամքի խորհուրդների պես, և ոչ ոք չի կարող ետ դարձնել Նրան Իր նպատակներից[16]: Նա սպանում է և կենդանացնում է[17]: Նա է ստեղծում խաղաղությունը և չարիքը[18]: Չկա մեկը, ով կարող է զարկել Նրա ձեռքին և ասել. «Ի՞նչ ես անում»[19]: Նրա խորհուրդը

10. Սաղմոս 97.9, Եսայի 57.15, Ա Տիմոթեոս 1.17
11. Եսայի 40.15–18
12. Ա Մնացորդաց 29.11
13. Հռոմեացիների 11.36
14. Սաղմոս 103.19
15. Սաղմոս 115.3, 135.6
16. Եփեսացիների 1.11, Հոբ 23.13
17. Ա Թագավորաց 2.6
18. Եսայի 45.7
19. Դանիել 4.34,35

հաստատ է հավիտյան, և Նրա սրտի մտածմունքները՝ ազգից մինչև ազգ[20]: Չկա իմաստություն, հանճար և խորհուրդ, որը կարող է հաղթել Նրան[21]: Նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, և Նրա թագավորությունը՝ դարեցդար[22]: Այն երբեք չի փոփոխվի, և ոչ ոք երբեք չի զբաղեցնի Նրա դիրքը: Նա միշտ լինելու է այն Տերը, Ում մենք պետք է հաշիվ տանք:

Մարդիկ պետք է հասկանան, որ մեղանչելիս նրանք չեն ապստամբում ինչ-որ աննշան աստվածության կամ ինչ-որ փոքր գավառի վերակացուի դեմ, այլ՝ մեծ Թագավորի, Ով վեր է բոլոր աստվածներից, երկնքի և երկրի Տիրոջ, Երանելիի և միակ Հզորի, տերերի Տիրոջ և թագավորների Թագավորի դեմ[23]: Նրանք պետք է հասկանան, որ մեղանչելը նշանակում է պատերազմ հայտարարել Նրա դեմ, Ով ստեղծել է տիեզերքն Իր խոսքով և կառավարում է այն ազատորեն և առանց որևէ ջանքի: Նա պատվիրեց աստղերին հսկել ժամերը գիշերվա երկնքում, և դրանք զբաղեցրին իրենց տեղերը: Նա պատվիրեց մոլորակներին գտնել իրենց առանցքները, և դրանք դասավորվեցին Նրա խոսքի պես: Նա պատվիրեց դաշտերին փռվել, և սարերին՝ բարձրանալ, և դրանք ահով հնազանդվեցին: Նա սահման գծեց ավազի վրա և պատվիրեց ամբարտավան ծովին առաջ չանցնել դրանից, և այն երկյուղածությամբ խոնարհվեց: Այնուամենայնիվ, չնայած արարչագործության մեծագույն ուժերի անխախտ հնազանդությանը՝ մարդը շարունակում է թափ տալ իր խղճուկ բռունցքն Աստծո վրա: Նա նման է աննշան լվի, որը շարունակ գլխով ապառաժի է հարվածում: Նա կործանում է ինքն իրեն՝ նման վերակենդանացման բաժնում գտնվող հիվանդի, որը փորձում է անջատել իր կենսագործունեությունն ապահովող սարքավորումները:

Որպես Ավետարանի քարոզիչներ՝ մենք պետք է խոսենք Աստծո գերիշխանության մասին, և դրանով իսկ ապացուցենք մարդկանց, որ իրենց մեղքը սոսկալի հանցանք է, որը բացահայտում է իրենց անկում ապրած սրտի ինքնակործան և խելացնոր բնությունը: Այնուամենայնիվ, եթե մենք հրաժարվենք հայտնի դարձնել Աստծո ամբողջական խորհուրդը և պատմել այս խիստ ճշմարտությունները մեր ունկնդիրներին, մենք խիստ անարդար կվարվենք նրանց հետ և կդատապարտենք նրանց անիրազեկ և կռապաշտ կյանքի: Աստվածաշունչն ասում է մեզ, որ Աստված հայտնեց Իրեն Իսրայելին, որպեսզի ժողովուրդը վախենար Իրենից[24]: Այնպես որ, մենք պետք է քարոզենք

20. Սաղմոս 33.11
21. Առակաց 21.30
22. Դանիել 4.34,35
23. Սաղմոս 95.3, Գործք 17.24, Ա Տիմոթեոս 6.15
24. Ելից 20.20

Աստծո հայտնության ամբողջ խորհուրդը, որպեսզի բոլոր ազգերը վախենան և փրկվեն: Այն չափով, որով մարդիկ կճանաչեն Աստծուն, նրանք կհասկանան իրենց մեղքերի սարսափելի բնույթը, և միգուցե փորձեն փրկություն գտնել մեղքից Հիսուս Քրիստոսի Ավետարանում:

ԱՍՏԾՈ ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ

Աստվածաշնչի երկու Կտակարաններն էլ նկարագրում են Աստծուն որպես սուրբ, սուրբ, սուրբ[25]: Այս եռամաս բանաձևը հաճախ կոչում են «տրիսագիոն», և այն գերադրության ամենաուժգին ձևն է եբրայերենում[26]: Աստծո սրբությունը պարզապես Նրա բազմաթիվ հատկանիշներից մեկը չէ, այլ՝ այն հիմքը, որով Նրա բոլոր աստվածային հատկանիշները պետք է սահմանվեն և հասկացվեն: Այդ իսկ պատճառով, ամեն ինչից առավել մարդիկ պետք է իմանան, որ Աստված սուրբ է: Այս հատկանիշը հասկանալու չափը կորոշի նրանց պատկերացումներն Աստծո, իրենց անձի, մեղքի, փրկության և ընդհանուր առմամբ՝ իրականության մասին: Առակաց գրքի իմաստուն հեղինակը սովորեցնում է մեզ, որ Ամենասուրբին ճանաչելը հանճար է[27]: Աստծո այս եզակիորեն կարևոր հատկանիշի մասին չիմանալը նշանակում է չճանաչել Աստծուն և բաց լինել Նրա մյուս հատկանիշները և գործերը սխալ ընկալելու համար: Բացի այդ, Սուրբի մասին գիտելիքի բացակայության պատճառով մարդիկ խեղաթյուրված պատկերացում կունենան իրենց մասին: Այսպիսով, իրենց մեղքի սոսկալի բնությունը հասկանալու համար, մարդիկ նախ պետք է ինչ-որ պատկերացում կազմեն Աստծո սուրբ բնության մասին:

«Սուրբ» բառը թարգմանված է եբրայերեն «կադոշ» բառից, որը նշանակում է «առանձնացված, նշված, ջոկված կամ հեռացված հասարակ գործածությունից»: Աստծո վերաբերյալ, այս բառը մատնանշում է երկու կարևոր ճշմարտություն: Առաջինը՝ Աստծո սրբությունը վերաբերում է Նրա գերազանց էությանը[28]: Որպես Արարիչ՝ Նա վեր է Իր ամբողջ ստեղծագործությունից և լիովին առանձնացված է այն ամենից, ինչն Ինքը ստեղծել և պահպանում է: Այս զատումը կամ առանձնացումն Աստծո և մնացած ամեն ինչի միջև միայն քանակական չէ (այսինքն՝ այն, որ Աստված ավելի մեծ է), այլև որակական (այ-

25. Եսայի 6.3, Հայտնություն 4.8

26. Հունարեն *«տրիս»*՝ «երեք», և *«ագիոն»*՝ «սուրբ»: Ջոն Ն. Օսվալտ, *«Եսայու գիրքը. Գլուխներ 1-39»,* Հին կտակարանի Նոր Միջազգային մեկնություն (Գրենդ Ռեփիդս, «Eerdmans» 1986թ.), էջ 181:

27. Առակաց 9.10

28. «Գերազանց» բառը լատիներենում «տրանսենդերե» բառն է (*«տրանս»* ՝ վրա, *«սկանդերե»*՝ մագլցել), որը նշանակում է «անցնել ինչ-որ բանից, բարձրանալ ինչ-որ բանից վեր, գերազանցել»:

սինքն՝ Աստված բոլորովին այլ էակ է): Անկախ իրենց շուքից՝ մնացած բոլոր էակներն այս երկրի վրա ընդամենը ստեղծվածներ են: Միայն Աստված է Աստված՝ առանձին, գերբնական և անմատույց[29]: Ամենից վեհաշուք հրեշտակը, որը կանգնած է Աստծո ներկայության մեջ, նույնքան նման չէ Աստծուն, որքան այս երկրի վրա սողացող ամենափոքր որդը: Տիրոջ պես սուրբ չկա[30]: Նա անզուգակա՛ն է:

Աստծո այլատեսակությունն է, որ դրդում է մարդկանց ակնածել Նրա առջև և երկյուղ տածել Նրա հանդեպ: Ամենազարմանալի և զարհուրելի ստեղծվածները երկնքում և երկրի վրա ընդամենը մեզ պես ստեղծվածներ են: Թեև նրանք գերազանցում են մեզ չափերով և ուժով, թեև նրանք ամաչեցնում են մեզ իրենց իմաստությամբ և գեղեցկությամբ, նրանք, միևնույն է, ստեղծվածներ են, և տարբերությունը մեր և նրանց միջև ընդամենը քանակական է: Բայց Աստված սուրբ, եզակի և առանձին է. Նա ոչ թե ավելի մեծ է, այլ ամբողջովին և բացառապես այլ է: Ահա թե ինչու էին Մովսեսը և Իսրայելի ժողովուրդը երգում. «Ո՞վ է աստվածների մեջ Քեզ պես, ո՛վ Տեր: Ո՞վ է Քեզ պես՝ սրբության մեջ փառավորված»[31]:

Երկրորդը՝ Աստծո սրբությունը վերաբերում է Նրա գերազանցությանը՝ Իր ստեղծագործության բարոյական ապականության հանդեպ: Նա առանձնացված է այն ամենից, ինչը պիղծ և մեղսալի է: Նա անսխալական և անարատ է[32]: Նա լույս է, և Նրանում բոլորովին խավար չկա[33]: Նա լույսի Հայրն է, որի մեջ փոփոխման կամ դարձվածքի շուք չկա[34]: Նա չար բաներով չի փորձվում, և ոչ ոքի չար բաներով չի փորձում[35]: Նրա աչքերը չափազանց մաքուր են՝ չարին հավանություն տալու համար, և Նա չի կարող բարեհաճությամբ նայել դրան[36]: Ամեն մեղք պիղծ է Նրա համար. այն նողկանք, ատելություն և զզվանք է առաջացնում: Յուրաքանչյուրը, ով անարդար է վարվում, պիղծ է Նրա գահի առջև, և Նրա երեսն ուղղված է բոլոր անօրինություն գործողների դեմ[37]: Ահա թե ինչու ամենասուրբ և ամենանվիրված մարդիկ Աստվածաշնչում, որոնց Աստծուն ավելի մտերմորեն ճանաչելու հնարավորություն էր շնորհվել, ընկնում էին Նրա առջև մահացածների պես և բացականչում էին. «Վա՛յ ինձ, որովհետև կորած եմ, որովհետև

29. Երկրորդ Օրինաց 4.35, Ա Տիմոթեոս 6.16
30. Ա Թագավորաց 2.2
31. Ելից 15.11
32. «Անսխալական» բառը լատիներենում «իմպրեկկաբիլիս» բառն է («իմ»՝ ոչ, «պեկկարե»՝ մեղանչել, «աբիլիս»՝ «կարող»), որը նշանակում է «մեղանչելու անկարող» կամ «անսխալական և անմեղադրելի»:
33. Ա Հովհաննես 1.5
34. Հակոբոս 1.17
35. Հակոբոս 1.13
36. Ամբակում 1.13
37. Երկրորդ Օրինաց 25.16, Սաղմոս 5.4

ես պիղծ շրթունքով մարդ եմ, և ես պիղծ շրթունքով ժողովրդի մեջ եմ բնակվում, և իմ աչքերը տեսան Զորաց Տեր Թագավորին»[38]:

Մարդկանց փրկության մեջ գոյություն ունի տրամաբանական հաջորդականություն: Նրանք պետք է գիտակցեն, որ կորած են, մինչև փրկվելը: Այնուամենայնիվ, նրանք պետք է իմանան, որ մեղավոր են, նախքան գիտակցելը, որ իսկապես կորած են: Եվ, ի վերջո, նրանք պետք է հասկանան, որ Աստված սուրբ է, մինչև որ լիովին կընկալեն իրենց մեղքի սոսկալի բնությունը: Այս ճշմարտությունների լույսի ներքո մենք պետք է պարզորեն հասկանանք, որ ոչ մի օգուտ չենք բերում մարդկանց, եթե չենք պատմում նրանց ճշմարտությունը իրենց մեղքի մասին, և ոչ մի ծառայություն չենք մատուցում նրանց, եթե չենք սովորեցնում Ամենասուրբ Աստծո մասին: Տեր Հիսուս Քրիստոսն անդրդվելիորեն պնդում էր, որ Ավետարանը և Աստծո թագավորությունը տարածվում են այն չափով միայն, որով մարդիկ սուրբ են համարում Նրա անունը և Նրան[39]: Այնպես որ, Ավետարանը հավատարմորեն չի քարոզվում, եթե չի շեշտադրվում Աստծո սրբությունը:

ԱՍՏԾՈ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Աստծո Խոսքում «Արդար» բառը թարգմանված է եբրայերեն *«ցադդիկ»* և, համապատասխանաբար, հունարեն *«դիկայոս»* բառերից: Երկու բառերն էլ փոխանցում են Աստծո ճշմարտացիությունը, ճշգրտությունը և բարոյական գերազանցությունը: Համաձայն Աստծո Խոսքի՝ Աստծո արդարությունը այնպիսի բան չէ, ինչը Նա որոշել է անել. այն հատուկ է Նրա էությանը: Նա արդար Աստված է. Նրա արդարությունը հավիտյան է, և Նա չի փոխվում[40]: Նա հավատարիմ Աստված է, և Նա չի խեղաթյուրում ճշմարտությունը[41]: Նա միշտ գործելու է համաձայն Իր էության: Այսպիսով, Նրա գործերը կատարյալ են, և Նրա ճանապարհները իրավունք են[42]:

Այն, թե ինչպես է Աստված վարվում Իր արարչագործության հետ, հատկապես ի հայտ է բերում Նրա արդար բնությունը: Նրա Խոսքը հավաստիացնում է մեզ, որ արդարությունը և արդարադատությունը Նրա գահի հիմքերն են, և որ Նա իշխում է ամենի վրա առանց քմահաճույքի, կողմնակալության և անարդարության[43]: Քանի որ Նա արդար Աստված է, Նա սիրում է արդարությունն Իր ամբողջ էությամբ և ատում է անարդարությունը կատարյալ ատելությամբ[44]: Այսպիսով, Նա չի կարող բարոյապես չեզոք կամ անտարբեր լինել մարդկանց կամ հրեշ-

38. Եսայի 6.5
39. Մատթեոս 6.9
40. Սաղմոս 7.9, 119.142
41. Երկրորդ Օրինաց 32.4, Հոբ 8.3
42. Երկրորդ Օրինաց 32.4
43. Սաղմոս 89.14
44. Սաղմոս 11.7, 5.5

տակների բնավորության և գործերի հանդեպ: Նա դատելու է նրանց անփոխզիջում արդարությամբ և բացարձակ հավասարությամբ: Ինչպես սաղմոսերգուն է ազդարարում. «Բայց Տերը հավիտյան կա. Նա Իր աթոռը պատրաստեց դատաստանի համար: Եվ Նա աշխարհն արդարությամբ կդատի և ազգերին ուղղությամբ իրավունք կանի»[45]:

Հիմնվելով այս ճշմարտությունների վրա՝ մենք երաշխիք ունենք, որ այն օրը, երբ Աստված դատի բոլոր մարդկանց գործերը, նույնիսկ դատապարտվածները կխոնարհեցնեն գլուխները և կհայտարարեն, որ Նա ճիշտ է: Քանի որ զորքերի Տերը կբարձրանա իրավունքով, և սուրբ Աստված կհայտնի Իր սրբությունն արդարությամբ[46]: Ոչ ոք երբեք չի կարողանա մեղադրել Նրան սխալմունքի մեջ, որովհետև Նա արդար Աստված է, որի գործերը, հրամանները և դատաստանները կատարյալ են[47]:

Լուրը Աստծո արդարության կամ արդարադատության վերաբերյալ և՛ լավ է, և՛ վատ: Այս լուրը լավ է, քանի որ բոլորն են ցանկանում, որ անսահման զորություն և գերիշխանություն ունեցող Աստված արդար լինի: Հազիվ թե հնարավոր լինի պատկերացնել ամենակարող և չար էակից ավելի սարսափելի բան: Անսանձ իշխանություն ունեցող անբարո աստվածության ստվերում այս աշխարհի Հիտլերները կնմանվեին մանր օրինազանցություններ գործած թեթև հանցագործների: Եթե Աստված կա, բոլորն են ցանկանում, որ Նա արդար լինի:

Մյուս կողմից, արդար Աստված շատ մեծ խնդիրներ է ներկայացնում մարդու համար: Իրականում, կարելի է ասել, որ մարդու մեծագույն խնդիրը Աստծո արդարությունն է: Մենք հանգում ենք այս եզրակացությանը պարզ տրամաբանության միջոցով.

Առաջին դրույթը. Տիեզերքի Արարիչը և Գերագույն Իշխանը և՛ արդար է, և՛ բարի:

Երկրորդ դրույթը. Արդար և բարի Աստված ընդդիմանալու է այն ամենին, ինչ անարդար և չար է, և դատաստանի է բերելու դա:

Երրորդ դրույթը. Բոլոր մարդիկ չար են և մեղավոր են անարդարության մեջ:

Եզրակացություն. Հետևաբար, Աստված ընդդիմանալու է բոլոր մարդկանց և դատաստանի է բերելու նրանց:

Աստծո արդարությունը բարի լուր է արդար արարածների համար, բայց սարսափելի ուղերձ է անարդարների համար: Առակաց գրքի հեղինակը հաստատում է այս ճշմարտությունը. «Ուրախություն է արդարի համար իրավունք անելը, բայց սոսկում՝ չարագործների համար»[48]:

45. Սաղմոս 9.7,8
46. Եսայի 5.16
47. Հոբ 36.23
48. Առակաց 21.15

Եթե մենք Աստծո պես արդար լինեինք, վերահաս դատաստանի մասին լուրը ցնծության առիթ կդառնար մեզ համար: Այնուամենայնիվ, մենք արդար չենք. իրականում, արդար չկա, մեկն էլ չկա[49]: Այնպես որ, Աստծո արդար դատաստանի սպասումը պետք է որ մեծ սարսափ առաջացնի ամեն մարդու մեջ և դրդի նրան դատապաշտպան փնտրել: Այն փաստը, որ մարդկանց մեծ մասը որևէ կերպով չի ազդվում գալիք դատաստանի լուրից, կարող է բերել մեզ հետևյալ եզրահանգումներից մեկին: Առաջինը՝ նրանց խիղճն այրված է, և նրանք համոզված են, որ այդ ամենը պարզապես առասպել է: Երկրորդը՝ նրանք չափազանցված կարծիք ունեն իրենց արդարության մասին: Երրորդը՝ նրանք թերագնահատում են Աստծո արդարությունը: Չորրորդը՝ նրանք պարզապես չգիտեն նման բաների մասին, քանի որ դրանք հազվադեպ են պարզորեն հռչակվում ավետարանական եկեղեցիների ամբիոններից:

Ամբողջ աշխարհում գոյություն ունեցող բազմաթիվ մշակույթներում արդարադատությունը հաճախ պատկերվում է որպես կին, որի ձեռքին կշեռք է, և որի աչքերը ծածկված են քողով: Այս պատկերի նպատակն է՝ ցույց տալ, որ արդարադատությունը կույր է կողմնակալության և կաշառքի համար: Այնուամենայնիվ, անկում ապրած մարդու համար այն շատ ավելի անազնիվ իմաստ ունի. մենք կույր ենք արդարադատության, արդարության և հավասարության համար: Մենք խարդախ կշեռքների և անհավասար կշռաքարերի մարդիկ ենք[50]: Մենք մատնացույց ենք անում մեր եղբոր աչքի շյուղը, բայց թվում է՝ տեղյակ չենք մեր աչքից դուրս ցցված գերանից[51]: Մենք զայրացած քննադատում ենք կաշառակեր քաղաքական բռնակալներին, որոնք կողոպտում են սեփական ժողովրդին, և բողոքում ենք խոշոր ընկերությունների անսանձ ագահության դեմ, սակայն չենք նկատում մեր և նրանց միջև ապշեցուցիչ նմանությունը: Տարբերությունը միայն չափի մեջ է: Մենք նույնպես գողացած հաց ենք ուտում, սրբում ենք մեր բերանը և ասում, որ ոչ մի սխալ բան չենք արել: Մենք չենք հասկանում, որ կանչելով աստվածային դատաստանը այս աշխարհի մեծ մեղավորների վրա՝ դատաստան ենք բերում հենց մեզ վրա: Թվում է՝ մենք մոռացության ենք մատնել Աստվածաշնչի համընդհանուր մեղադրանքը բոլորիս դեմ. «Արդար չկա, մեկն էլ չկա»[52]:

Որպես Ավետարանի քարոզիչներ՝ մենք պետք է հռչակենք Աստծո արդարությունը և դրանով իսկ բացահայտենք մարդկանց անարդարությունը: Մենք պետք է ցույց տանք Աստծո արդարության

49. Հռոմեացիների 3.10
50. Առակաց 11.1
51. Մատթեոս 7.3,4
52. Հռոմեացիների 3.10

խստությունը և ապացուցենք, որ ամենափոքր իսկ շեղումը Նրա կատարյալ չափանիշներից և՛ որակազրկում է, և՛ դատապարտում է: Մարդիկ պետք է իմանան, որ պահանջվեց անարդարության ընդամենը մեկ արարք մարդկության առաջին ծնողների կողմից, որպեսզի բոլոր մարդկանց վրա դատապարտություն գար, և այս աշխարհը նետվեր անուղղելի թվացող խառնաշփոթի մեջ[53]: Միայն այդ դեպքում նրանք կգիտակցեն, որ իրենց անթիվ անարդար գործերը որակազրկում են իրենց, և որ իրենք չեն կարող բարյացակամ հարաբերություններ ունենալ Աստծո հետ՝ իրենց առաքինության կամ արժանիքների հիման վրա: Երբ անհավատները հարցնեն մեզ, թե ինչ պետք է անել Աստծո ներկայության մեջ բնակվելու համար, մեր պատասխանը պետք է ստույգ և անսքող լինի: Եթե մարդը ցանկանում է հարաբերություններ ունենալ Աստծո հետ, Աստված միայն մեկ բան է պահանջում նրանից. իր կյանքի բոլոր օրերում[54] նա պետք է ապրի բացարձակ բարոյական կատարելությամբ՝ առանց թերացման կամ ձախողման, : Երբ մեր ունկնդիրները խոստովանեն, որ դա անհնար է, մենք մատնացույց կանենք նրանց Քրիստոսին:

ԱՍՏԾՈ ՍԵՐԸ

Ոչինչ այնքան չի բացահայտում մարդու անբարոյությունը և մեղքը, որքան պարզ և հետևողական քարոզը Աստծո սիրո մասին: Երբ քարոզիչը հակադրում է Բարձրյալի այս վեհ հատկանիշը այն անտարբերության և թշնամանքի հետ, որոնք Նրա ստեղծածներն ունեն Նրա հանդեպ, դա բացահայտում է մարդու անպիտանությունը և ցույց է տալիս մեղքի առավել ևս մեղավոր լինելը[55]:

Ավետարանի քարոզիչը պետք է հեղեղի մարդկանց Աստծո սիրով: Բոլորը պետք է իմանան, որ Աստված ձրիաբար և անձնվիրաբար տվեց Իր Անձը մարդկանց՝ նրանց օգտի և բարօրության համար, և արեց դա ոչ թե մարդկանց արժանիքների կամ առաքինության շնորհիվ, այլ՝ Իր սիրո[56]: Նրանք պետք է իմանան, որ Նրա սերը շատ ավելին է վերաբերմունքից, զգացմունքից կամ գործերից: Սերը Աստծո *հատկանիշներից* մեկն է՝ Նրա էության մի մասը: Աստված պարզապես չի սիրում. Նա սեր է[57]: Նա սիրո Աստված է[58]: Նա ճշմարիտ սիրո էությունն է, և ամեն ճշմարիտ սեր բխում է Նրանից՝ սիրո գլխավոր Աղբյուրից: Մարդիկ պետք է իմանան, որ ավելի հեշտ կլիներ հաշվել բոլոր աստղերը երկնքում և ամեն մի ավազահատիկն

53. Հռոմեացիների 5.12–19
54. Այս գաղափարով ես պարտական եմ հովիվ Մայքլ Դարեմին, ով հովվում է «Օուք Գրոուվ» Մկրտական եկեղեցին Կենտուկի նահանգի Փադյուքա քաղաքում:
55. Հռոմեացիների 7.13
56. Երկրորդ Օրինաց 7.7,8
57. Ա Հովհաննես 4.8,16
58. Բ Կորնթացիների 13.11

այս երկրի վրա, քան չափել կամ նույնիսկ փորձել նկարագրել Աստծո սերը: Դրա բարձրությունը, խորությունը և լայնությունը վեր են նույնիսկ մեծագույն և խորաթափանց ստեղծվածների մտքից:

Ավետարանի քարոզիչը պետք է բացատրի Աստծո սերը մեղավոր մարդկանց հանդեպ՝ խոսելով Նրա բարեհաճության մասին, ինչը նշանակում է, որ Նա ցանկանում է բարությամբ վարվել մարդկանց հետ, օրհնել նրանց և նպաստել նրանց բարօրությանը: Աստվածաշունչը վկայում է, որ Նա սիրող Արարիչ է, Ով ցանկանում է օրհնել հրեշտակներին, մարդկանց և նույնիսկ՝ կենդանիներին[59]: Նրա էությունը ճիշտ հակառակն է ցանկացած կարծիքի, որը փորձում է ներկայացնել Նրան որպես քմահաճ և վրեժխնդրական աստվածության, Ով ձգտում է Իր արարչագործության անկմանը և թշվառությանը: Նա բարի է բոլորի հանդեպ, և Նրա ողորմությունն Իր բոլոր գործերի վրա է[60]: Նա ծագեցնում է արևը և՛ չարերի, և՛ բարիների վրա, և անձրև է բերում և՛ արդարների, և՛ անարդարների վրա[61]: Նա բարի է երախտամոռների և չարերի հանդեպ[62]: Ամեն բարի բան և ամեն կատարյալ պարգև Նրանից է[63]:

Ավետարանի քարոզիչը պետք է բացատրի Աստծո սերը մեղավոր մարդկանց հանդեպ՝ սահմանելով և նկարագրելով Նրա ողորմությունը և շնորհքը: Մարդիկ պետք է իմանան, որ Աստծո ողորմությունը՝ Նրա գթասրտությունը, բարությունը և կարեկցանքն է, նույնիսկ Իր ամենաթշվառ և խղճալի արարածների հանդեպ: Աստվածաշունչն անվանում է Նրան գթությունների Հայր և նշում է, որ Նա թե՛ «մեծ է ողորմությամբ», թե՛ «բազմողորմ» է[64]: Նույնպես, մարդիկ պետք է իմանան, որ Աստծո շնորհքը նշանակում է, որ Նա ցանկանում է վարվել Իր ստեղծածների հետ ոչ թե ըստ նրանց արժանիքների կամ արժեքի, այլ՝ ըստ Իր բարության և առատաձեռնության: Նա «ամեն շնորհքի Աստված» է[65]: Նա փափագում է ողորմած լինել մարդկանց հանդեպ և սպասում է բարձրում, որ գթա նրանց[66]: Նա մարդկանց փրկում է շնորհքով, երբ նրանք անզոր են փրկելու իրենց, որ գալիք դարերում ցույց տա Իր շնորհքի գերազանց մեծությունը այն բանով, որ բարություն ցուցաբերեց նրանց հանդեպ, ովքեր արժանի չէին[67]:

Ավետարանի քարոզիչը պետք է բացատրի Աստծո սիրո գերազանցությունը՝ խոսելով Նրա համբերության կամ երկայնամտության մասին: Մարդիկ պետք է իմանան, որ Աստված մշտապես պատ-

59. Հովհան 4.11, Առակաց 12.10
60. Սաղմոս 145.9
61. Մատթեոս 5.45
62. Ղուկաս 6.35
63. Հակոբոս 1.17
64. Սաղմոս 145.8, Բ Կորնթացիների 1.3, Եփեսացիների 2.4
65. Ա Պետրոս 5.10
66. Եսայի 30.18
67. Եփեսացիների 2.7,8

ռաստ է եղել երկայնամիտ և համբերատար լինել Իր ստեղծածների տկարությունների և զանցանքների հանդեպ: Նա զսպում է Իր բարկությունը և չի բարձրացնում Իր ամբողջ ցասումը, քանի որ հիշում է, որ մարդիկ մարմին են կամ քամի, որը գնում է և ետ չի դառնում[68]: Նա դարձնում է Իր բարկությունը, քանի որ չի կամենում, որ որևէ մեկը կորչի, այլ որ բոլորն էլ ապաշխարության գան[69]: Նա ցանկանում է, որ բոլորը փրկվեն և ճանաչեն ճշմարտությունը[70]: Նրան հաճելի չէ մեղավորների մահը. Նա կամենում է, որ նրանք դարձի գան իրենց ճանապարհներից և ապրեն[71]:

Վերջինը և ամենակարևորը՝ Ավետարանի քարոզիչը պետք է մշտապես ջանք թափի, որ մեծարի Աստծո սերը՝ քարոզելով, որ Հայրն Իր շնորհքով տվեց Իր Որդուն: Աստծո սերը, որը վեր է մտքից, հայտնվել է Իր բոլոր արարածներին գրեթե անթիվ ձևերով: Այնուամենայնիվ, Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ գոյություն ունի Աստծո սիրո մեկ դրսևորում, որը վեր է մնացած բոլորից. Աստված տվեց Իր Որդուն՝ Իր ժողովրդի փրկության համար: Աստվածաշունչը վկայում է, որ Աստված սեր է, և որ Նա հայտնեց Իր սերը մեզ՝ մահվան ուղարկելով Իր միածին Որդուն, որպեսզի մարդիկ ապրեն Նրանով: Մեր վարքը կամ գործերը չեն կարող սահմանել կամ չափել սերը. ճշմարիտ սերն այն է, որն Աստված ցուցաբերեց մեր հանդեպ, երբ ուղարկեց Իր Որդուն՝ որպես քավություն մեր մեղքերի[72]: Հայտնի է, որ մարդը հազիվ թե մահանա արդարի համար, թեև ինչ-որ մեկը միգուցե համարձակվի մահանալ բարի մարդու համար: Այնուամենայնիվ, Աստված հայտնեց Իր սերը մեր հանդեպ այն բանով, որ երբ մենք դեռ մեղավորներ էինք, Քրիստոսը մահացավ անաստված և լիովին անօգնական մարդկանց համար[73]: Այս մեծ փրկագինը ապացուցում է Աստծո սիրո սքանչելիությունը և մեր մեղքի զարհուրանքը:

Ահա ընդամենը մի քանի ճշմարտություն, որոնք պետք է ներկայացվեն մարդկանց, որպեսզի նրանք դիտարկեն Աստծուն համաձայն Աստվածաշնչի և հասկանան այն մեղքի իրական բնությունը, որն իրենք գործել են Նրա դեմ: Ցանկացած մեղք, ըստ էության, չարիք է, քանի որ այն գործվում է ընդդեմ անսահմանորեն բարի Աստծո, Ով լիովին արժանի է սիրո, նվիրման և հնազանդության: Որքան ավելի քարոզենք այս Աստծո մասին, այնքան ավելի շատ մարդիկ կհասկանան իրենց մեղքի չափը և փրկության մեծ կարիքը:

68. Սաղմոս 78.38,39
69. Ելից 34.6, Բ Պետրոս 3.9
70. Ա Տիմոթեոս 2.4
71. Եզեկիել 18.23,32
72. Ա Հովհաննես 4.8–10
73. Հռոմեացիների 5.6–8

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒ

Մեղավորներ՝ առանց բացառության

«Որովհետև ամենը մեղանչեցին և Աստծո փառքից պակասված են»:

— Հռոմեացիների 3.23

Աստծուն Սուրբ գրքի լույսի ներքո տեսնելուց բացի, մարդու մեծագույն կարիքը սեփական անձը Սուրբ գրքի լույսի ներքո տեսնելն է: Այս հարցում մենք բացահայտում ենք մեծ հակադրություն աշխարհիկ պատկերացման և աստվածաշնչյան ճշմարտության միջև: Ժամանակակից կարծիքը մարդու մասին հետևյալն է. հիմնականում, մարդը բարի է, և նրա մեծագույն խնդիրները բխում են անառողջ արտաքին ազդեցություններից՝ սոցիալական, քաղաքական, տնտեսական, կրթական և բազմաթիվ այլ գործոններից: Ի հակադրություն սրան՝ Աստվածաշունչը սովորեցնում է, որ մարդն անկում ապրած էակ է, և նրա բոլոր ախտերի պատճառը նրա սրտի բարոյական ապականությունն է:

Քարոզելով Հիսուս Քրիստոսի Ավետարանը՝ մենք պետք է ձգտենք մեր ունկնդիրներին փոխանցել աստվածաշնչյան տեսանկյունը մեղքի և մեղավորի մասին: Աստվածաշունչը Սուրբ Հոգու զորությամբ մեկնելը՝ այս նախաձեռնությունը իրականացնելու միակ միջոցն է: Այս աշխատանքը բարդ է և հաճախ՝ սխալ հասկացված, բայց այն անհրաժեշտ է՝ ինչպես վարելը սերմ ցանելուց առաջ: Մեր գործն է՝ խոսել այն թեմայով, որի մասին մարդկանց մեծ մասը գերադասում է մոռանալ: Մենք անսովոր աշխատանք ենք կատարում, քանի որ մեր հաջողության չափանիշը մեր ունկնդիրների սրտում առաջացած համոզվածության, կոտրվածության և ապաշխարության չափն է: Սա դժվար ճանապարհ է, բայց՝ փրկության միակ ուղին:

Հռոմեացիների 3.23-ում *«մեղանչել»* բառը թարգմանված է հունարենում «մեղք» իմաստն ունեցող ամենահաճախ օգտագործվող բառից՝ «համարտանո»-ից, որը նշանակում է «վրիպել, սխալվել կամ շեղվել ճանապարհից»: Եբրայերենում «մեղք» իմաստն ունեցող ամենահաճախ օգտագործվող բառը *«խաթա»*-ն է, և այն սահմանվում է նույն ձևով: Դատավորաց գրքի հեղինակը փոխանցում

է այս երկու բառերի գաղափարը՝ գրելով, որ մի շարք մարդիկ Բենիամինի ցեղից «պարսատիկով մազի վրա քար էին գցում՝ առանց *սխալվելու* (կամ՝ *վրիպելու*)»[1]: Առակաց գրքի իմաստուն հեղինակը նույնպես զգուշացնում է մեզ, որ «ոտքերով շտապողը *կսահի* (կամ՝ *կշեղվի ճանապարհից*, այսինքն՝ կմեղանչի)»[2]: Աստվածաշնչյան տեսանկյունից, մարդու նշանակետը և ճանապարհն Աստծո կամքն է: Ցանկացած միտք, բառ կամ արարք, որը կատարելապես չի համապատասխանում Նրա կամքին, մեղք է: Նույնիսկ ամենաչնչին շեղումը հանցանք է համարվում: Ահա թե ինչու է Վեստմինստերի Մեծ հարցուպատասխանքը մեղքը սահմանում որպես «ցանկացած անհամապատասխանություն Աստծո ցանկացած օրենքին» (Հարց 24): Կարևոր է նշել, որ Աստվածաշունչը երբեք չի ներկայացնում «վրիպելը» որպես անմեղ կամ չգիտակցված սխալ: Այն մշտապես հոժարակամ անհնազանդություն է, որը բխում է մարդու բարոյական ապականությունից և Աստծո դեմ ունեցած թշնամանքից:

Մեր հիմնական աստվածաշնչյան հատվածում մեղադրանքը մեղքի մեջ ներկայացված է ամեն մարդու՝ առանց բացառության, «որովհետև ամենը մեղանչեցին»: Նույն գաղափարը կրկնվում է ամբողջ Աստվածաշնչում: Հին կտակարանում գրված է՝ «մարդ չկա, որ չմեղանչի» և «նա, ով ապրում է, արդար չէ»[3]: Իմաստուն և մռայլված Սողոմոն թագավորը, տեսնելով, թե ինչ կա մարդու բարոյականության բարակ քողի ետևում, բացականչեց. «Իրավ, որ երկրի վրա արդար մարդ չկա, որ բարի գործի և չմեղանչի»[4]: Ի վերջո, Եսայի մարգարեն աղաղակեց՝ խոսելով ամբողջ մարդկության մասին. «Մենք ամենքս ոչխարների պես մոլորվեցինք, յուրաքանչյուրն իր ճանապարհին դառավ»[5]:

Հին կտակարանի հեղինակներն աննահանջ կերպով դատապարտում էին մարդուն, սակայն մենք չպետք է մտածենք, որ Նոր կտակարանի հեղինակներն այլ կարծիք ունեին, կամ որ նրանց պարսավանքը պակաս արտահայտիչ էր: Հռոմեացիների 3-րդ գլխում Պողոս առաքյալը իրար է միացնում մի շարք մեջբերումներ Հին կտակարանից, որպեսզի ցույց տա մեղքի համընդհանուր բնույթը և մարդու արատավորության խորությունը: Սա մարդկությանը դատապարտող ամենաածավալուն և ամենախիստ հատվածն է Աստվածաշնչում: «Եվ հիմա ի՞նչ, ավելի՞ն ենք (կամ՝ «նրանցից ավելի լա՞վն ենք»): Ամենևին՝ ոչ, որովհետև առաջ մեղադրեցինք հրեաներին և հեթանոսներին, թե ամենքը մեղքի տակ են. ինչպես որ գրված է, թե. «Արդար չկա, մեկն էլ չկա: Չկա իմացող, չկա Աստծուն

1. Դատավորաց 20.16, շեղագիրն ավելացրած է
2. Առակաց 19.2, շեղագիրն ավելացրած է
3. Գ Թագավորաց 8.46, Սաղմոս 143.2 (NKJV)
4. Ժողովող 7.20
5. Եսայի 53.6

խնդրող, ամենքը խոտորվեցին, միասին անպիտան եղան: Չկա բարություն անող, մինչև մեկն էլ չկա»»[6]:

Մենք գիտենք Աստվածաշնչից, որ մեղքը ո՛չ հազվագյուտ, ո՛չ էլ անսովոր երևույթ է, որը հատուկ է մարդկության ամենշան փոքրամասնությանը, այն համընդհանուր տարածում ունի: Ադամի ցեղի ամեն մի ներկայացուցիչ միացել է նրա սկսած ապստամբությանը: Այս ճշմարտությունը ժխտող մարդիկ նաև ժխտում են Աստվածաշնչի, մարդկության պատմության, ինչպես նաև իրենց մեղավոր մտքերի, խոսքերի և գործերի վկայությունը: Հովհաննես առաքյալը նույնիսկ պնդում է, որ իրենց մեղքը ժխտող մարդիկ Աստծուն ստախոս են անվանում և ապացուցում են, որ չունեն ոչ մի հարաբերություն Նրա հետ. «Եթե ասենք, թե մեղք չունենք, մեր անձերը խաբում ենք և ճշմարտությունը չկա մեզանում... Եթե ասենք, թե մեղք չգործեցինք, ստախոս ենք անում Նրան, և Նրա խոսքը մեզանում չէ»[7]:

Նույնիսկ թեթև հայացքն Աստվածաշնչին՝ ցույց կտա, որ մեղքը մարդկության մեծագույն ախտն է. այնուամենայնիվ, անժխտելի է, որ մեր ժամանակակից մշակույթում և դրա արդյունքում առաջացած, այսպես կոչված, «քրիստոնեության» մեջ այն թեթև հարց է համարվում: Այս պատճառով, մենք պետք է մեծ զգուշությամբ հետևենք Աստվածաշնչի հեղինակների օրինակին, ովքեր մեծ ջանքեր էին գործադրում, որ բացահայտեին մեղքը և ցույց տային դրա բացարձակ մեղսալիությունը: Մենք չպետք է խոսենք մեղքի մասին ընդհանուր արտահայտություններով, որոնք չեն կարող մտահոգել և դարձի բերել մարդկանց. մենք պետք է օգտագործենք հստակ արտահայտություններ, որոնք սահմանում են մեղքի իրական բնույթը և բացահայտում են դրա ամեն մի դրսևորումը: Մեր նպատակն է՝ ցույց տալ մեր ունկնդիրներին, որ մեղքն այնքա՛ն զարհուրելի է, որ անհնար է հեռացնել որևէ կերպով՝ բացի Գառան արյունից: Այս նպատակին հասնելու համար, մենք պետք է ուսումնասիրենք մեղքին բնորոշ հատկանիշներից մի քանիսը:

ՄԵՂՔԸ ՀԱՆՑԱՆՔ Է

«Կոկորդալիր գոչի՛ր, մի՛ խնայիր, փողի պես բարձրացրու ձայնդ և իմացրու Իմ ժողովրդին իրենց հանցանքը»[8]:

Այս խոսքում Աստված պատվիրում է Իր խոսնակ Եսայուն պարզորեն և ջերմեռանդորեն բացահայտել Իր ժողովրդի հանցանքները: Աստված առաջնորդում է մարգարեին բարձրացնել ձայնը փողի

6. Հռոմեացիների 3.9–12
7. Ա Հովհաննես 1.8,10
8. Եսայի 58.1

պես, ազդարարել, հրապարակել և նկարագրել այն մեղքերը, որոնք հանգեցնելու էին Իսրայելի կործանմանը: Աստված նույնպես զգուշացնում է ավելացնում մարգարեին ուղղված այս հրամանին՝ «մի՛ խնայիր»: Նա չպետք է դադարեր քարոզել մեղքի մասին գթասրտության կեղծ զգացումի պատճառով: Նա պետք է մի կողմ դներ մարդկանց վիրավորելու վախը: Իսրայելը պետք է կտրվեր Հոգու սրով: Անհրաժեշտ էր խորը և ցավոտ վիրահատություն ժողովրդի փրկության համար: Սա և՛ հանդիմանություն է, և՛ հորդոր ժամանակակից ավետարանչին, ով հաճախ անտեսում է Ավետարանը քարոզելու այս անհրաժեշտ տարրը:

Հին կտակարանում «հանցանք» բառը թարգմանված է եբրայերեն *«աբար»* բառից, որը նշանակում է «հատել, անցնել վրայով կամ կողքով»: Նոր կտակարանում այս բառը թարգմանված է հունարեն *«պարաբաինո»* բառից, որը նշանակում է «անցնել կողքով, անցնել կամ քայլ անել վրայով»: Մեղանչելը նշանակում է անցնել Աստծո օրենքի վրայով կամ շրջանցել այն՝ լիովին անտեսելով Նրա անձը և հեղինակությունը: Այն նշանակում է անցնել Նրա պատվիրանի թույլատրելի սահմանները և անտեսել այն սահմանափակումները, որոնք Նրա օրենքը հարկադրում է մեզ: Այն նշանակում է ցատկել ցանկապատի վրայով և ոտնձգություն անել այն տարածքների վրա, որոնք չեն պատկանում մեզ՝ նման գառների, որոնք մոլորվել են, քանի որ յուրաքանչյուրը դարձել է իր ճանապարհին[9]: Ի տարբերություն մեծ օվկիանոսների, որոնք հնազանդվում են Աստծո ձայնին և մնում են Նրա կողմից որոշված սահմաններում, մարդիկ մշտապես ձգտում են խախտել և զանց անել այն սահմանները, որոնք Նա որոշել է իրենց համար:

Քարոզումն այն մասին, որ մեղքը հանցանք է, շատ առավելություններ ունի: Առաջին հերթին՝ այն ցույց է տալիս մարդու սրտում բնակվող ամբարտավանությունը: Ո՞վ է այս նվազ արարածը, որը համարձակ անցնում է Աստծո կողմից դրված սահմանները: Նա վրդովմունքի և խայտառակության առարկա է ամբողջ արարչագործության համար: Ցուլը և ավանակը նրանից ավելի շատ հասկացողություն ունեն[10]: Երկրորդը՝ այն բացահայտում է մեր հիմարությունը: Մենք երեկ ենք ծնվել, և մեր ամբողջ գիտելիքը կարող է տեղավորվել մի մատնոցի մեջ և չի էլ լցնի այն[11]: Այնուամենայնիվ, մենք որոշում ենք ապստամբել հավիտենական Աստծո խորհրդի դեմ, որի գիտելիքն անսահման է, և որի իմաստությունը չունի իրեն հավասարը: Երրորդը՝ այն ցույց է տալիս մեր բոլոր ախտերի իրական պատ-

9. Եսայի 53.6
10. Եսայի 1.3
11. Հոբ 8.9

ճառը. մենք անարգեցինք Սուրբին և ետ քաշվեցինք Նրանից[12]: Մեր անօրինությունների պատճառով, մեր ողջ գլուխը հիվանդ է, և մեր սիրտը նվաղել է: Մեր ոտքի թաթից մինչև գլուխը ողջ տեղ չի մնացել: Մենք պատված ենք խոցերով և բաց վերքերով, որոնցից ամեն մեկն առաջացել է մեր իսկ մեղավորությամբ[13]:

ՄԵՂՔՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ Է

«Որովհետև ապստամբությունը՝ կախարդության մեղքի պես, և անհնազանդությունը կռապաշտության պես է»[14]: Մենք ապրում ենք մի մշակույթում, որը վերասահմանում և վերադասակարգում է մեղքը՝ ըստ հարմարության: Թեև մարդկանց մեծ մասը պատրաստ է խոստովանել, որ բարոյական ձախողումներ ունի, մարդիկ չեն համարում, որ իրենք չար են, իսկ իրենց մեղքը նույնքան վատն է, որքան մյուսներինը: Առաջին Թագավորաց 15.23-ը հրաշալի խոսք է, քանի որ այն ցույց է տալիս, որ գոյություն չունի փոքր մեղք: Աստծո տեսանկյունից, նույնիսկ ամենաթեթև ապստամբությունը նույնքան չար է, որքան դիվային ծեսի մասնակցելը, և նույնիսկ ակնարկն անհնազանդության մասին հավասար է կեղծ աստվածների երկրպագելու ծանրագույն անօրինությանը: Թեև որոշ մեղսալի արարքներ ավելի կործանարար հետևանքներ ունեն, քան մյուսները, ամեն մեղքի հիմքում գտնվում է նույն ապստամբությունը և անհնազանդությունը: Այն երեխան, որը կեղտոտում է գորգը՝ դիտավորյալ շուռ տալով իր ափսեն հատակին, և մյուսը, որը պարզապես հրաժարվում է հավաքել իր խաղալիքները, ունեն մեկ ընդհանրություն. նրանք ապստամբում են իրենց ծնողների իշխանության դեմ: Թեև նրանց մեղսալի արարքների հետևանքները տարբեր չափեր ունեն, այն ապստամբությունը, որը ծնում է դրանք, նույնն է:

Առաջին Թագավորաց 15.23-ը նկարագրում է մեղքը՝ անվանելով այն ապստամբություն և անհնազանդություն: *«Ապստամբություն»* բառը նշանակում է «ըմբոստություն, ընդվզում, խռովություն և կամակորություն»: *«Անհնազանդություն»* բառը թարգմանված է եբրայերեն *«պատսար»* բառից, որը բառացիորեն նշանակում է «բոթել կամ հրել»: Այն նկարագրում է համառ, անպատկառ, ամբարտավան, մեծամիտ և հանդուգն մարդու: Այս սահմանումներն օգնում են մեզ հասկանալ մարդկային անհնազանդության զարհուրելի բնույթը: Մեղավորը կամակորությամբ ապստամբում է Աստծո դեմ: Նա հակառակվում է Երկնքի թագավորությանը և պահանջում է իր թա-

12. Եսայի 1.4
13. Եսայի 1.5,6
14. Ա Թագավորաց 15.23

գավորության տարածումը: Նա կատարում է իր հայր սատանայի գործը, որը ցանկանում էր ներխուժել Աստծո գահի սրահը և սպանել Նրան Իր իսկ տաճարում[15]: Մեղավորը համառ և ամբարտավան գազան է, որը ոչ միայն մերժում է իր Արարչի կամքը, այլև փորձում է հարկադրել իր կամքը Նրան:

Հաշվի առնելով, թե ինչ է Սուրբ գիրքը սովորեցնում մեզ Աստծո գերակայության, գերիշխանության և զորության մասին, մեր մեղքը պետք է դիտարկվի որպես ծանրագույն ամբարտավանություն և խելագարության բարձրակետ: Մի՞թե մարդիկ, ովքեր ընդամենը գոլորշի են, կարող են ապստամբել հավիտենական Աստծո դեմ[16]: Մի՞թե կավե անոթների կոտրված բեկորները կարող են համառորեն մերժել Բրուտի ձեռքը: Այնուամենայնիվ, մարդիկ ժխտում են Աստծո գերիշխանությունը և ձգտում ինքնավարության: Նրանք ոչ միայն մերժում են Նրա կամքը, այլև փորձում են հարկադրել իրենցը: Ժամանակակից մարդը հազվադեպ է տեսնում իրեն այս լույսի ներքո և հազիվ թե դասակարգի իր մեղքը որպես ապստամբություն և անհնազանդություն: Այդ իսկ պատճառով, Ավետարանի քարոզչի գործն է՝ օգնել մարդուն տեսնել այն, ինչն ինքը դժվարությամբ է ընդունում, բայց ինչն անհրաժեշտ է իրեն՝ փրկվելու համար: «Նա, ով որ մեղք է գործում, անօրինություն էլ է անում, և մեղքն է անօրինությունը»[17]: Անկասկած՝ այս խոսքն ապացուցում է, որ ցանկացած տեսակի մեղք ծանր հանցանք է: Ամեն մի մեղսալի արարք (ամենամեծից մինչև ամենափոքրը՝ ըստ մարդկային չափանիշների) անօրինություն է, և ցանկացած մեղք գործելը նշանակում է անօրինություն գործել: «Անօրինություն» բառը թարգմանված է հունարեն *«անոմիա»* բառից, որը բառացիորեն նշանակում է «ոչ մի օրենք» կամ «առանց օրենքի»: Անօրինություն գործելը նշանակում է այնպես ապրել, ասես Աստված բարոյապես չեզոք կամ անտարբեր է, և ասես Նա այդպես էլ չի հայտնել Իր կամքը մարդկանց: Այս կարծիքներից երկուսն էլ ուղղակիորեն հակասում են Աստվածաշնչին: Համաձայն Աստվածաշնչի՝ Աստված արդար Էակ է, և Նա հայտնել է Իր օրենքը կամ կամքը բոլոր մարդկանց՝ գրելով այն նրանց սրտերում, իսկ ոմանց տվել է ավելի մեծ հայտնություն՝ Իր Խոսքի միջոցով[18]: Ցանկացած դեպքում, Սուրբ գիրքը վկայում է, որ բոլոր մարդիկ բավականաչափ լույս են ստացել Աստծո կամքի վերաբերյալ, որպեսզի արդարացում չունենան Դատաստանի օրը[19]: Այն, ինչ Միքիա մար-

15. Հովհաննես 8.44
16. Հակոբոս 4.14
17. Ա Հովհաննես 3.4
18. Հռոմեացիների 2.14–16, Բ Տիմոթեոս 3.15–17
19. Հռոմեացիների 1.20

գարեն ասաց հրեաներին, կարող է տարբեր առումներով ասվել ամեն մեկին. «Քեզ հայտնել է, ո՛վ մարդ, թե ինչ է բարին, և Տերն ինչ է ուզում քեզնից, այլ միայն իրավունք անել, ողորմություն սիրել և խոնարհությամբ վարվել քո Աստծո հետ»[20]:

Կարևոր է հասկանալ, որ մարդը կարող է անօրինություն գործել՝ կա՛մ Աստծո օրենքը բացահայտ կերպով արհամարհելով, կա՛մ ուղղակի անհոգություն ցուցաբերելով և չուզենալով ոչինչ իմանալ դրա մասին: Երկու դեպքում էլ նա արհամարհանք է ցուցաբերում Աստծո և Նրա իշխանության հանդեպ: Նույնպես կարևոր է հասկանալ, որ մարդու ապստամբության ծանրությունը կախված չէ այն բանից, թե արդյո՞ք նրա օրինազանցությունը մեծ կամ փոքր է համարվում: Ամեն տեսակի մեղք անօրինություն է, և «ով որ ամբողջ օրենքը պահի և մեկում մեղանչի, ամեն օրենքին եղավ պարտական»[21]: Ավելին՝ այն փաստը, որ հակաքրիստոսը հայտնվելու է որպես «կորստյան որդի», ցույց է տալիս անօրինության գարշելի բնությունը: Դատաստանի օրը Հիսուսը պատվիրելու է անօրինություն գործողներին հեռանալ Իրենից[22]: Ամեն մեղք անօրինություն է՝ ծնված դժոխքում և արժանի դատապարտության[23]:

Որպես Ավետարանի քարոզիչներ՝ Աստված կոչ է անում մեզ բացահայտել անօրինությունը և կասեցնել դրա տարածումը մարդկանց միջև: Մենք կարող ենք իրականացնել սա, եթե միայն հռչակենք Աստծո ամբողջական խորհուրդը: Առակաց գրքի հեղինակը զգուշացնում է մեզ. «Առանց մարգարեության ժողովուրդը կվայրենանա, բայց ով որ օրենքը պահի, երանի՜ նրան»[24]: Մարդիկ և հասարակությունները սլանում են դեպի անզուսպ անօրինությունը, երբ չունեն տեսիլք կամ հայտնություն Աստծո կամքի մասին: Այնուամենայնիվ, Աստված զսպում է անօրինությունը, երբ հակառակվում է մարդկանց Իր օրենքով, և Սուրբ Հոգին հանդիմանում է նրանց՝ բերելով Հիսուս Քրիստոսի փրկարար գիտելիքին: Ավետարանի քարոզումը նրբաճաշակ գործ չէ թույլ սրտեր ունեցող մարդկանց համար: Աստված կանչում է մեզ, որ կանգնենք մակընթացության մեջտեղում՝ հոսանքին հակառակ, բացահայտենք մեղքը՝ որպես անօրինություն, և մարդկանց՝ որպես օրինազանցների, և մատնացույց անենք նրանց Քրիստոսին՝ միակ Միջնորդին Աստծո և մարդկանց միջև[25]:

20. Միքիա 6.8
21. Ա Հովհաննես 3.4, Հակոբոս 2.10
22. Բ Թեսաղոնիկեցիների 2.3, Մատթեոս 7.23
23. Ամեն մի մեղք սատանայից է (Հովհաննես 8.44): Կարդացե՛ք Հակոբոս 3.6-ը, որում նման մի արտահայտություն է գրված լեզվի մասին. «...ինքը բորբոքվում է գեհենից»:
24. Առակաց 29.18
25. Ա Տիմոթեոս 2.5

ՄԵՂՔԸ ԹՇՆԱՄՈՒԹՅՈՒՆ Է

«Որովհետև մարմնի խորհուրդը Աստծո դեմ թշնամություն է, որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում, և կարող էլ չէ»[26]: Ամենատագնապալի ճշմարտություններից մեկը մարդու մեղքի մասին հետևյալն է. այն Աստծո դեմ ունեցած մարդու թշնամության, հակառակության և նույնիսկ ատելության դրսևորումն է: Այս ճշմարտությունը հասկանալու համար, մենք նախ՝ պետք է բացահայտենք դրա պատճառը: Ինչո՞ւ մարդը, կախվածության մեջ գտնվող արարած լինելով, պետք է նման թշնամություն ունենա անսահմանորեն բարի Աստծո դեմ: Համաձայն Աստվածաշնչի՝ պատճառն այն է, որ անկում ապրած մարդը բարոյապես ապականված էակ է, որը սիրում է անարդարությունը և պահանջում է ինքնավարություն (այսինքն՝ իր կյանքն անձամբ տնօրինելու հնարավորություն), որպեսզի անի այն, ինչ ճիշտ է համարում[27]: Հետևաբար, նա ատում է արդար Աստծուն և ատում է Նրա օրենքը, որը հայտնում է Նրա արդարությունը[28]: Այսպիսով, համաձայն վերևում գտնվող աստվածաշնչյան խոսքի՝ մարդը *չի կարող* ենթարկել իրեն կամ հնազանդվել Աստծո օրենքին, քանի որ նա *չի կամենում* անել դա, և *չի կամենում* անել դա, քանի որ նա *ատում է* Աստծուն: Խնդիրն ազատ կամքը չէ, այլ՝ չարակամությունը: Անկում ապրած մարդն այն աստիճան է ատում Աստծուն, որ չի պատրաստվում հնազանդվել Նրան նույնիսկ այն դեպքում, որ դա հավիտենական կործանման է տանելու նրան:

Տեր Հիսուս Քրիստոսը սովորեցնում էր. «Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեք»[29]: Ահա ևս մեկ վկայություն այն մասին, որ գոյություն ունի անմիջական կապ Աստծուն ձգտելու և Նրա կամքն ընդունելու միջև: Աստծո կամքին անկեղծորեն հնազանդվելը վկայում է Աստծուն անկեղծորեն սիրելու մասին: Մեղքը ցույց է տալիս ճիշտ հակառակը՝ հակակրանք կամ թշնամություն: Այս արհամարհելի և աններելի վերաբերմունքն Աստծո հանդեպ գտնվում է մարդու կողմից գործած ամեն մի մեղքի հիմքում: Այսպիսով, ցանկացած մեղք, որը մեծ կամ փոքր է հասարակության կարծիքով, անասելի չարիք է, քանի որ այն բխում է մարդու սրտից, որը պատերազմ է հայտարարել այն Աստծո դեմ, Ով անսահմանորեն արժանի է ամբողջ սիրուն, գոհությանը և պաշտամունքին:

Ավետարանի քարոզիչը պետք է հասկացնի մարդկանց այս ճշմարտությունները: Մեղքն ընդամենը ախտանշում է շատ ավելի

26. Հռոմեացիների 8.7
27. Հռոմեացիների 3.12, Եսայի 64.6, Հոբ 15.16, Դատավորաց 17.6, Առակաց 14.12
28. Հռոմեացիների 1.30
29. Հովհաննես 14.15

դժգույն ներքին հիվանդություն՝ արատավոր սիրտը, որը սիրում է չարը և թշնամաբար է վերաբերվում արդար Աստծո գերիշխան հրամաններին: Բոլոր եկեղեցական հաստատությունների կանոնները և կրոնական բարեփոխումները միասին չեն կարող ներքուստ վերափոխել մարդուն կամ հեռացնել թշնամությունը նրա սրտից: Մարդու վիճակն անհույս է՝ առանց Ավետարանի եզակի աշխատանքի, որը ճշտորեն քարոզվում է և ուղեկցվում Սուրբ Հոգու վերածնող զորությամբ:

ՄԵՂՔՆ ՈՒԽՏԱԴՐԺՈՒԹՅՈՒՆ Է

«Բայց նրանք Ադամի պես ուխտը զանց են անում, այնտեղ Ինձ անհավատարմություն (կամ՝ ուխտադրժություն) արեցին»[30]: Ցանկացած տեսակի մեղք ուխտադրժության տեսակ է: «Ուխտադրժություն» բառը թարգմանված է երկու եբրայերեն բառերից՝ *«մասլ»* և *«բագադ»*, և երկուսն էլ նշանակում են «դավադրաբար, խաբեությամբ և անհավատարմորեն վարվել»: *«Վեբսթերի բառարանը»* սահմանում է այս բառը որպես «հավատարմության խախտում, վստահության դավաճանություն, դավադրություն»: Ովսե 6.7-ն մեր նախահայր Ադամի առաջին մեղքն անվանում է «ուխտադրժություն» Տիրոջ դեմ: Ամբողջ Սուրբ գրքում ուխտադրժությունը բոլոր մեղքերի բաղկացուցիչ մասն է[31]: Աստծո դեմ ապստամբելու, ճշմարիտ Աստծուն թողնելու և կուռքերին դառնալու, ինչպես նաև՝ ցանկացած կերպով հավատքից նահանջելու կամ Աստծուց հեռանալու հիմքում մեղքն է[32]:

Երբ մենք մտածում ենք այն Աստծո բնության և գործերի մասին, որի դեմ մարդն այսպես է վարվում, մենք շատ ավելի պարզորեն ենք տեսնում մեղքի ուխտադրուժ բնույթը: Նա հավատարիմ Աստված է, որի հավատարմությունը տարածվում է մինչև երկինք և հասնում բոլոր սերունդներին[33]: Նա կատարում է Իր բոլոր ծրագրերը և գործերը կատարյալ հավատարմությամբ[34]: Նա հավիտյան հավատարմություն է պահում և չի փոխվում[35]: Նա պահում է Իր ուխտը և ողորմությունը հազարավոր սերունդների համար, և Նրա խոսքերից կամ խոստումներից ոչ մեկը երբևէ չի ձախողվել[36]: Այդ իսկ պատճառով, երբ մարդը մեղանչում է Աստծո դեմ, նա դավաճանում է Նրան, Ով արժանի է Իր մեծագույն հավատարմությանը, նվիրվածությանը

30. Ովսե 6.7
31. Եզեկիել 18.24
32. Եսայի 48.8, Ա Մնացորդաց 5.25, Սաղմոս 78.57
33. Երկրորդ Օրինաց 7.9, Սաղմոս 36.5, 100.5
34. Սաղմոս 33.4, Եսայի 25.1, Ա Թեսաղոնիկեցիների 5.24
35. Սաղմոս 146.6, Մաղաքիա 3.6
36. Երկրորդ Օրինաց 7.9, Հեսու 23.14, Գ Թագավորաց 8.56

և հնազանդությանը: Ահա թե ինչու է մեղքը համարվում վատագույն ուխտադրժությունը և մեծագույն դավադրությունը, և ահա թե ինչու է այն արժանանում մահապատժի[37]: Ամեն մեղք, որը մարդը գործում է, ապացուցում է նրա հարազատությունը կամ եղբայրությունը Հուդայի հետ, ով Հիսուսին ձերբակալողների առաջնորդն էր[38]: Որպես Ավետարանի քարոզիչներ՝ մենք պետք է ազդարարենք այս խիստ ճշմարտությունը մարդու ուխտադրժության մասին, որ չլինի թե ինքներս դավաճանենք այն Աստծուն, Ում կանչված ենք ծառայելու, այն Ավետարանին, որը կանչված ենք քարոզելու, և այն մարդկանց, որոնք հուսահատորեն ճշմարտությունը լսելու կարիքն ունեն:

ՄԵՂՔԸ ՊՂԾՈՒԹՅՈՒՆ Է

«Վեց բան կա, որ Տերն ատում է, և յոթը զզվելի են նրա Հոգու առջև»[39]: «Որովհետև քո Տեր Աստծո առջև պիղծ է բոլոր այս բաներն անողը, ամեն անիրավություն անողը»[40]: Բոլոր բառերից, որոնք օգտագործվում են՝ մեղքի սոսկալի բնությունը նկարագրելու համար, *«պղծություն»*-ը կարող է ամենապատշաճը համարվել: Այս բառը թարգմանված է եբրայերեն *«տովբահ»* և հունարեն *«բդելուգմա»* բառերից: Երկու լեզուներում էլ սրանք ամենախիստ բառերն են, որոնք օգտագործվում են՝ ստոր, անարգ կամ գարշելի երևույթներ նկարագրելու համար: *«Վեբսթերի բառարանը»* սահմանում է «պղծություն» բառը որպես «զզվանքի և ատելության արժանի բան. խորշելի, վանող կամ ծայրաստիճան նողկանք առաջացնող երևույթ»: Պարզ ասած՝ մեղքի ցանկացած տեսակ պղծություն է Տիրոջ առջև, որն առաջացնում է Նրա նողկանքը, զզվանքը և ատելությունը: Այս ճշմարտությունները խիստ են, բայց մենք չպետք է դրանից պակաս արձագանք ակնկալենք սուրբ և արդար Աստծուց, որի աչքերն այնքա՛ն մաքուր են, որ Նա չի կարող հավանություն տալ չարիքին և բարեհաճությամբ նայել անիրավությանը[41]:

Համաձայն Սուրբ գրքի՝ ամեն անիրավություն գործողը պիղծ է Տիրոջ առջև[42], և մեղանչելը պղծություն է[43]: Իրականում, անօրենները կամ անզգամներն այն աստիճան տհաճ են Աստծո համար, որ նույնիսկ նրանց կրոնական ծեսերը պղծություն են Նրա համար[44]:

37. Եզեկիել 18.24
38. Գործք 1.16
39. Առակաց 6.16
40. Երկրորդ Օրինաց 25.16
41. Ամբակում 1.13
42. Երկրորդ Օրինաց 25.16
43. Եզեկիել 16.52
44. Առակաց 15.8

Առակաց գրքի հեղինակը հայտնում է մեզ, որ Աստծո համար մեղքը ոչ միայն պղծություն է, այլև Նրա արդար ցասման կամ ատելության առարկան[45]: Նա նույնպես զգուշացնում է, որ անհնազանդության միջոցով իրենց պղծած մարդիկ ոչ մի դեպքում անպատիժ չեն մնա[46]: Հայտնություն գիրքն ավարտվում է զգուշացմամբ այն մասին, որ անմաքրություն անողները և պղծություն գործողները հավիտենական պատիժ կկրեն՝ կտրվելով Աստծո բարի ներկայությունից[47]:

Ինչպե՞ս մենք կարող ենք իմանալ բոլոր այս ճշմարտությունները մեղքի մասին, հավատալ դրանց և չհայտնել դրանք մարդկանց: Մի՞թե մենք կթաքցնենք այս տեղեկությունը մարդկանցից՝ հանուն քաղաքավարության և պատշաճ վարվելակարգի: Մի՞թե սխալ է օգտագործել այն բառերը, որոնք օգտագործում է Աստված՝ բացահայտելու համար մեր շուրջը գտնվող մարդկանց մեղքերը, ովքեր սպառվում են անիրազեկության պատճառով և մահանում են առանց Քրիստոսի: Մեղքը պղծություն է, և այն անթիվ կյանքերի կործանման պատճառն է: Որպես Ավետարանի քարոզիչներ՝ մենք պետք է մի կողմ դնենք մեր ինքնապահպանման բնազդը և մարդկանցից գնահատված լինելու ցանկությունը: Խիզախությամբ և սիրով մենք պետք է օգտագործենք այն խիստ խոսքերը, որոնք լավագույնս բացահայտում են մեղքի նողկալի բնույթը, որպեսզի մարդիկ դառնան դրանից՝ ինչպես ժանտախտից, և վազեն դեպի Քրիստոսը՝ փրկություն ստանալու համար:

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Հասնելով այս գլխի ավարտին՝ ընթերցողը միգուցե մտածի. «Խիստ է այդ բանը. ո՞վ կարող է լսել դա»[48]: Մեղքի մասին ճշմարտությունն անհանգստություն է առաջացնում, և այն խիստ բառապաշար ունի: Այնուամենայնիվ, մենք պետք է հասկանանք, որ մեղքի մասին վճռականորեն սովորեցնելը Հիսուս Քրիստոսի Ավետարանի էական մասն է: Մարդիկ պետք է գիտակցեն, թե ինչպիսին են, և թե ինչ են իրենք արել: Թեև նման ճշմարտությունները վրդովմունք են առաջացնում և նույնիսկ ցավոտ են, դրանք աստվածաշնչյան են և անհրաժեշտ են:

Մենք հազվադեպ ենք օգտագործում *«մեղք»* բառը մեր ժամանակակից մշակույթում: Պատճառն այն չէ, որ այն փոխարինվել է ավելի պատշաճ բառով. պարզապես այդ հասկացությունն ինքնին կորսվել

45. Առակաց 6.16
46. Առակաց 16.5
47. Հայտնություն 21.27
48. Հովհաննես 6.61

է: Մենք ապրում ենք այնպիսի մարդկանց միջև, ովքեր կամ չեն կարող, կամ չեն ցանկանում բարոյական զանազանություն կիրառել և դատաստան հոչակել որևէ բանի վրա: Մեղքն այլևս խիստ մեղսալի չէ, և մարդիկ այլևս ծայրաստիճան արատավորված չեն: Նույնիսկ նման բան ասելը կարող է սխալ և ոչ հանդուրժողական թվալ. հայտարարելը, որ ինչ-որ բան մեղք է, անընդունելի է, և սովորեցնելը, որ մարդիկ մեղավորներ են, հանցագործություն է: Այնուամենայնիվ, մեր մշակույթին պատկանող մարդիկ պետք է իմանան, որ սուրբ, արդար և անփոփոխ Աստված մեկ օր դատելու է իրենց: Այն, ինչ մեղք էր հին ժամանակներում, մեղք է նաև այսօր, և այն, ինչը հավիտենական կործանման տարավ անթիվ բազմությունների, դեռ կլանելու է շատ-շատերին:

Որպես Ավետարանի քարոզիչներ՝ մենք պետք է տպավորենք այս ճշմարտությունները մարդկանց մեջ: Թեև մարդիկ վրդովեցուցիչ կհամարեն մեր ասածը և կվիճարկեն մեր դրդապատճառները, մենք չպետք է խուսափենք Աստծո Խոսքի բառապաշարը գործածելուց և երևույթներն իրենց անուններով կոչելուց, որպեսզի մարդիկ տեսնեն իրականությունը:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔ

Մեղավորները՝ ընկած Աստծո փառքից

«Որովհետև ամենը մեղանչեցին և Աստծո փառքից պակասված են»:

— Հռոմեացիների 3.23

«Պակասվել» բառը թարգմանված է հունարեն *«հուստերեո՛ն»* բառից, որը նշանակում է «չհասնել նպատակին կամ ավարտին»: Համաձայն վերևում գտնվող խոսքի՝ նպատակը կամ ավարտը, որին մարդը չի հասել, Աստծո փառքն է: Եկեղեցու պատմության ընթացքում եղել են շատ կարծիքներ այս բառի հստակ նշանակության մասին: Այնուամենայնիվ, ամենատարածված և ընդունված բացատրությունը հետևյալն է. մարդու կողմից Աստծո փառքից պակասվելը նշանակում է, որ նա չկարողացավ փառավորել Աստծուն այնպես, ինչպես պետք է աներ, և այդ պատճառով կորցրեց Աստծո փառքը կրելու և արտացոլելու իր եզակի արտոնությունը:

ՓԱՌԱՎՈՐԵԼ ԱՍՏԾՈՒՆ

Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված ստեղծեց մարդուն Իր պատվի, փառքի և հաճության համար: Մենք շունչ ենք առնում, միայն որպեսզի այն վերադառնա Նրան՝ փառաբանության և պաշտամունքի տեսքով: Մեր սիրտը բաբախում է հատուկ հաճախականությամբ՝ Նրա համար և Նրանով լիարժեք բավականություն ստանալու համար: Մեր միտքը շատ բարդ կառուցվածք ունի, որպեսզի կարողանա մեծ բաներ մտածել Նրա մասին և համակվել երկյուղածությամբ: Մեր մարմնական ուժը կարողություն է տալիս մեզ ծառայելու Նրան և կատարելու Նրա կամքը: Կարճ ասած՝ մենք Նրանից ենք, Նրանով ենք և դեպի Նա ենք[1]: Մեր մեծագույն բարիքը Նրան մեր ամբողջ սրտով, անձով, մտքով և զորությամբ սիրելու և Նրա փառքի համար գործելու մեջ է[2]:

1. Հռոմեացիների 11.36
2. Մարդու մեծագույն բարիքը և նպատակը Աստծո մեջ է. Մատթեոս 22.37, Ա Կորնթացիների 10.31

Մարդը պետք է խելագարի պես սիրահարված լինի Աստծուն և հրապուրված լինի Նրանով: Ցանկացած բավականություն, որի հիմքը Նա չէ, կուռք է, և նույնիսկ ամենահասարակ գործողությունները, ինչպիսիք են ուտելը և խմելը, պետք է արվեն Նրա փառքի համար, կամ ընդհանրապես չարվեն[3]: Վեստմինստերի Կարճ հարցուպատասխանքը ճշմարտացիորեն հայտարարում է. «Մարդու մեծագույն նպատակը՝ Աստծուն փառավորելը և Նրան հավիտյան վայելելն է» (Հարց 1): Մարդու արտոնությունը և պարտականությունն է՝ Աստծուն գնահատել ամեն ինչից բարձր, լիովին բավականություն ստանալ Նրանում և ապրել Նրա առջև երկյուղածությամբ, գոհությամբ, հնազանդությամբ և երկրպագությամբ: Ահա թե ինչպիսին էր մարդն իր սկզբնական վիճակում՝ մինչև անկումը, և նա երբեք լիարժեք չի լինի, մինչև որ չվերադառնա այդ վիճակին և այն նպատակին, որի համար ստեղծվել է:

Աստվածաշունչը պարզորեն վկայում է, որ Աստված ստեղծեց մարդուն Իր փառքի համար, բայց մարդն ինքնակամ ընկավ այդ նպատակից: Պողոսի նամակը Հռոմի եկեղեցուն լավագույնս պատկերում է այս սարսափելի իրողությունը. «Որովհետև Աստծուն ճանաչելով, Նրան Աստծո պես չփառավորեցին կամ շնորհակալ չեղան, այլ իրենց մտածմունքներում ունայնացան, և նրանց անմիտ սրտերը խավարեցին: Ասելով, թե իմաստուն են, հիմարացան, և անեղծ Աստծո փառքը փոխեցին եղծանելի մարդու և թռչունների և չորքոտանիների և սողունների պատկերի նմանության հետ»[4]: Համաձայն այս հատվածի՝ բոլոր մարդիկ բավականաչափ գիտելիք ունեն միակ ճշմարիտ Աստծո մասին, որ արդարացում չունենան Նրա առջև դատաստանի ժամանակ: Այնուամենայնիվ, մարդը ճնշում է այն ճշմարտությունը, որը գիտի, և ապստամբում է հենց այն նպատակի դեմ, որի համար ստեղծվել է՝ Աստծո փառքի և պատվի: Հեռանալով ճշմարտությունից՝ նա կլանվում է խավարով և ունայնությամբ: Ապաշխարելու փոխարեն նա պայքարում է իր իմացած ճշմարտության դեմ և շարունակում է գլորվել դեպի ավելի ու ավելի խորը բարոյական խավարը, այլասերումը և ունայնությունը:

Բոլոր մարդկանց կյանքերում գոյություն ունեցող մեղքը Աստծուն փառավորելու հակադրույթն է, և այն ցույց է տալիս, թե որքան մասնատված և ապակողմնորոշված է դարձել մարդը[5]: Նա անջատել է ինքն իրեն այն նպատակից, որի համար Աստված ստեղծել է, և կտրել է իրեն իր գոյության իսկ պատճառից: Նա մի կողմ է նետել անեղծ Աստծո փառքը և ինքն իրեն դարձրել է երկրպագության առարկա[6]: Նա մերժել է Աստծո կամքը և հնազանդվել է ինքն իրեն:

3. Ա Կորնթացիների 10.31
4. Հռոմեացիների 1.21–23
5. Մեղքը՝ Աստծուն փառավորելու հակադրույթն է կամ՝ ուղիղ հակադրությունը:
6. Հռոմեացիների 1.23

Մի՞թե արժե զարմանալ, որ նա ապարդյուն փնտրում է իր կյանքի իմաստը, և որ նշանակալի դառնալու նրա ամենամեծ փորձերը պարզապես ծիծաղելի են:

Կարևոր է նշել, որ մարդու կողմից Աստծուն չփառավորելը ոչ միայն պատճառ է դառնում անիմաստ գոյության, այլև ծնում է մեսացած բոլոր մեղքերը: Այն այլասերված և արատավոր արարքների երկար ցուցակը, որը Պողոսը բերում է Հռոմեացիներին ուղղված նամակի բացման մեջ, ընդամենը մեծագույն մեղքի արդյունքն է, որը վեր է բոլոր այդ մեղքերից՝ այն, որ մարդը հրաժարվում է ընդունել Աստծուն և պատվել նրան Աստծո պես[7]: Սա Աստվածաշնչի «Պանդորայի արկղն» է, որը լցնում է ամբողջ աշխարհը քաոսով և կործանմամբ[8]:

Այս կարճ քննարկումն Աստծո փառքի մասին հատկապես կարևոր է, երբ մենք անդրադառնում ենք «բարի» աթեիստի մասին վարկածին: Մարդիկ հաճախ փորձում են փարատել քրիստոնեության պնդումները՝ խոսելով աթեիստների մասին, որոնք չեն հավատում Աստծուն և ոչ էլ փառք են տալիս Նրան, բայց բարոյական անհատներ են և ձգտում են օգտակար լինել իրենց շրջապատող մարդկանց: Նրանց փաստարկն այն է, որ անարդար է դատաստանի կանգնեցնել և դատապարտել այդպիսի մարդուն ընդամենը այն պատճառով, որ նա չի համարում, որ կան Աստծո գոյությանը հավատալու բավականաչափ ապացույցներ:

Թեև այս փաստարկը շատ տարածված է, այն չի դիմանում Սուրբ գրքի քննությանը: Առաջինը՝ Սուրբ գիրքը վիճարկում է իրական աթեիստների գոյությունը: Բոլոր մարդիկ գիտելիք ունեն միակ ճշմարիտ Աստծո մասին. գիտելիքն Աստծո մասին հայտնի է նրանցում այն պատճառով, որ Աստված է հայտնել դա նրանց՝ արարչագործության միջոցով, որպեսզի նրանք արդարացում չունենան[9]:

Երկրորդը՝ Սուրբ գիրքը փաստում է, որ աթեիստի խնդիրը ոչ թե մտավոր է, այլ՝ բարոյական: Ըստ սաղմոսերգուի՝ հիմարը, ով ասում է իր սրտում, որ Աստված չկա, անում է սա ոչ թե մտավոր դրդապատճառներով, այլ՝ իր անձի ապականության և չարիք գործելու ցանկության պատճառով: Նա չի ձգտում ո՛չ Աստծուն, ո՛չ Նրա բարոյական արժեքներին. այնպես որ, նա մերժում է երկուսն էլ[10]: Աթեիս-

7. Հռոմեացիների 1.21–32

8. Առասպելաբանության մեջ Պանդորայի արկղը պարունակում է մարդկության ամբողջ չարիքը: Զևսը տվեց այն Պանդորային, ով բացեց այն՝ նրա պատվերին հակառակ:

9. Հռոմեացիների 1.19,20

10. Սաղմոս 14.1–3, 53.1–3: «Հիմար» բառը թարգմանված է «նավալ» (կամ՝ նաբաղ) բառից, որը նշանակում է «հիմար կամ անմիտ մարդ»: Անհրաժեշտ է նշել, որ «նավալ» բառը բարոյական իմաստ ունի. այն չի վերաբերում անտեղյակ մարդուն, ով իմաստության է ձգտում, այլ նրան, ով խորշում է իմաստությունից և անտեղյակ է մնում իր իսկ կամքով:

տի մտավոր հղկվածությունը չէ, որ խանգարում է նրան հավատալ Աստծուն, այլ՝ նրա անօրինությունը և անարդարությունը, որոնք դրդում են նրան՝ լռեցնել ճշմարտության ձայնն իր ներսում[11]:

Երրորդը՝ Սուրբ գիրքը վիճարկում է բարոյական աթեիստների գոյությունը, քանի որ Աստծո շնորհքից զատ «Արդար չկա, մեկն էլ չկա»[12]: Այն, որ մարդը պարծենում է բարոյական լինելով, բարոյական չի դարձնում նրան: Ճշմարտապես արդար են ոչ թե բարոյականության մասին լսողները կամ դրա ջատագովները, այլ նրանք, ովքեր իրականում ապրում են ըստ այն արժեքների, որոնց սատարում են[13]:

Չորրորդը՝ փաստարկն այն մասին, որ բարոյական աթեիստին դատապարտելն անարդար է, զուտ հումանիստական և մարդակենտրոն տեսանկյուն է իրականության մասին: Մարդակենտրոն տիեզերքում մարդը պատասխանատու է մարդու առջև, բայց աստվածակենտրոն տիեզերքում նա առաջին հերթին պատասխանատու է Աստծո առջև, և դրանից հետո միայն մարդու առջև: Նույնիսկ եթե աթեիստի պարծանքն իր արդարության մասին (այլ մարդկանց համեմատ) ճիշտ է, միևնույն է, նա ձախողվել է Աստծո հետ իր հարաբերությունների մեջ՝ Նրա, Ով տալիս է իրեն կյանք, շունչ և ամեն ինչ[14]: Աստծո դեմ գործած այս մեղքն անսահմանորեն ավելի մեծ է, քան ցանկացած անբարոյություն, որը նա կարող է գործել մեկ այլ մարդու նկատմամբ:

Եվ վերջինը՝ բարոյական թվացող աթեիստը մեղավոր է ոչ միայն Աստծուն փառք չտալու, այլև Նրա փառքը գողանալու մեջ: Բոլոր մարդիկ ծնվել են բարոյապես ապականված և ծայրաստիճան արատավորված բնությամբ: Միակ բանը, որը զսպում է մարդկանց ներսի չարիքը և դրդում է նրանց առերևույթ բարություն ցուցաբերել, Աստծո ընդհանուր շնորհքն է: Եթե Աստված վերցներ այս շնորհքը, և մարդիկ թողվեին իրենց արատավոր սրտերի մղումներին, մարդկային ցեղն արագորեն կոչնչացներ ինքն իրեն: Երկրի վրա իսկական դժոխք կսկսվեր, համենայն դեպս, քանի դեռ դա շարունակվեր: Աստվածային շնորհքը պահպանում է մարդկային հասարակությունը, որպեսզի Աստված կատարի Իր փրկության աշխատանքը արատավոր և անօգնական մարդկության մեջ: Աթեիստի մարդասիրությունը կամ զարգացած բարոյական սկզբունքները չեն, որ զսպում են նրան սերիական մարդասպան լինել կամ առերևույթ բարիք գործելու կարողություն են տալիս նրան, այլ՝ Աստծո ողորմած նախախնա-

11. Հռոմեացիների 1.18
12. Հռոմեացիների 3.10–12
13. Հռոմեացիների 2.13, Հակոբոս 1.22
14. Գործք 17.25

մությունը, Ով ամեն բան գործում է՝ ըստ Իր կամքի խորհրդի[15]: Այնպես որ, աթեիստի հանցանքն այն է, որ նա կտրականապես մերժում է այն Աստծուն, Ով, Իր շնորհքով, զսպում է նրա ներսի չարիքը և առերևույթ բարություն է պարգևում նրան: Աթեիստը պնդում է, որ ամբողջ այդ աշխատանքն իրենն է, և ստանում է այն փառքը, որը պետք է տրվի Աստծուն: Նա ամենավատ տեսակի գողն է և քստմնելի խաբեբա: Նրա դատապարտությունն արդարացի է[16]:

ԿՐԵԼ ԱՍՏԾՈ ՓԱՌՔԸ

Աստված ստեղծեց մարդուն՝ կրելու մի մաս Իր փառավոր պատկերից[17]: Մենք չենք հասկանում այս բառերի ամբողջական իմաստը, բայց գիտենք, որ Աստված վճռեց դարձնել մարդուն ավելի, քան կավե արարած. մարդը ստեղծվեց Աստծո փառքն ընդունելու և արտացոլելու կարողությամբ: Նա ստացավ անընմբռնելի և անասելի արտոնություն. նա կարող էր հաղորդակցվել Աստծո հետ և վերափոխվել «փառքից դեպի փառք»՝ նայելով Նրան «բաց երեսով»[18]: Այնուամենայնիվ, մարդը կորցրեց ամեն ինչ այն օրը, երբ Ադամը բարձրացրեց իր անձն աստվածությունից և ընտրեց սահմանափակ արարածի ինքնավարությունը՝ մերժելով անսահման իմաստությամբ և բարեհաճությամբ լի Աստծո իշխանությանը: Արդյունքում Ադամը հայտնվեց մերկ վիճակում՝ զրկվելով այն փառքից, որը մի ժամանակ անսահմանափակ վայելում էր: Մեղքն աղավաղեց Աստծո պատկերը, և մարդու ճակատին գրվեց *«Իքաբոդ»,* քանի որ Տիրոջ փառքը հեռացավ[19]: Այսպիսով, Ադամը դարձավ իր արարման նպատակի հակապատկերը՝ մրոտված և փշրված հայելի, որն անօգուտ էր[20]: Նրա սիրտը փուչ և դատարկ դարձավ ներսից, և դրվեց գրանիտի պես պինդ պահոցի մեջ: Նրա արտաքին մարդը դարձավ նրա ներսի վիճակի պատկերը: Նա դարձավ անձև ու շփոթված արարած, որը կորցրեց դիրքը և աղավաղեց իր գոյության բուն պատճառը:

Ահա թե ինչ ժառանգություն Ադամը թողեց իր որդիներին և դուստրերին: Թեև անցել է մի քանի հազարամյակ, մարդն անկարող է եղել վերադարձնել իր ընտանեկան հարստությունը: Բոլորը ծնվում են նրա պատկերով, ով ընկավ Աստծո պատկերից, որով ստեղծվել

15. Եփեսացիների 1.11
16. Հռոմեացիների 3.8
17. Ծննդոց 1.26
18. Բ Կորնթացիների 3.18
19. Ա Թագավորաց 4.21
20. Հռոմեացիների 3.12. անկում ապրած մարդու առանձնահատկություններից մեկը նրա բացարձակ անպիտան լինելն է. «...միասին անպիտան դարձան»:

էր[21]: Այժմ մարդկությունը պահպանում է իր գոյությունն անեծքի ներքո, սակայն մարդու մեջ մնացել է բավականաչափ բաժին Աստծո պատկերից, որպեսզի նա չբավարարվի ոչ մի անձով, առարկայով կամ երևույթով՝ բացի Նրանից, Ումից նա փախչում է[22]: Նա կարող է հագնել այս աշխարհի փառքը և հարստությունը, բայց միևնույն է՝ մերկ մնալ: Նա կարող է լվացվել ինքնագնահատականով և շրջապատել իրեն աջակցող խմբերով, որոնք հավանություն կտան իր ամեն մի մտքին և արարքին, բայց նա չի կարող փախչել իր խղճի աննահանջ մեղադրանքներից: Նա կարող է ստանալ ամբողջ աշխարհը և նույնիսկ՝ դրա հազարապատիկը, բայց նրա իրական աղքատությունը կրծելու է նրա ներսը: Աստված ստեղծել է մարդու սիրտը՝ Իր բնակավայրը լինելու համար, և այն չի կարող լրացվել ոչ մի բանով՝ Նրանից բացի: Ինչպես Օգոստինոսն է գրում. «Դու մղում ես մեզ, որ բերկրանք ապրենք՝ Քեզ փառավորելով, որովհետև Դու կազմել ես մեզ Քեզ համար, և մեր սրտերը չունեն հանգիստ, մինչև որ չգտնեն այն Քեզանում»[23]:

Թեև մարդու իրողությունը խիստ դժգույն է, այս մարդկային ճախողումը դրական կողմ ունի: Այն հրաշալի հնարավորություն է ընձեռում եկեղեցուն Ավետարանը քարոզելու համար, բայց այն դեպքում միայն, եթե եկեղեցին և նրա ուղերձը իրապես քրիստոնեական են: Առաջինը՝ մենք պետք է ազատ լինենք այս ժամանակաշրջանի ընդունված չափանիշներից և Աստծուն այլ բաներով փոխարինելու այս աշխարհի դատարկ փորձերից: Այս դատարկ աշխարհին վկայելու համար, Աստված պետք է լցնի և կշտացնի մեզ Իր կամքը կատարելու մեջ: Մեզ վրա բիծ է թողնում այն փաստը, որ թեև Արևմուտքի քրիստոնյաներն ամենահարուստ և ամենապաշտպանված հավատացյալներն են եկեղեցու պատմության մեջ, նրանք նույնպես ամենադատարկն են: Մեր քրիստոնեական գրախանութները վկայում են այդ մասին: Քանի՜ գրքեր են գրված՝ մեր դատարկությունը բժշկելու, մեր աննպատակ ընթացքը շտկելու և մեր ինքնագնահատականն ամրապնդելու համար: Այնուամենայնիվ, մենք դատարկ ենք միևնույն պատճառներով, որոնք անկարող էին դատարկություն առաջացնել Հիսուսի կյանքում: Նա հաճախ հոգնած, քաղցած, սխալ հասկացված, հալածված և լքված էր, սակայն երբեք դատարկ չէր: Այն թե ինչպես Հիսուսը բացատրեց Իր լիությունը, նաև ցույց է տալիս մեր դատարկության պատճառը. «Նա էլ ասաց նրանց. «Ես կերակուր ունեմ ուտելու, որ դուք չգիտեք... Իմ կերակուրը նա է, որ

21. Ծննդոց 5.3
22. Ծննդոց 3.16–24, Հակոբոս 3.9
23. Օգոստինոս, *«Սուրբ Օգոստինոս Երանելու՝ Հիպոնի եպիսկոպոսի խոստովանությունը»* (Լոնդոն, Ջ. Մ. Դենտ, 1950թ.), հտ. 1, էջ 1:

Ինձ Ուղարկողի կամքն անեմ և Նրա գործը կատարեմ»»[24]: Արևմուտքի քրիստոնյաները դատարկ են, քանի որ նրանք լցված են այս աշխարհով, կլանված են սեփական անձերով և թողված են իրենց կամքը կատարելուն: Դատարկությունից դեպի ճշմարիտ լիությունը անցում կատարելու համար պահանջվում է կտրուկ շրջադարձ՝ սեփական անձից դեպի Աստված և ինքնակամությունից դեպի Նրա կամքը:

Երկրորդը՝ եկեղեցին պետք է ձգտի լինել աստվածաշնչյան, ոչ թե՝ ընդունված: Մենք ազդեցություն չենք թողնի մեր մշակույթի վրա այն պատճառով, որ ուսումնասիրել ենք դրա ճանապարհները և հարմարվել ենք դրան: Մենք ազդեցություն կթողնենք և լույս կլինենք այն չափով միայն, որ չափով ուսումնասիրել ենք Աստծո ճանապարհները և հավատարիմ ենք մնացել դրանց մեր մշակույթի մոլեգնող և մշտապես փոփոխվող հոսանքի մեջ: Մենք ընդունված չենք լինի այս աշխարհի կողմից, եթե նմանվենք դրան: Մենք ընդունված կլինենք, եթե կտրականապես մերժենք այս աշխարհը և լինենք դրա ճիշտ հակառակը:

Ներկա խավարը մեծ հնարավորություն է եկեղեցու համար՝ լինելու այս երկրի աղը, բայց եթե մենք խառնվենք այն անմաքրություններին, որոնք պետք է բացահայտենք, մենք անպետք կդառնանք և դուրս կնետվենք՝ տրորվելու այն մարդկանց կողմից, որոնց կյանքերում ազդեցություն թողնելը մեր կոչումն էր[25]: Մենք մեծ հնարավորություն ունենք՝ լինելու սարի վրա գտնվող քաղաքը, բայց եթե այս լույսը, որն արձակում ենք, ընդամենը մեր մշակույթի գաղափարների և ցանկությունների քրիստոնեացված տարբերակն է, մենք նույնքան անպետք ենք, որքան մեր մշակույթը մտածում է մեր մասին[26]: Մենք պետք է հակառակվենք մեր սերնդի դատարկությանը սուրբգրային Ավետարանի աննկուն և փոխզիջման չգնացող ճշմարտություններով: Մենք պետք է հագենանք միայն Աստծով, նվիրված լինենք միայն Նրա կամքին և վերափոխվենք միայն Նրա պատկերով: Այդ ժամանակ մենք կլինենք Աստծո անբիծ և անարատ զավակները: Մենք կլինենք առանց մեղադրանքի այս կամակոր և ծռած ազգի մեջ: Մենք կկանգնենք ներկա խավարի մեջ որպես այս աշխարհի լույսեր՝ պահելով կյանքի խոսքը մինչև Քրիստոսի օրը[27]:

Այսպես ապրելը մեծ համարձակություն է պահանջում: Մենք պետք է հոժարաբար ոտքի կանգնենք և ասենք մարդկանց, որ նրանք հիմնովին և արմատապես սխալ են նշանակալիության, ինք-

24. Հովհաննես 4.32,34
25. Մատթեոս 5.13
26. Մատթեոս 5.14–16
27. Փիլիպեցիների 2.15,16

նագնահատականի և ինքնահիրացման իրենց փնտրտուքների մեջ: Մենք պետք է մերկացնենք հումանիզմի և նյութապաշտության կեղծ հույսերը և բացահայտենք չակերտավոր քրիստոնեության ցանկացած ձև, որը փորձում է բժշկել մարդկանց՝ առաջնորդելով նույն կեղծ հույսերի քրիստոնեացված տարբերակի մեջ: Մենք պետք է արհամարհենք Հիսուսից առավելագույնը կորզելու, նպատակի մեջ նպատակ գտնելու և ներկա ժամանակում լավագույն կյանքը կառուցելու ցանկացած փորձ: Մենք չպետք է ընդունենք այս աշխարհի տեսանկյունը, իսկ հետո շրջենք այն՝ քրիստոնեական դարձնելու համար: Մենք պետք է որոշենք մեր սահմանը և հաստատ կանգնենք Քրիստոսի և Նրա Ավետարանի ծայրահեղ ուսմունքների մեջ: Մենք պետք է քարոզենք այս ճշմարտությունները և լինենք մեր քարոզած ճշմարտության օրինակը: Մենք պետք է վնաս համարենք ամեն ինչ՝ Տեր Հիսուս Քրիստոսին ճանաչելու գերազանց արժեքի համար, և մենք պետք է աղբ համարենք ամեն ինչ, որ շահենք Քրիստոսին և գտնվենք Նրանում[28]:

28. Փիլիպեցիների 3.7–9

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍ

Մեղավորներ՝ մինչև ուղն ու ծուծը

«Որովհետև ամենը մեղանչեցին և Աստծո փառքից պակասված են»:

— Հռոմեացիների 3.23

Այս գլխում մենք կանդրադառնանք մի առանցքային ճշմարտության. մարդիկ մեղանչում են, քանի որ նրանք բարոյապես ապականված են ծնվել[1]: Ամենակարևոր բառերից մեկը, որ աստվածաբաններն օգտագործում են մարդու ներհատուկ բարոյական ապականությունը նկարագրելու համար, *«արատավորություն»* բառն է: Այս բառը լատիներենում կազմված է *«դե»* նախածանցից, որն ուժգնացման իմաստ ունի, և *«պրավուս»* արմատից, որը նշանակում է «ծռված կամ աղավաղված»: Ինչ-որ բան արատավոր անվանելը նշանակում է, որ դրա սկզբնական վիճակը կամ ձևը հիմնովին աղավաղված է: Մարդկային ցեղն արատավոր անվանելը նշանակում է, որ այն ընկել է իր արդարության սկզբնական վիճակից, և որ բոլոր մարդիկ ծնվում են որպես բարոյապես ապականված բնություն ունեցող մեղավորներ: Այս բարոյական ապականության ծավալը նկարագրելու համար աստվածաբանները հաճախ օգտագործում են տարբեր ձևակերպումներ՝ նույն ճշմարտությունը փոխանցելու համար: Ամենատարածված ձևակերպումներն են՝ *բացարձակ արատավորություն, հոգևոր մահ* և *բարոյական անկարողություն:*

ԲԱՑԱՐՁԱԿ ԱՐԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Բացարձակ արատավորություն արտահայտությունը երկար ժամանակ օգտագործվել է Բարեփոխման աստվածաբանների և մյուսների կողմից՝ մարդու անկում ապրած վիճակը նկարագրելու համար: Թեև պատշաճ կերպով սահմանելու դեպքում այս ձևակերպումը տեղին է, այնուամենայնիվ «տարածվող արատավորություն» և «արմատական

1. Սաղմոս 51.5, 58.3, Ծննդոց 8.21

արատավորություն» ձևակերպումներն ավելի պատշաճ են[2]: Այն, որ ամեն մարդ բացարձակապես արատավոր է, չի նշանակում, որ նա չափազանց վատն է կամ, որ նրա ամեն մի արարքը լիովին կամ կատարելապես չար է: Փոխարենը՝ դա նշանակում է, որ արատավորությունը կամ բարոյական ապականությունը ազդել է նրա ամբողջ էության՝ մարմնի, մտքի և կամքի վրա: Մենք ցույց կտանք, թե ինչ է նշանակում բացարձակ արատավորությունը, և ինչ այն չի նշանակում:

Առաջինը՝ բացարձակ արատավորությունը չի նշանակում, որ Աստծո պատկերը մարդու մեջ լիովին կորսվել է անկման ժամանակ: Մի քանի հատվածներում Աստվածաշունչը դեռ նշում է, որ մարդը ստեղծվել է «Աստծո պատկերով»[3]: Բացարձակ արատավորությունը նշանակում է, որ Աստծո պատկերը մարդու մեջ լրջորեն աղավաղվել է, և որ բարոյական ապականությունը լիովին արատավորել է նրան՝ նրա մարմինը, միտքը, զգացմունքները և կամքը[4]:

Երկրորդը՝ բացարձակ արատավորությունը չի նշանակում, որ մարդը չունի ոչ մի գիտելիք Աստծո Անձի կամ կամքի մասին: Աստվածաշունչը սովորեցնում է, որ բոլոր մարդիկ բավականաչափ գիտելիք ունեն ճշմարիտ Աստծո և Նրա կամքի մասին՝ այնքան, որ չեն կարողանա արդարանալ Նրա առջև դատաստանի օրը[5]: Բացարձակ արատավորությունը նշանակում է, որ առանց Աստծո շնորհքի հատուկ աշխատանքի՝ բոլոր մարդիկ մերժում են Աստծո ճշմարտությունը՝ գերադասելով իրենց ունայն մտածմունքները: Նրանք թշնամանքով են վերաբերվում Աստծո ճշմարտությանը և ձգտում են լռեցնել այն, որպեսզի Նրա ճշմարտությունն անհանգստություն չառաջացնի իրենց խղճի մնացորդի մեջ[6]: Մարդիկ բավականաչափ գիտեն Աստծո մասին, որ ատեն Նրան, և բավականաչափ գիտեն Նրա կամքի մասին, որ մերժեն դա և պատերազմեն դրա դեմ:

Երրորդը՝ բացարձակ արատավորությունը չի նշանակում, որ մարդը խիղճ չունի կամ՝ որ նա լիովին անզգա է բարու և չարի հանդեպ: Աստվածաշունչը սովորեցնում է, որ բոլոր մարդիկ խիղճ ունեն, որը, եթե այրված չէ, կարող է դրդել նրանց հիանալ առաքինի հատկանիշներով և գործերով[7]: Բացարձակ արատավորությունը նշանա-

2. «Տարածվել» բայը նշանակում է «թափանցել ինչ-որ բանի միջով. ներթափանցել ամեն մի մասի մեջ» (*Վեբսթերի բառարան*): Այսպիսով, արատավորությունը մեր բուն էության մեջ է և բխում է մեր անձի արմատից:

3. Ծննդոց 9.6, Ա Կորնթացիների 11.7, Հակոբոս 3.9

4. Մարմինը (Հռոմեացիների 6.6,12, 7.24, 8.10,13), միտքը (Հռոմեացիների 1.21, Բ Կորնթացիների 3.14,15, 4.4, Եփեսացիների 4.17–19), զգացմունքները (Հռոմեացիների 1.26,27, Գաղատացիների 5.24, Բ Տիմոթեոս 3.2–4) և կամքը (Հռոմեացիների 6.17, 7.14,15):

5. Հռոմեացիների 1.20

6. Հռոմեացիների 1.21–23, 1.18

7. Հռոմեացիների 2.15, Ա Տիմոթեոս 4.2

կում է, որ մարդիկ ամբողջ սրտով հնազանդ չեն իրենց խղճի մղումներին: Մարդն արդար չէ զուտ այն պատճառով, որ գիտի բարին և դատապարտում է չարը. նա արդար է, եթե կատարում է այն բարին, որը գիտի[8]:

Չորրորդը՝ բացարձակ արատավորությունը չի նշանակում, որ մարդն անկարող է առաքինի վարք ցուցաբերել: Կան մարդիկ, ովքեր սիրում են իրենց ընտանիքը, զոհաբերում են իրենց կյանքը՝ այլ մարդկանց փրկելու համար, կատարում են իրենց քաղաքացիական պարտականությունները և բարի գործեր են անում հանուն կրոնի: Բացարձակ արատավորությունը նշանակում է, որ այդ առաքինության դրդապատճառը Աստծո հանդեպ անկեղծ սերը և Նրա պատվիրաններից հնազանդվելու ճշմարիտ ցանկությունը չէ: Աստվածաշունչը վկայում է, որ ոչ ոք չի սիրում Աստծուն Նրան արժանի կերպով կամ համաձայն Նրա օրենքի, նաև՝ ոչ ոք չի փառավորում Աստծուն իր մտքով, խոսքով և գործով[9]: Բոլոր մարդիկ գերադասում են իրենց անձն Աստծուց, և մարդու անձնազոհությունը, հերոսական արարքները, քաղաքացիական պարտականությունները կատարելն ու արտաքին կրոնական բարի գործերը դրդված են ոչ թե Աստծո հանդեպ ունեցած սիրուց[10], այլ սեփական անձի կամ այլ մարդկանց հանդեպ ունեցած սիրուց,:

Հինգերորդը՝ բացարձակ արատավորությունը չի նշանակում, որ բոլոր մարդիկ չափազանց անբարո են, որ բոլոր մարդիկ հավասարապես անբարո են, կամ որ բոլոր մարդիկ անձնատուր են լինում այս աշխարհում գոյություն ունեցող ամեն տեսակի չարիքի: Բոլոր մարդիկ չէ, որ օրինազանց, շնացող կամ մարդասպան են: Բացարձակ արատավորությունը նշանակում է, որ բոլոր մարդիկ ծնվել են չարիքի հանդեպ մեծ հակվածությամբ և ընդունակ են վատագույն հանցանքների և ամենաամոթալի այլասերության: Ընդհանուր առմամբ, մարդկությունը հակված է ավելի ու ավելի բարոյապես ապականվելուն, և դա անհամեմատ ավելի արագ տեղի կունենար, եթե չլիներ Աստծո ընդհանուր շնորհքը, որը զսպում է այդ գործընթացը[11]: Մարդը չի կարող ազատվել այս սրընթաց անկումից կամ կանգնեցնել այն սեփական ջանքերով[12]:

Վերջապես, բացարձակ արատավորությունը չի նշանակում, որ մարդիկ չունեն Աստծուն հնազանդվելու անհրաժեշտ ընդունակություններ: Մարդը զոհ չէ, որը ցանկանում է հնազանդվել, բայց անկա-

8. Հռոմեացիների 3.10–12, 2.13,17–23, Հակոբոս 4.17
9. Երկրորդ Օրինաց 6.4,5, Մատթեոս 22.37, Ա Կորնթացիների 10.31, Հռոմեացիների 1.21
10. Բ Տիմոթեոս 3.2–4
11. Ա. Ա. Հոջ, *«Համառոտ աստվածաբանություն»* (Էդինբուրգ, «Banner of Truth»), էջ 329:
12. Երեմիա 13.23, Հռոմեացիների 7.23,24

րող է այնպիսի գործոնների պատճառով, որոնք նա չի վերահսկում: Աստված շնորհել է մարդուն միտք, կամք և ազատ ընտրության իրավունք: Այդ իսկ պատճառով, մարդը պատասխանատու է Աստծո առջև՝ որպես բարոյական էակ: Բացարձակ արատավորությունը նշանակում է, որ մարդը *չի կարողանում* հնազանդվել Աստծուն, քանի որ *չի կամենում*, և նա չի կամենում հնազանդվել, քանի որ նրանում թշնամություն կա Աստծո հանդեպ[13]:

ՀՈԳԵՎՈՐ ՄԱՀ

Եվս մեկ կարևոր արտահայտություն, որն աստվածաբաններն օգտագործում են մարդու բարոյական ապականության խորությունը նկարագրելու համար, *հոգևոր մահն* է: Պարտեզում Աստված զգուշացրեց Ադամին, որ նա կմահանա այն օրը, երբ ուտի արգելված ծառից[14]: Թեև ֆիզիկապես Ադամը մահացավ միայն շատ տարիներ անց, նա իրական հոգևոր մահ ապրեց այն պահին, երբ գերադասեց ինքնակամությունը հնազանդությունից և մեղանչեց Աստծո դեմ[15]: Իր ճակատագրական որոշման պատճառով Ադամն օտարացավ Աստծուց, և մահը տարածվեց նրա էության այն մասի վրա, որն Իր Արարչին ճանաչելու և Նրա հետ հաղորդակցվելու կարողություն էր տալիս: Կարճ ասած՝ նա հոգևոր դիակ դարձավ: Նա ֆիզիկապես ողջ էր, բայց հոգևորապես մահացած էր: Նա զգայուն դարձավ ամեն տեսակի անբարո ազդակների համար՝ թե՛ մարդկային, և թե՛ դիվական, սակայն անզգա դարձավ Աստծո Անձի և կամքի համար:

Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ Ադամի անհնազանդության ավերիչ հետևանքները չսահմանափակվեցին միայն իրենով. Ադամի ցեղի բոլոր ներկայացուցիչները հոգևորապես մահացած են ծնվում: Հետևյալ հիմքային հատվածը, որը Պողոսը գրել էր Եփեսոսի եկեղեցուն, հենց այս մասին է. «Եվ դուք, որ մեռած էիք հանցանքներում և մեղքերում, որոնցում մի ժամանակ գնում էիք այս աշխարհի սովորության պես՝ օդի իշխանության իշխանի պես, այն հոգու պես, որ հիմա ներգործում է ապստամբության որդիների մեջ, որոնց մեջ մենք ամենքս էլ մի ժամանակ ման էինք գալիս մեր մարմնի ցանկություններում՝ մարմնի և մտքի կամքը կատարելով, և բնությամբ բարկության որդիներ էինք, ինչպես ուրիշներն էլ»[16]: Այս հատվածում մենք տեսնում ենք, որ բոլոր մարդիկ գալիս են այս աշխարհ որպես հոգևոր մեռելածիններ՝ զուրկ ճշմարիտ հոգևոր կյան-

13. Հռոմեացիների 8.7,8
14. Ծննդոց 2.17
15. Ծննդոց 5.5
16. Եփեսացիների 2.1–3

քից և անզգա՝ Աստծո Անձի և կամքի հանդեպ: Նրանք օտարացած են Աստծո հետ ապրելու կյանքից և այնպես են ապրում, ասես իրենք մահացած են Նրա համար, իսկ Նա՝ իրենց համար[17]: Ահա թե ինչու է սաղմոսերգուն ասում մեզ, որ անկում ապրած մարդիկ չեն փնտրում Աստծուն, և իրենց բոլոր մտքերում Նրա համար տեղ չկա[18]: Անկում ապրած մարդը հաշվի չի առնում Աստծո գոյության փաստը և Նրա պատվիրանները պահելու անհրաժեշտությունը: Նա ապրում է գործնական աթեիստի պես. թեև կարող է ընդունել Աստծո կամ մեկ այլ աստվածության գոյությունը, բայց դա ոչ մի գործնական կամ փաստացի արդյունք չի ունենում նրա կյանքում: Նա մահացած է, նույնիսկ եթե ապրում է և պարծենում է այս կյանքով[19]: Նա քարե սիրտ ունի Աստծո հանդեպ և նման է անպտուղ աշնանային ծառի՝ երկու անգամ մեռած և արմատախիլ եղած[20]: Նա կենդանի դիակ է, որի արդարությունը նման է կեղտոտ ցնցոտիների, և նրա բոլոր կրոնական ջանքերը մահացած գործեր են[21]:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՆԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Եվս մեկ արտահայտություն, որը սերտորեն կապակցված է հոգևոր մահվան վարդապետության հետ, *բարոյական անկարողությունն* է: Այն հաճախ է օգտագործվում՝ նկարագրելու համար մարդու բարոյական ապականության չափը, և ցույց է տալիս, որ անկում ապրած մարդը չի կարող սիրել, հնազանդվել կամ հաճեցնել Աստծուն:

Լսելով բարոյական անկարողության վարդապետության մասին՝ ինչ-որ մեկը կհարցնի. «Ինչո՞ւ է մարդը պատասխանատու Աստծո առջև, եթե նա անկարող է անել այն, ինչ Աստված պատվիրում է»: Այս հարցի պատասխանը շատ կարևոր է: Եթե մարդը չսիրեր կամ չհնազանդվեր Աստծուն մտավոր ունակություններ չունենալու պատճառով, Աստծո կողմից նրան հաշվետու դարձնելն անարդար կլիներ, քանի որ մարդը զոհ կլիներ: Այնուամենայնիվ, մարդու դեպքում ամեն ինչ այլ է: Նրա անկարողությունը բարոյական է, և այն բխում է Աստծո հանդեպ ունեցած թշնամությունից[22]: Մարդը չի կարողանում սիրել Աստծուն, քանի որ նա ատում է Աստծուն[23]: Նա չի կարողանում հնազանդվել Աստծուն, քանի որ նա խորշում է Նրա

17. Եփեսացիների 4.18
18. Սաղմոս 10.4. «Անօրենը, իր երեսի ամբարտավանությամբ, չի փնտրում Նրան: Նրա բոլոր մտքերն են. «Աստված չկա»» (NASB): «Իր հպարտությամբ անօրեն մարդը չի փնտրում Նրան. նրա բոլոր մտքերում տեղ չկա Աստծո համար» (NIV):
19. Ա Տիմոթեոս 5.6, Հայտնություն 3.1
20. Եզեկիել 11.19, Հուդա 12
21. Եսայի 64.6, Եբրայեցիների 6.1, 9.14
22. Հռոմեացիների 5.10, 8.7,8
23. Հռոմեացիների 1.30

պատվիրաններից: Նա չի կարողանում հաճեցնել Աստծուն, քանի որ նա չի համարում, որ Աստծո փառքը և բարեհաճությունը արժանի նպատակներ են իր համար[24]: Մարդը ոչ թե զոհ է, այլ՝ հանցագործ: Նա *չի կարողանում,* քանի որ *չի կամենում:* Նրա ապականությունը և Աստծո դեմ ունեցած թշնամությունն այնքա՛ն մեծ են, որ նա ավելի շուտ պատրաստ է հավիտենական պատիժ կրել, քան ընդունել Աստծուն և հնազանդվել Նրա գերիշխանությանը:

Ահա թե ինչու բարոյական անկարողությունը նույնպես կարելի է հոժարակամ թշնամություն անվանել: Հովսեփի և նրա եղբայրների հարաբերությունները լավագույնս նկարագրում են այս ճշմարտությունը. «Եվ նրա (Հովսեփի) եղբայրները տեսան, որ իրենց հայրը սիրում էր նրան իր բոլոր եղբայրներից ավելի, ատեցին նրան, և խաղաղությամբ չէին կարողանում խոսել նրա հետ»[25]: Այս խոսքը շեշտում է, որ Հովսեփի եղբայրները չէին կարողանում ընկերաբար շփվել նրա հետ: Պատճառն այն չէր, որ նրանք չունեին խոսելու ֆիզիկական կարողություն. նրանց ատելությունը Հովսեփի հանդեպ այնքա՛ն մեծ էր, որ նրանք չէին կամենում ընկերաբար հաղորդակցվել նրա հետ: Նույն կերպով, անկում ապրած մարդու թշնամանքն Աստծո հանդեպ այնքա՛ն մեծ է, որ նա չի կարողանում ստիպել իրեն՝ սիրել Աստծուն կամ հնազանդվել Նրա պատվիրաններին:

Պատկերացրեք քաղաքական բանտարկյալի, որին արդարացիորեն բանտարկել են՝ թագավորին և երկիրը դավաճանելու համար: Մեկ օր արդար և ողորմած թագավորը մոտենում է նրա բանտախցին և բացում է դուռը: Նա խոստանում է լիարժեք ներում շնորհել այդ բանտարկյալին և ազատ արձակել միայն մեկ պայմանով, որ նա հրաժարվի իր ապստամբությունից, պատվի թագավորին և հնազանդվի նրա օրենքին: Լսելով թագավորի խոսքը՝ բանտարկյալը նետվում է դեպի դուռը և շրխկոցով փակում է այն՝ կրկին կողպելով իրեն սարսափելի բանտում: Դրանից հետո, իր բարկության պոռթկման մեջ, նա թքում է թագավորի վրա և բացականչում. «Ավելի լավ է՝ փտեմ այս խցում, քան ծնկի գամ քո առջև»: Չվերածնված սիրտը հենց այսպիսին է: Մարդու թշնամությունն Աստծո դեմ այնքա՛ն մեծ է, որ նա գերադասում է վատնել իր հավիտենությունը դժոխքում, քան տալ Նրան այն գնահատանքը, փառքը և հնազանդությունը, որոնց Նա արժանի է:

Աստվածաշունչը հաստատում է, որ մարդու կամքը ենթարկվում է նրա բնությանը: Եթե մարդը բարոյապես մաքուր բնություն ունենար, նրա կամքը հակված կլիներ բարոյապես մաքուր արարքների. նա

24. Հռոմեացիների 1.21
25. Ծննդոց 37.4

կսիրեր սուրբ և արդար Աստծուն, կարժևորեր Նրա պատվիրանները և կհնազանդվեր դրանց: Այնուամենայնիվ, անկում ապրած մարդը բարոյապես ապականված բնություն ունի. այնպես որ, նրա կամքը հակված է բարոյապես ապականված արարքների: Այսպիսով, նա ատում է սուրբ և արդար Աստծուն, երես է թեքում Նրա ճշմարտությունից և ապստամբում է Նրա պատվիրանների դեմ:

Հարցն այն մասին, թե արդյո՞ք մարդն ազատ կամք ունի, հաճախ է քննարկումների առարկա դառնում: Մենք գտնում ենք այս հարցի պատասխանը հենց անկում ապրած մարդու բնության և կամքի անխաթար կապի մեջ: Սուրբգրային պատասխանն այն է, որ մարդն ազատ է՝ ընտրելու այն, ինչ ուզում է, բայց քանի որ նա արատավոր է, ուզում է չարիք գործել: Այլ կերպ ասած՝ անկում ապրած մարդն ունի ազատ կամք, բայց նրա կամքը բարի չէ: Նրա կամքն իր արատավոր բնության գերին է: Այնպես որ, նրա որոշումները մշտապես հակառակվելու են Աստծո Անձին և կամքին: Հիսուսի ծայրաստիճան խիստ հանդիմանությունը փարիսեցիներին պարզորեն ցույց է տալիս սա. «Իժերի զավակնե՛ր, դուք ինչպե՞ս կարող եք բարի խոսել, որ չար եք»[26]:

Աստվածաշնչյան ճշմարտությունը բարոյական անկարողության մասին դրդեց Մարտին Լյութերին գրել իր հայտնի աշխատությունը, որը կոչվում է «Կամքի ստրկության մասին»: Վերնագիրը ցույց է տալիս, որ մարդը չի կարող խուսափել իր էությունից: Նա բնությամբ չար է: Նա միտումնավոր և ազատորեն չարիք է գործում: Անկում ապրած մարդը չար պտուղ է բերում, քանի որ նա «չար ծառ» է[27]: Նրա կամքը ենթակա է կամ ստրկացված է իր ապականված բնությանը: Հետևյալ էջերում կդիտարկենք այս ճշմարտության մի քանի զարհուրելի հետևանքներ:

ԱՆԿՈՒՄ ԱՊՐԱԾ ՄԱՐԴԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՃԱՆԱՉԵԼ ԱՍՏԾՈՒՆ

Աստծո շնորհալի նախախնամության միջոցով մարդկությունը մեծ մտավոր ձեռքբերումներ ունեցավ այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են գիտությունը, տեխնիկան և բժշկությունը: Այնուամենայնիվ, անկում ապրած մարդու գիտելիքն Աստծո մասին ընդամենը նման է հերձված և ունայն լաբիրինթոսի[28]: Այս անտեղյակության պատճառը ոչ թե թաքնված Աստված է, այլ՝ թաքնված մարդը: Աստված պարզորեն հայտնել է Իրեն մարդկությանը՝ արարչագործության, պատմության մեջ Իր գերիշխան գործերի, Սուրբ գրքի և, ի վեր-

26. Մատթեոս 12.34
27. Մատթեոս 7.18
28. Հռոմեացիների 1.21–23, Եփեսացիների 4.17–19

ջո, Իր մարմնավորված Որդու միջոցով[29]: Այնուամենայնիվ, մարդն արձագանքել է այս հայտնությանը՝ փակելով իր աչքերը և ականջները: Նա չի կարողանում ճանաչել ճշմարտությունը, քանի որ նա ատում է ճշմարտությունը և ձգտում է ճնշել այն[30]: Նա հակառակ է ճշմարտությանը, քանի որ դա Աստծո ճշմարտությունն է: Այդ ճշմարտությունը խոսում է նրա դեմ. սա է պատճառը, որ նա չի կարող դիմանալ դրան:

ԱՆԿՈՒՄ ԱՊՐԱԾ ՄԱՐԴԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՍԻՐԵԼ ԱՍՏԾՈՒՆ

Մարդկանց մեծ մասը, նույնիսկ ոչ կրոնական մարդիկ, պնդում են, որ ինչ-որ չափով սիրում են Աստծուն: Այնուամենայնիվ, Աստվածաշունչը վկայում է, որ անկում ապրած մարդը չի կարող սիրել Աստծուն: Իրականում, Աստվածաշունչը սովորեցնում է, որ Ադամի ամբողջ ցեղը՝ նրանք, ովքեր դեռ դարձի չեն եկել, ատում է Աստծուն և պատերազմում է Նրա դեմ[31]: Այս թշնամանքը գոյություն ունի, քանի որ բարոյապես ապականված արարածը պարզապես անկարող է հանդուրժել սուրբ և արդար Աստծուն և անկարող է դիմանալ Նրա կամքին հնազանդվելուն:

Կարևոր է նշել, որ մարդկանց մեծ մասը, ովքեր պնդում են, որ ի սրտե սիրում են Աստծուն, շատ քիչ բան գիտեն Նրա հատկանիշների և գործերի մասին՝ այնպես, ինչպես Աստծո Խոսքն է նկարագրում դրանք: Այդ իսկ պատճառով, այն աստված, որին նրանք սիրում են, ընդամենը նրանց երևակայության պտուղն է, և ուրիշ ոչինչ: Նրանք ստեղծել են աստծո՝ իրենց պատկերով, և սիրում են իրենց ստեղծածը: Ինչպես Աստված ազդարարեց սաղմոսերգուի միջոցով. «Դու մտածեցիր, որ Ես քեզ նման եմ, բայց ես կհանդիմանեմ քեզ» (NKJV)[32]:

Եթե մարդկանց մեծ մասը և նույնիսկ նրանք, ովքեր կրոնական են համարում իրենց, քննեին Սուրբ գրքերը, անկասկած կգտնեին այնպիսի Աստծո, որը մեծապես տարբերվում է այն աստծուց, որին նրանք իրենց սիրո առարկան են համարում: Եթե նրանք իսկապես տեսնեին Աստծո Խոսքի ուսմունքներն այնպիսի աստվածային հատկանիշների մասին, ինչպիսիք են սրբությունը, արդարությունը, գերիշխանությունը և զայրույթը, հավանաբար, զզվանքով կհակառակվեին դրան և կասեին. «Իմ Աստված այդպիսին չէ՛» կամ «Ես երբեք չեմ կարող սիրել նման Աստծո»: Այսպիսով, մենք անմիջապես

29. Հռոմեացիների 1.19,20, Բ Տիմոթեոս 3.16, Հովհաննես 1.18
30. Հռոմեացիների 1.18, Հոբ 21.14,15
31. Հռոմեացիների 1.30, 5.10
32. Սաղմոս 50.21

կտեսնեինք, որ երբ անկում ապրած մարդը հանդիպում է Աստվածաշնչի Աստծուն, նրա միակ հակազդեցությունը՝ Նրան վանելն ու մերժելն է: Ո՞րն է այս թշնամական հակազդեցության պատճառը: Կրկին, պատասխանն այն է, թե ով է մարդն իր էության խորքում: Եթե մարդը բնությամբ սուրբ և արդար լիներ, հեշտորեն կսիրեր սուրբ և արդար Աստծուն: Այնուամենայնիվ, մարդն իր բնությամբ արատավոր է և այդ պատճառով էլ չի կարող սիրել Նրան:

ԱՆԿՈՒՄ ԱՊՐԱԾ ՄԱՐԴԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՓՆՏՐԵԼ ԱՍՏԾՈՒՆ

Մենք ապրում ենք մի աշխարհում, որը լի է ինքնահռչակ՝ Աստծուն փնտրող մարդկանցով. այնուամենայնիվ, Աստծո Խոսքը լիովին կործանում է նրանց պարծանքը մեկ հասարակ պնդմամբ. «Չկա Աստծուն խնդրող (կամ՝ փնտրող)»[33]: Հաճախ մենք լսում ենք նորադարձներին, ովքեր սկսում են իրենց վկայությունն այսպիսի բառերով. «Տարիներ շարունակ ես փնտրում էի Աստծուն», բայց Աստվածաշունչը կրկին պատասխանում է. «Չկա Աստծուն խնդրող (կամ՝ փնտրող)»[34]: Մարդը անկում ապրած էակ է: Մարդն ատում է Աստծուն, քանի որ Նա սուրբ է, և հակառակվում է Աստծո ճշմարտությանը, քանի որ այն բացահայտում է իր արատավորությունը և ապստամբությունը[35]: Այդ իսկ պատճառով, մարդը չի կամենում ընդունել Աստծուն, այլ անում է հնարավորինս ամեն ինչ, որ խուսափի Նրանից և լիովին հեռացնի Նրա օրենքն իր խղճից: Անցյալի քարոզիչները հաճախ ամփոփում էին այս ճշմարտությունը հետևյալ պնդմամբ. «Մարդը նույնքան հակված է փնտրելու Աստծուն, որքան հանցագործը՝ դատական կատարածուի»[36]: Հիսուսը համամիտ է սրան. «Եվ սա է դատաստանը, որ լույսը եկավ աշխարհ, և մարդիկ խավարն ավելի սիրեցին, քան թե լույսը, որովհետև նրանց գործերը չար էին: Որովհետև ամեն չար գործող ատում է լույսը, և չի գալիս դեպի լույսը, որ նրա գործերը չհանդիմանվեն»[37]:

ԱՆԿՈՒՄ ԱՊՐԱԾ ՄԱՐԴԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՀՆԱԶԱՆԴՎԵԼ ԵՎ ՀԱՃԵՑՆԵԼ ԱՍՏԾՈՒՆ

Գոյություն ունի մի մեծ ընդհանուր հայտարար, որը միավորում է բոլոր կրոնները՝ քրիստոնեությունից բացի: Խոսքն այն համոզմունքի մասին է, որ ճիշտ դիրքն Աստծո առջև հիմնված է հնազանդութ-

33. Հռոմեացիների 3.11
34. Հռոմեացիների 3.11
35. Հովհաննես 3.19,20
36. Ադամի և Եվայի զուր «թաքնվելը» Ծննդոց 3.8-ում պարզորեն ցույց է տալիս սա:
37. Հովհաննես 3.19,20

յան, անձնական արժանիքների կամ Աստծուն հաճեցնելու կարողության վրա: Քրիստոնեությունն առանձնանում է բոլոր կրոններից՝ պնդելով, որ եթե Աստծո շնորհքի յուրահատուկ աշխատանքը չլինի, մարդիկ չեն կարող հնազանդվել և հաճեցնել Աստծուն[38]: Քանի որ մարդն անմաքուր է, նա զուրկ է արժանիքներից: Նույնիսկ նրա ամենաօրինակելի արարքները ընդամենը կեղտոտ ցնցոտիներ են սուրբ և արդար Աստծո առջև[39]: Այս պնդումն ամենախոնարհեցնող ճշմարտություններից մեկն է Աստվածաշնչում և ամենից շատ ատելության ու թշնամանքի արժանացածը Ադամի ցեղի կողմից: Այնուամենայնիվ, այն Ավետարանի կարևոր մասն է և պետք է քարոզվի մարդուն, մինչև որ նա զգա այս ճշմարտության ծանրությունը: Նա կորսված է՝ անհույս և անօգնական: Եթե նա փրկվի, դա տեղի կունենա միայն Աստծո օգնությամբ:

ԱՆԿՈՒՄ ԱՊՐԱԾ ՄԱՐԴԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԲԱՐԵՓՈԽԵԼ ԻՐԵՆ

Քսաներորդ դարը սկսվեց մեծ լավատեսությամբ, որ մարդը կարող է զարգանալ՝ ավելի լավ և ազնիվ արարած դառնալով: Այն պետք է բարեփոխումների դարաշրջան լիներ, սակայն ավարտվեց հուսահատությամբ և շփոթմունքով: Աստվածաշունչը պարզորեն սովորեցնում է, որ մարդը ծնվում է հոգևորապես մահացած և բարոյապես արատավորված: Սեփական անձը բարեփոխելու ցանկացած փորձ անհույս է և կավարտվի բացարձակ ձախողմամբ[40]: Նախահայր Հոբն աղաղակում էր. «Ես պիտի ամբարիշտ լինեմ (կամ՝ եթե ես պետք է դատապարտվեմ), ուրեմն, ինչո՞ւ համար զուր տեղը տանջվեմ: Եթե ձյան ջրի մեջ լվացվեմ և մոխրաջրով մաքրեմ ձեռքերս, այն ժամանակ էլ ինձ փոսի մեջ կկոխեիր, և իմ հանդերձը կզզվեր ինձնից»[41]: Աստված ազդարարեց Երեմիա մարգարեի միջոցով. «Որովհետև եթե բորակով լվացվես և շատ օճառ գործածես, քո անօրինությունը պիտի մնա Իմ առջև՝ իբրև արատ,- ասում է Տերը»[42]: Եվ կրկին. «Մի՞թե եթովպացին կփոխի իր մորթը, կամ ինձը՝ իր խայտուցները, որ դուք էլ կարողանայիք բարություն անել, որ սովորած եք չարություն անելու»[43]: Մարդն ունի միայն մեկ հույս, բայց մինչև կտեսնի այն, նա պետք է համոզված լինի իր բացարձակ անկարողության մեջ և հասկանա, որ ինքը սպառված է: Սա Ավետարանը քարոզելու աշխատանքի էական կողմերից մեկն է:

38. Հռոմեացիների 7.14–24, Եփեսացիների 2.4,5
39. Եսայի 64.6
40. Հոբ 9.29–31
41. Հոբ 9.29–31
42. Երեմիա 2.22
43. Երեմիա 13.23

ԱՆԿՈՒՄ ԱՊՐԱԾ ՄԱՐԴԸ ՍԱՏԱՆԱՅԻ ՍՏՐՈՒԿՆ Է

Սկզբում Ադամն ազատ էր՝ Աստծուն հնազանդվելու և ամբողջ երկրի վրա իշխելու համար[44]: Աստծո դեմ ապստամբելու պատճառով, նա և նրա ցեղը հայտնվեցին ապականության և ստրկության մեջ: Մեղանչումից ի վեր, ամեն մարդ ծնվում է՝ գերված իր ապականված բնությանը և ստրկացված սատանային: Թեև շատ քչերն են սատանայի հետևորդներ համարում իրենց, Աստվածաշունչը վկայում է, որ բոլոր մարդիկ ապրում են «օդի իշխանության իշխանի (սատանայի) պես», և որ նա ազդեցիկ կերպով գործում է նրանց միջոցով, ովքեր ապրում են Աստծուն անհնազանդ կյանքով[45]: Ավելին՝ Աստվածաշունչը վկայում է, որ ամբողջ աշխարհը գտնվում է չարի վերահսկողության ներքո, բոլոր մարդիկ ծնվում են նրա իշխանության ներքո, և նա որսում է բոլոր մարդկանց՝ իր կամքին ծառայեցնելու համար[46]:

Թեև ճիշտ է օգտագործել *ստրկացում* բառը՝ նկարագրելու համար մարդու կապը սատանայի հետ, մենք պետք է հասկանանք, որ մարդը զոհ չէ, որը պահվում է իր կամքին հակառակ: Մարդը մերժել է Աստծո իշխանությունը և «տրվել է» սատանայի իշխանությանը: Եվ ստրուկը, և՛ ստրկացնողը անկում ապրած արարածներ են, և նրանց միջև սերտ մերձավորություն կա[47]: Նրանք նման են իրար՝ բարոյական ապականությամբ և Աստծո դեմ ունեցած թշնամությամբ: Թեև այս պնդումը վանող է շատերի համար, այն, միևնույն է, ճշմարիտ է: Անկում ապրած մարդու և սատանայի միջև այն աստիճան բարոյական նմանություն կա, որ նախքան դարձի գալը, բոլոր մարդիկ կարող են իրավամբ սատանայի զավակներ կոչվել[48]:

ՄԻ՞ԹԵ ՄԵՆՔ ԻՍԿԱՊԵՍ ԱՅԴՔԱՆ ՎԱՏՆ ԵՆՔ

Անշուշտ, մենք ապրում ենք լավատեսական, բայց և պատրանքներով լի ժամանակաշրջանում, որը դնում է մարդուն տիեզերքի կենտրոնում և համարում է նրան ամեն ինչի չափանիշը: Առանց հաշվի առնելու իր դժգույն պատմությունը, իր տառապյալ խիղճը և Աստվածաշնչի ուսմունքները՝ մարդը համարձակ հայտարարություններ է անում իր առաքինության և արժանիքների մասին և պարծենում է ավելի պայծառ ապագայով: Նա ծածկում է իր անթիվ անբա-

44. Ծննդոց 1.27,28
45. Եփեսացիների 2.2
46. Ա Հովհաննես 5.19, Գործք 26.18, Բ Տիմոթեոս 2.26
47. Այս մերձավորության պատճառով Հովհաննես 8.44-ում Հիսուսն անվանում է սատանային անհավատի «հայրը»:
48. Ա Հովհաննես 3.8, Հովհաննես 8.44

րոյությունները և շարունակվող այլասերումը՝ պարզապես փոխելով բարոյականության կանոնները, արդարացնելով և բարի անվանելով այն, ինչը մի ժամանակ չար էր անվանվում[49]: Այս ազդեցիկ խաբեության պատճառով է, որ մենք պատասխանում ենք Աստվածաշնչի մեղադրանքին՝ ասելով. «Մի՞թե մենք իսկապես այդքան վատն ենք»: Աստվածաշնչի պատասխանը հետևյալն է. «Այո՛, մենք իսկապես այդքան վատն ենք»:

Աստվածաշունչը պարզորեն վկայում է, որ Աստված մեծ ջրհեղեղ բերեց ամբողջ աշխարհի վրա Նոյի օրերում[50]: Այս աստվածային դատաստանի պատճառը մարդկանց մեղսալի վարքն էր և խիստ անբարոյությունը: Աստվածաշունչը տալիս է մեզ հետևյալ բացատրությունը. «Եվ Տերը տեսավ, որ շատացել էր մարդկանց չարությունը երկրի վրա, և նրանց սրտի խորհուրդների բոլոր գաղափարները չար էին ամեն օր: Այն ժամանակ Տերը զղջաց, որ երկրի վրա մարդուն ստեղծեց, և Իր սրտի մեջ տրտմեց»[51]: Այս հատվածի ուշագրավ մասը պարզապես մարդկանց անօրինությունը չէ, այլև՝ դրա չափը. «նրանց սրտի խորհուրդների բոլոր գաղափարները չար էին ամեն օր»: Սա ամենաազդեցիկ պնդումներից մեկն է Աստվածաշնչում այն իրողության վերաբերյալ, որը մենք կոչեցինք մարդու բացարձակ, տարածվող կամ արմատական արատավորություն: Առաջին հայացքից, այս մեղադրանքը կարող է ծայրահեղական թվալ և կիրառելի համարվել երբևէ ապրած միայն մի քանի տխրահռչակ մարդկանց վերաբերյալ, որոնց խիղճը բացարձակապես այրված էր: Այնուամենայնիվ, ավելի մանրակրկիտ քննությունից հետո ակնհայտ է դառնում, որ սա վերաբերում է մեզնից ամեն մեկին:

Պատկերացրեք, որ մենք ունենայինք մի սարք, որը կարող էր վերափոխել մեր երբևէ ունեցած ամեն մի միտք տեսողական պատկերի, իսկ հետո տեսաֆիլմ պատրաստել և ցույց տալ այն բոլորին: Պատկերացրեք, որ մեր ամբողջ ընտանիքը, բոլոր ընկերները, ծանոթները, կոլեգաները և այլք, տեսնելու էին այդ ֆիլմը: Մի՞թե մենք չէինք անի հնարավորինս ամեն ինչ, որ թույլ չտայինք նրանց՝ տեսնել այն: Եթե նրանք տեսնեին այդ ֆիլմը, մի՞թե մեզ համար դժվար կամ անհնարին չէր լինի կրկին նայել նրանց աչքերի մեջ: Սակայն, եթե մենք, հակառակ ողջախոհությանը, համարձակ դիրքորոշում ունենայինք և պնդեինք, որ ոչ մի բանից չենք ամաչելու, մի՞թե դա չէր նշանակի, որ մենք կա՛մ ստում ենք, կա՛մ խաբված ենք, կա՛մ մեր

49. Եսայի 5.20,21. «Վա՜յ նրանց, որ չարին ասում են բարի, և բարուն՝ չար. որ խավարը շինում են լույս, և լույսը՝ խավար. որ դառը քաղցր են շինում, և քաղցրը՝ դառը: Վա՜յ նրանց, որ իրենց աչքին իմաստուն են, և իրենց առջև՝ գիտուն»:

50. Ծննդոց 7–9

51. Ծննդոց 6.5,6

խիղճն արդեն այրված է: Ճշմարտությունն այն է, որ նույնիսկ լավագույնները մեզնից այնպիսի պիղծ մտքեր են ունեցել, որ մենք չէինք կիսվի դրանցով նույնիսկ մեր ամենամոտ ընկերների հետ: Այս ամենը ցույց է տալիս, որ մեր մեջ կա այնպիսի բան, ինչն ուղղակի ճիշտ չէ: Մենք հակված ենք չարությանը և միտված ենք այն բաներին, որոնց մեր խիղճը հակառակվում է, և որոնք այն դատապարտում է: Այս փաստը եղել է մեծագույն բարդությունը, որին բախվել են ամենալուսավորված փիլիսոփաները, բարոյականություն քարոզող մարդիկ և աստվածաբանները մարդկային մտքի պատմության ամբողջ ընթացքում: Պողոս առաքյալն ամփոփում է մարդու երկվությունը՝ հառաչելով. «Որովհետև ինչ որ գործում եմ, չգիտեմ, որովհետև ոչ թե՝ ինչ որ կամենում եմ, այն եմ գործում, այլ ինչ որ ատում եմ, այն եմ գործում»[52]:

Կարևոր է հասկանալ, որ այն անօրինությունը, որը մենք նկարագրեցինք, չի սահմանափակվում նախաջրհեղեղային շրջանով[53]: Այլ կերպ ասած՝ ջրհեղեղի ջրերը չմաքրեցին մարդու հակվածությունը դեպի չարը, և Նոյը չկարողացավ թողնել ավելի լավ ժառանգություն, քան Ադամը: Անմիջապես այն բանից հետո, երբ ջրերն իջան, և Աստված պատվիրեց Նոյին դուրս գալ տապանից, Նա բացահայտեց այն մշտական արատավորությունը, որը մնացել էր մարդկանց սրտերում, և որը բնութագրելու էր նրանց չվերածնված վիճակը մինչև այս աշխարհի ավարտը. «Այլևս չեմ անիծի երկիրը մարդու պատճառով, որովհետև մարդու սրտի խորհուրդը չար է իր մանկությունից, և այլևս չեմ զարկի բնավ ոչ մի կենդանու, ինչպես արեցի»[54]:

Մինչև ջրհեղեղը, Աստված հայտնեց, որ մարդու սրտի խորհուրդների բոլոր գաղափարները չար են ամեն օր[55]: Ջրհեղեղից հետո շատ բան չփոխվեց: Աստված բացահայտեց ոչ միայն մարդու սրտի չարությունը, այլև դրա ծագումը: Այն բնակվում է մարդու սրտում՝ նրա ծնվելու պահից ի վեր: Այն մարդու ժառանգությունն է Ադամից[56]: Աստվածաշունչը չի բացատրում մեզ այս առեղծվածը, բայց հաստատում է, որ սա ճիշտ է: Մարդը հղացվել է մեղքի մեջ և ծնունդ ստացել անիրավությամբ. նա ծոված է իր մոր արգանդից և մոլորված է իր ծնվելու պահից[57]: Ահա թե ինչու կարիք չկա սովորեցնել երեխաներին եսասեր լինել կամ սուտ խոսել: Փոխարենը՝ ծնողները և այլ

52. Հռոմեացիների 7.15
53. Պատմական ժամանակահատվածը՝ Նոյի ջրհեղեղից առաջ:
54. Ծննդոց 8.21
55. Ծննդոց 6.5,6
56. Ծննդոց 5.3, Հռոմեացիների 5.12
57. Սաղմոս 51.5, 58.3

մեծահասակներ պետք է ջանասիրաբար աշխատեն, որ սովորեցնեն զսպել իրենց եսասիրությունը, խոսել ճշմարտությունը և մտածել այլ մարդկանց բարեկեցության մասին: Այն մարդը, ով կուզեր, որ մեկ օր երեխաները կառավարեին աշխարհը, երբեք չի տեսել այն բիրտ և անգութ աստիճանակարգությունը, որը հաճախ հաստատվում է փոքրիկ երեխաների միջև, և ականատես չի եղել այն բանին, ինչ կարող է տեղի ունենալ, երբ մի երեխա ուզում է վերցնել մյուսի խաղալիքը: Պատմությունը և ամենօրյա լուրերը վկայում են այն մարդու դեմ, ով համաձայն չէ այս խոսքերին:

Աստվածաշունչը սովորեցնում է, որ մարդը չարիք է գործում, քանի որ չարը բնակվում է նրա ներսում: Այս ներբնակված արատավորությունը թափանցում է նրա ամեն մի մտքի, խոսքի և գործի մեջ՝ ազդելով դրանց վրա: Եսայի մարգարեի հառաչանքն ազդեցիկ կերպով պատկերում է այս ճշմարտությունը. «Եվ մենք ամենքս պիղծ բանի պես ենք դարձել, և դաշտանի շորի (կամ՝ կեղտոտ հանդերձի) պես է մեր ամեն արդարությունը, և տերևի պես մենք ամենքս թոռոմել ենք, և մեր հանցանքները քամու պես վեր են առնում մեզ»[58]: Գոյություն ունեն շատ կարծիքներ այն մասին, թե ինչ նկատի ուներ Եսային՝ *«կեղտոտ հանդերձ»* գրելով: Այնուամենայնիվ, մեծամասնությունը համոզված է, որ խոսքը հագուստի մասին է, որը ծիսականորեն անմաքուր է դարձել, քանի որ դիպչել է մահացած մարդու, արյան հոսքի կամ բորոտության: Մենք կդիտարկենք այս երեք տարբերակներից վերջինը:

Պատմության ընթացքում բորոտությունը համարվել է ամենասարսափելի հիվանդություններից մեկը: Հենց այդ պատճառով է, որ այն ազդեցիկ և պատկերավոր նկարագրում է մեղքը: Բորոտությունը բզկտում է մարմինը՝ վերածելով այն նեխած և գարշահոտ զանգվածի: Այդ ախտն անտանելի է տառապողի համար, ինչպես նաև նրանց համար, ովքեր ստիպված են ականատես լինել դրան: Պատկերացրեք, որ ինչ-որ վայրում տեղական Լավատեսների ակումբը որոշում է վերցնել մի խեղճ բորոտի և ներկայացուցչական տեսք հաղորդել նրան: Նրանք մանրակրկիտորեն լողացնում են նրան և նրանից եկող գարշահոտությունը ծածկում են ամենաթանկ օծանելիքներով: Ավարտելով դա՝ լավագույն մետաքսից պատրաստված մաքուր սպիտակ հանդերձներ են հագցնում նրան և ի ցույց են դնում ամբողջ աշխարհին: Թեև նրանց աշխատանքը կարող է կարճատև օգուտ տալ այդ բորոտին, իսկ իրենց՝ գովեստի արժանացնել, այնուամենայնիվ, շատ ժամանակ չի անցնի, մինչև որ այդ առերևույթ փայլը սկսի մարել: Կարճ ժամանակ անց բորոտի մարմ-

58. Եսայի 64.6

նի թարախային արտադրությունը կկեղտոտի նրա հանդերձը, և շուտով նրա գարշահոտությունը բոլոր բուրմունքներից ավելի ուժգին կդառնա: Շուտով այդ մարդը, նրա հանդերձը և այն ամենը, ինչին նա կհպվի, բորոտությամբ ապականված կլինի:

Նույնը կարելի է ասել մարդու մասին: Անկախ այն կրոնական և բարոյական բարեփոխումներից, որոնք մարդը կարող է ընդունել՝ նա նույնն է մնում իր ներսում: Հիսուսը համեմատում է նրան բաժակի հետ, որը դրսից մաքուր է, իսկ ներսից լցված է պղծություններով, նաև՝ ծեփած գերեզմանի հետ, որը լի է մահացած ոսկորներով[59]: Ինչպես բորոտը, որի մարմնի թարախային արտադրությունը թափանցում է նրա հագուստով՝ դարձնելով այն նույնքան պիղծ, որքան հենց ինքն է, նույնպես էլ մարդու սրտի կամ բնության ապականությունը թափանցում է նրա ամեն մի մտքի, խոսքի և գործի միջով, և անմաքուր է դարձնում այդ ամենը: Ահա թե ինչու վերստին չծնված մարդը չի կարող ճիշտ դիրք ունենալ Աստծո առջև՝ իր գործերով կամ արժանիքներով: Լավագույնը, ինչ մարդը կարող է անել, նման է կեղտոտ և զզվելի հանդերձի Աստծո համար:

Այն, թե ինչպես ենք մենք հասկանում մարդու էությունը, հիմք է հանդիսանում որպեսզի հասկանանք Ավետարանը և ավետարանչությունը: Եթե մարդն իր էությամբ բարի է, կամ եթե մարդու ներսում դեռևս կա բարության մնացորդ կամ կայծ, նշանակում է՝ քարոզիչն ի զորու է համոզել մարդկանց, իսկ մարդիկ ի զորու են արձագանքել նրան: Այնուամենայնիվ, եթե մարդն անդառնալիորեն արատավորված է, միայն Աստծո գերբնական զորությունը կկարողանա բացել սիրտը և միտքը, շնորհել ապաշխարություն և պարգևել փրկարար հավատք[60]:

Որպես քրիստոնյաներ և Ավետարանի ծառայողներ՝ Աստված կոչ է անում մեզ ոչ միայն հռչակել Աստծո մեծությունը և Նրա շնորհքի առատությունը, այլև բացահայտել մարդու սրտի իրական վիճակը՝ Աստծո Խոսքի լույսի ներքո և Սուրբ Հոգու զորությամբ: Մարդու բարոյական ապականությունը բացահայտելու աշխատանքն է, որ դրդում է նրան վստահություն չունենալ մարմնի վրա և պարծենալ Քրիստոս Հիսուսով[61]: Մարդու բարոյական խավարը նման է ձյութի պես սև գիշերի, որի ֆոնի վրա փայլում են Աստծո շնորհքի և ողորմության զույգ աստղերը:

59. Մատթեոս 23.25–28

60. Գործք 16.14, Ղուկաս 24.45, Բ Տիմոթեոս 2.25, Եփեսացիների 2.8, Հռոմեացիների 12.3

61. Փիլիպեցիների 3.3

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳ

Արդար ցասում

«Աստված արդար դատավոր է, և Աստված ամեն օր բարկանում է ամբարշտի վրա»:

— Սաղմոս 7.11

«Ամբարտավանները չեն կենա Քո աչքի առջև. Դու ատում ես բոլոր անօրինություն գործողներին»:

— Սաղմոս 5.5

Ավետարանական շարժման մեծ մասը մոռացել է վերևում բերված խոսքերն այն աստիճան, որ այսօր դրանք նույնիսկ վիճահարույց չեն համարվում: Որքա՞ն հաճախ են քարոզիչներն ազդարարում Աստծո արդար ցասումը մեղավորների դեմ: Որքա՞ն հաճախ է ամբիոնը նույնիսկ անդրադառնում այնպիսի թեմաների, ինչպիսիք են աստվածային զայրույթը և սուրբ ատելությունը: Մի՞թե պատճառն այն է, որ մենք դադարել ենք ուսումնասիրել Աստվածաշունչը: Թե՞ մենք եզրակացրել ենք, որ դրա որոշ մասերն արդեն ոգեշնչված և գործածական չեն: Հնարավո՞ր է, որ մենք վախեցել ենք քաղաքական բարեկրթության և մշակույթի քմահաճույքների ստվերներից: Թե՞ համոզված ենք, որ քարոզելով ճշմարտությունը՝ եկեղեցին չենք մեծացնի:

Անկախ այն բանից՝ արդյո՞ք այս թեման հաճելի է մեր օրերում, Աստծո արդար ցասումը ճշմարիտ Ավետարանի հռչակման էական մասերից մեկն է: Այդ իսկ պատճառով, պետք է հասկանանք այս վարդապետությունը և այն շրջապատող ճշմարտությունները: Մենք նույնպես պետք է մտապահենք, որ հասկանալուց հետո դրանք պետք է ազդարարել: Մեր ուսումնասիրության նպատակն ընդամենը հավասարակշռված աստվածաբանություն ունենալը չէ, այլ՝ մեր կողմից բացահայտված ճշմարտությունները հռչակելը՝ Աստծո ժողովրդի օգտի համար: Սովորելու մեջ գրեթե ոչ մի ռիսկ չկա, բայց մեր սովորածը քարոզելը հաճախ շատ ռիսկային է: Այն ճշմարտությունները, որոնք մենք գիտենք, գրեթե ոչ մի վնաս չեն հասցնի մեզ

և գրեթե ոչ մի օգուտ չեն տա եկեղեցուն, եթե բանտարկենք դրանք մեր գրադարաններում:

Առաջին հարցը, որը պետք է տանք և՛ մարդկանց, և՛ ինքներս մեզ, հետևյալն է. «Մենք իսկապե՞ս ցանկանում ենք արդար Աստծո»: Միգուցե այս հարցն անսովոր և նույնիսկ անտեղի թվա, բայց, իրականում, այն շատ բան է հայտնում մեր մարդկային վիճակի և Աստծո առջև ունեցած մեր խնդիրների մասին:

Մի կողմից, մենք ցանկանում ենք արդար Աստծո: Սարսափելի կլինի նույնիսկ պատկերացնել կյանքն այնպիսի տիեզերքում, որը գտնվում է անարդար և ամենակարող էակի բացարձակ տիրապետության ներքո: Այս աշխարհի Հիտլերները միայն մի պահ են հայտնվում պատմության թատերաբեմում, և նրանց չարությունն արագորեն հեռացնում է նրանց: Այնուամենայնիվ, նրանց կործանարար ազդեցությունը թողնում է իր հետքը նաև հետագա սերունդների վրա: Այդ դեպքում, ինչպիսի՞ն կլիներ կյանքն անբարո և հավիտենական աստվածության անարդար իշխանության ներքո: Միայն միտքն այս մասին մղձավանջի է նման: Նրա անարդարությունը կդարձներ նրան անհետևողական, և նույնիսկ՝ քմահաճ: Նրա զորությունը սարսափելի կդարձներ նրան: Նույնիսկ եթե հիմնականում նա բարի լիներ մեր հանդեպ, չէր լինի ոչ մի երաշխիք, որ նրա բարությունը տևական է: Մենք կնմանվեինք նավաստիների խաղաղ ծովում, որոնք խելագարվում են՝ սպասելով կործանարար փոթորկի, որը կարող է սկսվել ամեն պահի: Չէր լինի ոչ մի վստահություն և ոչ մի ողջամիտ հիմք՝ հավատքի համար: Ներկա աշխարհը, որն օրորվում է անպատիժ անարդարության և անսանձ անբարոյականության լծի ներքո, չէր ունենա որևէ հույս, որ ապագայում բոլոր այդ անօրինությունները կուղղվեն: Այնպես որ, եթե սա քվեարկության հարց լիներ, բոլոր ողջամիտ մարդիկ կտային իրենց քվեները կատարելապես արդար Աստծո օգտին, Ում «մոտ անիրավություն... չկա»[1]: Աստված, Ով բացարձակապես արժանահավատ է, արդարությամբ կդատի աշխարհը և ուղղությամբ իրավունք կանի ազգերին[2]:

Մարդկության մեծ մասը ցանկանում է և նույնիսկ պահանջում է արդար Աստծո: Երբ աշխարհում մեծ անարդարություններ են տեղի ունենում՝ առանց ակնհայտ աստվածային միջամտության կամ դատաստանի, անուսում մարդիկ կանգնում են բիրտ գազանների պես և արդարադատություն են պահանջում երկնքից, բայց մտածող մարդը լուռ նստում է անկյունում՝ գլուխը բռնելով: Նա գիտի, որ երկու քարի արանքում է հայտնվել: Հետևելով իր խղճի թելադրանքին՝ Նա հասկա-

1. Բ Մնացորդաց 19.7
2. Երկրորդ Օրինաց 7.9, Սաղմոս 9.8

նում է, որ եթե Աստված տա մարդկանց այն արդարադատությունը, որը նրանք պահանջում են, բոլոր մարդիկ՝ ներառյալ մեծագույն պահանջներ ներկայացնողները, դատապարտվելու են: Ինչպես գրված է. «Արդար չկա, մեկն էլ չկա»[3]: Նրանք, ովքեր պահանջում են, որ այլ մարդիկ հայտնվեն մեղադրյալների աթոռին, պետք է հասկանան, որ դիմում են ներկայացնում նաև իրենց դատաստանի համար: Թեև ոչ բոլոր մարդիկ են գործել նույն վայրագությունները, միևնույնն է բոլորն են մեղանչել, և բոլորը ենթակա են դատապարտվելու մահվան և հավիտենական բաժանման սուրբ և արդար Աստծուց: Ցանկացած մարդ, ով փորձում է առանձնացնել իրեն այս աշխարհի մեծագույն մեղավորներից, կույր է իր արատավորության և իր գործերի չարության հանդեպ:

Ահա այն երկընտրանքը, որից ծագում է մեր հարցը. «Մենք իսկապե՞ս ցանկանում ենք արդար Աստծո»: Մենք իսկապե՞ս կուզեինք, որ Նա քններ մեն կյանքի ամեն մի կողմը՝ մտքերը, խոսքերը և գործերը, և կայացներ այն դատավճիռը, որին արժանի ենք: Միայն այն մարդը և այն մշակույթը, որոնց խիղճն արդեն վառված է, կցանկանային ենթարկվել նման քննության և ընդունել կատարելապես արդար Աստծո ատյանի ցանկացած որոշում:

Ճշմարտությունն այն մասին, որ Աստված կատարելապես արդար է, նման է երկսայր սրի: Գիտելիքն այն մասին, որ աշխարհը չի կառավարվում անբարո և ամենակարող էակի կողմից, մխիթարական է: Այնուամենայնիվ, այն մարդկանց համար, ովքեր դեռ խղճի գիտակցում ունեն, սա զարհուրելի ճշմարտություն է: Եթե Աստված իսկապես արդար է, եթե Նա սիրում է արդարությունը կատարյալ սիրով և ատում է անարդարությունը կատարյալ ատելությամբ, ինչպե՞ս Նա կարձագանքի այն չարիքին, որը կա մեր կյանքում:

ԱՐԴՅՈ՞Ք ԱՍՏՎԱԾ ԲԱՐԿԱՑԱԾ Է

Ժամանակակից քարոզիչների և ավետարանիչների համար անսովոր բան չէ իրենց ունկնդիրներին համոզելը, որ Աստված՝ բարկացած Աստված չէ, սակայն այս պնդումը լավագույն դեպքում մոլորություն է, և վատագույն դեպքում՝ հերձվածություն[4]: Այն չի կարող իրական մխիթարություն տալ մարդկանց: Համաձայն Սուրբ գրքի, Աստված՝ բարկացած Աստված է, և դա լավ է մեզ համար: Աստվածաշունչն ազդարարում է հետևյալը. «Նախանձոտ և վրեժխնդիր Աստված է Տերը, վրեժխնդիր է Տերը և բարկության տեր, վրեժ առ-

3. Հռոմեացիների 3.10

4. Շատ քարոզիչներ անգիտակցաբար փոխել են Ջոնաթան Էդվարդսի «Մեղավորները՝ բարկացած Աստծո ձեռքերում» քարոզի անունը՝ անվանելով այն «Մի փոքր անառողջ անհատները՝ մի փոքր դժգոհ աստվածության ձեռքում»:

նող է Տերը Իր ոսոխներից, և բարկություն պահող՝ Իր թշնամիների դեմ», «Աստված արդար դատավոր է, և Աստված ամեն օր բարկանում է ամբարիշտի վրա», և «Դու ահավոր ես, ո՛վ Տեր. ո՞վ կկանգնի Քո առջև Քո բարկության ժամանակ»[5]:

Երբ Աստծո սրբությունը, արդարադատությունը և սերը հանդիպում են մարդու արատավորությանը, անարդարությանը և սիրո բացակայությանը, դրա անխուսափելի հետևանքը աստվածային բարկությունը կամ ցասումն է. Նրա զայրույթն այնքա՛ն մեծ է, որ սաղմոսերգուն բացականչում է. «Ո՞վ գիտի Քո բարկության զորությունը, և Քո սրտմտությունը՝ Քո վախի պես»[6]: «Զայրույթ» բառը Հին Կտակարանում թարգմանվում է երեք եբրայերեն բառերից: Առաջինը *«քեսեպ»* բառն է, որը նշանակում է «զայրույթ, բարկություն և ցասում»: Երկրորդը *«հեմա»* բառն է, որը կարող է նշանակել «բարկություն, զայրույթ, զզվանք, կատաղություն, շիկացում», և նույնիսկ՝ «թույն»: Երրորդը «աֆ» բառն է, որը բառացիորեն նշանակում է «ռունգ» կամ «քիթ»: Այն ներկայացնում է Աստծո բարկությունը՝ նման վայրի կենդանու, որի ռունգերն ուռչում են կատաղության պահին: Այս այլաբանությունն այնքան էլ նրբին չէ, բայց շատ ազդեցիկ է:

Նոր կտակարանում «զայրույթ» բառը թարգմանվում է երկու հունարեն բառերից: Առաջինը *«օրգե»* բառն է, որը նշանակում է «զայրույթ կամ բարկություն»: Երկրորդը «թումոս» բառն է, որը նշանակում է «բարկություն, ցասում, եռանդ և կատաղություն»: Աստվածաշնչյան լայն համատեքստով, աստվածային զայրույթը նշանակում է Աստծո սուրբ դժգոհությունը և արդար ցասումը՝ ուղղված մեղավորի և նրա մեղքի դեմ:

Խոսելով Աստծո զայրույթի մասին՝ կարևոր է հասկանալ, որ այն անվերահսկելի, անտրամաբանական կամ եսակենտրոն զգացում չէ. Նրա զայրույթը բխում է Նրա սրբությունից, արդարությունից և սիրուց: Այն նաև Նրա իշխանության անհրաժեշտ կողմերից մեկն է: Իր էության պատճառով, Նա պետք է թշնամաբար հակազդի մեղքին: Աստված *սուրբ* է. այնպես որ, չարը վանում է Նրան, և Նա խզում է հարաբերություններն անօրենների հետ: Աստված *սեր* է, և նախանձախնդրությամբ սիրում է այն ամենը, ինչ բարի է: Նրա սաստիկ սերն արդարության հանդեպ դրսևորվում է հավասարապես սաստիկ ատելությամբ ամեն մի չարիքի հանդեպ: Այսպիսով, Աստծո սերը չի ժխտում Նրա բարկությունը, այլ, ընդհակառակը, հաստատում և երաշխավորում է այն: Աստված *արդար* է: Այնպես որ, Նա պետք է դատի և դատապարտի անարդարությունը: Մարդն Աստծո զայրույթի առարկան է այն պատճառով, որ նա որոշել է մարտահրավեր նետել

5. Նաում 1.2, Սաղմոս 7.11, 76.7
6. Սաղմոս 90.11

Աստծո գերիշխանությանը, խախտել Նրա սուրբ կամքը և դատաստանի ենթակա դառնալ:

Իր սրբությամբ, արդարությամբ և սիրով, Աստված ատում է մեղքը և հակառակվում է դրան սարսափելի, և հաճախ՝ կատաղի բարկությամբ: Նրա բարկությունը սարսռեցնում է երկիրը: Ազգերը չեն դիմանա Նրա բարկությանը, և ոչ ոք չի կարող կանգնել Նրա ցասման առջև[7]: Ամենազորավոր մարդիկ և հրեշտակները կհալվեն Նրա առջև՝ ինչպես վառվող հնոցի առջև հալչող փոքրիկ մոմե արձան[8]:

Այսօր շատերը մերժում են վարդապետությունը աստվածային ցասման մասին, ինչպես նաև՝ ցանկացած ուսմունք, որը նույնիսկ ենթադրում է, որ սիրող և ողորմած Աստված կարող է բարկացած լինել, կամ՝ որ դատաստանի ժամանակ Նա կարող է ուղղել Իր բարկությունը և դատապարտությունն ընդդեմ մեղավորի: Նրանք վիճարկում են, որ նման գաղափարները պարզապես հին ժամանակներում ապրող մարդկանց սխալական եզրակացություններ էին, որոնց պատկերացմամբ, Աստված թշնամական, վրիժառու և դաժան էր: Իհարկե, որպես քրիստոնյաներ, մենք պետք է մերժենք ցանկացած վարդապետություն, որը դաժան է համարում Աստծուն և անտեսում է Նրա գթասրտությունը: Այնուամենայնիվ, մենք չպետք է անտեսենք Աստվածաշնչի պարզ ուսմունքն աստվածային զայրույթի և պատժի մասին: Աստվածաշնչում կան բավականաչափ հղումներ Աստծո բարկության և զայրույթի մասին՝ այնքան, որ այս թեման առնվազն նույնքան ուշագրավ է, որքան Նրա սերը, բարությունը և գթասրտությունը:

Աստված գթած և ողորմած է, երկայնամիտ է և առատ է ողորմությամբ, սակայն Նա կպատժի չապաշխարող մեղավորին՝ Իր ստեղծվածների մեջ արդարադատություն հաստատելու և Իր սուրբ անունն արդարացնելու համար[9]: Իր փառքի մեծությամբ, Նա կխորտակի Իր դեմ ելնողներին և կուղարկի Իր բարկությունը, որ սպառի նրանց հարդի պես[10]: Նույնիսկ Նոր կտակարանում Նա նկարագրվում է որպես կործանարար կրակ, որպես Աստված, որը «բարկություն է բերում» այն աստիճան, որ ամենաազդեցիկ մեղավորները կաղաղակեն, որ սարերը և ժայռերն ընկնեն իրենց վրա և ծածկեն իրենց Նրա Գառան բարկությունից[11]: Ահա թե ինչու է Պողոս առաքյալն աղաչում մարդկանց չխաբվել և ապրել ըստ այն ճշմարտության, որ Աստծո բարկությունը գալու է անհնազանդության որդիների վրա[12]:

7. Երեմիա 10.10, Նաում 1.6
8. Այս գաղափարով ես պարտական եմ հովիվ Չարլզ Լեյտերին, ով հովվում է «Լեյք Ռոուդ Չեյփլ» եկեղեցին Միսսուրի նահանգի Կիրկսվիլ քաղաքում:
9. Ելից 34.6,7
10. Ելից 15.7
11. Եբրայեցիների 12.29, Հռոմեացիների 3.5, Հայտնություն 6.16
12. Եփեսացիների 5.6

Շարունակ կրկնվող պնդումն այն մասին, որ Աստված՝ բարկացած Աստված չէ, ճիշտ չէ, և այն որևէ կերպով չի կարող մխիթարել մարդկանց: Ինչպիսի՞ մխիթարություն կարելի է գտնել այնպիսի Աստծո մեջ, որը չեզոք է և վրդովմունք չի ցուցաբերում չարի հանդեպ: Ինչպե՞ս Աստված կարող է լինել բարի, սիրող և նույնիսկ՝ բարոյական, եթե Նրա ցասումը չի բորբոքվում ստրկավաճառության, Օսվենցիմի, կամ միլիոնավոր չծնված երեխաների կոտորածի պատճառով, որը տեղի է ունենում հանուն մարդկանց հարմարավետության: Երբ լսում ենք նման ոճրագործությունների մասին, մենք համակվում ենք բարոյական վրդովմունքի կամ բարկության զգացումով: Ավելին՝ եթե լինի ինչ-որ մեկը, ով որևէ կերպով չի ազդվի նման հրեշավորությունից, մենք կհամարենք նրան հրեշ՝ նման նրանց, ովքեր գործել են այդ արարքները: Այդ դեպքում, ի՞նչ ենք մենք հաղորդում մարդկանց, երբ հայտարարում ենք, որ Աստված՝ բարկացած Աստված չէ: Ինչպե՞ս կարող ենք արդարացնել մեր վրդովմունքն անարդարության հանդեպ, եթե մենք զրկում ենք Աստծուն նույն վրդովմունքն ունենալու իրավունքից:

Ի հակադրություն այն քարոզիչների պոետիկ երազկոտության, որոնք ցանկանում են ընդունելի դարձնել Աստծուն այս մարմնավոր աշխարհի համար՝ Սուրբ գիրքը սովորեցնում է մեզ, որ անսահմանորեն սուրբ, արդար և սիրող Աստված՝ զայրույթի Աստված է: Նա երբեք անտարբեր չէ չարիքի հանդեպ. Նրա զայրույթը բորբոքված է չարիքի դեմ՝ անշեջ կրակի պես: Նա ուղղում է Իր արդար ցասումը դեպի գրեթե անթիվ մեղքերը, որոնք ամեն վայրկյան գործվում են Իր դեմ: «Ահա Տիրոջ անունը հեռվից է գալիս, Նրա բարկությունը բորբոքված է, և բոցը՝ սաստիկ, ու շրթունքները լիքն են բարկությամբ, և լեզուն մաշող կրակի պես է»[13]: «Սիոնում վախենում են մեղավորները, դող է բռնել կեղծավորներին, թե մեզնից ո՞վ կարող է բնակվել լափող կրակում, մեզնից ո՞վ կարող է բնակվել հավիտենական բոցերում»[14]: «Ահա Տիրոջ մրրիկը բարկությամբ պիտի դուրս գա. շառաչող թաթառը պտտվելու է չարերի գլխին»[15]:

Մենք չպետք է խաբվենք՝ մտածելով, որ Աստծո անմար և լափող կրակը վառվում է միայն ամենահրեշավոր հանցագործությունների ժամանակ, կամ որ այն բորբոքվում է միայն ամենագարշելի մարդկանց համար: Աստծո համար գոյություն չունեն մեղքի տարբեր կարգեր՝ այնպիսի մեղքեր, որոնք բարկացնում են Նրան, և այնպիսի մեղքեր, որոնք նման արձագանք չեն առաջացնում Նրա մոտ: Աստվածաշունչը

13. Եսայի 30.27
14. Եսայի 33.14
15. Երեմիա 30.23

սովորեցնում է մեզ, որ ցանկացած մեղք անօրինություն է, ամեն տեսակի ապստամբություն կախարդություն է, և ամեն անհնազանդություն նման է պիղծ անբարոյության և կռապաշտության[16]: Աստծո բարկությունը գալիս է անհնազանդության որդիների վրա ցանկացած մեղքի պատճառով, և ցանկացած մեղքի հատուցումը մահ է[17]:

Մեր առաջին ծնողների մեղքը, և այն բարկությունը, որն այդ մեղքն առաջացրեց Աստծո մոտ, պարզորեն ցույց է տալիս ցանկացած ձևի և տեսակի մեղքի հրեշավոր բնությունը: Արգելված պտուղն ուտելը համեմատաբար անվնաս է թվում՝ մարդկային պատմության ոճիրների և լուրերով պատմվող հանցագործությունների համեմատ, սակայն նրանց մեկ ապստամբ արարքի պատճառով Աստծո զայրույթը բորբոքվեց, և աշխարհը դատապարտվեց: Այս փաստն առնվազն ցույց է տալիս մեզ, որ ցանկացած տեսակի մեղք հրեշավոր է սուրբ և արդար Աստծո համար, և նրանք, ովքեր մեղք են գործում, Նրա բարկության թիրախներն են[18]:

ԱՐԴՅՈ՞Ք ԱՍՏՎԱԾ ԱՏՈՒՄ Է

Արդյո՞ք Աստված ատում է: Արդյո՞ք այդ ատելությունն ուղղված է մարդկանց դեմ: Շատերը նույնիսկ մեկ քարոզ չեն լսել այս մասին և նույնիսկ չեն մտածել այս մասին: Միայն այս հարցը բավական է, որ հակասություններ առաջացնի և ստիպի չափավոր կրոնական մարդկանց մարտական կեցվածք ընդունել: Նույնիսկ նման բան ենթադրելը հակասում է մերօրյա ավետարանական քարոզիչների ուսմունքների մեծ մասին: Այնուամենայնիվ, Աստվածաշնչում Աստծո ատելությունը նույնքան իրական է, որքան Նրա սերը: Համաձայն Աստվածաշնչի՝ կան բաներ, որոնք սուրբ և սիրող Աստված ատում է, որոնցից նա խորշում է, զզվում է, և որոնց Նա նողկանքով է վերաբերվում: Ավելին՝ հաճախ այդ ատելությունն ուղղված է անկում ապրած մարդկանց դեմ:

Շատերը դեմ են ցանկացած ուսմունքի Աստծո ատելության մասին՝ այն կեղծ ենթադրության հիման վրա, որ Աստված սեր է, և այդ պատճառով չի կարող ատել: Թեև Աստծո սերն այնպիսի իրողություն է, որը վեր է մեր հասկացողությունից, այնուամենայնիվ, կարևոր է հասկանալ, որ հենց Աստծո սերն է Նրա ատելության պատճառը: Մենք չպետք է ասենք, որ Աստված սեր է, ուրեմն Նա *չի կարող* ատել. փոխարենը՝ Աստված սեր է, և այդ պատճառով Նա *պետք է* ատի: Եթե ինչ-որ մեկը ճշմարտապես սիրում է կյանքը, հասկանում է դրա

16. Ա Հովհաննես 3.4, Ա Թագավորաց 15.23
17. Եփեսացիների 5.6, Հռոմեացիների 6.23
18. Եփեսացիների 2.3, 5.6, Կողոսացիների 3.6

սրբությունը և համարում է այն պարգև Աստծուց, նշանակում է՝ նա պետք է ատի արհեստական վիժեցումը: Անհնար է ի սրտե և սրբորեն սիրել երեխաներին, բայց չեզոք դիրք գրավել մի երևույթի հանդեպ, որը կործանում է երեխաներին իրենց մայրերի արգանդում: Նույն կերպով, եթե Աստված ջերմեռանդորեն սիրում է այն ամենը, ինչ արդար ու բարի է, Նա պետք է նույն եռանդով ատի ամեն մի այլասերություն և չարիք:

Աստվածաշունչը սովորեցնում է մեզ, որ Աստված ոչ միայն ատում է մեղքը, այլև ուղղում է Իր ատելությունը բոլոր մեղանչողների դեմ: Բոլորիս սովորեցրել են մի հայտնի արտահայտություն. «Աստված սիրում է մեղավորին և ատում է մեղքը», բայց նման ուսմունքը ժխտում է այն, ինչ սովորեցնում է Աստվածաշունչը: Սաղմոսերգուն, Սուրբ Հոգու ոգեշնչմամբ գրեց, որ Աստված ատում է ոչ միայն անօրինությունը, այլև՝ «բոլոր անօրինություն գործողներին»[19]:

Մենք պետք է հասկանանք, որ անհնար է առանձնացնել մեղքը մեղավորից: Աստված չի պատժում մեղքը. Նա պատժում է այդ մեղքը գործողին: Մեղքը չէ, որ դատապարտվում է և դժոխք է ուղարկվում, այլ՝ այն գործող մարդը: Այս պատճառով, սաղմոսերգուն հայտարարեց. «Ամբարտավանները չեն կենա Քո առջև. Դու ատում ես բոլոր անօրինություն գործողներին»[20]: Եվ նույնպես. «Տերն Իր տաճարում է. Տիրոջ աթոռը Երկնքում է. Նրա աչքերը տեսնում են. Նրա արտևանունքները քննում են մարդկանց որդիներին: Տերը քննում է արդարին, բայց ամբարիշտին և անիրավություն գործողին ատում է Նրա անձը: Նա ամբարիշտների վրա որոգայթներ՝ կրակ ու ծծումբ կտեղա, և նրանց բաժակի բաժինն այրող մրրիկ կլինի: Որովհետև Տերն արդար է, արդարություն է սիրում»[21]:

Կարևոր է հասկանալ, որ վերևում բերված հատվածները միակը չեն Աստվածաշնչում. գոյություն ունեն շատ այլ սուրբգրային հատվածներ, որոնք հաստատում են նման արձագանքը սուրբ Աստծո կողմից: Ղևտացիների գրքում Տերը զգուշացրեց Իսրայելի ժողովրդին, որ նրանք չպետք է հետևեին այն ազգերի սովորույթներին, որոնց Նա քշում էր իրենց առջևից, իսկ հետո ավելացրեց. «Որովհետև այս բոլոր բաներն արեցին նրանք, և Ես զզվեցի նրանցից»[22]: Կրկին, Երկրորդ Օրինաց գրքում Նա զգուշացրեց Իր ժողովրդին, որ քանանացիները վտարվելու էին երկրից, քանի որ նրանք «Տի-

19. Սաղմոս 5.5. «Դու ատում ես նրանց, ովքեր անօրինություն են գործում» (NASB), «Դու ատում ես բոլոր անօրինություն գործողներին» (KJV), «Դու ատում ես նրանց, ովքեր սխալ են գործում» (NIV), «Դու ատում ես բոլոր չարագործներին» (ESV):

20. Սաղմոս 5.5

21. Սաղմոս 11.4–7

22. Ղևտացիների 20.23

ոոջ առջև գարշելի» էին, և որ ցանկացած մարդ, ով մասնակցություն կունենար նույն անիրավ արարքների մեջ, նրանց պես «պիղծ» կլիներ Նրա համար[23]: Սաղմոսների գրքում Աստված նկարագրեց Իր վերաբերմունքն անհավատ իսրայելցիների հանդեպ, ովքեր հրաժարվեցին մուտք գործել Խոստման երկիր՝ ասելով. «Քառասուն տարի զզվեցի այս ազգից»[24]: Վերջապես, Տիտոսի թղթում Պողոսը նկարագրում է այն մարդկանց, ովքեր դատարկ կամ մակերեսային հավատքի դավանություն էին անում՝ որպես «պիղծ» Նրա առջև, և Հովհաննեսը, գտնվելով Պատմոս կղզում, նկարագրում է կրակի լիճը որպես «պիղծերի» հավիտենական բնակավայր[25]:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ի՞նչ է նշանակում Աստվածաշնչի պնդումն այն մասին, որ Աստված ատում է մեղավորներին: Առաջինը՝ *«Վեբսթերի բառարանը»* սահմանում է ատելությունը որպես «խիստ թշնամության զգացում ինչ-որ մեկի հանդեպ», «այլ մարդու հանդեպ խիստ չարակամ վերաբերմունք», կամ «հակակրանք, զզվանք, նողկանք և խորշանք ինչ-որ մեկի հանդեպ»: Թեև այս խոսքերը խիստ են, Աստվածաշունչն օգտագործում է դրանց մեծ մասը, եթե ոչ՝ բոլորը, որպեսզի նկարագրի Աստծո վերաբերմունքը մեղքի և մեղավորի հանդեպ: Երկրորդը՝ մենք պետք է հասկանանք, որ Աստծո ատելությունը կատարյալ ներդաշնակությամբ գոյակցում է Նրա այլ հատկանիշների հետ: Ի տարբերություն մարդկանց, Աստծո ատելությունը սուրբ է, արդար է և բխում է Նրա սիրուց: Երրորդը՝ մենք պետք է հասկանանք, որ Աստծո ատելությունը՝ Նրա սիրո մերժումը չէ: Սաղմոս 5.5-ը չի մերժում Հովհաննես 3.16-ը կամ Մատթեոս 5.44,45-ը: Թեև Աստծո զայրույթը մեղավորի վրա է, թեև Նա բարկացած է ամբարիշտների վրա ամեն օր, ու թեև Նա ատում է բոլոր անօրինություն գործողներին, Նրա սերն այնպիսի բնույթի է, որ Նա կարող է սիրել նրանց, ովքեր Իր ատելության թիրախն են, և գործել հանուն նրանց փրկության[26]: Չորրորդը՝ թեև Աստված երկայնամիտ է Իր ատելության ներքո գտնվող մարդկանց հանդեպ և առաջարկում է նրանց Իր փրկությունը, գալու է մի ժամանակ, երբ Նա ետ է վերցնելու Իր առաջարկը, և հաշտությունն այլևս հնարավոր չի լինելու[27]:

23. Երկրորդ Օրինաց 18.12, 25.16
24. Սաղմոս 95.10
25. Տիտոս 1.16, Հայտնություն 21.8
26. Հովհաննես 3.36, Սաղմոս 7.11, 5.5
27. Հռոմեացիների 10.21

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑ

Սուրբ պատերազմ

«Բայց նրանք ապստամբեցին և բարկացրին Նրա Սուրբ Հոգուն, Նա էլ նրանց թշնամի դարձավ, և Ինքը պատերազմեց նրանց հետ»:

— Եսայի 63.10

«Նախանձոտ և վրեժխնդիր Աստված է Տերը, վրեժխնդիր է Տերը և բարկության տեր, վրեժ առնող է Տերը Իր ոսոխներից և բարկություն պահող՝ Իր թշնամիների դեմ»:

— Նաում 1.2

Մենք խոսեցինք Աստծո արդար ցասման մասին, որն արտահայտվում է Նրա բարկությամբ և զայրույթով: Այժմ կուղղենք մեր ուշադրությունը դրան առնչվող մեկ այլ թեմայի՝ այն թշնամությանը, որը գոյություն ունի Աստծո և չապաշխարած մեղավորի միջև: Ավետարանի քարոզիչը պարտավոր է զգուշացնել մարդկանց այն սուրբ պատերազմի մասին, որն Աստված հայտարարել է Իր թշնամիներին, և աղաչել մեղավորներին հաշտվել Նրա հետ, քանի դեռ շատ ուշ չէ: Աստված իսկապես համաներման առաջարկ է արել մեղավորին, բայց այն ինքնաբերաբար չի վերագրվում նրան: Գալիս է ժամանակ, երբ ձիթենու ճյուղը ետ կքաշվի, և հաշտության առաջարկը չեղյալ կհայտարարվի: Այդ ժամանակ մեղավորի միակ բաժինը կլինի «ահավոր դատաստանին սպասելը, և կրակի զայրույթը, որ հակառակվողներին կլափի... Սարսափելի բան է կենդանի Աստծո ձեռքն ընկնելը»[1]:

Ո՞Վ ՈՒՄ ՀԵՏ Է ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

«Աստված սիրում է մեղավորին և ատում է մեղքը» հայտնի արտահայտությունը ուղեկցվում է ևս մեկ հայտնի պնդումով. «Մարդը պատերազմում է Աստծո դեմ, բայց Աստված երբեք չի պատերազմում մարդու դեմ»: Հետևաբար, հիմնական շեշտադրումն արվում է մեղավորի թշնամության և Աստծո դեմ անդադար պատերազմելու

1. Եբրայեցիների 10.27,31

վրա, բայց գրեթե կամ բոլորովին ոչինչ չի ասվում այն մասին, որ Աստված անդադար պատերազմում է մեղավորի դեմ:

Չնայած այս ժամանակակից միտմանը ավետարանական շարժման մտածողության մեջ՝ անչափ կարևոր է հասկանալ, որ թշնամությունը Աստծո և մեղավորի միջև միակողմանի չէ, այլ՝ երկկողմանի: Երբ մարդիկ պատերազմ են հայտարարում Աստծո դեմ, Ինքը՝ Աստված, դառնում է նրանց թշնամին և պատերազմում է նրանց դեմ[2]: Թեև սա տագնապալի ճշմարտություն է, սակայն Աստվածաշունչը պարզորեն սովորեցնում է, որ Աստված Իր թշնամին է համարում չապաշխարած մեղավորին և պատերազմ է հայտարարել նրա դեմ: Մեղավորի միակ հույսը զենքերը վայր դնելը, սպիտակ դրոշը բարձրացնելը և անձնատուր լինելն է, քանի դեռ հավիտյան ուշ չէ[3]:

Նաումի գրքում գրված է. «Վրեժ առնող է Տերը Իր ոսոխներից և բարկություն պահող՝ Իր թշնամիների դեմ»[4]: Առաջին ճշմարտությունը, որը սովորեցնում է այս հատվածը այն է, որ հենց Աստված է թշնամի համարում մեղավորներին: Նա չի սգում այն պատճառով, որ մարդը թշնամացել է Իր հետ, այլ հայտարարում է, որ հենց Ինքն է դեմ մարդուն: Աստված է, որ գծում է առաջնագիծը և զորքեր է հավաքում: Երկրորդ ճշմարտությունը, որը մենք պետք է սովորենք, այն է, որ Աստված հարձակվում է: Նա պարզապես չի դիմակայում անօրեն մարդկանց հարձակումներին, այլ Ինքն է պատերազմական ճիչ արձակում և վազում նրանց դեմ Իր զայրույթի ամբողջ ուժով: Ինչպես սաղմոսերգուն զգուշացնում է, Աստված սրել է Իր թուրը պատերազմի համար, լարել է Իր աղեղը և մահացու գործիքներ է պատրաստել Իր թշնամիների դեմ: Եթե անօրենները չապաշխարեն, նրանք անշուշտ կկործանվեն Նրա բարկության պատճառով[5]:

Անչափ կարևոր է, որ հասկանանք և ընդունենք, որ ճշմարտությունը «սուրբ պատերազմի» մասին Հին ուխտի վերապրուկ չէ, և ո՛չ էլ որևէ նախնական կարծիք Աստծո մասին, որը զրոյացվել է Նոր կտակարանի աստիճանական հայտնությամբ: Փոխարենը՝ այն աստվածաշնչյան և հարատևող ճշմարտություն է, որը կարելի է տեսնել ամբողջ Սուրբ գրքում: Հռոմեացիների թղթում Պողոս առաքյալը գրում է. «Թե որ դեռ թշնամի էինք, Աստծո հետ հաշտվեցինք Նրա Որդու մահով»[6]: Թեև այս հատվածը փոխանցում է Աստծո և մարդու միջև փոխադարձ թշնամանքի գաղափարը, ավելի շատ

2. Եսայի 63.10
3. Հովիվ Չարլզ Լեյտերն առաջինն էր, ով գրավեց իմ ուշադրությունն այս գաղափարին:
4. Նաում 1.2
5. Սաղմոս 7.12,13
6. Հռոմեացիների 5.10

շեշտադրվում է ոչ թե մեղավորի թշնամությունն ընդդեմ Աստծո, այլ՝ Աստծո կողմից մեղավորին հակառակվելը: Գիտակցելով, որ այս հասկացությունը խորթ է ժամանակակից ավետարանական քրիստոնյաների ճնշող մեծամասնությանը՝ ես կառաջարկեմ դրա հետագա հաստատումը հետևյալ աստվածաբանների կողմից. Չարլզ Հոջը պնդում է. «Գոյություն ունի ոչ միայն մեղավորի չարակամ հակառակություն Աստծուն, այլև Աստծո սուրբ հակառակություն մեղավորին»[7]: Լուիս Բերկհոֆն ասում է. «Այնպես չէ, որ մարդիկ են թշնամաբար տրամադրված Աստծո հանդեպ, այլ հենց իրենք են Աստծո սուրբ դժգոհության առարկան»[8]: Եվ Ռոբերտ Լ. Ռեյմոնդը բացատրում է. ««Թշնամիներ» բառը, ամենայն հավանականությամբ, պետք է բացատրել կրավորական («ատելի Աստծո կողմից»), ոչ թե ներգործական («Աստծուն ատող») իմաստով: Այլ կերպ ասած՝ «թշնամիներ» բառը չի շեշտադրում մեր անսուրբ ատելությունն Աստծո հանդեպ, այլ՝ Աստծո սուրբ ատելությունը մեր հանդեպ»[9]:

Համաձայն այս գլխի սկզբում գտնվող աստվածաշնչյան խոսքերի՝ մեղանչել է մարդը, և տուժած կողմն Աստված է: Հաշտության համար, մարդու կողմից պատճառած տույժը պետք է հեռացվի, Աստծո արդարադատությունը պետք է բավարարվի, և Աստծո զայրույթն ընդդեմ մարդու պետք է խաղաղեցվի: Մենք գիտենք, որ Քրիստոսի մահը չառաջացրեց մարդկանց մեջ դրական հակվածություն Աստծո հանդեպ, քանի որ մարդկության մեծամասնությունը շարունակում է ատելությամբ հակառակվել Նրա Անձին և կամքին: Այնուամենայնիվ, Քրիստոսի մահը, անկասկած, գոհացրեց սուրբ Աստծո արդար պահանջները, ինչի շնորհիվ Նա կարող է դրականորեն տրամադրվել Իր թշնամիների հանդեպ և պարզել նրանց հաշտության ձիթենու ճյուղը՝ Ավետարանի միջոցով: Նրանք, ովքեր ապաշխարում են և հավատում են Քրիստոսին, փրկություն են ստանում, իսկ հրաժարվողները բարկություն են կիտում իրենց համար՝ Աստծո բարկության օրվա համար, երբ Նրա արդար դատաստանը, ի վերջո, կհայտնվի[10]:

Մենք երբեք չպետք է մոռանանք, որ Քրիստոսը, Ով տվեց Իր կյանքն ազգերի համար, նույն Աստված է, Ով զարկելու է ազգերը և հովվելու է նրանց երկաթե գավազանով[11]: Նույն Չարչարվող Ծառան,

7. Չարլզ Հոջ, *«Հռոմեացիների թղթի մեկնությունը»* (Լոնդոն, «Banner of Truth», 1989թ.), էջ 138:

8. Լուիս Բերկհոֆ, *«Համակարգված աստվածաբանություն»* (Էդինբուրգ, «Banner of Truth», 1993թ.), էջ 374:

9. Ռոբերտ Լ. Ռեյմոնդ, *«Քրիստոնեական հավատքի նոր համակարգված աստվածաբանություն»* (Նեշվիլ, «Thomas Nelson», 1998թ.), էջ 646:

10. Հռոմեացիների 2.5

11. Հայտնություն 19.15

որն անցավ Գողգոթայի ճանապարհը, մեկ օր տրորելու է Ամենակարող Աստծո բարկության և սրտմտության գինու հնձանը[12]: Այն Փրկիչը, Ով թափեց Իր արյունը Իր թշնամիների համար, կհայտնվի երկրորդ անգամ՝ Իր թշնամիների արյամբ ներկված հանդերձով[13]: Նույն Գառը, որը, փայտից կախված, կրեց Աստծո զայրույթը, թափելու է Աստծո զայրույթն Իր դեմ հավաքվածների վրա՝ այնքան, որ նրանք կաղաղակեն, որ սարերն ընկնեն իրենց վրա և թաքցնեն Նրա ներկայությունից[14]: Խաղաղության Իշխանը, որը հռչակեց Տիրոջ ընդունելի տարին, մեկ օր ազդարարելու է Նրա վրիժառության օրը[15]: Նա նույն Աստվածն է, Ով դատելու է, պատերազմելու է և առաջնորդելու է երկնային զորքերը Աստծո թշնամիների դեմ[16]: Ահա թե ինչու է սաղմոսերգուն հորդորում ազգերին պատիվ տալ Որդուն, որպեսզի Նա չբարկանա, և նրանք չկորչեն ճանապարհին, քանի որ Նրա բարկությունը կարող է շուտով բորբոքվել[17]:

Որպես Ավետարանի քարոզիչներ՝ մենք պետք է հռչակենք, որ Աստված սիրում է և պատրաստ է փրկել մարդկանց, բայց մենք չպետք է մի կողմ դնենք Աստվածաշնչի ակնհայտ և հաճախակի հանդիպող զգուշացումները: Մարդիկ պետք է պատրաստ լինեն դիմավորելու իրենց Աստծուն[18]: Նրանք պետք է շուտով միաբանվեն իրենց ոսոխի հետ, քանի դեռ ճանապարհին են Նրա հետ[19]: Քանի որ, եթե նրանք չապաշխարեն, Նա սրել է Իր թուրը և արդեն լարել է Իր բարկության աղեղը[20]: Նրանց համար, ովքեր հավատացին, քարոզիչը պետք է ազդարարի լիարժեք համաներում և հավաստիացում խաղաղության մեջ: Սակայն նրանք, ովքեր կհրաժարվեն հնազանդվել Ավետարանին, պետք է լսեն հավատարիմ ավետաբերից, որ Աստծո բարկությունը դեռ մնում է իրենց վրա[21]:

Ինչպիսի՜ հրաշալի և սարսափելի կոչում է շնորհվել Ավետարանի ծառայողին: Ոմանց համար նա կյանքի բուրմունք է, իսկ մյուսների համար՝ մահվան հոտ: Ո՞վ կարող է բավական լինել այս կոչման համար[22]:

12. Հայտնություն 19.15
13. Հայտնություն 19.13
14. Հայտնություն 6.16,17
15. Եսայի 9.6, 61.2, Ղուկաս 4.19
16. Հայտնություն 19.11,14
17. Սաղմոս 2.12
18. Ամոս 4.12
19. Մատթեոս 5.25
20. Սաղմոս 7.12,13
21. Հովհաննես 3.36
22. Բ Կորնթացիների 2.16

ԱՐԴՅՈ՞Ք ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԱԾՐ Է ԱՍՏԾՈՒՑ

Աստծո վրեժխնդրությունը սերտորեն կապակցված է Նրա զայրույթի հետ: Սաղմոսերգուն անվանում է Նրան «վրեժխնդրության Աստված», իսկ Նաում մարգարեն ներկայացնում է Նրան որպես վրեժխնդիր և ցասկոտ Տիրոջ, որը «վրեժ առնող է... Իր ոսոխներից, և բարկություն պահող՝ Իր թշնամիների դեմ»[23]: Մովսեսի երգը նույնիսկ մեծարում է Աստծո վրեժխնդրությունը: Սա Աստծո ամենասարսափազդու նկարագրություններից մեկն է ամբողջ Աստվածաշնչում. «Հիմա նայեք, որ Ես՝ ԵՍ ԵՄ, և Ինձ հետ միասին էլ աստված չկա: Ես կմեռցնեմ և կապրեցնեմ, և Ես կզարկեմ և կբժշկեմ, և Իմ ձեռքից ազատող չկա: Որովհետև Իմ ձեռքը դեպի երկինք եմ բարձրացնում և ասում. «Ես հավիտյան կենդանի եմ, եթե կայծակե սուրս սրեմ, ձեռքս դատաստանը բռնի, Իմ թշնամիներին վրեժխնդրություն կանեմ, և Ինձ ատողներին հատուցում կանեմ: Իմ նետերն արյունով կարբեցնեմ, և Իմ սուրը միս կուտի»[24]:

Ինչպե՞ս կարող ենք նման խոսքեր կարդալ՝ առանց դողալու: Ինչպե՞ս կարող ենք հավատալ այս ճշմարտությանը և չազդարարել այն: Ամովս մարգարեն հռչակեց. «Առյուծը մռնչացել է. ո՞վ չի վախենում: Տեր Աստված է խոսում. ո՞վ չի մարգարեանա»[25]: Պողոս առաքյալը գրեց. «Մենք էլ հավատում ենք և սրա համար էլ խոսում ենք»[26]: Նմանապես, եթե մենք հավատում ենք, որ Աստվածաշունչն անսխալական է, և Աստված անփոփոխ է, ինչպե՞ս կարող ենք չազդարարել այս բաները: Արդյո՞ք Նաում մարգարեի զգուշացումն ընդամենը անմիտ պոեզիա է՝ առանց գործնական կիրառության: Արդյո՞ք այն այլաբանություն է՝ առանց հստակ մեկնության: Մի՞թե այն գրվել էր ավելի առողջ մշակույթի համար, քան մերն է. արդյո՞ք այն չափազանց խիստ է ժամանակակից մարդու փխրուն անձի համար: Եթե Նաումի օրերում այս խոսքը ճշմարիտ էր Աստծո վերաբերյալ և անհրաժեշտ էր մարդկանց, նշանակում է՝ այսօր ոչինչ չի փոխվել: Սա ճշմարտություն է, և սա Ավետարանը քարոզելու կարևորագույն կողմերից մեկն է:

Համաձայն Աստվածաշնչի՝ մարդկանց պետք է զգուշացնել այն մասին, որ Աստված՝ վրեժխնդրության Աստված է: Այնուամենայնիվ, ինչպե՞ս մենք կարող ենք հաշտեցնել այս ճշմարտությունն Աստվածաշնչի այլ հատվածների հետ, որոնք պարզորեն ներկայացնում են վրեժխնդրությունը որպես անօրեն մարդկանց արատ[27]: Ինչպե՞ս կարող է սուրբ և արդար Աստված նույնպես վրեժխնդրության Աստ-

23. Սաղմոս 94.1, Նաում 1.2
24. Երկրորդ Օրինաց 32.39–42
25. Ամովս 3.8
26. Բ Կորնթացիների 4.13
27. Ղևտացիների 19.18, Ա Թագավորաց 25.25,30–33

ված լինել: Առաջինը՝ մենք պետք է հասկանանք, որ աստվածային վրեժխնդրությունը Աստվածաշնչի մշտապես հանդիպող թեմաներից է, և այդ պատճառով անժխտելի է: Երկրորդը՝ մենք պետք է հասկանանք, որ Աստծո վրեժխնդրությունը տարբերվում է անկում ապրած մարդու վրեժխնդրությունից. Նրա վրեժխնդրությունը դրդված է սրբության, արդարության և արդարադատության հանդեպ ունեցած նախանձավորությունից: Տերը ողորմած և գթած է, երկայնամիտ է և առատ է ողորմությամբ, բայց Նա նույնպես արդար է: Նա կպատժի մեղավորին, որպեսզի արդարացնի Իր անունը և արդարադատություն հաստատի Իր արարածների միջև[28]: Մարդու մեղքի զարհուրելի բնության լույսի ներքո Աստված արդար է, երբ վրեժ է լուծում Իր համար: Աստված երեք անգամ հարցնում է Երեմիայի գրքում. «Մի՞թե սրա համար այցելություն պիտի չանեմ (կամ՝ «պիտի չպատժեմ»),- ասում է Տերը, կամ սրա նման մի ազգից Իմ Անձը վրեժ պիտի չառնի՞»[29]: Թե՛ Օրենքի, թե՛ Մարգարեների գրքերում մենք գտնում ենք այս հարցի պատասխանը: Մովսեսը հաստատում է, որ Աստված Իրեն ատողների պատիժը չի ուշացնում՝ նրանց երեսով տալով, իսկ Եսային հայտարարում է, որ Նա կհանգստացնի Իր Անձն Իրեն նեղություն տվողներից և Իր վրեժը կառնի Իր թշնամիներից[30]:

Այսօր շատերը մերժում են աստվածային վրեժխնդրության վարդապետությունը և ցանկացած այլ ուսմունք, որը նույնիսկ ենթադրում է, որ սիրող և ողորմած Աստված կարող է վրեժ լուծել: Նույնիսկ այն ծառայողները, ովքեր ընդունում են այս վարդապետությունը՝ որպես Սուրբ գրքի ակնհայտ ուսմունք, հազվադեպ են ազդարարում այն ամբիոնից: Արդյունքում անհավատ աշխարհը, ինչպես և անկեղծ քրիստոնյաները, տեղյակ չեն Աստծո իրական բնավորության և մարդկանց մեղսալի արարքների հանդեպ Նրա ծայրահեղ արձագանքին:

Աստվածաշունչը զգուշացնում է մեզ, որ Աստծո զայրույթը գալիս է մարդկանց որդիների վրա, և խրատում է մեզ՝ մեր Աստծուն դիմավորելու համար[31]: Մեղավոր մարդիկ պետք է ահով ու դողով մտածեն այս ճշմարտությունների մասին, բայց նախ՝ քարոզիչները պետք է հայտնեն այս ճշմարտությունները: Մենք ունենք հանդիսավոր պարտավորություն՝ զգուշացնել մարդկանց վերահաս բարկության մասին[32]: Եթե մենք հրաժարվում ենք կատարել մեր ծառայության այս սպառնալի կողմը, պարտական կլինենք, և մեզ լսողների արյունը կպահանջվի մեր ձեռքերից: Ինչպես որ Աստված զգուշացրեց Եզե-

28. Ելից 34.6
29. Երեմիա 5.9,29, 9.9
30. Երկրորդ Օրինաց 7.10, Եսայի 1.24
31. Ամովս 4.12
32. Եփեսացիների 5.6

կիելին. «Ես ամբարիշտին ասելիս. «Ո՛վ ամբարիշտ, դու անպատճառ պիտի մեռնես», և դու եթե չխոսես ամբարիշտին՝ իր ճանապարհից զգուշացնելու համար, այն ամբարիշտը կմեռնի իր անօրինության համար, բայց նրա արյունը քո ձեռքից Ես կպահանջեմ»[33]:

Հաշվի առնելով այս մի քանի հատվածները Աստծո վրեժխնդրության մասին, որոնք դիտարկեցինք, կարելի է պարզապես լաց լինել՝ մտածելով, թե որքա՜ն անխոհեմ և անհավասարակշռված է դարձել մեր քարոզելը: Մեր իսկ քարոզները մատնում են մեզ՝ ցույց տալով, թե որքան կողմնակալ ենք դարձել մի շարք ճշմարտությունների հանդեպ, և որքան կանխակալ՝ մյուսների հանդեպ: Մենք կանչված ենք ազդարարելու Աստծո ամբողջական խորհուրդը և չպետք է ետ քաշվենք դրանից[34]: Մեզ իշխանություն չի տրվել ընտրելու, թե ինչ է պետք և ինչ պետք չէ քարոզել: Ժամանակակից մարդու կարիքների մասին մեր պատկերացման համաձայն՝ մարդ արարածներս, որոնց մյուսներին խրատելու արտոնություն է տրվել, պետք է հարցնենք մեզ, թե որքա՞ն հաճախ ենք հոչակում Աստծո դատաստանը, որը մարդկանց մեծ մասը պետք է հասկանա, սակայն բոլորովին չի ցանկանում լսել: Մենք պետք է հասկանանք, որ նման ձևով քարոզելու պակասը բացահայտում է մեր ամբիոնների անհետևողականությունը և բացատրում է, թե ինչու են մեր եկեղեցիների նստարաններին նստած մարդիկ անիրազեկ մի շարք հիմնարար ճշմարտություններից, որոնք վերաբերում են Աստծո բնավորությանը և մարդկանց հետ Նրա գործելակերպին:

Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, որում աստվածաբանական հավասարակշռությունը կոպտորեն խախտված է: Այսօր շատ է խոսվում Աստծո սիրո մասին, ինչը ճիշտ է, սակայն գրեթե ոչինչ չի խոսվում Նրա զայրույթի մասին: Եթե քարոզիչը խոսի Աստծո սիրո մասին ամբողջ քարոզի ընթացքում՝ առանց նույնիսկ մեկ անգամ հիշատակելու Նրա զայրույթը, հազիվ թե ինչ-որ մեկը հանդիմանի նրան: Այնուամենայնիվ, եթե քարոզիչը քարոզի Աստծո զայրույթի մասին իր քարոզի ընդամենը մի փոքր հատվածում, նրան, ամենայն հավանականությամբ, կկշտամբեն՝ անվանելով անհավասարակշռված, չարակամ և սիրուց զուրկ: Մենք ապրում ենք այսպիսի ժամանակաշրջանում: «Որովհետև ժամանակ կգա, որ ողջամիտ վարդապետությանը չեն համբերի, այլ իրենց հատուկ ցանկությունների համեմատ... իրենց լսելիքը ճշմարտությունից ետ կդարձնեն»[35]:

33. Եզեկիել 33.8
34. Գործք 20.27
35. Բ Տիմոթեոս 4.3,4

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹ

Ամենաթանկ պարգևը

«Ձրի են արդարանում Նրա շնորհքով՝ այն փրկության ձեռքով, որ Հիսուս Քրիստոսում է»:

— Հռոմեացիների 3.24

Վերջին մի քանի գլուխներում մենք դիտարկեցինք անկում ապրած մարդու բարոյական վիճակը, նրա համընդհանուր ապստամբությունն Աստծո դեմ և աստվածային դատաստանի զարհուրելի հետևանքները: Բոլոր մարդիկ դատապարտված են Աստծո առջև: Այնուամենայնիվ, այս գլխի աստվածաշնչյան հատվածում մենք բացահայտում ենք, որ քրիստոնյայի դիրքն Աստծո առջև արմատական փոփոխություն է կրել: Նա այլևս մեղավոր չի համարվում. նա արդարացվել է Տեր Հիսուս Քրիստոսի անունով:

ԱՐԴԱՐԱՑՈՒՄ

Մենք սովորում ենք Աստծո Խոսքից, որ Աստված արդար է[1]: Նրա գործերը կատարյալ են, և Նրա բոլոր ուղիները ճշմարիտ են: Նա հավատարիմ Աստված է, Ով չի աղավաղում արդարությունը[2]: Արդար լինելով՝ նա չի կարող բարոյապես չեզոք կամ անտարբեր լինել: Նա սիրում է արդարությունը և ատում է չարը[3]: Նրա աչքերը չափազանց սուրբ են՝ չարությանը հավանություն տալու համար, և Նա չի կարող բարեհաճությամբ նայել անօրինությանը[4]: Նա հաստատել է Իր գահը դատաստանի համար, և արդարությամբ կդատի աշխարհը[5]: Աստված բարկանում է ամեն օր, և եթե մարդը չապաշխարի, Նա կսրի իր սուրը և կպատրաստի Իր աղեղը դատաստանի համար[6]:

1. Սաղմոս 7.9
2. Երկրորդ Օրինաց 32.4, Հոբ 8.3
3. Սաղմոս 11.7, 5.5
4. Ամբակում 1.13
5. Սաղմոս 9.7
6. Սաղմոս 7.11,12

Աստվածաշնչի վկայությունն Աստծո արդարության և մարդու մեղավորության մասին կանգնեցնում է մեզ մեծ աստվածաբանական և բարոյական խնդրի առջև: Ինչպե՞ս կարող են մեղավոր մարդիկ կանգնել Աստծո արդարության առջև: Ինչպե՞ս կարող է արդար Աստված հաղորդակցվել անօրեն մարդկանց հետ: Սաղմոսերգուն այսպես է նկարագրում այս խնդիրը. «Ո՞վ վեր կգնա Տիրոջ սարը, և ո՞վ կկանգնի նրա սրբության տեղում: Նա, որ սուրբ է ձեռքով և անարատ սրտով, որ իր անձն անիրավության չի տալիս և երդում չի անում նենգությամբ: Նա օրհնություն կստանա Տիրոջից, և արդարություն՝ իր փրկության Աստծուց»[7]:

Ճիշտ դիրքն Աստծո ներկայության առջև պահանջում է բացարձակ կամ ոչնչով չսահմանափակվող բարոյական կատարելություն: Ամեն մի միտք, խոսք և գործ մարդու ծնվելու պահից մինչև նրա մահը պետք է կատարելապես համապատասխանի Աստծո բնությանը և կամքին: Փոքրագույն թերացումը կամ շեղումն այս չափանիշից անմիջապես որակազրկում է նրան: Բավական է նայել Ադամի մեղքին և անկմանը՝ հասկանալու համար, թե որքան խստապահանջ և անզիջում է Աստծո արդարությունը: Այնպես որ, երբ բարոյապաշտ մարդը հարցնում է՝ «ինչ պետք է *անեմ*՝ փրկվելու համար», մենք պետք է ներկայացնենք նրան կատարյալ հնազանդության պահանջը: Եթե, Աստծո շնորհքով, նա շփոթվի և հուսահատության հասնի, մենք կխոսենք Նրա հետ Քրիստոսի մասին:

Այն մարդը, ով ձգտում է վաստակել արդար դիրք Աստծո առջև, ամենաողորմելին և անհույսն է բոլոր արարածներից: Ադամի անկումից ի վեր ոչ մի մարդ այդպես էլ չի կատարել Աստծո արդար պահանջները: Մեր ձեռքերն անմաքուր են, և մեր սիրտն ապականված է[8]: Մենք մոլորված ենք՝ սկսած արգանդում լինելուց, և մեր սրտի առատությունից սուտ բաներ ենք խոսում[9]: Մենք չունենք ոչ մի զորություն կամ իրավունք՝ Նրա առջև կանգնելու համար: Մենք լիովին որակազրկում ենք մեզ: Եթե կարելի է անել թեկուզ ինչ-որ բան՝ մեր և Աստծո միջև բաժանությունը հեռացնելու համար, միայն Աստված կարող է անել դա: Արդարացումը պարգև է, որը տրվում է Նրա շնորհքով[10]:

«Արդարացնել» բառը թարգմանված է հունարեն *«դիկաիո՛ո»* բառից, որը նշանակում է «արդար հայտարարել կամ արդարացնել ինչ-որ մեկին»: Աստվածաշնչի համատեքստում և համաձայն փրկության վարդապետության՝ «արդարացված» բառը դատական կամ իրավաբանական պնդում է[11]: Աստծուն հավատացող մարդն արդարանում

7. Սաղմոս 24.3–5
8. Երեմիա 17.9
9. Սաղմոս 58.3, Մատթեոս 15.18,19
10. Հռոմեացիների 3.24
11. *«Դատական»* բառը լատիներենում *«ֆորենսիս»* բառն է, որը գործածվում էր շուկայական կամ հրապարակային հավաքատեղիների վերաբերյալ: Այս բառից կազմվում են դատական կամ իրավաբանական հասկացություններ, օրինակ՝ դատաբժշկությունը (բժշկական փաստերի օգտագործում դատական գործերում):

է, այսինքն՝ նրան արդարություն է հաշվեգրվում: Նա Աստծո առջև համարվում է կամ հայտարարվում է Արդար, և Աստված այդպես էլ վերաբերվում է նրան: Հռոմի եկեղեցուն ուղղված իր նամակում Պողոս առաքյալը գրում է. «Որովհետև գիրքն ի՞նչ է ասում՝ Աբրահամը հավատաց Աստծուն, և արդարություն համարվեց նրան»[12]:

Կարևոր է նշել հետևյալը. *«արդարացված»* բառը չի նշանակում, որ այն պահին, երբ մարդը հավատում է Աստծուն, արդար է դառնում: Եթե այդպես լիներ, հավատացող մարդը կվերափոխվեր կատարելապես արդար էակի, որն այլևս չի մեղանչում և նույնիսկ չի կարող մեղանչել: Ո՛չ էլ այս բառը նշանակում է, որ հավատացող մարդուն ներարկվում է հատուկ շնորհք, որը կարողություն է տալիս նրան վարելու ավելի արդար կյանք և վաստակելու արդար դիրք Աստծո առջև՝ իր գործերի հիման վրա: Եթե այդպես լիներ, փրկությունն այլևս հավատքով չէր լինի, և շնորհքն այլևս շնորհք չէր լինի[13]: Աստվածաշունչը, ինչպես նաև պատմության ընթացքում կազմված լավագույն հավատքի դավանանքները և Ավետարանի ճշմարիտ ծառայողները վկայում են, որ արդարացումը իրավաբանական դիրք է Աստծո գահի առջև: Այն մարդը, ով հավատում է Աստծո վկայությանը Նրա Որդու մասին, ներվում է իր բոլոր մեղքերից և արդար է համարվում Աստծո ատյանի առջև[14]: Վեստմինստերի հավատքի դավանանքը (11.1) այսպես է ձևակերպում այս ճշմարտությունը. «Նրանց, որոնց Աստված իրապես կանչում է, Նա նույնպես ձրիաբար արդարացնում է՝ ոչ թե արդարություն ներարկելով նրանց մեջ, այլ ներելով նրանց մեղքերը և նրանց անձերը որպես արդար ընդունելով, ոչ թե նրանցում գործած կամ նրանց կողմից կատարված ինչ-որ աշխատանքի պատճառով, այլ միայն հանուն Քրիստոսի... վերագրելով նրանց Քրիստոսի հնազանդությունը և քավությունը»:

ԱՐԴԱՐԱՑՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այնպես որ, արդարացումը հրաշալի և բազմաբովանդակ օրհնություն է, որն ընդունվում է՝ Հիսուս Քրիստոսի անձին և աշխատանքին հավատալով: Մենք կարող ենք ասել հետևյալը արդարացում ստացած քրիստոնյայի վերաբերյալ: Առաջինը՝ նրա բոլոր մեղքերը՝ անցյալ, ներկա և ապագա, ներված են և երբեք հաշվի չեն առնվի Աստծո դատաստանի առջև: Պողոս առաքյալը մեջբերում է Դավթին, որը գրում է. «Երանի՜ նրանց, որոնց անօրինություններ թողվեցին, և որոնց մեղքերը ծածկվեցին: Երանի՜ է այն մարդուն, որին Տերը մեղք չի համարի»[15]:

12. Հռոմեացիների 4.3, Գաղատացիների 3.6, Հակոբոս 2.23
13. Հռոմեացիների 11.6
14. Ա Հովհաննես 5.11
15. Հռոմեացիների 4.7,8

Այն մարդկանց համար, ովքեր մտածում են, որ Աստված գրեթե չի տարբերվում իրենցից, այս ճշմարտությունը կարող է ընդամենը թույլ գնահատանք առաջացնել և համեմատվել հովանավորչության հետ[16]: Այն մարդկանց համար, ովքեր մեծ կարծիք ունեն իրենց մասին, ովքեր չեն հասկանում բացարձակ արատավորության մասին հինավուրց և վախ ներշնչող վարդապետությունը, և ո՛չ էլ հավատում են դրան, այս ճշմարտությունը հաճելի է, բայց ոչ՝ զարմանալի: Այնուամենայնիվ, այն մարդու համար, ով հասկացել է, թե որքան արատավոր է իր սիրտը, և որքան ամոթալի են իր գործերն Աստծո առջև, այս ճշմարտությունն ավելի քան զարմանալի է: Այն ապշեցուցիչ է, ցնցող է, հափշտակիչ է, բացառիկ է, արտասովոր է, մտքից վեր է, շլացուցիչ է, գրեթե անհավանական է և զմայլելի է: Այս ճշմարտությունից զանգերը ղողանջում են, աչքերը լցվում են արցունքներով, և հնչում են փառաբանության բացականչություններ: Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ անհրաժեշտ է սովորեցնել խավար կողմի մասին, որպեսզի հայտնված լույսը սքանչելի թվա:

Երկրորդը՝ այն արդարությունը, որը Քրիստոսը վերագրեց քրիստոնյային, նշանակում է, որ քրիստոնյան արդար է հռչակված Աստծո առջև: *«Վերագրել»* բառը անչափ կարևոր աստվածաբանական տերմին է՝ թարգմանված հունարեն *«լոգի՛զոմա»* բառից, որը նշանակում է «համարել կամ հաշվեգրել»: Հավատացյալի համար դա նշանակում է, որ Քրիստոսի արդարությունը համարվում կամ հաշվեգրվում է իրեն: Այսպիսով, հավատացյալն արդար է Աստծո առջև ոչ թե իր առաքինությամբ կամ արժանիքներով, այլ՝ Տեր Հիսուս Քրիստոսի կատարյալ կյանքի և քավող մահվան միջոցով: Պողոս առաքյալը գրում է. «Եվ դուք Նրանից եք Հիսուս Քրիստոսում, որ Աստծուց մեզ համար եղավ իմաստություն և արդարություն և սրբություն և փրկություն»[17]:

Երկրային կյանքի և ծառայության ընթացքում Տեր Հիսուս Քրիստոսը վարվեց կատարյալ հնազանդությամբ Աստծո առջև: Պողոս առաքյալը վկայում է, որ Քրիստոսը «մեղք չգիտեր»[18]: Եբրայեցիների թղթի հեղինակը հայտնում է մեզ, որ Նա բախվեց բոլոր այն գայթակղություններին, որոնց մենք ենք բախվում, սակայն չմեղանչեց[19]: Սա Աստվածաշնչի ամենաապշեցուցիչ ճշմարտություններից մեկն է Հիսուսի Անձի վերաբերյալ: Լավագույն միջոցը՝ ինչ-որ բան իր ամբողջ մեծությամբ հասկանալու համար, համեմատությունն է: Մեր կյանքում երբևէ չի եղել այնպիսի պահ, երբ մենք սիրել ենք մեր Տեր Աստծուն այնպես, ինչպես Նա արժանի է: Այնուամենայնիվ, Հիսուսի կյանքում երբեք

16. Սաղմոս 50.21
17. Ա Կորնթացիների 1.30
18. Բ Կորնթացիների 5.21
19. Եբրայեցիների 4.15

չի եղել այնպիսի պահ, երբ Նա չի սիրել Իր Տեր Աստծուն Իր ամբողջ սրտով, անձով, մտքով և զորությամբ[20]: Կրկին, մեր կյանքում երբեք չի եղել այնպիսի պահ, երբ մենք գործել ենք Աստծո փառքի համար՝ չունենալով նույնիսկ մեկ կողմնակի շարժառիթ: Այնուամենայնիվ, Հիսուսի կյանքում երբեք չի եղել այնպիսի պահ, երբ Նա չի փառավորել Աստծուն կատարելապես և ամբողջությամբ՝ Իր էության ամեն մի մասնիկով: Ահա թե ինչու Հոր վկայությունը Նրա մասին մշտապես անսասան էր. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, Ում Ես հավանեցի»[21]:

Արդարացումը զարմանալի է այն առումով, որ Հիսուսի ապրած կատարյալ կյանքը վերագրվում է հավատացյալին կամ ավելանում է նրա հաշվին: Ավելին՝ սա տեղի է ունենում Հոր և Որդու կամքով: Քրիստոսը ձրիաբար, առատորեն և անսահման ուրախությամբ տվեց Իր արդարությունը: Հայրապետ Հովսեփը, ով Քրիստոսի խորհրդապատկերն է, ուներ գեղեցիկ գույնզգույն հանդերձ, որը չէր ցանկանում տալ իր եղբայրներին: Այնուամենայնիվ, Քրիստոսը, Ով ավելի մեծ է Հովսեփից, բերկրանք է ապրում՝ հագցնելով Իր եղբայրներին Իր աննկարագրելի արդարության բազմաբնույթ հանդերձը: Այս գեղեցիկ հանդերձը փառք է բերում ամենաթշվառ մեղավորին: Այն նաև զրահ է, որով կարելի է հակառակ կանգնել չարի կրակոտ նետերին[22]: Աստված նայում է Քրիստոսին հագած ամեն մի հավատացյալի և անվարան հայտարարում է. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, Ում Ես հավանեցի»:

Երրորդը՝ Աստծո գահի առջև արդար հայտարարվելուց հետո հավատացյալն արդար է համարվում: Աստվածաշունչն ազդարարում է, որ Քրիստոսը մեղք դարձավ մեր փոխարեն, որպեսզի մենք դառնանք Աստծո արդարությունը Նրանում[23]: Խաչի վրա Աստված դրեց բոլորիս անօրինությունը Նրա վրա[24]: Աստված դաժանաբար վարվեց Նրա հետ՝ այնպես, ասես թե Նա էր գործել բոլոր այն մեղքերը, որոնք կրում էր: Նա թողվեց Աստծուց, հարվածվեց Աստծուց, վիրավորվեց մեր մեղքերի համար և կրեց մեր խաղաղության պատիժը[25]: Նա կրեց աստվածային անեծքը և վերցրեց Իր վրա Աստծո զայրույթը, որը մենք առաջացրինք մեր մեղքերի պատճառով, սակայն, շնորհիվ Նրա չարչարանքի, այն պարտքը, որը մենք անկարող էինք վճարել, լիովին վճարվեց[26]: Հետևաբար, այժմ հավատացյալն արդար է համարվում և ստանում է այդ արդարության անսահման և անչափելի առավելությունները. Աստված վերաբերվում է մեզ որդիների պես: Սա զարմանա-

20. Մարկոս 12.30, Ղուկաս 10.27
21. Մատթեոս 3.17, 17.5, Մարկոս 1.11, 9.7, Ղուկաս 3.22, Բ Պետրոս 1.17
22. Եփեսացիների 6.16
23. Բ Կորնթացիների 5.21
24. Եսայի 53.6
25. Սաղմոս 22.1, Մատթեոս 27.46, Մարկոս 15.34, Եսայի 53.5
26. Հովհաննես 19.30

լի ճշմարտություն է, որը վերափոխում է այն, թե ինչպես է հավատացյալը դիտարկում իրեն: Մենք այն մեծ փոխանակման հասցեատերերն ենք, որը կոչվում է «արդարը՝ անարդարների փոխարեն»[27]:

Չորրորդը և վերջինը՝ քրիստոնյան խաղաղություն ունի Աստծո հետ՝ հավատալով Քրիստոսի քավչարար աշխատանքին: Պողոս առաքյալը գրում է. «Արդ մենք, հավատքով արդարացած լինելով, Աստծո հետ խաղաղություն ունենք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքով»[28]: Նախկին թշնամության լույսի ներքո սա գրեթե անհերևակայելի օրհնություն է: Արդարացման պարգևի միջոցով քրիստոնյան այլևս բարկության որդի չէ, այլ՝ Աստծո Որդի[29]: Ստանալով արդարացում Քրիստոսի քավչարար մահվան միջոցով՝ մենք կփրկվենք Նրանով Աստծո բարկությունից[30]: Այս փառավոր ճշմարտությունն է, որ դրդեց Պողոս առաքյալին նկարագրել քրիստոնյային հետևյալ կերպով. «Դուք դարձաք կուռքերից դեպի Աստված, որ ծառայեք կենդանի և ճշմարիտ Աստծուն, և սպասեք նրա Որդուն Երկնքից, Ում հարություն տվեց մեռելներից՝ Հիսուսին, որ փրկում է մեզ գալու բարկությունից»[31]:

ՇՆՈՐՀՔ

Հավանաբար, արդարացման ամենազարմանալի փաստն այն է, որ այն տրված է Աստծո շնորհքով կամ անսահման բարեհաճությամբ: Ամբողջ Աստվածաշունչը միանշանակ համաձայնում է այս ճշմարտության հետ. հավատացյալը «ձրի է արդարանում՝ Նրա շնորհքով»[32]:

«Ձրի» կամ «ձրիաբար» բառը հունարեն *«դորեան»* մակբայից է, որը բառացիորեն նշանակում է «ձրիաբար, անարժանաբար կամ առանց պատճառի»: Տեր Հիսուս Քրիստոսն օգտագործում է նույն բառը՝ ցույց տալու համար, որ Ինքը բոլորովին արժանի չէր այս աշխարհի թշնամությանը. «Այլ այս եղավ, որպեսզի այն խոսքը կատարվի, որ նրանց օրենքում գրված է, թե՝ «զուր տեղն ատեցին Ինձ»»[33]:

Քրիստոսն առանց մեղքի էր[34]: Նույնիսկ Նրա թշնամիները չէին կարողանում արդարացի մեղադրանք ներկայացնել Նրա դեմ[35]: Նա երբեք ոչ ոքի առիթ չտվեց Իրեն ատելու համար: Նույն կերպով, մենք երբեք որևէ առիթ չտվեցինք Աստծուն, որ Նա արդար համարեր մեզ Իր առջև: Նույնիսկ մեր կյանքի հպանցիկ ուսումնասիրութ-

27. Ա Պետրոս 3.18
28. Հռոմեացիների 5.1
29. Եփեսացիների 2.3, Գաղատացիների 4.5
30. Հռոմեացիների 5.9
31. Ա Թեսաղոնիկեցիների 1.9,10
32. Հռոմեացիների 3.24
33. Հովհաննես 15.25
34. Եբրայեցիների 4.15, Բ Կորնթացիների 5.21
35. Հովհաննես 8.46

յունը՝ նախքան դարձի գալը, կապացուցի, որ մեզ համար լիովին անհնար էր վաստակել մեր արդարությունը մեր արժանիքներով, և որ այլևս ոչինչ չէր կարող փրկություն տալ մեզ՝ Աստծո շնորհքից բացի: Աստված չարդարացրեց մեզ *այն պատճառով*, թե ինչպիսին ենք մենք, այլ՝ *չնայած* դրան: Նույնպես, Աստված չփրկեց մեզ ինչ-որ ներհատուկ արժեքի կամ անձնական արժանիքների պատճառով: Պատճառը շնորհքն էր և միայն շնորհքը:

Շնորհքով՝ հավատքի միջոցով արդարանալու վարդապետությունը այն է, ինչ առանձնացնում է քրիստոնեությունը աշխարհի բոլոր կրոններից: Պատկերացրեք մի հարցազրույց աշխարհիկ լրագրողի և երեք խոշորագույն համաշխարհային կրոնների՝ հուդաիզմի, իսլամի և քրիստոնեության ներկայացուցիչների միջև:

Սկզբում լրագրողը հարցնում է ուղղադավան հրեային.

– Եթե հենց հիմա մահանայիք, ո՞ւր կգնայիք, և ո՞րն է ձեր հույսի պատճառը:

– Ես Երկինք կգնամ,– պատասխանում է հրեան: – Ես սիրում եմ Տորան՝ Աստծո Օրենքը, և հնազանդվում եմ դրան: Ես քայլել եմ արդարության ճանապարհով: Իմ գործերը խոսում են իմ փոխարեն:

Դրանից հետո լրագրողը տալիս է նույն հարցը մուսուլմանին.

– Եթե հենց հիմա մահանայիք, ո՞ւր կգնայիք, և ո՞րն է ձեր հույսի պատճառը:

– Ես Երկինք կգնամ,– պատասխանում է մուսուլմանը: – Ես սիրում եմ Ղուրանը: Ես հետևել եմ Ալլահի մեծագույն մարգարեի ուսմունքներին: Ես սուրբ ուխտագնացություններ եմ արել, հավատարիմ եմ եղել աղոթքների մեջ և ողորմություն եմ տվել աղքատներին: Ես արդար մարդ եմ:

Եվ վերջում լրագրողը տալիս է նույն հարցը քրիստոնյային.

– Եթե հենց հիմա մահանայիք, ո՞ւր կգնայիք, և ո՞րն է ձեր հույսի պատճառը:

– Ես Երկինք կգնամ,– պատասխանում է քրիստոնյան: Սակայն նա ավելացնում է և՛ ուրախ, և՛ կոտրված սրտով, – մեղքի մեջ հղացավ ինձ իմ մայրը, և մեղքի մեջ ես ծնվեցի: Ես խախտել եմ Աստծո բոլոր օրենքները և արժանի եմ մեծագույն դատապարտության:

Լրագրողն ընդհատում է նրան և բացականչում.

– Ես չեմ հասկանում ձեր հույսի պատճառը: Ես հասկանում եմ ուղղադավան հրեային և նվիրված մուսուլմանին: Նրանք Երկինք են գնալու և կանգնելու են Աստծո ներկայության մեջ իրենց առաքինության, արժանիքների և գործերի շնորհիվ, բայց դուք պնդում եք, որ զուրկ եք այդ անհրաժեշտ հատկանիշներից: Ինչպե՞ս կարող եք արդար լինել Աստծո առջև: Ո՞րն է ձեր հույսի հիմքը:

Քրիստոնյան ժպտում է և պատասխանում.

– Աստծո ներկայության մեջ մուտք գործելու իմ հույսը հիմնված է մեկ այլ անձնավորության առաքինության և արժանիքների վրա՝ Հիսուս Քրիստոսի, Ով իմ Տերն է:

Ահա թե ինչպիսին է եղել ամեն մի քրիստոնյայի վկայությունը, որն ապրել է այս երկրում առաքյալների առաջին իսկ օրվանից մինչև հիմա, և այն կմնա քրիստոնեության եզակի վկայությունը մինչև այս աշխարհի ավարտը: Պողոս առաքյալը գրում է. «Եվ հենց ամեն բան էլ մնաս եմ համարում իմ Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գիտության համար, որի պատճառով ամեն բանից զրկվեցի և աղբ եմ համարում, որ Քրիստոսին շահեմ և Նրանում գտնվեմ, և ոչ թե իմ արդարությունն ունենամ, որ օրենքից է, այլ այն, որ Քրիստոսի հավատքից է, այն արդարությունը, որ Աստծուց է՝ հավատքով»[36]:

Հայտնի ծառայող և երգահան Ավգուստուս Թոփլեդին, Պողոս առաքյալի պես, իր հանրահայտ «Դարերի ժայռը» հիմնի մեջ արտահայտում է նույն ուժգին զգացմունքները:

Չեն կարողանա իմ ձեռքի գործերը
Կատարել Քո օրենքների պատվերները:
Թեև եռանդս հանգիստ չունենար,
Թեև արցունքներս հավիտյան հոսեին,
Դրանք չէին կարող մեղքերս քավել.
Դու, և միայն Դու պետք է ինձ փրկես:

Ոչինչ չեմ բերում Քեզ մոտ իմ ձեռքում,
Միայն խաչին է իմ անձը հարում,
Մերկ ես եկել եմ Քեզ մոտ՝ հագուստի,
Անօգնական՝ սպասելով Քո շնորհքին,
Կեղտոտված՝ ես աղբյուրի մոտ կթռչեմ,
Լվա՛ ինձ, Փրկի՛չ, եթե ոչ՝ կմեռնեմ:

Նրանք, ովքեր պարծենում են, որ ճիշտ դիրք ունեն Աստծո առջև՝ իրենց առաքինության և անձնական արժանիքների հիման վրա, չեն հասկանում, թե ով է Աստված, և ովքեր են իրենք: Նույնիսկ ամենափոքր պատկերացումն Աստծո արդարության և մարդու բարոյական արատավորության մասին բավական է՝ փրկությունը վաստակելու ցանկացած հույս փշրելու համար: Նրա ներկայության մեջ մտնելու համար պահանջվում է բացարձակ բարոյական կատարելություն: Նրա սրբությունն այնպիսին է, որ Նա չի կարող նայել չարությանը և անօրինությանը[37]: Ադամի մեկ մեղքի արդյունքում նա վտարվեց, իսկ աշխարհը հայտնվեց դատապարտության և մեղքի մեջ: Այդ դեպքում, ինչպե՞ս

36. Փիլիպեցիների 3.8,9
37. Ամբակում 1.13

մենք, որ նույնիսկ անկարող ենք հաշվել մեր գործած բազմաթիվ մեղքերը, կարող ենք կանգնել Նրա առջև՝ արդարություն ակնկալելով: Մեզնից ամեն մեկն այնքան է մեղանչել, որ կարող է կործանման մատնել հազարավոր աշխարհներ: Մեր փրկությունը հնարավոր է միայն Նրա միջոցով: Եթե կա ինչ-որ պատճառ մեր փրկության համար, այդ պատճառը պետք է լինի Նրանում: Եթե հնարավոր է ինչ-որ բան անել, դա տեղի է ունենալու Փրկիչ Աստծո շնորհալի աշխատանքի միջոցով:

ՓՐԿԱԳՆՈՒՄ

Գոյություն ունեն բառեր, որոնք պետք է արտասանել կամացուկ, երկյուղածությամբ և դողդոջուն շուրթերով: Այդպիսին է *«փրկագնում»* բառը (հայերեն թարգմանության մեջ՝ փրկություն): Այն թարգմանված է հունարեն «ապոլու́տրոսիս» բառից, որը գումարի կամ փրկագնի դիմաց ազատ արձակվելու իմաստ է կրում: Այս բառը հաճախ է գործածվում հին աշխարհի գրականության մեջ՝ ստրուկներին կամ պատերազմի գերիներին ազատ արձակելու իմաստով: Նոր կտակարանում փրկագնումը վերաբերում է մարդկանց մեղքի դատապարտությունից և ստրկությունից ազատ արձակելուն՝ Հիսուս Քրիստոսի արյան զոհաբերության միջոցով:

Մարդիկ հաճախ հարցնում են. «Ո՞ւմ է վճարվել փրկագինը» և «Ինչի՞ց ենք մենք փրկագնվել»: Թեև առաջարկվել են բազմաթիվ յուրօրինակ և հավասարապես սխալական կարծիքներ, Նոր կտակարանը պարզորեն ցույց է տալիս հետևյալը. մեր մեղքը զանց է արել Աստծո արդարադատությունը և բորբոքել Նրա զայրույթը: Մենք «արգելված» էինք դատաստանի և դատապարտության մեջ՝ առանց ազատություն ստանալու իրավունքի[38]: Աստծո արդարադատությունը պահանջում էր հանցավորի մահը, քանի որ «մեղքի հատուցումը մահ է» և «մեղանչող անձն ինքը պետք է մեռնի»[39]: «Բայց Աստված, որ մեծ է ողորմությամբ, Իր շատ սիրո համար, որ սիրեց մեզ», միջամտեց և վճարեց մեր պարտքը. Նա ուղարկեց Իր միածին Որդուն՝ մեր փոխարեն մահանալու և մեր պարտքը վճարելու համար[40]:

Նրա զոհը պատվավոր կհամարվեր, եթե նույնիսկ մենք լինեինք Աստծո թագավորության հավատարիմ ծառաները, որոնք գերության մեջ էին ընկել առանց իրենց մեղավորության, սակայն ամեն ինչ այդպես չէր: Նա փրկագնեց մեզ նույնիսկ այն դեպքում, երբ մենք ոչ թե զոհեր էինք, այլ՝ հանցագործներ: Մենք ինքներս էինք մեղավոր: Մենք էինք ապստամբել մեր Աստծո դեմ: Մեր դատապարտությու-

38. Հռոմեացիների 11.32
39. Հռոմեացիների 6.23, Եզեկիել 18.4
40. Եփեսացիների 2.4

նը և բանտարկությունը Նրա արդարադատության ներքո տեղի էր ունեցել մեր սեփական մեղավորությամբ: Մեր իսկ մեղքը կազմեց կապող շղթաները և բարձրացրեց դահճի կացինը:

Մեր հանցանքի դժգույն իրողությունը շատ ավելի տպավորիչ է դարձնում ճշմարտությունը մեր փրկագնման մասին: Եթե Նա մահանար հավատարիմ ծառաների համար, դա շնորհքի անըմբռնելի դրսևորում կլիներ, սակայն Նա մահացավ շատ ավելի անարժան անձանց համար: Ինչպես գրում է Պողոս առաքյալը. «Որովհետև հազիվ թե մի արդարի համար մեկը մահանա (բայց մի բարի մարդու համար դժվար թե մեկը համարձակվի մահանալ): Բայց Աստված հայտնեց Իր սերը մեզ, որ երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մահացավ»[41]:

Հավատացյալի արդարացումը՝ որպես պարգև, տրվում է փրկագնման շնորհիվ, որն, իր հերթին, հնարավոր է Հիսուս Քրիստոսի Անձի և Նրա կատարած աշխատանքի միջոցով: Թեև այն ձրիաբար է տրվել հավատացյալին, մենք չենք կարող ըմբռնել դրա համար պահանջվող գինը, որը Հիսուսը վճարեց: Իրականում, միգուցե Երկնքում գտնվող սրբերի գլխավոր զբաղմունքը լինի այդ զոհի արժեքն ըմբռնելը: Չկա ավելի գերազանց գիտելիք, որին արժե ձգտել, քան գիտելիքը Քրիստոսի աշխատանքի մասին, որը Նա կատարեց Իր ժողովրդի համար: Պետրոս առաքյալը գրում է. «Գիտենալով, որ ոչ թե ապականացու արծաթով կամ ոսկով փրկվեցիք ձեր հայրենավանդ ունայն վարմունքից, այլ՝ Քրիստոսի պատվական արյամբ»[42]:

Նույնիսկ ամենասակավ գիտելիքն այն գնի մասին, որը վճարվել է մեր փրկագնման համար, կդրդի թե՛ մեղավորին, թե՛ սուրբին արձագանքել հավատքով, նվիրմամբ և երկյուղածությամբ: Նրանք, ովքեր ներկայումս չեն հավատում, պետք է ապաշխարեն իրենց անհավատությունից և վազեն Քրիստոսի մոտ, քանի որ ինչպե՞ս նրանք կազատվեն, եթե անհոգ լինեն այսպիսի մեծ փրկության համար[43]: Իսկ նրանք, ովքեր հավատում են, այլևս չպետք է ապրեն իրենց համար, այլ՝ Նրա համար, Ով մահացավ մեր փոխարեն: Համաձայն Պողոս առաքյալի՝ «Որովհետև Քրիստոսի սերը ստիպում է մեզ, որ սա ենք միտք անում, թե եթե մեկն ամենի տեղ մահացավ, ուրեմն ամենը մեռած են, և ամենի համար մահացավ, որ կենդանի լինողներն այլևս ոչ թե իրենց անձերի համար կենդանի լինեն, այլ Նրա համար, որ իրենց համար մահացավ և հարություն առավ»[44]:

41. Հռոմեացիների 5.7,8
42. Ա Պետրոս 1.18,19
43. Եբրայեցիների 2.3
44. Բ Կորնթացիների 5.14,15

Ցանկացած լուրջ մտորում այն մասին, որ Քրիստոսը վճարել է հավատացյալի փրկագնման համար, պետք է դրդի նրան գոհությամբ խոնարհվել և բացականչել. «Ինչպե՞ս ես պետք է ապրեմ»: Որպես քրիստոնյաներ՝ մեր նպատակը պարզապես բարի կամ իմաստուն գործեր անելը կամ բարգավաճ կյանքի ձգտելը չէ: Մենք գործում ենք Քրիստոսի համար, քանի որ Նա թափեց Իր արյունը մեզ համար: Սա քրիստոնեական կյանքի մեծագույն շարժառիթն է և այն պատճառը, որով մենք ձգտում ենք երկյուղածությամբ վարվել մեր պանդխտության ընթացքում[45]:

ՄԻԱՅՆ ՔՐԻՍՏՈՍՈՒՄ

Պողոս առաքյալի համար դժվար կլիներ խոսել արդարացման կամ փրկագնման մասին՝ առանց նշելու այն փաստը, որ այդ ամենը տեղի է ունենում միայն Քրիստոսում: Եփեսացիների թղթի առաջին տասներեք խոսքերում նա օգտագործում է «Քրիստոսում» բառը կամ դրա համարժեքները տասնմեկ անգամ՝ ցույց տալու համար, որ այն ամենը, ինչ հավատացյալն ունի Աստծո առջև, գտնվում է Քրիստոսում: Այս ճշմարտությունն անկարելի է չափազանցնել կամ չափազանց հաճախ հիշատակել:

Մենք հաճախ ենք ասում, որ Հիսուսն այն ամենն է, ինչի կարիքը մենք ունենք, բայց ավելի ճիշտ կլինի ասել, որ Հիսուսն այն ամենն է, ինչ մենք ունենք: Առանց Նրա, մենք բաժին չունենք Աստծո մոտ[46]: Աստվածաշունչը վկայում է, որ ամեն ինչ ստեղծվել է Նրանում, Նրանով և Նրա համար. նույնը կարելի է ասել նաև մեր փրկության մասին[47]: Մեր ազատությունը մեղքի գերությունից և արդար դիրքն Աստծո առջև հնարավոր են միայն Քրիստոսում, Նրանով և Նրա համար: Ամեն մեկն այս մոլորակի վրա կա՛մ Ադամի մեջ է և դատապարտված է, կա՛մ Քրիստոսի մեջ է և արդարացված է: Երեխան կարող է մեծանալ աստվածապաշտ ընտանիքում, և մարդը կարող է լինել սուրբգրային հիմքեր ունեցող եկեղեցում, բայց եթե նրանք Քրիստոսի մեջ չեն, նրանք հույս չունեն և առանց Աստծո են այս աշխարհում[48]: Միայն Քրիստոսն է ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը, և ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե

45. Ա Պետրոս 1.17,18

46. Ա Հովհաննես 5.12

47. Կողոսացիների 1.16. «Որովհետև Նրանով ամեն բան ստեղծվեց»: *«Նրանով»* բառը թարգմանված է հունարեն *«էն աուտո»* բառակապակցությունից, որը նույնպես կարելի է թարգմանել «Նրանում» բառով: Եթե այն նշանակում է *«Նրանով»,* Որդին արարչագործության միջնորդն է կամ գործիքը: Ավելի հավանական նշանակությունը *«Նրանում»* բառն է, որը ցույց է տալիս, որ Որդին այն միջավայրն էր, որտեղ արարումը տեղի ունեցավ: Ամեն ինչ երկնքում և երկրի վրա կապակցված է և ուղղակիորեն առնչվում է Նրա հետ:

48. Եփեսացիների 2.12

ոչ Նրանով[49]: Ուրիշ ոչ մեկով փրկություն չկա, որովհետև ուրիշ անուն էլ չկա երկնքի տակ մարդկանց տրված, որով մենք կարող ենք փրկվել[50]:

Հենց այս ճշմարտությունն է, որը Քրիստոսին թանկ է դարձնում հավատացյալի համար, թեև այն նույնպես «գլորման քար և գայթակղվելու վեմ» է այս աշխարհի համար[51]: Մեզ՝ հավատացողներիս համար, Քրիստոսը մեծագույն արժեքն է, և Նա արժանի է մեր բարձրագույն նվիրմանը: Մենք պատրաստ ենք անհապաղ հերքել մեր անձնական արժանիքները և մատնացույց անել Քրիստոսին՝ ուրախությամբ ասելով. «Սակայն ինձ քավ լիցի պարծենալ, բայց միայն Տեր Հիսուս Քրիստոսի խաչով»[52]: Նույնիսկ ամենաանն՝ենթադրությունն այն մասին, որ մենք արդարացված ենք մեր գործերով, կամ որ մենք ինչ-որ բան ենք ավելացրել այն աշխատանքին, որը Քրիստոսը կատարել է մեր փոխարեն, պետք է վանի մեզ: Մենք սաղմոսերգուի հետ հռչակում ենք. «Ոչ թե մեզ, Տե՛ր, ոչ թե մեզ, այլ Քո անվանը փառք տուր՝ Քո ողորմության համար և Քո ճշմարտության համար»[53]:

Նրանց համար, ովքեր հրաժարվում են հավատալ, Հիսուս Քրիստոսն ամբարտավանության և անհանդուրժողականության գագաթնակետն է: Ինչպե՞ս է Նա համարձակվում կանգնել այս աշխարհի առջև՝ պնդելով, որ Ինքը միակ Փրկիչն է, հատկապես այն դեպքում, երբ մեր միջև կան շատ այլ անկեղծ թեկնածուներ, որոնք մրցում են այդ դիրքի համար: Ինչպե՞ս է եկեղեցին համարձակվում հակառակվել միակ բացարձակ ճշմարտությանը, որը մնացել է մեր մշակույթում՝ այն համոզմունքին, որ ոչ ոք սխալ չէ՝ բացի այն մարդուց, ով պնդում է, որ ճիշտ է: Ինչպե՞ս է քրիստոնյան համարձակվում հավատալ, որ նրա ճանապարհը միակ ճշմարիտ ճանապարհն է՝ անտեսելով մնացած բոլորին: Պոստմոդեռնիստական աշխարհի համար նման պնդումն ընդամենը տկարամտության և մոլեռանդ անհանդուրժողականության ճչացող դրսևորում է:

Ահա թե ինչու է քրիստոնեությունը մշտապես վրդովեցուցիչ եղել այս աշխարհի համար: Հռոմեական կայսրության մեջ ապրող առաջին քրիստոնյաներին մեղադրել և հալածել են որպես աթեիստների, քանի որ նրանք ժխտում էին մնացած բոլոր աստվածների գոյությունը և պնդում, որ հավատարիմ էին միայն Քրիստոսին: Ժամանակակից քրիստոնյան հետևում է նույն վրդովեցուցիչ ավանդույթին, երբ ապավինում է միայն Քրիստոսին և հռչակում է, որ Նա այս աշխարհի միակ հույսն է: Այնուամենայնիվ, եթե քրիստոնեական ուղերձը կորցնում է այս բացառիկ բնույթը, այն այլևս քրիստոնեական չէ և չունի փրկարար զորություն:

49. Հովհաննես 14.6
50. Գործք 4.12
51. Ա Պետրոս 2.7,8
52. Գաղատացիների 6.14
53. Սաղմոս 115.1

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹ

Աստվածային երկընտրանքը

«Որին Աստված առաջուց սահմանեց քավություն լինելու համար՝ հավատալով (կամ՝ հավատքի միջոցով)»:

— Հռոմեացիների 3.25

Եթե Հռոմեացիների 3.23-27-ը քրիստոնեական հավատքի ամրոցն է, ուրեմն, խոսք 25-ն այդ ամրոցի միջնաբերդն է: Այս խոսքն անզուգական կերպով բացատրում է Հիսուս Քրիստոսի խաչի մասին: Այն թույլ է տալիս մեզ վեր բարձրացնել վարագույրը և բացահայտել խաչի իրական պատճառը: Այն նկարագրում է Քրիստոսի չարչարանքների բնույթը: Այն բացատրում է մեզ, թե ինչ պետք է կատարվեր, և ինչ կատարվեց Նրա մահվամբ: Սա Ավետարանի մերօրյա քարոզի պակասող օղակն է, և պատճառը, որ խաչը հասկացվում է միայն սակավաթիվ մարդկանց կողմից, նույնիսկ՝ Աստծո ժողովրդի մեջ:

Դարերի ընթացքում ապրող բազմաթիվ աստվածաբաններ և քարոզիչներ կհամաձայնեին, որ Հռոմեացիների 3.25-ը ամենակարևոր խոսքերից մեկն է ամբողջ Աստվածաշնչում: Այս բարձր կարծիքը բխում է այն փաստից, որ դրանում պարունակվում է Ավետարանի էությունը. Քրիստոսը մահացավ՝ որպես քավություն: Ամբողջ քրիստոնեական հավատքը հենվում է այս ճշմարտության վրա, որը, սակայն, գրեթե անհայտ է ժամանակակից ավետարանական շրջանակներում: Քանի՞ ավետարանական քրիստոնյաներ են թեկուզ մեկ անգամ լսել «քավություն» բառը: Իսկ լսողներից քանի՞սն են հասկացել դրա նշանակությունը կամ թեկուզ ինչ-որ չափով ըմբռնել դրա կարևորությունը: Գիտելիքի նման պակասը մեղադրանք է՝ ուղղված մեր ժամանակաշրջանին, որն ապացուցում է, որ մենք գրեթե չենք հասկանում Ավետարանը: Ամեն տարի քարոզվում են անթիվ ուղերձներ Ավետարանի մասին, և տպագրվում անթիվ ավետարանչական գրքույկներ, սակայն այս էապես կարևոր բառը հազվադեպ է հանդիպում դրանցում, եթե ընդհանրապես հանդիպում է: Զարմանալի չէ, որ Ավետարան քարոզելը մեր օրերում գրեթե զուրկ է զորությունից:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱԴՐՈՒՄ

Հռոմեացիների 3.25-ում գրված է, որ Աստված «սահմանեց» կամ «հրապարակավ ցուցադրեց» (NASB) Իր Որդուն՝ որպես քավություն: *«Ցուցադրել»* բառը թարգմանված է հունարեն *«պրոտի՛ռեմայ»* բառից, որը նշանակում է «դնել կամ ի ցույց հանել հանրության առջև»: Գողգոթայի խաչի վրա Աստված բառացիորեն «փակցրեց Իր Որդուն՝ որպես ազդ»[1]: Պատմության այդ հստակ պահին Աստված բարձրացրեց Նրան խաչափայտի վրա՝ տիեզերքի կրոնական կենտրոնի խաչմերուկին, որպեսզի բոլորը տեսնեին Նրան[2]:

Թեև Աստվածաշնչում ուղղակիորեն գրված չէ այս մասին, սխալ չի լինի ենթադրել, որ Աստված կարող էր թաքցնել մեղքը, կամ որ Հիսուսը կարող էր մահանալ ավելի գաղտնի պայմաններում: Այս փաստը, որ Հիսուսը հրապարակավ ցուցադրվեց ամբողջ աշխարհին, ապացուցում է, որ Աստված նախատեսել էր, որ Նրա չարչարանքները և մահը լինեին գործիք կամ միջոց՝ հայտնություն բերելու համար: Խաչի միջոցով Աստված վճռել է հայտնել մարդկանց և հրեշտակներին որոշակի ճշմարտություններ Իր մասին, որոնք այլ կերպով անկարելի կլիներ հայտնել[3]: Եկեղեցու առաջին վկայություններից մեկն այն է, որ Հիսուս Քրիստոսի խաչը Աստծո և, ընդհանրապես, իրականության մեծագույն հայտնությունն է: Խաչը՝ Աստծո մեծագույն և վերջնական խոսքն է մարդուն, որը բացատրում է այն ամենը, ինչը բացատրության կարիք ունի, և պատասխանում է վաղուց բարձրացված հարցերին մարդկանց հետ կապված Աստծո նպատակի և մարդկանց միջև կատարած Նրա աշխատանքի վերաբերյալ:

Այս գլխի շրջանակների մեջ չի մտնում նույնիսկ ամփոփելը այն ամենը, ինչ հայտնում է Հիսուս Քրիստոսի խաչը: Օգտվելով Հովհաննես առաքյալի ձևակերպումից՝ մենք կարող ենք ասել, որ եթե այն ամենը, ինչ հայտնվել է խաչի միջոցով, մանրամասնորեն գրի առնվեր, նույնիսկ ամբողջ աշխարհը չէր կարող ընդգրկել այն գրքերը, որոնցում այդ ամենը գրված կլիներ[4]: Այդ իսկ պատճառով, մենք կսահմանափակվենք այս գլխի սկզբում գտնվող աստվածաշնչյան խոսքով և ուշի-ուշով կհետևենք Պողոսի առաջնորդությանը: Սուրբ Հոգու անսխալական և անսխալական առաջնորդության ներքո Աստված փոխանցում է անթիվ թանկարժեք գանձեր, որոնք հայտնվում են խաչի միջոցով, որոնց թվում է Ավետարանի մեծագույն ճշմար-

1. Ազդը կամ ազդագիրը պաստառ, ցուցանակ կամ ծանուցում է: Ազդը հրապարակավ փակցնելու նպատակն այն է, որ այն տեսանելի լինի բոլորին:
2. Գաղատացիների 4.4
3. Եփեսացիների 3.10, Ա Պետրոս 1.12
4. Հովհաննես 21.25

տություններից մեկը. Նա հրապարակավ ի ցույց հանեց Իր Որդուն՝ որպես ապացույց, որ Ինքն արդար Աստված է[5]:

Առաջին հայացքից, այս ճշմարտությունը միգուցե այնքան էլ ակնառու կամ զարմանալի չթվա Աստվածաշնչին ծանոթ մարդկանց: Աստվածաշունչը սկզբից մինչև վերջ վկայում է, որ Աստված արդար է, որ Նրա բոլոր գործերը կատարյալ են, և որ Նրա բոլոր ճանապարհներն ուղիղ են[6]: Այդ դեպքում, ինչո՞ւ Աստված պետք է հրապարակավ ապացուցեր թե՛ մարդկանց, թե՛ հրեշտակներին, որ Ինքն արդար է: Ի՞նչ էր Նա արել, ի՞նչը կարող էր կասկած առաջացնել Նրա արդարության մեջ, որ Նա պետք է հասկացներ Իր ճանապարհները և արդարացներ Իրեն: Պողոս առաքյալը բացատրում է, որ անհրաժեշտ էր, որ Աստված մեկընդմիշտ արդարացներ Իրեն և ցույց տար Իր արդարադատությունը «այն առաջուց գործված մեղքերի թույլտվության համար՝ Աստծո ներելու ժամանակ»[7]: Այլ կերպ ասած՝ Աստված անհրաժեշտ համարեց ապացուցել Իր արդարությունը մարդկանց և հրեշտակներին, քանի որ մարդկության պատմության ընթացքում Նա կանխել էր մեղավորների դատաստանը և ներում էր շնորհել անօրեն մարդկանց: Թեև սա բարի լուր է մեղավոր մարդկանց համար, սա մեծ աստվածաբանական և բարոյական խնդիր է Աստվածաշնչում: Ինչպե՞ս Աստված կարող է արդար լինել և միևնույն ժամանակ ետ պահել Իր դատաստանը և ներում առաջարկել այն մարդկանց, ովքեր պետք է դատապարտվեն: Ինչպե՞ս Աստված, արդար լինելով, կարող է արդարացնել մեղավորներին:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԵՐԿԸՆՏՐԱՆՔԸ

«Վեբսթերի բառարանը» սահմանում է *«երկընտրանք»* բառը որպես «իրավիճակ, որում պետք է ընտրություն կատարել երկու հավասարապես ոչ գոհացուցիչ տարբերակների միջև», կամ «խնդիր, որը, թվում է, չի կարող գոհացուցիչ լուծում ստանալ»: Սուրբ գրքի գրեթե ամեն մի էջում մեզ ներկայացվում է բոլոր երկընտրանքներից մեծագույնը. ինչպե՞ս արդար Աստված կարող է ներում շնորհել մեղավորներին:

Վերջին գլխում մենք հանգամանալից կերպով աշխատեցինք՝ ապացուցելու համար, որ Աստված ճրիաբար արդարացնում է նույնիսկ ամենաչար մարդկանց, որոնք հավատքով Իրեն են դառնում: Այս ճշմարտությունը եկեղեցու մեծագույն ուրախության առարկան է և նրա ամենափառավոր ու սիրված երգերի թեման: Մենք ցնծում

5. «Ցույց տալ» կամ «ցուցադրել» բառը հունարենում «էի՛ս էնդեիքսին» արտահայտությունն է, որը բառացիորեն նշանակում է «ի ցուցադրում» կամ «ի ապացույց»:
6. Երկրորդ Օրինաց 32.4
7. Հռոմեացիների 3.25

ենք Դավթի հետ. «Երանի՜ նրանց, որոնց անօրինությունները թողվեցին, և որոնց մեղքերը ծածկվեցին»[8]: Այնուամենայնիվ, մեր հարցը դեռ չի պատասխանվել. «Ինչպե՞ս Աստված կարող է արդար լինել և միաժամանակ ներում շնորհել մեղավոր մարդկանց»: Մի՞թե ամբողջ երկրի Դատավորն արդարություն չի անի[9]: Մի՞թե արդար Աստված կարող է անտարբեր լինել մեղքի հանդեպ և ծածկել մեղքը, ասես այն երբեք տեղի չի ունեցել: Մի՞թե սուրբ Աստված կարող է հաղորդակցվել մեղավոր մարդկանց հետ:

Առակաց գրքում Աստվածաշունչը խստագույնս ժխտում է, որ Աստված կարող է ներում շնորհել կամ արդարացնել մեղավորներին: Գրված է. «Անզգամին արդարացնողը և արդարին անզգամ անողը՝ երկուսն էլ զզվելի են Տիրոջը»[10]: Համաձայն այս խոսքի՝ ցանկացած մարդ, ով արդարացնում է մեղավորներին, զզվելի է Տիրոջ համար:

«Անզգամ» բառը թարգմանված է եբրայերեն *«տոեբա»* բառից, որը նշանակում է «զզվելի, գարշելի և նողկալի մի բան»: Սա ամենաազդեցիկ բառերից մեկն է եբրայերեն Սուրբ գրքում: Այս խոսքը հայտնում է, որ Աստված գարշանքով և նողկանքով է վերաբերվում ցանկացած մարդու, հատկապես՝ իշխանավորի կամ դատավորի, ով արդարացնում կամ ազատում է հանցավորին: Այնուամենայնիվ, Ավետարանի ուղերձը հենց այս մասին է: Ամբողջ պատմության ընթացքում Աստված հենց այսպես է վարվել: Նա արդարացրել է մեղավորներին, ներել է նրանց անօրինությունները և ծածկել է նրանց մեղքերը:

Ուրեմն, ինչպե՞ս Նա կարող է արդար լինել: Հետևյալ օրինակը կօգնի մեզ ավելի պարզ բացատրել այս խնդիրը: Պատկերացրեք, որ մի մարդ երեկոյան տուն է վերադառնում և տեսնում է, որ ամբողջ ընտանիքը սպանված ընկած է իր հյուրասենյակի հատակին, իսկ մարդասպանը դեռ կանգնած է նրանց գլխավերևում՝ արյունոտ ձեռքերով: Այդ մարդը բռնում է մարդասպանին և հանձնում իշխանություններին՝ ներկայացնելով նրա դեմ եղած բոլոր ապացույցները: Եվ այդ մարդասպանի դատավճռի օրը դատավորն ասում է հետևյալը. «Ես սիրող դատավոր եմ՝ լի գթասրտությամբ և ողորմությամբ: Այդ պատճառով, անմեղ եմ հայտարարում ձեզ արդարադատության առջև, և ազատ՝ ցանկացած պատժից»:

Ինչպիսի՞ն կլիներ տուժածի արձագանքը նման դատավճռին: Մի՞թե նա կհամաձայներ դատավճռի արդար լինելուն: Ո՛չ մի դեպքում: Նա կցնցվեր՝ տեսնելով, թե ինչպես դատավորն արդարացրեց այդ անօրեն մարդուն, և կպահանջեր անմիջապես զրկել նրան պաշտո-

8. Սաղմոս 32.1, Հռոմեացիների 4.7
9. Ծննդոց 18.25
10. Առակաց 17.15

նից: Նա կգրեր իր խորհրդարանական ներկայացուցչին, խմբագրա-կաններ կտեղադրեր թերթերում և կպատմեր մարդկանց, որ կա մի գործող դատավոր, ով ավելի մեղավոր և գարշելի է, քան այն հան-ցագործները, որոնց նա ազատ է արձակում: Ամենայն հավանակա-նությամբ, բոլորս կհամաձայնեինք նրա գնահատականին: Այնուա-մենայնիվ, խնդիրը հետևյալն է. եթե մենք նման արդարադատութ-յուն ենք պահանջում մեր երկրային դատավորներից, մի՞թե պետք է ավելի քիչ սպասումներ ունենանք ամբողջ երկրի Դատավորից: Ինչ-պես ասում էր Եղիուսը. «Հիրավի Աստված անօրինություն չի անի, և Ամենակարողը չի ծռի իրավունքը»[11]:

ՆԵՐԵԼ ԵՎ ՄՈՌԱՆԱ՞Լ

Չնայած այս ամենին՝ ինչ-որ մեկը կարող է հարցնել. «Ինչո՞ւ Աստված պարզապես չի կարող ներել մարդու մեղքը և վերջ տալ դրան: Աստվածաշունչը պատվիրում է մեզ սրտանց ներել. այդ դեպ-քում, ինչո՞ւ Աստված չի կարող անել նույնը: Այս հարցի պատասխա-նը բաղկացած է երեք մասից:

Առաջինը՝ Աստված մեզ նման չէ: Նրա արժեքն անսահմանո-րեն ավելին է, քան ամբողջ ստեղծագործության միացյալ արժեքը: Այդ իսկ պատճառով, ոչ միայն ճիշտ է, այլև անհրաժեշտ է, որ Նա հաստատի և պաշտպանի Իր փառքը: Հաշվի առնելով այն, թե ով է Աստված՝ նույնիսկ աննշան ապստամբությունը Նրա դեմ անասելի օրինազանցություն է՝ ուղղված Նրա Անձին, և մեծագույն դավաճա-նության հավասար հանցանք, որն արժանի է ամենախիստ պատժի: Եթե Աստված անպատիժ թողներ ցանկացած օրինազանցություն Իր Անձի դեմ, Նա կրկնակի անարդարություն կգործեր: Առաջինը՝ Նա անարդար կվարվեր Իր աստվածության հանդեպ՝ զրկելով Իրեն այն փառքից, որն իրավամբ պատկանում է Իրեն: Նա նույնպես անար-դար կվարվեր Իր արարչագործության հանդեպ՝ թույլ տալով, որ այն ուրանար իր գոյության իսկ պատճառը (այսինքն՝ Աստծուն փառա-վորելը) և ընկներ ունայնության գիրկը: Եթե ժամանակակից մարդու համար դժվար է ընդունել այս գաղափարը, պատճառն այն է, որ նա չափազանց ցածր կարծիք ունի Աստծո մասին:

Երկրորդը՝ Աստված չի կարող հենց այնպես ներել մարդու մեղքը և վերջ դնել դրան, քանի որ Նրա բնավորության մեջ չկան հակա-սություններ: Նա չի կարող պարզապես անտեսել Իր արդարադա-տությունը, որպեսզի հայտնի Իր սերը՝ ներում շնորհելով մեղավոր-ներին: Նա պետք է լինի և՛ արդար, և՛ սիրող, և Նա չի կարող լինել

11. Հոբ 34.12

մեկը՝ մյուսի հաշվին: Բարի նպատակներ ունեցող շատ ավետարանիչներ սխալմամբ ազդարարել են կորած բազմություններին, որ Աստված որոշել է սիրել մեղավոր մարդուն՝ նրա հետ արդարությամբ վարվելու փոխարեն: Այս պնդումից տրամաբանորեն հետևում է, որ Աստծո սերն անարդար է, և որ Նա կարող է անտեսել Իր արդարադատությունը՝ հանուն սիրո: Նման պնդումը մատնում է այդ մարդկանց անտեղյակությունն Ավետարանի և Աստծո հատկանիշների մասին: Ավետարանի գեղեցկությունն այն չէ, որ Աստված գերադասեց սերը դատաստանից, այլ որ Նա, պահպանելով Իր արդարությունը, ներում է շնորհում մեզ՝ Իր սիրով:

Երրորդը՝ Աստված ամբողջ երկրի Դատավորն է: Նրա գործն է, որ արդարությունը պահպանվի, չար մարդիկ պատժվեն, իսկ արդարները՝ արդարացվեն: Երկնային Դատավորը չի կարող ներում շնորհել չարագործին ճիշտ այնպես, ինչպես որ երկրային դատավորը չի կարող ներում շնորհել մեղավոր ճանաչված հանցագործին, որը կանգնած է իր ատյանում: Մենք հաճախ ենք բողոքում, որ մեր արդարադատության համակարգը կաշառված է, և վրդովվում ենք, երբ դատապարտված հանցագործներին արդարացնում են: Մի՞թե մենք պետք է ակնկալենք ավելի քիչ արդարադատություն Աստծուց, քան այս աշխարհի դատավորներից: Կա մի անվիճելի ճշմարտություն. առանց արդարադատության՝ բոլոր ազգերը, ժողովուրդները և մշակույթները կսլանան դեպի անիշխանությունը և ինքնակործանումը: Եթե Աստված անտեսեր Իր արդարությունը, եթե Նա ներում շնորհեր՝ առանց բավարարելու Իր արդարադատությունը, և եթե չարը վերջնական պատիժ չկրեր, արարչագործությունը պարզապես չէր դիմանա դրան:

ՔԱՎՈՒԹՅՈՒՆ

Մենք ցույց տվեցինք Աստծո արդարադատության և Նրա կողմից մեղավորներին դատելու բացարձակ անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, մենք դեռ պետք է պատասխանենք մեր հարցին. «Ինչպե՞ս Աստված կարող է արդար լինել և միաժամանակ արդարացնել մեղավորներին»: Այս հարցին պատասխանում է Աստվածաշնչի մեծագույն բառերից մեկը՝ *«քավություն»*-ը (լատիներենում՝ *«պրոպիկո»,* որը նշանակում է «ողորմություն»): Նոր կտակարանում այն թարգմանված է հունարեն *«հիլաստե՛րիոն»* բառից, որը վերաբերում է այնպիսի բանի, ինչը քավում է, խաղաղեցնում կամ զսպում է բարկությունը:

Միակ խոսքը Նոր կտակարանում, որում հանդիպում է *«հիլաստե՛րիոն»* բառը, Եբրայեցիների թղթում է: Այս բառը վերաբերում է

Ուխտի տապանակի ծածկին՝ քավությանը (կամ՝ ողորմության աթոռ, NKJV)[12]: Քավությունը պատրաստված էր ոսկուց, և քերովբեները հովանի էին անում դրա վրա[13]: Հինկտակարանյան դիսպենսացիայում Աստծո ներկայությունը հայտնվում էր ամպի մեջ՝ Սրբության սրբոցում գտնվող քավության վերևում. հենց այդտեղ էր Աստված խոստացել հանդիպել Իր ժողովրդին և տալ նրանց Իր պատվերները[14]: Ամենակարևորն այն էր, որ հենց քավության վրա և քավության առջև էր, որ ամեն տարի՝ Քավության օրը, քահանայապետը յոթ անգամ սրսկում էր զոհաբերվող ցլի արյունը[15]: Եվ Աստված քավությունից ներում էր շնորհում Իր ժողովրդին, և հայտարարում էր հաշտություն Իր ժողովրդի հետ՝ արյան զոհի միջոցով: Ուխտի տապանակի ծածկը «քավություն» էր կոչվում, քանի որ այդտեղ քավվում էր մեղքը և ողորմություն էր շնորհվում:

Այս գլխի սկզբում գտնվող աստվածաշնչյան խոսքում «քավություն» բառը հատկապես վերաբերում է Հիսուս Քրիստոսի զոհին Գողգոթայի խաչի վրա[16]: Այն բացատրում է, որ Հիսուսի մահը վերցրեց մեր մեղքը, բավարարեց աստվածային արդարադատությունը և խաղաղեցրեց Աստծո բարկությունը: Քանի որ Հիսուս Քրիստոսը մեկընդմիշտ վճարեց Իր ժողովրդի մեղքերի համար, Աստված կարող է արդարացիորեն ողորմություն ցուցաբերել հանցավորների հանդեպ և լինել «արդար և արդարացնող» յուրաքանչյուրին, ով հավատում է Իր Որդուն[17]:

Համաձայն Աստվածաշնչի՝ մարդը մեղք է գործել, և մեղքի հատուցումը մահն է[18]: Աստված արդար է, և մեղավորները չեն կարող ներում ստանալ, քանի դեռ Նրա օրենքի պահանջները չեն բավարարվել[19]: Երբ եկավ ժամանակի լրումը, Աստծո Որդին մարդ դարձավ և ապրեց այս երկրում՝ կատարելապես հնազանդվելով Աստծո օրենքին[20]: Իր կյանքի վերջում, Հոր կամքին համաձայն, Նա խաչվեց մեղավոր մարդկանց կողմից[21]: Խաչի վրա Նա զբաղեցրեց Իր մե-

12. Եբրայեցիների 9.5. «Եվ նրանից բարձր՝ փառքի քերովբեները, որ հովանի էին անում քավության *(«հիլաստերիոն»)* վրա, որոնց համար պետք չէ հիմա մանրամասն ասել»: Կարևոր է նշել, որ այս հունարեն բառը նաև օգտագործված է՝ թարգմանելու համար «քավություն» բառը Յոթանասունից թարգմանության մեջ (եբրայերեն Սուրբ գրքերի հունարեն թարգմանությունը):
13. Ելից 25.17,18
14. Ղևտացիների 16.2, Ելից 25.22
15. Ղևտացիների 16.14,15
16. Ա Հովհաննես 2.2. «Եվ Նա քավություն է մեր մեղքերի համար, և ոչ միայն մերինների, բայց ամբողջ աշխարհի էլ»:
17. Հռոմեացիների 3.26
18. Հռոմեացիների 3.23, 6.23
19. Առակաց 17.15
20. Գաղատացիների 4.4
21. Գործք 2.23

ղավոր ժողովրդի տեղը, և նրանց մեղքը վերագրվեց Իրեն[22]: Որպես Մեղքեր Կրող՝ Նա անիծվեց Աստծուց, թողվեց Աստծուց և փշրվեց Աստծո զայրույթի ծանրության ներքո[23]: Նրա մահը վճարեց մեղքի պարտքը, բավարարեց Աստծո արդարադատության պահանջները և խաղաղեցրեց Նրա զայրույթը: Այս կերպով, Աստված լուծեց այս մեծ երկընտրանքը: Իր միակ Որդու մահվամբ, Նա ըստ արժանվույն պատժեց Իր ժողովրդի մեղքերը: Սա նշանակում է, որ Նա կարող է ճրիաբար արդարացնել նրանց, ովքեր որոշում են հուսալ Իրեն: Հաջորդ մի քանի գլուխներում կուսումնասիրենք այս մեծ ճշմարտությունը:

22. Բ Կորնթացիների 5.21
23. Գաղատացիների 3.13, Մատթեոս 27.46, Եսայի 53.10

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆԸ

Որակավորված Փրկիչ

«Եվ Խոսքը մարմին եղավ և բնակվեց մեր մեջ»:

— Հովհաննես 1.14

«Որին Աստված առաջուց սահմանեց քավություն լինելու համար՝ հավատալով (կամ՝ հավատքի միջոցով)»:

— Հռոմեացիների 3.25

Նախքան կսկսենք խորապես ուսումնասիրել Քրիստոսին՝ որպես մեր քավություն, օգտակար է տեսնել, թե ինչ էր պահանջվում նման դեր ստանձնելու համար: Պարզ է, որ զոհի մահը լիովին անիմաստ է, քանի դեռ Նա, ով զոհաբերում է Իր կյանքը, իրապես որակավորված չէ այդ դերի համար: Այլ կերպ ասած՝ գործողության արժեքը կախված է այն կատարողից: Խոսելով խաչի մասին՝ ավետարանական քրիստոնյաների մեծ մասը շեշտադրում է Քրիստոսի կատարած աշխատանքը, ինչն, անկասկած, ճիշտ է: Այնուամենայնիվ, հաճախ մենք գրեթե չենք շեշտադրում այն, թե ով է Նա: Հիսուսը և՛ Աստված էր, և՛ մարդ. Նա և՛ անմեղ էր, և՛ անսահման արժեք ուներ: Եթե Նա չհամապատասխաներ բոլոր այս որակավորումներին, Նրա զոհը մեր փոխարեն ոչինչ չէր իրագործի: Այնուամենայնիվ, մենք կտեսնենք, որ Նա համապատասխանում էր այդ ամենին, և նույնիսկ ավելին էր: Այսպիսով, Հիսուսը եզակիորեն որակավորված էր՝ մատուցելու Իր կյանքը որպես քավչարար զոհ և լինելու աշխարհի Փրկիչը[1]:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Մենք միշտ պետք է շատ զգույշ լինենք, երբ խոսում կամ գրում ենք Հիսուս Քրիստոսի Անձի մասին: Մենք չենք կարող լիովին ընկալել մարմնավորված Աստծո խորհուրդը, ինչպես նաև՝ Նրա աստվածային և մարդկային բնությունների հստակ դերերը մեր փրկութ-

1. Հովհաննես 4.42, Ա Հովհաննես 4.14

յան մեջ: Ինչպես Պողոս առաքյալն է գրում. «Եվ հայտնապես մեծ է աստվածապաշտության խորհուրդը. Աստված հայտնվեց մարմնում, արդարացավ Հոգով, երևաց հրեշտակներին, քարոզվեց հեթանոսներին, հավատացվեց աշխարհում և վերացավ փառքով»[2]:

Եկեղեցու պատմության ընթացքում եղել են բազմաթիվ հերձվածություններ՝ կապված Հիսուս Քրիստոսի Անձում մարդկային և աստվածային բնությունների ճիշտ հարաբերության հետ: Այս կեղծ ուսմունքներից մի քանիսը կազմվել են հերձվածողների կողմից, որոնց նպատակն էր՝ ժխտել թե՛ Քրիստոսի աստվածությունը, թե՛ Նրա մարդեղությունը: Այնուամենայնիվ, որոշ սխալական ուսմունքներ առաջացել են նաև անկեղծ քրիստոնյաներից, որոնք պարզապես որոշել էին լիարժեք բացատրել այս խորհուրդը և տեղ չթողնել ոչ մի առեղծվածի համար: Այդ իսկ պատճառով, մենք պետք է զգուշությամբ գրենք և խոսենք այս մասին: Այս թեմայի դեպքում ավելի լավ է խոսել շատ քիչ, քան՝ չափից շատ, և ավելի շատ բաներ վերագրել Աստծո խորհրդին, քան փորձել բացահայտել ամբողջ առեղծվածը, և արդյունքում ավելացումներ անել Սուրբ գրքին: Ինչպես որ Մովսեսը զգուշացնում է մեզ, որ «ծածուկ բաները մեր Տեր Աստծո համար են, բայց հայտնված բաները մեր և մեր որդիների համար հավիտյան, որ այս օրենքի բոլոր խոսքերը կատարենք»[3]:

ԵՐԿՈՒ ԲՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Աստվածաշունչը մշտապես վկայում է, որ Աստված միակ Փրկիչն է, և որ Նա ոչ ոքի հետ չի կիսում այս փառավոր, աստվածային և բացառիկ իրավունքը: Խոսելով Եսայի մարգարեի միջոցով՝ Աստված ազդարարեց. «Ես՝ Ես եմ Տերը, և Ինձնից ջոկ Փրկիչ չկա»[4]: Նույնիսկ այս աշխարհիկ ժամանակաշրջանում աստվածների կամ փրկիչների պակաս չկա: Այնուամենայնիվ, Աստվածաշունչը, կանգնելով աստվածությունների և փրկիչների բազմազանության հոսքին հակառակ, հայտարարում է, որ փրկությունը երկնքի և երկրի Արարչի՝ միակ ճշմարիտ Աստծո բացառիկ աշխատանքն է: Ինչպես որ Հովնան մարգարեն մեծ ձկան փորից հռչակեց. «Փրկությունը Տիրո՛ջն է»[5]: Այդ իսկ պատճառով, Աստծուց բացի որևէ էակին փրկության աշխատանքը վերագրելը կամ «Փրկիչ» տիտղոսը շնորհելը մեծ հայհոյություն է:

Այս աստվածաշնչյան ճշմարտությունը խնդրահարույց է յուրաքանչյուրի համար, ով ուսումնասիրում է Նոր կտակարանի պնդում-

2. Ա Տիմոթեոս 3.16
3. Երկրորդ Օրինաց 29.29
4. Եսայի 43.11, կարդացեք նաև Ովսե 13.4
5. Հովնան 2.9

ները Հիսուս Քրիստոսի Անձի և աշխատանքի մասին: Հաշվի առնելով, որ փրկությունը Աստծո բացառիկ աշխատանքն է, և որ կան անթիվ հղումներ Հիսուսի մասին՝ որպես Փրկչի, մենք կարող ենք անել հետևյալ եզրակացությունները: Եթե Հիսուսը Փրկիչ է, ուրեմն Նա Աստված է՝ այդ բառի լիարժեք իմաստով: Եվ եթե Հիսուսն Աստված չէ՝ այդ բառի լիարժեք իմաստով, նշանակում է՝ Նա Փրկիչ չէ:

Այն մարդիկ, ովքեր մերժում են Քրիստոսի աստվածությունը, բայց պնդում են, որ օգուտ են ստացել Նրա մահվանից, մեծ հակասության մեջ են: Նա չի կարող փրկել, եթե Աստված չէ: Այնուամենայնիվ, եթե Հիսուսը ճշմարիտ Աստված է, Եսայի մարգարեն, ով հռչակում է, որ չկա Աստված՝ Յահվեհից բացի, և Պետրոս առաքյալը, ով ազդարարում է, որ այլևս ոչ մեկով չկա փրկություն՝ Հիսուսից բացի, որևէ կերպով չեն հակասում[6]: Նույնպես, Եսայի մարգարեն իրավացիորեն հորդորում է երկրի ծայրերին՝ դառնալ միակ Աստծուն՝ փրկության համար, իսկ Պողոս առաքյալն իրավացիորեն բացականչում է, որ «նա, ով Տիրոջ անունը կանչի, կփրկվի»[7]:

Աշխարհի Փրկիչը լինելու համար՝ Քրիստոսը պետք է Աստված լինի: Դրա հետ մեկտեղ, ճշմարիտ է նաև այն փաստը, որ Աստծո արդարադատությունը պահանջում էր, որ մեղքը պատժվեր նույն բնության մեջ, որում այն գործվել էր[8]: Այդ իսկ պատճառով, մեղքի համար մահացողը պետք է մարդ լիներ: Մարդն էր խախտել Աստծո օրենքը, և մարդն էլ պետք է մահանար: Ինչպես որ Աստված խոսեց Եզեկիել մարգարեի միջոցով՝ «մեղանչող անձն ինքը պետք է մեռնի»[9]: Աստծո արդար դատավճռից ազատվելու համար անհրաժեշտ էր, որ նույն բնությունը ունեցող մեկ այլ անձ մահանար մարդու փոխարեն: Եբրայեցիների թղթի հեղինակը հաստատում է այս ճշմարտությունը՝ ասելով, որ անհնար էր, որ ցլերի և այծերի արյունը քավեր բնությամբ ավելի բարձր էակների մեղքերը[10]: Միայն այնպիսի անձնավորությունը, ով ճշմարտապես մեկ էր Ադամի ցեղի հետ, կարող էր զբաղեցնել մեղավոր մարդկանց տեղը և քավություն անել նրանց մեղքի համար:

Աստվածաշունչը սովորեցնում է, որ այդ մարդը Նազովրեցի Հիսուսն էր: Եբրայեցիների թղթի հեղինակը գրում է մեզ, որ քանի որ Նա եկավ Աբրահամի զավակներին «ձեռք մեկնելու» (կամ՝ օգնելու) համար, անհրաժեշտ էր, որ Նա լիներ Իր եղբայրների պես՝

6. Գործք 4.12
7. Եսայի 45.22, Հռոմեացիների 10.13
8. Ֆրենսիս Տուրրետին, *«Էլենկտիկ աստվածաբանության հիմունքներ»* (Ֆիլիպսբուրգ, Նյու Ջերսի, «P&R», 1994թ.), հտ. 2, էջ 303
9. Եզեկիել 18.4
10. Եբրայեցիների 10.4

ամեն ինչում, և քանի որ «մանուկները» մարմնի և արյան մասնակից եղան, Նա էլ մասնակից եղավ այդ բաներին[11]: Ահա թե ինչու, երբ Պողոս առաքյալը գրեց, որ Քրիստոսը միակ միջնորդն է Աստծո և մարդկանց միջև, նա անվանեց Նրան «Հիսուս Քրիստոս մարդը»[12]: Աստծո ժողովրդի Փրկիչը լինելու համար անհրաժեշտ էր, որ Խոսքը մարմին դառնար և բնակվեր մեր մեջ, և որ «Աստծո կերպարանքում լինելով»՝ Նա «կերպարանքով մարդու պես գտնվեր»[13]: Պիղատոսի՝ «Ահա այն մարդը» հայտնի հայտարարությունը ևս մեկ հիշեցում է այն մասին, որ Հիսուս Քրիստոսն այդ մարդն էր[14]:

ԵՐԿՈՒ ԲՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՍՏԾՈ ՁԱՅՐՈՒՅԹԸ

Համաձայն Սուրբ գրքի՝ Աստծո բարկությունը և զայրույթը վեր են ամեն հասկացողությունից[15]: Երկիրը սարսռում է Նրա դատաստաններից, և նույնիսկ բոլոր ազգերի մեկտեղված զորությունը չի կարող դիմանալ Նրա ցասմանը[16]: Սա է պատճառը, որ մեկ օր մարդկանցից ամենազորավորներն աղաղակելու են, որ սարերն ընկնեն իրենց վրա և թաքցնեն իրենց Նրա զայրույթից[17]: Նույնիսկ սաղմոսերգուներն ու մարգարեները, ովքեր ապրում էին Աստծո ներկայության մեջ, համակվում էին երկյուղածությամբ՝ Նրա ցասման կործանարար զորությունից: Տեսնելով այն՝ նրանք հարցնում էին. «Ո՞վ կկանգնի Քո առջև Քո բարկության ժամանակ»[18], կամ՝ «Նրա ցասման առջև ո՞վ կկանգնի, և ո՞վ կդիմանա Նրա բարկությունը բորբոքվելիս»[19]: Չգտնելով ոչ մի պատասխան իրենց սարսափով լի մտորումներին՝ նրանք միայն եզրակացնում էին. «Դու ահավոր ես, ո՛վ Տեր»[20]:

Այն ամենի լույսի ներքո, ինչ մենք գիտենք Աստծո զայրույթի մասին, կարող ենք ճշտորեն եզրակացնել, որ եթե Նազովրեցի Հիսուսը հասարակ մարդ կամ ստեղծված էակ լիներ, Նա ոչ մի դեպքում չէր դիմանա Աստծո զայրույթին, որը բորբոքվել էր Նրա ժողովրդի մեղքերի դեմ: Այնուամենայնիվ, Նա կարողացավ կրել այն մինչև վերջ և հաղթանակ տանել, քանի որ Նա մարմնավորված Աստված էր, և Նրա աստվածային ամենակարող էությունը պահպանում էր

11. Եբրայեցիների 2.14–17
12. Ա Տիմոթեոս 2.5
13. Հովհաննես 1.1,14, Փիլիպեցիների 2.6–8
14. Հովհաննես 19.5
15. Սաղմոս 90.11
16. Երեմիա 10.10
17. Հայտնություն 6.16
18. Սաղմոս 76.7
19. Նաում 1.6
20. Սաղմոս 76.7

Նրան: Վեստմինստերի մեծ հարցուպատասխանքը համաձայնում է այս պնդման հետ. «Հարց 38. Ինչո՞ւ էր անհրաժեշտ, որ այդ Միջնորդն Աստված լիներ: Պատասխան. Անհրաժեշտ էր, որ այդ Միջնորդն Աստված լիներ, որպեսզի կարողանար պահպանել մարդկային բնությունը և թույլ չտար, որ այն կործանվեր Աստծո անսահման զայրույթի և մահվան զորության ներքո»:

Հաշվի առնելով Աստծո զայրույթի զորությունը՝ մենք պետք է հասկանանք ճշմարտությունը Քրիստոսի աստվածության մասին: Այնուամենայնիվ, մենք պետք է անչափ զգույշ լինենք, որ չժխտենք կամ չփոքրացնենք հավասարապես կարևոր մի ճշմարտություն. Քրիստոսը կրեց Ամենակարող Աստծո զայրույթը՝ որպես մարդ: Մենք պետք է զգուշությամբ հիշենք, որ Գողգոթայի խաչի վրա իրական զայրույթը թափվեց իրական մարդու վրա և անասելի չափերի իրական տառապանք պատճառեց Նրան: Թեև Քրիստոսի աստվածությունը պահպանեց Նրան, այն ոչ մի դեպքում չմեղմեց Նրա վրա թափված զայրույթը: Նա կրեց «Իր մարմնում»[21] աստվածային զայրույթի ճիշտ այն չափը, որն անհրաժեշտ էր՝ բավարարելու համար աստվածային արդարադատությունը և բերելու խաղաղություն Աստծո և Իր ժողովրդի միջև: Ահա թե ինչու Նա ճշմարտապես «Վշտերի *մարդ* և տրտմության ծանոթ» էր[22]:

ԵՐԿՈՒ ԲՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁՈՀԻ ԳԻՆԸ

Թերահավատները հաճախ հարցնում են. «Ինչպե՞ս կարող է մեկ մարդու մի քանի ժամ տևող տառապանքը խաչի վրա քավել անթիվ մարդկանց բոլոր մեղքերը և փրկել նրանց հավիտենական չարչարանքից: Ինչպե՞ս կարող է մեկ մարդու կյանքը բավարարել արդարադատությունը այդքան մարդկանց համար»: Այս հարցին պատասխանում է Աստվածաշնչի ամենագեղեցիկ և ամենաթանկ վարդապետություններից մեկը. խոսքն Աստծո Որդու անսահման արժեքի և կատարյալ հնազանդության մասին է:

Նա, Ով գամվեց Գողգոթայի խաչին, Աստված էր, և այն կյանքը, որը Նա տվեց Իր ժողովրդի համար, անսահման արժեք ուներ: Նա, Ում կախեցին փայտից, մարդ էր, և Նրա կատարյալ հնազանդությունն Աստծո օրենքին՝ արժանի դարձրեց Նրա զոհը և ապահովեց կատարյալ արդարություն, որը վերագրվեց Իր ժողովրդին: Այսպիսով, մենք պատասխանում ենք թերահավատների այն հարցին, թե ինչպես մեկ մարդը կարող էր վճարել շատերի համար՝ մատնացույց

21. Ա Պետրոս 2.24
22. Եսայի 53.3 (NKJV), շեղագիրն ավելացրած է

անելով Հիսուս Քրիստոսին, Ով կարող էր փրկել մարդկանց անթիվ բազմությունների Իր անսահման արժեքով՝ որպես Աստված, և Իր կատարյալ հնազանդությամբ՝ որպես Մարդ:

Ինչ վերաբերում է Հիսուս Քրիստոսի աստվածությանը, մենք պետք է կրկին հաստատենք, որ Նա Աստված էր այդ բառի լիարժեք և հստակ իմաստով: Հենց «աստվածության լիությունն» էր, որ հաղորդեց անսահման արժանապատվություն Նրա Անձին և անսահման արժեք՝ Նրա զոհին[23]: Ժնևցի մեծ բարեկարգող Ֆրենսիս Տուրրետինը հրաշալի կերպով նկարագրում է այս ճշմարտությունը. «Թեև փողն ավելի բարձր արժեք չունի թագավորի ձեռքում, քան ստրուկի, թագավորի գլուխը և կյանքն ավելի մեծ արժեք ունեն, քան մի աննշան ստրուկինը (ինչպես որ Դավթի կյանքն ավելի արժեքավոր համարվեց, քան Իսրայելի բանակի կեսը Բ Թագ. 18.3-ում): Այս կերպով, Քրիստոսը պետք է գնահատվի ավելի բարձր, քան բոլոր մարդիկ միասին: Մեկ անսահման արժեք ունեցող Անձի արժանապատվությունը կլանում և ոչնչացնում է բոլորիս հասանելի անսահման պատիժը»[24]: Ջոն Նյուտոնն արձագանքում է այս խոսքերին.

> «Եթե Մեսիան ընդամենը անմեղ և կատարյալ մարդ լիներ, Նա կարող էր կատարելապես հնազանդվել Աստծո կամքին, բայց դրանից կշահեր միմիայն Ինքը: Ամենագերազանց և վեհ արարածը չի կարող գերազանցել Աստծո արարչագործության օրենքը: Որպես արարած՝ նա սահմանափակ է և պարտավոր է ծառայել Աստծուն իր ամենով, և նրա պարտականությունները մշտապես համարժեք են լինելու նրա կարողությանը: Այնուամենայնիվ, այն հնազանդությունը, որն ընդունելի և հասանելի է ուրիշներին՝ հազարավորներին և միլիոնավորներին, նրանց, ովքեր կամենում են աղաչել դրա համար, պետք է կապ ունենա [աստվածային] բնության հետ, որը չունի նման սահմանափակում»[25]:

Կրկին հարցնում ենք. «Ինչպե՞ս մեկ Մարդու կյանքը կարող է բավարարել աստվածային արդարադատությունը շատերի համար»: Պատճառն այն է, որ Հիսուս Քրիստոսը ճշմարիտ Աստված է, և Նրա կյանքն արժե ավելին, քան մնացած բոլորի կյանքերը միասին: Մի պահ պատկերացրեք, որ ամբողջ արարչագործությունը դրվում է կշեռքի նժարի վրա՝ բարձր սարերը և խլուրդների թմբիկները, փոշե-

23. Դեբնին գրում է. «Եթե չլիներ աստվածային բնություն, որն անսահման արժանապատվություն կհաղորդեր Նրա Անձին, Նրա կողմից մեղքի անեծքը նույնիսկ մի քանի տարի շարունակ կրելը բավական չէր լինի՝ աշխարհի մեղքերը քավելու համար»: Ռոբերտ Լյուիս Դեբնի, *«Համակարգված աստվածաբանություն»* (Էդինբուրգ, «Banner of Truth», 1985թ.), էջ 201:

24. Տուրրետին, *«Էլենկտիկ աստվածաբանություն»,* հտ. 2, էջ 437:

25. Ջոն Նյուտոն, *«Ջոն Նյուտոնի աշխատությունները»* (Էդինբուրգ, «Banner of Truth», 1985թ.), հտ. 4, էջ 60:

հատիկները և աստղերը, մկները և մարդիկ, և այն ամենը, ինչ եղել է և կլինի: Իսկ հետո պատկերացրեք, որ Քրիստոսը ոտք է դնում մյուս նժարի վրա: Կշեռքն անմիջապես կթեքվի Նրա օգտին, քանի որ Նրա արժեքն անսահմանորեն գերազանցում է մնացած ամեն ինչը:

Եթե նույնիսկ լիներ մի անմեղ մարդ կամ անարատ հրեշտակ, որը կամենար մահանալ, նրա մահը չէր կարողանա քավել մեր մեղքը: Եթե նույնիսկ անթիվ-անհամար հրեշտակներ զոհաբերեին իրենց անբիծ կյանքերն այդ խաչափայտի վրա, նրանց զոհը չէր կազմի պահանջվող վճարի չափը: Մեր փրկությունն անսահման արժեք ունեցող զոհ էր պահանջում, և մեր «մեծ Աստված և Փրկիչ Հիսուս Քրիստոսն» ունի այդ արժեքը[26]: Մենք չենք փրկվել կործանման ենթակա արծաթով և ոսկով, այլ՝ պատվական արյամբ՝ անբիծ և անարատ Գառան արյամբ, Քրիստոսի արյամբ, Աստծո արյամբ[27]:

Մենք ցույց տվեցինք, որ Քրիստոսի աստվածությունն անհրաժեշտ էր, որպեսզի Նրա Անձը և զոհն անսահման արժեք ունենային: Այնուամենայնիվ, մենք կրկին պետք է խիստ զգույշ լինենք, որ չժխտենք հավասարապես էական մի ճշմարտություն. Քրիստոսը մարդ էր, որի կատարյալ հնազանդությունն Աստծո օրենքին՝ թույլ տվեց Նրան մահանալ Իր ժողովրդի մեղքերի համար և կատարյալ արդարություն վերագրել Իր ժողովրդին[28]: Առաջինը՝ մենք պետք է հասկանանք, որ մարդկանց մեղքերի համար մահացող անձը պետք է կատարյալ և անմեղ լիներ: Հակառակ դեպքում, նրա կյանքը կկորսվեր. նա մահվան կդատապարտվեր և կհայտնվեր հավիտենական պատժի ներքո՝ իր իսկ անօրինությունների համար: Այսպիսով, Աստված ընդունեց Քրիստոսի Անձը՝ որպես մեղքի զոհ, քանի որ Նա կատարելապես հնազանդվել էր Աստծո օրենքին: Պարզ ասած՝ մեղավորը չի կարող զոհել իր կյանքը այլ մարդու մեղքերի համար. փոխարենը՝ նա ենթակա է մահվան իր իսկ հանցանքի համար: Քանի որ Հիսուս Քրիստոսն անմեղ մարդ էր, Նա կարող էր անխոչընդոտ կերպով զոհել Իր կյանքն Իր ժողովրդի մեղքերի համար[29]:

Երկրորդը՝ մենք պետք է հասկանանք, որ մարդու փրկության համար պահանջվում է ավելին, քան պարզապես հանցանքը հեռացնելը. նա պետք է նաև արդարություն ստանա: Որպեսզի մարդը խաղաղություն ունենա Աստծո հետ, նա պետք է ավելի քան ներված լի-

26. Տիտոս 2.13
27. Ա Պետրոս 1.18,19, Գործք 20.28
28. «Վերագրել» բառը նշանակում է «համարել կամ հաշվեգրել»: Հավատացյալի վերաբերյալ այս բառը նշանակում է, որ Քրիստոսի արդարությունը (Նրա կատարյալ հնազանդությունը) համարվում կամ հաշվեգրվում է նրան: Այլ կերպ ասած՝ Քրիստոսի արդարությունն ավելանում է հավատացյալի հաշվին: Այս կերպով, Աստված արդար է համարում հավատացյալին:
29. Եբրայեցիների 4.15

նի. նա պետք է արդար լինի Աստծո առջև: Դավիթը պարզորեն ցույց է տալիս այս ճշմարտությունը, երբ պատասխանում է դարավոր հարցին այն մասին, թե ով կարող է բարձրանալ Տիրոջ սարը, և ով կարող է կանգնել Նրա սրբության վայրում. «Նա, ով սուրբ է ձեռքով և անարատ՝ սրտով, որ իր անձն անիրավության չի տալիս և երդում չի անում նենգությամբ»[30]:

Աստծո ներկայության մեջ մուտք գործելու մեծագույն պահանջն արդարությունն է, ինչը նշանակում է բացարձակ համապատասխանություն Աստծո օրենքին և կատարյալ հնազանդություն՝ առանց թեկուզ մեկ շեղման՝ սրտում կամ գործերում: Այս ճշմարտությունն անհաղթահարելի խոչընդոտ է անկում ապրած մարդու համար: Աստվածաշունչը պարզորեն վկայում է, որ ոչ ոք արդար չէ, որ բոլորը մեղանչել են, և որ մեր մշտական բարոյական ձախողումներն անհնար են դարձրել օրենքի միջոցով արդարություն ունենալը[31]: Պարզ ասած՝ մենք լիովին անարդար արարածներ ենք՝ զուրկ բարոյականությունից և բացարձակապես որակազրկված՝ Աստծո ներկայության մեջ կանգնելու համար: Մենք անզոր և անհույս ենք ինքներս մեզանում[32]:

Ավետարանի բարի լուրն այն է, որ Նազովրեցի Հիսուսն Աստծո առջև ապրեց կատարելապես արդար կյանքով: Նրա ամեն մի միտքը, խոսքը և գործը համապատասխանում էր Աստծո կամքին՝ առանց աննշան շեղման: Նրա կյանքի ամեն մի պահին Նա սիրում էր Իր Տեր Աստծուն Իր ամբողջ սրտով, անձով, մտքով և զորությամբ[33]: Այն ամենը, ինչ Նա արեց, նույնիսկ այնպիսի հասարակ բաները, ինչպիսիք են ուտելը և խմելը, Աստծո փառքի համար էին[34]: Այսպիսով, Հայրը կարող էր մշտապես վկայել Նրա մասին. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, Ում Ես հավանեցի»[35]:

Մենք պետք է հասկանանք, որ Քրիստոսը ոչ միայն մահացավ Իր ժողովրդի համար, այլև ապրեց կատարյալ կյանքով նրանց համար: Եվ այս կատարյալ կյանքը վերագրվեց կամ հաշվեգրվեց ամեն հավատացողի[36]: Ահա թե ինչու է Պողոս առաքյալը գրում, որ մենք Աստծո արդարությունն ենք Նրանում[37]: Պողոսն այսպես է բացատրում այս ճշմարտությունը. «Բայց հիմա առանց օրենքի Աստծո արդարությունը հայտնված է՝ օրենքից և մարգարեներից վկայված լինելով, այսինքն՝ Աստծո արդարությունը, որ Հիսուս Քրիստոսի հա-

30. Սաղմոս 24.4
31. Հռոմեացիների 3.10,20–23, Գաղատացիների 2.16
32. Հռոմեացիների 5.6, Եփեսացիների 2.12
33. Մարկոս 12.30
34. Ա Կորնթացիների 10.31
35. Մատթեոս 3.17, 17.5
36. Հռոմեացիների 4.22–24, 5.1
37. Բ Կորնթացիների 5.21

վատքից է, այն ամենի համար և ամենի վրա, որ հավատում են, որովհետև խտրություն չկա»[38]:

Վերագրման այս թանկ վարդապետությունը ցույց է տալիս տարբերությունն առաջին և երկրորդ Ադամների միջև[39]: Առաջին Ադամն իր ցեղի առաջնորդն էր: Նա ապրեց Պարտեզում և մեղանչեց, ինչն ազդեցություն թողեց թե՛ իր, թե՛ իր սերունդների վրա: Այսպիսով, Պողոս առաքյալը եզրակացնում է, որ «մեկի անհնազանդությամբ շատերը մեղավորներ եղան», և «մեկի հանցանքով շատերը մահացան»[40]: Նմանապես, սակայն ավելի մեծ առումով, երկրորդ Ադամը՝ Հիսուս Քրիստոսը, ստանձնեց Իր ժողովրդի առաջնորդի դիրքը: Եվ Նա ոչ միայն մահացավ, այլև ապրեց նրանց համար, որպեսզի Իր կատարելապես հնազանդ կյանքը հավատքի միջոցով վերագրվեր նրանց որպես պարգև: Ահա թե ինչու է Պողոս առաքյալը եզրակացնում, որ «Մեկի հնազանդությամբ շատերն արդարներ կլինեն»[41]:

Քրիստոսը պետք է Աստված լիներ, որպեսզի Նրա աստվածության շնորհիվ Նրա զոհն Իր ժողովրդի համար անսահման արժեք ունենար: Նմանապես, Քրիստոսը պետք է մարդ լիներ, որպեսզի ապրեր կատարելապես հնազանդ կյանքով, մահանար մեղավորների փոխարեն, իսկ հետո վերագրեր Իր արդար կյանքը բոլոր հավատացողներին:

ԵՐԿՈՒ ԲՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՇԱՃ ՄԻՋՆՈՐԴ

Վեբսթերը սահմանում է «միջնորդ» բառը որպես «նա, ով լիազորված է և կարող է միջամտել երկու կողմերի միջև, որպեսզի հաշտեցնի իրար հետ կամ օգնի հասկանալ իրար»: Աստծո և մարդկանց միջև պատշաճ միջնորդ լինելու համար անհրաժեշտ էր, որ Նազովրեցի Հիսուսը լիներ և՛ Աստված, և՛ Մարդ՝ մեկ Անձում: Ճշմարիտ մարդեղությունն անհրաժեշտ էր, որպեսզի Նա կարողանար դնել Իր ձեռքը մարդու վրա՝ նրա փրկության և մխիթարության համար: Ճշմարիտ աստվածությունն անհրաժեշտ էր, որպեսզի Նա կարողանար դնել Իր ձեռքն Աստծո վրա և գործել Նրա հետ: Ո՞ր ստեղծվածը կարող էր փորձել նման բան անել և կենդանի մնալ: Աստվածաշնչում մենք տեսնում ենք, որ մեծագույն սերովբեն չի համարձակվում պարզել իր ձեռքը և հպվել Նրան, Ով կործանարար կրակ է և բնակվում է անմատույց լույսի մեջ[42]: Սերովբեից պահանջվում է իր

38. Հռոմեացիների 3.21,22
39. Աստվածաշունչը պատկերում է Ադամին և Քրիստոսին որպես առաջին և վերջին Ադամների: Կարդացեք Հռոմեացիների 5.14 և Ա Կորնթացիների 15.45 խոսքերը:
40. Հռոմեացիների 5.15–19
41. Հռոմեացիների 5.19
42. Եբրայեցիների 12.29, Ա Տիմոթեոս 6.16

ամբողջ զորությունը, որ նա պարզապես կանգնի Աստծո ներկայության մեջ՝ խոնարհված գլխով և ծածկված երեսով[43]: Սա ևս մեկ ապացույց է, որ թեև մեր միջնորդը պետք է մարդ լինի, Նա նույնպես պետք է լինի ավելին, քան ամենազորավոր հրեշտակները կամ մեծագույն արարածները: Նա պետք է Աստված լինի, որպեսզի կարողանա գործել Աստծո հետ՝ մեր փոխարեն:

Նազովրեցի Հիսուսը համապատասխանում է այս երկու որակավորումներին: Նա մարդ է՝ մեզ նման, քանի որ Նա, ինչպես և մենք, մասնակից եղավ մարմնին և արյանը, և չի ամաչում եղբայրներ անվանել մեզ[44]: «Որովհետև ոչ թե այնպիսի քահանայապետ ունենք, որ չկարողանա մեր տկարություններին կարեկից լինել, այլ մի այնպիսին, որ ամեն բանով փորձված՝ մեր նմանությամբ, բայց առանց մեղքի»[45]: Միևնույն ժամանակ, Նա Աստծո Որդին է՝ սուրբ, անմեղ, անարատ, մեղավորներից առանձնացված և երկնքից վեր բարձրացած[46]: Մեր մեղքերի սրբությունն Իրենով անելուց հետո, Նա նստեց Մեծության աջ կողմը՝ բարձունքներում[47]: Մեր փոխարեն Նա անցավ երկինքներով և դրեց Իր ձեռքն Ամենակարողի վրա[48]:

Այն, ինչ նկարագրեցին այս մի քանի էջերը Քրիստոսի Անձի վերաբերյալ, նույնիսկ չի ներկայացնում Նրա ճանաչողության ահռելի սարի ստորոտները: Այնուամենայնիվ, ասվածի նպատակն էր՝ հորդորել ծառայողներին և աշխարհականներին հետազոտել Քրիստոսի Անձի բազմապիսի փառքը և հայտնի դարձնել այն Ավետարանի միջոցով: Մենք միշտ պետք է հիշենք և արժևորենք մեր սրտերում այն փաստը, որ մենք փրկված ենք ոչ միայն շնորհիվ այն աշխատանքի, որը Քրիստոսը կատարեց մեզ համար, այլև շնորհիվ այն բանի, թե Ով էր Նա, Ով է Նա, և Ով է Նա լինելու հավիտյան:

43. Եսայի 6.2,3
44. Եբրայեցիների 2.11,14
45. Եբրայեցիների 4.15
46. Եբրայեցիների 7.26
47. Եբրայեցիների 1.3
48. Եբրայեցիների 4.14

ԳԼՈՒԽ ՔՍԱՆ

Հիսուս Քրիստոսի խաչը

«Եվ ինն երորդ ժամին Հիսուսը մեծ ձայնով աղաղակեց և ասաց. «Էլի, Էլի լամա սաբաքթանի», որ թարգմանվում է՝ «Իմ Աստված, Իմ Աստված, ինչո՞ւ թողեցիր Ինձ»»:

— Մարկոս 15.34

«Եվ Ինքը նրանցից հեռացավ մի քարընկեցի չափ, ծունր դրեց, աղոթք էր անում և ասում. «Հայր, եթե կամենաս, այս բաժակը անցկացրու Ինձնից, սակայն ոչ թե Իմ կամքը, բայց Քո՛ կամքը լինի»: Եվ հրեշտակ երևաց Նրան երկնքից, և զորացնում էր Նրան: Եվ Նա, տագնապի մեջ լինելով, ավելի եռանդով էր աղոթք անում: Եվ Նրա քրտինքն էր ինչպես արյան կաթիլներ, որ թափվում են երկրի վրա»:

— Ղուկաս 22.41-44

«Եվ երբ որ Հիսուսը քացախն առավ, ասաց. «Կատարվա՛ծ է», և գլուխը խոնարհեցրեց. հոգին ավանդեց»:

— Հովհաննես 19.30

Մեր առջև այս գրքի ամենակարևոր գլուխն է: Քրիստոնյաների մեծամասնությունը կհամաձայնի, որ Հիսուս «Քրիստոսի խաչը» նաև մարդկության պատմության ամենակարևոր գլուխն է: Այս թեման չի կարող բաժանվել ավելի փոքր մասերի, նույնիսկ՝ ընթերցողի հարմարավետության համար: Սա Ավետարանի սիրտն է, և եթե մենք պետք է աշխատենք՝ այն հասկանալու համար, ուրեմն արժե կատարել այդ աշխատանքը:

Ժամանակակից Ավետարանը քարոզելու մեծագույն խնդիրներից մեկը հետևյալն է. այն հազվադեպ է բացատրում Քրիստոսի խաչի մասին: Բավական չէ ասել, որ Նա մահացավ, քանի որ բոլորն են մահանում: Բավական չէ ասել, որ Նա մահացավ պատվավոր մահով, քանի որ այդպես մահացել են նաև նահատակները: Մենք պետք է հասկանանք, որ ամբողջովին չենք ազդարարել Քրիստոսի մահը և Նրա մահվան փրկարար զորությունը, քանի դեռ չենք պար-

զաբանել այդ իրադարձության հետ առնչվող անհասկանալի բանեը և չենք բացատրել դրա ճշմարիտ նշանակությունը մեր ունկնդիրներին: Նա մահացավ՝ կրելով Իր ժողովրդի անօրինությունները և աստվածային պատիժը նրանց մեղքերի համար: Նա թողվեց Աստծուց և փշրվեց Աստծո զայրույթի ներքո՝ մեր փոխարեն:

ԹՈՂՎԱԾ՝ ԱՍՏԾՈՒՅ

Աստվածաշնչի ամենից շատ անհանգստացնող և նույնիսկ մտահոգիչ հատվածներից մեկը Մարկոսի պատմությունն է հռոմեական խաչին գամված Մեսիայի հարցի մասին: Նա բարձրաձայն բացականչեց. «Էլի, Էլի լամա սաբաքթանի», ինչը թարգմանվում է «Իմ Աստվա՛ծ, Իմ Աստվա՛ծ, ինչո՞ւ թողեցիր Ինձ»[1]:

Հաշվի առնելով այն, ինչ մենք գիտենք Աստծո Որդու անսխալական բնության և Հոր հետ ունեցած կատարյալ հարաբերությունների մասին՝ Նրա խոսքերը դժվար է ընկալել: Այնուամենայնիվ, դրանք բացահայտում են խաչի իմաստը և Նրա մահվան պատճառը: Այն, որ Նրա խոսքերը նաև գրված են եբրայերենով, շատ կարևոր բան է հայտնում մեզ: Հեղինակը չէր կամենում, որ մենք որևէ թյուրըմբռնում ունենայինք:

Այս խոսքերում Քրիստոսը ոչ միայն աղաղակում է առ Աստված, այլև, որպես կատարյալ Ուսուցիչ, ուղղորդում է Իրեն տեսնողներին և ապագա ընթերցողներին դեպի ամենակարևոր մեսիական մարգարեություններից մեկը Հին կտակարանում՝ Սաղմոս 22-ը: Թեև այս սաղմոսն ամբողջությամբ բաղկացած է խաչի մասին մանրամասն մարգարեություններից, մենք կանդրադառնանք միայն առաջին վեց խոսքերին.

> «Իմ Աստվա՛ծ, Իմ Աստվա՛ծ, ինչի՞ համար ես թողել Ինձ. հեռու ես Իմ փրկությունից և Իմ հառաչանքի խոսքերից: Ո՛վ իմ Աստված, Ես կանչում եմ ցերեկը, բայց Դու չես պատասխանում. գիշերն էլ, բայց հանգստություն չկա Ինձ համար: Բայց Դու սուրբ ես, ո՛վ Իսրայելի գովությունների մեջ բնակվող: Քեզ հուսացին մեր հայրերը. նրանք հուսացին, և Դու փրկեցիր նրանց: Դեպի Քեզ աղաղակեցին, և ազատվեցին. Քեզ հուսացին և չամաչեցին: Իսկ Ես որդ եմ և ոչ թե մարդ. մարդկանց նախատինք և ժողովրդի անարգանք»:

Քրիստոսի օրերում հրեական Աստվածաշունչը համարակալված չէր գլուխներով և խոսքերով, ինչպես այսօր: Այնպես որ, երբ որևէ ռաբբունի ցանկանում էր ուղղել իր ունկնդիրների ուշադրությունը որևէ սաղմոսի կամ այլ սուրբգրային հատվածի, նա անում էր դա՝ մեջբերելով այդ հատվածի առաջին տողերը: Խաչի վրայից եկող այս աղաղակով Հիսուսն ուղղորդում է մեզ դեպի Սաղմոս 22-ը և հայտնություններ է տալիս Իր չարչարանքների բնույթի և նպատակի մասին:

1. Մարկոս 15.34

Առաջին և երկրորդ խոսքերում մենք լսում ենք Մեսիայի բողոքը. Նա համարում է, որ թողված է Աստծուց: Մարկոսն օգտագործում է հունարեն *«էգկատալեի՛պո»* բառը, որը նշանակում է «թողնել, լքել կամ հեռանալ»[2]: Սաղմոսերգուն օգտագործում է եբրայերեն *«ազաբ»* բառը, որը նշանակում է «թողնել կամ լքել»[3]: Երկու դեպքում էլ իմաստը պարզ է: Մեսիան գիտի, որ Աստված թողել է Իրեն և չի լսում Իր աղաղակը: Այս լքվածությունը խորհրդապատկերային կամ պոետիկ չէ. այն իրական է: Գողգոթայի խաչի վրա Աստծո Որդին զգաց, թե ինչ է նշանակում թողված լինել Աստծուց՝ ավելի, քան ցանկացած անձնավորություն:

Այս սաղմոսի չորրորդ և հինգերորդ խոսքերում Մեսիայի տառապանքն էլ ավելի ծանր է դառնում, երբ Նա հիշում է Աստծո ուխտի հավատարմությունն Իր ժողովրդի հանդեպ: Նա հայտարարում է. «Քեզ հուսացին մեր հայրերը. նրանք հուսացին, և Դու փրկեցիր նրանց: Դեպի Քեզ աղաղակեցին, և ազատվեցին. Քեզ հուսացին և չամաչեցին»: Հակասությունն ակնհայտ է: Աստծո ուխտի ժողովրդի պատմության մեջ չի եղել նույնիսկ մեկ դեպք, երբ արդար մարդն աղաղակեր Աստծուն և չփրկվեր: Այնուամենայնիվ, այժմ անմեղ Մեսիան լիովին լքված է և գամված է խաչափայտին: Ո՞րն էր Աստծո հեռանալու պատճառը: Ինչո՞ւ Նա երես թեքեց Իր միածին Որդուց:

Հիսուսը ներհյուսում է մեզ հուզող հարցերի պատասխաններն Իր բողոքի մեջ: Խոսք 3-ում Նա անդրդվելիորեն պնդում է, որ Աստված սուրբ է, իսկ խոսք 6-ում խոստովանում է անասելի մի բան. այն, որ Ինքը որդ է դարձել, և այլևս մարդ չէ: Ինչո՞ւ Քրիստոսը պետք է նման նվաստացուցիչ և ստորացնող կերպով խոսեր Իր մասին: Մի՞թե Նա որդ էր համարում Իրեն, քանի որ Նա «մարդկանց նախատինք և ժողովրդի անարգանք» էր դարձել, թե՞ Նրա ինքնանվաստացումն ավելի մեծ և զարհուրելի պատճառ ուներ[4]: Ի վերջո, Նա չաղաղակեց. «Իմ Աստվա՛ծ, Իմ Աստվա՛ծ, ինչո՞ւ մարդիկ թողեցին Ինձ». Նա ձգտում էր իմանալ, թե ինչու Աստված արեց դա: Պատասխանը կարելի է գտնել միայն մեկ դառը ճշմարտության մեջ. Աստված դրեց մեր բոլորի անօրինությունը Նրա վրա և, ինչպես մի որդ, Նա թողվեց և ջախջախվեց մեր փոխարեն[5]:

ՕՁԸ ԵՎ ՔԱՎՈՒԹՅԱՆ ԱՅԾԸ

Դժգույն այլաբանությունն այն մասին, որ Մեսիան մահանում է որպես որդ, միակը չէ Աստվածաշնչում: Գոյություն ունեն ևս երկու այլաբանություններ, որոնք նույնիսկ ավելի խորը ցույց են տա-

2. Մարկոս 15.34
3. Սաղմոս 22.1
4. Սաղմոս 22.6
5. Եսայի 53.5,6

լիս մեզ խաչի էությունը և բացահայտում են, թե ինչ Նա պետք է կրեր, որպեսզի կատարեր Իր ժողովրդի փրկությունը[6]: Եթե մենք սարսռում ենք սաղմոսերգուի խոսքերից, մենք է՛լ ավելի հանկարծակիի կգանք, երբ կարդանք, որ Աստծո Որդին նույնպես նմանեցվում է անապատում բարձրացրած օձի և մեղքեր կրող երկու այծերի, որոնցից մեկը սպանվում էր, իսկ մյուսը՝ արտաքսվում:

Առաջին այլաբանությունը գտնվում է Թվոց գրքում: Քանի որ Իսրայելը գրեթե մշտապես ապստամբում էր Տիրոջ դեմ և մերժում էր Նրա ողորմությամբ տրված մատակարարումը, Աստված «կիզող օձեր» ուղարկեց ժողովրդի մեջ, և շատերը մահացան[7]: Այնուամենայնիվ, մարդկանց ապաշխարության և Մովսեսի բարեխոսության արդյունքում Աստված ևս մեկ անգամ փրկություն տվեց նրանց: Նա պատվիրեց Մովսեսին մի կիզող օձ շինել և այն մի ձողի վրա դնել: Դրանից հետո Նա խոստացավ, որ եթե այն մարդը, որին օձ էր կծել, նայեր այդ պղնձե օձին, կապրեր:

Առաջին հայացքից, միտքն այն մասին, որ «բուժումն ուներ նույն տեսքը, ինչ խոցողը», տարօրինակ է թվում[8]: Այնուամենայնիվ, սա ազդեցիկ օրինակ է խաչի մասին: Իսրայելցիները մահանում էին կիզող օձերի թույնից. մարդիկ մահանում են իրենց իսկ մեղքի թույնից: Մովսեսը պատվեր ստացավ՝ դնել մահվան պատճառը ձողի վրա. Աստված դրեց մեր մահվան պատճառն Իր Որդու վրա, երբ Նա գամված էր խաչին: Նա եկավ «մեղքի մարմնի նմանությամբ» և դարձավ «մեղք՝ մեր փոխարեն»[9]: Այն իսրայելցիները, որոնք հավատացին Աստծուն և նայեցին պղնձե օձին, ողջ մնացին. այն մարդը, ով հավատում է Աստծո վկայությանը Նրա Որդու մասին և հավատքով նայում է Նրան, կփրկվի[10]: Ինչպես գրված է. «Ո՛վ երկրի բոլոր ծայրեր, դեպի Ինձ դարձե՛ք, որ փրկվեք, որովհետև Ես եմ Աստված, և ուրիշը չկա»[11]:

Ղևտացիների քահանայական գրքում է գտնվում երկրորդ այլաբանությունը: Քանի որ անհնար էր, որ մեկ զոհաբերությունը լիովին խորհրդապատկերեր կամ նկարագրեր Մեսիայի քավչարար մահվան նպատակը, որը բաղկացած էր երկու մասից, զոհաբերվում էր երկու այծ[12]: Առաջին այծը մորթվում էր Տիրոջ առջև՝ որպես մեղքի պատարագ, և դրա արյունը սրսկվում էր Սրբության սրբոցի քողի ետևում գտնվող քավության (կամ՝ շնորհքի աթոռի, NKJV) վերևի և առջևի մասերին[13]: Այն խորհրդանշում էր Քրիստոսին, Ով թափեց Իր

6. Ղուկաս 24.26
7. Թվոց 21.5–9
8. Մեթյու Հենրիի, *«Մեթյու Հենրիի ամբողջ Աստվածաշնչի մեկնությունը»* (Փիբոդի, Մասսաչուսեթս, «Hendrickson», 1991թ.), հատոր 1, էջ 665:
9. Հռոմեացիների 8.3, Բ Կորնթացիների 5.21
10. Ա Հովհաննես 5.10,11
11. Եսայի 45.22
12. Ղևտացիների 16.5–10
13. Ղևտացիների 16.9,15,20

արյունը խաչի վրա, որպեսզի քավություն աներ Իր ժողովրդի մեղքերի համար: Սա Քրիստոսի քավչարար մահվան հրաշալի օրինակ է. Նա թափեց Իր արյունը, որպեսզի բավարարեր Աստծո արդարադատությունը, հանդարտեցներ Նրա զայրույթը և խաղաղություն բերեր: Քահանայապետը բերում էր Տիրոջ առջև երկրորդ այծին՝ որպես քավության այծ[14]: Նա դնում էր այդ կենդանու գլխին «իր երկու ձեռքերը... և...» խոստովանում էր «...նրա վրա Իսրայելի որդիների բոլոր անօրինությունները և նրանց բոլոր հանցանքները՝ իրենց բոլոր մեղքերով»[15]: Դրանից հետո քահանան անապատ էր ուղարկում թողության այծին, և այն տանում էր իր վրա ժողովրդի բոլոր անօրինությունները դեպի մի մեկուսի վայր, որտեղ այն թափառելու էր միայնակ, թողված Աստծուց և կտրված Աստծո ժողովրդից: Այդ քավության այծը Քրիստոսի խորհրդապատկերն էր, Ով «մեր մեղքերն Իր մարմնում խաչափայտի վրա բարձրացրեց» և չարչարվեց ու մահացավ միայնակ՝ «բանակից դուրս»[16]: Սա Քրիստոսի քավչարար մահվան դիպուկ խորհրդապատկերն է. Նա կրեց մեր մեղքը: Սաղմոսերգուն գրում է. «Որքան որ արևելքը հեռու է արևմուտքից, այնքան Նա հեռացրեց մեզնից մեր հանցանքները»[17]:

ՄԵՍԻԱՆ ՄԵՂՔ ԴԱՐՁԱՎ

Ինչպե՞ս մենք կարող ենք դրական համարել այն փաստը, որ Քրիստոսի խորհրդապատկերները պետք է լինեն որդը, թունավոր օձը և այծը: Աստծո Որդուն նման տհաճ բաների հետ նույնացնելը կարող էր հայհոյություն համարվել, եթե դրանց մասին գրված չլիներ Հին կտակարանի գրքերում, և եթե դա չհաստատվեր Նոր կտակարանի հեղինակների կողմից, որոնք նույնիսկ ավելի դժգույն էին պատկերում Նրա անձնազոհ մահը: Առաջնորդվելով Սուրբ Հոգով՝ նրանք ասում են մեզ, որ Աստված «մեղք արեց» Մեսիային, Ով մեղք չգիտեր, և որ Նա, Ով Հոր սիրելին էր, «անեծք» դարձավ Նրա առջև[18]:

Բոլորս նախկինում լսել ենք այս ճշմարտությունները, բայց արդյո՞ք բավականաչափ մտածել ենք դրանց մասին, որ իրապես հասկանանք և թույլ տանք, որ մեր սրտերը կոտրվեն դրանց պատճառով: Խաչի վրա Նա, Ում մասին սերովբեները բացականչում էին «սուրբ, սուրբ, սուրբ», մեղք դարձավ[19]: Այս պնդումը հասկանալու ճանապարհին ոտք դնելը նույնիսկ վտանգավոր է թվում: Մենք տատանվում ենք առաջին իսկ քայլից: Ի՞նչ է նշանակում, որ Նա, Ում մեջ «բնակված

14. Ղևտացիների 16.10
15. Ղևտացիների 16.21
16. Ա Պետրոս 2.24, Եբրայեցիների 13.11,12
17. Սաղմոս 103.12
18. Բ Կորնթացիների 5.21, Գաղատացիների 3.13
19. Եսայի 6.2,3

է աստվածության ամեն լիությունը մարմնապես», մեղք դարձավ[20]: Մենք չպետք է շրջանցենք այս ճշմարտությունը՝ փորձելով պաշտպանել Աստծո Որդու համբավը, բայց և պետք է զգույշ լինենք, որ տգեղ բաներ չխոսենք Նրա անսխալական և անփոփոխ էության դեմ: Ինչպե՞ս Նա մեղք դարձավ: Աստվածաշնչում մենք տեսնում ենք, որ Քրիստոսը մեղք դարձավ նույն կերպով, ինչպես որ հավատացյալը դարձավ «Աստծո արդարությունը» Նրանում[21]: Կորնթոսի եկեղեցուն ուղղված իր երկրորդ նամակում Պողոս առաքյալը գրում է. «Որովհետև Աստված Նրան, որ մեղք չգիտեր, մեզ համար մեղք արեց, որ մենք Աստծո արդարությունը լինենք Նրանում»[22]:

Այս ներկա կյանքում հավատացյալը «Աստծո արդարությունն» է, ոչ թե այն պատճառով, որ նրա բնավորության հետ մաքրագործման աշխատանք է կատարվել, ինչի շնորհիվ նա կատարելապես արդար և անմեղ էակ է դարձել, այլ՝ վերագրման արդյունքում, որով նա արդար է համարվում Աստծո առջև՝ իր փոխարեն Քրիստոսի կատարած աշխատանքի շնորհիվ: Նույն կերպով, Քրիստոսը մեղք դարձավ ոչ թե Իր բնավորության մեջ տեղի ունեցած բարոյական քայքայման պատճառով, որի միջոցով Նա իրապես արատավոր և անարդար կդառնար, այլ՝ վերագրման արդյունքում, որը մեղավոր դարձրեց Նրան Աստծո ատյանի առջև՝ մեր փոխարեն: Խաչի վրա Քրիստոսը մեղավոր չդարձավ. փոխարենը՝ մեր մեղքերը վերագրվեցին Նրան, և Աստված մեղավոր համարեց Նրան մեր հանցանքների մեջ և դատապարտեց Նրան այն դատավճռով, որին մենք էինք արժանի: Նա մեղք չդարձավ՝ մասնակցելով մեր անօրինությանը, այլ՝ կրելով մեր հանցանքը: Մենք չպետք է մոռանանք, որ թեև Նա կրեց մեր մեղքերը, Նա մնաց Աստծո անբիծ և անարատ Գառը, և Նրա զոհն անուշահոտ պատարագ էր Իր Հոր համար[23]:

Այնուամենայնիվ, մենք պետք է հասկանանք, որ այս ճշմարտությունը չի փոքրացնում այն իրողության սարսափելի բնույթը, որ Քրիստոսը մեղք դարձավ մեր փոխարեն: Թեև հանցանքը պարզապես դրվեց Նրա վրա, այդ հանցանքն իրական էր, և այն անասելի տառապանք պատճառեց Նրա Անձին: Նա իրականում զբաղեցրեց մեր տեղը, կրեց մեր մեղքը և հանցանքը և Իր վրա վերցրեց Աստծո զայրույթի ամբողջ ծանրությունը, որին արժանի էր մեր մեղքը:

Մեծ հակադրությունը Նրա ճշմարիտ էության և այն բանի մեջ, թե ինչ Նա «դարձվեց», է՛լ ավելի է հայտնում այն տառապանքը, որը վերապրեց Քրիստոսը: Մեղավորի համար զարհուրելի է երես առ երես

20. Կողոսացիների 2.9
21. Այս գաղափարով ես պարտական եմ Ժան Կալվինին և Բ Կորնթացիների 5.21-ի նրա մեկնությանը:
22. Բ Կորնթացիների 5.21
23. Ա Պետրոս 1.19, Եփեսացիների 5.2

բախվել իր մեղքին և զգալ իր հանցանքի ծանրությունը: Միանգամայն այլ բան է Նրա համար, Ով «մեղք չգիտեր», կրել Իր համար բոլորովին օտար պղծությունը և զգալ մեղավորների անթիվ բազմության հանցանքը: Մեղավորի համար անասելի սարսափ է՝ հանցավոր համարվել Աստծո դատաստանի առջև, սակայն միանգամայն այլ բան է, որ նման վերաբերմունքի է արժանանում Նա, Ով «անմեղ, անարատ» և «մեղավորներից ջոկված» է[24]: Այլ բան է, որ մեղավորը դատապարտվում է Աստծո կողմից, որի հետ նա չի ունեցել որևէ հարաբերություն, և որի հանդեպ նա սեր չի զգում: Եվ միանգամայն այլ բան է, որ Աստծո սիրելի Որդին դատվեց և դատապարտվեց Իր Հոր կողմից, Ում հետ Նա սերտ հաղորդակցություն էր ունեցել հավիտենության ընթացքում, և Ում հանդեպ Նա անբացատրելի և անսահման սեր էր տածում:

ՔՐԻՍՏՈՍՆ ԱՆԵԾՔ ԴԱՐՁԱՎ

Այն, որ Քրիստոսն անեծք դարձավ, նույնքան սարսափելի ճշմարտություն է, որքան և անըմբռնելի. այնուամենայնիվ, երբ մենք մտածում ենք, որ անկարելի է ավելի դժգույն բառեր օգտագործել Նրա վերաբերյալ, Պողոս առաքյալը ջահ է վառում և էլ ավելի է իջեցնում մեզ Քրիստոսի նվաստացման և լքվածության անդունդի մեջ: Մենք մտնում ենք դրա ամենախորը խորշը և տեսնում ենք Աստծո Որդուն, Ով գամված է խաչին և կրում է Իր ամենից տխրահռչակ տիտղոսը՝ «Անիծված՝ Աստծուց»:

Աստվածաշունչը հայտարարում է, որ ամբողջ մարդկությունը գտնվում է Աստծո անեծքի ներքո՝ աստվածային օրենքի պատվիրանները խախտելու համար: Ինչպես որ Պողոս առաքյալը գրում է Գաղատիայի եկեղեցուն. «Որովհետև, որոնք որ օրենքի գործերից են, անեծքի տակ են, քանի որ գրված է, թե «անիծյալ լինի ամեն մարդ, որ չի կենում օրենքի գրքի միջի բոլոր գրվածներում, որ ամենն անի»»[25]: «Անեծք» բառը թարգմանված է հունարեն *«կատա՛ռա»* բառից, որը նշանակում է «նզովք», «անհարգալից վերաբերմունք» կամ «հայհոյանք»: Նոր կտակարանում այն նշանակում է լինել աստվածային անհավանության կամ պարսավանքի ներքո, ինչի հետևանքը դատաստանը և դատապարտությունն է: Աստվածային անեծքը՝ աստվածային օրհնության հականիշն է: Այդ իսկ պատճառով, դիտարկելով Երանելիներին որպես չափանիշ՝ մենք կարող ենք հասկանալ, թե ինչ է նշանակում հայտնվել Աստծո անեծքի ներքո:

> Օրհնվածներին շնորհվում է Երկնքի թագավորությունը, իսկ անիծվածներին թույլ չի տրվում մտնել այնտեղ:

24. Եբրայեցիների 7.26
25. Գաղատացիների 3.10, Երկրորդ Օրինաց 27.26

Օրհնվածները մխիթարվում են Աստծուց, իսկ անիծվածները ենթակա են աստվածային զայրույթի:

Օրհնվածները ժառանգում են երկիրը, իսկ անիծվածները կտրվում են երկրից:

Օրհնվածները կշտացած են, իսկ անիծվածները թշվառ ու դժբախտ են:

Օրհնվածները ողորմություն են գտնում, իսկ անիծվածներն անխղճաբար դատապարտվում են:

Օրհնվածները կտեսնեն Աստծուն, իսկ անիծվածները կհեռացվեն Նրա ներկայությունից:

Օրհնվածներն Աստծո որդիները և դուստրերն են, իսկ անիծվածներին ուրանում են՝ թողնելով խայտառակության մեջ[26]:

Երկնքի տեսանկյունից, նրանք, ովքեր խախտում են Աստծո օրենքը, չար են և արժանի են խորշանքի: Նրանց թշվառություն է սպասում. նրանք արդարացի կերպով հանձնված են աստվածային վրիժառությանը և մատնված են հավիտենական կործանման: Չափազանցություն չէ ասելը, որ վերջին բանը, որը մեղավորը պետք է լսի և կլսի, երբ ոտք դնի դժոխք, այն է, որ ամբողջ արարչագործությունը հոտնկայս կծափահարի Աստծուն՝ երկիրը նրանից ազատելու համար: Ահա թե որքան չար են Աստծո օրենքը խախտողները, և ահա թե ինչպիսի խորշանք են զգում սուրբերը անսուրբների հանդեպ:

Նման ճնակերպումը կոպիտ վիրավորանք է այս աշխարհի և ժամանակակից ավետարանական շարժման մեծամասնության համար: Այնուամենայնիվ, այս մասին խոսում է Աստվածաշունչը, և մենք պետք է անենք նույնը: Եթե, ելնելով քաղաքավարությունից, մենք հրաժարվենք բացատրել կամ նկարագրել Աստվածաշնչի դժգույն խոսքերը, մարդիկ սուրբ չեն համարի Աստծուն, չեն հասկանա իրենց սարսափելի դրությունը և երբեք չեն պատկերացնի կամ գնահատի Քրիստոսի վճարած գինը: Քանի դեռ չենք հասկացել, թե ինչ է նշանակում, որ մարդը գտնվում է աստվածային անեծքի ներքո, մենք երբեք չենք հասկանա, թե ինչ է նշանակում, որ Քրիստոսը «մեզ համար անեծք» եղավ: Մենք երբեք չենք հասկանա խաչափայտի վրա մեզ համար կատարած աշխատանքի ամբողջ զարհուրանքը և սքանչելիքը: «Քրիստոսը գնեց մեզ օրենքի անեծքից՝ մեզ համար անեծք լինելով (քանի որ գրված է, թե «անիծյալ լինի ամեն փայտից կախվածը»)»[27]:

Գաղատացիների 3.10-ում ներկայացված ճշմարտությունն այն էր, ինչն առաջին դարում առաջացրեց հրեաների սաստիկ վրդովմունքը Հիսուս Քրիստոսի և Նրա Ավետարանի հանդեպ: Բոլորը ծանոթ էին

26. Մատթեոս 5.3–12-ի շրջասություն
27. Գաղատացիների 3.13

Աստվածաշնչի սարսափելի ճշմարտությանը այն մասին, որ «կախվածը՝ Աստծուց անիծվածն է»[28]: Այդ դեպքում, ինչպե՞ս Մեսիան կարող էր Փրկիչ և Թագավոր լինել, սակայն մահանալ նման անարգանքով և դատապարտությամբ: Այդ գաղափարն ավելի քան վրդովեցուցիչ էր. այն բացահայտ հայհոյություն էր: Այնուամենայնիվ, հրեաները չհասկացան, որ այդ անեծքը Քրիստոսինը չէր, և որ պարտադիր էր, որ Քրիստոսը դառնար այնպիսին, ինչպիսին իրենք էին, որպեսզի փրկեր իրենց այն ամենից, ինչին արժանի էին[29]: Նա դարձավ որդ, և ոչ թե մարդ, օձ՝ բարձրացրած անապատում, քավության այծ, որը վռնդվեց ժողովրդի ճամբարից, Մեղքը Կրողը և այն Անձը, որի վրա ընկավ Աստծո անեծքը: Եվ Նա արեց այդ ամենը Իր ժողովրդի փոխարեն:

Երկրորդ Օրինաց 27,28 գլուխներում Աստված բաժանեց Իսրայելի ժողովրդին երկու խմբի՝ ուղարկելով մեկին Գարիզին սարը, իսկ մյուսին՝ Գեբաղ սարը: Գարիզին սարում գտնվող մարդկանց պատվիրված էր հռչակել օրհնություններ, որոնք հասնելու էին նրանց, ովքեր ջանասիրաբար հնազանդվում էին իրենց Տեր Աստծուն[30]: Գեբաղ սարում գտնվող մարդկանց պատվիրված էր հռչակել այն անեծքները, որոնք հասնելու էին բոլոր անհնազանդներին[31]: Թեև Քրիստոսն ուներ բոլոր իրավունքները Գարիզին սարի օրհնությունների համար, Նրա Հայրը որոտաց Նրա դեմ Գեբաղ սարից, երբ Նա փայտից կախված էր Գողգոթայում: Երկնքի փակ դռների ետևից Հայրը զարկեց Իր Որդուն բոլոր սարսափներով, որոնք պետք է հասնեին այն մարդկանց, որոնց համար Նա մահացել էր: Երբ Նա բարձրացրեց Իր աչքերը դեպի երկինք՝ Աստծո երեսը գտնելու համար, Նրա Հայրը թեքեց Իր երեսը: Երբ Նա բացականչեց. «Իմ Աստվա՛ծ, Իմ Աստվա՛ծ, ինչո՞ւ թողեցիր Ինձ», Նրա Հայրը՝ որպես Նրա Դատավոր, պատասխանեց. «Տերը՝ Քո Տեր Աստված, նզովում է Քեզ»[32]: Քրիստոսը կրեց Երկրորդ Օրինաց 28-րդ գլխի անեծքները՝ Իր ժողովրդի փոխարեն.

> «Տերը անեծք, տառապանք և հանդիմանություն կուղարկի քեզ համար... մինչև որ բնաջինջ լինես, շուտով կորչես...»[33]:
>
> «Տերն ապշությամբ և կուրությամբ և սրտադողով կզարկի քեզ: Եվ դու կես օրվա ժամանակին կխարխափես, ինչպես որ կույրն է խավարի մեջ խարխափում..., և ազատող չի լինի»[34]:

28. Երկրորդ Օրինաց 21.23
29. Ռիչարդ Ն. Լոնգենեքեր, *«Գաղատացիներ»,* «Խոսք» հրատարակչության Աստվածաշնչի մեկնություն, հտ. 41, (Վակո, Տեխաս, «Word Books», 1990թ.), էջեր 122–23:
30. Երկրորդ Օրինաց 28.1
31. Երկրորդ Օրինաց 28.15
32. Այս գաղափարով ես պարտական եմ Ռ. Չ. Սփրոուլին և նրա քարոզին՝ Գաղատացիների 3.13-ի հիման վրա, որը նա քարոզեց 2008թ.-ի «Միասին՝ Ավետարանի համար» համաժողովին:
33. Երկրորդ Օրինաց 28.20
34. Երկրորդ Օրինաց 28.28,29

«Կուրախանա Տերը ձեզ վրա՝ ձեզ կորցնելով և բնաջինջ անելով»[35]:

«Անիծյալ կլինես դու քաղաքի մեջ, և անիծյալ՝ դաշտի մեջ»[36]:

«Անիծյալ կլինես մտած ժամանակդ, և անիծյալ՝ դուրս եկած ժամանակդ»[37]:

«Գլխիդ վրայի երկինքը՝ պղնձի, և տակիդ երկիրը երկաթի կդառնա»[38]:

«Եվ դու զարմանքի և առակի և կատակի ենթակա կլինես այն բոլոր ժողովուրդների մեջ, ուր որ Տերը քեզ կտանի»[39]:

«Եվ այս բոլոր անեծքները քեզ վրա կգան, քեզ կհալածեն և քեզ կհասնեն, մինչև որ բնաջինջ լինես, որովհետև քո Տեր Աստծո խոսքին չլսեցիր, որ քեզ հրամայած պատվիրաններն ու կանոնները պահես»[40]:

Կրելով մեր մեղքը Գողգոթայի վրա՝ Քրիստոսն անիծվեց՝ ինչպես մի մարդ, ով կուռք է շինում և ծածուկ տեղ է դնում այն[41]: Նա անիծվեց՝ ինչպես մի մարդ, ով անարգում է իր հորը և մորը, ով փոխում է իր դրացու սահմանը և կույրին ճանապարհից մոլորեցնում է[42]: Նա անիծվեց՝ ինչպես մի մարդ, ով ծռում է պանդուխտի, որբի և այրի կնոջ իրավունքը[43]: Նա անիծվեց՝ ինչպես մի մարդ, ով մեղավոր է ամեն տեսակի անբարոյության և պղծության մեջ, ով ծածուկ սպանում է իր դրացուն և կաշառք է վերցնում՝ անմեղ մարդու սպանելու համար[44]: Նա անիծվեց՝ ինչպես մի մարդ, ով չի կենում Օրենքի խոսքերի մեջ՝ դրանք կատարելու համար[45]: Առակաց գրքի իմաստունը գրում է. «Ինչպես որ ճնճղուկը թռթռում, և ծիծեռնակը թռչում է, այնպես էլ զուր անեծքը չի կատարվի»[46]: Այնուամենայնիվ, անեծքը հասավ Ընձյուղին, ոչ թե այն պատճառով, որ Նրա բնավորության մեջ արատ կար, կամ որ Նրա գործերի մեջ սխալմունք կար, այլ որովհետև Նա վերցրեց Իր ժողովրդի մեղքերը և կրեց նրանց անօրինությունները Աստծո դատաստանի առջև[47]: Նա կանգնած էր գլխաբաց, անպաշտպան և խոցելի աստվածային դատաստանի ամեն մի հարվածի համար: Դավիթը բացականչեց. «Երանի՜ նրան, որի անօրինությունը թողվեց, և որի մեղքը ծածկվեց: Երանի՜ այն մարդուն, որ Տերն անօրինություն չի համարում նրան, և նենգություն չկա Նրա

35. Երկրորդ Օրինաց 28.63
36. Երկրորդ Օրինաց 28.16
37. Երկրորդ Օրինաց 28.19
38. Երկրորդ Օրինաց 28.23
39. Երկրորդ Օրինաց 28.37
40. Երկրորդ Օրինաց 28.45
41. Երկրորդ Օրինաց 27.15
42. Երկրորդ Օրինաց 27.16–18
43. Երկրորդ Օրինաց 27.19
44. Երկրորդ Օրինաց 27.20–25
45. Երկրորդ Օրինաց 27.26
46. Առակաց 26.2
47. Եսայի 11.1

հոգու մեջ»[48]: Այնուամենայնիվ, խաչի վրա Քրիստոսին վերագրված մեղքը բացահայտվեց Աստծո և երկնային զորքերի առջև: Նա ի ցույց հանվեց մարդկանց առջև և խայտառակվեց թե՛ հրեշտակների, թե՛ դևերի աչքի առջև[49]: Նրա կրած անօրինությունները չներվեցին, և Նրա վրա դրված մեղքերը չծածկվեցին: Եթե մարդն օրհնված է համարվում, որովհետև անօրինությունը չի համարվում նրան, նշանակում է՝ Քրիստոսն անսահմանորեն անիծված էր, քանի որ բոլորիս անօրինությունը դրվեց Նրա վրա[50]: Ահա թե ինչու Նրա հետ վարվեցին՝ ինչպես ուխտը զանց անողի, որի մասին գրված է Մովսբում Մովսիսական ուխտի նորոգման ժամանակ.

> «Տերը չի հաճի նրան խնայելու, այլ այն ժամանակ Տիրոջ բարկությունը և նախանձը կբորբոքվի այն մարդու վրա, և այս գրքի մեջ գրված ամեն անեծքը կիջնի նրա վրա, և Տերը կջնջի նրա անունը երկնքի տակից: Եվ Տերը կբաժանի նրան Իսրայելի բոլոր ցեղերից՝ չարիքի համար, այս Օրենքի գրքում գրված ուխտի բոլոր անեծքների համեմատ»[51]:

Գողգոթայում Մեսիան զատվեց չարիքի համար, և Օրենքի գրքում գրված ամեն մի անեծք դրվեց Նրա վրա: Աբրահամի այս Սերնդի մեջ երկրի բոլոր ընտանիքներն օրհնված են, միայն որովհետև Նա անիծվեց ավելի, քան ցանկացած մարդ, ով ապրել է այս երկրում[52]: Թվոց գրքում գրված է օրհնության ամենահիրաշալի խոստումներից մեկը, որ Աստված տվել է մարդուն: Այն կոչվում է քահանայական կամ Ահարոնի օրհնություն. «Տերը օրհնի քեզ և պահի քեզ: Տերը պայծառեցնի Իր երեսը քեզ վրա և ողորմի քեզ: Տերը բարձրացնի Իր երեսը քեզ վրա և խաղաղություն տա քեզ»[53]: Թեև այս օրհնությունը գեղեցիկ և հաճելի է, այն մեծ աստվածաբանական խնդիր է ստեղծում: Ինչպե՞ս կարող է արդար Աստված նման օրհնություն շնորհել մեղավոր ժողովրդին՝ առանց փոխզիջման գնալու Իր արդարության հետ: Կրկին, պատասխանը խաչն է: Մեղավորը կարող է օրհնություն ստանալ, միայն որովհետև Սուրբը և Արդարը անեծք կրեց[54]: Ցանկացած օրհնություն, որը երբևէ շնորհվել է կամ կշնորհվի Նրա ժողովրդին, ունի միայն մեկ պատճառ. խաչափայտի վրա Քրիստոսը ստացավ քահանայական օրհնության ճիշտ հակառակը[55]: Մեզ ասվում է. «Տերը օրհնի քեզ», միայն որովհետև Նրան

48. Սաղմոս 32.1,2
49. Հռոմեացիների 3.25. «հրապարակավ ցուցադրեց»:
50. Եսայի 53.6
51. Երկրորդ Օրինաց 29.20,21
52. Ծննդոց 12.3
53. Թվոց 6.24–26
54. Գործք 3.14
55. Թվոց 6.22–27. Այս գաղափարով ես պարտական եմ Ռ. Չ. Սփրոուլին և նրա քարոզին՝ Գաղատացիների 3.13-ի հիման վրա, որը նա քարոզեց 2008թ.-ի «Միասին Ավետարանի համար» համաժողովին:

ասվեց. «Տերը նզովի Քեզ և կործանման մատնի Քեզ. Տերը վերցնի Իր ներկայության լույսը Քո վրայից և դատապարտի քեզ. Տերը շրջի Իր երեսը Քեզնից և լցնի Քեզ թշվառությամբ»:

Սաղմոսերգուն նկարագրում է օրհնվածներին՝ որպես մարդկանց, որոնք ուրախանում և ցնծում են Աստծո ներկայության մեջ, որոնք գիտեն տոնական բացականչության ուրախալի ձայնը, և որոնք քայլում են Նրա երեսի լույսով[56]: Հանուն մեզ Քրիստոսը տրտմություն ապրեց՝ զրկվելով Հոր ներկայությունից: Նա ճանաչեց դատաստանի փողի սարսափազդու ձայնը և հայտնվեց Աստծո երեսի բարկության անտանելի խավարում: Ադամի ճակատագրական որոշման պատճառով բոլոր ստեղծվածները հառաչում էին անեծքի տակ և ստրկացված էին ապականությանը և ունայնությանը[57]: Ստեղծվածներին ազատելու համար, վերջին Ադամն իր վրա վերցրեց Իր ժողովրդի մեղքերը՝ հառաչելով դրանց ահասարսուռ լծի ներքո. «Քրիստոսը գնեց մեզ օրենքի անեծքից՝ մեզ համար անեծք լինելով»[58]:

Այն, որ խաչված Քրիստոսի աղաղակի իմաստը հաճախ կորսվում է ռոմանտիկ սահմանումների պատճառով, մեծագույն այլասերություն է: Ոչ հազվադեպ կարելի է լսել քարոզիչների պնդումներն այն մասին, որ Հայրը շրջվեց Իր Որդուց, քանի որ Նա այլևս չէր կարողանում դիմանալ այն տառապանքին, որը մեղավոր մարդիկ պատճառում էին Նրան: Համաձայն մեր ուսումնասիրության՝ նման մեկնությունը աստվածաշնչյան պատմության և խաչի վրա տեղի ունեցածի բացարձակ աղավաղում է: Հայրը երես չթեքեց Իր Որդուց այն պատճառով, որ չուներ տոկունություն՝ Նրա չարչարանքները տեսնելու համար, այլ որովհետև «Աստված Նրան, որ մեղք չգիտեր, մեզ համար մեղք արեց, որ մենք Աստծո արդարությունը լինենք Նրանում»[59]: Նա դրեց մեր մեղքերը Նրա վրա և երես թեքեց Նրանից, քանի որ Նրա աչքերը չափազանց սուրբ են՝ չարը տեսնելու համար, և Նա չի կարող բարեհաճությամբ նայել անիրավությանը[60]:

Այն, որ ավետարանչական գրքույկների մեծ մասը պատկերում է անսահման անդունդ կամ բաժանություն սուրբ Աստծո և մեղավոր մարդու միջև, հենց այնպես չէ: Աստվածաշունչը լիովին համաձայն է նման օրինակի հետ: Ինչպես Եսայի մարգարեն բացականչեց. «Ահա Տիրոջ ձեռքը չի կարճացել փրկելուց, և Նրա ականջը չի ծանրացել լսելուց: Այլ ձեր անօրինություններն են բաժանում ձեր և ձեր Աստծո մեջտեղը, և ձեր մեղքերը ծածկեցին Նրա երեսը ձեզնից, որ չլսի»[61]: Համա-

56. Սաղմոս 21.6, 89.15
57. Հռոմեացիների 8.20–22
58. Գաղատացիների 3.13
59. Բ Կորնթացիների 5.21
60. Եսայի 53.6, Ամբակում 1.13
61. Եսայի 59.1,2

ձայն այս և անթիվ այլ հատվածների՝ բոլոր մարդիկ պետք է ապրեն և մահանան՝ կտրված Աստծո բարյացակամ ներկայությունից և աստվածային զայրույթի ներքո: Ահա թե ինչու Աստծո Որդին զբաղեցրեց մեր տեղը, կրեց մեր մեղքը և «թողվեց Աստծուց»: «Չէ՞ որ պետք էր, որ Քրիստոսն այս չարչարանքները քաշեր և Իր փառքը մտներ»՝ այդ անդունդը փակելու և հարաբերությունները վերականգնելու համար[62]:

ՔՐԻՍՏՈՍՆ ԻՐ ՎՐԱ ՎԵՐՑՐԵՑ ԱՍՏԾՈ ԶԱՅՐՈՒՅԹԸ

Իր ժողովրդի փրկությունը ձեռք բերելու համար Քրիստոսը կրեց Աստծուց թողված լինելու սարսափը, մինչև վերջ խմեց Աստծո ցասման դառը բաժակը և, արնաքամ լինելով, մահացավ Իր ժողովրդի փոխարեն: Միայն այդ դեպքում աստվածային արդարադատությունը կարող էր բավարարվել, Աստծո զայրույթը՝ խաղաղեցվել, և հաշտությունը՝ հնարավոր դառնալ:

Պարտեզում Քրիստոսը երեք անգամ աղոթեց, որ այդ բաժակը հեռացվեր Իրենից, բայց ամեն անգամ հնազանդեցրեց Իր կամքն Իր Հորը[63]: Մենք պետք է հարց տանք, թե այդ ի՞նչ բաժակ էր, որը դրդեց Նրան այդքան ջանասիրաբար աղոթել: Ի՞նչ սարսափելի բան էր այն պարունակում, որն այնպիսի՛ տանջանք պատճառեց Նրան, որ Նրա քրտինքը խառնվեց արյան հետ[64]:

Հաճախ ասվում է, որ այդ բաժակը խորհրդանշում էր դաժան հռոմեական խաչը և Նրան սպասվող կտտանքները, որ Քրիստոսը կանխազգում էր, թե ինչպես էր ինը կաշվե շերտ ունեցող մտրակը հարվածելու Իր մեջքին, ինչպես էր փշե պսակը ծակելու Իր ճակատը, և ինչպես էին ծանր մեխերը գամվելու Իր ձեռքերի և ոտքերի մեջ: Այնուամենայնիվ, ովքեր հավատում են, որ Նրա տանջանքի պատճառը հենց այդ բաներն էին, չեն հասկանում խաչը և այն, թե ինչ կատարվեց խաչի վրա: Թեև այն կտտանքները, որոնց Նա ենթարկվեց մարդկանց կողմից, Աստծո փրկարար ծրագրի մասն էին, կար շատ ավելի չարագույժ բան, ինչից ազատվելու համար Նրանում աղաղակ բարձրացավ:

Առաջին եկեղեցու գոյության առաջին դարերի ընթացքում հազարավոր քրիստոնյաներ էին մահանում խաչերի վրա: Ըստ պատմական տեղեկությունների՝ Ներոնը գլխիվայր խաչում էր նրանց, պատում էր ձյութով և վառում էր՝ օգտագործելով որպես փողոցային լուսավորություն Հռոմ քաղաքում: Այդ ժամանակվանից ի վեր, դարեր շարունակ, անթիվ քրիստոնյաներ աննկարագրելի կտտանքներ են կրել, սակայն թե՛ նրանց ընկերները, թե՛ նրանց թշնամիները վկայում էին, որ նրանք մահանում էին մեծ խիզախությամբ: Եթե Մեսիայի

62. Ղուկաս 24.26
63. Ղուկաս 22.41–44
64. Ղուկաս 22.44

հետևորդներն անասելի ուրախությամբ էին ընդունում իրենց դաժան մահը, մի՞թե մենք պետք է հավատանք, որ նրանց փրկության Առաջնորդը կուչ էր եկել պարտեզում՝ վախենալով կտտանքներից[65]: Արդյո՞ք Աստծո Քրիստոսը երկնչում էր մտրակներից և փշերից, խաչերից և նիզակներից, թե՞ այդ բաժակը խորհրդանշում է այնպիսի սարսափ, որն անսահմանորեն վեր է մեծագույն մարդկանց դաժանությունից:

Որպեսզի իմանանք, թե ինչ է պարունակում այդ չարագույժ բաժակը, մենք պետք է դիմենք Սուրբ գրքին: Գոյություն ունի երկու հատված, որոնք պետք է հատկապես դիտարկենք: Դրանցից մեկը գտնվում է Սաղմոսներում, իսկ մյուսը՝ Մարգարեների գրքերում. «Որովհետև բաժակ կա Տիրոջ ձեռքում, և գինին պղտորությամբ լցված եփում է, և այն թափվում է նրանից: Բայց հիրավի երկրի բոլոր ամբարիշտները նրա մրուրները պիտի քամեն-խմեն»[66]և «Որովհետև այսպես է ասում ինձ Տերը՝ Իսրայելի Աստվածը. «Ա՛ռ այս բարկության գինու բաժակը Իմ ձեռքից և խմեցրո՛ւ այն բոլոր ազգերին, որոնց մոտ Ես քեզ ուղարկում եմ, որ խմեն և շշկլվեն և հիմարանան այն սրի պատճառով, որ Ես ուղարկում եմ նրանց մեջ»»[67]:

Մեղավորների անդադար ապստամբության արդյունքում, Աստծո արդարադատությունը դատաստան հռչակեց նրանց դեմ: Նա պատրաստվում էր արդարացիորեն թափել Իր ցասումն ազգերի վրա: Նա պատրաստվում էր թափել Իր բարկության գինու բաժակը նրանց բերանների մեջ և նույնիսկ ստիպել նրանց քամել դրա մրուրները[68]: Նույնիսկ այս աշխարհին սպասվող ճակատագրի մասին միտքը զարհուրելի է: Այս ճակատագիրը սպասվում էր բոլորին, եթե Աստծո ողորմությունը փրկություն չգտներ Իր ժողովրդի համար, և Աստծո իմաստությունը չկազմեր Իր ժողովրդի փրկագնման ծրագիրը աշխարհի սկզբից առաջ[69]: Աստծո Որդին մարդ էր դառնալու և ապրելու էր երկրի վրա՝ կատարելապես հնազանդվելով Աստծո օրենքին: Նա նման էր լինելու մեզ ամեն ինչում և բախվելու էր ամեն տեսակի գայթակղության, ինչպես և մենք, բայց չէր մեղանչելու[70]: Նա ապրելու էր կատարելապես արդար կյանքով՝ Աստծո փառքի և Իր ժողովրդի օգտի համար: Իսկ հետո, որոշված ժամանակին, Նա խաչվելու էր մեղավորների ձեռքով: Խաչի վրա Նա կրելու էր Իր ժողովրդի հանցանքը և վերցնելու էր Իր վրա Աստծո զայրույթը, որն ուղղված էր նրանց դեմ: Ադամի ճշմարիտ Որդին, Ով նաև Աստծո ճշմարիտ Որդին էր, վերցնելու էր բարկության բաժակն անմիջապես Աստծո ձեռքից և խմելու էր այն մինչև վերջին կաթիլը: Նա խմելու էր այն մինչև ավարտելը, մինչև

65. Եբրայեցիների 2.10
66. Սաղմոս 75.8
67. Երեմիա 25.15,16
68. Միուրը գինու շշի հատակին հավաքված նստվածքը կամ տականքն է:
69. Մատթեոս 25.34, Եփեսացիների 1.4, Ա Պետրոս 1.20, Հայտնություն 13.8, 17.8
70. Եբրայեցիների 2.17, 4.15

որ ամեն ինչ *կատարվեր*, և Աստծո արդարադատությունը լիովին բավարարված լիներ[71]: Աստվածային զայրույթը, որը պետք է հասներ մեզ, սպառվելու էր Որդու վրա և հանգցվելու էր Նրա կողմից:

Պատկերացրեք մի ահռելի անջրպետ, որը մինչև վերջ ջրով լցված է և հազիվ է դիմանում ջրի ծանրությանը: Հանկարծ պաշտպանիչ պատը քանդվում է, և ջրհեղեղի անսանձ կործանարար ուժը բաց է թողվում: Մինչ վերահաս կործանումն արագորեն մոտենում է մոտակա դաշտավայրում գտնվող մի փոքրիկ գյուղի, գետինը հանկարծակի բացվում է հեղեղի առջև՝ կլանելով այն ամենը, ինչը սրբելու-տանելու էր ամբողջ գյուղը: Նմանապես, Աստծո արդար դատաստանն արագորեն հասնում էր ամեն մեկին: Դրանից անկարելի էր փախչել ո՛չ ամենաբարձր սարը, ո՛չ էլ ամենախորը անդունդը: Ամենաարագավազ ոտքերը չէին կարող փախչել դրանից, և ամենաուժեղ լողորդը չէր կարող դիմանալ դրա հոսանքներին: Անջրպետը քանդվել էր, և ոչինչ չէր կարող նորոգել այն: Բայց երբ մարդկային հույսը սպառված էր, որոշված ժամանակին Աստծո Որդին՝ որպես միջնորդ, կանգնեց աստվածային արդարադատության և Իր ժողովրդի միջև: Նա մինչև վերջ խմեց այն բարկությունը, որը մենք բորբոքել էինք, և այն պատիժը, որին մենք արժանի էինք: Երբ Նա մահացավ, այդ ջրհեղեղից նույնիսկ մի կաթիլ չէր մնացել: Նա խմեց այն ամբողջությամբ՝ մեր փոխարեն:

Պատկերացրեք երկու հսկա գլաքար, որոնցից մեկը պտտվում է մյուսի վրայով: Դրանց մեջտեղում մի ցորենի հատ է հայտնվում և ճզմվում է ահռելի ծանրության ներքո: Նախ՝ քարերը փշրում են դրա կեղևը՝ այն անճանաչելի դարձնելով, իսկ հետո դրա ներսը դուրս է թափվում և փոշիացվում է: Չկա որևէ հույս այն վերականգնելու համար: Ամեն ինչ կորսված է և անհնար է նորոգել: Նմանապես, Տիրոջը հաճելի եղավ զարկել Իր Որդուն և անասելի տրտմություն պատճառել[72]: Իսկ Որդուն հաճելի եղավ հնազանդվել նման չարչարանքին, որպեսզի Աստված փառավորվեր, իսկ Իր ժողովուրդը՝ փրկվեր:

Մենք չպետք է մտածենք, որ Աստված ինչ-որ հաճույք էր գտնում Իր սիրելի Որդու չարչարանքների մեջ: Նրա մահը այն միջոցն էր, որով կատարվեց Աստծո կամքը: Այլևս ոչ մի միջոց չէր կարող հեռացնել մեղքը, բավարարել աստվածային արդարադատությունը և խաղաղեցնել Աստծո զայրույթը մեր դեմ: Մինչև որ այդ աստվածային ցորենի հատը չընկներ հողի մեջ և չմահանար, այն մենակ կմնար՝ առանց ժողովրդի կամ հարսնացուի[73]: Աստծո հաճությունը ոչ թե չարչարանքի մեջ էր, այլ այն ամենի, ինչ այդ չարչարանքն իրականացնելու էր: Աստված ի հայտ էր գալու այնպիսի փառքով, որը դեռ հայտ-

71. Հովհաննես 19.30
72. Եսայի 53.10
73. Հովհաննես 12.24

նի չէր մարդկանց և հրեշտակներին, և կազմվելու էր մի ժողովուրդ, որն ունենալու էր անխաթար հաղորդություն Աստծո հետ:

Հրաշալի մաքրակրոն հեղինակ Ջոն Ֆլավելը գրել է մի երկխոսություն Հոր և Որդու միջև: Այն անկում ապրած մարդկության մասին է, և այն մասին, թե որքան մեծ գին է պահանջվում մեր փրկությունը ստանալու համար: Այն հրաշալի կերպով նկարագրում է խաչի իրական տառապանքը, նաև՝ Հոր և Որդու սերը, որը դրդեց նրանց ընդունել այն: Ֆլավելը գրում է.

«Պատկերացրեք, որ Հայրը, ձեր հարցով պայմանավորվելով Քրիստոսի հետ, ասում է.

Հայր. Որդի՛ս, ահա խեղճ և ողորմելի մարդկանց մի խումբ, որոնք լիովին կործանել են իրենց և այժմ մատնված են Իմ արդարադատությանը, որը կա՛մ պահանջում է հատուցում նրանց փոխարեն, կա՛մ ինքը հատուցում կստանա՝ նրանց հավիտյան կործանելով: Ի՞նչ կարելի է անել այս մարդկանց համար:

Եվ Քրիստոսը պատասխանում է.

Որդի. Ո՜վ Իմ Հայր, Իմ սերը և գութը նրանց հանդեպ այնպիսին է, որ նրանց հավիտենական կործանման փոխարեն Ես պատասխանատվություն կվերցնեմ՝ որպես նրանց Երաշխավոր: Բե՛ր նրանց բոլոր պարտամուրհակները, որ տեսնեմ, թե ինչ եմ պարտք Քեզ. Տե՛ր, բե՛ր բոլորը, որ չմնա ոչ մի ետհաշվարկ՝ նրանց հետ կապված. պահանջի՛ր ամեն բան Իմ ձեռքից: Ավելի լավ է՝ Ես կրեմ նրանց հասանելի բարկությունը, քան նրանք կրեն այն. Ինձ վրա, Հա՛յր, թող Ինձ վրա լինի նրանց ամբողջ պարտքը:

Հայր. Բայց Որդիս, եթե Դու պարտավորվես նրանց համար, Դու պետք է հաշվի առնես, որ վճարելու ես մինչև վերջին լուման. մի՛ սպասիր որևէ այլընտրանքի, եթե Ես խնայեմ նրանց, Ես չեմ խնայի Քեզ:

Որդի. Բա՛վ է, Հա՛յր, թող այդպես լինի. պահանջի՛ր ամեն բան Ինձնից, Ես կարող եմ վճարել դա, ու թեև դա կործանարար լինի Ինձ համար, թեև դա աղքատացնի Ինձ Իմ ամբողջ հարստությունից և խլի բոլոր գանձերս, միևնույն է՝ Ես պատրաստ եմ ստանձնել դա»[74]:

Երբեմն մարդիկ մտածում են և նույնիսկ քարոզում են, որ Հայրը նայեց Երկնքից, տեսավ այն չարչարանքները, որոնք Իր Որդին կրեց մարդկանցից, և համարեց դա մեր մեղքերի հատուցումը: Սա վատագույն հերձվածությունն է: Քրիստոսը բավարարեց աստվածային արդարադատությունը՝ ոչ թե պարզապես կրելով չարչարանքներ մարդկանցից, այլ՝ Իր վրա վերցնելով Աստծո զայրույթը: Մեղքի հատուցման համար պահանջվում է ավելին, քան խաչեր, մեխեր, փշե պսակներ և նիզակներ: Հավատացյալը չի փրկվում պարզապես այն

74. Ջոն Ֆլավել, *«Կյանքի աղբյուրը. Քրիստոսը՝ Իր հիմնական և միջնորդական փառքով, Ջոն Ֆլավելի աշխատություններում»* (Լոնդոն, «Banner of Truth», 1968թ.), հտ. 1, էջ 61:

պատճառով, թե ինչպես մարդիկ վարվեցին Քրիստոսի հետ, այլ՝ թե ինչպես Աստված վարվեց Նրա հետ: Նա զարկեց Հիսուսին մեր դեմ ուղղված զայրույթի ամբողջ ուժով[75]: Քարոզելով Ավետարանը՝ մենք հազվադեպ ենք պարզորեն խոսում այս ճշմարտության մասին:

ՏԵՐԸ ԿՄԱՏԱԿԱՐԱՐԻ

Հին կտակարանի ամենավիպերգական պատումներից մեկում Աստված պատվիրում է նահապետ Աբրահամին տանել իր որդուն Մորիա սարը և զոհել նրան այնտեղ. «Ա՛ռ քո սիրած մեկ հատիկ որդուն՝ Իսահակին, և Մորիայի երկիրը գնա և այնտեղ նրան ողջակեզ արա այն սարերից մեկի վրա, որ Ես քեզ կասեմ»[76]:

Ինչպիսի՜ բեռ էր կրում Աբրահամը: Մենք չենք էլ կարող պատկերացնել այն տրտմությունը, որը համակել էր այդ ծերունուն և կեղեքում էր նրա սիրտը ճանապարհի ամեն քայլին: Աստվածաշունչը հստակորեն ասում է, որ նրան պատվիրվեց զոհաբերել «սիրած մեկ հատիկ որդուն՝ Իսահակին»: Այս պատվերի ձևակերպումն ասես փորձում է գրավել մեր ուշադրությունը և միտք տալ այն մասին, որ այս խոսքերի մեջ կա ավելի խորը իմաստ, քան երևում է առաջին հայացքից: Այդ մարդը և նրա որդին պարզապես խորհրդապատկերում են մեծագույն Հորը, մեծագույն Որդուն և մեծագույն զոհը:

Երրորդ օրը երկուսն էլ հասան որոշված վայրը, և հայրն իր ձեռքով կապեց սիրելի որդուն: Վերջապես, հնազանդվելով պատվերին, նա ծածկեց որդու աչքերն իր ձեռքով և «դանակն առավ, որ որդուն մորթի»[77]: Հենց այդ պահին Աստծո ողորմությունը միջամտեց, և ծերունու ձեռքը պահվեց: Աստված ձայն տվեց նրան Երկնքից՝ ասելով. «Աբրահա՛մ, Աբրահա՛մ... Ձեռքդ տղային մի՛ դիպցրու և նրան մի բան մի՛ արա, որովհետև հիմա իմացա, որ դու Աստծուց վախենում ես և քո մեկ հատիկ որդուն Ինձնից չխնայեցիր»[78]:

Լսելով Տիրոջ ձայնը՝ Աբրահամը բարձրացրեց հայացքը և տեսավ մի խոյի, որի եղջյուրները մնացել էին մացառների մեջ: Նա վերցրեց այն և զոհաբերեց իր որդու փոխարեն[79]: Դրանից հետո նա անվանեց այդ տեղը *ՅԱՎԱ-Յիրե* կամ «Տերը կտեսնի» («Տերը կմատակարարի», NKJV): Եվ այս ճշմարիտ խոսքը մնում է մինչև օրս. «Այն սարում, որտեղ Տերը երևում է» (կամ՝ «Տիրոջ սարի վրա կմատակարարվի», NKJV)[80]:

Պատմության այս վիպերգական պահի ավարտին, վարագույրն իջնելիս, ոչ միայն Աբրահամը, այլև ամեն մեկը, ով երբևէ կարդացել

75. Եսայի 53.10
76. Ծննդոց 22.2, շեղագիրն ավելացրած է
77. Ծննդոց 22.10
78. Ծննդոց 22.11,12
79. Ծննդոց 22.13
80. Ծննդոց 22.14

է այս մասին, թեթևության հոգոց է հանում, քանի որ տղայի կյանքը խնայվեց: Մենք մտածում ենք. «Ինչպիսի՜ գեղեցիկ ավարտ», սակայն դա ավարտ չէր, այլ միայն՝ ընդմիջում:

Երկու հազար տարի անց վարագույրը կրկին բացվում է: Ետին պլանը խավար և չարագույժ է: Աստծո Որդին բեմի կենտրոնում է՝ Գողգոթա սարի վրա: Մերը և հնազանդությունը կապել են Նրան Իր Հոր կամքը կատարելուն: Նա գամված է դրան և կրում է Իր ժողովրդի մեղքերը: Նա անիծված է, լքված է Իր արարչագործության կողմից և թողված է Աստծուց[81]: Եվ հանկարծ Աստծո զայրույթի զարհուրելի որոտմունքը խախտում է լռությունը: Հայրը վերցնում է դանակը, վեր է բարձրացնում ձեռքը և մորթում է «Իր սիրած մեկ հատիկ Որդուն»՝ կատարելով Եսայի մարգարեի խոսքերը. «Հիրավի Նա մեր ցավերը վեր առավ և մեր վշտերը բեռնեց Իր վրա, բայց մենք Նրան պատվահարված էինք համարում, Աստծուց զարկված և նկուն եղած: Բայց Նա մեր մեղքերի համար վիրավորվեց և մեր անօրինությունների համար հարվածվեց, մեր խաղաղության պատիժը Նրա վրա եղավ, և Նրա վերքերով մենք բժշկվեցինք... Բայց Տերը հաճեց Նրան զարկել, ցավեցնել...»[82]:

Վարագույրը փակվում է մորթված Որդու՝ խաչված Մեսիայի վրա, որպեսզի բացվի դժոխքին արժանի մեղավորների համար: Ի տարբերություն Իսահակի պատմության՝ չկար խոյ, որը կմահանար Նրա փոխարեն: Նա էր այն Գառը, որը մահացավ այս աշխարհի մեղքերի համար[83]: Նա Աստծո մատակարարումն էր՝ Իր ժողովրդին փրկելու համար: Նա այն ամենի իրականացումն էր, որ Իսահակը և խոյը խորհրդապատկերում էին: Նրանում Գողգոթա կոչվող ահասարսուռ սարն այժմ վերանվանված է *ՅՀՎՀ-Յիրե* կամ «Տերը կմատակարարի»: Եվ այս ճշմարիտ խոսքը մնում է մինչև օրս. «Տիրոջ սարի վրա կմատակարարվի»[84]:

Գողգոթան Աստծո սարն է, իսկ փրկությունը՝ Նրա մատակարարումը: Աստված ևս մեկ անգամ ձայն տվեց Աբրահամին. «Աբրահա՛մ, Աբրահա՛մ... Հիմա իմացա, որ դու Աստծուց վախենում ես և քո մեկ հատիկ որդուն Ինձնից չխնայեցիր»[85]: Մենք՝ հավատացյալներս, այժմ աղաղակում ենք Աստծուն նման խոսքերով. «Աստվա՛ծ, իմ Աստվա՛ծ, հիմա ես գիտեմ, որ Դու սիրում ես ինձ, քանի որ չխնայեցիր ինձնից Քո Որդուն՝ Քո մեկ հատիկ Որդուն, Ում սիրում ես»[86]:

Մեսիան մահացավ, սակայն սա դեռ ավարտը չէ: Մնում է ևս մեկ տեսարան՝ հարությունը և վեհաշուք թագադրումը:

81. Հովհաննես 1.11, Գործք 3.14, Մատթեոս 27.46
82. Եսայի 53.4,5,10
83. Հովհաննես 1.29
84. Ծննդոց 22.14
85. Ծննդոց 22.11,12
86. Ծննդոց 22.12, Հռոմեացիների 8.32

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՄԵԿ

Աստծո արդարացումը

«Որին Աստված առաջուց սահմանեց քավություն լինելու համար՝ հավատալով (կամ՝ հավատքի միջոցով), Նրա արյամբ, որ Իր արդարությունը ցույց տա այն առաջուց գործված մեղքերի թույլտվության համար՝ Աստծո ներելու ժամանակ, որ Իր արդարությունը երևացնի այս ժամանակում, որ Ինքը լինի արդար և արդարացնող նրան, որ Հիսուսի հավատքից է»:

— Հռոմեացիների 3.25,26

Հռոմեացիների 3.25,26-ի ամենասկզբում գրված է, որ Աստծո կամքն էր՝ ի ցույց հանել, հրապարակավ ցուցադրել կամ փակցնել՝ որպես ազդ (հայերենում՝ սահմանել) Իր Որդուն Գողգոթայի խաչի վրա: Ինչպես արդեն նշեցինք, պատմության որոշակի պահին Աստված բարձրացրեց Նրան խաչափայտի վրա՝ տիեզերքի կրոնական կենտրոնի խաչմերուկին, որպեսզի բոլորը տեսնեին[1]: Համաձայն վերևում գտնվող աստվածաշնչյան հատվածի՝ Աստված որոշեց հրապարակավ զոհաբերել Իր Որդուն, որպեսզի արդարացներ Իրեն՝ մեկընդմիշտ ցույց տալով, որ Ինքն արդար Աստված է: Այնուամենայնիվ, մենք պետք է տանք հետևյալ հարցը. ինչո՞ւ էր այդ արդարացումն անհրաժեշտ[2]: Վերևում բերված հատվածը ցույց է տալիս դրա պատճառը. «Քանի որ Աստված Իր երկայնամտությամբ թողտվություն էր արել նախկինում գործված մեղքերի համար»[3]:

Համաձայն Պողոս առաքյալի՝ անհրաժեշտ էր, որ Աստված արդարացներ Իրեն կամ ապացուցեր Իր արդարությունը, քանի որ Իր երկայնամտությամբ Նա անցել էր Իր ժողովրդի մեղքերի վրայով և չէր տվել նրանց այն արդարադատությունը կամ պատիժը, որին նրանք արժանի էին: Մարդկության պատմության ընթացքում Նա շնորհք էր տվել և ներել էր անթիվ մարդկանց, որոնց կանչել էր աշխարհից և դարձրել էր Իր ժողովուրդը: Այնուամենայնիվ, անե-

1. Գաղատացիների 4.4
2. «Վեբսթերի բառարանը» սահմանում է *«արդարացում»* բառը որպես «ցանկացած բանի պաշտպանություն. արդարության հաստատում՝ ընդդեմ մերժման և դատապարտության, կամ՝ բողոքների և մեղադրանքների»:
3. Հռոմեացիների 3.25 (NKJV)

լով դա՝ Նա թույլ էր տրվել, որ Իրեն առաջադրվեին բազմաթիվ մեղադրանքներ անարդարության մեջ:

Ինչպե՞ս արդար Աստված կարող է ներում շնորհել մեղավորներին, և ինչպե՞ս ճշմարտապես սուրբ Աստված կարող է կանչել նրանց հաղորդության Իր հետ: Եթե Աստված արդար է, ինչո՞ւ արդարությամբ չի վարվում: Ինչի՞ հիման վրա էր Նա ողորմություն շնորհում Հին կտակարանի սրբերի մեծ բազմությանը: Սուրբ գիրքը պարզորեն վկայում է, որ անցյալում կատարվող ցլերի և այծերի արյան զոհաբերություններն անզոր էին վերցնելու մեղքը[4]: Այդ դեպքում, ինչպե՞ս էր Աստված ներում նրանց: Մի՞թե նրանց մեղքերի հանդեպ երկայնամիտ լինելն ապացուցում է, որ Նա անարդար է: Մի՞թե դա ցույց է տալիս, որ Նա այն աստիճան անտարբեր է չարի հանդեպ, որ կարող է անտեսել մեղքը գլխի շարժումով կամ քմահաճ կերպով ներում շնորհել: Մի՞թե Երկնքի Աստված փոխզիջման է ենթարկել Իր արդարադատությունը՝ ներում շնորհելով նրանց, ովքեր պետք է արդարացիորեն դատապարտվեին[5]: Մի՞թե ամբողջ երկրի Դատավորն արդարությամբ չի վարվում[6]:

Գողգոթայի խաչը պատասխանում է բոլոր այս հարցերին: Գողգոթայում Աստված դրեց Իր ժողովրդի մեղքերը Իր Որդու վրա: Գողգոթայում Աստծո արդարադատությունը, որին Աստծո ժողովուրդը, պետք է արժանանար բոլոր ժամանակներում՝ անցյալում, ներկայում և ապագայում թափվեց Նազովրեցի Հիսուսի վրա: Բոլորը՝ սկսած առաջին մարդուց, որը ներվել էր Հին կտակարանի դիսպենսացիայում, մինչև վերջին մարդը, որը ներվելու է մինչև այս աշխարհի ավարտը, իրենց ներմամբ պարտական են այն փաստին, որ Քրիստոսը մահացավ իրենց մեղքերի համար: Խաչի միջոցով Աստված ասես հայտարարեց Իրեն մեղադրողներին.

> «Դուք վիճարկո՞ւմ եք, թե ինչպես Ես կանչեցի մարդկանց նույնիսկ մեղավոր նախաջրհեղեղյան դարաշրջանում և հայտարարեցի, որ նրանք Իմն են: Դուք բացատրությո՞ւն եք պահանջում, քանի որ Ես խնայեցի Նոյին, այնինչ իրականում նա նույնպես պետք է մահանար ջրհեղեղի ժամանակ: Դուք հաշի՞վ եք պահանջում Ինձնից, քանի որ Ես կանչեցի հեթանոս Աբրամին անբարո Ուր քաղաքից, արդարություն վերագրեցի նրան և դարձրի Իմ ընկերը: Դուք զարմանո՞ւմ եք, որ Ես մնացորդ փրկեցի Իսրայելի ժողովրդից և ընդունեցի նրանց՝ որպես Իմ հատուկ գանձ, թեև նրանք պետք է մերժվեին իրենց մեղքերի պատճառով: Դուք ցանկանում եք իմանա՞լ, թե ինչպես Ես կարող էի ներել Դավթի անթիվ մեղքերը և Իմ որդին կոչել նրան:
>
> Բա՛վ է ձեր մեղադրանքներին: Ես պատասխանում եմ ձեզ Իմ սիրելի Որդու խաչով, Ով նույնիսկ աշխարհի արարումից առաջ

4. Եբրայեցիների 10.4
5. Առակաց 17.15
6. Ծննդոց 18.25

սահմանված էր մահանալու Իմ ժողովրդի մեղքերի համար: Իմ համբերության երկար դարերի ընթացքում Իմ հայացքն ուղղված էր այն խաչափայտին, որի վրա Նա չարչարվեց նրանց համար: Այն ամենը, ինչ Ես արել եմ նրանց համար անցյալում, հիմնված է եղել այն աշխատանքի վրա, որն Իմ Որդին կատարեց նրանց համար հիմա: Այո, Ես ճրիաբար ներում եմ շնորհել բազմաթիվ մեղավորների, ծածկել եմ նրանց անօրինությունները և մեղքերը և հաշվի չեմ առել նրանց օրինազանցությունները, բայց պատճառն այն էր, որ ես վճռել էի բավարարել նրանց դեմ եղած արդարադատության բոլոր պահանջներն Իմ սիրելի Որդու քավչարար աշխատանքի միջոցով»:

Գողգոթայի խաչը փակում է ամեն բերան և ցույց է տալիս, որ ցանկացած մեղադրանք Աստծո դեմ սխալ է: Խաչափայտի վրա Նա դատապարտեց Իր ժողովրդի մեղքերը կատարյալ արդարադատությամբ և քավեց նրանց հանցանքներն այնպիսի սիրով, որն անկարելի է չափել: Այդ փայտե զոհասեղանի վրա «ողորմությունը և ճշմարտությունն իրար հանդիպեցին. արդարությունն ու խաղաղությունն իրար համբուրեցին»[7]: Աստված արդարացրել է Իրեն: Նա ցուց է տվել, որ Ինքը և՛ արդար է, և՛ արդարացնող նրան, ով հավատում է Հիսուս Քրիստոսին[8]: Խաչը փարատում է ցանկացած անվստահություն Նրա արդարության և մեղքի հանդեպ ունեցած անհանդուրժողականության վերաբերյալ: Խաչն ապացուցում է, որ ցանկացած կասկած Նրա սիրո մեջ անհիմն է և տեղ չունի Նրա ժողովրդի սրտերում:

ԱՍՏՎԱԾ ԱՊԱՑՈՒՑԵԼ Է ԻՐ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՔԻ ՀԱՆԴԵՊ

Հին և Նոր կտակարաններում կան անթիվ հատվածներ, որոնք ցույց են տալիս Աստծո ատելությունը մեղքի հանդեպ և այն, որ Նրա զայրույթը մեղավորների հանդեպ իրական է: Այնուամենայնիվ, Աստծո ատելության և սուրբ ցասման մեծագույն դրսևորումը ցանկացած տեսակի անարդարության դեմ՝ հայտնվեց Իր սիրելի Որդու խաչի միջոցով: Որքա՞ն է Աստված ատում մեղքը, և ինչպե՞ս Նա կվարվի դրա հետ: Նրա ատելությունը մեղքի հանդեպ այնպիսին է, որ նույնիսկ երբ Նրա Որդին կրեց մեր մեղքը, Նա զարկեց և չխնայեց Նրան, այլ՝ թողեց:

Քրիստոսի խաչը շրջապատող ավետարանական ռոմանտիզմի պատճառով մենք մոռացել ենք (եթե, իհարկե, գիտեինք), որ Գողգոթան սարսափելի էր: Այն աննկարագրելի և անասելի զարհուրանքի վայր էր: Մեխերը, որոնք պահում էին Նրա ձեռքերը և ոտքերը խաչի

7. Սաղմոս 85.10
8. Հռոմեացիների 3.26

երկու փայտերի վրա, փշերից հյուսված պսակը, որը մտնում էր Նրա գլխի և ճակատի մեջ, կոպիտ նիզակը՝ Նրա կողի մեջ, Նրա մարմնի հանդեպ բիրտ վերաբերմունքը մեղավոր և գարշելի մարդկանց կողմից՝ այդ ամենը միասին նույնիսկ չի կարելի համարել այն զարհուրանքի սկիզբը, որը տեղի ունեցավ Գողգոթա կոչվող գանգաձև բլրի վրա[9]: Այդ ամենը պարզապես շատ ավելի մեծ սարսափի նախապատրաստությունն էր: Մարդու կամքը չէ, որ ծածկեց արևը և ձյութի պես սև դարձրեց երկինքը[10]: Հռոմեական բանակի ուժը չէր, որ ցնցեց երկիրը և պատռեց քարերը՝ հողակոշտերի պես[11]: Ամենակարող Աստծո զայրույթն էր, որ ամբողջ ուժով եկավ Իր միածին Որդու վրա: Քրիստոսի վրա թափված Աստծո զայրույթի համեմատ, Նոյի ջրհեղեղը նման էր խոտի ցողունի վրա ընկնող ցողի կաթիլի, իսկ Սոդոմի և Գոմորի վրա երկնքից թափված կրակը՝ անվնաս կայծի, որը չէր կարող այրել նույնիսկ ամենաչոր փայտը: Գողգոթայի օրը բարկության օր էր, նեղության և տառապանքի օր, կործանման և ավերման օր, խավարի և մեգի օր[12]: Այդ օրը Ամենակարող Աստծո լափող կրակը և հավիտենական բոցերը երկնքից թափվեցին Քրիստոսի վրա[13]: Խաչափայտի վրա Աստված փչեց Նրա վրա Իր ցասման կրակը, որը հալեցնում է սարերը կրակի մոտ գտնվող մոմի պես, նման՝ զառիվայրից իջնող ջրի[14]: Ահա թե ինչու Քրիստոսն աղաղակեց. «Ես ջրի պես թափվեցի, և Իմ բոլոր ոսկորները լուծվեցին, սիրտս որովայնումս հալած մոմի պես եղավ»[15]:

Տեր Հիսուս Քրիստոսն առանձնացվեց նեղության համար մարդկության անասելի բազմությունից, և ամեն մի անեծք՝ գրված Օրենքում, դրվեց Նրա վրա: Երբ Նա գամված էր խաչին, Աստծո ժողովրդի դեմ ուղղված զայրույթի լրիվ չափն ընկավ միայն Նրա վրա, և Աստծո բարկությունն ամբողջությամբ բորբոքվեց Նրա դեմ[16]:

Որքա՜ն է Աստված ատում մեղքը: Երբ Աստծո Որդին կրեց մեր մեղքը, Աստված զարկեց Նրան: Այս սարսափելի ճշմարտության լույսի ներքո մենք պետք է ուշադրությամբ հետևենք Եբրայեցիների թղթի հեղինակի զգուշացումներին. «Ապա մենք ինչպե՞ս կպրծնենք, եթե անհոգ լինենք այսպիսի մեծ փրկության համար»[17]: Եթե մենք

9. «Գողգոթա» բառն արամերեն ծագում ունի և թարգմանվում է «գանգ» բառով: Դա Երուսաղեմից դուրս գտնվող մի բլրի անվանումն է, որտեղ Հիսուսը խաչվեց: Այդ բլուրն այդպիսի անվանում ուներ, քանի որ դրա ձևը նման էր գանգի:
10. Ղուկաս 23.44,45
11. Մատթեոս 27.51
12. Սոփոնիա 1.15
13. Եսայի 33.14
14. Եզեկիել 22.18–22, Միքիա 1.4, Նաում 1.4
15. Սաղմոս 22.14
16. Երկրորդ Օրինաց 29.20,21
17. Եբրայեցիների 2.3

շարունակենք մերժել Ավետարանը՝ ճշմարտությունն իմանալուց հետո, մեզ համար այլևս մեղքի զոհ չի մնա: Մենք կարող ենք որոնել ամբողջ երկինքը և երկիրը, մինչև որ երկուսն էլ անցնեն, բայց չենք գտնի այլ դարման մեր մեղքի համար, այլ միջնորդ՝ մաքրվելու համար, և ուրիշ ոչ մի անուն, որով կարող ենք փրկվել[18]: Մենք կգտնենք միայն դատաստանի ահավոր սպասումը և կրակի զայրույթը, որը լափելու է մեզ՝ որպես հակառակորդների: Աստվածաշունչը զգուշացնում է, որ ցանկացած մարդ, ով անարգում էր Մովսեսի օրենքը, առանց ողորմության մահանալու էր: Որքա՜ն ավելի խիստ կլինի պատիժը՝ Քրիստոսին և Նրա խաչն անարգելու համար: Թեև մենք չենք դիտարկում մեր անտարբերությունը և անհավատությունը որպես մեծ հանցանք, Աստված այլ կերպ է նայում ամեն ինչին: Համաձայն Նրա գնահատականի՝ մենք տրորել ենք Նրա Որդուն, պիղծ ենք համարել Նրա թափած արյունը և նախատել ենք շնորհքի Հոգուն, Ով հայտնել է մեզ այս բաները: Այս պատճառով Նա զգուշացնում է. «Իմն է վրեժխնդրությունը», և «Ես հատուցումը կտամ»: Մենք պետք է հարենք Ավետարանին և աղաչենք բոլոր մարդկանց ապաշխարել և դառնալ Քրիստոսին, քանի դեռ ուշ չէ, որովհետև «սարսափելի բան է կենդանի Աստծո ձեռքն ընկնելը»[19]:

ԱՍՏՎԱԾ ԱՊԱՑՈՒՑԵԼ Է ԻՐ ՍԵՐՆ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՆԴԵՊ

Եթե մեղավորը երբևէ կասկածի Աստծո արդարության մեջ, նա պետք է պարզապես նայի խաչին: Հավասարապես ճշմարիտ է, որ եթե քրիստոնյան երբևէ կասկածի Աստծո սիրո մեջ, նա պետք է նայի նույն խաչափայտին, որի վրա կատարվեց մեր փրկությունը[20]: Խաչի վրա թշնամությունը հեռացվեց, և Աստծո հետ խաղաղություն կնքվեց[21]: Խաչի վրա Աստված ապացուցեց Իր սերն Իր ժողովրդի հանդեպ այն կերպով, որը հավիտյան վերջ է դնում կասկածներին: Ահա թե ինչու է Հովհաննես առաքյալը գրում. «Սրանով Աստծո սերը երևաց մեզանում, որ Աստված Իր միածին Որդուն ուղարկեց աշխարհ, որ Նրանով կյանք ունենանք: Սրանում է սերը, որ ոչ թե մենք սիրեցինք Աստծուն, այլ որ Նա սիրեց մեզ և ուղարկեց Իր Որդուն՝ քավություն մեր մեղքերի համար»[22]:

Հովհաննեսի գրչից հասկանում ենք, որ Աստծո սիրո մեծագույն դրսևորումն Իր ժողովրդի հանդեպ այն է, որ Նա ուղարկեց Իր Որ-

18. Գործք 4.12
19. Այս պարբերությունը կազմված է ըստ Եբրայեցիների 10.26–31-ի:
20. Հովհաննես 19.30
21. Հռոմեացիների 5.1
22. Ա Հովհաննես 4.9,10

դուն՝ որպես քավություն նրանց մեղքերի[23]: Այս եզակի աշխատանքն աննախադեպ ի հայտ է բերում և՛ Աստծո մեծությունը, և՛ Նրա սերը: Խաչի վրա Հայրն ապացուցեց Իր սերը մեր հանդեպ՝ դնելով բոլորիս մեղքն Իր Որդու վրա և զարկելով Նրան աստվածային զայրույթով, որը պետք է ստանայինք մենք[24]: Խաչի վրա Սուրբ Հոգին ապացուցեց Իր սերը մեր հանդեպ՝ կազմակերպելով և ուղղորդելով այն ամենը, ինչ անհրաժեշտ էր Որդու մահապատժի համար[25]: Խաչի վրա Որդին ապացուցեց Իր սերը մեր հանդեպ՝ դնելով կյանքը Իր ընկերների համար[26]: Քանի որ, թեև Նա հարուստ էր, Նա աղքատացավ մեզ համար, որպեսզի Նրա աղքատությամբ մենք հարստանանք[27]: Քանի որ, թեև Նա Աստծո կերպարանքում էր, Նա ունայնացրեց Իրեն՝ ծառայի կերպարանք հագնելով, և խոնարհեցրեց Իրեն՝ դառնալով հնազանդ մինչև իսկ խաչի մահը[28]: Քանի որ, թեև Նա մեղք չգիտեր, Նա կրեց մեր մեղքը և դարձավ անեծք մեզ համար, որովհետև գրված է. «Անիծված լինի ամեն փայտից կախվածը»[29]:

Այն սարսափելի գինը, որն անսահմանորեն բարի Աստված վճարեց մեր մեղքերի համար, պետք է դրդի մեզ սգալ և պատռել մեր սրտերը: Ինչպես կանխասեց Զաքարիա մարգարեն, մենք նայում ենք Նրան, Ում խոցել ենք, և սգում ենք Նրա համար, ինչպես որ մեկը սգում է իր միակ որդու համար, և դառնորեն լաց ենք լինում՝ ինչպես առաջնեկի համար լաց կլինեն[30]: Միևնույն ժամանակ, Աստված կարող է վերցնել խաչի դժգույն վրձնախազվածքները և ստեղծել Իր ամենագեղեցիկ կտավը: Գողգոթայի միջոցով Նա հայտնում է մարդկանց և հրեշտակներին Իր սերը այն կերպով, որն իր զորությամբ և գեղեցկությամբ գերազանցում է մնացած բոլոր հայտնությունները միասին: Մեր մեղքը և Քրիստոսի անըմբռնելի չարչարանքները մեր փոխարեն նման են խավար գիշերվա, որում Աստծո ողորմության և շնորհքի աստղերն ամենափառավոր կերպով լույս են տալիս:

Եթե նվերի արժեքը ցույց է տալիս նվիրողի սերը, ուրեմն Գողգոթան ապացուցում է, որ Աստծո սերն Իր ժողովրդի հանդեպ անհաշվելի է: Ո՞վ կարող է չափել Քրիստոսի արժեքը: Ավելի հեշտ է հաշվել բոլոր աստղերը երկնքում և ծովի բոլոր ավազահատիկնե-

23. Թարգմանված հունարեն *«հիլասմոս»* գոյականից, որը նշանակում է «խաղաղեցում կամ քավություն. խաղաղեցման կամ քավության միջոց»:
24. Եսայի 53.4–10
25. Սուրբ Հոգին կազմակերպեց այն ամենը, ինչ անհրաժեշտ էր մեր փրկության համար՝ սկսած Քրիստոսի հղացվելուց (Ղուկաս 1.35, Մատթեոս 1.20) մինչև Նրա խաչելությունը մեղավոր մարդկանց ձեռքով (Գործք 2.23):
26. Հովհաննես 15.13
27. Բ Կորնթացիների 8.9
28. Փիլիպեցիների 2.6–8
29. Գաղատացիների 3.13, Բ Կորնթացիների 5.21, Երկրորդ Օրինաց 21.23
30. Զաքարիա 12.10

որը: Նրա արժեքն անսահմանորեն ավելին է, քան ամբողջ արարչագործությունը միասին: Ո՞վ կարող է չափել Հոր սերը Որդու հանդեպ: Թեև այս աշխարհն անարգում է Որդուն, և նույնիսկ Նրա ժողովուրդը պատշաճ կերպով չի գնահատում Նրան, միևնույն է՝ Նա ընտրված է Աստծուց և թանկ է Նրա համար[31]: Մարդիկ և հրեշտակները չեն կարող ընկալել այն արժեքը, որը Հայրը վերագրում է Նրան, և այն, թե որքան է Նա գնահատում Որդուն: Որդին միշտ եղել է Հոր սիրելին, Ում Նա հավանել է[32]: Նա միշտ եղել է Հոր ուրախությունը[33]: Այնպես որ, տալով Իր Որդուն՝ Հայրը տվեց մեզ ամեն ինչ և ոչինչ չխնայեց:

Աստծո սերը, որը հայտնվում է այն բանով, որ Նա տվեց Իր Որդուն՝ որպես քավություն մեր մեղքերի, է՛լ ավելի է մեծարվում, երբ մենք գիտակցում ենք, որ որևէ կերպով արժանի չենք դրան: Այն բխում է Աստծո բնավորությունից և մտադրությունից, և բացարձակապես կախված չէ Իր ժողովրդի առաքինությունից և արժանիքներից: Նա չի սիրում մեզ *այն պատճառով, թե ինչպիսին ենք մենք*, այլ՝ *չնայած դրան:* Հովհաննես առաքյալը գրում է. «Սրանում է սերը, որ *ոչ թե մենք սիրեցինք Աստծուն*, այլ որ Նա սիրեց մեզ և ուղարկեց Իր Որդուն՝ քավություն մեր մեղքերի համար»[34]:

Աստծո սերն արձագանք չէ՝ ուղղված մեզ. Նրա սերը լիովին հակառակն է այն ամենին, ինչին մենք արժանի ենք: Նա սիրում է մեզ, թեև մենք չունենք ոչ մի առաքինություն կամ արժանիք՝ այդ սերը վաստակելու կամ դրան պարտավորեցնելու համար[35]: Նա սիրում է մեզ, թեև մենք թշնամաբար ենք տրամադրված եղել Նրա հանդեպ՝ մտքով և գործով[36]: Նա սիրում է մեզ, թեև մենք առանց պատճառի ատել ենք Նրան[37]:

Սա Աստծո սիրո այն կողմն էր, որն ամենից շատ գերեց Պողոս առաքյալի սիրտը, և պետք է գերի նաև մեր սիրտը: Պողոսը համարում էր իրեն առաջինը մեղավորներից՝ հայհոյող և եկեղեցին կատաղի կերպով հալածող[38]: Քրիստոսը մահացել էր նրա համար, և միակ բացատրությունը, որը նա կարող էր գտնել, Աստծո անարժանաբար տրվող սերն էր՝ այն սերը, որից նա չէր կարող ազատվել: Այն ստիպում էր նրան, պարտադրում էր նրան, մղում էր նրան և համոզում էր նրան ամեն կերպով[39]: Աստծո սիրո անարժանաբար տրվող բնույթը նրա ամենասիրելի թեմաներից մեկն էր, և նա մեծ

31. Ա Պետրոս 2.4
32. Մատթեոս 3.17, 17.5, Մարկոս 1.11, 9.7, Ղուկաս 3.22
33. Առակաց 8.30
34. Ա Հովհաննես 4.10, շեղագիրն ավելացրած է
35. Եսայի 64.6
36. Հռոմեացիների 8.7. Կողոսացիների 1.21
37. Հռոմեացիների 1.30, Հովհաննես 15.25
38. Ա Կորնթացիների 15.9, Ա Տիմոթեոս 1.13–15
39. Բ Կորնթացիների 5.14,15

աշխատանք տարավ, որ այն հայտնի դարձներ բոլոր մարդկանց: Նա գիտեր, որ Աստծո սերը կարող էր միայն հասկացվել և ընդունվել այն չափով, որով մենք հասկանում ենք, որ բոլորովին արժանի չենք դրան: Այս պատճառով, նա գրում էր Հռոմի եկեղեցուն. «Որովհետև հազիվ թե մի արդարի համար մեկը մահանա (բայց մի բարի մարդու համար դժվար թե մեկը համարձակվի մահանալ): Բայց Աստված հայտնեց Իր սերը մեզ, որ երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մահացավ»[40]:

Որքան ավելի ըմբռնենք Հոր սերը Որդու հանդեպ և մեր մեղքերի մեծությունն Աստծո առջև, այնքան ավելի կսկսենք բացահայտել Հոր սերը մեր հանդեպ: Այն պետք է որ անչափելի և անսահման լինի, եթե Նա տվեց մեզ Իր միածին Որդուն, այնինչ մենք արժանի էինք միայն Նրա զայրույթին: Եթե նույնիսկ Հայրը նվիրեր մեզ հազար կատարյալ աշխարհներ մեր հավիտենության ամեն օրվա համար, այդ նվերների ընդհանուր արժեքը չէր համեմատվի Նրա Որդուն մեկ անգամ պարգևելու հետ: Դրանք նույնիսկ աննշան կերպով չէին արտացոլի այն սերը, որը հայտնվեց, երբ Հայրը տվեց Իր Որդուն՝ որպես քավություն մեր մեղքերի: Եթե մենք մտածենք, որ սա չափազանցություն է, նշանակում է՝ մենք չենք տեսնում Քրիստոսի փառքը և չենք հասկանում Նրա արժեքը: Ինչպես Ջոն Ֆլավելն էր գրում.

> «Բայց թույլ տվեք ասել ձեզ, որ ամբողջ աշխարհը՝ որպես թատերաբեմ, այնքան մեծ չէ, որ կարողանա ցույց տալ Քրիստոսի փառքը կամ բացահայտել Նրանում ծածկված անքննելի հարստությունների նույնիսկ կեսը: Այս բաները շատ ավելի լավ կհասկացվեն և կուսուցանվեն Նրա կողմից Երկնքում՝ կեսօրյա արևի լույսի ներքո, որտեղ ներկա բազմությունը, անմիջապես լուսավորված, կսկսի քարոզել Նրա սքանչելիքները, քան իմ դողդոջուն լեզվի և անփույթ գրչի կողմից, որոնք ընդամենը փչացնում են ամեն ինչ: Ավա՛ղ: Ես գրում եմ Նրա սքանչելիքների մասին, բայց՝ լուսնի լույսի ներքո. ես միայն աննշան չափով կարող եմ փառք տալ Նրան: Իսկապես որ, ոչ մի լեզու՝ բացի Իր լեզվից (ինչպես Գրիգոր Նազիանացին ասաց Բարսեղ Մեծի մասին), ի զորու չէ կատարելու այս առաջադրանքը: Ի՞նչ ես կարող եմ ասել Քրիստոսի մասին: Նրա գերազանց փառքը խավարեցնում է ամեն ըմբռնում, կլանում է ցանկացած արտահայտչականություն: Եթե մենք այլաբանություններ փոխ առնենք ամեն մի արարածից, որն իրենում ունի որևէ գերազանցություն կամ գեղեցիկ հատկանիշ, այն աստիճան, որ փոխ առնենք ամբողջ արարչագործության գեղեցկությունը, և հագցնենք Քրիստոսին ամբողջ այդ փառքով, եթե մենք հոգնեցնենք մեր լեզուները՝ գովեստներ ուղղելով Նրան, ավա՛ղ, երբ ավարտենք, կպարզվի, որ մենք ոչնչի չենք հասել»[41]:

40. Հռոմեացիների 5.7,8
41. Ջոն Ֆլավել, *«Կյանքի աղբյուրը՝ բացված»,* հտ. 1, էջ xviii:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒ

Հիսուս Քրիստոսի հարությունը

«Ինչ եք կենդանին մահացածների մեջ որոնում: Այստեղ չէ, այլ՝ հարություն առավ»:

— Ղուկաս 24.5,6

«Եվ Աստծո Որդի սահմանվեց զորությամբ՝ սրբության Հոգու կողմից»:

— Հռոմեացիների 1.4

«Որ մատնվեց մեր հանցանքների համար և հարություն առավ՝ մեզ արդարացնելու համար»:

— Հռոմեացիների 4.25

Քսանմեկերորդ գլխում վարագույրը փակվեց, երբ Աստծո Որդին մահապատժի ենթարկվեց հռոմեական խաչի վրա: Նա կրեց Իր ժողովրդի մեղքերը, վերցրեց Իր վրա Աստծո զայրույթը և ավանդեց Իր հոգին[1]: Բայց դա վերջը չէր: Մենք միանում ենք առաջին դարերի քրիստոնյաներին, որոնք ուրախությամբ և վստահությամբ ազդարարում էին. «Նա հարությունն է առել: Նա ճշմարտապես հարությունն է առել»:

Հիսուս Քրիստոսի պատմական հարությունը քրիստոնեական հավատքի մեծագույն սյուներից է: Այն մարդը, ով չի հավատում այս փաստին, քրիստոնյա չէ: Ավետարանը չի քարոզվել, եթե այս փաստն ազդարարված չէ: Այնպես որ, ցանկացած քարոզիչ, աստվածաբան, դպիր կամ, այսպես կոչված, մարգարե, ով անսասան կերպով չի ընդունում Հիսուսի ֆիզիկական և պատմական հարությունը, որևէ առնչություն չունի եկեղեցու հետ: Կարիք չկա, որ մենք սովորենք նման մարդկանցից, հասկանանք նրանց կամ հաղորդակցվենք նրանց հետ: Նրանք քրիստոնյա չեն:

Միգուցե եղել է ոսկե դար քրիստոնեության մեջ, երբ կարիք չի եղել նման խիստ զգուշացումներ անել Քրիստոսի հարության վե-

1. Ղուկաս 23.46

ռաբերյալ, բայց, ցավոք, այսօր այդպես չէ: Հարության իրողությունը գտնվում է Ավետարանի մարտական առաջնագծում և ընդունում է թշնամու ամենախիստ հարձակումները: Սատանան իրավացիորեն հասկանում է, որ քրիստոնեությունն ամբողջությամբ հիմնված է այս վարդապետության վրա[2]: Ահա թե ինչու նրա գլխավոր նպատակը այն ժխտելն է: Եթե այս նպատակին անկարելի է հասնել, թշնամին բավարարվում է, երբ նրանք, ովքեր ձգտում են միջկրոնական դիրքորոշում ունենալ, դիտարկում են հարությունը՝ որպես ոչ էական փաստ: Նույնպես, թշնամին սիրում է այն մարդկանց, ովքեր հավատում են, որ Ավետարանը քարոզելիս պետք է լիովին անտեսել հարությունը:

Քրիստոնեության մեծագույն վարդապետությունները մշտապես հարձակման են ենթարկվել բոլոր կողմերից, և հարությունը բացառություն չէ: Այնուամենայնիվ, մեր ժամանակաշրջանը եզակի է, քանի որ ամենավտանգավոր հարձակումները գալիս են նրանցից, ովքեր պնդում են, որ լիարժեք քրիստոնյա են, և նույնիսկ Ավետարանական շարժման մեջ են: Նրանք բացահայտ չեն ժխտում հարությունը, և միգուցե անձամբ ասերկբա հաստատում են այն: Սակայն նրանք չեն պահանջում այս համոզմունքն այլ մարդկանցից, և ո՛չ էլ համարում են, որ այս վարդապետությունը կարևոր է քրիստոնյա դառնալու համար: Նրանք գերադասել են կեղծ հանդուրժողականությունը ճշմարտությունից, և աղավաղված գթասրտությունը մարդկանց հանդեպ՝ Աստծո երկյուղից և Սուրբ գրքին հավատարիմ լինելուց: Ինչպես Հուդան, նույնպես և նրանք համբուրում են Փրկչին՝ ձևական հարգանք մատուցելով, սակայն դավաճանում են Նրան[3]:

Քրիստոսի հարությունը ժխտելը կամ նույնիսկ ոչ կարևոր համարելը կործանում է բերում ճշմարիտ քրիստոնեությանը: Այնուամենայնիվ, ովքեր հավատում են այս վարդապետությանը և ձգտում են հավատարմորեն քարոզել Ավետարանը, կարող են մեղավոր լինել ավելի փոքր չարիքի մեջ, որն է՝ չհատկացնել հարությանը իրեն հասանելի տեղը մեր քարոզման մեջ: Այս մեծ վարդապետությունն այնպիսի բան չէ, ինչը մենք ընդամենը պետք է կցենք խաչի մասին երկար քարոզի ավարտին. այն պետք է համարվի նույնքան ակնառու, որքան խաչը: Գործք առաքելոց գրքում առաքյալների քարոզների սպառիչ ուսումնասիրությունը ցույց կտա, որ Հիսուս Քրիստոսի հարությունը նրանց Ավետարանի գլխավոր թեման էր: Դա այնպիսի ուղերձ չէր, որը դուրս էր հանվում դարակից տարին մեկ անգամ՝ Զատկի ժամանակ: Այն առաջին եկեղեցու չլռող հաղթական երգն էր:

2. Ա Կորնթացիների 15.14
3. Մատթեոս 26.49,50

Կարևոր է մտապահել, որ քրիստոնեության և Ավետարանի շուրջ մոլեգնող բանավեճերը չեն վերաբերում Քրիստոսի մահվան պատմական լինելուն: Միայն կեղծ մտավորականությունը, որը լցված է պոստմոդեռնիստական զառանցանքով և անտեղյակ է պատմական մեթոդին, կարող է ժխտել, որ գոյություն է ունեցել Նազովրեցի Հիսուս անունով մարդ, Ով ապրել է Պաղեստինում և մահացել է Պոնտոս Պիղատոսի իշխանության օրոք: Բանավեճերը պտտվում են հարության շուրջ: Այսպիսով, հարությունը նույնքան վրդովեցուցիչ է, որքան խաչը, և պետք է ազդարարվի նույնքան հիմնավոր և եռանդով: Եթե մենք ավելի շատ շեշտադրենք հարությունը, մեր Ավետարանն ավելի աստվածաշնչյան կդառնա, և Ավետարանի զորությունն ավելի շատ կդրսևորվի:

ՀԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ

Մինչև Քրիստոսի հարության նշանակության և կարևորության մասին խոսելը, օգտակար կլինի գոնե ընդհանուր պատկերացում կազմել այն պատմության մասին, որն Աստվածաշունչը ներկայացնում է մեզ:

Հիսուսի մահվան երրորդ օրվա առավոտն էր: Կանայք վախվորած գնում էին դեպի այն պարտեզը, որտեղ Քրիստոսի մարմինը գերեզմանի մեջ էր դրվել: Նրանք գնում էին ոչ թե հույսով, այլ՝ խղճահարությամբ: Նրանք միայն ուզում էին պատվել իրենց սիրելի Հիսուսի մարմինը պատշաճ թաղելով: Նրանց խոսակցությունը սահմանափակվում էր աննշան կազմակերպչական հարցերով, օրինակ՝ ««Ո՞վ կգլորի քարը...», որովհետև այն շատ մեծ էր»[4]: Հարությունը՝ վերջին բանն էր, ինչի մասին նրանք մտածում էին:

Այնուամենայնիվ, նրանց խղճահարությունը վերածվեց վախի, վախը՝ անմար հույսի, իսկ հույսը՝ անասելի և փառավոր ուրախության: Նրանք տեսան գլորված քարը և դատարկ գերեզմանը ու լսեցին Բարի լուրի ավետումը հրեշտակներից. «Ինչ եք կենդանին մեռելների մեջ որոնում: Այստեղ չէ, հարություն առավ: Հիշեք, թե ինչպես Նա ձեզ հետ խոսեց, երբ որ Գալիլեայում էր, որ ասում էր, թե՝ «Պետք է Մարդու Որդին մեղավոր մարդկանց ձեռքը մատնվի և խաչվի և երրորդ օրը հարություն առնի»»[5]:

Կանայք արագ հեռացան գերեզմանից «վախով և մեծ ուրախությամբ»: Նրանք վազեցին՝ պատմելու Նրա աշակերտներին, բայց նրանց վկայությունը ցնորք երևաց այն մարդկանց, ովքեր պետք է

4. Մարկոս 16.2-4
5. Ղուկաս 24.5-8

որ հավատային[6]: Դրանից հետո, առանց հույսի հուսալով, Պետրոսը և Հովհաննեսը վազեցին դեպի դատարկ գերեզմանը: Կարճ և շփոթեցնող ստուգումից հետո նրանք վերադարձան մյուսների մոտ՝ առանց որևէ հստակ տեղեկության, «որովհետև տակավին չգիտեին գիրքը, թե պետք է Նա մեռելներից հարություն առնի»[7]:

Արագ հեռանալով՝ նրանք թողեցին լաց լինող Մարիամ Մագդաղենացուն, ով առաջինը տեսավ հարություն առած Տիրոջը: Նա պատվեր ստացավ՝ ևս մեկ անգամ վերադառնալ կասկածամիտ աշակերտների մոտ և կրկին հաստատել Քրիստոսի հարությունը[8]: Երկրորդ անգամ Քրիստոսը հայտնվեց գերեզմանից վերադարձող կանանց, իսկ երրորդ անգամ՝ Կղեոպասին և մեկ այլ աշակերտի Էմմաուսի ճանապարհին[9]: Ի վերջո, Հիսուսը հայտնվեց Պետրոսին, իսկ հետո՝ Տասնմեկին[10]: Նա նույնիսկ հայտնվեց Իր անհավատ խորթ եղբայր Հակոբոսին, որի կյանքն այնպես փոխվեց այդ հանդիպումից հետո, որ նա դարձավ առաքյալների թիմի անդամ և Երուսաղեմի եկեղեցու սյուներից մեկը[11]: Ի վերջո, Նա հայտնվեց «մի վիժածի»՝ Տարսոնացի Սողոսին, Դամասկոսի ճանապարհին[12]: Ավելորդ է գրել այս հանդիպման և դրա ազդեցության մասին: Այն մարդը, ով որոշում էր կայացրել կործանել քրիստոնեությունը, դարձավ դրա ամենակրակոտ քարոզիչը և պաշտպանը[13]: Որպես ամփոփում, մենք ունենք Սուրբ գրքի հաստատ խոսքը, որ համբարձումից առաջ մեր Տերը մեկ անգամ հայտնվեց վկաների մեծ բազմության՝ թե՛ անհատների, և թե՛ «հինգ հարյուրից ավելի եղբայրների»[14]:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ԵԶԱԿԻ ԲՆՈՒՅԹԸ

Չափազանց հաճախ մարդիկ օգտագործում են այնպիսի տերմիններ, որոնք չեն կարող սահմանել կամ լիարժեք կերպով չեն հասկանում: Սա հատկապես վտանգավոր է քրիստոնյաների համար, որոնք կանչված են՝ ապրելու Աստծո կամքով, որը հայտնվել է իրենց գրի առնված խոսքերի միջոցով: Սա հատկապես ճշմարիտ է Քրիստոսի կատարած աշխատանքի և հարության վերաբերյալ: Ինչ է սա իրականում նշանակում:

6. Ղուկաս 24.11
7. Հովհաննես 20.9
8. Հովհաննես 20.11-18
9. Մատթեոս 28.9,10, Ղուկաս 24.13-32
10. Ղուկաս 24.34-43
11. Ա Կորնթացիների 15.7, Գործք 1.14, 15.13
12. Ա Կորնթացիների 15.8, Գործք 9.3-19
13. Գործք 9.1,2, Ա Կորնթացիների 15.10
14. Ա Կորնթացիների 15.6

«Հարություն» բառը լատիներենում *«ռեսուրգերե»* բայն է (*«ռե».* «կրկին», *«սուրգերե».* «բարձրանալ»): Նոր կտակարանում օգտագործվում է հունարեն *«անաստասիս»* բառը («*անա՛*». «վեր, կրկին», *«ստա՛սիս».* «կանգնել»): Այս բառը բառացիորեն նշանակում է ոտքի կանգնել կամ հարություն առնել: Եվ հին, և՛ ժամանակակից հունարեն գրականության մեջ այն նշանակում է մահացած էակի կյանքի վերադառնալը: Այնուամենայնիվ, Քրիստոսի դեպքում այս բառը եզակի իմաստ է ստանում:

Անչափ կարևոր է, որ հասկանանք, որ Քրիստոսի հարությունը հասարակ վերակենդանացում չէր: Հին կտակարանում սարեփթացի այրու որդին և սունամացի կնոջ որդին հարություն առան Աստծո զորությամբ, որը գործում էր Եղիա և Եղիսե մարգարեների միջոցով[15]: Նոր կտակարանում մեռելներից հարություն առան Ղազարոսը, Հայրոսի աղջիկը, մի երիտասարդ, Տաբիթան և Եվտիքոսը[16]: Այնուամենայնիվ, թեև այդ մարդիկ իսկապես կյանքի վերադարձան մահացածներից, նրանք դեռ ենթակա էին մահվան: Ինչպես որ Պողոսը բացատրեց կորնթացիների եկեղեցուն, նրանց մարմինները դեռ մահկանացու և կործանման ենթակա էին[17]: Նրանք կրկին մահանալու էին և ապականվելու էին գերեզմանում:

Քրիստոսի հարությունը եզակի էր այն առումով, որ հարություն առնելով մեռելներից՝ Նա այլևս չի մահանալու: Ինչպես որ Նա հայտնեց Հովհաննեսին Պատմոս կղզում. «[Ես եմ...] կենդանին, և Ես մեռած էի և ահա կենդանի եմ հավիտյանս հավիտենից»[18]: Գրելով Հռոմի եկեղեցուն՝ Պողոսը պարզորեն շարադրեց այս ճշմարտությունը. «Գիտենալով, որ Քրիստոսը, մեռելների միջից հարություն առած լինելով, այլևս չի մահանում, և մահը Նրա վրա այլևս չի տիրում, որովհետև այն, որ մահացավ, մեղքին մահացավ մեկ անգամ, և այն, որ կենդանի է, Աստծուն է կենդանի»[19]:

Գոյություն ունի ևս մեկ ազդեցիկ ճշմարտություն, որը ցույց է տալիս Քրիստոսի հարության եզակի բնույթը. Նա հարություն առավ Իր իսկ իշխանությամբ և զորությամբ: Թեև Սուրբ գիրքը սովորեցնում է, որ հարությունը հավասարապես Հոր և Սուրբ Հոգու աշխատանքն է, այն նույնպես վերագրվում է անձամբ Քրիստոսին[20]: Երբ Նրանից նշան խնդրեցին, որը ապացուցում էր, որ Նա տաճարը մաքրելու իշխանություն ուներ, Նա հայտարարեց. «Քանդե՛ք այս տաճարը, և

15. Գ Թագավորաց 17.17-24, Դ Թագավորաց 4.18-37
16. Հովհաննես 11.23-25,43, Մարկոս 5.41,42, Ղուկաս 7.14,15, Գործք 9.36-43, 20.7-12
17. Ա Կորնթացիների 15.53
18. Հայտնություն 1.18
19. Հռոմեացիների 6.9,10
20. Հռոմեացիների 6.4, Գաղատացիների 1.1, Հռոմեացիների 1.4, 8.11

երեք օրում կկանգնեցնեմ այն»[21]: Նա հայտարարեց փարիսեցիներին. «Ես Ինքս եմ Ինձնից դնում այն. Ես իշխանություն ունեմ այն դնելու և իշխանություն ունեմ դարձյալ այն առնելու»[22]:

Հիսուս Քրիստոսի հարությունը եզակի էր: Այն պարզապես վերակենդանացում չէր, որը երկարացնելու էր Նրա կյանքը մինչև հաջորդ հանդիպումը մահվան հետ: Փոխարենը՝ Նա հաղթեց մահը, դժոխքը և գերեզմանը: Նա ապրում է և երբեք չի մահանա:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԴԱՐԱՑՈՒՄ

Մենք ուսումնասիրեցինք Քրիստոսի հարության պատմությունը և խոսեցինք դրա եզակի բնույթի մասին: Այժմ կուղղենք մեր ուշադրությունը դրա կարևորությանը: Թեև այս թեման շատ ծավալուն է և կարող է մի քանի գիրք զբաղեցնել, մենք կխոսենք դրա երկու ամենակարևոր հետևանքների մասին. հարությունը արդարացրեց Քրիստոսին և հաստատեց մեր հավատքը:

Նախորդ գլուխներում իմացանք, որ Քրիստոսի մահն արդարացրեց Աստծուն ցանկացած մեղադրանքից այն մասին, որ Նա անօրինաբար էր արդարացնում մեղավորներին Իր համբերության ժամանակ անցյալում[23]: Ստորև մենք կբացահայտենք, որ հարություն տալով Հիսուսին մեռելներից՝ Աստված նաև արդարացրեց Նրան: Հարության միջոցով Աստված հրապարակավ և զորավոր կերպով ազդարարեց, որ Հիսուսն Աստծո Որդին է և Իսրայելի խոստացված Մեսիան: Դատարկ գերեզմանը եղել է և մինչև օրս մնում է Հիսուսի աստվածային որդիության նշանը: Պողոս առաքյալը գրում էր Հռոմի եկեղեցուն, որ Հիսուսը «Աստծո Որդի սահմանվեց զորությամբ՝ սրբության Հոգու կողմից, մեռելներից հարություն առնելուց»[24]: «Սահմանվեց» բառը թարգմանված է հունարեն *«հորի՛զո»* բառից, որը նշանակում է «սահմանել, հաստատել, նշել սահմանագծերը կամ որոշել»: Այս բառը չի ենթադրում, որ Հիսուսը դարձավ կամ նշանակվեց Աստծո Որդի հարության պահին, այլ՝ որ այդ հրաշալի իրադարձությունը հրապարակավ և անհերքելի կերպով ապացուցեց, որ Նա Աստծո Որդին է:

Հայրը հաստատեց Հիսուսի աստվածային որդիությունը Նրա ամբողջ ծառայության ընթացքում՝ այն հրաշքներով, որոնք Նա գործեց Իր Հոր անունով, լսելի ձայնով երկնքից՝ Նրա մկրտության ժամանակ, և նույնիսկ Նրա այլակերպմամբ՝ Պետրոսի, Հակոբոսի և

21. Հովհաննես 2.19
22. Հովհաննես 10.18
23. Հռոմեացիների 3.25,26
24. Հռոմեացիների 1.4

Հովհաննեսի ներկայությամբ[25]: Այնուամենայնիվ, այդ հաստատություններից ոչ մեկը չի կարող համեմատվել որդիության մեծագույն և վերջնական ազդարարման հետ, որը տեղի ունեցավ, երբ Հայրը Իր Սիրելիին հարություն տվեց մեռելներից: Դատարկ գերեզմանի միջոցով Նա հռչակվեց Աստծո Որդի «զորավոր, ակնառու և հաղթական կերպով»[26]: Ինչ վերաբերում է *«հորի՛զո»* բառի օգտագործմանը և նշանակությանը, Ջոն ՄակԱրթուրը գրում է. «Այն հունարեն բառը, որից առաջանում է մեր «հորիզոն» բառը, նշանակում է «առանձնացնել»: Ինչպես որ հորիզոնը ծառայում է որպես պարզ նշագիծ, որն առանձնացնում է երկինքը և երկիրը, Հիսուս Քրիստոսի հարությունը պարզորեն առանձնացնում է Նրան ամբողջ մարդկությունից՝ ներկայացնելով անհերքելի ապացույց այն մասին, որ Նա Աստծո Որդին է»[27]:

Քրիստոսի հարությունը դիտարկել որպես Նրա որդիության և Մեսիա լինելու մեծագույն ապացույց՝ խորթ չէ Ավետարանների համար: Երբ անհավատ հրեաները նշան կամ ապացույց խնդրեցին՝ հարցնելով, թե ինչ իշխանությամբ մաքրեց տաճարը, Նա մատնացույց արեց Իր ապագա հարությունը. «Քանդե՛ք այս տաճարը, և երեք օրում կկանգնեցնեմ այն»[28]: Երբ դպիրները և փարիսեցիները խնդրեցին նրան ավելի շատ ապացույցներ տրամադրել Իր Մեսիա լինելու վերաբերյալ, Նա կրկին մատնացույց արեց մահվան հանդեպ Իր իշխանությունը. «Որովհետև ինչպես Հովնանը երեք օր և երեք գիշեր կետի փորում էր, այնպես մարդու Որդին երեք օր և երեք գիշեր երկրի սրտում կլինի»[29]:

Հիսուսի հարությունը մեծագույն և անպարտելի ապացույցն է այն մասին, թե ով է Նա և ինչ է կատարել Իր ժողովրդի համար: Այն Քրիստոսի մեծագույն արդարացումն է Իր թշնամիների առջև: Դպիրները մերժում էին Հիսուսին՝ որպես անուսում մարդու, իշխաններն անարգում էին Նրան՝ որպես կեղծ մարգարեի Գալիլեայից, իսկ փարիսեցիները խորշում էին Նրանից՝ որպես Բեհեղզեբուղի գործակից և մեղավորների ընկեր[30]: Այնուամենայնիվ, նրանց բոլոր մեղադրանքներն ի չիք եղան, և նրանց փաստարկներն անզոր դարձան, երբ Նա, Ում նրանք խաչեցին, «Աստծո Որդի սահմանվեց զո-

25. Հովհաննես 10.37,38, Մատթեոս 3.17, 17.5
26. Մարվին Ռիչարդսոն Վինսենտ, *«Նոր կտակարանի բառերի ուսումնասիրություն»* (Փիբոդի, Մասսաչուսեթս, «Hendrickson»), հտ. 3, էջ 4:
27. *«ՄակԱրթուրի Ուսումնական Աստվածաշունչ. Նյու Քինգ Ջեյմս թարգմանություն»* (Նեշվիլ, «Word Bibles», 1997թ.), էջ 1691:
28. Հովհաննես 2.19
29. Մատթեոս 12.40
30. Հովհաննես 7.15,52, Մարկոս 3,22, Մատթեոս 11.19, Ղուկաս 7.34

ությամբ՝ սրբության Հոգու կողմից, մեռելներից հարություն առնելուց»[31]: Զինվորները ծաղրում էին Հիսուսին Գողգոթայի ճանապարհին՝ ասելով. «Ո՛ղջ եղիր, հրեաների թագավոր»[32]: Սակայն նրանք վախից ցնցվեցին և մահացած մարդկանց պես եղան, երբ հրեշտակը մի կողմ գլորեց Նրա գերեզմանի քարը[33]: Քահանայապետերը, դպիրները և ծերերը հայհոյանքներ էին տեղում Նրա վրա՝ ասելով. «Ուրիշներին ազատեց, Ինքն Իրեն չի կարողանում ազատել»[34]: Բայց նրանք երկյուղած հետևում էին, թե ինչպես Նա երեք հազար մարդու փրկեց Պենտեկոստեի օրը[35]: Նրանք խոցում էին Հիսուսին իրենց լեզուներով՝ Նրա ամենածանր պահերին՝ ասելով. «Թե որ Իսրայելի թագավորն է, իջնի հիմա խաչից, և կհավատանք Նրան»[36]: Բայց նրանք դողում էին, երբ մի ձկնորս՝ զորացած Իր Տիրոջ հարությամբ, ազդարարեց. «Հիմա թող ստույգ գիտենա Իսրայելի ամբողջ տունը, որ Աստված Նրան Տեր և Օծյալ արեց, սույն այս Հիսուսին, Ում դուք խաչեցիք»[37]:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԵՐ ՀԱՎԱՏՔԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Դատարկ գերեզմանը ոչ միայն Հիսուս Քրիստոսի արդարացումն էր այս աշխարհի առջև, այլև քրիստոնեական հավատքի հաստատումը: Այն փաստը, որ Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, ապացուցում է, որ Աստված ընդունեց Նրա քավչարար զոհն Իր ժողովրդի մեղքերի համար: Պողոս առաքյալը բացատրեց սա Հռոմի եկեղեցուն. «[Նա] մատնվեց մեր հանցանքների համար և հարություն առավ մեզ արդարացնելու համար»[38]: Այս հատվածը հասկանալու բանալին կրկնվող հունարեն *«դի՛ա»* նախդիրն է, որի ճշգրիտ թարգմանությունը «որովհետև» բառն է: Քրիստոսը մահվան մատնվեց, *որովհետև* կրեց մեր հանցանքները, և Աստված հարություն տվեց Նրան մեռելներից, *որովհետև* ընդունեց Նրա մահը՝ որպես քավչարար զոհ մեր մեղքերի: Այսպիսով, Քրիստոսի հարությունը հաստատում է, որ Իր ժողովրդի մեղքերը քավված են, և նրանք արդարացված են: Թոմաս Շրայները գրում է. «Այն պնդումը, որ Քրիստոսը հարություն առավ մեզ արդարացնելու համար, նշանակում է, որ Նրա հարությունը հաստատում է մեր արդարացման իս-

31. Հռոմեացիների 1.4
32. Մատթեոս 27.29
33. Մատթեոս 28.4
34. Մատթեոս 27.42
35. Գործք 2.41
36. Մատթեոս 27.42
37. Գործք 2.36
38. Հռոմեացիների 4.25

կությունը: Քրիստոսի հարությունը ապացույց է, որ այն աշխատանքը, որ Նա կատարեց մեր փոխարեն, ավարտված է»[39]:

Կարևոր է նշել, որ Քրիստոսը հարություն չառավ, որպեսզի մենք արդարացում *ստանայինք*, կամ որովհետև մեր քավությունը կատարված չէր Խաչի վրա: Համաձայն Քրիստոսի խոսքերի՝ Նրա փրկարար աշխատանքն Իր ժողովրդի համար «կատարվեց» Իր մահվան պահին[40]: Բացի այդ՝ մենք չարդարացանք այն պահին, երբ Քրիստոսը հարություն առավ: Աստվածաշունչը պարզորեն սովորեցնում է, որ արդարացումը շնորհվում է մարդուն այն պահին, երբ նա հավատում է. այսինքն, մենք արդարանում ենք, երբ հավատում ենք Քրիստոսի Անձին և աշխատանքին[41]: Այս հատվածը սովորեցնում է, որ Քրիստոսը հարություն առավ, որովհետև Նա իրական Մեսիան էր, և որովհետև Նրա մահն ընդունվեց Աստծո կողմից՝ որպես վճար Իր ժողովրդի մեղքերի համար: Ի դեմս հարության, մենք աստվածային երաշխիք ունենք, որ հավատալով Նրա զոհին՝ արդարացված ենք Աստծո առջև:

Աստված հարություն տվեց Նազովրեցի Հիսուսին մեռելներից, քանի որ Նա ճիշտ այն էր, ինչ ասում էր Իր մասին, և Նրա մահը կատարեց ճիշտ այն, ինչ Նա ասաց: Քրիստոսն արդարացրեց Իր Հորը, երբ մահացավ Գողգոթայում, և ապացուցեց, որ Աստված, Ով արդարացնում է մեղավորներին, անմեղադրելի է: Հայրն արդարացրեց Իր Որդուն, երբ հարություն տվեց Նրան մեռելներից՝ ցույց տալով, որ Նա հիրավի Աստծո Որդին է և այս աշխարհի Փրկիչը:

Մինչև Քրիստոսի խաչելությունը, աշակերտները հույս ունեին, որ «Նա էր, որ Իսրայելին փրկելու էր»[42]: Այնուամենայնիվ, նրանց բոլոր հույսերն ի չիք դարձան, երբ մահը, թվում էր, ասաց վերջին խոսքը: Ինչպե՞ս Նազովրեցի Հիսուսը կարող էր կատարել Աստծո խոստումը, եթե Նա մահացած էր և դրված էր մեկ այլ մարդու գերեզմանում: Բայց, նույն կերպով, ինչպե՞ս Իսահակը կարող էր լինել խոստացված սերունդը, որի անունով կոչվելու էին Աբրահամի ժառանգները, եթե նա պետք է մահանար զոհասեղանի վրա՝ իր հոր ձեռքով[43]: Մի՞թե Աբրահամը կհամարձակվեր հավատալ, որ Աստված հարություն կտար նրան մեռելներից [44]: Եվ ինչպե՞ս էին կատարվելու Հովսեփի բոլոր երազները, եթե նա Եգիպտոսի բանտում էր ու նրան

39. Թոմաս Ռ. Շրայներ, *«Հռոմեացիների թուղթ»*. «Բեյքեր» հրատարակչության Նոր կտակարանի մեկնություն (Գրենդ Ռեփիդս, «Baker Books», 1998թ.) էջ 244:
40. Հովհաննես 19.30
41. Հռոմեացիների 5.1
42. Ղուկաս 24.21
43. Ծննդոց 21.12. Հռոմեացիների 9.7
44. Եբրայեցիների 11.19

կարելի էր մահացած համարել[1]: Մի՞թե Աստված կարող էր մեկ օրում բանտից դուրս հանել նրան և իշխանություն տալ ամբողջ Եգիպտոսի վրա[2]: Աստվածաշունչը պատասխանում է այս հարցին՝ հարցով. «Մի՞թե Ինձ համար մի որևէ դժվար բան կա»[3]:

Իսահակն արձակվեց իր կապերից և վերադարձվեց իր հորը: Հովսեփն ազատ արձակվեց բանտից և բարձրացվեց Փարավոնի աջ կողմը: Քրիստոսը հարություն առավ մեռելներից և բարձրացավ Աստծո աջ կողմը: Նա հարություն առավ, որովհետև Աստծո Որդին էր, և Նրա Հայրն ընդունել էր Նրա մահը՝ որպես քավչարար զոհ մեր մեղքերի:

1. Ծննդոց 37.5–10
2. Ծննդոց 41.41
3. Երեմիա 32.27

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԵՔ

Հարությունը՝ որպես մեր հավատքի հիմք

«Ինչ, անհավատալի՞ բան է երևում ձեզ, որ Աստված մեռելներին հարություն է տալիս»:

— Գործք 26.8

Քրիստոնեության թշնամիները ճիշտ են վարվում՝ կենտրոնացնելով իրենց հարձակումները Քրիստոսի պատմական հարության վրա, քանի որ մեր հավատքը լիովին կախված է դրանից: Եթե Քրիստոսը հարություն չի առել, մեր հավատքն ունայն կամ դատարկ է[4]: Նրանք, ովքեր հավատում են, դեռ իրենց մեղքերի մեջ են, և նրանք, ովքեր արդեն մահացել են, հավիտյան կորսվել են[5]: Ավելին՝ դրանից տրամաբանորեն հետևում է, որ քարոզելով հարությունը՝ մենք Աստծո կեղծ վկաներ ենք, քանի որ վկայում ենք, որ Նա հարություն է տվել Քրիստոսին մեռելներից, այնինչ՝ Նա չի արել դա[6]: Ի վերջո, եթե Քրիստոսը հարություն չի առել մեռելներից, մենք զավեշտալի կերպով վատնում ենք մեր կյանքը. անտեղի նեղություններ ենք կրում և ատելի ենք կեղծ մարգարեի պատճառով, ով չունի փրկելու զորություն: Ինչպես Պողոս առաքյալն է գրում. «Եթե միայն այս կյանքում ունենք հույս Քրիստոսի հանդեպ, բոլոր մարդկանցից ավելի ողորմելի ենք»[7]:

Մեր իսկ խոստովանությամբ՝ հարությունը ամեն ինչ է քրիստոնեական կյանքի համար: Եթե Քրիստոսը հարություն չի առել, մեր հավատքը կեղծ է: Այդ իսկ պատճառով, լավ կլինի, որ մի շատ կարևոր հարց տանք. «Որտեղի՞ց գիտենք, որ Նա հարություն է առել»: Ինչո՞ւ ենք մենք հավատում դրան: Հաջորդ էջերում կդիտարկենք երկու շատ կարևոր, բայց տարբեր միջոցներ, որոնցով մենք համոզվում ենք Քրիստոսի հարության հարցում: Առաջինը՝ Սուրբ Հոգին հայտնում է այս իրողությունը Իր լուսավորող և վերածնող

4. Ա Կորնթացիների 15.14,17
5. Ա Կորնթացիների 15.17,18
6. Ա Կորնթացիների 15.15
7. Ա Կորնթացիների 15.19

աշխատանքի շնորհիվ, և երկրորդը՝ հարությունը շրջապատող պատմաիրավական ապացույցները հաստատում են այն: Առաջինը լիովին անփոխարինելի է: Երկրորդը քրիստոնեական հավատքի ազդեցիկ հաստատություն է և արդյունավետ միջոց՝ անհավատ աշխարհի հետ երկխոսություն վարելու համար:

ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Ավետարանական եկեղեցին հաճախ փորձում է հաստատել իր հավատքը հարության հանդեպ՝ մատնացույց անելով դատարկ գերեզմանը, այն, որ Քրիստոսի թշնամիները չկարողացան գտնել Նրա մահացած մարմինը, փոփոխությունը Նրա աշակերտների մեջ և շատ այլ պատմական ու իրավական ապացույցներ: Այնուամենայնիվ, թեև այդ ապացույցները հաստատում են, որ քրիստոնեական հավատքն անտրամաբանական կամ հակապատմական չէ, դրանք քրիստոնեական հավատքի հիմքը կամ հենարանը չեն: Հետևյալ փաստերը ցույց են տալիս այս պնդման պատճառը:

Առաջինը՝ առաքյալներն իրենց քարոզի մեջ չէին օգտագործում նման ջատագովական սկզբունքներ[8]: Նրանք ձգտում էին ոչ թե ապացուցել հարությունը, այլ հռչակել այն[9]: Նրանց վստահությունը հիմնված չէր ազդեցիկ փաստարկների վրա, այլ՝ Ավետարանի փրկարար զորության: Սա ակնհայտորեն երևում է կորնթացիներին ուղարկված Պողոսի նամակում.

«Եվ ես էլ, եղբայրնե՛ր, որ ձեզ մոտ եկա, ոչ թե խոսքի կամ իմաստության գերազանցությամբ եկա՝ Աստծո վկայությունը ձեզ պատմելու: Որովհետև միտքս չէի դրած մի ուրիշ բան գիտենալ ձեր մեջ, բայց միայն Հիսուս Քրիստոսին, և այն էլ՝ խաչվածին: Եվ ես տկարությամբ և վախով և շատ դողով եղա ձեզ մոտ: Եվ իմ խոսքը և քարոզությունը ոչ թե մարդկային իմաստության պատիր խոսքերով եղավ, այլ՝ Հոգու և զորության ապացուցությամբ (կամ՝ ցուցադրմամբ), որ ձեր հավատքը մարդկանց իմաստությամբ չլինի, այլ՝ Աստծո զորությամբ»[10]:

Երկրորդը՝ Եկեղեցու պատմության ընթացքում քրիստոնեությանը դարձի եկածների ճնշող մեծամասնությունը՝ ներառյալ ամենաակնառու մտավորականները, չեն ընդունել հավատքը՝ ուսումնասիրելով հարության պատմական և իրավական ապացույցները, այլ՝ լսե-

8. Ջատագովությունը գիտական ճյուղ է, որն օգտագործում է տրամաբանական փաստարկներ, որպեսզի պաշտպանի հավատքը և ցույց տա սխալմունքները քրիստոնեության հակառակորդների փաստարկների մեջ:

9. Գործք 4.2,33, 17.18, 24.21

10. Ա Կորնթացիների 2.1–5. կարդացեք նաև Հռոմեացիների 1.16 և Ա Կորնթացիների 1.18–24

լով հարության հոչակումը: Երրորդը՝ եթե մեր հավատքը հարության հանդեպ հիմնված է պատմական և իրավական ապացույցների վրա, ինչպե՞ս կարող ենք բացատրել անթիվ հավատացյալների կյանքը, ովքեր ապրել են իրենց հավատքով և մահացել են դրա համար՝ չունենալով նույնիսկ աննշան գիտելիքներ այդ ապացույցների մասին: Ինչպե՞ս մենք կարող ենք բացատրել ցեղային հասարակարգերում քրիստոնեություն ընդունած մարդկանց վարքը, ովքեր հազիվ են կարողանում կարդալ և չեն կարող ներկայացնել որևէ պատմական փաստարկ հարության մասին: Նրանք պատրաստ են կրել ամենից արհամարհական հալածանքները և նույնիսկ նահատակվել, քան ուրանալ այն հավատքը, որը չեն կարող տրամաբանորեն պաշտպանել: Այս ճշմարտությունների լույսի ներքո մենք պետք է եզրակացնենք, որ թեև հարության պատմական և իրավական ապացույցներն օգտակար են շատ առումներով, դրանք հարության հանդեպ մեր հավատքի հիմքը չեն:

Այդ դեպքում, ինչի՞ հիման վրա է հավատացյալը համոզված հարության մեջ: Որտեղի՞ց նա գիտի, որ Քրիստոսը հարություն է առել: Աստվածաշունչը պարզորեն պատասխանում է այս հարցին: Հարության հանդեպ գիտելիք և անսասան հավատք ունենալու համար մենք պարտական ենք Սուրբ Հոգու վերածնող և լուսավորող աշխատանքին: Վերստին ծնվելու պահին Աստված գերբնականորեն փոխանցում է մեզ համոզմունք Հիսուս Քրիստոսի հարության և քրիստոնեության վավերականության մասին[11]: Մենք գիտենք, որ Քրիստոսը հարություն է առել մեռելներից, քանի որ Սուրբ Հոգին լուսավորել է մեր միտքը, որպեսզի հասկանանք Սուրբ գրքի ճշմարտությունը, որը վկայում է Քրիստոսի մասին[12]: Հետևաբար, մենք հավատում ենք, քանի որ Սուրբ Հոգին վերածնում է մեր սիրտը՝ փոխանցելով հավատք և նոր զգացմունքներ մեզ հայտնված Քրիստոսի հանդեպ: Պողոս առաքյալը հետևյալ կերպով է նկարագրում Հոգու այս հրաշագործ աշխատանքը. «Որովհետև Աստված, որ ասաց, թե «խավարից լույս ծագի», Ինքը մեր սրտերի մեջ ծագեցրեց՝ Աստծո փառքի գիտության լուսավորությունը տալու համար Հիսուս Քրիստոսի դեմքում»[13]:

Այն մարդիկ, ովքեր վերստին ծնվել են, այլևս չեն կարող ժխտել Հիսուս Քրիստոսի հարությունը, ինչպես որ չեն կարող ժխտել իրենց իսկ գոյությունը: Աստծո ինքնիշխան վճռով և Սուրբ Հոգու վկայութ-

11. Հովհաննես 3.3
12. Հովհաննես 5.39, Ա Հովհաննես 5.6-10
13. Բ Կորնթացիների 4.6

յամբ, այն անառարկելի ապացույց է դարձել նրանց համար[14]: Քրիստոնեական հավատքի հալածողներն արագ հասկանում են, որ «Հիսուսի կրոնով վարակվածների համար այլևս բուժում չկա»[15]:

Այն ճշմարտությունները, որոնք մենք իմացանք, և՛ զգուշացնում, և՛ առաջնորդում են մեզ: Թեև ջատագովությունն ունի իր տեղը, Երկնքի թագավորությունը տարածվում է Ավետարանի հռչակման միջոցով: Մարդիկ հավատքն ընդունելու են ոչ թե պերճախոսությամբ և տրամաբանական փաստարկներով, այլ՝ երբ մենք հավատարմորեն հռչակենք Հիսուս Քրիստոսի կյանքը, մահը և հարությունը: Մենք երբեք չպետք է մոռանանք, որ մեր առաքելությունն անօգուտ գործ կլինի, և մեր աշխատանքը ժամանակի և ջանքերի վատնում կլինի, եթե Աստծո Հոգին չգործի՝ լուսավորելով մեզ լսողների մտքերը և վերածնելով նրանց սրտերը: Այնպես որ, մենք պետք է հրաժարվենք ապավինել մարդկային իմաստության կոտրված գավազանին, այլ պետք է հարենք այն ճշմարտությանը, որ միայն Ավետարանն է Աստծո զորությունը՝ ամեն հավատացողի փրկության համար[16]:

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ

Մարդու հավատքը Քրիստոսի հանդեպ՝ կախված չէ այն բանից, թե արդյո՞ք նա կարող է թվարկել Քրիստոսի հարության պատմական կամ իրավական ապացույցները, և ո՛չ էլ այն բանից, թե արդյո՞ք նա կարող է պաշտպանել հարության վավերականությունը՝ օգտագործելով ջատագովության կամ դասական տրամաբանության սկզբունքները[17]: Այնուամենայնիվ, կարևոր է հասկանալ և ազդարարել, որ քրիստոնեական հավատքը չի հակասում պատմությանը կամ դատողության բարձրագույն և անաղարտ գործածությանը: Ճշմարիտ քրիստոնեությունը ոչ մի դեպքում չի փորձում վերածել առասպելը խրատական պատմության, որպեսզի ինչ-որ բարոյական արժեքներ առաջադրի այս աշխարհում: Ընդհակառակը՝ քրիստոնեական հավատքը և Հիսուս Քրիստոսի հարությունը հիմնված են փաստացի պատմական իրադարձությունների վրա, որոնք միանշանակ կերպով կարելի է հիմնավորել՝ օգտագործելով նույն տեսակի ապացույցներ, որոնք օգտագործում է աշխարհիկ պատմաբանը:

14. Մատթեոս 11.25. «Այն ժամանակ Հիսուսը պատասխան տվեց և ասաց. «Գոհանում եմ Քեզնից, ո՛վ Հայր՝ երկնքի և երկրի Տեր, որ իմաստուններից և գիտուններից այս բաները ծածկեցիր և երեխաներին հայտնեցիր»»:

15. Ինչպես պատմում են, այսպես էին ասում խորհրդային զինվորները, ովքեր փորձում էին հեռացնել քրիստոնյաներին կենդանի Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքից:

16. Եսայի 36.6, Հռոմեացիների 1.16

17. Այս գաղափարով ես պարտական եմ հովիվ Չարլզ Լեյտերին:

Այն մարդիկ, ովքեր հերքում են քրիստոնեության պնդումները՝ համարելով դրանք ոչ պատմական կամ առասպելական, այդպես են վարվում կողմնակալ մոտեցման պատճառով, ինչը թույլ չի տալիս, որ ճշմարտությունը խոսի իր փոխարեն[18]: Նրանց տրամաբանությունը վտանգավոր է. նրանք նախապես որոշել են, որ հարությունն անհնար է. այնպես որ, ցանկացած ապացույց, որը խոսում է հօգուտ այդ իրադարձության, պետք է սխալական լինի, և ամեն մի պնդում դրա վավերականության մասին՝ պետք է անմիտի եզրակացություն կամ խաբեբայի գյուտ լինի:

Մեղավոր մարդու հակակրանքն Ավետարանի հանդեպ ևս մեկ պատճառ է համարելու, որ առանց Աստծո շնորհքի և Սուրբ Հոգու վերածնող աշխատանքի՝ ոչ մի մարդ չի ընդունի Քրիստոսի պնդումները: Մարդը կանտեսի այն պնդումները, որոնք կկարողանա անտեսել, կաղավաղի այն պնդումները, որոնք չի կարողանա անտեսել, և կհակառակվի այն պնդումներին, որոնք չի կարողանա աղավաղել: Այլ կերպ ասած՝ նա ավելի շատ ուժեր կծախսի՝ ճշմարտությունը մերժելու համար, քան՝ եթե պարզապես ընդուներ այն: Թեև Քրիստոսի հարությունը հաստատող բոլոր ապացույցները դիտարկելը չի մտնում այս գրքի շրջանակների մեջ, այնուամենայնիվ, հաջորդ էջերում մենք կդիտարկենք մի քանիսը, որոնք օգտակար կլինեն թե՛ հավատացյալների համոզմունքների, թե՛ ճշմարտությունը որոնողների հարցումների համար:

ԿԱՆԽԱՍՎԱԾ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Հիսուս Քրիստոսի մահը և հարությունը անկանխատեսելի իրադարձություններ չէին, որոնք հանկարծակիի բերեցին Նրան: Դրանք պարզորեն կանխասված էին որպես անհրաժեշտ իրադարձություններ՝ Աստծո կամքի իրականացման համար: Սա ակնհայտ է Հիսուսի խոսքերից՝ ուղղված Իր կասկածամիտ աշակերտներին Իր հարությունից հետո. «Ո՛վ անմիտներ և թուլասիրտներ՝ հավատալու այն բոլոր բաներին, որ մարգարեները խոսեցին: Չէ՞ որ պետք էր, որ Քրիստոսը այս չարչարանքները քաշեր և Իր փառքը մտներ»[19]:

Մեսիայի հարությունը պարզորեն հայտնված էր Հին կտակարանի մարգարեություններում, որոնք գրվել էին Նրա գալուստից հար-

18. Ռոբերտ Ռեյմոնդը գրում է, որ այն մարդիկ, ովքեր հերքում են քրիստոնեության պնդումները՝ դրանք ոչ պատմական կամ առասպելական համարելով, անում են դա «խիստ վիճարկելի քննադատական և փիլիսոփայական հիմքերի վրա, որոնց միջոցով նրանք պարզապես ավելի հարմարավետ են զգում իրենց՝ հոգեբանական կամ կրոնական առումով» (*«Քրիստոնեական հավատքի նոր համակարգված աստվածաբանություն»*, էջ 581):

19. Ղուկաս 24.25,26

յուրավոր տարիներ առաջ: Դավիթը կանխասեց, որ Աստված չէր թողնի Մեսիային գերեզմանում և թույլ չէր տա, որ Նրա մարմինը քայքայման ենթարկվեր[20]: Եսայի մարգարեն առաջ նայելով՝ տեսավ, որ Աստված մեծապես վարձատրելու էր Մեսիային այն բանից հետո, երբ Նա մինչև մահ չարչարվեր Իր ժողովրդի մեղքերի համար[21]: Ինքը՝ Քրիստոսը, կանխասեց Իր մահը և հարությունը Իր խաչելությունից շատ առաջ: Երբ անհավատ հրեաները նշան կամ ապացույց խնդրեցին՝ հարցնելով, թե ինչ իշխանությամբ Նա մաքրեց տաճարը, Նա հայտարարեց. «Քանդե՛ք այս տաճարը, և երեք օրում կկանգնեցնեմ այն»[22]: Երբ դպիրները և փարիսեցիները խնդրեցին Նրան ավելի շատ ապացույցներ տրամադրել Իր մեսիական պնդումների համար, Նրա հանդիմանությունն ուղեկցվեց Իր ապագա հարության խոստմամբ. «Չար և շնացող ազգը նշան է ուզում, և նշան չի տրվի նրան, բայց միայն Հովնան մարգարեի նշանը: Որովհետև ինչպես Հովնանը երեք օր և երեք գիշեր կետի փորում էր, այնպես մարդու Որդին երեք օր և երեք գիշեր երկրի սրտում կլինի»[23]:

Այս մարգարեությունները ցույց են տալիս, որ Քրիստոսի աշակերտները չհորինեցին հարությունը՝ հուսահատորեն փորձելով կենդանի պահել մեսիական երազանքը: Քրիստոսն այնքան պարզորեն և այնքան հաճախ էր խոսում այս մասին, որ նույնիսկ Նրա թշնամիները գիտեին, որ Նա կանխասել էր Իր հարությունը[24]: «Եվ հետևյալ օրը, որ ուրբաթից հետո է, քահանայապետերը և փարիսեցիները հավաքվեցին Պիղատոսի մոտ և ասացին. «Տե՛ր, հիշում ենք, որ այս մոլորեցուցիչը՝ դեռ կենդանի, ասում էր՝ երեք օրից հարություն կառնեմ»»[25]:

ԴԱՏԱՐԿ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Հիսուսի մահից հետո ոչ միայն Նրա աշակերտների, այլև Նրա թշնամիների ուշադրությունն ամբողջությամբ ուղղված էր Նրա մարմինը գտնելուն: Այնպես որ, դատարկ գերեզմանը և չգտնված դին հարության ազդեցիկ ապացույցներ են: Առաջին իսկ օրվանից այն ամենը, ինչ անհրաժեշտ էր քրիստոնեությունը ոչնչացնելու համար, Հիսուս Մարդու մահացած մարմինը ցուցադրելն էր: Հրեա առաջնորդները, որոնք պահանջեցին Նրա մահը, և հռոմեական իշխանությունները, որոնք խաչեցին Նրան, ստուգորեն գիտեին գերեզ-

20. Սաղմոս 16.8-11
21. Եսայի 53.12
22. Հովհաննես 2.19
23. Մատթեոս 12.39,40
24. Մատթեոս 16.21
25. Մատթեոս 27.62,63

մանի գտնվելու վայրը և Նրա մարմինը դուրս բերելու բազմաթիվ հնարավորություններ ունեին: Եթե գերեզմանը դատարկ չլիներ, մեկ խիզախ քայլը կարող էր ապացուցել ամբողջ աշխարհին, որ Զատկի ուղերձը խաբեություն էր, իսկ առաքյալները նենգ հանցավորներ էին, որոնք առասպել էին հորինել: Քրիստոնեությունը կմահանար իր ծագման իսկ պահից: Ինչո՞ւ Նրա մարմինն այդպես էլ չցուցադրվեց:

Քննադատները հորինել են երեք տեսություն՝ ի պատասխան այս հարցին, և երեքն էլ հավասարապես անհեթեթ են: Առաջինն այն է, որ Հիսուսը չմահացավ հռոմեական խաչի վրա. Նա պարզապես կորցրեց գիտակցությունը, և իշխանությունները սխալմամբ մահացած համարեցին Նրան[26]: Հետագայում, երբ նրան դրեցին զով գերեզմանը, Նա գիտակցության եկավ և փախուստի դիմեց: Այս տեսության դեմ առկա փաստարկները հիմնված են խաչելության պատմության վրա. Նրա սիրտը նիզակով խոցվեց հռոմեացի զինվորի կողմից, և Նա մահացած հայտարարվեց հիմնավոր մասնագիտական զննումից հետո[27]: Նույնիսկ եթե Նա ինչ-որ կերպով կենդանի մնացած լիներ այդ կտտանքներից հետո, հազիվ թե այնպիսի վիճակում լիներ, որ կարողանար գլորել գերեզմանի մուտքը փակող ծանր քարը: Ավելին՝ լավագույն դեպքում անհավանական է թվում, որ նման անձնավորությունը կկարողանար փախչել Պաղեստինի անհայտ շրջաններից մեկը և մինչև կյանքի ավարտը ապրել անհայտության մեջ:

Երկրորդ տեսությունն այն է, որ աշակերտները գողացան Նրա մարմինը և թաղեցին ինչ-որ անհայտ վայրում: Այս տեսության դեմ առկա փաստարկները երկու հիմք ունեն: Առաջինը՝ հռոմեացի զինվորներն անզուգական մարտիկների համբավ ունեին. նրանց պատրաստության և արդյունավետության մասին առասպելներ էին հյուսվում: Երկրորդը՝ Նոր կտակարանում գրված է այն մասին, որ Քրիստոսի մահվան ժամանակ և դրանից հետո աշակերտները վախեցած էին: Գրված է, որ Քրիստոսի մահից անմիջապես հետո քահանայապետերը և փարիսեցիները խնդրեցին Պիղատոսին հսկել գերեզմանը հռոմեական պահակային զորախմբով, որպեսզի թույլ չտային աշակերտներին՝ գողանալ Նրա մարմինը և հավերժացնել առասպելն այն մասին, որ Քրիստոսը հարություն էր առել[28]: Խիստ անհավանական է, որ մի խումբ վախեցած աշակերտներ հաղթահարել էին մի ամբողջ հռոմեական պահակախմբի և գողացել էին Հիսուսի

26. Հաճախ սա անվանում են «Ուշագնացության տեսություն»:
27. Հովհաննես 19.31-34
28. Մատթեոս 27.64

մարմինը: Աշակերտներն արդեն ցույց էին տվել իրենց անհամարձակությունը՝ թողնելով Քրիստոսին խաչելության ժամանակ, իսկ նրանց միջի առաջնորդը՝ Սիմոն Պետրոսը, նույնիսկ չկարողացավ կանգնել մի աղախնի առջև, երբ վերջինս ճանաչեց, որ նա Քրիստոսի հետևորդներից է[29]: Հավասարապես անհավանական է, որ ամբողջ հռոմեական պահակախումբը քներ պարեկության ժամին, ինչպես ասաց քահանայապետը[30]: Իրականում, պետք է ավելի շատ հավատք ունենալ՝ այս տեսությանը հավատալու համար, քան՝ հարությունն ընդունելու:

Երրորդ տեսությունն այն է, որ աշակերտները պարզապես գնացին սխալ գերեզմանի մոտ: Սա նույնպես խիստ անհավանական է, քանի որ գերեզմանը պատկանում էր Արիմաթացի Հովսեփին, ով Սինեդրիոնի խորհրդի անդամ էր[31]: Նա և Նիկոդեմոսը, ով փարիսեցի էր և հրեաների իշխան, այն մարդիկ էին, ովքեր պատրաստեցին Հիսուսի մարմինը թաղման համար և դրեցին հենց այդ գերեզմանի մեջ[32]: Ավելին՝ գրված է, որ կանայք, ովքեր Գալիլեայից հետևում էին Հիսուսին, ստուգորեն գիտեին այդ գերեզմանի գտնվելու վայրը[33]: Եթե աշակերտները սխալ գերեզմանի մոտ գնացած լինեին, բնական է, որ թե՛ ընկերները, թե՛ թշնամիները կմատնանշեին այդ սխալը, կբերեին նրանց ճիշտ գերեզմանի մոտ, կուղղորդեին դեպի Հիսուսի մարմինը և ցույց կտային այն[34]: Կրկին, այս տեսությունը միանում է մյուսներին՝ իր անհեթեթությամբ:

ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏ ՎԿԱՆԵՐ

Որպեսզի որևէ իրադարձություն համարվի պատմական և իրական, պահանջվում է երեք բան. պետք է լինեն ականատեսներ, այդ ականատեսները պետք է լինեն բավարար թվով, և նրանք պետք է արժանահավատություն և անկեղծություն ցուցաբերեն[35]: Ուշագրավ է, որ Սուրբ գրքի վկայությունը Հիսուս Քրիստոսի հարության մասին համապատասխանում է այս երեք պահանջներին:

Առաջինը՝ Սուրբ գրքի վկայությունը հիմնված է ականատեսների պատմությունների վրա, որոնք անձամբ ներկա էին Քրիստոսի ծառայության, հարության և համբարձման ժամանակ: Նոր կտակարա-

29. Մարկոս 14.27, Մատթեոս 26.56, Ղուկաս 22.55-62
30. Մատթեոս 28.11-15
31. Մատթեոս 27.57-61, Մարկոս 15.42-47, Ղուկաս 23.50-56, Հովհաննես 19.38-42
32. Հովհաննես 3.1, Ղուկաս 23.50-53, Հովհաննես 19.38-42
33. Մատթեոս 27.61, Մարկոս 15.47, Ղուկաս 23.55
34. Ռեյմոնդ, *«Նոր համակարգված աստվածաբանություն»,* էջ 566:
35. Հենրի Թեյսեն, *«Ներածական դասախոսություններ համակարգված աստվածաբանություն թեմայով»,* (Գրենդ Ռեփիդս, «Eerdmans», 1961թ.), էջ 246:

նի հեղինակներից յուրաքանչյուրը կարող է համաձայնել Պետրոս առաքյալի հոչակման հետ. «Որովհետև մենք ոչ թե վարպետությամբ հնարված առասպելների հետևելով ցույց տվեցինք ձեզ մեր Տեր Հիսուս Քրիստոսի զորությունը և գալուստը, այլ՝ ականատես լինելով նրա մեծափառությանը»[36]: Նոր կտակարանի հեղինակներն ակնհայտորեն ընդունում էին ականատես լինելու կարևորությունը: Տասնմեկին միանալու համար Մատաթիան պետք է լիներ Քրիստոսի կյանքի և ծառայության ականատեսը՝ սկսած Հովհաննեսի կողմից մկրտվելուց մինչև հարությունը, և մինչև այն օրը, երբ Քրիստոսը Երկինք համբարձվեց[37]: Գրելով իր Ավետարանը՝ Ղուկասը շատ ջանասիրաբար շեշտադրում է, որ վերստին կարգել է այն բաների պատմությունը, որոնք «ավանդեցին սկզբից ականատես... լինողները»[38]: Հովհաննես առաքյալը սկսում է իր առաջին նամակը (խոսքեր 1-4)՝ տպավորիչ և պերճախոս կերպով հաստատելով, որ բոլոր առաքյալներն արտոնված են եղել ունենալու անձնական հարաբերություններ Որդու՝ Քրիստոսի հետ, և որ այդ հարաբերությունը ձևավորել է նրանց վարդապետության և քարոզի հիմքը.

«Այն, որ սկզբից էր, որ լսեցինք, որ մեր աչքերով տեսանք, որին նայեցինք, և մեր ձեռքերը շոշափեցին՝ կյանքի Բանի (կամ՝ Խոսքի) համար (և կյանքը հայտնվեց, և մենք տեսանք և վկայում ենք և պատմում ենք ձեզ հավիտենական կյանքը, որ Հոր մոտ էր և երևաց մեզ): Այն, որ տեսանք և լսեցինք, պատմում ենք ձեզ, որ դուք էլ հաղորդություն ունենաք մեզ հետ, և մեր հաղորդությունը՝ Հոր հետ և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի հետ: Եվ սա գրում ենք ձեզ, որ ձեր ուրախությունը կատարյալ լինի»[39]:

Ցանկացած անկողմնակալ դիտորդի համար պետք է պարզ լինի, որ առաքյալներն անձնական և անմիջական գիտելիք ունեին Քրիստոսի կյանքի, մահվան և հարության մասին, և նույնպես հասկանում էին, թե որքան կարևոր էր հաստատել այդ գիտելիքը: Նրանք կամենում էին, որ ամբողջ աշխարհն իմանար, որ իրենք չէին մոլորվել ասեկոսեներով, այլ հպվել էին հարություն առած Քրիստոսի ձեռքերին, ոտքերին և կողին[40]: Նրանք հաղորդակցվել էին Նրա հետ և ցուցումներ էին ստացել Նրանից[41]: Ի վերջո, նրանք երկրպագել էին Քրիստոսին, երբ Նա, հեռանալով նրանց տեսադաշտից, Երկինք էր համբարձվել[42]:

36. Բ Պետրոս 1.16
37. Գործք 1.21–26
38. Ղուկաս 1.1–4
39. Ա Հովհաննես 1.1–4
40. Ղուկաս 24.39, Հովհաննես 20.27
41. Ղուկաս 24.13–32,41–49, Հովհաննես 21.12–14
42. Գործք 1.9–11

Երկրորդը՝ պատմական կամ իրական համարվելու համար, իրադարձությունը պետք է բավարար թվով ականատեսներ ունենա: Պարզ ասած՝ որքան շատ են ականատեսները, այնքան ավելի արժանահավատ է իրադարձությունը: Այս սկզբունքը գրված է թե՛ Հին կտակարանի Օրենքում, թե՛ Նոր կտակարանում՝ Եկեղեցուն ուղղված պատվերների տեսքով: Ցանկացած իրադարձություն պետք է հաստատվի առնվազն երկու կամ երեք վկաների կողմից[43]:

Քրիստոսի հարության դեպքում այս պահանջը նույնպես բավարարված է: Աստվածաշունչը հայտնում է, որ եղել են հարյուրավոր արժանահավատ վկաներ, որոնք հանդիպել են հարություն առած Քրիստոսին տարբեր իրավիճակներում և հանգամանքներում: Հարության կիրակի օրը Նա հայտնվեց Մարիամ Մագդաղենացուն պարտեզում և մի քանի կանանց, որոնք վերադառնում էին գերեզմանից[44]: Նույն օրը Նա միացավ Կղեոպասին և մեկ այլ աշակերտի, որոնք գնում էին Էմմաուս տանող ճանապարհով[45]: Մինչև այդ օրվա ավարտը, Նա նույնպես հայտնվեց Պետրոսին, իսկ հետո՝ տասը աշակերտներին՝ վերնատանը[46]: Հետևյալ կիրակի օրը Նա հայտնվեց բոլոր տասնմեկ առաքյալներին և ունեցավ Իր հայտնի զրույցը կասկածամիտ Թովմասի հետ[47]: Դրանից հետո Նա հայտնվեց միանգամից ավելի քան հինգ հարյուր վկաների, ինչպես նաև Իր խորթ եղբայր Հակոբոսին[48]: Ինչ-որ պահի, որը նշված չէ, Նա կրկին եկավ Պետրոսի, Հովհաննեսի և հինգ այլ աշակերտների մոտ, երբ նրանք ձկնորսությամբ էին զբաղված Գալիլեայի ծովում[49]: Ի վերջո, Նա Երկինք համբարձվեց Ձիթենյաց սարից՝ Իր աշակերտների ներկայությամբ[50]:

Սուրբ գրքի վկայության լույսի ներքո անհնար է վարկաբեկել Քրիստոսի հարության պատմությունը՝ հիմնվելով այն սուտ կարծիքի վրա, որ հարությունը չէր ունեցել բավականաչափ ականատեսներ: Մեծ անգլիացի քարոզիչ Չարլզ Սփերջենը պերճախոս ձևով վկայում է այս մասին.

> «Մի՞թե ձեզ չի ապշեցնում այն փաստը, թե քանի՞ կարևորագույն իրադարձություններ են արձանագրվել պատմության մեջ, որոնք արժանահավատ են համարվում, բայց որոնց ականատեսների թիվը հավասար չէ Քրիստոսի հարության ականատեսների թվի նույնիսկ մեկ

43. Երկրորդ Օրինաց 17.6, 19.15, Մատթեոս 18.16
44. Մարկոս 16.9–11, Հովհաննես 20.11-18, Մատթեոս 28.9,10
45. Մարկոս 16.12,13, Ղուկաս 24.13-32
46. Ղուկաս 24.34–43, Հովհաննես 20.19-25
47. Մարկոս 16.4, Հովհաննես 20.26-29, Ա Կորնթացիների 15.5
48. Ա Կորնթացիների 15.6,7
49. Հովհաննես 21.1-23
50. Ղուկաս 24.44–49, Գործք 1.3–8

> տասներորդին: Հայտնի պայմանագրեր կնքելը, որոնք ազդեցություն են թողել ազգերի վրա, արքայազների ծնունդներ, վարչապետների արտահայտություններ, դավադիրների ծրագրեր և մարդասպանների հանցագործություններ... բոլոր նման շրջադարձային պատմական իրադարձությունները երբեք չեն վիճարկվել, սակայն քչերն են ականատես եղել դրանց... Եթե այս փաստը (այսինքն՝ հարությունը) մերժվի, դա վերջ կդնի ամեն տեսակի վկայությանը, և մենք միտումնավոր կասենք այն, ինչ Դավիթն ասաց շփոթության մեջ. «Ամեն մարդ սուտ է»: Եվ այսօրվանից յուրաքանչյուրը պետք է այն աստիճան կասկածամիտ դառնա իր կողքինի հանդեպ, որ չհավատա ոչ մի բանի, ինչ ինքը չի տեսել իր աչքերով: Հաջորդ քայլը կլինի սեփական զգայարանների վկայությանը կասկածելը, իսկ թե ուրիշ ինչ հիմարությունների մարդիկ կարող են դիմել դրանից հետո, ես չեմ էլ խիզախի կանխասել»[51]:

Երրորդը և վերջինը՝ պատմական կամ իրական համարվելու համար, տվյալ իրադարձության ականատեսները պետք է արժանահավատություն և անկեղծություն ցուցաբերեն: Այլ կերպ ասած՝ նրանք պետք է ապացուցեն, որ իրենց կարելի է վստահել: Գաղտնիք չէ, որ քրիստոնեության ամբողջ պատմության ընթացքում անթիվ քննադատներ լարել են իրենց բոլոր ուժերը՝ Նոր կտակարանի վկաներին վարկաբեկելու համար: Այնուամենայնիվ, նրանք այդպես էլ չեն կարողացել հերքել նրանց անկեղծությունը և անվավեր ճանաչել նրանց խոսքերը՝ բարոյական կամ բարոյագիտական տեսանկյունից: Այս փաստը հարկադրել է քննադատներին կենտրոնացնել իրենց հարձակումները ինքնախաբեության կամ մասսայական հիստերիայի վարկածի վրա:

Նրանք պնդում են, որ Քրիստոսի աշակերտները և առաջին դարում ապրող հրեաներից շատերը նախատրամադրված էին հարությանը հավատալուն. այդ իսկ պատճառով, նրանք պարզապես տեսան այն, ինչ ուզում էին: Առաջինը՝ հրեա ազգը տառապում էր Հռոմեական կայսրության անտանելի լծի ներքո: Այնպես որ, Հիսուսի օրերում ապրող հրեաները փափագում էին Մեսիայի գալստյանը և հեշտորեն կարող էին խաբվել: Բազմաթիվ հրեաներ արդեն իսկ հետևել էին կեղծ մեսիաների, որոնք հայտնվել էին ժողովրդի մեջ, ինչն ապացուցում է, որ նրանք պատրաստ էին հավատալ գրեթե ամեն ինչի[52]: Երկրորդը՝ Հիսուսը շատ անգամներ էր կանխասել Իր ապագա հարությունը: Քանի որ աշակերտներն անչափ սիրում էին իրենց Ուսուցչին, նման մարգարեությունները կատարյալ հող էին ինքնախաբեության և մասսայական հիստերիայի առաջացման համար:

51. Սփերջեն, *««Մետրոպոլիտեն Թեբերնեքլ»-ի ամբիոնը»*, հտ. 8, էջեր 218-219:
52. Գործք 5.36,37

Մի շարք փաստեր հակադրվում են այս տարածված տեսություններին: Առաջինը՝ հրեա ազգի ճնշող մեծամասնությունը մերժեց Նազովրեցի Հիսուսին՝ որպես Մեսիայի: Նրա երկրային ծառայությունը և մահը գայթակղության քար էին նրանց համար[53]: Իսկ հարության մասին լուրն արդեն անարգական դարձած խաչի ուղերձին ավելացնելը՝ ավելի հրապուրիչ չէր դարձնի Հիսուսի մեսիական պնդումները հրեաների համար: Ավելին՝ այս տեսությունը հաշվի չի առնում այն փաստը, որ արդեն մի քանի տասնամյակ անց հավատացյալների ճնշող մեծամասնությունը բաղկացած էր հեթանոսներից, որոնք չունեին ոչ մի նախատրամադրվածություն՝ հավատալու Ավետարանի հետ կապված ցանկացած բանի: Ինչպես գրում են Լյուիսը և Դեմարեստը. «Այս իրադարձությունը տեղի ունեցավ սուր հակադրությամբ այն ամենի հանդեպ, ինչ նրանք (այսինքն՝ հրեաները) ակնկալում էին աստվածաբանական տեսանկյունից, և իսկական բախում առաջացրեց այդ ժամանակվա հասարակական աշխարհայացքի հետ: Հրեայի համար դա գլորման քար էր, իսկ հույնի համար՝ անմտություն, քանի որ այս իրողությունն ընդունելու համար նրանց աստվածաբանության և տիեզերաբանության մեջ պետք է Կոպեռնիկյան հեղափոխություն տեղի ունենար»[54]:

Երկրորդը՝ հրեաները և հեթանոսները միակը չէին, ովքեր նախատրամադրված չէին հավատալու հարությանը. նույնը միանշանակ կարելի է ասել նաև աշակերտների մասին: Մարիամ Մագդաղենացին առաջինը տեսավ Քրիստոսին հարությունից հետո: Այնուամենայնիվ, սկզբում, տեսնելով դատարկ գերեզմանը, նա կարծեց, թե ինչ-որ մեկը գողացել է Տիրոջ մարմինը և անհայտ տեղ է տարել[55]: Նույնիսկ այն բանից հետո, երբ ի հայտ եկան լուրերը Քրիստոսի հարության մասին, աշակերտները չէին հավատում: Ղուկասը գրում է, որ Քրիստոսի հարության լուրը «ցնորք երևաց նրանց առջև», իսկ Մարկոսը գրում է, որ նրանք «չհավատացին»[56]: Հարություն առած Քրիստոսի հետ առաջին հանդիպումների ժամանակ նրանք կարծեցին, թե Նա պարտիզպան էր, ոգի էր կամ հասարակ ճամփորդ

53. Ա Կորնթացիների 1.23

54. Բրյուս Դեմարեստ և Գորդոն Լյուիս, *«Ինտեգրատիվ աստվածաբանություն»*, (Գրենդ Ռեփիդս, «Baker Academic», 1990թ.) հտ. 2, էջ 466: Նիկոլայ Կոպեռնիկոսը (1473-1543) առաջինն էր, ով առաջարկեց արևակենտրոն տիեզերաբանությունը՝ արեգակնային համակարգի այնպիսի մոդել, որում արևը փոխարինում է երկրին՝ որպես արեգակնային համակարգի կենտրոն: Նրա տեսությունն արմատական շեղում էր «ստատուս քվո» համարվող աշխարհայացքից: Այն դարձավ ուղենիշ ժամանակակից գիտության պատմության մեջ, որը ներկայումս հայտնի է որպես «Կոպեռնիկյան հեղափոխություն»: Այսպիսով, ցանկացած տեսություն, որը նույնքան ծայրահեղ է համարվում, անվանվում է «Կոպեռնիկյան» կամ «Կոպեռնիկյան հեղափոխություն»:

55. Հովհաննես 20.2,13,15

56. Ղուկաս 24.9-11, Մարկոս 16.11

էր Էմմաուսի ճանապարհին[57]: Այս կոպիտ կամ նույնիսկ ծիծաղելի թյուրըմբռնումները հարթվեցին միայն այն ժամանակ, երբ Հիսուսը շարունակեց հայտնվել նրանց և մանրամասնորեն մեկնել նրանց համար Օրենքը և Մարգարեները[58]. մինչև իր կասկածները փարատելը, Թովմասն անհրաժեշտ էր համարում տեսնել մեխերի հետքերը Քրիստոսի ձեռքերին, դնել իր մատն այդ վերքերի մեջ, ինչպես նաև՝ մտցնել իր ձեռքը Նրա կողը[59]: Ահա թե ինչու Քրիստոսը հանդիմանեց նրանց անհավատության և քարսրտության մեջ և կշտամբեց՝ որպես անմիտների և թուլասիրտների, որոնք չէին հավատում այն բոլոր բաներին, որ մարգարեները խոսել էին[60]: Հազիվ թե այս փաստերը հաստատեն պնդումն այն մասին, որ աշակերտները նախատրամադրված էին հարությանը հավատալուն:

Երրորդը և վերջինը՝ խաբեությունը կամ զգայախաբությունը սովորաբար տեղի է ունենում առանձին անհատի հետ: Այն միտքը, որ հարյուրավոր մարդիկ, ովքեր պնդում էին, որ տեսել էին հարություն առած Քրիստոսին, միասին նույն զգայախաբությունն էին ունեցել, չափազանց անհավանական է: Ավելին՝ մասսայական հիստերիան սովորաբար տեղի է ունենում ազդեցիկ քաղաքական կամ կրոնական հաստատությունների օժանդակությամբ, որոնք մարդկային զանգվածներ են կառավարում: Այնուամենայնիվ, Քրիստոսի հարության և Ավետարանի դեպքում, այդ օրերի ազդեցիկ հաստատությունները միաբան հակառակվեցին այդ ուղերձին և արեցին այն ամենը, ինչ կարող էին, որ վարկաբեկեին այն: Այդ ուղերձը տարածողները հիմնականում անկիրթ և անուսում մարդիկ էին, որոնք չունեին ոչ մի քաղաքական, կրոնական կամ տնտեսական ազդեցություն՝ իրենց գործի առաջխաղացմանը նպաստելու համար[61]:

ՍՈՒՏ՝ ԱՌԱՆՑ ԴՐԴԱՊԱՏՃԱՌԻ

Գոյություն ունի հաճախ անտեսված, բայց խիստ համոզիչ փաստարկ հարության պատմական իրողության վերաբերյալ: Առաքյալները նվիրված մնացին ամբողջ կյանքում՝ չնայելով իրենց կրած հալածանքներին և կորուստներին: Եթե Քրիստոսը հարություն չէր առել, և առաքյալները պարզապես հորինել էին այդ պատմությունը, մենք պետք է որ կարողանայինք գտնել այդ խաբեության դրդա-

57. Հովհաննես 20.15, Ղուկաս 24.13–31,37
58. Ղուկաս 24.25,44–46
59. Հովհաննես 20.24–29
60. Մարկոս 16.14, Ղուկաս 24.25,26
61. Գործք 4.13

պատճառը: Ինչ հույսեր նրանք ունեին, երբ տարածում էին այդ սուտը: Այն, որ առաքյալները և առաջին աշակերտների ճնշող մեծամասնությունը մահացան որպես աղքատ, անարգված, հալածված և ատելի մարդիկ, պատմական փաստ է: Ինչպես ասաց Պողոս առաքյալը՝ «Ինչպես ավելուք եղանք աշխարհին՝ ամենի ջնջոց լինելով մինչև հիմա», և «Եթե միայն այս կյանքում հուսացած ենք Քրիստոսին, բոլոր մարդկանցից ավելի ողորմելի ենք»[62]:

Եթե նրանք հորինած լինեին հարության պատմությունը այն հատուկ պատճառներով, որոնցով մարդիկ նման ստեր են հորինում և տարածում հարստության, համբավի և իշխանության համար, նրանք կհրաժարվեին դրանից կամ կուրանային դա, երբ տեսնեին, որ չեն հասնում իրենց ցանկալի նպատակին: Այնուամենայնիվ, պատմությունն ապացուցում է, որ նրանց մեծամասնությունն ընտրեց սարսափելի հալածանքներ և նույնիսկ նահատակություն, բայց չուրացավ հավատքը ո՛չ Ավետարանի հանդեպ, ո՛չ էլ Հիսուսի հարության, որի վրա էլ հիմնված է Ավետարանը: Միակ պատճառը, թե ինչու նրանք ցուցաբերեցին նման տոկունություն և հաստատակամություն՝ բախվելով սաստիկ հալածանքների և մահվան, այն է, որ հարությունն իրական է, այն պատմական փաստ է, և առաքյալներն ու մյուս քրիստոնյաները պարզապես փոխանցում էին այն, ինչի ականատեսներն իրենք իրականում եղել էին: Ինչպես գրում էր Հովհաննես առաքյալը. «Այն, որ տեսանք և լսեցինք, պատմում ենք ձեզ»[63]: Ջեյմս Մոնտգոմերի Բոյսը գրում է. «Ինչի՞ հիման վրա էին Քրիստոսի աշակերտները հավատում հարությանը: Ոչնչի՝ հարության փաստից բացի: Եթե չենք կարող ասել, որ հենց դա էր նրանց հավատքի պատճառը, մենք բախվում ենք պատմության մեծագույն առեղծվածին: Այնուամենայնիվ, եթե մենք կարող ենք ասել, որ նրանց հավատքի պատճառը իրական հարությունը և հարություն առած Տիրոջ իրական հայտնություններն էին, նշանակում է՝ քրիստոնեությունը հասկանալի է, և այն հաստատ հույս է առաջարկում բոլորին[64]:

Եվս մեկ կարևոր գործոն, որը պետք է հաշվի առնենք, վկայող կանայք էին: Խաբեբա մարդիկ, ովքեր հույս ունեին սուտ ուսմունք տարածել, երբեք չէին դիմի այդ քայլին: Նոր կտակարանի ժամանակվա և մշակույթի մեջ կանայք օրինավոր վկաներ չէին համարվում դատական վարույթների ժամանակ: Այնուամենայնիվ, չորս

62. Ա Կորնթացիների 4.13, 15.19
63. Ա Հովհաննես 1.3
64. Ջեյմս Մոնտգոմերի Բոյս, «Քրիստոնեական հավատքի հիմունքներ. Սպառիչ և ընթեռնելի աստվածաբանություն» (Դաուներս Գրոուվ, Իլլինոյս, «InterVarsity Press», 1986թ.), էջ 358:

Ավետարաններում կանայք ակնառու դեր են կատարում՝ որպես Հիսուս Քրիստոսի հարության «առաջին վկաներ»[65]: Մարիամ Մագդաղենացին առաջին անձնավորությունն էր, ով տեսավ Տիրոջը հարությունից հետո, և առաջինն էր, ով վկայեց այլ մարդկանց Նրա հարության մասին: Իրականում, նա պատկերվում է որպես հերոսուհի, քանի որ հավատաց և հնազանդվեց՝ ի հակադրություն առաքյալների անհավատությանը[66]: Այն կանայք, ովքեր կիրակի առավոտյան ուղեկցում էին Մարիամ Մագդաղենացուն դեպի գերեզմանը, հաջորդն էին, ովքեր տեսան Տիրոջը, և առաջին անձիք էին, որոնց Նա հանձնարարեց, որ այդ լուրը փոխանցեն ուրիշներին[67]: Եթե Նոր կտակարանի հեղինակները փորձեին մոլորեցնել հոծ զանգվածների, նրանք չէին օգտագործի կանանց՝ որպես գլխավոր վկաների: Փոխարենը՝ կընտրեին տղամարդկանց, ովքեր շատ ավելի արժանահավատ կհամարվեին:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԵՋ

Ամենամեծ խոչընդոտներից մեկը, որը Հիսուս Քրիստոսի հարությունը մերժող քննադատները պետք է հաղթահարեն, աշակերտների ակնհայտ վերափոխումն է: Եթե հարությունը պատմական իրողություն չէ, կամ ավելին՝ եթե այն կեղծիք է, անկարելի է բացատրել այն զարմանալի վերափոխումը, որը տեղի ունեցավ առաքյալների և հարության մյուս ականատեսների բնավորության և գործերի մեջ:

Մինչև հարությունը, աշակերտները երկչոտ էին, վախկոտ էին և առաջնորդվում էին ինքնապահպանման զգացումով: Նրանք թողեցին Հիսուսին Նրա ձերբակալության ժամանակ, ուրացան Նրան դատավարության ընթացքում, իսկ Նրա մահից հետո երեք օր շարունակ թաքնված էին՝ լցված անհավատությամբ և ընկղմված հուսահատության մեջ[68]: Նրանց հետ գտնվող կանայք ավելի շատ տոկունություն էին ցուցաբերում և ավելի շատ հույս ունեին, քան այն տղամարդիկ, որոնց Քրիստոսն անձամբ էր առաքյալներ կարգել Իր համար: Հենց կանայք էին, որ գնացին գերեզմանը կիրակի առավոտյան, մինչ տղամարդիկ վախեցած վերնատանն էին: Հենց կանայք առաջինը հավատացին և հռչակեցին հարությունը, մինչ տղամարդիկ խլացված էին կասկածներով:

Այնուամենայնիվ, հարությունից հետո նույն տղամարդիկ և կանայք իրենց հավատքի անվեհեր և անսասանելի պաշտպաններ դար-

65. Մատթեոս 28.1-10, Մարկոս 16.1-8, Ղուկաս 24.1-12, Հովհաննես 20.1-18
66. Մարկոս 16.9-11, Հովհաննես 20.11-18
67. Մատթեոս 28.8-10
68. Մատթեոս 26.56,69–75, Մարկոս 16.14, Հովհաննես 20.19, Ղուկաս 24.17

ձան: Գործք առաքելոց գրքից իմանում ենք, որ նրանք ընդդիմացան այս աշխարհին և «շփոթեցրին» (կամ՝ «շուռ տվեցին») այն Հիսուս Քրիստոսի Ավետարանի և հարության ուղերձով[69]: Երբ հրեաների և հեթանոսների միջև գտնվող ամենաազդեցիկ կրոնական և քաղաքական հաստատությունները «պատվեր տվեցին, որ ամենևին չխոսեն, և ո՛չ էլ սովորեցնեն Հիսուսի անունով», աշակերտները մերժեցին նրանց հեղինակությունը՝ անդրդվելիորեն նվիրված մնալով Քրիստոսի Անձին և ուղերձին[70]: Պետրոսը և Հովհաննեսը ցույց տվեցին այս դիրքորոշումը Սինեդրիոնում արած իրենց հայտարարությամբ. «Եթե արժան է Աստծո առջև, որ ձեզ ավելի ականջ դնենք, քան թե Աստծուն, դուք դատեք: Որովհետև մենք չենք կարող այն, որ տեսանք և լսեցինք, չխոսել»[71]:

Թեև Քրիստոսի աշակերտները սպառնալիքներ և ծեծեր էին կրում, բանտարկվում և նահատակվում էին, նրանք հրաժարվում էին ուրանալ կամ դադարել քարոզելուց այն, ինչ իրենք «տեսել և լսել» էին[72]: Այդ տղամարդիկ և կանայք, որոնք խիզախությամբ էին լցվել Հիսուսի հարության պատճառով, ընդամենը մեկ սերնդի ընթացքում տարածեցին Ավետարանն ամբողջ հայտնի աշխարհով[73]: Նրանք չունեին քաղաքական, կրոնական կամ տնտեսական ազդեցություն, նրանք չունեին կրթական աստիճաններ, բայց փոխեցին աշխարհն այն աստիճան, որին չի հավասարվել ոչ մի քաղաքական կամ ռազմական համակարգ: Եթե Քրիստոսը հարություն չի առել, ինչպե՞ս կարելի է բացատրել սա: Ինչպե՞ս հասկանալ նրանց առաքելության հաջողությունը: Ռ. Ա. Տորրեյը գրում է. «Պետք է, որ խիստ անսովոր մի բան տեղի ունեցած լիներ նման արմատական և ապշեցուցիչ վերափոխման համար: Սա կարելի է բացատրել միայն հարությամբ և այն բանով, որ նրանք տեսել էին հարություն առած Տիրոջը»[74]:

ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ԴԱՐՁԸ

Հիսուս Քրիստոսի հետևորդների արմատական վերափոխումը քննադատների միակ խնդիրը չէ: Նրանք դեռ պետք է բացատրեն հետագայում այն մարդկանց դարձի գալը, ովքեր հակառակվում էին Հիսուսին և հալածում էին Նրան հետևող շարժումը: Եթե չլիներ հա-

69. Գործք 17.6
70. Գործք 4.18
71. Գործք 4.19,20
72. Ա Հովհաննես 1.1,3
73. Կողոսացիների 1.5,6
74. Ռ. Ա. Տորրեյ, *«Աստվածաշունչը և իր Քրիստոսը»* («Old Tappan», Նյու Ջերսի, «Fleming H. Revell», տարեթիվը բացակայում է), էջ 92:

ությունը, ինչպե՞ս քրիստոնեությունը կարող էր ազդեցություն թողնել իր առաջին և մեծագույն հետևորդներից մի քանիսի վրա, որոնց թվում էին Հիսուսի խորթ եղբայրները և վատահամբավ Տարսոնացի Սողոսը:

Աստվածաշունչը հստակ պնդում է, որ Հիսուսի կյանքի և ծառայության ընթացքում ո՛չ Հակոբոսը, ո՛չ Հուդան (Հիսուսի խորթ եղբայրները) չէին հավատում Նրան, այլ բացահայտ թշնամանքով էին տրամադրված Նրա Անձի և ծառայության հանդեպ[75]: Իրականում, մեկ անգամ Հիսուսի ընտանիքը Նազարեթից Կափառնայում գնաց՝ Նրան տուն վերադարձնելու համար, քանի որ նրանք մտածում էին, որ Նա «գժվել» էր[76]: Այնուամենայնիվ, հարությունից հետո երկու եղբայրներն էլ արմատական դարձ ապրեցին և առաջնորդներ դարձան Առաջին եկեղեցում[77]: Նրանց նվիրումը Քրիստոսին և հնազանդությունը Նրա իշխանությանը՝ երևում է նրանց նամակների սկզբում, որոնցում նրանք անվանում են իրենց Տեր Հիսուս Քրիստոսի ծառաները (կամ՝ ստրուկները)[78]: Նրանք վերափոխվեցին անհավատ հակառակորդներից հավատարիմ ստրուկների՝ հոժարությամբ հպատակեցնելով իրենց կյանքը Նրա իշխանությանը: Ինչպե՞ս է նման վերափոխումը հնարավոր՝ առանց ընդունելու Սուրբ գրքի վկայությունը. նրանք տեսել էին հարություն առած Քրիստոսին[79]:

Առաջին եկեղեցու ևս մեկ թշնամին, որի դարձի գալը կշիռ է ավելացնում հարության մասին առաքյալների պնդումներին, Տարսոնացի Սողոսն է (հետագայում՝ Պողոս առաքյալ): Գործք առաքելոց գրքում և իր իսկ վկայությամբ, Սողոսն առաջին եկեղեցու մեծագույն և ամենակատաղի թշնամիներից մեկն էր: Իր անգիտությամբ և անհավատությամբ, նա համարում էր, որ Նազովրեցի Հիսուսն ընդամենը խաբեբա և հայհոյիչ էր, և կարծում էր, որ Նրա բոլոր հետևորդներն արժանի էին բանտարկության և մահվան[80]: Առաջին անգամ մենք հանդիպում ենք Նրան Գործք առաքելոց գրքում, երբ նա սրտանց հավանություն էր տալիս Ստեփանոսի նահատակությանը[81]: Դրանից հետո նա գնում է քահանայապետի մոտ՝ «սպառնալիք և մահ շնչելով Տիրոջ աշակերտների վրա», և նամակներ է խնդրում, «որ եթե մեկին գտնի այն ճանապարհին հետևող՝ մարդիկ

75. Հովհաննես 7.3–5
76. Մարկոս 3.21
77. Հակոբոսը. Հակոբոս 1.1, Գործք 1.14, 12.17, 15.13 և այլն, Ա Կորնթացիների 9.5, 15.7, Գաղատացիների 1.19, 2.9 և Հուդան. Հուդա 1, Գործք 1.14, Ա Կորնթացիների 9.5:
78. Հակոբոս 1.1, Հուդա 1.1
79. Ա Կորնթացիների 15.7
80. Ա Տիմոթեոս 1.13, Բ Կորնթացիների 5.16
81. Գործք 7.58, 8.1

կամ կանայք, նրանց կապած բերի Երուսաղեմ»[82]: Այնուամենայնիվ, Դամասկոսի ճանապարհին Սողոսն արմատապես վերափոխվում է. նա համոզվում է, որ Հիսուսը Իսրայելի Մեսիան է, մկրտվում է Նրա անունով և անմիջապես սկսում է քարոզել Նրա մասին ժողովարաններում՝ ասելով, թե՝ «Սա է Աստծո Որդին»[83]: Մյուս հրեաները զարմանքով են արձագանքում՝ ասելով. «Չէ՞ որ սա էր, որ Երուսաղեմում հալածում էր այս անունը կանչողներին, և հենց նրա համար է այստեղ եկել, որ սրանց կապած տանի քահանայապետերի մոտ»[84]:

Հուդայի բոլոր եկեղեցիներում լուր տարածվեց, որ նա, ով մի ժամանակ հալածում և փորձում էր կործանել հավատքը, այժմ քարոզում և ազդարարում է այն[85]: Այնուամենայնիվ, Սավուղն այնքան դաժանաբար էր հալածել եկեղեցին, որ ոչ մի հավատացյալ չէր համարձակվում շփվել նրա հետ: Բոլորը վախենում էին նրանից, մինչև որ Բառնաբասը բերեց նրան առաքյալների մոտ և հաստատեց նրա վկայությունը[86]: Այսպես Տարսոնացի Սողոսը՝ քրիստոնեական հավատքի մեծագույն թշնամին, դարձավ դրա մեծագույն պաշտպանը և քարոզիչը: Վիլյամ Նիլը գրում է. «Պատմականորեն անվիճարկելի փաստ է, որ Նազովրեցիների մոլեռանդ կեղեքիչը, որը հեռացավ Երուսաղեմից՝ «սպառնալիք և մահ շնչելով», մուտք գործեց Դամասկոս՝ մտովի ցնցված և մարմնապես կուրացած, և կազդուրվելով՝ դարձավ այն համոզմունքների առաջատար կողմնակիցը, որոնց ձեռնամուխ էր եղել ոչնչացնելու»[87]:

Քանի որ քննադատները չեն կարող ժխտել Սողոսի դարձի գալը և արմատապես վերափոխված կյանքը, նրանք պարտավոր են ողջամիտ բացատրություն առաջարկել դրա համար: Արդեն երկու հազար տարի է անցել, իսկ եկեղեցին դեռ սպասում է դրան:

ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Քրիստոնեության առաջին տարվա ընթացքում պատվելի փարիսեցի Գամաղիելը մեծ իմաստությամբ խոսեց Սինեդրիոնի հետ Հիսուսի հետևորդների վերաբերյալ: Արժե ամբողջությամբ մեջբերել նրա խոսքը.

> «Ո՛վ Իսրայելցի մարդիկ, զգուշացե՛ք այս մարդկանց համար, թե ինչ պիտի անեք: Որովհետև այս օրերից առաջ Թեվդասը վեր կացավ՝

82. Գործք 9.1,2
83. Գործք 9.18,20
84. Գործք 9.21
85. Գաղատացիների 1.22,23
86. Գործք 9.26,27
87. Վիլյամ Նիլ, *«Գործք առաքելոց»,* (Լոնդոն, «Oliphants», 1973թ.) էջ 128:

ասելով, թե ինքը մի բան է, որ չորս հարյուրի չափ մարդիկ նրան հարեցին, որ ինքը սպանվեց, և ամենքն էլ, որ նրան հնազանդվել էին, ցրվեցին և ոչինչ եղան: Նրանից հետո Գալիլեացի Հուդան վեր կացավ աշխարհագրի օրերում և շատ ժողովուրդ քաշեց իր կողմը. նա էլ կորավ, և ամենքն էլ, որ նրան հնազանդվել էին, ցիրուցան եղան: Եվ հիմա ասում եմ ձեզ՝ հեռու կացեք այդ մարդկանցից և թողեք դրանց, որովհետև եթե այդ խորհուրդը կամ այդ գործը մարդկանցից է, կքանդվի, բայց եթե Աստծուց է, չեք կարող քանդել. միգուցե Աստծո դեմ կռիվ անող էլ գտնվեք»[88]:

Մինչև Հիսուս Քրիստոսի գալը, երկու կեղծ մեսիաներ էին հայտնվել Իսրայելում, և նրանցից ամեն մեկը հետևորդներ էր շահել: Այնուամենայնիվ, նրանց մահից հետո նրանց հետևորդներն արագորեն ցրվել էին, և այդ շարժումները մարել էին: Այդ իսկ պատճառով, Գամաղիելը եզրակացրեց, որ եթե Նազովրեցի Հիսուսն ընդամենը մարդ էր, իսկ Նրա հարությունը խաբեություն էր, նրա հետևորդներն արժանանալու էին նույն ճակատագրին: Բացի այդ՝ Գամաղիելն իմաստուն կերպով եզրակացրեց, որ եթե հարության պատմությունը ճշմարիտ էր, այսինքն՝ Հիսուսը Մեսիան էր, այդ շարժումը կշարունակվեր և կպարզվեր, որ դրան հակառակվողները պայքարում էին Աստծո դեմ: Վերջին երկու հազար տարվա պատմությունը կարծես թե հաստատում է Գամաղիելի փաստարկը:

Հիսուս Քրիստոսի հարության մեծագույն ապացույցներից մեկը քրիստոնեական հավատքի շարունակությունն է պատմության ընթացքում և ամբողջ աշխարհի ազգերի, ցեղերի և ժողովուրդների մեջ: Մինչև օրս միլիոնավոր և նույնիսկ միլիարդավոր մարդիկ վկայել են, որ անձնական հարաբերություններ ունեն Հիսուս Քրիստոսի հետ, և պնդել են, որ Նա շրջադարձային կերպով փոխել է իրենց կյանքը: Կարևոր է նշել, որ այդ մարդկանց խումբը չի սահմանափակվում որևէ ազգային, քաղաքական, տնտեսական կամ ակադեմիական ենթախմբով. ընդհակառակը, այն ընդգրկում է ամեն ազգության, հասարակական խավի և կրթական մակարդակի պատկանող մարդկանց: Առաջին եկեղեցին բաղկացած էր այնպիսի մարդկանցից, ովքեր այլ հանգամանքներում ոչ մի դեպքում չէին միաբանվի: Նրանց թվում էին հույներ և հրեաներ, թլփատվածներ և անթլփատներ, բարբարոսներ, սկյութացիներ, ստրուկներ և ազատներ, բայց Քրիստոսն ամենն էր և ամենի մեջ էր[89]: Նույնը կարելի է ասել քրիստոնեության մասին այսօր:

Նույնպես կարևոր է նշել, որ անթիվ տղամարդիկ, կանայք և երեխաներ, ովքեր հետևել են Քրիստոսին, մեծ զոհերի են գնացել դրա

88. Գործք 5.35-39
89. Կողոսացիների 3.11

համար: Համաձայն որոշ հաշվարկների՝ մինչև օրս նահատակվել է ավելի քան հիսուն միլիոն հավատացյալ: Մյուսները պնդում են, որ այդ թիվը շատ ավելի մեծ է: Այս ամենը առաջադրում է մի շարք մտածելու նյութ տվող հարցեր: Ինչպե՞ս կարելի է հիմնավորել նման նվիրումը և ինքնազոհաբերումը: Ինչպե՞ս կարելի է բացատրել եկեղեցու հարատևելը՝ չնայած անթիվ թշնամիների, որոնք ուխտել էին ոչնչացնել այն: Այս ամենը դրդում է մտածել, որ այն կիրակի առավոտյան, երբ պարզվեց, որ գերեզմանի քարը գլորված է, իրականում ինչ-որ բան էր տեղի ունեցել:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍ

Համբարձված Քրիստոսը՝ Իր ժողովրդի Քահանայապետ

«Ո՛վ դռներ, բարձրացրե՛ք ձեր գլուխները, և բարձրացրե՛ք, ո՛վ հավիտենական դռներ, որ փառաց Թագավորը մտնի: Ո՞վ է այդ փառաց Թագավորը. Տերը՝ զորավոր և ուժեղ. Տերը՝ ուժեղ պատերազմի մեջ: Ո՛վ դռներ, բարձրացրե՛ք ձեր գլուխները, և բարձրացրե՛ք, ո՛վ հավիտենական դռներ, որ փառաց Թագավորը մտնի. Ո՞վ է այդ փառաց Թագավորը: Զորաց Տերը՝ Նա է փառաց Թագավորը»:

— Սաղմոս 24.7-10

«Արդ, որովհետև մեծ Քահանայապետ ունենք՝ երկինքներով անցած՝ Աստծո Որդի Հիսուսին, պինդ բռնենք դավանությունը, որովհետև ոչ թե այնպիսի քահանայապետ ունենք, որ չկարողանա մեր տկարություններին կարեկից լինել, այլ մի այնպիսին, որ ամեն բանով փորձված մեր նմանությամբ, բայց՝ առանց մեղքի»:

— Եբրայեցիների 4.14,15

Աստվածաշունչը հաստատում է, որ հարությունից քառասուն օր անց Քրիստոսը Երկինք համբարձվեց՝ Իր բազմաթիվ աշակերտների ներկայությամբ: Գործք առաքելոցում գրված է. «[Նա] վերացավ, և մի ամպ վեր առավ Նրան նրանց աչքերից»[1]: Ղուկասի Ավետարանը վկայում է. «Եվ եղավ, որ Նա նրանց օրհնելիս՝ ջոկվեց նրանցից, և վերանում էր Երկինքը»[2]: Մարկոսը հայտարարում է. «Արդ, Տերը նրանց հետ խոսելուց հետո Երկինքը համբարձվեց, Աստծո աջ կողմը նստեց»[3]: Պողոս առաքյալը բացատրում է սա հետևյալ ձևով. «Աստված հայտնվեց մարմնում, արդարացավ Հոգով, երևաց հրեշտակներին, քարոզվեց հեթանոսներին, հավատացվեց աշխարհում և վերացավ փառքով»[4]:

1. Գործք 1.9
2. Ղուկաս 24.51
3. Մարկոս 16.19
4. Ա Տիմոթեոս 3.16

Քրիստոսի հարությունը և համբարձումը Աստծո աջ կողմը՝ Նրա թագադրման և գահակալման նախադրյալներն ու ապացույցներն էին: Համաձայն Աստվածաշնչի՝ Հայրը փառավորեց Որդուն Իր հետ՝ այն փառքով, որը Նա ուներ Իր մոտ աշխարհի արարումից առաջ[5]: Այնուամենայնիվ, վերստացած փառքը շատ ավելի մեծ էր, քան այն փառքը, որը Նա թողեց, երբ եկավ այս աշխարհ[6]: Պատճառն այն է, որ այժմ Նա նստած է Հոր աջ կողմը՝ ոչ միայն որպես աստվածության լիություն, այլև փառավորված Մարդ, և ոչ միայն որպես Իշխան, այլև՝ որպես Փրկիչ և Քահանայապետ: Նա Որդի Աստված է և երկրորդ Ադամը. Նա առյուծասիրտ Թագավորն է և մորթված Գառը. Նա ամբողջ երկրի Դատավորն է և Մեծ Քահանայապետը, Ով զոհաբերեց Իր Անձը՝ որպես քավություն Իր ժողովրդի մեղքերի:

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Համբարձման վեհ թեման քննարկելու համար նախ՝ կուղղենք մեր ուշադրությունը հինկտակարանյան սուրբ գրքերին: Դավթի Սաղմոս 24-ը ներկայացնում է Տիրոջ մուտքը Սիոն: Դարեր շարունակ Եկեղեցին մեկնել է այս սաղմոսը որպես Քրիստոսի համբարձումը Նոր Երուսաղեմ և «ավելի մեծ ու կատարյալ անձեռագործ խորանը»[7]: Թեև այն չափը, որով այս սաղմոսը պետք է վերաբերի Քրիստոսին, վերջին տարիներին քննարկումների առարկա է դարձել, Բարեփոխողները, Մաքրակրոնները և եկեղեցու պատմության մեծագույն մեկնիչներից մի քանիսը քրիստոսաբանորեն են մեկնել այն: Մենք կհետևենք նրանց օրինակին և կգտնենք այս սաղմոսում Քրիստոսի փառքը այն ժամանակ, երբ Նա համբարձվեց Աստծո աջ կողմը:

Սաղմոս 24-ի առաջին վեց խոսքերը պատասխանում են մի շատ կարևոր հարցի. ո՞վ կարող է մուտք գործել Տիրոջ ներկայության մեջ: Ինչպես կտեսնենք, պահանջները խիստ և անզիջում են. «Ո՞վ վեր կգնա Տիրոջ սարը, և ո՞վ կկանգնի Նրա սրբության տեղում: Նա, ով սուրբ է ձեռքով և անարատ՝ սրտով, ով իր անձն անիրավության չի տալիս (կամ՝ իր անձում կուռքեր չի բարձրացնում) և երդում չի անում նենգությամբ»[8]: Կարդալով այս հատվածը՝ պետք է անմիջապես հասկանանք, որ մենք հարմար չենք Տիրոջ սարը բարձրանալու և Նրա սրբարանում կանգնելու համար: Մեր ձեռքերն անմաքուր են, մեր սրտերն անարատ չեն, մեր անձերը լի են անիրավությամբ և կռապաշտությամբ, և մեր շուրթերը պղծված են նենգությամբ:

5. Հովհաննես 17.5
6. Փիլիպեցիների 2.6–8
7. Եբրայեցիների 9.11,24
8. Սաղմոս 24.3,4

Մեր մեղքերը բաժանում են մեր և մեր Աստծո մեջտեղը և փակել են մուտքը դեպի Երկինք այնքան ամուր, որքան Երիքովի պարիսպները, որպեսզի ոչ ոք չկարողանա դուրս գնալ և ներս մտնել[9]: Մեր դատավճիռն արդար է. արդար չկա, մեկն էլ չկա[10]: Ինքներս մեզնով չունենք ոչ մի ապաստան. մնում է փակել մեր բերանը և սպասել մեր դատապարտությանը[11]: Նույնիսկ եթե լվացվենք ձյունով և բորակով մաքրենք մեր ձեռքերը, մեր անօրինության արատը մնալու է Նրա առջև[12]: Մենք չենք կարող մուտք գործել և մոտենալ:

Մարդկությունը լիովին որակազրկված է ամեն առումով, սակայն կա Մեկը մեր ցեղից, Ով անցել է երկինքները և կանգնած է Աստծո առջև որպես Իր ժողովրդի դատապաշտպան՝ Հիսուս Քրիստոս Արդարը[13]: Նա Ադամի ժառանգներից է, և այդ պատճառով մեզնից մեկն է: Իր երկրային ուխտագնացության ընթացքում Նա նման էր մեզ ամեն առումով, բայց առանց մեղքի էր[14]: Նա փառավորեց Աստծուն Իր ամեն մտքով, խոսքով և գործով և սիրեց Իր Տեր Աստծուն Իր ամբողջ սրտով, անձով, մտքով և զորությամբ[15]: Նրա ամբողջ կյանքն առանձնանում էր մշտական հնազանդությամբ[16]: Նա անթերի էր օրենքի առջև, Նա կանգնում էր առանց արատի կամ խորշոմության Աստծո սրբության վառ ճերմակ լույսի մեջ, որը բացահայտում է ամեն մի խավար: Աստվածաշունչը հայտարարում է, որ Աստված պակասություն է գտնում նույնիսկ Իր հրեշտակների մեջ, բայց Հիսուսի մեջ Նա գտավ միայն կատարյալ սրբություն և անսահման արդարություն[17]: Նա սուրբ, անմեղ, անարատ և մեղավորներից ջոկված է. Նա Ադամի ցեղի միակ ներկայացուցիչն է, Ով հավանություն ստացավ Աստծո առջև Իր արժանիքներով[18]: Նա միակն է, Ում մասին Աստված վկայեց. «Նա՛ է Իմ սիրելի Որդին, Ում Ես հավանեցի»[19]:

Սաղմոս 24.7-ում տեսնում ենք այս անբիծ Մարդուն՝ Նազովրեցի Հիսուսին, Ով համբարձվել և կանգնել է անմիջապես երկնային դարպասների առջև: Այնտեղ Նա բարձրացնում է Իր ձայնը և աղաղակում. «Ո՛վ դռներ, բարձրացրե՛ք ձեր գլուխները, և բարձրացրե՛ք, ո՛վ հավիտենական դռներ, որ փառաց Թագավորը մտնի»[20]: Որքանո՞վ մեր

9. Եսայի 59.2, Հեսու 6.1
10. Հռոմեացիների 3.10
11. Հռոմեացիների 3.19
12. Հոբ 9.30,31, Երեմիա 2.22
13. Եբրայեցիների 4.14, Ա Հովհաննես 2.1
14. Եբրայեցիների 4.15
15. Ա Կորնթացիների 10.31, Մատթեոս 22.37, Մարկոս 12.30, Ղուկաս 10.27
16. Հովհաննես 8.29
17. Հոբ 4.18
18. Եբրայեցիների 7.26
19. Մատթեոս 3.17, 17.5, Մարկոս 1.11, 9.7, Ղուկաս 3.22
20. Սաղմոս 24.7

գնահատականը Հիսուս Քրիստոսի մասին կբարձրանար, եթե միայն մենք հասկանայինք, թե ինչ է կատարվում այս խոսքում: Իր արժանիքների հաշվին, Նա կանգնած է երկնային դարպասների առջև և պատվիրում է, որ դրանք բացվեն Իր համար: Նրա ձայնից հրեշտակները շտապում են բարձր պարսպի մոտ և վերևից նայում՝ փորձելով տեսնել Նրան[21]: Նրանք հարցնում են. «Ո՞վ է այս փառքի Թագավորը, որ նույնիսկ երկնային դարպասները պետք է հնազանդվեն Նրան: Ո՞վ է այս Մարդը, որ գալիս է Իր անվամբ և պահանջում է մուտք դեպի Երկինք՝ Իր արժանիքների հաշվին»: Նույնիսկ մեծագույն սերովբեները խոնարհեցնում են իրենց գլուխները և ծածկում են իրենց Աստծո ներկայության մեջ՝ ցույց տալով, որ չունեն սեփական արդարություն, որ իրենց առաքինությունը և փառքը բխում են Աստծուց և Նրա շնորհքի արդյունքն են[22]: Նրանք չեն պարծենում իրենց արժանիքներով և ոչինչ չեն պահանջում իրենց անունով: Այնուամենայնիվ, այս Մարդը ոչ միայն հավակնում է Երկնքին, այլև՝ անմիջապես Աստծո գահին: Այդ դեպքում, ո՞վ է այս փառքի Արքան: Ի պատասխան այս հարցմանը՝ Քրիստոսը բարձրացնում է ձայնը երկրորդ անգամ և բացականչում է. «Տե՛ր՝ զորավոր և ուժեղ: Տե՛ր՝ ուժեղ պատերազմի մեջ: Ո՛վ դռներ, բարձրացրե՛ք ձեր գլուխները, և բարձրացրե՛ք, ո՛վ հավիտենական դռներ, որ փառաց Թագավորը մտնի»[23]:

Երկրորդ հրամանը լռեցնում է բոլոր հետագա հարցումները: Նրա ձայնի ուժը հայտնում է Նրա ինքնությունը: Մարմին եղած Խոսքը՝ Մարդու Որդին, բարձրանում է այնտեղ, որտեղ Նա նախկինում էր[24]: Առանց վարանելու՝ հինավուրց նիգերը կոտրվում են, գերանները դողում են, և դարպասները բացվում են Նազովրեցի Հիսուսի առջև: Նա է

Աստծո Որդին[25],
Ադամի Որդին[26]՝
Հղացված Սուրբ Հոգուց[27],
ծնված Դավթի սերնդից[28],
Աստվածության լիությունը՝
մարմնով[29],

21. Այս միտքը Չարլզ Սփերջենի «Դավթի գանձարանը» գրքից է՝ Սաղմոս 24-ի մեկնությունից (Գրենդ Ռեփիդս, «Zondervan», 1950թ.), հտ. 1, էջ 377:
22. Եսայի 6.1,2
23. Սաղմոս 24.8,9
24. Հովհաննես 1.1,14, 6.63
25. Հովհաննես 1.34
26. Ղուկաս 3.23–38, Ա Կորնթացիների 15.45
27. Մատթեոս 1.20
28. Հռոմեացիների 1.3
29. Կողոսացիների 2.9

Հուդայի ցեղի Առյուծը[30],
այն Գառը, որը վերցնում է այս աշխարհի մեղքը[31]:
Ով չի ամաչում Աստծո գահի առջև[32]
և չի ամաչում մեզ եղբայրներ անվանել[33]:
Կենդանիների և մեռածների Դատավորը[34],
Իր ժողովրդի Բարեխոսը[35]:

Հրեշտակները վերապատմելու են այդ պահի փառքը հավիտենության անթիվ դարերում: Հաղթանակած Որդին վերադառնում է՝ կրելով Իր հաղթությունն ապացուցող սպիները: Նա չեղյալ է դարձրել այն պարտամուրհակը, որը բաղկացած էր մեր դեմ ուղղված հրամանագրերից, և գամել է այն խաչին[36]: Նա ապազինել և հրապարակավ խայտառակել է սատանային, որը ստրկացրել էր Իր ժողովրդին մահվան վախի միջոցով[37]: Նա ցույց է տվել, որ Աստված, Ով արդարացնում է մեղավորներին, արդար է[38]: Այդ իսկ պատճառով, ամբողջ Երկինքը նայում է Նրան, Ով խոցվեց, և բարձրաձայն բացականչում է. «Արժանի է մորթված Գառը՝ առնելու և՛ զորություն, և՛ հարստություն, և՛ իմաստություն, և՛ կարողություն, և՛ պատիվ, և՛ փառք, և՛ օրհնություն»[39]:

Մինչ հաղթանակած Քրիստոսն անցնում է հավիտենական դարպասներով, Հայրը նշան է անում, որ Նա բարձրանա դեպի գահը և զբաղեցնի Իրեն իրավամբ հասանելի տեղը՝ Իր կողքին: Ահա թե որտեղ Նա նստեց՝ վեր՝ ամեն իշխանությունից, պետությունից, զորությունից, տերությունից և ամեն անունից, որն անվանվում է, ոչ միայն այս աշխարհում, այլև հանդերձյալում, որ բոլորը պատվեն Որդուն, ինչպես որ պատվում են Հորը[40]: Այս կերպով Դավթի մարգարեությունը վերջնականորեն և լիովին կատարվեց. «Տերն ասաց իմ Տիրոջը. «Իմ աջ կողմը նստի՛ր»»[41]:

Նազովրեցի Հիսուսը՝ մեր եղբայրը, փառքի Արքան է: Նա նորագյուտ աստված չէ, և ո՛չ էլ բարի արարած, որը վերջերս առաջխաղացում է ստացել. Նա Աստծո հավիտենական Որդին է, Ով չհամարեց, որ պետք է կառչեր Աստծուն հավասար լինելուց, այլ, մի

30. Հայտնություն 5.5
31. Հովհաննես 1.29
32. Եբրայեցիների 9.24
33. Եբրայեցիների 2.11
34. Գործք 10.42, Բ Տիմոթեոս 4.1
35. Ա Հովհաննես 2.1. բանաստեղծությունը՝ հեղինակի կողմից:
36. Կողոսացիների 2.14
37. Կողոսացիների 2.15, Եբրայեցիների 2.14,15
38. Հռոմեացիների 3.25,26
39. Հայտնություն 5.12
40. Եփեսացիների 1.21, Հովհաննես 5.23
41. Սաղմոս 110.1

կողմ դնելով Իր փառքը, մարմին հագավ և մահացավ՝ որպես քավություն Իր ժողովրդի մեղքերի[42]: Երրորդ օրը Նա հարություն առավ մեռելներից: Եվ այն բանից հետո, երբ բազմաթիվ համոզիչ ապացույցներով հայտնեց, որ Ինքը կենդանի է, համբարձվեց Երկինք և նստեց Մեծության աջ կողմը բարձրերում[43]: Այդնեղ Նա թագադրված է որպես Իր ժողովրդի Քահանայապետ և Նախակարապետ և որպես բոլորի Տեր և Դատավոր:

ՔՐԻՍՏՈՍԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋՆՈՐԴ

Երբ Հիսուս Քրիստոս Մարդը համբարձվեց Աստծո աջ կողմը, Նա լիովին ստանձնեց միջնորդությունը Աստծո և արարչագործության միջև: Այս պաշտոնը Նրան փոխանցելու Հոր նպատակը բազմակողմանի էր, և այդ կողմերից յուրաքանչյուրը ցույց է տալիս Որդու գերազանցությունը և Հոր անսահման սերը Նրա հանդեպ: Քրիստոսի միջնորդությունն արտահայտում է ժամանակի և արարչագործության մեջ գտնվող այն հարաբերությունները, որոնք եղել են Հոր և Որդու միջև ամբողջ հավիտենության ընթացքում: Առաջինը՝ մենք պետք է հասկանանք հետևյալը. Որդու գերազանցությունը ամեն ինչում, և այն, որ ոչինչ չպետք է տեղի ունենա՝ Նրանից անկախ, մշտապես եղել է Հոր նպատակը և արժանացել է Նրա հավանությանը[44]: Այս պատճառով, Աստծո համար մշտապես հաճելի է եղել գործ ունենալ Իր արարչագործության հետ Որդու միջնորդությամբ: Նա ստեղծել է և պահպանում է այս աշխարհն Իր Որդու միջոցով, Նա հայտնում է Իրեն այս աշխարհին Իր Որդու միջոցով, և Նա փրկում է այս աշխարհն Իր Որդու միջոցով[45]: Մեկ օր Նա դատելու է այս աշխարհն Իր Որդու միջոցով[46]:

Երկրորդը՝ մենք նույնպես պետք է հասկանանք, որ Որդու միջնորդական աշխատանքը Գողգոթայում մշտապես լինելու է Աստծո հայտնության էպիկենտրոնը Իր արարչագործությանը: Դրա գերազանցությունը և առաջնահերթությունը ոչ մի դեպքում չի նվազելու հավիտենության անվերջ դարերի ընթացքում, այլ, ընդհակառակը, ավելանալու է, քանի որ փրկված արարչագործությունը շարունակելու է կատարել Ավետարանի անսահման սքանչելիքները բացահայտելու իր անվերջ առաջադրանքը:

42. Փիլիպեցիների 2.6–9, Հռոմեացիների 3.25, Ա Հովհաննես 2.1,2
43. Գործք 1.3, Եբրայեցիների 1.3
44. Կողոսացիների 1.18, Հովհաննես 1.3
45. Հովհաննես 1.3, Կողոսացիների 1.16, Եբրայեցիների 1.3, Հովհաննես 1.1,14,18, 3.17, 12.41, Եսայի 61.1–3, Գործք 4.12
46. Հովհաննես 5.22, Գործք 10.42, 17.31, Հռոմեացիների 2.16

Երրորդը՝ մենք պետք է մշտապես հիշենք այն փաստը (և ցնծանք դրանով), որ Աստծուց եկած ամեն բարի և կատարյալ պարգև, որը երբևէ շնորհվել է արարչագործությանը, տրվել է Որդու միջոցով և հանուն Նրա[47]: Եվ Աստծուն երկրպագողները, և՛ Նրան անիծողները պարտական են իրենց երբևէ իմացած ամեն բարի բանով Որդու միջնորդությանը[48]: Եկեղեցու արդար դիրքն Աստծո առջև և այն պարգևները, որոնք այն շռայլորեն ստացել է, տրվել են Որդու շնորհիվ և Նրա համար[49]: Այն անձրևը, որը գալիս է ամբարիշտների վրա, և արևը, որը ջերմացնում է նրանց երեսը, տրվում են Նրա միջոցով:

Չորրորդը՝ մենք պետք է հասկանանք, որ մարմնավորումն առաջ բերեց նոր և զարմանալի կողմ Որդու միջնորդական աշխատանքի մեջ: Հիսուս Քրիստոս Մարդը՝ Աստծո հավիտենական Որդին և Ադամի ճշմարիտ Որդին, այժմ պահպանում է տիեզերքը, կառավարում է տիեզերքը և միջնորդում է տիեզերքի համար՝ շնորհիվ Իր մարմնավորման և վերջնականորեն մարմնով փառավորվելու: Այս ճշմարտության հետևանքներն ապշեցուցիչ են: Աստծո վերջնական նպատակն արարչագործության համար իրականացավ Նազովրեցի Հիսուսի միջոցով:

ՔՐԻՍՏՈՍԸ՝ ՄԵՐ ՆԱԽԱԿԱՐԱՊԵՏԸ

Արարչագործության պատմությունը Ծննդոց գրքում պատմում է, որ Աստված ստեղծեց մարդուն Իր պատկերով և որոշեց, որ նա իշխելու է ամբողջ երկրի վրա՝ որպես փոխարքա[50]: Այն, որ Աստված նման արտոնյալ տիտղոս շնորհեց կավից ստեղծված հասարակ էակին, դրդեց սաղմոսերգուին զարմանքից բացականչել.

> «Երբ որ տեսնում եմ Քո երկինքը, Քո մատների գործը՝ լուսինն ու աստղերը, որ Դու հաստատեցիր, ինչ է մարդը, որ հիշում ես նրան, և մարդու որդին, որ խնամք ես տանում նրա համար: Եվ մի քիչ ցածրացրիր նրան հրեշտակներից, բայց փառքով և պատվով պսակեցիր նրան: Դու իշխան կարգեցիր նրան Քո ձեռքի գործերի վրա. ամեն բան նրա ոտքի տակ դրեցիր»[51]:

Աստված դրեց ամեն ինչ մեր հայր Ադամի ոտքերի տակ: Աստված դարձրեց նրան արարչագործության պսակը, իր ցեղի գլուխը և Աստծո գործերի վերակացուն: Այնուամենայնիվ, նա արագորեն

47. Հակոբոս 1.17
48. Հովհաննես 1.3,4
49. Եփեսացիների 1.7,8
50. Ծննդոց 1.26
51. Սաղմոս 8.3–6

խաբվեց օձից և միացավ նրա ապստամբությանը[52]: Արդյունքում մարդը կորցրեց իր բարձր դիրքը՝ ստրկացնելով ամբողջ արարչագործությունը քաոսին, ունայնությանը և քայքայմանը[53]: Ավելին՝ մարդը հարկադրված էր հեռանալ Աստծո ներկայությունից և դառնալ աստվածային արդարադատության առարկան, որի արդյունքը մահն էր[54]:

Մարդկային տեսանկյունից դրախտը կորսվեց, և այն անհնար էր վերականգնել: Այնուամենայնիվ, Աստծո նախախնամության խորհրդով պետք է կատարվեր մի մեծ աշխատանք, որը ծրագրված էր աշխարհի արարումից առաջ[55]: Երբ եկավ ժամանակի լրումը, Աստված ուղարկեց Իր Որդուն՝ միանալու Ադամի անկում ապրած ցեղին, փրկելու Աստծո ժողովրդին և վերականգնելու նրանց այն փառքը, որը մեծապես գերազանցելու էր այն, ինչ նրանք կորցրել էին[56]: Սա Եբրայեցիների թղթի երկրորդ գլխի հիմնական թեման է.

> «Որովհետև [Աստված] ոչ թե հրեշտակներին հնազանդ արեց այն հանդերձյալ աշխարհը, որի մասին խոսում ենք: Մեկը վկայեց մեկ տեղ՝ ասելով. «Մարդն ի՞նչ է, որ Դու հիշես նրան, կամ՝ մարդու որդին, որ այցելես նրան: Մի քիչ ցածր արիր նրան հրեշտակներից, փառքով և պատվով պսակեցիր նրան և Քո ձեռքի գործերի վրա կանգնեցրիր նրան: Ամեն բան հնազանդ արիր նրա ոտքերի տակ», որովհետև ամենը, որ հնազանդեցրեց նրան, ոչինչ չթողեց, որ հնազանդ չլինի նրան, բայց հիմա տակավին չենք տեսնում, թե ամեն բան հնազանդված է նրան: Բայց հրեշտակներից մի քիչ ցածրացած տեսնում ենք Հիսուսին՝ մահի չարչարանքի համար, փառքով և պատվով պսակված, որ Աստծո շնորհքով ամենի համար մահը ճաշակի»[57]:

Համաձայն Եբրայեցիների թղթի հեղինակին տրված իմաստության՝ Աստված ծրագիր ունի նոր արարչագործության՝ գալիք աշխարհի համար[58]: Այս նոր աշխարհը չի լինելու հրեշտակների իշխանության ներքո, այլ նրանց, ովքեր փրկվելու են Ադամի անկում ապրած ցեղից: Ահա թե ինչու Աստծո հավիտենական Որդին մի փոքր ցածրացավ հրեշտակներից, որպեսզի ճաշակեր մահը Իր ժողովրդից ամեն մեկի փոխարեն, փրկեր նրանց մահվան պատժից և վերականգներ այն փառավոր դիրքը, որն Աստված որոշել էր նրանց համար:

52. Ծննդոց 3.1–7
53. Ծննդոց 3.14–19, Հռոմեացիների 8.20–22
54. Ծննդոց 3.24, 2.16,17, Հռոմեացիների 6.23
55. Ա Պետրոս 1.20, Եսայի 46.9,10
56. Գաղատացիների 4.4
57. Եբրայեցիների 2.5–9
58. Եբրայեցիների 2.5

Ներկայումս բոլորի համար ակնհայտ է, որ այդ ծրագիրը դեռ պետք է լիովին կատարվի, քանի որ մենք չենք տեսնում, որ ամեն ինչ հնազանդված լինի Աստծո փրկված ժողովրդին[59]: Այնուամենայնիվ, մենք տեսնում ենք Հիսուսին՝ հարություն առած մեռելներից, համբարձված Մեծության աջ կողմը՝ բարձունքներում, և պսակված փառքով ու պատվով[60]: Նա գնաց Իր ժողովրդից առաջ՝ որպես նրանց փրկության Առաջնորդ[61]: Նա մեր ներկա հույսի Գրավն է և այն Նախակարապետը, որը փառքի մեջ է տանելու շատ որդիների: Աստվածաշունչը հայտնում է, որ արարչագործությունն իսկ անհամբեր փափագում է Աստծո որդիների հայտնությանը և հառաչում է, որ ազատվի ապականության ստրկությունից՝ դեպի Աստծո զավակների փառավոր ազատությունը: Այս մեկ Մարդու՝ Հիսուսի շնորհիվ, արարչագործությունը հուսախաբ չի լինի, և մենք՝ նույնպես:

ՔՐԻՍՏՈՍԸ՝ ՄԵՐ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԸ

Ամբողջ պատմության ընթացքում անկում ապրած մարդու մեծագույն խնդիրը եղել է այնպիսի միջնորդի կարիքը, որը կարող էր գործ ունենալ Աստծո հետ՝ որպես հավասարի, և մարդու հետ՝ իր անկում ապրած և թշվառ վիճակում: Աստծո և մարդու միջև միջնորդ լինելու համար անհրաժեշտ էր, որ այդ միջնորդի երկու բնությունները՝ աստվածայինը և մարդկայինը, «անբաժան միացած լինեին մեկ անձի մեջ՝ առանց փոփոխության, գումարման կամ միախառնման»[62]: Ունենալով աստվածության լիությունը և հավասար լինելով Աստծուն՝ նա կարող էր գործ ունենալ Աստծո հետ[63]: Լինելով լիարժեք մարդ և բախվելով ամեն գայթակղության, սակայն չմեղանչելով՝ նա նույնպես կարող էր կարեկցել մարդկանց տկարություններին և բարեխոսել նրանց համար[64]: Ահա այն պայմանները, որոնց պետք է համապատասխաներ միջնորդը: Եվ Աստծո փառքի համար, և՛ ի մխիթարություն մեր անձերին, Նազովրեցի Հիսուսը համապատասխանում է բոլոր այդ պայմաններին, և նույնիսկ ավելին է: Նա Աստված է՝ այդ բառի լիարժեք իմաստով. Նա ունի աստվածությանը հատուկ բոլոր հատկանիշները և արժանի է աստվածությանը տրվող բոլոր փառքերին և գովեստներին[65]:

59. Եբրայեցիների 2.8
60. Եբրայեցիների 2.9, 1.3
61. Եբրայեցիների 2.10. «Նրանց փրկության Առաջնորդը» (NKJV), «Նրանց փրկության Հեղինակը» (NASB), «Նրանց փրկության Հիմնադիրը» (ESV):
62. 1689թ. Լոնդոնյան Մկրտական Դավանանք, գլուխ 8.2
63. Կողոսացիների 2.9, Փիլիպեցիների 2.6
64. Եբրայեցիների 4.15
65. Հովհաննես 1.1,14, Փիլիպեցիների 2.6

Նմանապես, Նա լիարժեք մարդ է[66]: Մարմին առնելով՝ Նա դարձավ Իր եղբայրների պես ամեն առումով և բախվեց ամեն տեսակի գայթակղության, սակայն չմեղանչեց[67]: Սա է պատճառը, որ Նա հավատարիմ և ողորմած Քահանայապետ է, Ով կարող է գործ ունենալ տգետների և մոլորվածների հետ և կարեկցել նրանց տկարություններին[68]: Իր սեփական առաքինությամբ և արժանիքներով, Նա անցել է երկինքներով, որպեսզի միջնորդի մեզ համար անմիջապես Աստծո գահի սրահում[69]: Նա կանգնում է Աստծո առջև՝ չունենալով ամաչելու ոչ մի պատճառ, և միևնույն ժամանակ չի ամաչում մեզ եղբայրներ կոչելուց[70]: Փառավոր մարմին հագած՝ Նա դարձավ այն Մարդը, Ով մեզնից առաջ մուտք գործեց փառքի մեջ, և Նա, Ով բարեխոսում է մեզ համար Աստծո գահի առջև: Նա նստած է գահին՝ որպես Իր ժողովրդի ներկայացուցիչ, և Նա հավիտյան ապրում է, որ բարեխոսի նրանց համար[71]:

Հոբ նահապետը փափագում էր այնպիսի միջնորդի, որը եզակիորեն որակավորված էր՝ դնելու իր ձեռքը թե՛ Աստծո, թե՛ մարդու վրա[72]: Նա, Ում փափագում էր Հոբը, այժմ նստած է Աստծո աջ կողմը: Երբ ավարտվի ժամանակը, Նա ի վերջո կհեռացնի մեղքը՝ սեփական Անձի վերջնական զոհի միջոցով, և Նա արդեն մուտք է գործել Երկինք, որպեսզի կանգնի Աստծո ներկայության մեջ Իր ժողովրդի համար[73]: Նրա միջոցով մենք խարիսխ ունենք մեր անձերի համար՝ հաստատ և անշարժ հույս, որը մտնում է վարագույրի ներսի կողմը[74]: Նա կարող է «բոլորովին» փրկել մեզ, քանի որ հավիտյան ապրում է, որ բարեխոսի մեզ համար[75]:

Սուրբ գիրքը սովորեցնում է, որ թեև Քրիստոսը կատարեց մեր քավությունը Գողգոթայում և բավարարեց բոլոր պահանջները մեզ արդարացնելու համար, Նա շարունակում է բարեխոսել Իր ժողովրդի համար[76]: Սա Սուրբ գրքի ամենահրաշալի վարդապետություններից մեկն է, սակայն հաճախ այն սխալ է ընկալվում: Ակնառու աստվածաբան Չարլզ Հոջը գրում է. «Ինչ վերաբերում է Քրիստոսի բարեխոսության բնույթին, մենք չենք կարող շատ բան ասել: Աստվածաշնչյան հասկացությունները բացատրելու մեջ չափազանց հե-

66. Ա Տիմոթեոս 2.5
67. Հովհաննես 1.1,14, Եբրայեցիների 2.14–18, 4.15, Բ Կորնթացիների 5.21
68. Եբրայեցիների 2.17, 4.15, 5.1–4
69. Եբրայեցիների 4.14,15, 9.11,12
70. Եբրայեցիների 2.11
71. Եբրայեցիների 7.25
72. Հոբ 9.28–35
73. Եբրայեցիների 9.24–26
74. Եբրայեցիների 6.19
75. Եբրայեցիների 7.25
76. Հովհաննես 19.30, Հռոմեացիների 4.25

ռու գնալը սխալմունք է, և դրանք անփութորեն բացատրելը նույնպես սխալմունք է»[77]: Իսկ Ջոն Մյուրին գրում է հետևյալը.

> «Մեր Տիրոջ բարեխոսության բնույթը հաճախ անհեթեթ կերպով սխալ է մեկնաբանվում հանրահայտ քրիստոնեական շրջանակներում: Չպետք է մտածել, որ Նա «հավիտյան կանգնած է Հոր առջև՝ պարզած ձեռքերով, և աղաչում է՝ բարձրաձայն աղաղակներով և արցունքներով, ինչպես պատկերված էր կատակոմբների խճանկարներում, և ներկայացնում է մեր գործն անտարբեր Աստծուն: Նա Քահանա և Թագավոր է, Ով նստած է գահին, և խնդրում է այն, ինչ կամենում է, Իր Հորից, Ով մշտապես լսում է Նրա խնդրանքները և պատասխանում է: Մեր Տիրոջ աղոթքը Նրա կյանքն է Երկնքում»: Նրա՝ մեկ անգամ մատուցած զոհը լիովին ընդունելի է և արդյունավետ. Նրա հաղորդակցությունը Հոր հետ անմիջական է և անխաթար. Նրա քահանայական ծառայությունը Իր ժողովրդի փոխարեն՝ անվերջ է: Այդ իսկ պատճառով, այն փրկությունը, որը Նա շնորհել է Իր ժողովրդին, լիակատար է»[78]:

Հաշվի առնելով նման ակնառու աստվածաբաններից ստացած զգուշացումները՝ մենք պետք է հարցնենք մեզ. «Ինչ է իրականում նշանակում այն փաստը, որ Քրիստոսը մեր Քահանայապետն է, Ով հավիտյան ապրում է, որ բարեխոսի մեզ համար»[79]: Ստորև կդիտարկենք Նրա բարեխոսության հետ առնչվող չորս ճշմարտություն:

ՀԻՍՈՒՍԸ ՔԱՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՑ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ

Առաջինը՝ Քրիստոսի բարեխոսության մեջ մտնում է Նրա մեկընդմիշտ կանգնելը Աստծո առջև՝ որպես զոհ մեր մեղքերի: Մենք չպետք է մտածենք, որ Քրիստոսի շարունակական բարեխոսությունն անհրաժեշտ է, որպեսզի Նա ավարտին հասցնի այնպիսի բան, ինչը չիրագործեց քավությունը, կամ ապահովի Իր ժողովրդի մեղքերի ներումը: Աստվածաշունչը պարզորեն ցույց է տալիս, որ Քրիստոսը մեկ անգամ հայտնվեց ժամանակների վերջում, որ մեկընդմիշտ հեռացներ մեղքը և հավիտենական փրկություն ստանար՝ զոհելով Իր Անձը[80]: Եբրայեցիների թղթի հեղինակը հաստատում է այս խոսքերը. «Եվ ամեն քահանայապետ ամեն օր կանգ-

77. Չարլզ Հոջ, *«Համակարգված աստվածաբանություն»* (Նյու Յորք, «Scribner, Armstrong, and Co.», 1871–1872թթ..), հտ. 2, էջ 593.

78. Ջոն Մյուրի, *«Հռոմեացիների թուղթը»,* Նոր կտակարանի միջազգային մեկնություն, էջ 155: Մեջբերման ներսում փակագծերի մեջ գտնվող հատվածը պատկանում է Հ. Բ. Սվիթին, *«Համբարձված Քրիստոս»* (Լոնդոն, 1912թ.), էջ 95:

79. Եբրայեցիների 7.25

80. Եբրայեցիների 9.12,26–28 (նաև կարդացեք Եբրայեցիների 7.27, 10.10, Ա Պետրոս 3.18):

նած պաշտոն է կատարում և նույն պատարագներն է մատուցում շատ անգամներ, որ երբեք չեն կարող մեղքեր վեր առնել: Բայց սա, մեղքերի համար մեկ պատարագ մատուցելով, մշտնջենավորապես նստեց Աստծո աջ կողմը: Եվ այսուհետև սպասում է մինչև որ Իր բոլոր թշնամիներն Իր ոտքերի պատվանդանը դրվեն, որովհետև մեկ պատարագով հավիտյան կատարեց սրբվողներին»[81]:

Քրիստոսի մահը մեկընդմիշտ լուծում է հավատացյալի անցյալ, ներկա և ապագա մեղքերի հարցը: Ահա թե ինչու մենք չպետք է մտածենք, որ Քրիստոսը կանգնած է կամ երեսնիվայր պառկած է Հոր առջև և ներում է աղերսում Իր ժողովրդի կողմից գործվող մեղքերի համար: Նրա նիստն Աստծո աջ կողմում՝ Նրա քավության մեծագույն և հավիտենական հիշեցումն է[82]: Այն մնայուն հիշատակ է, որը չի մոռացվի:

ՀԻՍՈՒՍՆ ԱՂՈԹՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ

Երկրորդը՝ Հիսուս Քրիստոսի դերը՝ որպես բարեխոս, միայն ներկայացուցչական չէ. այն նաև ընդգրկում է փաստացի բարեխոսություն, կամ Աստծուն աղոթքներ և աղաչանքներ բարձրացնելը Իր ժողովրդի համար: Որպես ապացույց՝ կդիտարկենք հետևյալ հատվածները.

> «Ո՞վ է, որ դատապարտի: Քրիստոսը (կամ՝ Մի՞թե Քրիստոսը), որ մահացավ, և ավելին, որ հարություն էլ առավ, և Աստծո աջ կողմն է, որ մեզ համար բարեխոս էլ է»[83]:
> «Ուստի և բոլորովին կարող է փրկել նրանց, որ Նրանով մոտենում են Աստծուն, որովհետև միշտ կենդանի է, որ նրանց համար բարեխոսություն անի»[84]:
> «Նրա համար Նրան բաժին պիտի տամ շատերի հետ, և Նա հզորների հետ ավար պիտի բաժանի, նրա փոխարեն, որ Իր Անձը մատնեց մահվան և հանցավորների հետ հաշտվեց, և Նա շատերի մեղքը վեր առավ և հանցավորների համար միջնորդեց (կամ՝ բարեխոսեց)»[85]:

Երբ Պողոս առաքյալը և Եբրայեցիների թղթի հեղինակը խոսում են Քրիստոսի բարեխոսական ծառայության մասին, նրանք օգտագործում են նույն հունարեն *«էնտուգչանո»* բառը, որը նշանակում է «աղոթք, աղաչանք կամ բարեխոսություն»[86]: Մարգարեանալով Մեսիայի ապա-

81. Եբրայեցիների 10.11–14
82. Աստվածաբանները հաճախ են օգտագործում *«նիստ»* բառը՝ ցույց տալու համար, որ Քրիստոսը «նստած է» Աստծո աջ կողմը:
83. Հռոմեացիների 8.34
84. Եբրայեցիների 7.25
85. Եսայի 53.12
86. Հռոմեացիների 8.34, Եբրայեցիների 7.25. կարդացեք Վեյն Ա. Գրուդեմ, *«Համակարգված աստվածաբանություն»* (Գրենդ Ռեփիդս, «Zondervan», 1994թ.), էջեր 627–628:

գա բարեխոսական ծառայության մասին՝ Եսային օգտագործում է եբրայերեն *«պագա»* բառը, որը նշանակում է «աղաչանք անել կամ միջամտել»[87]: Այսպիսով, այս բառերի սկզբնական իմաստներին և դրանց համատեքստին հավատարիմ լինելու համար, մենք պետք է եզրակացնենք, որ Քրիստոսի բարեխոսությունը նույնպես ընդգրկում է Աստծուն խնդրանքներ ներկայացնելը Իր ժողովրդի համար:

Այս բարեխոսական ծառայության մեջ է, որ արտահայտվում է Քրիստոսի երկակի բնության զորությունը և մեծությունը: Որպես ամենագետ Աստված՝ Նա գիտի Իր ժողովրդի ամեն մի նեղության, գայթակղության և կարիքի մասին՝ առանց որևէ ջանք անելու, միաժամանակ և սպառիչ կերպով[88]: Որպես Մարդ, Ով բախվել է ամեն տեսակի գայթակղության, Նա կարող է կարեկցել Իր ժողովրդին և օգնության հասնել իրենց փորձությունների մեջ[89]: Որպես Աստված-Մարդ՝ Նա կարող է մուտք գործել անմիջապես Աստծո գահի սրահը և բարեխոսել Իր ժողովրդի համար՝ կատարելապես իմանալով նրանց կարիքների մասին, կատարելապես կարեկցելով նրանց և կատարելապես ճանաչելով Աստծո կամքը:

Թեև կուզեինք, որ Քրիստոսի երկնային բարեխոսությունն Իր ժողովրդի համար ավելի մանրամասն նկարագրված լիներ, մենք պետք է մոտենանք այս հարցին մեծ զգուշությամբ: Աստվածաշունչը գրեթե լուռ է այս հարցի վերաբերյալ: Այնուամենայնիվ, միգուցե մենք որոշակի պատկերացում կազմենք այս մասին՝ դիտարկելով Քրիստոսի բարեխոսությունը Իր երկրային ծառայության ընթացքում: Ջոն Մյուրին գրում է.

> «Հիսուսի ուսմունքները և գործերն այս երկրի վրա պետք է որ խրախուսեին աշակերտներին՝ տեսնել Նրանում իրենց անպարտելի Բարեխոսին: «Ես աղաչեցի քեզ համար», - ասաց Նա Սիմոն Պետրոսին Վերջին ընթրիքի ժամանակ, - «որ քո հավատքը չպակասի, և դու, երբ որ դառնաս, եղբայրներիդ հաստատի՛ր (Ղուկաս 22.32): Եթե հարց լինի, թե ինչից է բաղկացած Նրա երկնային բարեխոսությունը, մի՞թե կարելի է ավելի լավ պատասխան տալ, քան որ Նա, նստած Աստծո աջ կողմը, շարունակում է անել Իր ժողովրդի համար նույնը, ինչ արեց Պետրոսի համար այս երկրի վրա: Բացի այդ՝ Հովհաննեսի 17-րդ գլխում գրված աղոթքը, որը բարձրացվեց նույն գիշերը, երբ Նա մատնվեց, իրավամբ կոչվում է Նրա քահանայապետական աղոթքը: Այդ աղոթքի մանրազնին ուսումնասիրությունը կօգնի մեզ շատ ավելի լավ հասկանալ, թե ինչ նկատի ունի այն հատվածը, որտեղ մեր Տերը կոչվում է Իր միջոցով Աստծուն եկողների Բարեխոսը»[90]:

87. Եսայի 53.12

88. Փոլ Դեյվիդ Վոշեր, *«Միակ ճշմարիտ Աստված»* (Հաննիբալ, Միսսիսիպի, «Granted Ministries Press», 2009թ.), էջ 40:

89. Եբրայեցիների 4.15, 2.16–18

90. Մյուրի, *«Հռոմեացիների թուղթը»,* էջեր 154–55:

ՀԻՍՈՒՍԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՍԱՏԱՆԱՅԻՑ

Երրորդը՝ Քրիստոսի բարեխոսությունն ընդգրկում է այն, որ հավատացյալները պաշտպանված են սատանայի և նրա հետ միաբանվող ցանկացած անձի մեղադրանքներից: Աստվածաշունչն անվանում է սատանային եղբայրների չարախոս, ով չարախոսում է նրանց մասին կամ ցերեկ ու գիշեր մեղադրում է նրանց Աստծո առջև[91]: *«Սատանա»* անունը թարգմանված է հունարեն *«դիաբոլոս»* բառից, որը նշանակում է մեղադրող կամ այնպիսի անձնավորություն, որը հակված է մեղադրանքի և չարախոսության: Այս կյանքում սատանան մշտապես զրպարտում և մեղադրում է քրիստոնյաներին, բայց Քրիստոսը պաշտպանում է հավատացյալներին Աստծո գահի առջև: Կարևոր է նշել, որ Նրա պաշտպանության հիմքը հավատացյալի անմեղությունը, արժանիքները կամ սատանայի մեղադրանքների անվավեր լինելը չեն: Եթե այդպես լիներ, այդ պաշտպանությունը կձախողվեր, քանի որ հաճախ մենք հանցավոր ենք, և սատանան ճշտորեն է մեղադրում մեզ: Փոխարենը՝ մեր պաշտպանության հիմքը այն կատարյալ և անփոփոխ աշխատանքն է, որը Քրիստոսը կատարել է հավատացյալի համար:

Նա լիովին վճարել է ամեն մի հանցանքի համար, որը մենք գործել ենք, և դրանով իսկ զրոյացրել ցանկացած մեղադրանք, որը սատանան կարող է իրավամբ ուղղել մեր դեմ: Սա է պատճառը, որ Պողոսը վստահությամբ գրում էր. «Ո՞վ է, որ դատապարտի: Քրիստոսը (կամ՝ Մի՞թե Քրիստոսը), որ մահացավ, և ավելին, որ հարություն էլ առավ, և Աստծո աջ կողմն է, որ մեզ համար բարեխոս էլ է»[92]: Իհարկե, առաքյալի հարցը հռետորական է: Նա գիտի, որ միակը, ով իրապես դատապարտելու իրավունք ունի, Նա է, Ով մահացավ, որ ազատեր հավատացյալին ամեն դատապարտությունից: Սատանայի մեղադրանքները չեն կարող հավասարվել Քրիստոսի արյանը: Աստծո ժողովրդի նույնիսկ ամենատկարը Գառան արյան շնորհիվ կհաղթի մեծագույն դևին[93]: Ավելին՝ կարևոր է նաև նշել, որ Քրիստոսը ոչ միայն բարեխոսում է Իր ժողովրդի համար, երբ սատանան մեղադրում է նրանց, այլև այն ժամանակ, երբ նրանք սատանայի հարձակումների ներքո են: Խաչելությանը նախորդող գիշերը Հիսուսն ասաց Պետրոսին, որ սատանան ուզեց ցորենի պես մաղել նրան, բայց և հավաստիացրեց, որ Ինքն աղոթել էր, որ Պետրոսի հավատքը չպակասեր[94]: Նա արել է նույնը անթիվ հավատացյալների հա-

91. Հայտնություն 12.10
92. Հռոմեացիների 8.34
93. Հայտնություն 12.11
94. Ղուկաս 22.31,32

մար եկեղեցու երկու հազար տարվա պատմության ընթացքում, և կշարունակի անել դա մինչև այս աշխարհի ավարտը:

ՀԻՍՈՒՍԸ ՄԽԻԹԱՐՈՒՄ Է ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Չորրորդը և վերջինը՝ Քրիստոսի բարեխոսությունը մեծագույն մխիթարությունն է Իր ժողովրդի համար: Քավության միջոցով հավատացյալն անփոփոխ արդար դիրք ունի Աստծո առջև: Ավելին՝ Սուրբ Հոգու վերածնող աշխատանքը և ներբնակությունը նոր զորություն են տալիս նրան՝ մեղքի դեմ պայքարելու համար: Այնուամենայնիվ, հավատացյալը ցավալիորեն գիտակցում է իր բազմաթիվ տկարությունները և հաճախ կրկնվող ձախողումները: Նա ճնշված և անհույս կլիներ դրանց պատճառով, եթե չունենար ողորմած Քահանայապետ Երկնքում, Ով կարող է կարեկցել տգետներին և մոլորվածներին[95]:

Եբրայեցիների թղթի չորրորդ և հինգերորդ գլուխները պարզորեն ցույց են տալիս այս ճշմարտությունը: Դրանցում մենք սովորում ենք, որ ամեն հավատացյալի կյանքում գործում է երկու ազդեցիկ ճշմարտություն: Առաջինն այն է, որ Աստծո Խոսքի զորությունը բացահայտում է նույնիսկ ամենածածուկ մտքերը և գործերը հավատացյալի կյանքում: Աստծո Խոսքը «կենդանի է և զորավոր և ամեն երկսայրի սրից ավելի կտրուկ է և թափանցում է մինչև շնչի և հոգու և հոդվածների և ծուծի բաժանվելը, և քննող է սրտի մտքերը և խորհուրդները»[96]: Երկրորդ ճշմարտությունը կապված է Աստծո ամենագետ լինելու հետ: Նա գիտի հավատացյալի յուրաքանչյուր միտքը, խոսքը և գործը. «Չկա մի արարած՝ աներևույթ Նրա երեսից, բայց ամենն էլ մերկ ու բաց է Նրա աչքերի առջև, Ում հետ է մեր բանը (կամ՝ Ում մենք պետք է հաշիվ տանք)»[97]:

Այս երկու ճշմարտությունները՝ Աստծո Խոսքի զորությունը, որը բացահայտում է մեր մեղքը, և Աստծո ամենագիտությունը, որից ոչ մի մարդ չի կարող թաքնվել, բավական կլինեին՝ հավատացյալին կաթվածահար անելու և նրան անորոշության և կասկածի ծովը նետելու համար: Այնուամենայնիվ, սա տեղի չի ունենում, քանի որ հավատացյալը Հիսուսի մեջ գտնում է ողորմած և հավատարիմ Քահանայապետի, Ով կարող է կարեկցել նրա տկարություններին, քանի որ Ինքը բախվել է բոլոր գայթակղություններին, սակայն չի մեղանչել[98]: Այս պատճառով, կասկածը և վախը չեն վանում հավատաց-

95. Եբրայեցիների 5.1,2
96. Եբրայեցիների 4.12
97. Եբրայեցիների 4.13
98. Եբրայեցիների 2.16,18, 4.14,15

յալներին. ընդհակառակը՝ մենք ունենք վստահություն, որով կարող ենք մոտենալ շնորհքի գահին, որպեսզի ողորմություն ընդունենք և շնորհք գտնենք, որոնք կօգնեն կարիքի ժամանակ[99]: Հետևյալ հիմնը, որը գրել է Չարլիթի Լ. Բենքրոֆթը, ազդեցիկ կերպով պատկերում է այս փառավոր ճշմարտությունը.

Աստծո գահի առջև՝ բարձրում,
Ես ունեմ մեծ և գերազանց աղաչանք:
Մեծ Քահանայապետ, որի անունը Սեր է,
Ով հավիտյան ապրում է, աղաչում է ինձ համար:
Իմ անունը փորագրված է Նրա ձեռքերի վրա,
Իմ անունը գրված է Նրա սրտում:
Ես գիտեմ, որ քանի դեռ Նա կանգնած է Երկնքում,
Ոչ մի լեզու չի կարող հեռացնել ինձ այնտեղից:

Երբ սատանան գայթակղեցնում է ինձ, որ հուսահատվեմ,
Եվ ասում է ինձ իմ ներսի հանցանքի մասին,
Ես վեր եմ նայում և տեսնում այնտեղ Նրան,
Ով վերջ դրեց իմ բոլոր մեղքերին:
Քանի որ անմեղ Փրկիչը մահացավ,
Իմ մեղավոր անձն ազատ է համարվում:
Որովհետև արդար Աստված բավարարված է՝
Նայելով Նրան և ներելով ինձ:

Տե՛ս Նրան այդտեղ՝ հարություն առած Գառանը,
Իմ կատարյալ, անբիծ արդարությանը,
Մեծ անփոփոխ Ես Եմ-ին,
Փառքի և շնորհքի թագավորին:
Մեկացած Նրանում՝ ես չեմ մահանա:
Իմ անձը գնված է Նրա արյամբ,
Իմ կյանքը ծածկված է Քրիստոսի հետ բարձրում,
Իմ Քրիստոս Փրկչի և իմ Աստծո հետ[100]:

99. Եբրայեցիների 4.16
100. Չարլիթի Լ. Բենքրոֆթ, «Աստծո գահի առջև՝ բարձրում», 1863թ. (հիմնը բառացիորեն թարգմանված է՝ առանց հանգավորման):

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՀԻՆԳ

Համբարձված Քրիստոսը՝ բոլորի Տեր

«Նրա համար էլ Աստված շատ բարձրացրեց Նրան և Նրան մի անուն շնորհեց, որ ամեն անունից ավելի բարձր է, որ Հիսուսի անունով կրնկվի ամեն ծունկ երկնավորների և երկրավորների և երկրի տակ լինողների, և ամեն լեզու դավանի, թե Հիսուս Քրիստոսը Տեր է Հայր Աստծո փառքի համար»:

— Փիլիպեցիների 2.9-11

«Եվ Նրա աջ կողմը նստեցրեց երկնավորներում՝ ամեն իշխանությունից և պետությունից և զորությունից և տերությունից վեր, և ամեն անունից վեր, որ անվանվում է, ոչ միայն այս աշխարհում, այլև այն հանդերձյալում: Եվ ամեն բան հնազանդեցրեց Նրա ոտքերի տակ, և Նրան գլուխ դրեց եկեղեցուն՝ բոլոր բաների վրա»:

— Եփեսացիների 1.20-22

Հիսուս Քրիստոսի համբարձումը ոչ միայն հավաստիացնում է մեզ, որ եկեղեցին միջնորդ ունի, այլև՝ որ տիեզերքը տեր և դատավոր ունի: Սաղմոս 24-ում համբարձված Քրիստոսը կոչվում է փառքի Տեր, որին հնազանդվում են նույնիսկ երկնային դարպասները[1]: Քանի որ Նա վեր է արարչագործության ամենաբարձր տիրույթներից, մենք կարող ենք ենթադրել, որ Նա իշխում է նաև ավելի ցածր տիրույթների վրա, և նույնիսկ դժոխքի դարպասներն են հնազանդ Նրա իշխանությանը[2]:

Քրիստոսի իշխանությունը թե՛ Հին կտակարանի մեսիական մարգարեությունների, թե՛ Նոր կտակարանի առաքելական հռչակումների գլխավոր թեմաներից մեկն է: Հիսուսը ոչ միայն աշխարհի Փրկիչն է, այլև բացարձակ և գերագույն Իշխանը: Այնպես որ, մենք չենք կարող հավատարմորեն ներկայացնել այն, թե ինչ է ասում Նոր կտակարանը Քրիստոսի և Նրա Ավետարանի մասին, եթե շեշտադրենք Նրա առաջին պաշտոնը՝ անտեսելով երկրորդը: Քրիստոսի իշխանությունը նույնքան էական է ճշմարիտ Ավետարանը քարոզելու համար,

1. Սաղմոս 24.7
2. Մատթեոս 16.18, Հայտնություն 1.18

որքան Նրա Փրկիչ լինելը: Պատահական չէ, որ Պետրոսն ավարտեց Ավետարանի իր առաջին հրապարակային հռչակումը Հիսուսի իշխանության ազդարարմամբ. «Որովհետև ոչ թե Դավիթը վեր ելավ Երկինք, բայց ինքն ասում է. «Տերն իմ Տիրոջն ասաց. «Իմ աջ կողմը նստի՛ր, մինչև Քո թշնամիները Քո ոտքերի պատվանդան դնեմ»»: Հիմա թող ստույգ գիտենա Իսրայելի ամբողջ տունը, որ Աստված Նրան Տեր և Օծյալ արեց, սույն այս Հիսուսին, Ում դուք խաչեցիք»[3]:

Այն, որ Քրիստոսը համբարձվեց և մեծարվեց որպես Տեր, պետք չէ համարել աննշան վարդապետություն, որն ավելացնում են խաչի մասին երկար քարոզի վերջում: Այն նաև պետք չէ անտեսել՝ փորձելով չվիրավորել այն մշակույթը, որը դժվարանում է իր աշխարհայացքի մեջ ընդունել գաղափարը գերիշխան թագավորի մասին: Փոխարենը՝ այն պետք է գրավի իր տեղը Ավետարանի ամենաէական և ակնառու վարդապետությունների շարքում: Հարության հետ մեկտեղ, Քրիստոսի մեծարվելը և Աստծո աջ կողմը նստելն ակնառու թեմա էր առաքյալների և առաջին եկեղեցու քարոզներում: Այնպես որ, մենք պետք է մեծ ուշադրություն դարձնենք դրան այսօր՝ քարոզելով Ավետարանը: Մենք պետք է քարոզենք Փրկիչ Քրիստոսին, Ով կանչում է հոգնածներին և բեռնավորվածներին Իր մոտ՝ առանց որևէ պայմանի[4]: Մենք պետք է քարոզենք Տեր Քրիստոսին, Ով պահանջում է ազգերի հնազանդությունը և իշխում է նրանց երկաթե գավազանով[5]: Թեև Քրիստոսի իշխանության թեման կարող է հատորներ զբաղեցնել, մենք կփորձենք անդրադառնալ որոշ ճշմարտությունների այս վարդապետության վերաբերյալ, որոնք ամենից շատ են առնչվում Ավետարանը հասկանալու և ազդարարելու հետ:

ՔՐԻՍՏՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Առաջին հարցը հետևյալն է. «Ո՞րն է Քրիստոսի իշխանության հիմքը: Որտեղի՞ց կամ ո՞ւմից է գալիս Նրա նշանակումը: Համաձայն Աստվածաշնչի՝ այն տրված է աստվածային վճռով: Պենտեկոստեի օրը Պետրոսն ազդարարեց, որ այն Հիսուսին, Ով խաչվել էր, Աստված էր դարձրել և՛ Տեր, և՛ Քրիստոս[6]: Այլ կերպ ասած՝ նույն Աստված, Ով ասաց Նրան՝ «Դու հավիտյան քահանա ես Մելքիսեդեկի կարգով», նշանակեց Նրան ամենի Տեր և գերագույն Իշխան[7]:

Աշակերտներին ուղղված Իր վերջին խոսքերում Քրիստոսը հայտարարեց. «Ամեն իշխանություն Ինձ *տրվեց* երկնքում և երկրում»[8]:

3. Գործք 2.34–36
4. Մատթեոս 11.28
5. Սաղմոս 2.9–12
6. Գործք 2.36
7. Սաղմոս 110.4, Եբրայեցիների 5.6, 7.17,21
8. Մատթեոս 28.18, շեղագիրն ավելացրած է

Այս խոսքից մենք հասկանում ենք, որ Նա չէր յուրացրել գերագույն Իշխանի տիտղոսը, այլ ստացել էր այն Հայր Աստծուց:

Դավիթը, գրելով Հոգու ոգեշնչման ներքո, մարգարեացավ այս մասին. «Տերն ասաց իմ Տիրոջը. «Իմ աջ կողմը նստի՛ր, մինչև որ Քո թշնամիները Քո ոտքերի կոխելիք դնեմ»»[9]: Փարիսեցիների և սադուկեցիների հետ առերեսման ժամանակ Հիսուսը մեջբերեց այս հատվածը՝ ցույց տալու համար, որ Մեսիան լինելու է ավելին, քան սովորական մարդը, և Նրա իշխանությունը շատ ավելի գերազանցելու է երկրային տիրույթը[10]: Համաձայն Սուրբ գրքի՝ Աստված որոշել էր, որ Դավիթը լիներ Իսրայելի ամենաակնառու և զորավոր թագավորներից մեկը, սակայն Դավիթը Հոգով խոսեց իր ապագա մեսիական Որդու մասին՝ անվանելով Նրան իր Տերը, Ով նստելու է Աստծո աջ կողմը: Իր թղթերից մի քանիսում Պողոս առաքյալը հաստատեց, որ այս մարգարեությունը կատարվել է: Նա գրեց Փիլիպեի եկեղեցուն, որ Աստված շատ բարձրացրեց Հիսուսին և «Նրան մի անուն շնորհեց, որ ամեն անունից ավելի բարձր է»[11]: Նույնպես, նա բացատրեց Եփեսոսի եկեղեցուն, որ Աստված նստեցրեց Հիսուսին Իր աջ կողմը՝ շատ ավելի վեր ամեն իշխանությունից, պետությունից, զորությունից և տերությունից[12]:

Կարևոր է նշել, որ մեր կողմից մեջբերված ամեն մի խոսք ներկայացնում է իշխանության փոխանցումը Հորից Որդուն՝ որպես ավարտված իրողություն: Թեև Քրիստոսի համընդհանուր արդարացումը և բոլորի կողմից Նրա իշխանությունը դավանելը դեռ ապագայում է, միևնույն է՝ դա ներկա իրողություն և անտարակուսելի փաստ է, որի մասին բոլորը պետք է տեղեկացվեն, և որին Իր ժողովուրդը պետք է հավատա: Իր Անձի առաքինության շնորհիվ և որպես վարձատրություն Իր կատարած աշխատանքի՝ Հիսուսը ստացավ Հորից ամբողջ իշխանությունը արարչագործության բոլոր տիրույթներում: Հրեաներն ուզում էին ուժով Իսրայելի թագավորը դարձնել Նրան[13]: Սատանան առաջարկեց Նրան այս աշխարհի բոլոր թագավորությունները, եթե միայն Նա ընկներ և երկրպագեր իրեն[14]: Այնուամենայնիվ, Քրիստոսը հաղթահարեց բոլոր այս գայթակղությունները և նվիրեց Իրեն միակ Անձին, Ով ճշմարտապես ի զորու էր շնորհել այդ իշխանությունը: Այդ պատճառով, Հայրը շատ բարձրացրեց Նրան: Պողոս առաքյալն այսպես է բացատրում սա.

> «...և կերպարանքով մարդու պես գտնվելով՝ Իրեն խոնարհեցրեց և հնազանդ եղավ մինչև մահ, և այն էլ՝ խաչի մահ: Նրա համար էլ Աստված շատ բարձրացրեց Նրան և Նրան մի անուն շնորհեց, որ ամեն

9. Մատթեոս 22.44, Գործք 2.34,35, Սաղմոս 110.1
10. Մատթեոս 22.43–45
11. Փիլիպեցիների 2.9
12. Եփեսացիների 1.20–22
13. Հովհաննես 6.15
14. Մատթեոս 4.8,9

անունից ավելի բարձր է, որ Հիսուսի անունով կրնկվի ամեն ծունկ երկնավորների և երկրավորների և երկրի տակ լինողների, և ամեն լեզու դավանի, թե Հիսուս Քրիստոսը Տեր է Հայր Աստծո փառքի համար»[15]:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՎԻՃԱՐԿԵԼԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ճշմարտությունն այն մասին, որ Քրիստոսի համընդհանուր իշխանությունը հիմնված է աստվածային որոշման վրա, բազմաթիվ հետևություններ ունի, բայց ամենակարևորն այն է, որ Նրա իշխանությունն անփոփոխ և անվիճարկելի է: Սաղմոս 2-ը ազդեցիկ կերպով ցույց է տալիս այս ճշմարտությունը, և թե՛ հրեաները, թե՛ քրիստոնյաները մեկնել են այն որպես թագավորական սաղմոս, որը նկարագրում է Մեսիայի իշխանությունը.

«Ինչո՞ւ համար են խռովություն անում հեթանոսները, և ազգերն ունայն մտածում: Երկրի թագավորները վեր են կենում, և իշխաններն իրար հետ խորհուրդ են անում Տիրոջ դեմ և Նրա Օծյալի դեմ, թե՝ «կտրենք նրանց կապանքները և դե՛ն գցենք նրանց չվանները մեզնից»: Երկնքում բնակվողը ծիծաղում է. Տերը ծաղրում է նրանց: Այն ժամանակ Նա կխոսի նրանց հետ Իր բարկությամբ և Իր սրտմտությամբ կշփոթեցնի նրանց. «Ես օծեցի Իմ Թագավորին Իմ սուրբ Սիոն սարի վրա»»[16]:

Այս սաղմոսում կարդում ենք Դավթի սերնդից եկող թագավորի մասին, որի թագավորությունն ունենալու է և՛ բացարձակ իշխանություն, և՛ անսահման իրավասություն: Ավելին՝ մենք իմանում ենք, որ Աստված է հաստատելու այդ թագավորին տիեզերքի գահի վրա: Այդ որոշումը կայացվելու է աստվածային արտոնյալ իրավունքով և անկախ է լինելու արարչագործությունից: Այն չի ունենալու մարդկանց կամ հրեշտակների հավանության կարիքը: Այդ որոշման տևականությունը կախված չի լինելու նրանց օգնությունից: Իրականում, եթե բոլոր արարածները երկնքում, երկրի վրա և դժոխքում միաբանվեին և միացյալ ուժերով պայքարեին Աստծո կողմից նշանակված թագավորի դեմ, արդյունքը կլիներ նույնը, ինչ՝ եթե կանգնեին միայն նրանցից ամենաթույլերը: Նրանց ապստամբությունը նույնքան անլուրջ և ծիծաղելի կլիներ, որքան փայտոջիլը, որը գլխով հարվածում է հսկայական գրանիտե ժայռին: Այս փաստն ակնհայտ է դառնում այս թագավորական սաղմոսի շուրջ ընդամենը մի փոքր խորհելուց հետո:

Այս հատվածի առաջին երեք խոսքերում ականատես ենք լինում այս աշխարհի թշնամանքին Քրիստոսի և Նրա թագավորության տարածման դեմ: Մենք տեղյակ ենք հին պատերազմի մասին օձի չար սերնդի և կնոջ սերնդի միջև[17]: Կատաղի և թշնամացած մարդ-

15. Փիլիպեցիների 2.7բ–11
16. Սաղմոս 2.1–6
17. Ծննդոց 3.15

կությունը դուրս է եկել Աստծո և Նրա Թագավորի կամքի դեմ: Մարդիկ համարում են Քրիստոսի արդար իշխանությունը կապանքներ՝ իրենց անօրինության համար: Նրանք ուզում են կտրել այդ կապանքները և դեն գցել. նրանք դժբախտ են զգում իրենց, եթե չեն կարողանում ազատորեն չարիք գործել: Ահա թե ինչու են ազգերը խռովության մեջ: Նրանք նման են կատաղի պատերազմական ձիու, որը ամբողջ թափով հարձակվում է Աստծո ընտրյալ գերագույն Իշխանի վրա: Նույնիսկ մեծագույն առաջնորդներն են միացել այս ապստամբությանը: Երկրի թագավորները զբաղեցրել են իրենց դիրքերը, և իշխանները խորհրդակցում են Տիրոջ և Նրա Օծյալի դեմ: Այնուամենայնիվ, չնայած նրանց բոլոր դավերին և խարդավանքներին՝ նրանց լավագույն ծրագրերն ունայն են, և նրանց մեծագույն ջանքերը զուր են: Նրանք նման են փոքրիկ սարդի, որը ոստայն է գործում՝ իր վրա հարձակվող առյուծին որսալու համար: Նրանք մոռացել են, որ չկա իմաստություն, չկա հանճար, չկա նաև մի խորհուրդ Տիրոջ դեմ[18]: Նրանք չեն հասկանում, որ նման են դույլից կախված ջրի կաթիլի և հավասարվում են կշեռքի վրայի փոշեհատիկի: Իրենց միացյալ ուժով և փառքով, նրանք ոչինչ են Նրա առջև, և Նա ոչնչից էլ պակաս և ունայնություն է համարում նրանց[19]: Իրենց ամբարտավանությամբ նրանք մերժել են Դավթի իմաստուն խորհուրդը, ով տվեց հետևյալ զգուշացումը ամենուր բնակվող ազգերին և ժողովուրդներին. «Թող Տիրոջից վախենա ամեն երկիր, թող Նրանից սարսափեն աշխարհի բոլոր բնակիչները: Որովհետև Նա ասաց, և եղավ. Նա հրամայեց, և հաստատվեց: Տերը ոչնչացնում է հեթանոսների խորհուրդները և փչացնում է ժողովուրդների մտածմունքները: Բայց Տիրոջ խորհուրդը հաստատ է հավիտյան. Նրա սրտի մտածմունքները՝ ազգից մինչև ազգ»[20]:

Աստված կարգեց Նազովրեցի Հիսուսին՝ որպես Իր թագավորի. Նրա դեմ եղած ամբողջ հակառակությունն աննշան է, նույնիսկ՝ ծիծաղելի և արժանի աստվածային ծաղրանքի: Գրելով Սուրբ Հոգու ոգեշնչման ներքո՝ Դավիթը հայտնում է մեզ, որ Երկնքում նստածը ծաղրում է Իր թշնամիներին: Նրանց մշտական դավադրությունները և անհամար խարդավանքները զվարճացնում են Նրան. Նա ծաղրանքով է վերաբերվում նրանց պարծենկոտությանը և սպառնալիքներին. Նա ծիծաղում է նրանց ամենամեծ հարձակումների վրա և ետ է մղում դրանք ընդամենը Խոսքով: Չարլզ Սփերջենը նշում է. «Ուշադրություն դարձրեք Ամենակարողի լուռ արժանապատվությանը և այն անարգանքին, որը Նա թափում է իշխանների և նրանց մոլեգնող հպատակների վրա: Նա նույնիսկ ջանք չի արել, որ բարձրանա Իր տեղից՝

18. Առակաց 21.30
19. Եսայի 40.15–17
20. Սաղմոս 33.8–11

նրանց հետ պատերազմելու համար: Նա անարգում է նրանց և գիտի, թե որքան անհեթեթ, անտրամաբանական և ունայն են նրանց փորձերն Իր դեմ, և այդ պատճառով ծիծաղում է նրանց վրա»[21]: Ժան Կալվինը նույնպես մեկնաբանում է. «Այսպիսով, եկեք վստահ լինենք, որ եթե Աստված անմիջապես չի պարզում Իր ձեռքն անօրենների վրա, նշանակում է՝ հիմա Նրա ծիծաղելու ժամանակն է»[22]:

Տարածությունն Աստծո և ապստամբ ազգերի միջև այնքան մեծ է, որ Նա կարիք չունի ոտքի կանգնելու կամ նույնիսկ փոխելու Իր դիրքն Իր գահի վրա: Երբ Նրա զվարճանքը նրանց զգուշացումների պատճառով դադարում է, Նա խոսում է նրանց հետ Իր զայրույթի նվազագույն դրսևորմամբ, և նրանք համակվում են սարսափով: Նա հայտարարում է նրանց Իր անփոփոխ վճիռն Իր Որդու վերաբերյալ: Նա կարծես ասում է. «Թող ազգերը մոլեգնեն, և երկրի իշխանները զբաղեցնեն իրենց դիրքերը: Ես թագադրել եմ Իմ Թագավորին Իմ սուրբ սարի վրա: Իմ ձեռքն է գցել վիճակը, և հակառակությունը լիովին անիմաստ է: Նրա թագավորությունը կգա, և Նրա կամքը կկատարվի»:

Հիսուս Քրիստոսը այն քարն է, որը տեսավ Դանիել մարգարեն[23]: Այդ քարը կտրվեց սարից աստվածային վճռով՝ առանց մարդկային խորհրդի կամ ուժի օգնության: Այն փշրեց երկրի մրցակցող թագավորությունները՝ վերջ տալով դրանց գոյությանը: Այդ քարը մեծ սար դարձավ և լցրեց ամբողջ երկիրը. Նրա թագավորությունը հավիտյան կմնա և չի փոխանցվի այլ մարդկանց: Ահա թե ինչու են ազգերը մոլեգնում: Նրանք չեն կարողանում զսպել իրենց բարկությունը: Ինչպե՞ս է Աստված համարձակվում հարկադրել իրենց վրա Իր թագավորին և Իր օրենքները: Այլևս չի լինի հրաժարում գահից, այդ պաշտոնը երբեք չի բացվի վերընտրման համար, երբեք չի լինի պահապանների հերթափոխ, և ոչ մի հնարավորություն՝ ապստամբության համար: Սուրբ գրքի Աստված լիովին գերիշխան է, և Նա անփոփոխ ու անվիճարկելի գահ է շնորհել Իր Որդուն:

Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում և մշակույթում, որը բարձրացնում է մարդու ինքնավարությունը Աստծո գերիշխանությունից, և անհատի ինքնարտահայտման ազատությունը՝ Աստծո օրենքներից: Իրականում, մարդկային ինքնավարությունը և ինքնարտահայտման ազատությունը ժամանակակից մարդկության զույգ սրբազան կովերն են[24]: Այնուամենայնիվ, Աստվածաշունչն ասում է հետևյա-

21. Սփորջեն, *«Դավթի գանձարանը»,* հտ. 1, էջ 11:

22. Ժան Կալվին, *«Սաղմոսների գրքի մեկնություն»,* Կալվինի մեկնությունների հտ. 4-ը (Գրենդ Ռեփիդս, «Baker», 1996թ.), հտ. 4, էջ 14:

23. Դանիել 2.34,35,44,45

24. «Սրբազան կով» արտահայտությունը հինդուական կրոնից է, որը համարում է կովերին և ցլերին սուրբ և նույնիսկ՝ աստվածային: Երբ ասում են, որ ինչ-որ գաղափար, ավանդույթ կամ սովորույթ սրբազան կով է, նշանակում է, որ այն վեր է համարվում ցանկացած կասկածից կամ քննադատությունից, հաճախ՝ հակառակ առողջ դատողությանը:

լը. «Բայց Նա մեկ մտքի վրա է. ո՞վ Նրան կդարձնի, և սրտի ուզածն անում է»[25]: Երկրի բոլոր բնակիչները ոչինչ են համարվում. Նա անում է Իր ուզածի պես երկնքի զորքերով և երկրի բնակիչներով, և մեկը չկա, որ զարկի Նրա ձեռքին և ասի. «Ի՞նչ ես անում»[26]: Այս աստվածաշնչյան ճշմարտությունները զայրույթ են առաջացնում մարդկության մեծ մասի մոտ: Այնուամենայնիվ, դրանք Ավետարանի կարևոր մասերից են, և չպետք է թաքցվեն կամ փոքրացվեն՝ ելնելով նպատակահարմարությունից կամ Ավետարանը ոչ վիրավորական դարձնելու ցանկությունից:

Աստված դարձրեց Հիսուսին, Ում մենք խաչեցինք, և՛ Տեր, և՛ Քրիստոս[27]: Այն Քարը, որն անարգեցին շինարարները, դարձավ Անկյունաքարը[28]: Աստվածային որոշմամբ, Քրիստոսին է պատկանում ամբողջ տիեզերքի գահը: Նրա նշանակումը ենթակա չէ քննադատության կամ քննարկումների: Նա մշտապես լինելու է այն Տերը և Դատավորը, որի հետ ամեն մարդ գործ է ունենալու: Այս մեծ ճշմարտությունը չպետք է թաքնված լինի քարոզչի լսարանից, այլ պետք է ազդարարվի բոլորին՝ առանց վերապահման: Այնուամենայնիվ, պետք է հիշենք, որ մենք չենք աղաչում մարդկանց, որ Հիսուսին դարձնեն իրենց կյանքի Տերը. մենք աղաչում ենք նրանց ընդունել այն Տիրոջը, Ում նշանակել է Աստված, և հնազանդվել Նրան[29]:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՍԱՀՄԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մենք խոսեցինք Քրիստոսի իշխանության հիմքի և անվիճարկելիության մասին: Այժմ կուղղենք մեր ուշադրությունը Նրա իշխանության չափին կամ իրավասությանը: Համաձայն Սուրբ գրքի՝ այն համընդհանուր և բացարձակ է: Իր աշակերտներին ուղղված վերջին խոսքերում Հիսուսը հայտարարեց. *«Ամեն իշխանություն Ինձ տրվեց երկնքում և երկրում»*[30]: Թեև այս պնդումն ամփոփ է, մենք չպետք է կասկածենք դրա կարևորության մեջ: Սա Հիսուսի երբևէ արած ամենապաշտեցուցիչ պնդումներից մեկն է: *«Իշխանություն»* բառն այս խոսքում թարգմանված է հունարեն *«էքսուսիա»* բառից, որը կրում է իշխանության, իրավունքի և զորության իմաստ: Համբարձման համատեքստում այն նշանակում է, որ Քրիստոսին տրվել է ամբողջ իշխանությունը արարչագործության ամեն մի տիրույթում կամ իրավասության շրջանակում՝ առանց սահմանափակման կամ բացառության: Երկնքի և երկրի հիշատակումը ևս մեկ անգամ հաստատում է, որ գո-

25. Հոբ 23.13
26. Դանիել 4.35
27. Գործք 2.36
28. Սաղմոս 118.22, Մատթեոս 21.42, Մարկոս 12.10, Ղուկաս 20.17, Գործք 4.11, Ա Պետրոս 2.7
29. Գործք 2.36
30. Մատթեոս 28.18, շեղագիրն ավելացրած է

յություն չունի ոչինչ՝ Նրա իշխանության և զորության սահմաններից դուրս: Եվ Հին կտակարանի մարգարեությունները, և՛ Նոր կտակարանի թղթերի ուսմունքները հաստատում են սա: Հին կտակարանում.

> «Ես տեսնում էի գիշերվա տեսիլքներում, և ահա երկնքի ամպերով գալիս էր Մարդու Որդու նման, և մինչև Հինավուրցը եկավ, և Նրա առջև մոտեցրին Նրան: Եվ Նրան տրվեց իշխանություն և պատիվ և թագավորություն, որ բոլոր ժողովուրդները, ազգերը և լեզուները Նրան ծառայեն: Նրա իշխանությունը հավիտենական իշխանություն է, որը չի անցնի, և Նրա թագավորությունը չի քանդվի»[31]:

Եվ Նոր կտակարանում. «...Նրան մեռելների միջից հարություն տալով, և Իր աջ կողմը նստեցրեց երկնավորներում՝ ամեն իշխանությունից և պետությունից և զորությունից և տերությունից վեր, և ամեն անունից վեր, որ անվանվում է, ոչ միայն այս աշխարհում, այլև այն հանդերձյալում, և ամեն բան հնազանդեցրեց Նրա ոտքերի տակ և Նրան գլուխ դրեց եկեղեցուն՝ բոլոր բաների վրա»[32]:

«Նրա համար էլ Աստված շատ բարձրացրեց Նրան և Նրան մի անուն շնորհեց, որ ամեն անունից ավելի բարձր է, որ Հիսուսի անունով կրնկվի ամեն ծունկ երկնավորների և երկրավորների և երկրի տակ լինողների, և ամեն լեզու դավանի, թե Հիսուս Քրիստոսը Տեր է Հայր Աստծո փառքի համար»[33]:

Մովսեսը գրի առավ, թե ինչպես Փարավոնը հրամայեց դուրս բերել Հովսեփին բանտից և կանգնեցնել իր առջև[34]: Նույն կերպով, Քրիստոսը դուրս բերվեց գերեզմանից և կանգնեց Հինավուրցի առջև[35]: Կրկին, Մովսեսը գրի առավ այն, ինչ Փարավոնն ասաց Հովսեփին. «...առանց քեզ մեկն իր ձեռքը կամ իր ոտքը չբարձրացնի Եգիպտոսի ամբողջ երկրի մեջ»[36]: Նույն կերպով, Աստված ասաց մեծարված Քրիստոսին. «Առանց Քո թույլտվության, ոչ ոք չի կարողանա բարձրացնել իր ձեռքը կամ ոտքը ամբողջ երկնքում և ամբողջ երկրի վրա»: Դանիելը նայեց ապագային իր պատմական ժամանակահատվածից և տեսավ մեծարված Քրիստոսի խոստումը՝ այն, թե ինչպես Նա կանգնեց Հինավուրցի առջև և ստացավ իշխանություն, փառք և թագավորություն, որ բոլոր ազգերը և լեզուները ծառայեն Նրան:

Պողոսը նայեց անցյալին իր պատմական ժամանակահատվածից և տեսավ Քրիստոսի մեծարումը՝ որպես կատարված փաստ և ներկա իրողություն: Նա հավաստիացնում է մեզ, որ այժմ Քրիստոսը նստած է Աստծո աջ կողմը՝ շատ ավելի վեր ամեն իշխանությունից, պետութ-

31. Դանիել 7.13,14
32. Եփեսացիների 1.20–22
33. Փիլիպեցիների 2.9–11
34. Ծննդոց 41.14
35. Դանիել 7.13
36. Ծննդոց 41.44

յունից, զորությունից և տերությունից: Սաղմոսերգուն միայն տեսավ Քրիստոսի փառքի ուրվագծերը, երբ գրեց, որ Նա ժառանգելու է ազգերը, երկրի ծայրերը Նրանն են լինելու, և Նա կարող է վարվել դրանց հետ՝ ինչպես կամենա[37]: Պողոս առաքյալն ընդլայնում է մեր տեսադաշտը՝ ընդգրկելով ոչ միայն երկիրը՝ բոլոր բնակիչների հետ, այլև ամբողջ տիեզերքը: Այն ամենը, ինչ գոյություն ունի, տեսանելին և անտեսանելին, թե՛ աթոռները, թե՛ տերությունները, թե՛ պետությունները, թե՛ իշխանությունները, ամեն ինչ ստեղծված է Նրանով, Նրա համար, և ամեն ինչ ենթակա է Նրան[38]: Նազովրեցի Հիսուսը Տեր է տիեզերքի առանցքից մինչև հեռավոր սահմանները: Նազովրեցի Հիսուսը Տեր է պարզագույն միաբջիջ օրգանիզմից մինչև աներևակայելի բարդություն և զորություն ունեցող սերովբեն: Նազովրեցի Հիսուսը Տեր է Իր ամենանվիրական հետևորդի սրտից մինչև Իր ամենակատաղի թշնամու բռունցքը: Նազովրեցի Հիսուսը Տեր է երկնքի բարձունքներից մինչև դժոխքի խորությունները: Նրա անսահմանափակ և անխոչընդոտ իշխանությունն անկարելի է չափազանցնել:

ՔՐԻՍՏՈՍԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ՀՊԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բոլոր բարոյական արարածները՝ մարդիկ և հրեշտակները, Քրիստոսի և՛ համախոհները, և՛ թշնամիները, ունեն մեկ վերջնական ճակատագիր. բոլորը խոնարհեցնելու են իրենց ծնկները և դավանելու են իրենց լեզվով, որ Հիսուս Քրիստոսը Տերն է[39]: Հաշվի առնելով այս ճշմարտությունը, հաշվի առնելով նաև Քրիստոսի իշխանության բնույթը և անսահմանությունը՝ բոլոր ողջամիտ արարածների համար պետք է պարզ լինի, որ իրենց անձնական արձագանքը Նրան՝ ծայրաստիճան կարևոր է: Քանի որ Աստված դարձրեց Քրիստոսին տիեզերքի և՛ Տերը, և՛ Դատավորը, ցանկացած այլ մտահոգություն, որը մարդը կարող է ունենալ, երկրորդական է, նույնիսկ՝ չնչին է: Տիեզերքի գերագույն Իշխանի առջև ճիշտ դիրք ունենալը պետք է դառնա բոլոր մարդկանց մեծագույն մտահոգությունը:

Աստվածաշունչը միանշանակ հայտարարում է, որ բոլոր մարդիկ՝ առանց բացառության, պետք է լիովին հպատակվեն Քրիստոսին, և յուրաքանչյուրը, ով մերժի Նրան, բախվելու է զարհուրելի հետևանքների[40]: Ժամանակակից մարդու համար այս նկատառումն ավելի քան վրդովեցուցիչ է. այն անընդունելի է, վիրավորական է, անհան-

37. Հոբ 26.14. «Ահա սրանք են Նրա ճանապարհների ծայրերը, և ի՞նչ չնչին բան է Նրա վրա լսածը (կամ՝ «ինչպիսի՜ անսշան շշուկ ենք մենք լսում Նրա մասին»), և ո՞վ կարող է իմանալ Նրա զորության որոտումը»: Նույնպես՝ Սաղմոս 2.8,9:

38. Կողոսացիների 1.16

39. Փիլիպեցիների 2.9–11

40. Սաղմոս 2.10–12

դուրժելի է և նույնիսկ հանցավոր է: Այդ իսկ պատճառով, մարդը, առանց նույնիսկ մի փոքր մտածելու, որ Քրիստոսի պահանջներն իր կյանքում վավերական են, վիրավորվում է և հարցերի տեղատարափ է ուղղում, որպեսզի ցույց տա իր արհամարհանքը ցանկացած Աստծո վերաբերյալ, որը պահանջելու է իր հպատակությունը կամ նույնիսկ ակնարկելու է, որ ինքն ինքնավար էակ չէ: Այնուամենայնիվ, նման մարդկային արձագանքն անսովոր չէ. Աստվածաշունչը ցույց է տալիս, որ սա ապստամբ մարդկանց սովորական պատասխանն է գերիշխան Աստծո պահանջներին.

«Ո՞վ քեզ իշխան կամ դատավոր դրեց մեզ վրա»[41]:

«Տերն ո՞վ է, որ ես Նրա Խոսքին լսեմ»[42]:

«Ի՞նչ է Ամենակարողը, որ Նրան ծառայենք»[43]:

Հաշվի առնելով Քրիստոսի մեծությունը՝ Պողոս առաքյալը վաղուց գրել է միակ պատասխանը, որին արժանի են այս առարկությունները. «Բայց դու ո՞վ ես, մարդ, որ Աստծո դեմ պատասխան ես տալիս»[44]: Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված դարձրել է Նազովրեցի Հիսուսին և՛ Տեր, և՛ Քրիստոս[45]: Այդ դեպքում, ո՞վ է մարդը, որ առարկի կամ նույնիսկ բացատրություն պահանջի: Մենք գիտենք Հոբի գրքից, որ Աստծուն վիճարկող մարդիկ խավարեցնում են Նրա խորհուրդը անիմաստ խոսքերով. նրանք հիմարաբար են վարվում և հատում են ամենավտանգավոր սահմանները. նրանք շտապում են այնտեղ, որտեղ հրեշտակները վախենում են ոտք դնել[46]: Բայցևայնպես, չնայած մարդու ամբարտավանությանը՝ Աստված գթասիրտ է, երկայնամիտ է և առատ է ողորմությամբ[47]: Այդ իսկ պատճառով, հաճախ Նա ներողամիտ է նման հարցերի հանդեպ և խրատում է նույնիսկ ամենաապստամբ մարդկանց այն մասին, թե ինչու նրանք պետք է հետևեն Իր ցուցումներին և հնազանդվեն Իր վճիռներին: Հաջորդ էջերում կդիտարկենք Քրիստոսին պատվելու մի քանի պատճառ:

ՔՐԻՍՏՈՍԸ՝ ՄԵՐ ԱՐԱՐԻՉԸ ԵՎ ՊԱՀԱՊԱՆԸ

Առաջինը՝ բոլորը պետք է պատվեն Որդուն, քանի որ Նա բոլորի Արարիչը և Պահապանն է: Մենք իմանում ենք Հովհաննեսի ներածությունից. «Ամեն ինչ Նրանով եղավ, և առանց Նրա ոչինչ չեղավ, ինչ որ եղավ»[48]: Եբրայեցիների թղթի հեղինակը և Պողոս առաք-

41. Ելից 2.14. Գործք 7.27,35
42. Ելից 5.2
43. Հոբ 21.15
44. Հռոմեացիների 9.20
45. Գործք 2.36
46. Հոբ 38.2
47. Ելից 34.6, Նեեմիա 9.17, Սաղմոս 86.15, 103.8, 145.8, Հովել 2.13, Հովնան 4.2
48. Հովհաննես 1.3

յալը հաստատում են, որ Որդին ստեղծել է և շարունակում է պահպանել ամեն բան. «Իր զորության Խոսքով ամեն բան կրում է» և «ամեն բան Նրանով է հաստատ»[49]: Այս ճշմարտություններից կարող ենք եզրակացնել, որ ամեն արարած, երկնքում և երկրի վրա, իր ծագմամբ և գոյությամբ պարտական է Աստծո Որդուն: Մարդու կողմից մեծ ամբարտավանություն է, երբ նա հրաժարվում է ենթարկվել Նրան, Ով կյանք է տվել իրեն և պահպանում է իր շունչը: Անմտություն է՝ պայքարել այն Անձի դեմ, Ումից կախված է իր ամբողջ գոյությունը, և մեծագույն ապերախտություն է՝ անարգել Նրան, Ով օրհնում է իրեն՝ չնայած իր մեղքերին:

Փորձելով արդարացնել իր արհամարհանքն Աստծո հանդեպ՝ անկում ապրած մարդը հաճախ հարցնում է. «Եթե Աստված բարի է, ինչո՞ւ է թույլ տալիս, որ լավ մարդկանց հետ վատ բաներ կատարվեն»: Այնուամենայնիվ, ավելի ճիշտ կլիներ այսպիսի հարց տալ. «Ինչո՞ւ է Նա թույլ տալիս, որ վատ մարդկանց հետ լավ բաներ կատարվեն», և նույնիսկ. «Ինչո՞ւ են այս աշխարհում ընդհանրապես լավ բաներ կատարվում»: Մենք անկում ապրած և բարոյապես ապականված ցեղ ենք, որն անարդարությամբ ճնշում է Աստծո ճշմարտությունը և կտրականապես մերժում է Նրա իշխանությունը: Այնպես որ, մենք արժանի ենք միայն բարկության և մահվան: Ամբողջ աշխարհը պետք է անբերրի և անկյանք լինի: Այն փաստը, որ այս աշխարհում թեկուզ ինչ-որ չափով գոյություն ունի բարություն, գեղեցկություն, ուրախություն, սեր և նպատակներ, կարող է միայն բացատրվել այն շնորհքով և բարեհաճությամբ, որն Աստծո Որդին տալիս է մեղավոր մարդկանց: Նրանում մենք ապրում ենք, շարժվում ենք և կանք[50]: Նա տալիս է կյանք, շունչ և ամեն ինչ[51]: Նա ծագեցնում է արևը չարերի վրա և անձրևներ է ուղարկում անարդարների վրա[52]: Նա կշտացնում է Իրեն ատողների սրտերը կերակուրով և ուրախությամբ[53]: Այս ամենը ապացուցում է, որ մենք պարտավոր ենք հպատակվել Նրան:

ՔՐԻՍՏՈՍԸ՝ ՄԵՐ ՓՐԿԻՉԸ

Երկրորդը՝ բոլորը պետք է պատվեն Որդուն՝ Գողգոթայի վրա կատարած փրկարար աշխատանքի համար: Թեև փրկության մեջ Աստծո նախախնամության դերին անդրադառնալը այս աշխատության նպատակներից չէ, մենք կարող ենք միանշանակ պնդել, որ Քրիստոսի փրկարար աշխատանքն օգուտ տվեց ամբողջ տիեզերքին, և նույնիսկ նրանք, ովքեր մերժում են Նրա փրկության առաջարկը, արդեն

49. Եբրայեցիների 1.3, Կողոսացիների 1.17
50. Գործք 17.28
51. Գործք 17.25
52. Մատթեոս 5.45
53. Գործք 14.17

իսկ օգուտ են ստացել դրանից՝ շատ ավելի, քան բառերը կարող են արտահայտել: Աստված տվեց Իր Որդուն, իսկ Որդին հոժարությամբ տվեց Իր կյանքը՝ որպես քավություն մեղքի, որպեսզի Նրան հավատացողները չկորչեն, այլ՝ հավիտենական կյանք ունենան[54]:

Թեև Գողգոթայի օրհնությունն անսահման է, դրա արդյունքներից երկուսն առավել կիրառելի են մեր ներկա քննարկման համար: Առաջինը մեղքերի ներման, Աստծո հետ հաշտության և հավիտենական կյանքի հույսի համընդհանուր առաջարկն է: Ավետարանն ազդարարում է համընդհանուր կոչ ամենուր գտնվող մարդկանց՝ հավատալու իրենց սրտում և դավանելու իրենց բերանով, որ Հիսուս Քրիստոսը Տերն է[55]: Այն նույնպես հավիտենական խոստում է տալիս, որ Նրա մոտ եկողներից ոչ ոք դուրս չի արվի[56]: Սա պետք է որ բավական լինի՝ մարդկանց հպատակությունն ապահովելու համար: Մեր սրտերը խաբված և ապականված էին, մեր մեղքերը կիտվել էին մեր գլուխներից բարձր, և մեր դատապարտությունն արդար էր: Այնուամենայնիվ, Տերը՝ Միակը, Ով մեզ դատապարտելու իրավունք ուներ, հոժարաբար մահվան մատնեց Իրեն՝ մեր փրկության համար: Սա պարզապես ապշեցուցիչ է: Աստվածաշունչը հիշեցնում է մեզ, որ արդար մարդու համար հազիվ թե մեկը մահանա, սակայն երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մահացավ մեզ համար[57]: Քրիստոսի սերը մեր հանդեպ այն է, ինչը պետք է շահի մեր սրտերը և դրդի մեզ ամբողջովին հպատակվել Նրան: Այս փաստը պետք է դրդի մեզ մտածել, որ քանի որ Նա մահացել է բոլորի համար, բոլորը այլևս չպետք է ապրեն իրենց համար, այլ ապրեն Նրա համար, Ով մահացավ և հարություն առավ իրենց համար[58]: Դատաստանի օրը այն մարդկանց դեմքերը, ովքեր հրաժարվեցին հպատակվել նման ողորմած Տիրոջը, կծածկվեն մեծ ամոթով: Ամբողջ հավիտենության ընթացքում նրանք կմտածեն. «Ինչպե՞ս մենք անարգեցինք այդ մեծ սերը: Ինչպե՞ս մենք անտեսեցինք այդ մեծ փրկությունը»:

Գողգոթայի երկրորդ համընդհանուր արդյունքը այն բազմաբնույթ օրհնությունն է, որը բխել է դրանից՝ դեպի երկրագնդի ամեն մի անկյունը. ֆիզիկական, նյութական, տնտեսական, քաղաքական, մշակութային օրհնություններ և շատ ավելին: Բոլոր մարդիկ, նույնիսկ նրանք, ովքեր դեռ ապստամբում են Քրիստոսի դեմ, օգուտ են ստացել Ավետարանից՝ թե՛ իրենք, թե՛ իրենց մշակույթը: Թեև Քրիստոսի անունը շատ է չարախոսվում իրենց սխալմամբ քրիստոնյա կոչող մարդկանց պիղծ արարքների պատճառով, սակայն ճշմարիտ Ավետարանը մշտապես եղել է պայծառ լույս, որը

54. Հովհաննես 3.16
55. Գործք 17.30, Հռոմեացիների 10.9,10
56. Հովհաննես 6.37
57. Հռոմեացիների 5.7,8
58. Բ Կորնթացիների 5.14,15

պահպահել է այս աշխարհը բացարձակ խավարից, ինչպես նաև եղել է աղ, որը պահպանել է այն ամբողջական բարոյական քայքայումից[59]: Թեև աշխարհիկ մտածողությունը կարող է ծաղրել այս պնդումը, այն լիովին արդարացված կլինի Դատաստանի օրը: Այդ օրը կբացահայտվի իրական պատմությունը, և բոլորը կտեսնեն, որ ամեն բարի բան, որից նրանք օգուտ են քաղել մարդկային գոյության ամեն բնագավառում, բազմաթիվ ճանապարհներով առնչվում է Գողգոթայում Քրիստոսի կատարած աշխատանքի, Նրա Ավետարանի հռչակման և Նրա թագավորության տարածման հետ: Այս արդարացումը մեծ ուրախություն կպատճառի Աստծո ժողովրդին, քանի որ նրանք կտեսնեն, թե ինչպես է իրենց Տերը ստանում այն պատիվը, որը շատ վաղուց պետք է տրվեր Նրան: Այնուամենայնիվ, այն մեծ ամոթի օր կլինի բոլորի համար, ովքեր ոչ մի օգուտ չէին տեսնում Քրիստոսում, բայց, չնայած դրան, հնձում էին Նրա հայտնության, մահվան և մշտական նախախնամության պտուղները:

ՔՐԻՍՏՈՍԸ՝ ԱՍՏԾՈ ԸՆՏՐՅԱԼ ԹԱԳԱՎՈՐ

Երրորդը՝ բոլորը պետք է պատվեն Որդուն և հպատակվեն Նրան, քանի որ Աստված է այդպես կամենում: Աստված վճռել է, որ բոլորը պետք է պատվեն Որդուն այնպես, ինչպես պատվում են Հորը: Նա, ով չի պատվում Որդուն, չի պատվում Հորը, և այդ պատճառով ենթակա կլինի դատաստանի[60]: Կարճ ասած՝ ովքեր հնազանդվում են Տեր Հիսուս Քրիստոսին և հավատում են Նրա անվանը, ստանալու են բազմաթիվ արտոնություններ: Այնուամենայնիվ, Նրան մերժողներին սարսափելի հետևանքներ են սպասում: Ահա թե ինչու է Դավիթը տալիս հետևյալ հանդիսավոր զգուշացումն ազգերին. «Եվ հիմա, ո՛վ թագավորներ, խոհեմացե՛ք և խրատվե՛ք, ո՛վ երկրի դատավորներ: Վախո՛վ ծառայեք Տիրոջը և դողալով ցնծացե՛ք: Որդուն համբուրե՛ք, որ չբարկանա, և դուք չկորչեք ճանապարհին, որովհետև Նրա բարկությունը շուտով կվառվի: Երանի՜ այն ամենին, որ Նրան են հուսացած»[61]: Այս հատվածում գտնում ենք երեք արտահայտություն, որոնք միաձայն ազդարարում են բոլոր մարդկանց, թե ինչ դիրքորոշում է Աստված պահանջում այս աշխարհից Իր Որդու վերաբերյալ: Առաջինը՝ ամբողջ մարդկությանը պատվիրվում է ծառայել վախով: Այս արտահայտությունը նույնպես կարելի է թարգմանել «Երկյուղածությամբ

59. Հռոմեացիների 2.24: Այս երևույթը տարածված ախտ է եղել փրկության ամբողջ պատմության ընթացքում: Ճշմարտության ճանապարհը չարախոսվում է այն մարդկանց պատճառով, ովքեր սխալմամբ նույնացնում են իրենց Քրիստոսի և Նրա ժողովրդի հետ (կարդացե՛ք Եսայի 52.5, Եզեկիել 36.20, Բ Պետրոս 2.2): Հղումներ լույսի մասին. Հովհաննես 1.4,5,9, Մատթեոս 4.16, 5.14: Ամենահին ժամանակներից աղն օգտագործվել է՝ պահպանելու համար սնունդը քայքայումից (կարդացե՛ք Մատթեոս 5.13):

60. Հովհաննես 5.23

61. Սաղմոս 2.10–12

երկրպագեք Տիրոջը»: Երկրպագությունը և ծառայությունը նույն դրամի երկու կողմերն են. մեկը չի կարող գոյություն ունենալ առանց մյուսի: Աստված չի խնդրում մարդկանց հանդուրժողականություն ցուցաբերել Իր Որդու հանդեպ, և չի աղաչում նրանց համակրանքով վերաբերվել Նրան: Փոխարենը՝ Նա պահանջում է բոլորից՝ երկրպագել և ծառայել Նրան մեծագույն երկյուղածությամբ:

Երկրորդը՝ ամբողջ մարդկությանը պատվիրվում է դողալով ցնծալ Որդու առջև: Այս երկու հակառակ զգացումների՝ ուրախության և երկյուղի միախառնումն օտար է թվում ժամանակակից մարդուն, բայց Աստվածաշնչում դրանք հաճախ են միասին հանդիպում[62]: Ցնծության պատճառը Քրիստոսի շնորհքը և ողորմությունն են, որոնք տրվում են Նրա իշխանությանը հնազանդվողներին, իսկ երկյուղի պատճառը Նրա մեծությունը և զորությունն են: Նրա ժողովուրդը ցնծում է, քանի որ Նա չի ամաչում եղբայրներ անվանել իրենց, բայց և խորին երկյուղածություն է ցուցաբերում Նրա հանդեպ՝ Նրա գերակայության և գերազանցության շնորհիվ[63]: Միայն Նա է ստացել այնպիսի անուն, որը վեր է ամեն անունից[64]:

Երրորդը՝ ամբողջ մարդկությանը պատվիրվում է պատիվ ցուցաբերել Որդուն: «Որդուն համբուրեք, որ չբարկանա, և դուք չկորչեք» հորդորը բառացիորեն է թարգմանված: Այս բառերը խիստ են թվում ժամանակակից մարդկանց ականջներին, սակայն դրանք ճիշտ են: Գոյություն ունեն երկու ծայրահեղորեն տարբեր ճակատագրեր, որոնք դրված են ամեն մարդու առջև. անվերջանալի երանություն և անվերջանալի սարսափ: Որոշիչ գործոնը այս երկուսի միջև մեր արձագանքն է Նազովրեցի Հիսուսին: Աստված սահմանել է Նրան որպես տիեզերքի Տեր և պահանջել է բոլոր բարոյական արարածներից՝ հրեշտակներից և մարդկանցից՝ ուրախությամբ, գոհությամբ և երկյուղածությամբ հնազանդվել Նրա իշխանությանը: Աստված չի դրել Քրիստոսի անունը մարդկանց առջև՝ որպես տարբերակ, որը նրանք կարող են վերանայել և քննարկել: Նա չի խնդրել, որ մարդիկ որոշեն Նրա արժեքը և կարծիք հայտնեն Նրա մասին:

62. Սաղմոս 22.23. «Ո՛վ Տիրոջից վախեցողներ, օրհնե՛ք Նրան: Ո՛վ Հակոբի բոլոր զավակներ, փառավորե՛ք Նրան: Եվ վախեցե՛ք Նրանից, ո՛վ Իսրայելի բոլոր զավակներ»: Սաղմոս 40.3. «Եվ նոր երգ դրեց իմ բերանում՝ մեր Աստծո օրհնությունը: Շատերը կտեսնեն և կվախենան և Տիրոջը կհուսան»: Երեմիա 33.9. «Եվ Նա պիտի լինի Ինձ համար ուրախության անուն, փառք և պարծանք երկրի բոլոր ազգերի համար, որոնք կլսեն այն բոլոր բարիքները, որ Ես կանեմ նրանց, և նրանք պիտի վախենան և դողան այն բոլոր բարիքների համար, և այն ամբողջ խաղաղության համար, որ Ես նրան կանեմ»: Փիլիպեցիների 2.12,13. «Ուրեմն, իմ սիրելինե՛ր, ինչպես ամեն ժամանակ հնազանդվեցիք՝ ոչ միայն իմ ներկայությունում, այլ հիմա էլ ավելի՝ իմ բացակայությունում, ահով և դողալով գործե՛ք ձեր անձերի փրկությունը, որովհետև Աստված է, որ ներգործում է ձեզանում՝ կամենալն էլ, անելն էլ՝ Իր հաճության պես»: Հայտնություն 19.5. «Եվ աթոռից մի ձայն դուրս եկավ՝ ասելով. «Օրհնե՛ք մեր Աստծուն, ո՛վ Նրա բոլոր ծառաներ, և Նրանից վախեցողներ՝ փոքրեր և մեծեր»»:

63. Եբրայեցիների 2.11, Կողոսացիների 1.18

64. Եփեսացիների 1.20–23, Փիլիպեցիների 2.9

Աստված արդեն որոշել է Քրիստոսի արժեքը և հայտնել է Իր կարծիքը Նրա մասին: Երկրի վրա Նա հրապարակավ արդարացրեց Քրիստոսին՝ հարություն տալով Նրան մեռելներից: Երկնքում Նա հայտնի դարձրեց Իր գնահատականը Քրիստոսի մասին՝ նստեցնելով Նրան Իր աջ կողմը: Այժմ արարչագործությանը մնում է մեկ բան. հնազանդվել Աստծուն և տալ Նրա Որդուն ամբողջ օրհնությունը, պատիվը, փառքը և կարողությունը՝ հավիտյանս հավիտենից[65]:

ՊԱՏՇԱՃ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ

Աստված դարձրեց այն Հիսուսին, Ում ազգերը խաչեցին, և՛ Տեր, և՛ Քրիստոս՝ բոլոր մարդկանց համար[66]: Նա վերցրեց այն Քարը, որն այս աշխարհն անարգեց, և դարձրեց Նրան Իր բոլոր գործերի Անկյունաքարը[67]: Այս որոշումն անփոփոխ է: Սա է պատճառը, որ Նազովրեցի Հիսուսը մշտապես լինելու է այն գերագույն Իշխանը, Ում հետ մարդիկ գործ են ունենալու:

Աստվածաշունչը սովորեցնում է, որ Հիսուսը ողորմած և հավատարիմ Քահանայապետ է, Ով հավիտենական փրկության աղբյուր է դարձել նրանց համար, ովքեր հնազանդվում են Իրեն[68]: Այնուամենայնիվ, նրանց համար, ովքեր մերժում են Նրան, Նա գլորման քար և գայթակղության վեմ է[69]: Ով որ սայթաքի Քրիստոսի վրա անհավատության պատճառով, կփշրվի, և որի վրա որ Քրիստոսն ընկնի դատաստանի ժամանակ, կցրվի փոշու պես[70]: Հիսուս Քրիստոսը *Փրկիչն* է, բայց Նա նույնպես *Տերն* է: Այս ճշմարտություններից ոչ մեկը չպետք է մեծարվի մյուսի հաշվին. դրանք պետք է պահվեն աստվածաշնչյան հավասարակշռության մեջ: Եբրայեցիների թղթի հեղինակն ազդեցիկ կերպով ցույց է տալիս այս ճշմարտությունը. «Բայց սա [Քրիստոսը] մեղքերի համար մեկ պատարագ մատուցելով՝ մշտնջենավորապես նստեց Աստծո աջ կողմը և այսուհետև սպասում է մինչև որ Իր բոլոր թշնամիները Իր ոտքերի պատվանդանը դրվեն»[71]:

Այս աստվածաշնչյան հատվածը ներկայացնում է Քրիստոսին որպես Փրկչի, Ով զոհաբերեց Իրեն, որպեսզի հեռացներ Իր թշնամիների մեղքը, սակայն Նա նույնպես Տերն է, Ով կհնազանդեցնի Իր թշնամիներին, որոնք շարունակում են ապստամբել Իր դեմ, և

65. Հայտնություն 5.13
66. Սաղմոս 2.1, Գործք 4.25–27, 2.36
67. Մատթեոս 21.42, Ղուկաս 20.17
68. Եբրայեցիների 2.17, 5.9
69. Հռոմեացիների 9.32,33, Ա Պետրոս 2.8
70. Մատթեոս 21.44, Ղուկաս 20.18. «Ամեն այս քարի վրա ընկնողը կփշրվի, և ում վրա որ նա ընկնի, կջարդի (կամ՝ կփոշիացնի) նրան»: Այս խոսքը նշանակում է, որ ով որ գայթակղվի Քրիստոսից և հրաժարվի ընդունել Նրա գերազանցությունը, կկործանվի Աստծո դատաստանով:
71. Եբրայեցիների 10.12,13

կդարձնի նրանց Իր ոտքերի պատվանդանը: Այս երկու պնդումները հավասարապես ծայրահեղ են, բայց և՝ հավասարապես ճշմարիտ: Մարդիկ չպետք է խաբեն իրենց՝ ընդունելով Որդուն նկարագրող որոշ այլաբանություններ և մերժելով մյուսները: Թեև ճշմարիտ է, որ Քրիստոսը այն Գառն է, որը վերցնում է այս աշխարհի մեղքերը, Նա նույնպես այն Գառն է, որից երկրի մեծագույն և ամենաազդեցիկ մարդիկ կուզեն թաքնվել Նրա հայտնության օրը[72]: Չգտնելով խղճահարություն Քրիստոսի մոտ՝ նրանք ողորմություն են աղերսելու սարերից և ժայռերից՝ աղաղակելով. «Վա՛յր ընկեք մեզ վրա և ծածկե՛ք մեզ աթոռի վրա նստողի երեսից և Գառան բարկությունից»[73]: Հովհաննես առաքյալը հայտնում է հետևյալը.

> «Եվ տեսա երկինքը բացված, և ահա մի սպիտակ ձի, և Նա, որ նրա վրա նստած էր, կոչվում էր Հավատարիմ և Ճշմարիտ, և արդարությամբ է դատաստան անում և պատերազմում: Եվ Նրա աչքերը՝ կրակի բոցի պես, և Նրա գլխի վրա՝ շատ պսակներ, և անուն ուներ գրված, որ ոչ ոք չգիտեր, բայց միայն Ինքը: Եվ Իր վրա հանդերձ էր հագած՝ արյամբ ներկված, և Նրա անունը կոչվում է Աստծո Բան (կամ՝ Խոսք): Եվ երկնքի զորքերը Նրա ետևից գնում էին սպիտակ ձիերի վրա՝ սպիտակ և մաքուր բեհեզ հագած: Եվ Նրա բերանից դուրս է գալիս սրած սուրը, որ նրանով զարկի ազգերին, և Ինքը հովվում է նրանց երկաթե գավազանով, և Ինքը կոխում է Ամենակարող Աստծո բարկության և սրտմտության գինու հնձանը: Եվ Իր հանդերձի վրա և Իր ազդրի վրա գրված էր անունը. ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐ ԵՎ ՏԵՐԵՐԻ ՏԵՐ»[74]:

Հիսուս Քրիստոսի իշխանությունը երանելի հույս է ոմանց համար, և սարսափելի մղձավանջ՝ մյուսների: Այնուամենայնիվ, անկախ մեր արձագանքից՝ այն անփոփոխ իրողություն է: Հայրապետ Հոբը հայտարարեց Աստծո մասին. «Նա սրտով իմաստուն և ուժով զորեղ է. ո՞վ է դեմ կացել Նրան և ողջ մնացել»[75]: Առանց չափազանցության՝ նույնը կարելի է ասել Քրիստոսի մասին: Նա է և մշտապես կլինի այն Տերը և Դատավորը, Ում ամեն մարդ հաշիվ է տալու: Մենք կարող ենք առաջնորդվել կա՛մ հովվական ցուպով, կա՛մ երկաթե գավազանով[76]: Երկու դեպքում էլ Քրիստոսը կառաջնորդի, իսկ մենք՝ կառաջնորդվենք: Այնպես որ, մենք իմաստությամբ կվարվենք, եթե հետևենք Դավթի խորհրդին և պատվենք Որդուն, որպեսզի չբարկանա, և մենք չկորչենք ճանապարհին: Նրա բարկությունը կարող է շուտով բորբոքվել, սակայն երանի՜ նրանց, որոնց հույսը Նրա վրա է[77]:

72. Հովհաննես 1.29
73. Հայտնություն 6.16
74. Հայտնություն 19.11–16
75. Հոբ 9.4. «...ո՞վ է խստացրել իրեն Նրա դեմ և հաջողության հասել» (KJV), «...ո՞վ է անարգել Նրան՝ առանց վնաս կրելու» (NASB):
76. Սաղմոս 23.1–4, Հովհաննես 10.9–11, Սաղմոս 2.9
77. Սաղմոս 2.12

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՎԵՑ

Համբարձված Քրիստոսը՝ բոլորի Դատավոր

«Բայց Աստված, տգիտության ժամանակներն անտես անելով, հիմա մարդկանց պատվիրում է՝ ամենին ամեն տեղ ապաշխարել: Մեկ օր հաստատեց, որ նրանում աշխարհը արդարությամբ պիտի դատի այն Մարդու ձեռքով, որ սահմանեց Նրանով ամենին հավատք տալ, որին մեռելներից հարություն տվեց»:

— Գործք 17.30,31

«Եվ երբ որ Մարդու Որդին Իր փառքով կգա, և բոլոր սուրբ հրեշտակները՝ Նրա հետ, այն ժամանակ կնստի Իր փառաց աթոռի վրա, և բոլոր ազգերը կժողովվեն Նրա առջև, և Նա նրանց կբաժանի իրարից, ինչպես հովիվը բաժանում է ոչխարներին այծերից»:

— Մատթեոս 25.31,32

Հիսուս Քրիստոսի իշխանությունից բխող մեծագույն հետևանքներից մեկն այն է, որ Նա դատելու է այս աշխարհը: Առերեսվելով հրեա առաջնորդներին, որոնք ուզում էին սպանել Իրեն՝ Հիսուսն ազդարարեց, որ Հայրը տվել է Իրեն բացարձակ իշխանություն՝ իրագործելու ամբողջ դատաստանը երկրի վրա[1]: Առաքյալների քարոզները և գրքերը շարունակ կրկնում են այս ծայրահեղ պնդումը: Կեսարիայում հեթանոսներին ուղղված իր առաջին քարոզի ընթացքում Պետրոսը հայտարարեց. «Նրան Աստված հարություն տվեց երրորդ օրը և հայտնի արեց Նրան, ոչ թե ամբողջ ժողովրդին, այլ մեզ՝ Աստծուն առաջագույն ընտրված վկաներիս, որ կերանք և խմեցինք Նրա հետ, երբ որ Նա հարություն առավ մեռելներից, և պատվիրեց մեզ ժողովրդին քարոզել և վկայություն դնել, թե Ինքն է Աստծուց սահմանված Դատավորը մեռելների և կենդանիների»[2]:

Պետրոսի քարոզը ցույց է տալիս երեք մեծ ճշմարտություն, որոնք կազմում են մեր քննարկման նյութն այն մասին, որ Քրիստո-

1. Հովհաննես 5.22,27
2. Գործք 10.40–42

սը մեծարվեց դատավորի պաշտոնի համար: Առաջին ճշմարտությունը, որը բոլոր մարդիկ պետք է ընդունեն այն է, որ այս աշխարհը հասնելու է իր ավարտին վերջնական դատաստանի օրը: Երկրորդ ճշմարտությունն այն է, որ այդ օրը Հիսուս Քրիստոսը բազմելու է Իր գահին՝ որպես բոլորի Տեր և Դատավոր: Երրորդ և վերջին ճշմարտությունը, որը պահանջում է մեր ուշադրությունը այն է, որ Աստված հանձնարարել է եկեղեցուն ոչ միայն ազդարարել Ավետարանի առավելությունները, այլև զգուշացնել մարդկանց այն մեծ և անդառնալի դատաստանի մասին, որը գալիս է ամբողջ աշխարհի վրա:

ՎԵՐԱՀԱՍ ԵՎ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՍՏԱՆ

Ներկայիս գերակշռող մատերիալիստական տեսանկյունը տիեզերքի մասին՝ մեկնաբանում է մարդկության գոյությունը ընդամենը որպես դիպված. պատմությունը՝ ոչ ավելի, քան պատահական իրադարձությունների շղթա, իսկ ապագան՝ բացարձակ անորոշություն, որում չկա նպատակային ավարտ: Ի հակադրություն դրան՝ Աստվածաշունչը դիտարկում է մարդու գոյությունը որպես գերիշխան և բարոյական Աստծո նպատակային, ստեղծարար աշխատանք: Նա հայտնել է Իրեն մարդկությանը արարչագործության միջոցով, Իր նախախնամության գործերով և Իր գրված Խոսքով, սակայն Նրա վերջնական և ամբողջական հայտնությունը մարդուն՝ Իր Որդու մարմնավորումն է: Բացի այդ՝ Աստվածաշունչը սովորեցնում է, որ Աստված կանչելու է բոլորին հաշիվ տալու վերջին դատաստանի օրը, երբ ամեն ինչ ավարտվի: Այդ օրը Աստված դատելու է բոլոր մարդկանց՝ համաձայն նրանց արձագանքին այն հայտնությանը, որը նրանք ստացել են:

Այս ճշմարտությունների լույսի ներքո քրիստոնյան հասկանում է, որ մարդկային պատմությունը անկանոն չէ, և ոչ էլ շրջանային է (այսինքն՝ բաղկացած պարբերաբար կրկնվող իրադարձություններից), այլ՝ գծային: Այն ունի սկիզբ, կունենա նաև ավարտ՝ համաձայն գերիշխան Աստծո անդառնալի վճռի, Ով կյանքի է կոչել այն: Պարզ ասած՝ մարդկային պատմությունը գնում է, և նույնիսկ՝ սլանում դեպի ավարտը, որում ամեն մարդ դատվելու է և հատուցում է ստանալու ըստ իր կատարած կամ չկատարած գործերի: Պողոս առաքյալը գրում է. «Որ Նա [Աստված] ամեն մեկին իր գործերի պես հատուցումը կտա. նրանց, որ բարի գործերի մեջ են հարատևում, և փառք և պատիվ և անապականություն են որոնում՝ հավիտենական կյանք, բայց նրանց, որ հակառակությունից են և ճշմարտությանն անհնազանդ և անիրավության ետևից գնացած՝ բարկություն և սրտմտություն»[3]:

3. Հռոմեացիների 2.6–8

Արդարության սեփական չափանիշներ ունեցող անհատը կամ մշակույթը գուցե հուսադրող համարի Պողոսի կողմից ազդարարված համընդհանուր դատաստանի լուրը: Պատճառը լայնորեն տարածված մի սխալմունք է. մարդիկ դատում են իրենց՝ ըստ ճշմարտության մասին իրենց պատկերացման: Այնուամենայնիվ, նրանց համար, ովքեր դեռ լսում են իրենց խղճի ձայնը, և հատկապես՝ ովքեր գիտեն Սուրբ գիրքը, այս խոսքերն ավելի քան շփոթեցնող են: Պատճառն այն է, որ թե՛ խիղճը, թե՛ Սուրբ գիրքը վկայում են, որ բոլորը մեղանչել են և ընկել են Աստծո փառքից[4]: Չկա մեկը, ով հարատևել է՝ բարին գործելով, և մեկը, ով փնտրել է այն փառքը, պատիվը և անմահությունը, որոնք Աստծուց են[5]: Փոխարենը՝ բոլոր մարդիկ վարվել են եսասիրական դրդապատճառներով և անիրավությամբ ճնշել են ճշմարտությունը[6]: Հետևաբար, բոլորը ենթակա են սուրբ և արդար Աստծո բարկությանը և ցասմանը[7]: Սա է պատճառը, որ Աստված միջամտեց և ուղարկեց Իր Որդուն՝ քավություն անելու մարդկության մեղքերի համար: Նրա մահը բավարարեց Աստծո արդարադատությունը և խաղաղեցրեց Նրա զայրույթը: Այսպիսով, նրանք, ովքեր լսում և հավատում են Որդուն, կփրկվեն: Սակայն նրանք, ովքեր մերժում են Որդուն, կդատապարտվեն Նրա կողմից[8]:

Երբ ազդարարվում է համընդհանուր դատաստանը, մարդիկ հաճախ վիճարկում են Աստծո ազնվությունը: Ինչպե՞ս Աստված կարող է դատել նրանց, ովքեր երբեք չեն լսել Ավետարանը, կամ հնարավորություն չեն ունեցել ճանաչելու Սուրբ գիրքը: Այս հարցին պատասխանելու համար առաջին հերթին պետք է հիմնվենք Աստծո արդարության վրա, որի մասին վկայում է Սուրբ գիրքը: Թեև մենք չենք կարողանա ամբողջությամբ հեռացնել առեղծվածն այս հարցից, մենք անկասկած գիտենք Աստծո բնավորությունը և կարող ենք ապավինել Նրա Անձին: Ինչպես հռչակեց Մովսեսը, ինչ էլ Աստված անի, ճիշտ է լինելու. «Աստծո գործը կատարյալ է, որովհետև Նրա բոլոր ճանապարհներն իրավունք են: Աստված հավատարիմ է և անիրավություն չունի: Արդար և ուղիղ է Նա»[9]:

Մեկ այլ ճշմարտություն, որը պետք է դիտարկել Աստծո կողմից աշխարհին արդարությամբ դատելու վերաբերյալ այն է, որ համաձայն Աստվածաշնչի՝ նույնիսկ աշխարհի հեռավոր վայրում գտնվող ամենամեկուսի անձն ինչ-որ չափով ստացել է հայտնություն Աստծո

4. Հռոմեացիների 3.23
5. Հռոմեացիների 3.12
6. Հռոմեացիների 1.18
7. Հռոմեացիների 2.8
8. Հովհաննես 3.18,36
9. Երկրորդ Օրինաց 32.4

մասին և արդարացում չի ունենա դատաստանի օրը[10]: Լինելով Աստծո պատկերով ստեղծված՝ ամեն մարդ ունի բնածին գիտելիք Նրա մասին[11]: Այս գիտելիքը հաստատվում է երեք անժխտելի իրողություններով: Առաջինը՝ Աստծո արարչագործությունը վկայում է Նրա գոյության, անտեսանելի հատկանիշների, հավիտենական զորության և աստվածային բնության մասին[12]: Երկրորդը՝ Աստծո նախախնամությունը հաստատել է որոշված ժամանակներ և սահմաններ ազգերի և անհատների համար, որպեսզի նրանք փնտրեն և գտնեն Նրան, թեև Նա հեռու չէ ոչ ոքից[13]: Եվ երրորդը՝ Աստծո օրենքը գրվել է ամեն մարդու սրտի վրա և ծառայում է որպես բարոյական ուղեցույց և վկայություն այն մասին, որ Աստված արդար է, և որ Նա դատելու է մարդկանց՝ ըստ իրենց գործերի[14]:

Եվս մեկ ճշմարտություն, որը պետք է դիտարկել Աստծո կողմից աշխարհն արդարությամբ դատելու վերաբերյալ այն է, որ մարդիկ պատշաճ կերպով չեն արձագանքել այն հայտնությանը, որը ստացել են: Այլ կերպ ասած՝ նրանք զոհեր չեն, որոնց պետք է խղճալ, այլ՝ ապստամբներ, որոնց պետք է դատապարտել: Նրանք անիրավությամբ ճնշել են ճշմարտությունը[15]: Թեև նրանք ճանաչեցին Աստծուն, բայց չպատվեցին Նրան՝ որպես Աստծո, և շնորհակալ չեղան Նրանից[16]: Նրանք փոխեցին Աստծո փառքը և ճշմարտությունը սեփական անձի և իրենցից ցածր արարածների պաշտամունքի հետ[17]: Նրանք պատշաճ չհամարեցին ընդունել Աստծուն և հնազանդվել Նրա օրենքներին, այլ տրվեցին ամեն տեսակի անիրավության և բարոյական արատավորության[18]: Աստված կարող է իրավամբ դատել բոլորին, քանի որ բոլորն էլ հանցավոր են: Թեև մարդկանց ստացած հայտնությունը տարբեր չափերի է, բոլորն էլ ապստամբել են իրենց ստացած հայտնության դեմ:

Վերջին ճշմարտությունը, որը պետք է դիտարկել Աստծո կողմից աշխարհն արդարությամբ դատելու վերաբերյալ, Աստվածաշնչի վկայությունն է այն մասին, որ բոլոր մարդիկ դատվելու են ըստ

10. Հռոմեացիների 1.20. այն հայտնությունը, որը տրվել է մարդկանց արարչագործության, աստվածային նախախնամության և խղճի միջոցով, հաճախ կոչվում է ընդհանուր հայտնություն՝ ի հակադրություն հատուկ կամ մասնավոր հայտնության, որը բխում է Աստվածաշնչից և Ավետարանի քարոզումից:
11. Հռոմեացիների 1.19
12. Հռոմեացիների 1.20
13. Գործք 17.26,27
14. Հռոմեացիների 2.14,15
15. Հռոմեացիների 1.18
16. Հռոմեացիների 1.21
17. Հռոմեացիների 1.23,25
18. Հռոմեացիների 1.28,29,32

իրենց ստացած հայտնության: Սուրբ գրքում կա հետևյալ սկզբունքը. ում շատ է տրված, նրանից շատ է պահանջվելու[19]: Նրանք, ովքեր մեղանչել են արարչագործության և խղճի միջոցով ստացած հայտնության դեմ, դատվելու են իրենց անհնազանդության համար: Նրանք, ովքեր մեղանչել են Սուրբ գրքի և Ավետարանի միջոցով ստացած հայտնության դեմ, դատվելու են իրենց մեղքերի համար[20]: Այնուամենայնիվ, վերջինները դատվելու են ավելի մեծ խստությամբ, քան առաջինները՝ իրենց ստացած ավելի գերազանց ճշմարտության պատճառով: Ցանկացած դեպքում, մենք կարող ենք վստահ լինել, որ այդ վերջին օրը Աստծո արդարությունը կհայտնվի դատաստանի մեջ: Ինչպես վկայում է սաղմոսերգուն. «Բայց Տերը հավիտյան կա. Նա Իր աթոռը պատրաստեց դատաստանի համար: Եվ Նա աշխարհն արդարությամբ կդատի և ազգերին ուղղությամբ իրավունք կանի»[21]:

ԲՈԼՈՐԻ ՏԵՐԸ ՆԱԵՎ ԲՈԼՈՐԻ ԴԱՏԱՎՈՐՆ Է

Երկրորդ մեծ ճշմարտությունը, որը մենք քաղում ենք Պետրոսի քարոզից այն է, որ Աստված նշանակել է Հիսուս Քրիստոսին կենդանիների և մահացածների Դատավոր[22]: Այս պնդումը մեկուսի չէ Աստվածաշնչում. այն հաճախ է հանդիպում Ավետարաններում, Գործք առաքելոց գրքում, առաքյալների թղթերում և Հայտնություն գրքում: Մարսի բլրի վրա աթենացիներին ուղղված իր քարոզում Պողոսը հռչակեց. «Մեկ օր հաստատեց, որ նրանում աշխարհն արդարությամբ պիտի դատի այն Մարդու ձեռքով, որ սահմանեց Նրանով ամենին հավատք տալ, որին մեռելներից հարություն տվեց»[23]:

Աստվածաշունչը և քրիստոնեական եկեղեցին վկայում են, որ ամեն մարդ-արարած՝ առանց բացառության, կանգնելու է Քրիստոսի առջև՝ դատաստանի համար, և Նա որոշելու է յուրաքանչյուրի ճակատագիրը: Կա մեկ միջնորդ Աստծո և մարդկանց միջև՝ Հիսուս Քրիստոս Մարդը, և կա մեկ դատավոր Աստծո և մարդկանց միջև՝ Հիսուս Քրիստոս Մարդը: Այս ճշմարտությունն ապշեցուցիչ է[24]:

---

19. Ղուկաս 12.47,48. «Եվ այն ծառան, որ իր տիրոջ կամքը գիտենալով չի պատրաստել և ոչ էլ արել նրա կամքի պես, շատ ծեծ կուտի: Եվ նա, որ չգիտենալով ծեծի արժանի բան գործեց, քիչ կծեծվի. այն ամենին, որ շատ տրվեց, նրանից շատ կուզվի, և ում որ շատ պահ տրվեց, նրանից էլ ավելի կպահանջեն»:

20. Հռոմեացիների 2.12. «Որովհետև նրանք, որ առանց օրենքի մեղք գործեցին, առանց օրենքի էլ կկորչեն, և նրանք, որ օրենքի տակ մեղք գործեցին, օրենքով կդատվեն»:

21. Սաղմոս 9.7,8

22. Գործք 10.40–42

23. Գործք 17.31

24. Ա Տիմոթեոս 2.5

Սա Քրիստոսի իշխանության համընդհանուր բնույթի ևս մեկ ապացույց է: Նա ինչ-որ տեղական աստվածություն չէ, որը սահմանափակ իշխանություն ունի որոշակի վայրում: Նա չի անդամակցում տիեզերքը կառավարող խմբային խորհրդի կամ միացյալ ատյանի, որը դատավարություն է անցկացնելու դատաստանի օրը: Նա է բոլոր մարդկանց միակ Թագավորը, Տերը և Դատավորը: Ամբողջ իշխանությունը երկնքում և երկրի վրա տրվել է Նրան[25]: Միայն Նա է նստած Աստծո աջ կողմը՝ շատ ավելի վեր ամեն իշխանությունից, պետությունից, զորությունից և տերությունից և ամեն անունից, որ անվանվում է, ոչ միայն այս, այլև գալիք աշխարհում[26]: Նազովրեցի Հիսուս Մարդը, Ով խաչվեց Պոնտոս Պիղատոսի իշխանության ժամանակ, որոշելու է ոչ միայն այս երկրի վրա երբևէ ապրած մարդկանց ճակատագիրը. Նա նույնպես դատելու է հրեշտակներին և դևերին, աթոռները և տերությունները, պետությունները և իշխանությունները և՛ երկնքում, և՛ երկրի վրա, թե՛ երևացող, թե՛ չերևացող[27]: Ավելին՝ Նա դատելու է այս աշխարհի բոլոր կրոնների հիմնադիրներին, որոնք ձգտում էին դուրս մղել Իրեն կամ փոքրացնել Իր փառքը: Բոլորը կանգնելու են Նրա առջև մեծագույն ամոթով և վախով:

Այս աշխարհն ունի մեկ Օրենսդիր և Դատավոր, Ով կարող է և՛ փրկել, և՛ կործանել[28]: Իր երկրորդ գալուստի ժամանակ Նա լույսի մեջ կբերի խավարի մեջ թաքնված բաները և ի ցույց կհանի մարդկանց սրտերի դրդապատճառները[29]: Այդ ժամանակ Նա կհատուցի յուրաքանչյուրին՝ ըստ նրա գործերի և արարքների[30]: Սեփական անձն արդարացնող մարդկանց համար այս լուրն այնքան էլ տագնապալի չի թվում: Այնուամենայնիվ, ողջամիտ մարդու համար, ով հետևել է հին փիլիսոփայի խորհրդին՝ «Ճանաչի՛ր ինքդ քեզ», այն փաստը, որ իր ամեն մի միտքը, խոսքը և արարքը կարող է հանձնվել կատարելապես արդար և ամենագետ Դատավորի քննությանը, ամենազարհուրելի միտքն է[31]: Ահա թե ինչու Պողոս առաքյալը գրում է. «Որովհետև մենք ամենքս պետք է հայտնի լինենք Քրիստոսի ատյանի առջև, որ ամեն մեկն ընդունի իր մարմնով ինչ որ գործեց՝ թե՛ բարի, և թե՛ չար: Արդ, Տիրոջ ահավորությունը գիտենալով՝ մարդկանց համոզում ենք»[32]:

25. Մատթեոս 28.18
26. Եփեսացիների 1.21
27. Կողոսացիների 1.16
28. Հակոբոս 4.12
29. Ա Կորնթացիների 4.5
30. Հայտնություն 22.12, Մատթեոս 16.27
31. «Ճանաչի՛ր ինքդ քեզ» («գնոթի սեաուտոն») արտահայտությունը հայտնի հունարեն աֆորիզմ կամ ասացվածք է, որը, ինչպես ասում են, փորագրված է եղել Դելֆիում գտնվող Ապոլոնի տաճարի առջևի գավիթում: Լատիներենով՝ «նոսե տե իպսում»:
32. Բ Կորնթացիների 5.10,11

Մենք կրկին ու կրկին ապացուցեցինք, որ մարդն ինքն իրենով կործանված է և անկարող է ձեռք բերել ճիշտ դիրք Աստծո առջև: Այնուամենայնիվ, մենք ստանում ենք մեծագույն մխիթարությունը՝ գիտակցելով, որ Նա, Ով դատելու է բոլոր մարդկանց, նույն Անձն է, որը մահացավ Իր ժողովրդի մեղքերի համար[33]: Եթե Տերը համարեր մեր անօրինությունները, ոչ ոք չէր կարողանա կանգնել Նրա առջև դատաստանի ժամանակ, սակայն մենք կարող ենք ներում գտնել Քրիստոսի Անձի և Նրա կատարած աշխատանքի մեջ[34]: Մենք պետք է դառնանք Նրան, քանի դեռ ուշ չէ: Մենք պետք է թույլ տանք, որ մեր մեղքի իրողությունը, դատաստանի վախը և Քրիստոսի ներելու պատրաստակամությունը անհապաղ մղեն մեզ Նրա մոտ, որպեսզի մենք բռնենք Նրանից և այլևս բաց չթողնենք: Ներկայումս Քրիստոսը ամբողջ օրը պարզում է Իր ձեռքը դեպի մի անհնազանդ և հակառակվող ժողովուրդ[35]: Այնուամենայնիվ, մենք չպետք է փորձենք Նրա համբերությունը: Աստվածաշունչը նախազգուշացնում է մեզ, որ Որդու բարկությունը շուտով կբորբոքվի, և որ սարսափելի բան է Կենդանի Աստծո ձեռքն ընկնելը[36]: Այնպես որ, եկեք հուսանք Նրան, քանի դեռ ուշ չէ[37]: Եկեք միաբանվենք մեր Ոսոխի հետ, քանի դեռ Նրա հետ ճանապարհին ենք, որպեսզի չդատվենք և չգցվենք հավիտենական բանտը, որովհետև մենք չենք ազատվի այնտեղից, մինչև որ վերջին լուման չվճարենք[38]:

ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ

Երրորդ և վերջին ճշմարտությունը, որը պահանջում է մեր ուշադրությունը այն է, որ եկեղեցուն հանձնարարվել է ոչ միայն ազդարարել Ավետարանի առավելությունները, այլև զգուշացնել մարդկանց այն մեծ և անդառնալի դատաստանի մասին, որը գալիս է ամբողջ աշխարհի վրա: Պետրոսը հայտարարեց Կոռնելիոսի տանը հավաքված հեթանոսներին. «[Քրիստոսը] պատվիրեց մեզ՝ քարոզել ժողովրդին և վկայություն դնել, թե Ինքն է Աստծուց սահմանված Դատավորը մեռելների և կենդանիների»[39]: *«Պատվիրեց»* բառը թարգմանված է հունարեն *«պարագգելլո»* բառից, որը կարող է թարգմանվել նաև «հրամայել» կամ «հանձնարարել» բառերով: Այսպիսով, մենք բացահայտում ենք մի ուշագրավ ճշմարտություն. Քրիստոսին որպես

33. Հռոմեացիների 5.6
34. Սաղմոս 130.3,4
35. Հռոմեացիների 10.21
36. Եբրայեցիների 10.31
37. Սաղմոս 2.12
38. Մատթեոս 5.25,26
39. Գործք 10.42

Դատավոր քարոզելը առաքելական Ավետարանի էապես կարևոր կողմերից մեկն է: Առաջին եկեղեցու կողմից ազդարարվող Բարի լուրը չէր սահմանափակվում այն բանով, որ Քրիստոսը քարոզվում էր որպես Փրկիչ, կամ նույնիսկ՝ որպես Տեր. նրանք նաև քարոզում էին, որ Նա բոլոր մարդկանց Դատավորն է՝ կենդանիների և մահացածների: Նրանք անսովոր համարձակությամբ հռչակում էին մեղավորներին և քահանայապետերին, ստրուկներին և կեսարներին, որ Նա էր դատելու նրանց, և Նա էր որոշելու նրանց հավիտենական ճակատագիրը: Նման պնդումը՝ Պաղեստինում խաչված մի հրեայի մասին, որը հրապարակվում էր մի խումբ անարգված քարոզիչների կողմից, պետք է առնվազն հանդգնություն թվար: Զարմանալի չէ, որ մի քանիսը ծաղրում էին, մյուսները զարմանում էին, ոմանք էլ վախով հեռանում էին[40]:

Հռոմի եկեղեցուն ուղղված իր նամակում Պողոս առաքյալը նկարագրում է «այն օրը, որ Աստված մարդկանց ծածուկ բաները կդատի Իր Ավետարանի համեմատ՝ Հիսուս Քրիստոսի ձեռքով»[41]: Սա ուշագրավ ճշմարտություն է՝ նման վերևում բերված Պետրոսի հայտարարությանը: Պողոսն ասում է մեզ, որ վարդապետությունն այն մասին, որ մարդկության համընդհանուր դատաստանն իրականացվելու է Հիսուս Քրիստոս Մարդու միջոցով, իր կողմից քարոզվող Ավետարանի էապես կարևոր և հիմնարար ճշմարտություններից մեկն է: Սա շատ կարևոր ուղերձ է ժամանակակից ավետարանչին, ով միգուցե գայթակղություն ունենա անտեսելու Ավետարանի այս ոչ հաճելի ճշմարտությունը՝ դրանից առաջացող հակառակությունից խուսափելու համար: Սա նույնպես վերաբերում է այն ծառայողներին, որոնք համոզված են, որ Աստված կանչել է իրենց քարոզելու միայն Ավետարանի դրական կողմերը՝ անտեսելով դրա «խիստ խոսքերը»[42]: Համաձայն Պողոսի և Պետրոսի՝ մենք Ավետարանի հավատարիմ քարոզիչներ չենք, եթե չենք ազդարարում կամ հազվադեպ ենք հիշատակում մեր քարոզներում, որ Աստված դատելու է ամբողջ աշխարհը Քրիստոսի միջոցով: Եթե ուզում ենք լինել Ավետարանի մեծագույն քարոզիչների թվում, որոնք ապրել են եկեղեցու ամբողջ պատմության ընթացքում, մենք չպետք է միայն քարոզենք Քրիստոսին՝ որպես Փրկչի. մենք նաև պետք է հռչակենք, որ Նա Դատավոր է, և զգուշացնենք բոլորին, որ պատրաստվեն հանդիպման իրենց Աստծո հետ[43]:

40. Բ Պետրոս 3.3,4, Գործք 4.13. Գործք 24.25. «Եվ երբ որ նա [Պողոսը] խոսում էր արդարության և ժուժկալության և գալու դատաստանի համար, Ֆելիքսը շատ ահով բռնվեց և պատասխանեց. «Դու հիմա գնա. երբ որ ժամանակ ունենամ, կկանչեմ քեզ»»:

41. Հռոմեացիների 2.16

42. Հովհաննես 6.61

43. Ամոս 4.12

Գոյություն ունի մի մեծ ճշմարտություն. Աստված չի ուղարկել Իր Որդուն այս աշխարհ՝ այն դատելու համար, այլ՝ որ աշխարհը փրկվի Նրանով[44]: Այնուամենայնիվ, Աստված որոշել է մեկ օր, որում Նա արդարությամբ դատելու է աշխարհը այն Մարդու միջոցով, Ում Ինքը նշանակել է, և որպես ապացույց բոլորին՝ հարություն է տվել Նրան մեռելներից[45]: Երբ Որդին վերադառնա երկրորդ անգամ, Նա կհագնի Իր դատավորի թիկնոցը և կվճռի բոլոր մարդկանց ճակատագիրը: Պետրոսը զգուշացնում է մեզ, որ Քրիստոսը *պատրաստ է* դատել կենդանիներին և մահացածներին[46]: Հակոբոսը հայտարարում է, որ Դատավորը կանգնած է դռան մոտ՝ պատրաստ ևս մեկ անգամ ներխուժել մարդկության պատմության մեջ[47]: Հիսուսն ավարտեց Իր հայտնությունը Հովհաննեսին հետևյալ զգուշացմամբ. «Ահա շուտով գալիս եմ, և Իմ վարձքն՝ Ինձ հետ, որ ամեն մեկին հատուցեմ՝ ինչպես իր գործերը կլինեն»[48]: Այս զգուշացումների պատճառով մենք պետք է մշտապես գիտակցենք և քարոզենք, որ Քրիստոսի երկրորդ գալուստը և վերջին դատաստանն անխուսափելի են[49]:

Գաղափարն այն մասին, որ գերիշխան Աստված կանխորոշել է պատմության ավարտը և վերջնական դատաստանի է բերելու ամեն մի բարոյական էակի, առասպելի պես է ժամանակակից մարդու համար: Այնուամենայնիվ, մենք չպետք է խուսափենք այն ազդարարելուց: Մեր ժամանակաշրջանի թերահավատությունը նոր բան չէ: Պետրոս առաքյալը բախվում էր նույն քննադատական վերաբերմունքին, երբ գրում էր. «Բայց առաջ այս իմացեք, որ ետին օրերում ծաղր անողներ կգան, որ իրենց ցանկությունների պես կվարվեն և կասեն. «Ո՞ւր է Նրա գալստյան խոստումը, որովհետև այնուհետև, որ հայրերը վախճանվեցին, ամեն բան նույնպես կենում-մնում է աշխարհի ստեղծագործությունից հետո»»[50]:

Առանց Սուրբ Հոգու աշխատանքի՝ անկում ապրած մարդը մշտապես հակառակվելու է Ավետարանը քարոզելուն, հատկապես եթե խոսքը «արդարության և ժուժկալության և գալու դատաստանի» մասին է[51]: Անկախ այն բանից, թե որքան ջանասիրաբար են մարդիկ ձգտում հեռու մնալ Աստվածաշնչի Աստծուց՝ նրանց մշտապես հան-

44. Հովհաննես 3.17
45. Գործք 17.30,31, Եբրայեցիների 9.27
46. Ա Պետրոս 4.5
47. Հակոբոս 5.9
48. Հայտնություն 22.12
49. Քրիստոսի գալուստի անխուսափելի լինելը քրիստոնեական հավատքի կարևորագույն կետերից մեկն է: Համաձայն այս ճշմարտության՝ Քրիստոսի գալուստն անխուսափելի է կամ հնարավոր է ցանկացած պահին: Սա է պատճառը, որ Ավետարանի կանչը մշտապես հրատապ է:
50. Բ Պետրոս 3.3,4
51. Գործք 24.25

գիստ չի տալու այն փաստը, որ Նա գոյություն ունի, որ Նա հայտնել է մարդկանց Իր կամքը, և որ Նա պահանջելու է հաշիվ տալ իրենց գործերի համար: Նրանք հոգնեցնելու են իրենց՝ փորձելով ճնշել ճշմարտությունը, և դիմելու են ցանկացած քայլի՝ իրենց խղճի մեղադրանքները լռեցնելու համար[52]: Ավելին՝ նրանք պայքարելու են ցանկացած քարոզչի դեմ, ով հիշեցնում է այն, ինչ իրենք որոշել են մոռանալ, և բորբոքում է նրանց սրտերում այն սարսափը, որը նրանք փորձում են լռեցնել: Նրանք ծաղրելու են նրա զգուշացումները դատաստանի մասին՝ անվանելով դրանք մոլեռանդի մոլորություններ կամ խաբեբայի հնարներ[53]: Այնուամենայնիվ, նրանց վարքը չի փոխում այն փաստը, որ ժամանակվա ավարտին բոլոր մարդիկ հավաքվելու են Վճռի հովտում[54]: Այնտեղ նրանք դատվելու են և լսելու են իրենց հավիտենական դատավճիռը: Պատմոս կղզում Հովհաննես առաքյալը տեսավ այդ օրը և մարգարեացավ հետևյալը.

> «Եվ տեսա մի սպիտակ մեծ աթոռ և նրա վրա Նստողին, Ում երեսից երկինքը և երկիրը փախան, և տեղ չգտնվեց նրանց համար: Եվ տեսա մեռելները՝ մեծ և փոքր, կանգնած աթոռի առջև, և գրքեր բացվեցին, և մի ուրիշ գիրք էլ բացվեց՝ Կյանքի գիրքը, և մեռելները դատվեցին այն գրքերում գրվածներից՝ իրենց գործերի համեմատ... Եվ եթե մեկը գրված չգտնվեց Կյանքի գրքի մեջ, կրակի լճի մեջ գցվեց»[55]:

Քարոզելով Ավետարանը՝ մենք պետք է ոչ միայն ազդարարենք համընդհանուր փրկության կոչը, այլև Հիսուս Քրիստոսի համընդհանուր իշխանությունը: Ավելին՝ մենք պետք է ոչ միայն հռչակենք հավատքի և Քրիստոսին հնազանդվելու առավելությունները, այլև հայտնենք մարդկանց, թե ինչ սարսափելի հետևանքներ ունի Նրան մերժելը՝ թե՛ Նրա հանդեպ ունեցած թշնամանքի, թե՛ պարզապես Նրան անտեսելու պատճառով: Հետևաբար, մենք նույնպես պետք է հրաժարվենք այն գաղափարից, որ հնարավոր է քարոզել Ավետարանը՝ առանց մարդկանց վրդովեցնելու կամ վիրավորելու: Մենք պետք է մտապահենք, որ մեր նպատակը՝ աշխարհի հետ զինադադար կնքելը չէ, այլ՝ պահանջելը, որ աշխարհը հպատակվի Քրիստոսին: Մենք չենք խնդրում, որ աշխարհը հավանություն տա մեզ, այլ՝ վերջնագիր ենք ներկայացնում. «Եվ հիմա, ո՛վ թագավորներ, խոհե-

52. Հռոմեացիների 1.18, 2.14,15
53. Գործք 26.24
54. Հովել 3.11–14. «Շտապե՛ք և եկե՛ք, ո՛վ բոլոր շրջակա ազգեր, և ժողովվե՛ք: Այնտեղ տար, ո՛վ Տեր, Քո զորավորներին: Զարթնեն և վեր գան ազգերը Հովսափատի հովիտը, որովհետև այնտեղ պիտի նստեմ՝ բոլոր շրջակա ազգերը դատելու համար: Մանգաղը գցե՛ք, որովհետև հասել է հունձքը. եկե՛ք, իջե՛ք, որովհետև լցվել է հնձանը. ավազանները հորդում են, որովհետև շատ է նրանց չարությունը: Բազմություններ, բազմություններ՝ Վճռի հովտում, որովհետև մոտ է Տիրոջ օրը Վճռի հովտում»:
55. Հայտնություն 20.11,12,15

մացեք և խրատվեք, ո՛վ երկրի դատավորներ: Վախո՛վ ծառայեք Տիրոջը և դողալով ցնծացեք: Որդուն համբուրե՛ք, որ չբարկանա, և դուք չկորչեք ճանապարհին, որովհետև Նրա բարկությունը շուտով կվառվի: Երանի՜ այն ամենին, որ Նրան են հուսացած»[56]:

Եթե մենք այսպես քարոզենք Ավետարանը, բաժանության նշան կդառնանք մեր ազգերի մեջ: Ինչպես Պողոս առաքյալը, մենք պետք է Քրիստոսի բուրմունքը լինենք փրկվողների և կորչողների միջև. ոմանց համար՝ կյանքի բուրմունք, իսկ մյուսների համար՝ մահվան հոտ[57]: Ոմանք կպատվեն մեզ՝ որպես Բարի լուրի մունետիկների և կյանքի ավետաբերների, իսկ մյուսները կանարգեն՝ որպես անգործ դատարկախոսների, որպես այս աշխարհի ավելուքը, և ջնջոց՝ բոլորի համար, աշխարհը շփոթեցնողների և մարդկանց համար, որոնք չպետք է ապրեն[58]:

Ահա թե ինչու ավետարանիչը պետք է պատրաստվի մեծ հակառակության: Այնուամենայնիվ, իմանալով մեր Թագավորի զորությունը՝ մենք այլևս չպետք է վախենանք ազգերի հավաքական ուժից: Մենք պետք է գթանք նրանց և աղերսենք՝ հաշտվել: Չարլզ Սփերջենը գրում է.

> «Քանի որ Հիսուսը թագավորների Թագավորը և դատավորների Դատավորն է, ուրեմն, Ավետարանը մեծագույն և ամենից իմաստուն մարդկանց ուսուցիչն է: Եթե ոմանք այնքան մեծ են, որ կարող են արհամարհանքով մերժել դրա խրատները, Աստված փոքր կդարձնի նրանց, և եթե նրանք այնքան իմաստուն են, որ կարող են անարգել դրա ուսմունքները, նրանց երևակայած իմաստությունը կհիմարացնի նրանց: Ավետարանի դիրքը բարձր է այս աշխարհի իշխանների դիրքից, և այն քարոզողները պետք է Նոքսի և Մելվիլի պես փառավորեն իրենց պաշտոնը թե՛ հանդիմանություններով, թե՛ համարձակ խոսքերով, նույնիսկ՝ արքայական անձանց ներկայությամբ: Պնակալեզ կղերը հարմար է միայն խոհարարի կրտսեր օգնականի գործին սատանայի խոհանոցում»[59]:

Աստված պատվիրել է, որ բոլորը ամենուրեք ապաշխարեն և հավատան Որդուն, քանի որ «Մեկ օր հաստատեց, որ նրանում աշխարհն արդարությամբ պիտի դատի» Նրա միջոցով[60]: Գոյություն ունի «մեկ

56. Սաղմոս 2.10–12
57. Բ Կորնթացիների 2.15,16
58. Գործք 17.18, Ա Կորնթացիների 4.13, Գործք 17.6, 22.22
59. Սփերջեն, «Դավթի գանձարանը», հտ. 1, էջ 18: Պնակալեզը ստորաքարշ և ստրկաբարո շողոքորթող է՝ այնպիսի մարդ, ով փորձում է ստանալ մեկ ուրիշի բարեհաճությունը: Խոհարարի կրտսեր օգնականը կատարում է ամենասև աշխատանքը խոհանոցում: Պնակալեզ կղերն ամենավատն է մարդկանցից, քանի որ նա ոչ միայն շողոքորթում է մարդկանց և ստորաքարշություն է անում նրանց առջև, այլև ուրանում է Քրիստոսին՝ նրանց հավանությունը ստանալու համար:
60. Գործք 17.30,31

Աստված... և մեկ Միջնորդ Աստծո և մարդկանց միջև՝ Քրիստոս Հիսուս Մարդը»[61]: Եվ ուրիշ ոչ մեկով էլ փրկություն չկա, «որովհետև ուրիշ անուն էլ չկա երկնքի ներքև մարդկանց տրված, որով կարելի լինի մեզ փրկվել»[62]: Ամբողջ մարդկային ցեղի հավիտենական ճակատագիրը կախված է Ավետարանի պատշաճ գիտելիքից, և այն ընդգրկում է նաև մեծ դատաստանը, որը գալիս է այս աշխարհի վրա իր միակ գերագույն Իշխանի՝ Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով: Այս ճշմարտությունները ծանրակշիռ են. դրանք և՛ հրատապ են, և՛ հանդիսավոր: Ավետարանը գործ չունի աննշան բաների հետ: Այն գործ ունի այնպիսի հարցերի հետ, որոնք իսկապես կարևոր են մարդկային գոյության համար՝ հավիտենական կյանքի և հավիտենական մահվան: Այս պատճառով, մենք պետք է ուղղորդենք մեր կյանքը, ծառայությունը և քարոզումը համաձայն Պողոս առաքյալի խոսքերի. «Նրա համար էլ ջանք ենք անում, որ թե՛ կենանք, և թե՛ դուրս գնանք, հաճո լինենք Նրան: Որովհետև մենք ամենքս պետք է հայտնի լինենք Քրիստոսի ատյանի առջև, որ ամեն մեկն ընդունի իր մարմնով ինչ որ գործեց՝ թե՛ բարի, և թե՛ չար: Արդ, Տիրոջ ահավորությունը գիտենալով՝ մարդկանց համոզում ենք, բայց Աստծո առջև հայտնի ենք, և ես հույս ունեմ, որ ձեր խղճմտանքում էլ հայտնի ենք»[63]:

Ինչ վերաբերում է մեզ, մենք պետք է ունենանք մեկ նպատակ, որը վեր է մնացած բոլոր ձգտումներից. հաճելի լինել Աստծուն մեր կյանքի ամեն բնագավառում: Թեև մեր բարձրագույն շարժառիթը պետք է մշտապես լինի Աստծո սերը, այն չպետք է լինի մեր միակ շարժառիթը[64]: Պողոս առաքյալը ոչ միայն ձգտում էր Աստծո բարեհաճությանը Քրիստոսում, այլ նույնպես ապրում էր այն վեհ ճշմարտությամբ, որ մեկ օր ինքը կանգնելու էր Քրիստոսի ատյանի առջև և հատուցում էր ստանալու իր ամեն արարքի համար՝ թե՛ բարի, թե՛ չար[65]: Ինչ վերաբերում է ուրիշներին, մենք պետք է ոչ միայն քարոզենք Ավետարանը մարդկանց, այլև ձգտենք օգտագործել մեր տրամադրության տակ գտնվող ցանկացած սուրբգրային միջոց, որպեսզի համոզենք նրանց հաշտվել Աստծո հետ Քրիստոսի միջոցով, և ապրել ահով ու դողով[66]: Իրականում, որպես Քրիստոսի դեսպաններ, որոնց միջոցով Աստված ասես հորդորում է, մենք պետք է աղաչենք մարդկանց Քրիստոսի անունից՝ հաշտվել Աստծո հետ[67]:

61. Ա Տիմոթեոս 2.5
62. Գործք 4.12
63. Բ Կորնթացիների 5.9–11
64. Բ Կորնթացիների 5.14
65. Բ Կորնթացիների 5.10
66. Փիլիպեցիների 2.12,13
67. Բ Կորնթացիների 5.20

Մերօրյա քրիստոնեական սերնդի ամենամեծ հանցանքներից մեկը Ավետարանը անտեսելն է. մեր բոլոր ախտերը բխում են դրանից: Այն տարբերակ թեմաները, որոնք կազմում են Ավետարանի միջուկը՝ Աստծո արդարադատությունը, մարդու ծայրաստիճան ապականված լինելը, արյան քավությունը, ճշմարիտ դարձի գալու բնույթը և փրկության մեջ հավաստիացում ունենալու աստվածաշնչյան հիմքը, չեն հիշատակվում շատ ու շատ ամբիոններից: «Ավետարանի զորությունը և ուղերձը» գրքում Փոլ Վոշերն անդրադառնում է Քրիստոսի Բարի լուրի այս հիմքային իրողություններին և օգնում է մեզ նորովի բացահայտել Ավետարանը՝ իր ամբողջ գեղեցկությամբ, վրդովեցուցիչ ճշմարտություններով և փրկարար զորությամբ: Թող որ այն վերափոխի ձեր կյանքը, զորացնի ձեզ Ավետարանը հռչակելու համար և բերի մեծագույն փառքն Աստծուն:

«Մերօրյա անկյանք, մարդակենտրոն և ցանկասիրությունը շոյող քարոզման պայմաններում մեզ անհրաժեշտ են Որոտմունքի որդիներ, որոնք ունեն Աստծո երկյուղը և հավատարմորեն քարոզում են Նրա Խոսքը՝ չվախենալով հետևանքներից: Իմ ընկեր Փոլ Վոշերն այդպիսի մարդ է: Թող որ Աստված օգտագործի այս գիրքը՝ կորսվածներին հասնելու և Իր անունը փառավորելու համար»:

— Ռեյ Կամֆորտ, «Դժոխքի խստագույնս պահվող գաղտնիքը» և «Տիրոջ ճանապարհը» գրքերի հեղինակ

«Վերջին տասնամյակների ընթացքում մակերեսային քրիստոնյաներն արել են ամեն ինչ, որպեսզի ավելի գրավիչ և ընդունելի դարձնեն Ավետարանը: Բոլոր սուր անկյունները խնամքով քողարկվել են, իսկ բուն ուղերձը հնարավորինս փոքրացվել է: Նրանք պատել են Ավետարանը ծածկույթի հաստ շերտերով, որպեսզի այն ոչ մի դեպքում չցավեցնի և չվիրավորի ոչ ոքի: «Ավետարանի զորությունը և ուղերձը» գրքում Փոլ Վոշերը բացում է Ավետարանը և ցուցադրում դրա բազմաթիվ կողմերը՝ ամբողջ փառավորությամբ: Այս գիրքը խոհուն և խորաթափանց հիշեցնում է այն մասին, որ այն ուղերձը, որը Քրիստոսը պատվիրեց մեզ ազդարարել, ոչ կպչուն է, ոչ անկարևոր, և ոչ էլ կարիք ունի կատարելագործվելու մարդկանց կողմից: Ավետարանը կարող է գլորման քար լինել ոմանց համար, և հիմարություն թվալ մյուսների համար, բայց նրանց համար, ովքեր կանչված են, այն Աստծո զորությունն ու իմաստությունն է»:

— Ֆիլ Զոնսոն, «Շնորհքը ձեզ հետ» ծառայության գործադիր տնօրեն

«Ես խորապես շնորհակալ եմ Փոլ Վոշերի «Ավետարանի զորությունը և ուղերձը» գրքի համարձակության և պարզության համար: Այսօր քրիստոնյաները կեղծ տպավորություն ունեն, որ Ավետարանը լիովին մեր մասին է. այն հրաշալի ծրագիր է մեր կյանքի համար, խաղաղություն և ուրախություն գտնելու և լիարժեք անձ դառնալու միջոց է, ինչպես նաև՝ Երկինք գնալու ճանապարհ: Իհարկե, այս օրհնությունները (և շատ ավելին) իրավամբ պատկանում են յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալի: Այնուամենայնիվ, դրանք Ավետարանի ուղերձի նպատակը կամ գլխավոր թեման չեն: Ավետարանը Աստծո և Նրա հավիտենական փառքի մասին է: Ահա թե որտեղից է այն սկիզբ առնում, և ահա թե ուր է այն տանում մեզ վերջում: Երբ Ավետարանը քարոզվում է պատշաճ կերպով, այն հանդիմանում և խոնարհեցնում է ամեն մեկին: Այն շեշտադրում է մեղքի խիստ մեղավոր լինելը: Այն հանդիմանում է նույնիսկ մեծագույն գովեստի արժանի արդարության գործերը, որոնք մենք արել ենք: Ավետարանն այնքան պարզ է, որ նույնիսկ երեխան կարող է հասկանալ, բայց դրա ճշմարտություններն անսպառ են: Կարճ ասած, Ավետարանը լավագույնն է բոլոր բարի լուրերից, և ամենակարևոր ուղերձն է, որը երբևէ ազդարարվել է: Այս ազդեցիկ աստվածաշնչյան ուսումնասիրության մեջ Փոլ Վոշերը ճշտորեն ներկայացնում է Ավետարանի ուղերձը»:

— Զոն ՄակԱրթուր, հովիվ-ուսուցիչ «Գրեյս Քոմյունիթի Չրչ» եկեղեցում, Սան Վելի, Կալիֆոռնիա և «Ավետարանը ըստ Հիսուսի» գրքի հեղինակ

ՓՈԼ ՎՈՇԵՐԸ տասը տարի շարունակ որպես միսիոներ ծառայել է Պերուի Հանրապետությունում: Այդ ընթացքում նա հիմնադրել է «HeartCry» Միսիոներական ընկերությունը՝ եկեղեցիներ հիմնող պերուացի ծառայողներին աջակցելու համար: Ներկայումս Փոլը «HeartCry» Միսիոներական ընկերության մշակներից է: Նա և կինը՝ Չարոն, ունեն երեք երեխա՝ Յանը, Էվանը և Ռոուենը: